



GEORGE ORWELL

1984





GEORGE ORWELL



Երևան
«Անտարես»

ՀՏԴ 820-31 Օրումել
ԳՄԴ 84.4 Մբ-44
Օ - 959

Թարգմանությունը անգլերենից՝
ԱՍՏԴԻԿ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Խմբագիր՝
ՆԵՐՍԵՍ ԱԹԱԲԵԿՅԱՆ

Օրումել Ջորջ

Օ -959 1984: Վեպ/Ջորջ Օրումել; թարգմ.՝ Աստղիկ Աթաբեկյան -
Եր.: Անտարես, 2012.- 336 էջ:

1949 թ. հրատարակված Ջորջ Օրումելի «1984» հանրահայտ վեպը նախկին ԽՍՀՄ տարածքում առաջին անգամ լույս տեսավ միայն 1988 թ.: Տարբեր ժամանակներում տարբեր երկրներում վեպը պարբերաբար արգելվել է՝ երբեմն ծիծաղելի պատճառաբանություններով: Հայերեն լույս է տեսնում առաջին անգամ:

Nineteen Eighty-Four, a novel by George Orwell, published in 1949, is a satirical novel set in Oceania, where society is tyrannized by The Party and its totalitarian ideology. As literary political fiction and as dystopian science-fiction, Nineteen Eighty-Four is a classic novel. It popularized the adjective Orwellian, which describes official deception, secret surveillance, and manipulation of the past by a totalitarian or authoritarian state.

ISBN 978-9939-51-392-8 (կոշտ կազմ)
ISBN 978-9939-51-909-8 (փափուկ կազմ)

ՀՏԴ 820-31 Օրումել
ԳՄԴ 84.4 Մբ-44



© Աթաբեկյան Ա., թարգմանության համար, 2012
© «Անտարես», 2012
© “The Estate of the late Sonia Brownell Orwell
Published by arrangement with A.M. Heath &
Co. Ltd., London”

ՄԱՍ I

I

Սառը, վճիտ ապրիլյան օր էր, ու ժամացույցը խփում էր տասներեքը: Չար քանուց թաքնվելու համար կզակը սեղմելով կրծքին՝ Ուինսթոն Սմիթն արագ ներս խցկվեց «Հաղթանակ» բնակելի տան ապակե շքադռնից՝ իր ետևից ներս թողնելով հատիկավոր փոշու մի ամբողջ փոթորիկ:

Նախասարահում խաշած կաղամբի ու հնամաշ ուղելաթերի հոտ էր գալիս: Շքադռանը դեմ հանդիման պատին կախված էր մի գունավոր ցուցապաստառ, որ շահտ մեծ էր այդ շինության համար: Պաստառին մի հսկայական, մետրից ավելի լայնքով, քառասունհինգամյա տղամարդու դեմք էր՝ թանձր սև բեղերով, կոպտավուն, բայց առնականորեն գեղեցիկ դիմագծերով: Ուինսթոնը քայլեց դեպի սանդղահարթակը: Վերելակին մոտենալն ուղղակի անիմաստ էր: Լավագույն ժամանակներում անգամ այն հազարից մեկ էր աշխատում, իսկ հիմա ցերեկը հոսանքն ընդհանրապես անջատում էին: Գործում էր տնտեսման ռեժիմը. պատրաստվում էին Ատելության յոթնօրյակին: Ուինսթոնը պիտի յոթ սանդղահարթակ հաղթահարեր. նա երեսունինը տարեկան էր, աջ ոտնակոճին՝ երակային վերք. դանդաղ էր բարձրանում ու մի քանի անգամ կանգնեց՝ շունչ առնելու: Ցուրաքանչյուր սանդղահարթակում պատից նայում էր նույն հսկայական դեմքը: Դիմանկարն այնպես էր արված, որ ուր էլ կանգնեիր, աչքերը քեզ բաց չէին թողնում: Մեծ ԵՂԲԱՅՐԸ ՀԵՏԵՎՈՒՄ Է ՔԵԶ – բարբառում էր մակագրությունը:

Բնակարանում մի հյուսեղ ձայն թուջի արտադրության հետ կապված ինչ-որ թվերի ցուցակ էր ընթերցում: Չայնը գալիս էր աջ

պատի մեջ «ներփորված» երկարավուն մետաղյա սկավառակից, որն ասես պղտոր հայելի լիներ: Ուինսթոնը պտտեց բռնակը. ձայնը թուլացավ, բայց առաջվա պես հստակ էր լսվում: Սարքը, որ հեռէկրան էր կոչվում, կարելի էր մասամբ լռեցնել, բայց լրիվ անջատելն անհնար էր: Ուինսթոնը քաշվեց դեպի պատուհանը. ցածրահասակ, թուլակազմ այդ մարդը կուսակցականի իր կապույտ կոմբինեզոնի մեջ ավելի վտիտ էր երևում: Մազերը համարյա ճերմակին տվող բացգույն էին, իսկ վարդագույն դեմքի մաշկը թեփոտել էր զզվելի օժառից, ածելու բուֆ սայրից ու հենց նոր վերջացած ծմռան ցրտերից:

Դրսի աշխարհը, նույնիսկ ամուր գոցված պատուհաններից, ցուրտ էր շնչում: Փողոցում քամին փոշու և թղթի պատառների պտտահողմ էր բարձրացրել, ու չնայած արևը շողում էր, իսկ երկինքը վառ երկնագույն էր, քաղաքում ամեն ինչ անգույն էր երևում, բացի ամենուր փակցված ցուցապաստառներից: Բոլոր անկյուններից նայում էր սևաբեղը: Դիմացի շենքից՝ նույնպես: ՄԵԾ ԵՂԲԱՅՐԸ ՀԵՏԵՎՈՒՄ Է ՔԵԶ – ասում էր մակագրությունը, ու սև աչքերը նայում էին Ուինսթոնի աչքերի մեջ: Ներքևում՝ մայթեզրին, քամու տակ փողփողում էր անկյունը պոկած մի ցուցապաստառ՝ թաքցնելով ու բանալով իր միակ բառը՝ ԱՆԳՍՈՑ: Հեռվում տանիքների արանքով մի ուղղաթիռ էր սահում. կախվեց մի պահ, մեռելաժանժի պես, ու շրջվելով՝ շարունակեց ճանապարհը: Ոստիկանական պարեկախումբն էր, որ նայում էր պատուհաններից ներս: Սակայն պարեկախմբերը հաշիվ չէին. կարևորը Մտքի ոստիկանությունն էր:

Ուինսթոնի թիկունքից հեռէկրանի ձայնը դեռ բարբաջում էր թուջի ծուլման և իններորդ եռամյա պլանի գերակատարման մասին: Հեռէկրանը միաժամանակ և ընդունիչ էր, և հաղորդիչ: Այն որսում էր Ուինսթոնի արտաբերած ցանկացած հնչյունը, եթե չափազանց ցածր շշուկով չէր ասվում. ավելին՝ քանի դեռ պղտոր սկավառակի տեսադաշտում էր, Ուինսթոնը ոչ միայն լսելի էր, այլև տեսանելի: Իհարկե, ոչ ոք չէր կարող ասել՝ տվյալ պահին իրեն հետևո՞ւմ են,

1984

թե՞ ոչ: Ի՞նչ հաճախականությամբ ու կարգացանկով է քո անհատական մալուխին միանում Մտքի ուստիականությունը. դրա մասին կարելի էր միայն գուշակություններ անել: Բացառված չէր, որ հետևում էին բոլորին և՛ օրնիբուն: Համենայնդեպս, կարող էին միանալ ցանկացած պահի: Մարդիկ ստիպված էին ապրել և ապրում էին բնագոյի վերածված սովորույթի ուժով, այն գիտակցությամբ, որ լսում են բոլոր շշուկներդ, հետևում քո յուրաքանչյուր շարժմանը, բացի խավարում կատարվածից:

Ուինսթոնը մեջքով դարձավ դեպի հեռէկրանը: Այդպես ավելի ապահով էր, թեև լավ գիտեր, որ նույնիսկ իր մեջքը կարող է մատնել: Մի կիլոմետրի վրա մրոտ քաղաքի գլխին լեռնացած ճշմարտության նախարարության ճերմակ շենքն էր՝ նրա աշխատավայրը: Ահա, անորոշ զգվանքով մտածում էր Ուինսթոնը, ահա նա՛ Լոնդոնը, Թռիչքուղի մեկ-ի, Օվկիանիա պետության՝ բնակչությամբ երրորդ պրովինցիայի գլխավոր քաղաքը: Նա վերադառնում էր իր մանկությանը՝ փորձելով հիշել՝ Լոնդոնը մի՞շտ էր այդպիսին: Մի՞շտ էին շարվեշար դեպի հեռուն ձգվում տասնիներորդ դարի խարխուլ տների շարքերը՝ դիմհարած գերաններով, խավաթղթով կարկատած պատուհաններով, ծռնված տանիքներով, նախապարտեզների կախ ընկած միջնապատերով: Ե՛վ ռմբակոծությունների բացած փոսորակները, որոնց մեջ ոլորվում էր ալաբաստրե փոշին ու սողում ավերակույտերի վրայով, և՛ հսկայական պարապուտները, որտեղ հրթիռները տեղ էին բացել հավաքներ հիշեցնող աղքատիկ տախտակաշեն խրճիթների համար: Սակայն անդրադարձն անհույս էր. ոչինչ հիշել չէր կարողանում. մանկությունից ոչինչ չէր մնացել, բացի կցկտուր, վառ լուսավորված տեսարաններից, որոնք զուրկ էին խորապատկերից, և առավել հաճախ՝ անհասկանալի:

Ճշմարտության նախարարությունը, նորալեզվով՝ Նախաճշտը, ապշեցուցիչ կերպով տարբերվում էր այն ամենից, որ իր շուրջն էր: Դա մի հսկայական բրգաձև շինություն էր, որը ճերմակ բետոնը շողացնելով՝ սանդուղք առ սանդուղք խոյանում էր

դեպի երեքհարյուրմետրանոց բարձունքը: Ուինսթոնն իր կանգնած տեղից շենքի սպիտակ ճակատին կարող էր կարդալ Նրբագեղ տառատեսակով գրված երեք կուսակցական կարգախոսները.

**ՊԱՏԵՐԱԶՄԸ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ Է
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՏՐԿՈՒԹՅՈՒՆ Է
ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺ Է**

Ըստ լուրերի՝ Ճշմարտության Նախարարությունը ուներ երեք հազար աշխատասենյակ գետնի երեսին և համապատասխան ժյուղավորում՝ գետնի տակ: Լոնդոնի տարբեր ծայրերում այդ կարգի ու չափերի ընդամենը երեք շինություն էր կանգնած: Դրանք այնպես էին խոյանում քաղաքի վրա, որ «Հաղթանակ» բնակելի շենքի տանիքից կարելի էր տեսնել չորսը միանգամից: Այդ շինություններում տեղավորված էին չորս Նախարարությունները՝ ամբողջ պետական ապարատը. Ճշմարտության Նախարարությունը, որ տնօրինում էր տեղեկատվությունը, ժամանցը, կրթությունը և գեղեցիկ արվեստները, Խաղաղության Նախարարությունը, որ տնօրինում էր պատերազմը, Սիրո Նախարարությունը, որ տնօրինում էր կարգի պահպանումը, և Առատության Նախարարությունը, որը պատասխանատու էր տնտեսության համար: Նորալեզվով՝ Նախաճշտ, Նախախաղ, Նախասիր և Նախառատ:

Սիրո Նախարարությունը իրոք սարսափեցնող էր: Ծինությունը լուսամուտներ չուներ: Ուինսթոնը ոչ մի անգամ չէր հատել Նրա շենք, ոչ մի անգամ կես կիլոմետրից ավելի չէր մոտեցել այդ շենքին: Այնտեղ կարելի էր մտնել միայն որևէ պաշտոնական գործով, այն էլ՝ հաղթահարելով փշալարերի, պողպատե դռների և քողարկված գնդացրային բների մի ամբողջ լաբիրինթոս: Նույնիսկ դեպի արտաքին արգելապատնեշները տանող փողոցներում պարեկում էին սևազգեստ պահնորդները, որ գորիլայի մուրթներ ունեին ու զինված էին հողավոր մահակներով:

Ուինսթոնը կտրուկ շրջվեց: Հանդարտ լավատեսության արտահայտություն տվեց դեմքին, ինչն ավելի էր պատշաճում հեռէկրանի առջև կանգնելուն, և անցավ սենյակի մյուս ծայրը՝ դեպի փոքրիկ խոհանոցը: Այդ ժամին Նախարարությունը լքելով՝ զոհաբերել էր ճաշը, և գիտեր, որ տամն ուտելու ոչինչ չկար, բացի մի պատառ սև հացից, որ պետք էր խնայել մինչև հաջորդ օրվա Նախաճաշը: Նա դարակից վերցրեց անգույն հեղուկի շիշը, որի վրա մի հասարակ սպիտակ պիտակ էր փակցված՝ «Հաղթանակ» ջին: Խմիչքի հոտը գարշելի էր, մի տեսակ յուղոտ, ինչպես չինական բրնձօղունը: Ուինսթոնը համարյա մի ամբողջ գավաթ լցրեց, խոր շունչ քաշեց ու կուլ տվեց, ինչպես դեղն են կլլում:

Նրա դեմքն անմիջապես շառագունեց, իսկ աչքերից արցունքներ հոսեցին: Խմիչքն ազոտաթթու էր հիշեցնում. դա իբր քիչ էր՝ կում անելուց հետո զգացողությունն այնպիսին էր, ասես մեջքդ դաղած լինեին ռետինե մահակով: Բայց շունով ստամոքսի այրոցը մեղմացավ, և աշխարհն ավելի ուրախ տեսք առավ: Նա «Հաղթանակ» պիտակով սիգարետների ճմռթված տուփից մի գլանակ հանեց ու, ցրվածությունից, չափազանց երկար պահեց ուղղահայաց դիրքով. ամբողջ թուրթունը թափվեց հատակին: Ուինսթոնը մյուս սիգարետի հետ ավելի զգույշ էր: Նա վերադարձավ սենյակ ու Նստեց սեղանիկի մոտ՝ հեռէկրանից ձախ: Սեղանի դարակից հանեց գրիչը, թանաքամանը և մի հաստափոր գրքույկ՝ կարմիր կռնակով ու մարմարափայլ կազմով՝ Նախատեսված գրառումների համար:

Ինչ-որ անհայտ պատճառով հեռէկրանն այդ սենյակում ընդունված ձևով չէր տեղադրված: Ոչ թե կողմնային պատի մեջ էր, որտեղից հնարավոր էր տեսնել ամբողջ սենյակը, այլ երկարուկ պատի մեջ՝ լուսամտի դիմաց: Այնտեղ մի կողային խորշ կար՝ հավանաբար գրքերի համար, որտեղ էլ հենց տեղավորվել էր Ուինսթոնը: Ավելի խոր Նստելով իր անկյունում՝ անհասանելի, ավելի ստույգ՝ անտեսանելի էր դառնում հեռէկրանի համար: Նրան լսել, իհարկե, կարող էին, բայց հետևել, քանի դեռ այնտեղ էր ո՛չ: Սենյակի

այս փոքր-ինչ անսովոր կառուցվածքն էլ նրան բերեց այն գործով զբաղվելու մտքին, որով հիմա պատրաստվում էր զբաղվել:

Սակայն, դրանից բացի, նրան այդ միտքը հուշել էր նաև գրքույկը, որ հենց նոր էր հանել դարակից: Գիրքը զարմանալիորեն գեղեցիկ էր: Հարթ, կրեմագույն թուղթը ժամանակից փոքր-ինչ դեղնել էր. այդպիսի թուղթ չէր արտադրվում արդեն քառասուն տարի, գուցե և ավելի: Ուիսթոնը կասկածներ ուներ, որ գրքույկը շատ ավելի հին է: Նա գիրքը տեսել էր հնավաճառի ցուցափեղկում, քաղաքի հետնախորշերի թաղամասում (հատկապես որտեղ՝ արդեն մոռացել էր) ու բռնվել գնելու մեծ ցանկությամբ: Կուսակցության անդամներին չէր թույլատրվում մտնել սովորական խանութները (դա կոչվում էր «սպրանքներ հայթայթել ազատ շուկայում»), սակայն այդ կանոնը հաճախ անտեսվում էր. բազմաթիվ առարկաներ, ինչպես, ասենք, կոշկաքուղերն ու ածելու սայրերը, այլ կերպ ձեռք բերել հնարավոր չէր: Ուիսթոնն արագ շուրջը նայեց, սուզվեց կրպակն ու գիրքը գնեց երկուսուկես դոլարով: Թե ինչի համար՝ դեռ ինքն էլ չգիտեր: Գողեգող տուն բերեց՝ պորտֆելի մեջ դրած: Նույնիսկ առանց գրառումների՝ գրքույկն արդեն անվանարկում էր տիրոջը:

Իսկ հիմա մտադրվել էր օրագիր պահել: Դա հակաօրինական արարք չէր (ընդհանրապես հակաօրինական ոչինչ գոյություն չունեին, քանի որ այլևս գոյություն չունեին իրենք՝ օրենքները), բայց եթե օրագիրը գտնեն, Ուիսթոնին մահ է սպառնում կամ, լավագույն դեպքում, քսանհինգ տարվա ազատազրկում՝ տաժանապարտների ճամբարում: Ուիսթոնը գրչաձայրը դրեց բնիկի մեջ ու լպստեց, որ քսուքը հանի: Գրիչը հնադարյան գործիք էր. դրանով նույնիսկ հազարից մեկ էին ստորագրում, և Ուիսթոնն այն ձեռք էր բերել թաքուն ու ոչ առանց դժվարության. այդ գեղեցիկ, կրեմագույն թուղթը, նրան թվում էր, արժեր, որ վրան իսկական թանաքով գրեին, ոչ թե խազխազեին թանաքի մատիտով: Ճիշտն ասած, նա գրելու սովոր չէր: Բացի ամենակարճիկ նշումներից, ամեն ինչ թելադրում էր խոսագրիչին, բայց այստեղ, հասկանալի է, թելադրելու մասին

1984

խոսք չէր կարող լինել: Նա գրչածայրը թաթախեց թանաքի մեջ ու մի պահ հապաղեց: Աղիքներում կծկումներ զգաց: Գրչով թղթին հավելն այլևս անդառնալի քայլ էր: Մանր ու ծուռտիկ տառերով գրեց.

4-ը ապրիլի, 1984 թվական...

Ու հետ ընկավ թրոռի թիկնակին: Նրան պատեց կատարյալ անօգնականության զգացումը: Նախ չգիտեր՝ իսկապե՞ս 1984 թվականն է: Մոտ այդքան՝ անկասկած. համարյա վստահ էր, որ ինքը երեսունինը տարեկան է և ծնվել է 1944-ին կամ քառասունհինգին. բայց արդեն անհնար էր ճշգրիտ սահմանել որևէ տարեթիվ. մեկ-երկու տարվա սխալն անխուսափելի էր:

Իսկ, հանկարծ մտահոգվեց նա, ո՞ւմ համար է գրվում այս օրագիրը: Ապագայի՞ համար, նրա՞նց համար, որ դեռ չեն ծնվել: Միտքը մի պահ պտտվեց թղթին տրված կասկածելի տարեթվի շուրջ ու հանկարծ սայթաքեց նորալեզվի *կրկնամիտք* բառի վրա: Եվ առաջին անգամ Ուինսթոնն ընկալեց իր ձեռնարկի ամբողջ բարդությունը: Ինչպե՞ս շփվել ապագայի հետ: Դա, ըստ էության, անհնար է: Կան վաղը նման կլինի այսօրին, և ոչ ոք իրեն չի լսի, կան բոլորովին ուրիշ կլինի, և Ուինսթոնի ձախորդությունները ոչինչ չեն ասի նրանց:

Ուինսթոնը, որոշ ժամանակ անմիտ հայացքը թղթին հառած, նստել էր: Հեռեկրանից ճայթեց հատու զինվորական երաժշտությունը: Հետաքրքիր է. նա ոչ միայն կորցրել էր իր մտքերն արտահայտելու ունակությունը, այլև նույնիսկ մոռացավ, թե սկզբում ինչ էր ուզում ասել: Քանի՞ շաբաթ պատրաստվել էր այդ պահին և մտքով անգամ չէր անցել, որ միայն խիզախությունը բավական չէ: Ընդամենը գրի առնել. դրանից դյուրին բան կա՞: Թղթին հանձնել անվերջավոր տազնապալի մենախոսությունը, որ արդեն տարիներ, տարիներ հնչում է նրա գլխում: Եվ ահա նույնիսկ այդ

մենախոսությունն է լռել: Իսկ ոտնակոճի խոցն անտանելի տնքում է: Նա չէր համարձակվում քորել ոտքը. դրանից միշտ բորբոքում էր սկսվում: Վայրկյաններն անցնում էին. կա՛թ, կա՛թ, կա՛թ: Միայն թղթի ճերմակությունը, մեկ էլ՝ ոտնակոճի քորը, ու դղրդացող երաժշտությունը, ու թեթև գինովությունը,– ահա այն ամենը, որ հիմա ընկալում էին նրա զգայարանները:

Ու հանկարծ սկսեց գրել,– պարզապես խուճապից, աղոտ ընկալելով այն ամենը, որ հոսում էր գրչաձայրից: Մարգարտաշար, բայց երեխայաբար ծուռտիկ տողերը թղթի վրա մեկ մազլցում էին վեր, մեկ սողում ցած՝ նախ կորցնելով գլխատառերը, ապա և՛ վերջակետերը:

4-ը ապրիլի, 1984 թվական: Երեկ կինոյում: Ծայրեծայր գինվորական ֆիլմեր: Մեկը շար լավն էր. ինչ-որ տեղ՝ Միջերկրական ծովում, ոմբակոծում են փախստականների նավը: Հանդիսարեսին զվարճացնում են այն կադրերը, որտեղ փորձում է լողալով փախչել մի հսկայական չաղ տղամարդ, ու նրան հետապնդում է ուղղաթիռը, սկզբում տեսնում ենք, թե նա ինչպես է ծովախոզուկի նման թաքտում ջրի մեջ, հետո տեսնում ենք նրան ուղղաթիռից՝ նշանացույցի միջով, հետո լրիվ ծակծկված է, ու ծովի ջուրը՝ վարդագույն, և անմիջապես սուզվում է՝ ասես ծակերով ջուր է քաշել. երբ սուզվեց ջրի հատակը, հանդիսարեսները սկսեցին հռչալ: հետո փրկանավակը՝ լիքը երեխա ու վրան պարտվող ուղղաթիռը: նավաքթին նստել է միջին տարիքի մի կին, հրեուհու նման, երեք տարեկան երեխան գրկած: տղան վախից ճչում է ու գլուխը թաքցնում մոր կրծքին, ասես ուզում է խրվել–մնալ այնտեղ, իսկ կինը հանգստացնում է ու ծածկում–պաշտպանում ձեռքերով, չնայած ինքն էլ վախից կապտել է, շարունակ ուզում է ձեռքերով ավելի լավ ծածկել՝ ասես գնդակներից նրան պաշտպանելու համար: հետո ուղղաթիռը նրանց վրա 20 կիլոգրամանոց

1984

հրթիռ ներքեց, սարսափելի պայթյուն, ու նավակը կտոր-կտոր եղավ: հետո հրաշալի կադր՝ մանկան ձեռքը թռչում է դեպի վեր վեր ուղիղ երկինք երևի նկարել են ուղղաթիռի ապակեպատ քթից ու կուսակցական շարքերում ուժեղ ծափահարում էին բայց այնտեղ որտեղ նստած էին պրոլները մի կին աղմուկ բարձրացրեց և բղավեց որ դա չի կարելի ցույց տալ երեխաներին ինչպես կարելի է ինչպես կարելի է երեխաների ներկայությամբ և աղմկում էր մինչև ոստիկանները դուրս տարան նրան դուրս տարան նրան ու հազիվ թե նրան բան պատահի ինչ ասես չեն կարող ասել պրոլները զուտ պրոլական ռեակցիա է դրան ոչ ոք ուշադրություն...

Ուինսթոնը դադար տվեց, նաև այն պատճառով, որ ձեռքը թմրել էր: Ինքն էլ չէր հասկանում՝ ինչո՞ւ է այդ ամբողջ ցնդաբանությունը թափում թղթին: Սակայն հետաքրքիր է՝ քանի դեռ շարժում էր գրիչը, հիշողությունը վերականգնեց մի իրադարձություն, որը կարելի էր թեկուզ միանգամից էլ գրի առնել: Նա հիմա հասկացավ, որ հենց այդ դեպքի պատճառով էր որոշել անմիջապես հասնել տուն ու հենց այդ օրը սկսել օրագիրը:

Դա կատարվել էր առավոտյան, նախարարությունում, - եթե, իհարկե, այդպիսի միգամածության մասին կարելի է ասել «կատարվել էր»:

Փամանակը մոտենում էր տասնմեկ զրո-զրոյին, և փաստաթղթերի բաժնում, որտեղ աշխատում էր Ուինսթոնը, աշխատակիցները սկսեցին խցիկներից հանել աթոռներն ու շարել նախասրահի կենտրոնում՝ մեծ հեռեկրանի առաջ. հավաքվում էին՝ մասնակցելու Ատելության երկրպետին: Ուինսթոնը պատրաստվում էր իր տեղը գրավել միջին շարքում, երբ անսպասելիորեն էլի երկու հոգի մտան սենյակ. դեմքերը ծանոթ էին, սակայն հետները խոսել չէր վիճակվել: Նրանցից մեկին՝ աղջկան, հաճախ էր տեսնում միջանցքներում: Թե անունն ինչ էր՝ չգիտեր, գիտեր միայն, որ աշխատում է

Գեղարվեստական գրականության բաժնում: Դատելով նրանից, որ յուրոտ ձեռքերում երբեմն մանեկաբանալի էր լինում՝ աղջիկը սպասարկում էր վեպեր հորինող մեքենաներից մեկը: Նա պեպե-նոտ էր, խիտ սև մազերով, մոտ քսանյոթ տարեկան, ինքնավստահ պահվածք ուներ, մարզական սրընթաց քայլք: Մեջքին միքանի-տակ փաթաթած նեղ ալ գոտին՝ երիտասարդական հակասեռային միության խորհրդանշանը, ընդգծում էր ազդրերի պրկությունը: Նա առաջին իսկ հայացքից դուր չէր եկել Ուինսթոնին: Գիտեր, թե ինչու: Աղջկա շուրջը թևածում էր մակամախաղի մարզադաշտերի, սառը լոգանքների, տուրիստական արշավների և ընդհանրապես՝ ուղղափառության ոգին: Նա չէր սիրում համարյա բոլոր կանանց, հատկապես՝ ջահելներին ու սիրուններին: Հենց կանայք ու հատկապես ջահելներն էին Կուսակցության ամենաջերմեռանդ նվիրյալները, նրանց կարգախոսները կլլողները, ինքնուր լրտուններն ու հերձվածողությունը հոտոտողները: Բայց հատկապես այս աղջիկը նրան մյուսներից ավելի վտանգավոր էր թվում: Մի անգամ աղջկան հանդիպեց միջանցքում. սա շեղ նայեց, ասես խոցեց հայացքով, և Ուինսթոնի հոգին թափանցեց սև վախը: Մինչևիսկ կասկած մտավ մեջը, թե աղջիկը Մոքի ոստիկանության գործակալ է: Ասենք, դա քիչ հավանական էր: Համենայնդեպս, ամեն անգամ աղջկան իր կողքին տեսնելիս Ուինսթոնը տհաճություն էր զգում, որին խառնվում էին ատելությունն ու վախը:

Մյուսը Օ'Բրայենն էր՝ Ներքին կուսակցության անդամ, որն այնքան բարձր ու անհասանելի պաշտոն էր զբաղեցնում, որ Ուինսթոնը դրա մասին աղոտ պատկերացում ուներ: Ներքին կուսակցության անդամի սև կոմբինեզոնը տեսնելով՝ հեռէկրանի առջև նստած մարդիկ մի պահ սկզվեցին: Օ'Բրայենը թիկնեղ, ամուր կազմվածքով տղամարդ էր՝ պարանոցն ուժեղ, դեմքին՝ կոպտավուն ծաղրասիրություն: Չնայած ահազդու արտաքինին՝ հմայքից զուրկ չէր: Նա քթարմատին ակնոցը շտկելու սովորություն ուներ, և այդ ինքնահատուկ շարժման մեջ մի տարօրինակության

1984

աստիճանի զինաթափող բան կար, մի անորսալի բարեկրթություն: Տանութերորդ դարի ազնվական, որ առաջարկում է քթախտի տուփը. ահա թե ինչ էր անցնում Նրա մտքով, ով դեռ կարողանում էր նման համեմատություններով մտածել: Տասը տարվա ընթացքում Ուինսթոնը երևի մի տասն անգամ տեսած կլիներ Օ'Բրայենին: Օ'Բրայենը ձգում էր Նրան, բայց ոչ միայն այն պատճառով, որ մտահոգիչ էր դաստիարակվածության ու ծանրքաշային բռնցքամարտիկի մարմնակազմության այդ հակադրությունը: Ուինսթոնը հոգու խորքում կասկածում էր, - գուցե չէր էլ կասկածում, այլ հույս ուներ, - որ Օ'Բրայենը քաղաքականապես այնքան էլ ուղղափառ չէ: Նրա դեմքն այդպես մտածելու տեղիք էր տալիս: Բայցևայնպես, հնարավոր է, որ դեմքին գրված էր ոչ թե անուղղափառությունը, այլ պարզապես խելքը: Այսպես թե այնպես Նա այնպիսի մարդու տպավորություն էր թողնում, որի հետ հնարավոր է խոսել, եթե հաջողվի մենակ մնալ ու թաքնվել հեռէկրանի աչքից: Ուինսթոնը ոչ մի անգամ չէր փորձել ստուգել իր այդ ենթադրությունը. ասենք, դա Նաև Նրա ուժերից վեր էր: Օ'Բրայենը Նայեց ժամացույցին, տեսավ, որ համարյա տասնմեկ զրո-զրոն է, ու որոշեց Ատելության երկրոպեն անցկացնել փաստաթղթերի բաժնում: Նստեց Ուինսթոնի շարքում, երկու աթոռ այն կողմ: Նրանց արանքում տեղ էր զբաղեցրել մի փոքրամարմին, շիկահեր կին, որ աշխատավայրում Ուինսթոնի հարևանն էր: Թխահեր աղջիկը Նստեց ուղիղ ետևը:

Եվ ահա սենյակի ծայրից՝ մեծ հեռէկրանից մի զզվելի վայնասուն ու ճնշչոց պոկվեց. ասես գործի գցած լինեին մի հրեշավոր չլուրած մեքենա: Այդ ծայնից մարդու մազերը բիզ-բիզ էին կանգնում, ատամները տնքում էին: Ատելությունն սկսվել էր:

Ինչպես միշտ, էկրանին հայտնվեց ժողովրդի թշնամի էմանուել Գոլդսթայնը: Հանդիսատեսները Ֆշշացրին: Շիկավուն մազերով փոքրամարմին կինը ծղրտաց վախից ու զզվանքից: Գոլդսթայնը, - ուրացող ու ռենեգատ, - մի ժամանակ, վաղուց, շատ վաղուց (այնքան վաղուց, որ արդեն ոչ ոք չէր հիշում, թե երբ) Կուսակցության

ղեկավարներից էր եղել, համարյա հավասար անձամբ Մեծ եղբորը, իսկ հետո հակահեղափոխության ճանապարհին էր բռնել, դատապարտվել էր մահապատժի, բայց առեղծվածայնորեն փախել ու անհետացել էր: Երկրոպեի ծրագիրը փոխվում էր ամեն օր, սակայն գլխավոր գործող անձը միշտ Գոլդսթայնն էր: Գլխավոր դավաճանը, Կուսակցության անաղարտության առաջին ապականիչը: Նրա տեսությունից էին ժյուդավորվել հետագա բոլոր հանցագործությունները կուսակցության դեմ, բոլոր վնասարարությունները, դավաճանությունները, հերձվածները, շեղումները: Հայտնի չէ՝ որտեղ, նա դեռ շարունակում էր ապրել ու դավադրություն կռել, - գուցե ծովից անդին՝ իր օտարերկրյա տերերի պաշտպանության ներքո, կամ հնարավոր է, - նաև այդպիսի լուրեր էին շրջում, - այնտեղ էր՝ Օվկիանիայում, ընդհատակում:

Ուինսթոնի շչառությունը ծանրացավ: Գոլդսթայնի դեմքը միշտ նրա մեջ բարդ ու տանջալից զգացումներ էր արթնացնում: Չոր հրեական դեմքը՝ թեթև ճերմակ հերքի շրջանակում, այժամորուքը, - դեմքը՝ խելացի ու դրա հետ մեկտեղ՝ անբացատրելիորեն վանող, և ինչ-որ տարօրինակ բան կար այդ երկար, նիհար քթի մեջ, որի վրայից ակնոցը սահել, համարյա հասել էր ծայրին: Նա նման էր ոչխարի, և ծայնի մեջ էլ մայուն էր լսվում: Ինչպես միշտ՝ Գոլդսթայնը չարախնդությանը հարձակվեց կուսակցական ուսմունքի վրա. այդ հարձակումներն այնքան անմիտ ու անհեթեթ էին, որ չէին խաբի անգամ երեխային, սակայն դրա հետ միասին զուրկ չէին համոզությունից, և լողն ականա երկյուղում էր, որ ուրիշները պակաս սթափները, կարող են հավատալ Գոլդսթայնին: Նա լուտանքներ էր տեղում Մեծ եղբոր վրա, պսակազերծում էր Կուսակցության դիկտատուրան, պահանջում էր անհապաղ հաշտություն կնքել Եվրասիայի հետ, կոչում էր խոսքի ազատության, մամուլի ազատության, հավաքների ազատության, մտքի ազատության, նա հիստերիկ ծղավում էր, թե հեղափոխությունը ծախել են, - և այդ ամենը՝ շուտասելուկով, կազմածո բառերով՝ ասես նմանակելով

1984

կուսակցական հռետորների խոսքը, նույնիսկ նորալեզվի բառերով, որոնք, ի դեպ, նրա խոսքում ավելի հաճախադեպ էին, քան ցանկացած կուսակցականի խոսքում: Եվ ամբողջ ժամանակ, որպեսզի կասկած անգամ չլիներ, թե ով է կանգնած Գոլդսթայնի կեղծավոր շատախոսության թիկունքին, նրա դեմքից անդին, երկրորդ պլանում, երթաքայլում էին եվրասիական անվերջանալի շարասյունները. շարք-շարք պնդակազմ զինվորները՝ ասիական անդրդվելի կերպարանքներով, դուրս էին լողում խորքերից ու լուծվում հեռուներում՝ տեղը զիջելով իրենց նմանակներին: Զինվորական սապոգների խուլ դոփյունը նվազակցում էր Գոլդսթայնի մկկոցին:

Ատելությունն սկսվել էր ընդամենը մի երեսուն վայրկյան առաջ, բայց հանդիսատեսների կենս արդեն չէր կարողանում զսպել կատաղի գոչյունները: Անտանելի էր տեսնել այդ ինքնահավան ոչխարային դեմքը ու դեմքից այն կողմ՝ եվրասիական զորքերի սարսափազդու հզորությունը. բացի այդ, Գոլդսթայնին տեսնելիս և նույնիսկ ընդամենը նրա մասին մտածելիս վախն ու ատելությունը ծնվում էին ինքնաբերաբար: Նրա հանդեպ ատելությունը շատ ավելի մշտակայուն էր, քան եվրասիայի և Արևելաասիայի, քանզի երբ Օվկիանիան պատերազմում էր նրանցից մեկի դեմ, մյուսի հետ սովորաբար հաշտություն էր կնքում: Բայց ահա թե ինչն էր ամենազարմանալին. թեև Գոլդսթայնին ատում ու արհամարհում էին բոլորը, թեև ամեն օր, օրը հազար անգամ ամբիոններից, հեռէկրանով, թերթերում ու գրքերում նրա ուսմունքը ժխտում էին, ջարդուփշուր անում, ոչնչացնում, ծանակում՝ իբրև խղճուկ ցնդաբանություն, նրա ազդեցությունը բնավ չէր նվազում: Միշտ կային դյուրահավատ մարդիկ, որոնց նա հրապուրում էր: Օր չէր անցնում, որ Մտքի ոստիկանությունը չմերկացներ լրտեսներին ու վնասարարներին, որոնք գործում էին նրա ցուցումներով: Նա հսկայական ստվերային բանակ էր ղեկավարում, դավադիրների ընդհատակյա ցանց, որոնք ձգտում էին իրավակարգի տապալմանը: Ենթադրվում էր, որ այն կոչվում է Եղբայրություն: Շուկով խոսում էին

Նաև մի սարսափելի գրքի մասին, հերձվածների ժողովածուի, որի հեղինակը Գոլդաթայնն էր, և որը գաղտնի էր տարածվում: Գիրքը վերնագիր չուներ: Խոսակցություններում այն հիշատակում էին,– եթե ընդհանրապես հիշատակում էին,– պարզապես որպես *գիրք*: Սակայն նման բաների մասին հայտնի էր դառնում միայն անհատակ շշուկներից: Կուսակցության անդամներն ըստ կարելվույն աշխատում էին չխոսել ո՛չ եղբայրության մասին, ո՛չ *գրքի*:

Երկրորդ թուպեին ատելությունը վերածվեց կատաղության մոլուցքի: Մարդիկ վեր էին թռչում տեղներից ու բղավում կոկորդով մեկ, որպեսզի խլացնեն Գոլդաթայնի անտանելի, մկկացող ձայնը: Շիկավուն մազերով փոքրամարմին կինը կարմրատակել էր ու ցամաք ընկած ձկան պես բացուխուփ էր անում բերանը: Նույնիսկ Օ'Բրայենի ծանր դեմքն էր շառագունել: Նա նստել էր ձգված, և հզոր կուրծքն ուռչում ու ցնցվում էր, ասես ներսում ավելորդություն լիներ: Ուինսթոնի ետևը նստած թխահեր աղջիկը ճչաց. «Սրիկա՛: Սրիկա՛: Սրիկա՛», ապա վերցրեց Նորալեզվի ծանր բառարանն ու նետեց հեռէկրանի վրա: Բառարանը դիպավ Գոլդաթայնի քթին ու հետ թռավ: Սակայն ձայնն անհնար էր սպանել: Պայծառացման մի պահի Ուինսթոնը գիտակցեց, որ ինքն էլ է բղավում բոլորի հետ ու կատաղած քացահարում աթոռի թիկնակը: Ատելության երկրոպեի ժամանակ սարսափելին այն չէր, որ ստիպված էիր խաղալ, այլ այն, որ ուղղակի չէիր կարող անտարբեր մնալ: Անցնում է ընդամենը ինչ–որ երեսուն վայրկյան, և արդեն ձևանալու կարիք չունես: Ասես էլեկտրական լիցքից՝ հավաքվածների վրա էին հարձակվում վախի և վրեժխնդրության գարշելի ջղակծկումները, սպանելու, բզկտելու, դեմքերը մուրճով ջնջխելու մոլեգին ցանկությունը, մարդիկ ծամաճռում էին երեսներն ու ճղավում խելագարի պես: Միևնույն ժամանակ՝ կատաղությունը վերացական էր և ոչ ուղղորդված, այն կարելի էր դարձնել ցանկացած կողմ, ինչպես զոդալամպի բոցը: Եվ հանկարծ պարզվում էր, որ Ուինսթոնի ատելությունն ուղղված է բոլորովին էլ ոչ Գոլդաթայնին, այլ Մեծ եղբորը, Կուսակցությանը,

Մտքի ուստիկանությանը. նման պահերին նա սրտով այդ միայնակ, ծանակված հերետիկոսն էր, ողջամտության ու ճշմարտության միակ պահապանը ստի աշխարհում: Իսկ վայրկյան անց արդեն միակամ էր մնացածի հետ, ու ճշմարտություն էր թվում այն ամենը, որ ասվում էր Գոլդսթայնի մասին: Այդ ժամանակ արդեն Մեծ եղբոր հանդեպ թաքուն զգվանքը վերածվում էր երկրպագման, և Մեծ եղբայրը բարձրանում էր ամենքից և ամեն ինչից վեր՝ անխոցելի, անվախ պաշտպանը՝ ժայռի պես կեցած ասիական հորդանների դեմ, իսկ Գոլդսթայնը, չնայած վտարակի վիժակին ու անօգնականությանը, չնայած կասկածներին, թե ո՞րք է ընդհանրապես, ներկայանում էր որպես չարագուշակ կախարդ, որն ընդունակ է հենց միայն ձայնի ուժով կործանել քաղաքակրթության շինությունը:

Իսկ երբեմն կարելի էր դառնում սեփական ատելությունը գիտակցաբար ուղղել այս կամ այն առարկային: Կամքի մի կատաղի ջանքով, ինչպես մղձավանջի ժամանակ գլուխդ կտրում ես բարձից, Ուինսթոնը կատաղությունն էկրանային դեմքից տեղափոխում էր ետևը՝ նստած թխահեր աղջկա վրա: Երևակայության մեջ առկայծում էին հստակ, գեղեցիկ պատկերները. ինքը՝ նրան կծեծի ռետինե մահակով: Մերկացրած՝ կկապի սյանը, կխոցոտի նետերով, ինչպես սուրբ Սեբաստիանին: Կբռնաբարի ու վերջին ջղակծկումներում կկտրի կոկորդը: Եվ առավել պարզ, քան նախկինում, հասկացավ, թե ինչու է նրան ատում: Նրա համար, որ ջահել էր, գեղեցիկ և սեռազուրկ. նրա համար, որ ինքն ուզում է նրա հետ քնել ու երբեք չի կարողանա. նրա համար, որ աղջկա բարախիկ, նուրբ, ասես գրկելու համար ստեղծված գոտկատեղին ոչ թե իր ձեռքն է, այլ այդ զգվելի ալ կարմիր գոտին՝ կուսականության մարտնչող խորհրդանիշը:

Ատելությունն ավարտվեց ջղացնցումներով: Գոլդսթայնի ելույթը վերածվեց իսկական մկկոցի, իսկ դեմքը մի ակնթարթ դարձավ իսկապես ոչխարի դեմք: Հետո մռուրը լուծվեց եվրասիական զինվորի մեջ. հսկայական ու սարսափելի՝ նա գալիս էր նստածների վրա, ինքնաձիգից կրակ թափելով, սպառնալով պատառ-պատառ անել

Էկրանը,- այնպես, որ դիմացի շարքում շատերը վախեցած հետ ընկան աթոռների վրա: Բայց և անմիջապես թեթևացած շունչ քաշեցին. թշնամու կերպարանքը սահուն փակեց Մեծ եղբոր գլուխը՝ սևահեր, սևաբեղ, լեցուն ուժով ու առեղծվածային հանդարտությամբ, այնքան ահռելի, որ բռնեց համարյա ամբողջ Էկրանը: Ոչ ոք չէր լսում՝ ինչ է ասում Մեծ եղբայրը: Գոտեպնդման ընդամենը մի քանի բառ, ինչպիսիք առաջնորդը նետում է ճակատամարտի դղրդոցի մեջ, որոնք ինքնին թող որ անհասկանալի են, բայց՝ վստահություն ներշնչող հենց միայն նրանով, որ արտասանվել են: Հետո Մեծ եղբոր դեմքն աղոտացավ, ու հայտնվեց հստակ խոշորատառ մակագրությունը՝ երեք կուսակցական կարգախոսները.

**ՊԱՏԵՐԱԶՄԸ ԽՂՂՂՈՒԹՅՈՒՆ Է
ԱԶՎՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆ Է
ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺ Է**

Բայց դեռ էլի մի քանի ակնթարթ Մեծ եղբոր դեմքը կարծես մնում էր Էկրանին. այնպես վառ էր կանգնած մարդկանց աչքի առաջ, որ միանգամից անհետանալ չէր կարող: Փոքրամարմին շիկահեր կինը կրծքով ընկավ առջևի աթոռի թիկնակին: Հեծկլտացող շշուկով մրմնջաց՝ «Փրկի՛չ իմ», ու ձեռքերը պարզեց հեռէկրանին: Ըստ երևույթին՝ աղոթում էր:

Այստեղ արդեն ամբողջ խումբը սկսեց դանդաղ, համաչափ, ցածրաձայն վանկարկել «Մ-ե... Մ-ե... Մ-ե...».- նորից ու նորից, ծոր տալով, տևական դադարներով Մ-ի ու Ե-ի արանքում, և այդ ծանր ալիքաձև ձայնի մեջ ինչ-որ տարօրինակ նախնականություն կար. նրանից այն կողմ տեսլանում էին բոբիկ ոտքերի թփթփոցն ու մեծ թմբուկների դղիրդը: Այդ ամենը տևեց կես րոպեի չափ: Նման բան հաճախ պատահում էր այն վայրկյաններին, երբ զգացումները հասնում էին առանձնակի շիկացման: Երբեմն դա հիմն էր Մեծ եղբոր վեհությանն ու իմաստնությանը, բայց առավել՝ ինքնահիպնոս.

1984

մարդիկ իրենց բանականությունը միտումնավոր խեղդում էին ռիթմիկ աղմուկի մեջ: Ուիսսթոնը որովայնում սառնություն զգաց: Ատելության երկրոպեներին նա չէր կարողանում չտրվել համընդհանուր խելահեղությանը, բայց վայրենիների այդ մարտակոչը՝ «Մ-ե... Մ-ե... Մ-ե...», միշտ սարսափեցնում էր նրան: Իհարկե, վանկարկում էր մյուսների հետ, այլ կերպ չէր կարելի: Թաքցնել զգացումները, տիրապետել դիմախաղին, անել այն, ինչ մյուսները՝ այս ամենը դարձել էր բնագոյ, սակայն կար մի երկվայրկյանանոց միջնատարածք, երբ աչքերի արտահայտությունը կարող էր մատնել նրան: Հենց այդ ժամանակահատվածում էլ մի զարմանալի բան կատարվեց, եթե, իհարկե, կատարվեց իսկապես:

Վայրկենապես նա հայացքով հանդիպեց Օ'Բրայենի հայացքին: Օ'Բրայենը արդեն վեր էր կացել: Նա հանել էր ակնոցն ու հիմա նորից դնելով՝ ձեռքի յուրահատուկ շարժումով շտկում էր քթարմատին: Սակայն ակնթարթի ինչ-որ մասում նրանց հայացքները խաչվեցին, և այդ կարճ միջոցում Ուիսսթոնը հասկացավ, այո՛, հասկացավ, որ Օ'Բրայենը նույն բանի մասին է մտածում: Ազդանշանն այլ կերպ մեկնաբանել հնարավոր չէր: Ասես նրանց մտքերը բացված լինեին, և խոհերը հոսեցին մեկից մյուսը՝ աչքերով: «Ես ձեզ հետ եմ, - կարծես ասում էր Օ'Բրայենը: - Ես հրաշալի գիտեմ, թե ինչ եք զգում: Գիտեմ ձեր արհամարհանքի, ձեր ատելության, ձեր զզվանքի մասին: Մի՛ տագնապեք, ես ձեր կողմն եմ»: Սակայն մտքի այդ պայծառացումը մարեց, և Օ'Բրայենի դեմքը կրկին նույնքան անթափանց էր, որքան մյուսներինը:

Ահա և վերջ. Ուիսսթոնը դարձյալ կասկածում էր՝ պատահե՞լ է դա իրականում, թե՞ ոչ: Այդպիսի դեպքերը շարունակություն չէին ունենում: Միայն մեկ բան. նրա մեջ այդ դեպքերը պահպանում էին հավատը, կամ հույսը, որ իրենից բացի էլի կուսակցության թշնամիներ կան: Գուցե ճյուղավորված ընդհատակյա դավադրության մասին լուրերը համենայնդեպս ճիշտ են, գուցե Եղբայրությանն իսկապե՞ս գոյություն ունի: Չէ՞ որ, չնայած անվերջանալի

ձերբակալություններին, խոստովանություններին, մահապատիժներին, ոչ ոք համոզված չէր, որ եղբայրությունը միֆ չէ: Նա մեկ հավատում էր դրան, մեկ չէր հավատում: Ապացույցներ չկային, միայն հպանցիկ հայացքներ, որոնք կարող էին նշանակել ամեն ինչ ու ոչինչ չնշանակել, օտար խոսակցությունների պատառիկներ, կիսաջնջված գրություններ արտաքնոցներում, - իսկ մի անգամ, երբ իր ներկայությամբ հանդիպեցին երկու անձանոթներ, նկատեց նրանց ձեռքերի թեթև շարժումը, որի մեջ կարելի էր ողջույնի նշան կռահել: Միայն կռահումներ. միանգամայն հնարավոր էր, որ այդ ամենը երևակայության պտուղ է: Նա առանց Օ'Բրայենին նայելու հեռացավ իր խցիկը: Թռուցիկ կապը զարգացնելու մասին նույնիսկ չէր մտածում: Անգամ եթե գիտենար, թե ինչպես վարվի այդ ամենի հետ, էլի նման փորձն աներևակայելիորեն վտանգավոր կլիներ: Մեկ-երկու վայրկյան երկիմաստ հայացքներ փոխանակեցին ու՛ վերջ: Բայց նույնիսկ դա հիշատակելի իրադարձություն էր մարդու համար, ում կյանքն անցնում է միայնակության կողպեքի տակ...

Ուինսթոնը ցնցվեց, շտկվեց: Բխկաց: Ջինն ապստամբում էր ստամոքսում:

Աչքերը նորից կենտրոնացան էջի վրա: Պարզվեց՝ քանի դեռ զբաղված էր անօգնական մտորումներով, ձեռքը շարունակել էր մեքենայաբար գրել: Բայց ոչ ջղաձիգ, անշնորհք խուճուճիկներ, ինչպես սկզբում: Գրիչը հեշտասիրությամբ սահել էր հարթ թղթի վրայով՝ խոշոր տպատառերով տողագրելով.

ԿՈՐՁԻ ՄԵՃ ԵՂԲԱՅՐԸ
ԿՈՐՁԻ ՄԵՃ ԵՂԲԱՅՐԸ
ԿՈՐՁԻ ՄԵՃ ԵՂԲԱՅՐԸ
ԿՈՐՁԻ ՄԵՃ ԵՂԲԱՅՐԸ
ԿՈՐՁԻ ՄԵՃ ԵՂԲԱՅՐԸ,-

իրար ետևից, շար-շար, և արդեն կես էջ գրոտած էր:

Նա խուճապային վախով բռնվեց: Անստություն էր, իհարկե. այդ բառերը գրելն ավելի վտանգավոր չէր, քան պարզապես օրագիր պահելը. համենայնդեպս, Նրա մեջ գայթակղություն ծնվեց՝ պատռել գրոտած թղթերն ու ընդհանրապես հրաժարվել այդ ձեռնարկից:

Բայց այդպես չվարվեց. գիտեր, որ անիմաստ է: Կգրի ինքը ԿՈՐ-2ի ՄԵԾ ԵՂԲԱՅՐԸ, թե չի գրի՝ որևէ տարբերություն չկա: Մտքի ոստիկանությունը այսպես թե այնպես կգտնի Նրան: Նա կատարել է, և եթե Նույնիսկ գրչով դիպած չլիներ թղթին, դարձյալ կատարած կլիներ, բացարձակ հանցագործություն, որը ներառում է մնացած բոլոր հանցագործությունները: Մտահանցագործություն, ահա թե ինչպես էր այն կոչվում: Մտահանցագործությունը չի կարելի հավերժ թաքցնել: Ինչ-որ ժամանակ, գուցե և մեկ տարի, կարող ես դիմանալ, բայց, մեկ է, վաղ թե ուշ կհասնեն քեզ:

Դա միշտ կատարվում էր գիշերը. գիշերով էին ձերբակալում: Արթնացնում էին անսպասելի. կոպիտ ձեռքը ցնցում է ուներդ, լույսը գցում են աչքերիդ, մահճակալը շրջապատել են խստամբեր մարդիկ: Որպես կանոն, դատ չէր լինում, ձերբակալման մասին չէր հաղորդվում ոչ մի տեղ: Մարդիկ ուղղակի անհետանում էին և միշտ՝ գիշերը: Քո անունը հանվում է ցուցակներից, բոլոր հիշատակումներն այն մասին, թե ինչ ես արել, ջնջված են, քո գոյության փաստն իսկ ժխտվում է և մոռացման է մատնվում: Դու չեղյալ ես հայտարարված, ոչնչացված ես. ինչպես ընդունված է ասել՝ *գողորդացված*:

Մի պահ տրվեց հիստերիային: Հապշտապ, ծուռտիկ տառերով սկսեց գրել.

ինձ կգնդակահարեն ինձ մեկ է թող գնդակահարեն կրակեն ծոծրակիս ինձ համար մեկ է կորջի մեծ եղբայրը միշտ կրակում են կրակում են ծոծրակին ինձ համար մեկ է կորջի մեծ եղբայրը:

Փոքր-ինչ ամաչելով՝ նա պոկվեց սեղանից, հետ ընկավ աթոռին ու ցած դրեց գրիչը: Եվ այդ պահին արդեն ցնցվեց ողջ մարմնով: Դուռը թակում էին:

Արդե՛ն: Նա սսկվեց մկան պես, հուսալով, որ ծայն չառնելով՝ առաջին թակոցից հետո կհեռանան: Բայց ո՛չ, թակոցը կրկնվեց: Ամենավատն այդ վիճակում հապաղելն էր: Սիրտը դմբդմբում էր թմբուկի նման, սակայն դեմքը, հավանաբար տևական վարժանքի շնորհիվ, անխռով էր: Նա վեր կացավ ու ծանրաքայլ գնաց դեպի դուռը:

II

Ձեռքը զգելով դռան բռնակին՝ Ուինսթոնը տեսավ, որ օրագիրը թողել է սեղանին: «ԿՈՐՉԻ ՄԵՇ ԵՂԲԱՅՐԸ»՝ գրված էր բոլոր էջերին և այնպիսի մեծ տառերով, որ կարելի էր տեսնել սենյակի ցանկացած ծայրից: Արածն ակնհայտ հիմարություն էր: Բայց նա հիշեց, որ նույնիսկ խուճապի պահին չէր ցանկացել փակել օրագիրը, որպեսզի չլողզի յուղոտ թերթը, քանի դեռ թանաքը չէր չորացել:

Շունչ քաշեց ու բացեց դուռը: Մի ակնթարթում թեթևության տաք ալիքը պարուրեց նրան: Շեմին կանգնած էր գունատ, ծնշված տեսքով մի կին՝ յուղոտ մազերով ու կնճռոտ դեմքով:

– Օ՛, ընկեր,- սկսեց նա տաղտկալի, նվսկան ծայնով:– Լսեցի, որ ներս մտաք: Եթե դժվար չէ, կգա՞ք մեր տուն՝ խոհանոցի վրացարանը ստուգելու: Խցանվել է և...

Տիկին Փարսոնսն էր՝ նույն հարթակի հարևանի կինը: («Տիկին» բառը չէր խրախուսվում Կուսակցության կողմից: Պետք էր բոլորին կոչել «ընկեր», բայց որոշ կանանց դեպքում բառը բնագոյաբար էր դուրս թռչում): Երեսունին մոտ կին էր, բայց ավելի մեծ էր երևում: Այնպիսի տպավորություն էր, թե դեմքի ծալքերում փոշի է ծվարել: Ուինսթոնը նրա ետևից քայլեց միջանցքով: Առօրյա մանր, կենցաղային խնդիրները միշտ զայրացնում էին նրան: «Հաղթանակ»

քնակելի տունը հին էր, կառուցվել էր 1930-ական թվականներին, ու հիմա քանդվում էր: Առաստաղից ու պատերից անընդհատ թափվում էր չոր ծեփը, դաժան սառնամանիքներին խողովակները պայթում էին, ամեն անգամ, երբ ձյուն էր տեղում, տանիքը կայթում էր, իսկ ջեռուցման համակարգն աշխատում էր կես ուժով, եթե, իհարկե, խնայողության նկատառումներից ելնելով լրիվ չէին անջատում: Նորոգման աշխատանքները, որ հնարավոր չէր անել ինքնուրույն, պետք է հաստատվեին բարձրաստիճան հանձնաժողովների կողմից, որոնք նույնիսկ պատուհանագոգի նորոգումը ձգձգում էին երկու տարի:

- Իհարկե, եթե Թունը տանը լիներ...,- կցկտուր ասաց տիկին Փարսընսը:

Փարսընսների քնակարանը Ուինսթընի քնակարանից մեծ էր, անասելի կեղտոտ ու թափթփված: Բոլոր առարկաները ճնշված էին, տրորված, ասես հենց նոր մի մեծ վայրի կենդանի էր հյուր եկել: Հատակին թափված էին մարզական պարագաներ՝ հոկեյի մականներ, բռնցքամարտի ձեռնոցներ, ֆուտբոլի ծակված գնդակ, թարս շրջած ու քրտնակոլով կարճ տաբատ, իսկ սեղանին իրար գլխի կուտակված կեղտոտ սպասք ու ծալծված եզրերով տետրեր էին: Պատերից կախված էին երիտասարդական լիգայի և Լրտեսների ալ կարմիր ցուցապաստառներն ու Մեծ եղբոր՝ ոտքից գլուխ պատկերը: Զգացվում էր շոգեխաշած կաղամբի սովորական հոտը, որ հատուկ էր ամբողջ շենքին, բայց այն խամրում էր քրտինքի ավելի սուր հոտից: Զգիտես ինչպես, բայց կարելի էր գուշակել, որ թողել էր ինչ-որ մեկը, ով հիմա ներկա չէր: Մեկ այլ սենյակում մեկը սանրով ու մի կտոր զուգարանի թղթով փորձում էր նվազակցել հեռեկրանից դեռևս հնչող ռազմական երաժշտությանը:

- Երեխաներն են,- ասաց տիկին Փարսոնսը՝ երկյուղած հայացք նետելով դռանը:- Այսօր տնից դուրս չեն եկել, և իհարկե...

Նա նախադասությունները կիսատ թողնելու սովորություն ուներ: Խոհանոցի լվացարանը համարյա պոնկեպոնոն լցված էր

կեղտոտ կանաչավուն ջրով, որ ավելի գարշահոտ էր, քան կաղամբը: Ուինսթոնը չորքեց ու սկսեց ուշադիր զննել խողովակի արմունկը: Նա տանել չէր կարողանում ձեռքի աշխատանքը, չէր սիրում կռանալ, ինչից հետո միշտ սկսում էր հազալ: Տիկին Փարսոնսն անօգնական հայացքով հետևում էր նրան:

– Իհարկե, եթե Թոմը տանը լիներ, մի վայրկյանում կարգի կգցեր, – ասաց նա:– Սիրում է այդպիսի գործեր: Ոսկի ձեռքեր ունի... Թոմը:

Փարսոնսը Ուինսթոնի հետ աշխատում էր ճշմարտության նախարարությունում: Գիրուկ, բայց գործունյա մարդ էր, օժտված կաթվածահար անող տխմարությամբ և տկարամիտ խանդավառությամբ, մեկն այն չընդվզող, նվիրված աշխատավորներից, որոնցից, ավելի քան Մտքի ոստիկանությունից, կախված էր Կուսակցության կայունությունը: Երեսունհինգ տարեկանում նրան, իր կամքին հակառակ, հեռացրել էին Երիտասարդական միությունից, իսկ մինչ այնտեղ ընդունվելը հաջողել էր սահմանված ժամկետից մեկ տարի ավելի աշխատել որպես լրտես: Նախարարությունում զբաղեցնում էր երկրորդական պաշտոն, որի համար մտավոր ունակություններ բնավ չէին պահանջվում, բայց մյուս կողմից՝ կարևոր դեր էր խաղում Սպորտի և բոլոր այլ կոմիտեներում, որոնք պատասխանատու էին տուրիստական արշավների, ինքնաբուխ ցույցերի, տնտեսելուն ուղղված քարոզարշավների և այլ կամավոր նախաձեռնությունների համար: Ծխամորձից քուլաներն արձակելով՝ նա համեստ հպարտությամբ պատմում էր, որ վերջին չորս տարվա ընթացքում բաց չի թողել Հանրային կենտրոնի ոչ մի երեկոյան միջոցառում: Քրտինքի անհաղթահարելի հոտը՝ լարված կյանքի ակամա վկան, ուղեկցում էր նրան՝ ուր էլ որ գնար, և մնում էր նույնիսկ նրա հեռանալուց հետո:

– Մանեկաբանալի ունե՞ք, – հարցրեց Ուինսթոնը՝ փորձելով պնդողակը հարմարեցնել խողովակի միացման կետին:

– Պտուտակաբանալի՞, – ասաց տիկին Փարսոնսը փոքր-ինչ երկյուղած:– Չգիտեմ, գուցե երեխաները...

Հանկարծ կոշիկների դոփյուն լավեց, նվազող սանրի ևս մի ձգվզոց, ու հյուրասենյակ խուժեցին երեխաները: Տիկին Փարսոնսը բերեց մանեկաբանալին: Ուինսթոնը բաց թողեց ջուրը ու զգվանքով մի փունջ մազ հանեց, որն էլ խցանել էր խողովակը: Ծորակի սառը ջրով որքան հնարավոր է խնամքով լվաց մատներն ու վերադարձավ մյուս սենյակ:

- Ձեռքերդ վե՛ր,- ճայթեց մի վայրագ ձայն:

Մոտ ինը տարեկան մի գեղեցիկ, ամրակազմ տղա դուրս էր ցատկել սեղանի ետևից ու սպառնում էր խաղալիք ատրճանակով, իսկ կրտսեր քույրը, որ մոտ երկու տարով փոքր էր, կրկնում էր եղբոր շարժումը փայտի կտորով: Երկուսի հագին էլ կապույտ կիսատաբատներ էին, մոխրագույն վերնաշապիկներ և կարմիր վզկապներ: Դա Լրտենների համազգեստն էր: Ուինսթոնը բարձրացրեց ձեռքերը: Նրան տհաճ զգացողություն համակեց: Տղան այնքան թշնամաբար էր տրամադրված, որ ամեն ինչից երևում էր՝ սա սոսկ խաղ չէ:

- Դու դավաճա՛ն ես,- ճչաց տղան:- Մտքի հանցագործ, եվրասիացի լրտես: Ես կսպանեմ քեզ: Կզոլորշացնեմ: Կուղարկեմ աղահանքեր:

Հանկարծ երկուսն էլ սկսեցին ցատկոտել շուրջը՝ նրան «դավաճան» ու «մտքի հանցագործ» կոչելով: Փոքրիկ աղջիկը կրկնօրինակում էր եղբոր ամեն մի շարժումը: Այդ ամենը փոքր-ինչ վախեցնող էր. նրանք ասես ցատկոտող վագրաձագեր լինեին, որ շատ շուտով վերածվելու էին մարդակերների: Տղայի աչքերում գիտակցված դաժանություն կար, Ուինսթոնին խփելու կամ քացի տալու ակնհայտ ցանկություն: Նա գիտակցում էր, որ բավական մեծ է՝ իր նպատակին հասնելու համար: «Լավ է, որ ատրճանակն իսկական չէ», - մտածեց Ուինսթոնը:

Տիկին Փարսոնսի աչքերը վախեցած նայում էին մեկ Ուինսթոնին, մեկ երեխաներին, ու հակառակը: Լավ լուսավորված հյուրասենյակում Ուինսթոնը հետաքրքրությամբ նկատեց, որ կնոջ դեմքի ծալքերում իսկապես փոշի կա:

- Նրանք այնքան աղմկոտ են,- ասաց կինը:- Տխրել են, որ չկարողացան տեսնել կախաղան հանվողներին: Ես զբաղված եմ ու չեմ կարող տանել նրանց, իսկ Թոմը շուտ չի վերադառնա աշխատանքից:

- Ինչի՞ չենք կարող տեսնել ոնց են կախաղան հանում,- բամբ ձայնով գոռաց տղան:

- Ուզում եմ տեսնեմ կախաղան հանվողներին, ուզում եմ տեսնեմ կախաղան հանվողներին,- երգում էր փոքրիկ աղջիկը՝ շարունակ թռչկոտելով:

Ուինսթոնը հիշեց, որ այդ երեկո զբոսայգում պետք է կախաղան հանեին ռազմական հանցագործությունների համար մեղադրվող որոշ եվրասիացի գերիների: Այդ սիրված արարողությունը տեղի էր ունենում ամիսը մեկ անգամ: Երեխաները միշտ պահանջում էին, որ իրենց տանեն նայելու: Ուինսթոնը հրաժեշտ տվեց տիկին Փարսոնսին և ուղղվեց դեպի դուռը: Բայց դեռ վեց քայլ էլ չէր արել միջանցքով, երբ ծոծրակին դիպավ ինչ-որ բան, որ տանջող ցավ պատճառեց: Ասես պարանոցի մեջ շիկացած հոսանքալար խրեցին: Ցավից գալարվելով՝ նա շրջվեց ու տեսավ, թե տիկին Փարսոնսն ինչպես է դռնից ներս քաշում որդուն, տղան էլ իր հերթին գրպանն է խցկում պարսատիկը:

- Գոլդսթա՛յն,- մռնչաց տղան, մինչ դուռը կփակվեր նրա ետևից: Բայց Ուինսթոնին ուղղակի տապալեց վախի անօգնական արտահայտությունը կնոջ մոխրագույն դեմքին:

Վերադառնալով իր բնակարան՝ Ուինսթոնն արագ անցավ հեռ-էկրանի կողքով ու նորից նստեց սեղանի մոտ՝ շարունակ տրորելով պարանոցը: Հեռէկրանի երաժշտությունը դադարել էր: Դրա փոխարեն հատու մարտական ձայնը դաժան «ախորժակով» նկարագրում էր, թե ինչ սպառազինություններով է օժտված նոր Լոդացող ամրոցը, որը խարխիս էր նետել Իսլանդիայի և Ֆարերյան կղզիների միջև:

«Այդ երեխաների հետ,- մտածում էր Ուինսթոնը,- թշվառ կնոջ կյանքը երևի վերածվել է սարսափի»: Եվս մեկ-երկու տարի, և

1984

Նրանք կսկսեն գիշեր-ցերեկ հետևել իրենց մորը՝ անուղղահավատության ախտանիշներ գտնելու նպատակով: Հիմա գրեթե բոլոր երեխաներն էլ սարսափելի են: Բայց ամենասարսափելին, թերևս, այն է, որ այնպիսի կազմակերպությունների թեթև ձեռքով, ինչպիսին «Լրտեսներն» է, կանոնավոր կերպով վերածվում էին անկառավարելի փոքրիկ վայրենիների, իսկ նրանց մեջ ցանկություն չէր առաջանում ապստամբել Կուսակցության կարգերի դեմ: Հակառակը՝ պաշտում էին Կուսակցությունն ու նրա հետ կապված ամեն ինչ: Երգերը, երթերը, դրոշակները, էքսկուրսիաները, ուսումնական հրացանների կրակոցները, կարգախոսների բարբառումը, Մեծ եղբոր պաշտամունքը. այս ամենը փառահեղ խաղ էր թվում նրանց: Երեխաների ողջ դաժանությունն ուղղված էր դեպի դուրս՝ ընդդեմ պետության թշնամիների, օտարների, դավաճանների, վնասարարների, մտքի հանցագործների: Երեսունից բարձր գրեթե բոլոր մարդիկ վախենում էին սեփական երեխաներից: Իսկ դրա համար պատճառներ կային, որովհետև շաբաթ չէր անցնում, որ «Թայմսում» հոդված չհայտնվեր այն մասին, թե ինչպես մի փոքրիկ «ականջ դնող» կամ «մանուկ հերոս», ինչպես ընդունված էր նրանց կոչել, գաղտնի լսել էր որևէ վարկաբեկող դիտողություն և ծնողներին մատնել Մտքի ոստիկանությանը:

Պարսատիկի գնդակի ցավն անցել էր: Ուիլսթոնն առանց ոգևորության վերցրեց գրիչն ու մտմտաց, թե ուրիշ ինչի մասին կարելի է գրել օրագրում: Եվ հանկարծ դարձյալ սկսեց մտածել Օ'Բրայենի մասին:

Տարիներ առաջ, - ե՛րբ էր, - երևի յոթ տարի առաջ, երազում քայլում էր մթին սենյակում: Եվ ինչ-որ մեկը, որ նստած էր կողքին, ասաց. «Մենք կհանդիպենք այնտեղ, ուր խավար չկա»: Շատ ցածր ասվեց, իմիջիայլոց, ոչ որպես հրաման, այլ որպես պնդում: Ուիլսթոնը հեռացավ առանց հապաղելու: Հետաքրքիր է, որ այն ժամանակ՝ երազում, բառերը չազդեցին նրա վրա: Դրանք նշանակություն ստացան ավելի ուշ և աստիճանաբար: Հիմա չէր էլ կարող

հիշել՝ առաջին անգամ ե՞րբ տեսավ Օ՛րայենին՝ երազից առաջ, թե՞ հետո: Չէր հիշում նաև, թե առաջին անգամ երբ նույնացրեց ծայնը Օ՛րայենի ծայնի հետ: Բայց ամեն դեպքում ծայնը նույնն էր: Խավարում իր հետ խոսողը հենց Օ՛րայենն էր:

Ուինսթոնը երբեք վստահ չէր եղել, և նույնիսկ այն բանից հետո, երբ նրանք առավոտյան հայացքներ փոխանակեցին, մինչև վերջ վստահ չէր՝ Օ՛րայենը ընկե՞ր է, թե՞ թշնամի: Բայց դա այնքան էլ կարևոր չէր: Նրանց միջև կարծես թե փոխըմբռնում կար, իսկ դա ավելի կարևոր էր, քան մտերմությունը կամ համախոհությունը: «Մենք կհանդիպենք այնտեղ, ուր խավար չկա»,– ասել էր նա: Ուինսթոնը չէր հասկանում դրա նշանակությունը, բայց զգում էր, որ այս կամ այլ կերպ իրականություն էր դառնալու:

Հեռէկրանից հնչող ծայնը դադարեց: Շեփորի հստակ ու գեղեցիկ կանչը տարածվեց սենյակի գաղջ օդում: Խզված ծայնը շարունակեց.

– Ուշադրություն, ուշադրություն: Հենց նոր հրատապ լուր ստացանք Մալբարի ռազմաճակատից: Մեր ուժերը Հարավային Հնդկաստանում փառավոր հաղթանակ են տարել: Լիազորված են հայտարարելու, որ ռազմական գործողությունների արդյունքում, որոնց մասին տեղեկացնում ենք այժմ, հնարավոր է, որ մոտ ապագայում պատերազմը մոտենա ավարտին: Լսեք ամփոփագիրը...

«Անսխորժություններ են սպասվում»,– մտածեց Ուինսթոնը: Այդպես էլ եղավ. եվրասիական բանակի ոչնչացման արյունահեղ նկարագրությունից, սպանվածների և գերվածների ապշեցուցիչ թվերը հրապարակելուց հետո հնչեց հայտարարություն առ այն, որ հաջորդ շաբաթվանից շոկոլադի օրաբաժինը կկրճատվի՝ երեսուն գրամից հասնելով քսանի:

Ուինսթոնը նորից բխկաց: Ջինի ազդեցությունն անհետանում էր՝ թողնելով տհաճ զգացողություն: Հեռէկրանը, հաղթանակը տոնելու կամ էլ շոկոլադի կրճատման մտքից շեղելու համար, դղրդաց՝ «Քե՛զ, Օվկիանիա»: Պետք էր զգաստ ոտքի կանգնել: Բայց ներկայիս դիրքում նա անտեսանելի էր:

«Քեզ, Օվկիանիա»-ն փոխարինվեց ավելի թեթև երաժշտությամբ: Ուիլսթոնը մոտեցավ պատուհանին՝ մեջքով դեպի հեռեկրանը: Ցուրտ ու պարզկա օր էր: Ինչ-որ տեղ՝ հեռվում, բուր, արծազանքող դղրդյունով պայթեց հրթիռը: Շաբաթական քսան-երեսուն հրթիռ էր ընկնում Լոնդոնի վրա:

Իսկ փողոցում քամին ճոճում էր պատռված ազդագիրը, որի վրա մերթ հայտնվում, մերթ անհետանում էր ԱՆԳՍՈՑ բառը: Անգսոց: Անգսոցի սրբազան սկզբունքներ: Նորալեզու, կրկնամիտք, հեղիհեղուկ անցյալ: Նրան թվում էր, թե շրջում է ծովի հատակի անտառներում ու կորել է հրեշների աշխարհում, ուր ինքն էլ մի հրեշ է: Նա մենակ էր: Անցյալը մեռած էր, ապագան՝ անորոշ: Ինչպե՞ս կարող էր վստահ լինել, որ որևէ կենդանի մարդ արարած իր կողմը կանցնի: Իսկ ինչպե՞ս իմանաս՝ արդյոք Կուսակցության գերիշխանությունը հավե՛րժ է լինելու: Եվ նա հիշեց Ճշմարտության նախարարության սպիտակ ձակատին գրված երեք կարգախոսները, որոնք պատասխանեցին իր հարցերին.

**ՊԱՏԵՐԱԶՄԸ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ Է
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆ Է
ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺ Է**

Նա գրպանից հանեց քսանհինգ սենթանոց մետաղադրամը, որի վրա հստակ ու մանր տառերով գրված էին նույն կարգախոսները, իսկ հակառակ երեսին Մեծ եղբոր գլուխն էր: Նույնիսկ մետաղադրամից աչքերն ասես հետապնդում էին: Մետաղադրամների, դրոշմանիշների, գրքերի կազմերի, դրոշների, ազդագրերի և նույնիսկ ծխախոտատուփերի վրա՝ ամենուր: Աչքերը մշտապես հետևում, իսկ ծայնը՝ պարուրում: Քնած թե արթուն, աշխատելիս թե ուտելիս, տանը թե դրսում, լոգարանում թե անկողնու մեջ՝ ազատում չկար: Ոչինչ քո սեփականությունը չէր, բացի գանգուղեղիդ ներսի մի քանի խորանարդ սանտիմետրից:

Արևն արդեն մայր էր մտել, և Ճշմարտության նախարարության անհամար պատուհանները, որոնց մեջ այլևս լույս չէր փայլում, մռայլ էին, ինչպես ամրոցի հրակնատներ: Նրա սիրտն ընկրկեց այդ հսկայական բրգաձև կառույցի տեսքից: Այն չափազանց հզոր էր ու աներեր: Հազարավոր հրթիռներ անգամ չէին կարողանա տապալել: Նա նորից հարցրեց իրեն՝ իսկ ո՞ւմ համար է գրում օրագիրը: Ապագայի՞, անցյալի՞, գուցե երևակայական դարի: Հասկանում էր՝ իրեն ոչ թե մահ, այլ բնաջնջում է սպասում: Օրագիրը կվերածեն մոխրի, իսկ իրեն կգոլորջացնեն: Միայն Մտքի ոստիկանությունը կկարդա իր գրածները, իսկ հետո կջնջի երկրի երեսից ու հիշողությունից: Ինչպե՞ս կարող ես դիմել ապագային, եթե աշխարհիս երեսին չի պահպանվելու ոչ քո հետքը, ոչ էլ թղթի կտորի վրա խզբզած անանուն մի բառ:

Հեռեկրանը խփեց ժամը տասնչորսը: Տասը ըռպեից նա պետք է վերադառնար: Մինչ տասնչորսն անց կես պետք է աշխատավարում լիներ:

Զարմանալի է, բայց այդ ղողանջը կարծես համարձակություն սովեց: Նա միայնակ ուրվական էր և արտահայտում էր այն ճշմարտությունը, որ երբեք ոչ ոք չի լսելու: Բայց քանի դեռ ասում է ճշմարտությունը, ինչ-որ տարօրինակ կերպով, կյանքը շարունակվում է: Նպատակն այն չէ, որ քեզ լսեն, այլ գիտակցությունը, որ քո մեջ կրում ես մարդկային ժառանգությունը: Նա վերադարձավ սեղանի մոտ, գրիչը թաթախեց թանաքի մեջ ու գրեց.

Ապագային կամ անցյալին, այն ժամանակին, երբ միտքն ազատ կլինի, երբ մարդիկ կտարբերվեն իրարից և չեն ապրի միայնակ – այն ժամանակին, երբ ճշմարտությունը գոյություն կունենա, և եղածը չի փոշիանա.

Հոգայնության դարաշրջանից, միայնության դարաշրջանից, Մեծ եղբոր դարաշրջանից, կրկնամտքի դարաշրջանից՝ ողջույն:

Գիտակցում էր, որ գրեթե մեռած է: Նրան թվում էր, որ հիմա, վերստանալով մտքերը շարադրելու ունակությունը, վճռական քայլ կատարեց: Ցանկացած գործողության հետևանքներն այդ գործողության մեջ են: Նա գրեց.

Մտքի հանցագործությունը չի հանգեցնում մահվան: Մտքի հանցագործությունն ինքնին մահ է:

Հիմա, երբ հասկանում էր, որ մեռած է, կարևոր էր հնարավորինս երկար ողջ մնալ: Աջ ձեռքի երկու մատին թանաքի բծեր կային: Նման մանրամասները կարող էին հեշտությամբ մատնել: Նախարարությունում մի որևէ հետաքրքրասեր մոլեռանդ (ամենայն հավանականությամբ՝ կին, թեկուզ հենց փոքրամարմին, ավազագույն մազերով կնոջ նման մեկը կամ էլ Գեղարվեստական գրականության բաժնի թխահերը) կմտածի՝ նա ինչու է գրել ժաշի ընդմիջման ընթացքում, ինչու է հնաոճ գրիչ օգտագործել, ինչ է գրել, իսկ հետո իր մտքերը կփոխանցի համապատասխան մարմիններին: Նա գնաց լոգարան ու թանաքը խնամքով մաքրեց կոշտ, մուգ դարչնագույն օժառով, որ հղկաթղթի պես քերում էր մաշկը, ուստի հարմար էր հենց այդ նպատակի համար:

Նա օրագիրը դրեց դարակի մեջ: Անօգուտ էր մտածել, թե կարող է թաքցնել, բայց այդպես կարելի էր գոնե ստուգել՝ արդյոք արդեն գիտե՞ն նրա գոյության մասին: Գրքի երկարությամբ դրված մազը պարզ երևում էր: Մատի ծայրով մի սպիտակ փոշեհատիկ վերցրեց ու դրեց կազմի անկյունում. եթե գրքին դիպչեն, փոշեհատիկը կընկնի:

III

Ուինսթոնը երազում տեսնում էր մորը:

Հավանաբար տասը-տասնմեկ տարեկան էր, երբ մայրն անհետացավ: Բարձրահասակ, թիկնեղ, լռակյաց կին էր՝ դանդաղ շարժուձևով ու շքեղ խարտյաշ մազերով: Հորն ավելի աղոտ էր հիշում. նա թխահեր էր, նիհար, միշտ մուգ, կոկիկ հագուստով (Ուինսթոնը հիշում էր հատկապես հոր կոշիկների շատ նեղ ներբանները) և ակնոցով: Ամենայն հավանականությամբ, երկուսն էլ զոհ էին գնացել հիսունական թվականների առաջին մեծ զտումներին:

Ու հիմա մայրը նստած էր ինչ-որ տեղ՝ ներքևում, կրտսեր քրոջը գրկած: Նա բոլորովին չէր հիշում քրոջը. միայն՝ պատվիկ, նվազ երեխա էր, միշտ լուռ, խոշոր, ուշադիր աչքերով: Երկուսն էլ ներքևից նայում էին իրեն: Նրանք ստորգետնյա մի վայրում էին, օրինակ՝ ջրհորի հատակին կամ շատ խոր գերեզմանում, որը, թեև արդեն ներքևում էր, հետզհետե ավելի էր իջնում: Նրանք նստած էին խորտակվող նավի հյուրասրահում և մուգ ջրերի միջից նայում էին Ուինսթոնին: Սրահում դեռ օդ կար, և նրանք դեռևս տեսնում էին Ուինսթոնին, Ուինսթոնն էլ՝ իրենց, բայց այդ ամբողջ ընթացքում սուզվում էին, սուզվում դեպի կանաչ ջրերը. ևս մի քանի ակնթարթ, ու հավիտյան կանհետանային տեսադաշտից: Ուինսթոնը դրսում էր, ուր կար լույս և օդ, իսկ նրանք սուզվում էին դեպի մահ: Նրանք ներքևում էին, որովհետև ինքը վերևում էր: Նա հասկանում էր դա, նրանք՝ նույնպես. Ուինսթոնը հասկանում էր նրանց դեմքերից: Նախատինքի նշույլ անգամ չկար ոչ դեմքերին, ոչ էլ սրտերում: Գիտակցում էին, որ պիտի զոհեն իրենց կյանքը՝ հանուն Ուինսթոնի. կյանքի անխուսափելի թելադրանքն էր դա:

Չէր կարողանում հիշել, թե դեպքն ինչպես էր պատահել, բայց երազում գիտեր, որ ինչ-որ ձևով մայրն ու քույրը զոհել են իրենց կյանքը՝ հանուն իրեն: Դա այն երազներից էր, որտեղ երազին հատուկ տեսարանում շարունակվում է մտքի աշխատանքը, երազ,

1984

որում բացահայտված փաստերն ու գաղափարներն արթնանալուց հետո էլ թվում են նոր ու արժեքավոր: Հանկարծ Ուինսթոնը հիշեց, որ մոտ երեսուն տարի առաջ մոր մահը այնքան ողբերգական ու վշտալի էր, որ հիմա անհնար էր ըմբռնել: Հասկացավ, որ այդ ողբերգությունը պատկանում է հնագույն ժամանակներին, երբ գոյություն ունեին անձնական կյանք, սեր և ընկերություն, և երբ ընտանիքի անդամները, առանց որևէ պատճառի, կանգնում էին իրար թիկունքի: Մոր մասին հիշողությունը ծվատում էր սիրտը, որովհետև նա մահացել էր իրեն սիրելով, իսկ ինքը չափազանց երիտասարդ ու եսասեր էր՝ փոխադարձաբար սիրելու համար, և որովհետև նա (Ուինսթոնը չէր հիշում, թե ինչպես) զոհել էր իրեն՝ հանուն հավատարմության գաղափարի, որն անձնական էր և անխորտակելի: Հասկանում էր, որ նման բան չի կարող պատահել այսօր: Այսօր կա վախ, ատելություն և ցավ, բայց ոչ՝ զգացմունքի արժանապատվություն, ոչ էլ խոր կամ բարդ վիշտ: Այդ ամենը նա տեսնում էր մոր ու քրոջ մեծ աչքերում, որոնք նայում էին իրեն կանաչավուն ջրերի միջից՝ հարյուրավոր սաժեններ ներքև, և դեռ շարունակում էին սուզվել:

Հանկարծ նա հայտնվեց կարճ, ձիգ խոտի վրա: Ամառային երեկո էր, և արևի շեղ ճառագայթները ոսկեզօծել էին գետինը: Բնության այս տեսարանն այնքան հաճախ էր հանդիպել երազներում, որ չէր կարող վստահ ասել՝ տեսել է իրականում, թե՞ ոչ: Արթմնի մտքերում նա այն կոչում էր Ոսկե երկիր: Դա հին, ճագարների կրծոտած մարգագետին էր, որի միջով արահետ էր անցնում, իսկ այսուայնտեղ խլուրդի թմբիկներ էին: Դաշտի հակառակ կողմում՝ մաշված ցանկապատի մոտ, ծփիների ճյուղերը մեղմիկ օրորվում էին զեփյուռից, իսկ դրանց խիտ տերևները կնոջ մազերի նման տարուբերվում էին: Ինչ-որ տեղ՝ շատ մոտիկ, բայց անտեսանելի, անշտապ հոսում էր վճիտ առվակը, իսկ ուռիների տակ՝ ջրափոսերում, լողում էին մանրածածանները:

Մարգագետնով իր կողմն էր գալիս թխահեր աղջիկը: Մի շարժումով նա պատռեց-հանեց հագուստը և արհամարհական դեն

Նետեց: Նրա մարմինը սպիտակ էր ու հարթ, բայց ոչ մի ցանկություն չարթնացրեց Ուինսթոնի մեջ. նա ուղղակի նայում էր: Նրան հիացրեց այն շարժումը, որով աղջիկը դեն նետեց հագուստը: Իր վայելչագեղությամբ ու անփութությամբ՝ այդ շարժումը բնաջնջեց մի ամբողջ մշակույթ, մտածողության մի ամբողջ համակարգ, ասես Մեծ եղբայրը, Կուսակցությունն ու Մտքի ոստիկանությունը ի չիք դարձան ձեռքի թեթև շարժումով: Այդ շարժումը նույնպես պատկանում էր հին ժամանակներին: Եվ Ուինսթոնն արթնացավ՝ «Շեքսպիր» բառը շուրթերին:

Հեռէկրանը խլացնող սուլոց էր արձակում, որ նույն նոտայի վրա շարունակվեց երեսուն վայրկյան: Յոթն անց էր տասնհինգ րոպե. գրասենյակային աշխատողների արթնանալու ժամանակն էր: Ուինսթոնը դժվարությամբ անկողնուց դուրս քաշեց մարմինը (նա մերկ էր, որովհետև Արտաքին կուսակցության անդամը տարեկան ստանում էր հագուստի ընդամենը 3,000 կտրոն, իսկ գիշերազգեստն արժեր 600) և աթոռից վերցրեց մաշված շապիկն ու կարճ տաբատը: Մարմնամարզությունը սկսվելու էր երեք րոպեից: Հաջորդ իսկ պահին նա գալարվեց հազի սարսափելի նոպայից, որ գրեթե միշտ վրա էր հասնում արթնանալուն պես: Հազն այնպես էր ցնցում թոքերը, որ շնչառությունը վերականգնվում էր միայն, երբ Ուինսթոնը պառկում էր մեջքի վրա ու մի քանի անգամ խոր շունչ քաշում: Երակներն ուռել էին հազալու ջանքից, իսկ երակային խոցը սկսել էր քոր գալ:

– Երեսունից քառասուն տարիքային խումբ,– կլանչեց կնոջ ծակող ձայնը:– Երեսունից քառասուն տարիքային խումբ: Ելման դիրք ընդունեք, խնդրում եմ: Երեսունից քառասուն:

Ուինսթոնը զգաստ կանգնեց հեռէկրանի առաջ. այնտեղ կարելի էր տեսնել երիտասարդ, նիհար, բայց մկանուտ մի կնոջ՝ պարեգոտով ու մարզակոշիկներով:

– Ձեռքերի ծալում և ձգում,– գոռաց կինը:– Հաշվեք ինձ հետ: Մեկ, երկու, երեք, չորս: Մեկ, երկու, երեք, չորս: Դե, ընկերներ, ավելի աշխույժ: Մեկ, երկու, երեք, չորս: Մեկ, երկու, երեք, չորս:

Հազի ցավը դեռ չէր վերացրել երազի թողած տպավորությունը, և ռիթմիկ վարժություններն ասես թարմացնում էին այդ հիշողությունը: Մռայլ գոհունակությամբ մեխանիկորեն հետուառաջ անելով թևերը, ինչը սովորական էր Մարմնամարզության ժամին, նա ջանում էր վերադառնալ դեպի վաղ մանկություն: Դա չափազանց բարդ էր: Ինչ տեղի էր ունեցել հիսունականներին, ջնջվել էր հիշողությունից: Երբ հնարավոր չէ օգտվել որևէ վկայությունից, նույնիսկ սեփական կյանքիդ ուրվագիծը կորցնում է հստակությունը: Հիշում ես խոշոր իրադարձություններ, որոնք գուցե չեն էլ պատահել, հիշում ես դեպքերի մանրամասներ, բայց ի վիճակի չես վերականգնել մթնոլորտը. կային նաև երկար, ոչնչով չառանձնացող բաց ժամանակահատվածներ: Այն ժամանակ ամեն ինչ այլ էր: Այլ էին նաև երկրների անունները, նրանց տեսքը քարտեզի վրա: Օրինակ՝ Թռիչքուղի մեկն այն ժամանակ ուրիշ անուն ուներ. կոչվում էր Անգլիա կամ Բրիտանիա, մինչդեռ Լոնդոնը, Ուինսթոնը միանգամայն վստահ էր, միշտ էլ Լոնդոն է կոչվել:

Ուինսթոնը չէր կարողանում մտաբերել մի ժամանակ, երբ իր երկիրը պատերազմի մեջ չէր. ամենայն հավանականությամբ, իր մանկության տարիներին խաղաղության բավական երկարատև շրջան էր եղել, որովհետև ամենավաղ հիշողություններից մեկը օդային հարձակումն էր, որն անակնկալի բերեց բոլորին: Գուցե հենց այդ ժամանակ ատոմային ռումբ գցեցին Քոլչեսթերի վրա: Նա չէր հիշում հարձակումը, բայց հիշում էր, թե հայրն ինչպես էր ամուր բռնել իր ձեռքը, ու իրենք շտապում էին ներքև, ներքև, ներքև՝ դեպի երկրի խորքը, պտուտակածն սանդուղքով, որ ճռռում էր ոտքերի տակ: Ի վերջո, ոտքերն այնքան հոգնեցին, որ սկսեց նվնվալ, ուստի ստիպված էին կանգ առնել ու հանգստանալ: Մայրը, իր դանդաղ ու երազկոտ քայլերով, հետ էր մնացել նրանցից: Նա գրկել էր Ուինսթոնի փոքրիկ քրոջը, կամ գուցե ձեռքին ծածկոցների կապոց էր. Ուինսթոնը վստահ չէր՝ քույրն արդեն ծնվել էր, թե՛ ոչ: Վերջապես նրանք հայտնվեցին մի աղմկոտ ու

մարդաշատ վայրում. Ուինսթոնը հասկանում էր, որ դա Մետրոյի կայարան է:

Ոմանք նստած էին քարե հատակին, իսկ մյուսները շատ կիպ, կողք կողքի տեղավորվել էին մետաղյա մահճակալների վրա: Ուինսթոնը, մայրն ու հայրը իրենց համար տեղ գտան հատակին, իսկ նրանց մոտ՝ անկողնակին, կողք կողքի նստած էին մի ծերունի ու ծեր կին: Ծերունին համեստ մուգ կոստյում էր հագել, իսկ սպիտակ մազերը ծածկված էին ծոծրակին թեքած սև կտորից գլխարկով. դեմքը կարմիր էր, իսկ կապույտ աչքերն արտասովոր էին: Նրանից ջինի հոտ էր փչում: Այնպիսի տպավորություն էր, թե մաշկը ջին է արտաշնչում: Կարելի էր պատկերացնել, որ աչքերից թափվող արցունքները նույնպես մաքուր ջին են: Չնայած ծերունին փոքր-ինչ հարբած էր, երևում էր, որ տառապում է անկեղծ ու անտանելի վշտից: Իր մանկական ուղեղով Ուինսթոնը կռահում էր, որ նրա հետ պատահածը երբեք չի ներվելու, ու վիշտը չի ամոքվելու: Նրան նույնիսկ թվաց, թե հասկացավ այդ վշտի էությունը: Սպանվել էր ծերունու սիրելիներից մեկը՝ փոքրիկ թոռնուհին: Ծերունին մի քանի րոպեն մեկ կրկնում էր.

– Ոչ մի դեպքում չպիտի վստահեինք նրանց: Ասում էի, չէ՞, այ կնիկ, ասում էի: Ահա նրանց վստահելու հետևանքը: Միշտ ասում էի: Ոչ մի դեպքում չպիտի վստահեինք այդ տականքներին:

Բայց Ուինսթոնը չէր կարողանում հիշել, թե ովքեր էին այդ տականքները:

Այդ ժամանակից ի վեր պատերազմը տառացիորեն չէր դադարում, չնայած, եթե ճիշտն ասենք, միշտ նույնը չէր լինում: Իր մանկության տարիներին, մի քանի ամիս շարունակ, Լոնդոնում փողոցային անկանոն մարտեր էին գնում, որոնց մի մասը տպավորվել էր նրա մեջ: Բայց անհնար էր գտնել ամբողջ ժամանակահատվածի հետքը, ասել, թե ով ում դեմ էր կռվում և երբ, որովհետև չկար որևէ գրառում կամ բանավոր վկայություն, որ կտարբերվեր գոյություն ունեցող տվյալներից: Օրինակ, հիմա՝ 1984 թվականին (եթե,

իհարկե, հիմա 1984 թվականն էր), Օվկիանիան պատերազմում էր եվրասիայի դեմ և դաշինքի մեջ էր Արևելաասիայի հետ: Ոչ հանրային ու ոչ էլ մասնավոր մակարդակում ոչ ոք չէր հիշատակում, թե երբևէ այս երեք պետությունների հարաբերություններն այլ են եղել: Ուինսթոնը հրաշալի գիտեր՝ Օվկիանիան պատերազմում էր Արևելաասիայի դեմ և դաշինքի մեջ էր եվրասիայի հետ ընդամենը չորս տարի: Բայց թաքուն էր պահում այդ փաստը: Գիտեր, որովհետև իր հիշողությունը չէր վերահսկվում: Պաշտոնապես դաշնակիցն ու թշնամին բնավ չէին փոխվել: Օվկիանիան պատերազմում է եվրասիայի դեմ, հետևաբար Օվկիանիան միշտ էլ պատերազմել է եվրասիայի դեմ: Տվյալ պահի թշնամին համարվում էր բացարձակ չարիքի մարմնավորում, իսկ դա նշանակում էր, որ ոչ անցյալում, ոչ ապագայում անհնար է համաձայնության գալ նրա հետ:

Ամենասարսափելին այն էր, նկատեց նա տասնյակ հազարերորդ անգամ, երբ հետ տարավ ուսերը՝ ցավեցնելով գոտկատեղը (ձեռքերը ազդրերին՝ նրանք կատարում էին իրանի պարուրածն վարժություն, որն օգտակար էր մեջքի մկանների համար), ամենասարսափելին այն էր, որ այդ ամենը, հնարավոր է, իրականություն է: Եթե Կուսակցությունը կարող էր ներխուժել անցյալ և ասել, որ այս կամ այն իրադարձությունը *երբեք տեղի չի ունեցել*, ուրեմն դա, անկասկած, ավելի սարսափելի էր, քան սոսկ տանջանքը և մահը:

Կուսակցության խոսքով՝ Օվկիանիան երբեք չի դաշնակցել եվրասիայի հետ: Նա՛ Ուինսթոն Սմիթը, գիտեր, որ ընդամենը չորս տարի առաջ Օվկիանիան դաշնակցել է եվրասիայի հետ: Բայց որտե՞ղ է պահպանվում այդ իմացությունը: Միայն նրա գիտակցության մեջ, որը ցանկացած դեպքում շուտով վերացնելու էին: Ու եթե մյուսներն ընդունում էին Կուսակցության հրամցրած սուտը,– եթե բոլոր փաստաթղթերը նույն հեքիաթն էին պատմում,– ապա սուտը մտնում էր պատմության մեջ և դառնում ժճմարտություն: «Ով վերահսկում է անցյալը,– բարբառում էր Կուսակցության կարգախոսը,– վերահսկում է ապագան. ով վերահսկում է ներկան, վերահսկում է

անցյալը»: Սակայն անցյալը, չնայած իր հեղհեղուկ բնույթին, երբեք չէր ենթարկվել փոփոխության: Ինչ ժճմարիտ էր համարվում հիմա, ժճմարիտ էր հավիտենությունից հավիտենություն: Ամեն ինչ պարզ էր: Ընդամենը պետք էր մի անվերջ շարք հաղթանակներ տանել սեփական հիշողության հանդեպ: Դա կոչվում էր «իրականության վերահսկում», իսկ նորալեզվով՝ կրկնամիտք:

– Ազատ եք, – կլանչեց իրահանգչուհին փոքր-ինչ խնդուն ծայնով:

Ուինսթոնն իջեցրեց թևերը ու թոքերը դանդաղ լցրեց օդով: Նրա միտքը սահեց դեպի կրկնամտքի լաբիրինթոս: Իմանալ և չիմանալ, գիտակցել ողջ ժճմարտությունը, մինչդեռ ասել խնամքով հորինված ստեր, ունենալ միմյանց հակասող երկու կարծիք, իմանալ, որ նրանք բացառում են իրար, բայց հավատալ երկուսին էլ, կիրառել տրամաբանությունն ընդդեմ տրամաբանության, իրաժարվել բարոյականությունից՝ միաժամանակ հաստատելով այն, կարծել, որ ժողովրդավարությունն անհնար է, և որ Կուսակցությունը ժողովրդավարության խնամակալն է, մոռանալ՝ ինչ պետք է մոռանալ, իսկ հետո անհրաժեշտ պահին դարձյալ հիշել, իսկ հետո նորից արագ մոռանալ, և ամենակարևորը՝ այս ամբողջ գործընթացին վերաբերվել զուտ որպես գործընթացի: Սա էր ամենակարևոր նրբությունը. գիտակցաբար հաղթահարել գիտակցությունը, իսկ հետո դարձյալ չգիտակցել հենց նոր կատարած հիպնոսի գործողությունը: Նույնիսկ «կրկնամիտք» բառը հասկանալու համար պետք էր դիմել կրկնամտքի օգնությանը:

Հրահանգչուհին դարձյալ նրանց խնդրեց զգաստ կանգնել:

– Իսկ հիմա տեսնենք, թե մեզնից ով կարող է դիպչել ոտնաթաթերին, – ոգևորված ասաց նա: – Ազդրերից, խնդրում եմ, ընկերներ: Մեկ-երկու: Մեկ-երկու...

Ուինսթոնն ատում էր այդ վարժությունը, որ ծակող ցավ էր առաջացնում կրունկներից մինչև նստատեղ և հաճախ ավարտվում հազի նոպայով: Տխրության կես տհաճ, կես հաճելի զգացողությունը հեռացավ նրա մտորումներից: Նա գիտակցում էր, որ անցյալը ոչ

միայն փոխվել, այլև ոչնչացվել էր: Ինչպե՞ս կարելի է հաստատել Նույնիսկ ամենաակնհայտ փաստը, եթե բացի քո հիշողությունից այն ուրիշ ոչ մի տեղ գոյություն չունի: Նա փորձում էր հիշել՝ առաջին անգամ երբ է լսել Մեծ եղբոր մասին: Որքան հիշում էր՝ վաթսու-նական թվականներին, բայց անհնար էր մտաբերել ծճգրիտ տարեթիվը: Կուսակցության պատմության մեջ, անշուշտ, Մեծ եղբայրը հանդես էր գալիս որպես հեղափոխության առաջնորդ և ղեկավար՝ սկզբնավորման առաջին իսկ օրերից: Նրա սխրագործություններն աստիճանաբար հրվում էին հետ՝ դեպի անցյալի խորքը, համում քառասունականների ու երեսունականների առասպելական աշխարհի, երբ տարօրինակ գլանաձև գլխարկներով կապիտալիստները դեռ անցնում էին Լոնդոնի փողոցներով խոշոր, փայլվիլում մեքենաներով կամ ապակեպատ ձիակառքերով: Ոչ ոք չգիտեր՝ այս լեգենդի որ մասն է իրական, որը՝ հորինված: Ուիլսթոնը Նույնիսկ չէր հիշում, թե կոնկրետ երբ է ստեղծվել Կուսակցությունը: Որքան հիշում էր՝ մինչ 1960 թվականը երբևէ չէր լսել «Անգսոց» բառը, բայց հնարավոր է, որ այդ բառն ավելի վաղ գոյություն է ունեցել հնալեզվում՝ «անգլիական սոցիալիզմ» տարբերակով: Ամեն ինչ պատված էր մշուշով: Սակայն երբեմն հաջողվում էր սուտ բռնել: Օրինակ՝ ճիշտ չէր այն, որ, ինչպես պատմում էին Կուսակցության պատմության գրքերը, Կուսակցությունն էր ինքնաթիռ ստեղծել: Ինքնաթիռներ կային դեռ վաղ մանկության շրջանում: Բայց ապացուցելն անհնար էր: Ոչ մի վկայություն չկար: Իր ամբողջ կյանքում նա մեկ անգամ էր ձեռքում պատմական փաստի կեղծման անսխալ ու վավերական ապացույց պահել: Այդ օրը...

- Սմիթ, - չճաց փնթփնթան ձայնը հեռէկրանից: - 6079: Սմիթ Ու.: Այո՛, դո՛ւք: Ավելի կռացեք, խնդրեմ: Կարող եք ավելի լավ կատարել վարժությունը, բայց չեք ջանում: Ավելի ցածր, խնդրում եմ: Այդպես ավելի լավ է, ընկեր: Իսկ հիմա ամբողջ խումբն ազատ է: Հետևեք ինձ:

Հանկարծ տաք քրտինքը պատեց Ուիլսթոնի մարմինը: Դեմքը միանգամայն անվրդով էր: Երբեք ցույց մի՛ տուր սարսափ: Ցույց

մի՛ տուր վրդովմունք: Աչքի թրթռոցն անգամ կարող է մատնել: Նա ուշադիր հետևեց, թե հրահանգչուհին ինչպես ձեռքերը բարձրացրեց գլխից վեր, ու եթե ոչ նրբագեղ, ապա զարմանալի հստակ ու հնուտ շարժումով կռացավ և մատներով բռնեց ոտնաթաթը:

– Տեսնո՞ւմ եք, ընկերներ: Ապացուցեք, որ դուք էլ կարող եք: Մեկ անգամ ևս հետևեք ինձ: Ես երեսունինը տարեկան եմ, ունեմ չորս երեխա: Հիմա նայեք,– նա նորից կռացավ:– Տեսնո՞ւմ եք՝ ծնկներս ծավված չեն: Բոլորդ էլ կարող եք անել, եթե ցանկանաք,– ավելացրեց նա և ուղղվեց:– Քառասունհինգից պակաս ցանկացած մարդի վիճակի է հասնել ոտնաթաթին: Մեզ բախտ չի վիճակվել կովել ռազմաճակատի առաջին գծում, բայց գոնե կարող եք լավ մարզավիճակում լինել: Հիշեք Մալաբարի ճակատում կովող մեր տղաներին: Ինչպես և Լողացող ամրոցների նավաստիներին: Մտածեք՝ ինչ դժվարություններ են հաղթահարել նրանք: Հիմա նորից փորձեք: Ավելի լավ է, ընկե՛ր, շատ ավելի լավ է,– քաջալերեց նա, երբ Ուինսթոնին, վերջին մի քանի տարվա ընթացքում առաջին անգամ, ուժերի գերլարումով հաջողվեց դիպչել ոտքերի մատներին՝ առանց ծնկները ծավելու:

IV

Խոր, անբռնագրոսիկ հոգոց հանելով, ինչին չխանգարեց նույնիսկ հեռէկրանի մոտիկությունը, Ուինսթոնը սկսեց առօրյա աշխատանքը. մոտեցրեց խոսագրիչը, փչեց խոսափողի վրա հավաքված փոշին ու դրեց ակնոցը: Հետո բացեց ու իրար կպցրեց թղթի չորս փոքր գլան, որոնք արդեն դուրս էին թռել գրասեղանի աջ կողմում գտնվող օդաճնշական խողովակից:

Խցի պատերի մեջ երեք անցք կար: Խոսագրիչից աջ փոքր օդաճնշական խողովակ էր՝ տպագիր հաղորդագրությունների համար, իսկ ձախ կողմինն ավելի մեծ էր՝ թերթերի համար. կողքի պատին՝

այնքան մոտ, որ Ուինսթոնի ձեռքը հեշտությամբ հասնում էր, մետաղալարե վանդակով առանձնացված մեծ, երկարավուն ձեղք էր: Վերջինս նախատեսված էր անպետք թղթերի համար: Շենքում կային նմանատիպ հազարավոր կամ տասնյակ հազարավոր ձեղքեր, ոչ միայն բոլոր սենյակներում, այլև միջանցքներում՝ ամեն քայլափոխի: Չգիտես ինչու, դրանք կոչվում էին հիշողության անցքեր: Եթե որևէ մեկն ուզում էր ազատվել ոչնչացման ենթակա փաստաթղթից կամ հատակին թղթի կտոր էր տեսնում, մեքենայաբար բացում էր մոտակա հիշողության անցքի կափարիչը ու գցում ներս. թուղթը պտտվում էր տաք օդի հոսանքում և սլանում դեպի հսկայական հնոցները, որ թաքնված էին շենքի խորքում:

Ուինսթոնն ուսումնասիրեց բացած չորս թերթը: Դրանցից յուրաքանչյուրի վրա միայն մեկ կամ երկուտողանոց, հեռագրային ոճով հաղորդագրություն էր՝ գրված ոչ թե նորալեզվով, այլ բաղկացած նորալեզվի բառերից, և նախարարությունում ծառայում էր ներքին նպատակների համար: Բովանդակությունը հետևյալն էր.

թայմս 17.03.84 մե ելոյթ կեղծված աֆրիկա ժշտել

թայմս 19.12.83 կանխատեսում եռամյա պլան 4-րդ եռամսյակ 83 տառասխալ ստուգել ընթացիկ համարի հետ

թայմս 14.02.84 նախառատ սխալ մեջքերում շոկոլադ ժշտել

թայմս 3.12.83 զեկույց մե օրվա պատվեր կրկնակիպլուսլավ մեջքերումներ չմարդիկ վերաշարադրել լրիվ վերից վար մինչ ներկայացումը

Գոհունակության անորոշ զգացումով Ուինսթոնը մի կողմ դրեց չորրորդ թերթը: Գործը բարդ էր ու պատասխանատու, և վերջինս ավելի մեծ ուշադրության կարիք ուներ: Իսկ մյուս երեքը սովորական առաջադրանքներ էին, չնայած երկրորդի համար երևի պետք էր ձանձրալի էքսկուրս կատարել թվերի ցուցակում:

Ուինսթոնը «հետին տարեթվերը» հավաքեց հեռկրանի վրա և պատվիրեց «Թայմսի» համապատասխան համարները, որոնք ընդամենը թույլ են տալիս անց սահելով ընկան օդաճնշական խողովակից: Ուինսթոնի ստացած հաղորդագրությունները վերաբերում էին հողվածներին կամ նորություններին, որոնք, չգիտես ինչու, փոփոխման կամ, պաշտոնական լեզվով ասած, շտկման կարիք ունեին: Օրինակ՝ «Թայմսի» մարտի տասնյոթի համարից պարզ էր դառնում, որ Մեծ եղբայրը նախորդ օրվա իր ելույթում խաղաղություն էր կանխատեսել հարավ-հնդկական ճակատում և Եվրասիայի կողմից շուտափոյոթ կարծաժամկետ հարձակում Հյուսիսային Աֆրիկայում: Մինչդեռ Եվրասիայի բարձրագույն հրամանատարական կազմը հարձակում էր սկսել Հարավային Հնդկաստանում, իսկ Հյուսիսային Աֆրիկայում ոչինչ չէր ձեռնարկել: Հետևաբար անհրաժեշտ էր վերաշարադրել Մեծ եղբոր ելույթի այդ պարբերությունն այնպես՝ իբր նա ձիշտ էր կանխագուշակել դեպքերի ընթացքը: Կամ, օրինակ, «Թայմսի» դեկտեմբերի տասնիննի համարում հրապարակվել էին 1983 թվականի չորրորդ եռամսյակի, որը նույնն էր թե՛ իններորդ եռամյա պլանի վեցերորդ եռամսյակի սպառողական ապրանքների տարբեր տեսակների թողարկման պաշտոնական կանխատեսումները: Այսօրվա համարը պարունակում էր արտադրողականության փաստացի տվյալներ, որոնցից պարզ էր դառնում, որ բոլոր կանխատեսումները սխալ են: Ուինսթոնի խնդիրն էր շտկել նախնական թվերն այնպես, որ դրանք համապատասխանեն վերջիններին: Իսկ երրորդ հաղորդագրությունը վերաբերում էր մի շատ պարզ սխալի, որը կարելի էր ուղղել մի քանի թույլությամբ: Բոլորովին վերջերս՝ փետրվարին, Առատության նախարարությունը խոստացել էր (պաշտոնական լեզվով ասած՝ «կտրական խոստում էր տվել»), որ 1984 թվականին շոկոլադի չափաբաժնի կրճատում չի լինի: Իրականում, որքանով Ուինսթոնն էր տեղյակ, սույն շաբաթվա վերջին շոկոլադի չափաբաժինը երեսուն գրամից պետք է կրճատվեր քսանի: Անհրաժեշտ էր ընդամենը նախկին խոստումը փոխարինել

գգուշացմամբ՝ առ այն, որ ապրիլ ամսին գուցե կարիք լինի կրճատել չափաբաժինը:

Ավարտելով աշխատանքը հաղորդագրություններից յուրաքանչյուրի հետ՝ Ուինսթոնը գրավոր ուղղումներն ամրացրեց «Թայմսի» համապատասխան կրկնօրինակին և հրեց օդաճնշական խողովակի մեջ: Հետո իրեն հատուկ մեխանիկական շարժումով ճմռթեց նախնական օրինակն ու իր կատարած նշումները և նետեց հիշողության անցքի մեջ, որ կրակի բաժին դառնան:

Թե ինչ էր կատարվում անտեսանելի լաբիրինթոսում, ուր տանում էր օդաճնշական խողովակը, Ուինսթոնը կոնկրետ չգիտեր, միայն ընդհանուր պատկերացում ուներ: Երբ «Թայմսի» համապատասխան համարում բոլոր անհրաժեշտ փոփոխությունները հավաքվում ու համեմատվում էին, համարը վերատապվում էր, իսկական օրինակը՝ ոչնչացվում, իսկ դրա փոխարեն թղթապանակում դրվում էր ուղղված տարբերակը: Անվերջ փոփոխությունների այս գործընթացը վերաբերում էր ոչ միայն թերթերին, այլև գրքերին, պարբերականներին, գրքույկներին, ազդագրերին, թռուցիկներին, ֆիլմերին, ծայնագրություններին, ծաղրանկարներին ու լուսանկարներին, այսինքն՝ այն բոլոր գրական կամ վավերագիր նյութերին, որոնք կարող են քաղաքական կամ գաղափարական նշանակություն ունենալ: Օրեցօր և գրեթե րոպե առ րոպե անցյալը թարմացվում էր: Հենց այդպես Կուսակցության ցանկացած կանխագուշակման իրավացիությունը հաստատվում էր փաստացի ապացույցով. գրանցումների մեջ չկար որևէ նորություն կամ կարծիք, որը կարող էր հակասել ժամանակի կարիքներին: Ամբողջ պատմությունը մագաղաթ էր, որ ջնջվում ու դարձյալ գրվում էր այնքան հաճախ, որքան անհրաժեշտ էր: Եվ երբ գործն արվում էր, այլևս հնարավոր չէր ապացուցել, թե որևէ կեղծում է կատարվել: Արձանագրությունների բաժնի ամենամեծ հատվածը, շատ ավելի մեծ, քան Ուինսթոնի բաժինն էր, բաղկացած էր մարդկանցից, որոնց պարտականությունն էր գտնել ու հավաքել փոփոխման կամ

ոչնչացման ենթակա գրքերի, թերթերի և այլ փաստաթղթերի բոլոր կրկնօրինակները: «Թայմսի» համարը, որը քաղաքական հանգամանքների փոփոխության կամ Մեծ եղբոր սխալ մարգարեությունների պատճառով հավանաբար տամայակ անգամներ փոփոխվել էր, դրված էր թղթապանակում՝ իր իսկական ամսաթվով, և գոյություն չունեին նրան հակասող այլ կրկնօրինակ: Գրքերը նույնպես պատվիրվում էին, նորից ու նորից վերաշարադրվում և վերատպվում՝ առանց փոփոխության մասին որևէ ծանուցման: Նույնիսկ Ուիլսոնի ստացած գրավոր հրահանգներում, որոնցից նա միշտ ազատվում էր՝ կատարելուն պես, ուղիղ կամ անուղղակիորեն չէր ասվում, որ ինչ-որ բան է կեղծվել. մշտապես նշվում էին միայն այն սայթաքումները, սխալները, տառասխալները կամ սխալ ձևակերպումները, որոնք անհրաժեշտ էր ուղղել՝ ելնելով ճշգրտության նկատառումներից:

Իրականում, մտածեց Ուիլսոնը, երբ ուղղում էր Առատության նախարարության թվերը, սա նույնիսկ կեղծարարություն չէ, այլ ընդամենը մի անհեթեթության փոխարինում մյուսով: Նյութի հիմնական մասը, որի հետ առնչվում էր աշխատողը, ոչ մի կապ չունեին իրական աշխարհի հետ, նույնիսկ այնպիսի կապ, որ կարելի էր տեսնել անկեղծ ստի մեջ: Վիճակագրությունը նույնքան ֆանտաստիկ էր ինչպես բնագրում, այնպես էլ շտկված տարբերակում: Հիմնականում ստիպված էին լինում թվեր հորինել: Օրինակ, ըստ Առատության նախարարության կանխատեսումների՝ եռամսյակի ընթացքում պետք է արտադրվեր հարյուր քառասունհինգ միլիոն զույգ կոշիկ: Իրականում արտադրվում էր վաթսուներկու միլիոն: Սակայն կանխատեսումը վերաշարադրելիս Ուիլսոնը թիվն իջեցրեց հիսունյոթ միլիոնի, որպեսզի, ինչպես միշտ, տպավորություն ստեղծվի, թե պլանը գերակատարվել է: Ամեն դեպքում, վաթսուներկու միլիոնը նույնքան հեռու էր իրականությունից, որքան 145 միլիոնը: Շատ հավանական էր, որ կոշիկ ընդհանրապես չէր արտադրվել: Շատ ավելի հավանական էր, որ ոչ ոք չգիտի և չի էլ

1984

ուզում իմանալ, թե որքան կոշիկ է արտադրվել: Հայտնի էր միայն, որ ամեն եռամսյակի ընթացքում թղթի վրա արտադրվում էր աստղաչափական քանակի կոշիկ, սակայն Օվկիանիայի բնակչության կեսը բոբիկ էր: Նույն վիճակն էր մեծ կամ փոքր ցանկացած գրավոր փաստի դեպքում: Ամեն ինչ խամրում էր ստվերների աշխարհում, որտեղ նույնիսկ տարեթիվը հնարավոր չէր հստակ որոշել:

Ուինսթոնը հայացք գցեց սրահի հակառակ կողմը: Ջուզահեռ խցում Թիլթոսոն անունով փոքրամարմին, բծախնդիր, մուգ կզակով մի մարդ անվրդով աշխատում էր՝ ծնկին պահելով ծալած թերթը, բերանը մոտեցրած խոսագրիչի բարձրախոսին: Թվում էր՝ նա ամեն ինչ անում է, որ ամբողջ ասվածը մնա իր ու հեռէկրանի միջև: Նա բարձրացրեց գլուխը, և ակնոցը թշնամաբար ուղղվեց Ուինսթոնի կողմը:

Ուինսթոնը գրեթե չէր ճանաչում Թիլթոսոնին և գաղափար անգամ չունեւր, թե նա ինչ գործով էր զբաղվում: Արձանագրությունների բաժնում ոչ ոք չէր սիրում խոսել իր աշխատանքի մասին: Երկար, առանց պատուհանների միջանցքում, որ բաղկացած էր երկշարք խցերից՝ լի թղթերի անվերջ խշխշոցով ու խոսագրիչի մեջ մրմնջացող ձայների բզզոցով, աշխատում էին տանայակ մարդիկ, որոնց Ուինսթոնը նույնիսկ անունով չէր ճանաչում, չնայած ամեն օր տեսնում էր, թե ինչպես են շտապ-շտապ հետուառաջ անում միջանցքներում կամ թափահարում թևերը Ատելության երկրպեի ընթացքում: Նա գիտեր, որ հարևան խցում աշխատող ավագագույն մագերով փոքրամարմին կինն ամբողջ օրը տանջվում էր՝ գտնելով ու մամուլից ջնջելով այն մարդկանց անունները, որոնք գոլորշացվել էին, հետևաբար՝ երբեք էլ գոյություն չէին ունեցել: Աշխատանքն ասես հենց նրա համար էր ստեղծված. բանն այն է, որ մի քանի տարի առաջ գոլորշացրել էին նրա ամուսնուն: Իսկ մի քանի խուց այն կողմ աշխատում էր մեղմ, անճարակ, երազկոտ մի արարած՝ Ամփլֆորթ անունով, չափազանց մազոտ ականջներով և հանգի ու ռիթմի ապշեցուցիչ տաղանդով. նա ստեղծում էր

բանաստեղծությունների աղավաղված տարբերակներ կամ, այսպես կոչված, եզրափակիչ տեքստեր, որոնք գաղափարական առումով վտանգավոր չէին, բայց, չգիտես ինչու, պետք է պահպանվեին անթուղգիաներում: Եվ այս ամբողջ սրահը, մոտ հիսուն աշխատողներով, կազմում էր ընդամենը մեկ ենթաբաժին, այսպես ասած՝ մի առանձին բջիջ Արձանագրությունների բաժնի հսկայական ու խճճված համակարգում: Նրանից այն կողմ, նրանից վերև ու ներքև աշխատողների մեղավարները զբաղված էին ամենաբազմազան գործերով: Կային հսկայական հրատարակչություններ՝ իրենց ենթա-խմբագիրներով, տպագրիչներով և հատուկ կահավորված ստուդիաներով, որտեղ լուսանկարներ էին կեղծվում: Կար նաև հեռուստահաղորդումների բաժին՝ իր ինժեներներով, ռեժիսորներով և դերասանների խմբերով, որոնք հատուկ ընտրված էին ծայրեր նմանակելու ունակության համար: Կար նաև ռեֆերենտների մի ամբողջ բանակ, որոնց պարտականությունն էր կազմել գրքերի ու պարբերականների ցուցակները, որոնք ենթակա էին փոփոխման: Կային հսկայական պահոցներ՝ փաստաթղթերի համար, և թաքնված հնոցներ, որտեղ ոչնչացվում էին իսկական օրինակները: Իսկ ինչ-որ տեղ գաղտնի, ուղղորդող ուղեղներն էին, որոնք, կենտրոնացնելով իրենց ջանքերը, կազմում էին քաղաքական ուղեգիծ, ըստ որի՝ անհրաժեշտ էր անցյալի մի մասը պահպանել, մյուս մասը՝ կեղծել, իսկ երրորդն առհասարակ ոչնչացնել:

Իսկ Արձանագրությունների բաժինը ճշմարտության նախարարության առանձին մասն էր, որի գլխավոր խնդիրն էր ոչ թե վերակառուցել անցյալը, այլ Օվկիանիայի բնակիչներին մատակարարել թերթեր, ֆիլմեր, դասագրքեր, հեռէկրանի հաղորդումներ, պիեսներ, վեպեր, այսինքն՝ համոզիչ տեղեկատվություն, հրահանգներ կամ ժամանց՝ արձանից մինչև լոգունգ, քնարական պոեմից մինչև կենսաբանական տրակտատ և մանկական այբբենարանից մինչև նորալեզվի բառարան: Նախարարությունը ոչ միայն բավարարում էր Կուսակցության բազմազան կարիքները, այլև

կրկնում ամբողջ գործողությունը ավելի ցածր մակարդակով՝ պրոլետարիատի համար: Գոյություն ուներ առանձին բաժինների մի ամբողջ համակարգ, որոնք զբաղվում էին պրոլետարական գրականությամբ, երաժշտությամբ, դրամատուրգիայով և զվարճանքներով: Այստեղ տպագրվում էին ցածրորակ թերթեր, որոնք գրեթե ոչինչ չէին պարունակում՝ բացի սպորտից, հանցագործությունների ամփոփագրից ու աստղագիտությունից, գրոշանոց սենսացիոն նովելներից. ստեղծվում էին անվայելուչ տեսարաններով ֆիլմեր ու սենտիմենտալ երգեր, որոնք հորինվում էին մեխանիկական միջոցներով՝ յուրահատուկ գեղադիտակով, որը կոչվում էր հանգագրիչ: Գոյություն ուներ նաև մի ամբողջ ենթաբաժին. նորալեզվով այն կոչվում էր Պոռնոբաժին և զբաղվում էր ամենացածրորակ պոռնոգրաֆիայի ստեղծմամբ, որն ուղարկվում էր կնքված փաթեթներով, և Կուսակցության անդամներին, բացի հեղինակներից, արգելվում էր դիտել դրանք:

Մինչ Ուինսթոնն աշխատում էր, օդաճնշական խողովակից ևս երեք հաղորդագրություն էր ընկել, բայց դրանք սովորական առաջադրանքներ էին, ուստի ավարտեց մինչև Ատելության երկրպեղի սկիզբը: Երբ Ատելությունն ավարտվեց, նա վերադարձավ իր խուցը, դարակից հանեց Նորալեզվի բառարանը, մի կողմ դրեց խոսագրիչը, մաքրեց ակնոցը և անցավ առավոտվա հիմնական գործին:

Ուինսթոնի կյանքի ամենամեծ հաճույքն աշխատանքն էր: Հիմնականում հոգնեցուցիչ ու սովորական առաջադրանքներ էին, բայց երբեմն այնքան բարդ ու խճճված, որ կարող էիր գլուխդ կորցնել, ինչպես մաթեմատիկական խնդիր լուծելիս. լինում էին դեպքեր, երբ կեղծելու ընթացքում ոչինչ չէր կարող ուղղորդել. պետք էր միայն տիրապետել Անգսոցի սկզբունքներին և կանխագուշակել՝ Կուսակցությունն ինչ է ուզում լսել քեզնից: Ուինսթոնը հիանալի էր տիրապետում այս գործին: Մի անգամ նրան նույնիսկ վստահել էին «Թայմսի» առաջնորդող հոդվածների շտկման գործը, որոնք ամբողջությամբ գրված էին նորալեզվով: Նա բացեց

հաղորդագրությունը, որն ավելի վաղ մի կողմ էր դրել: Այնտեղ գրված էր.

թայմս 3.12.83 զեկույց մե օրվա պատվեր կրկնակիպլյուսավ մեջբերումներ չմարդիկ վերաշարադրել լրիվ վերից վար մինչ ներկայացումը

Հնալեզվում (կամ ստանդարտ անգլերենում) դա հնչում էր այսպես.

«1983 թվականի դեկտեմբերի երեքի «Թայմսի» համարում տպագրված Մեծ եղբոր հրամանը գոհացնող է. վկայակոչված են գոյություն չունեցող մարդիկ: Ամբողջությամբ վերաշարադրեք և մինչ պահոց ուղարկելը ձեր տարբերակը հանձնեք ղեկավարությանը»:

Ուիլսթոնն աչքի անցկացրեց սխալ հոդվածը: Երևում էր՝ Մեծ եղբոր Օրվա հրամանը գլխավորապես նվիրված էր Էֆ Էֆ Սի Սի կազմակերպության աշխատանքի գովերգմանը, որը սիգարետ և այլ պարագաներ էր մատակարարում Լոդացող ամրոցների նավաստիներին: Աչքի էր ընկել հատկապես ոմն ընկեր Ուիդերս՝ ներքին կուսակցության հայտնի անդամ. նրան շնորհվել էր երկրորդ կարգի շքանշան՝ Գերազանց ծառայության համար:

Երեք ամիս անց Էֆ Էֆ Սի Սի-ն լուծարվել էր՝ առանց որևէ պատճառի: Կարելի էր ենթադրել, որ Ուիդերսը և նրա գործընկերները հիմա շնորհագրված էին, թեև այդ մասին որևէ հիշատակություն չկար ո՛չ մամուլում, ոչ էլ հեռէկրանով: Դա սպասելի էր, քանի որ քաղաքական օրինազանցները սովորաբար չէին դատապարտվում կամ ենթարկվում հանրային մեղադրանքի: Մեծ գտումները, որոնց զոհ էին գնում հազարավոր մարդիկ, դավաճանների ու մտքի հանցագործների բաց դատաքննությունները, որտեղ նրանք ստորացած խոստովանում էին իրենց մեղքը, ապա մահապատժի

ենթարկվում, հատուկ ներկայացումներ էին և տեղի էին ունենում ոչ հաճախ, քան մի քանի տարին մեկ: Իսկ մարդիկ, ովքեր արժանացել էին Կուսակցության դժգոհությանը, ուղղակի անհետանում էին, ու նրանց մասին այլևս ոչ ոք չէր լսում: Ոչ ոք պատկերացում չունեի՝ ինչ է պատահել նրանց: Հնարավոր է, որ նույնիսկ ողջ են: Տարբեր ժամանակներում անհետացել էր երեսուն մարդ, որոնց Ուինսթոնը անձամբ էր ճանաչում, չհաշված իր ծնողներին:

Ուինսթոնն ամրակով դանդաղ շոյում էր քիթը: Դիմացի խցում ընկեր Թիլթթոնը դեռ գաղտնի խոսում էր քթի տակ՝ թեքված դեպի խոսագրիչը: Նա մի պահ բարձրացրեց գլուխը, ու ակնոցը դարձյալ թշնամաբար փայլեց: Ուինսթոնը չգիտեր՝ արդյո՞ք ընկեր Թիլթթոնը նույն գործով էր զբաղվում, ինչ ինքը: Դե ինչ, չի բացառվում: Նման նուրբ գործեր չեն կարող վստահվել միայն մեկ մարդու. մյուս կողմից՝ առաջադրանքը կոմիտեին հանձնարարելը կնշանակեր խոստովանել, որ կեղծում է տեղի ունենում: Շատ հավանական է, որ հիմա տանյակից ավելի մարդիկ աշխատում էին Մեծ եղբոր ասածի հակառակ տարբերակների վրա: Հիմա մի փայլուն ուղեղ Ներքին կուսակցությունից կընտրի այս կամ այն տարբերակը, կխմբագրի, գործի կղնի խաչաձև հղումների բարդ, բայց անհրաժեշտ համակարգը, ապա ընտրված սուտը կհանձնվի մշտական պահպանման և կդառնա ծճարտություն:

Ուինսթոնը չգիտեր, թե Ուիդերսն ինչու էր շնորհագրկվել: Գուցե չարաշահումների կամ աշխատանքը վատ կատարելու համար: Իսկ գուցե Մեծ եղբայրն ուղղակի ազատվում էր չափազանց հայտնի իր ենթակայից: Հնարավոր է, որ Ուիդերսին կամ նրան մտերիմ մեկին մեղադրում էին հերետիկոսության համար: Կամ գուցե, ինչն ամենահավանականն էր, դա պատահել էր, որովհետև զտումներն ու «գոլորշացումները» կառավարության մեխանիզմի անհրաժեշտ մասն էին: Միակ իրական հուշումը «հիշատակված չմարդիկ» արտահայտության մեջ էր. նշանակում էր՝ Ուիդերսն արդեն մեռած է: Այս արտահայտությունը չէր օգտագործվում ձերբակալված

մարդկանց դեպքում: Երբեմն նրանց բաց էին թողնում և թույլ էին տալիս մինչ մահապատիժը մեկ-երկու տարի մնալ ազատության մեջ: Պատահում էր, որ մեկը, ում վաղուց մեռած էին համարում, ուրվականի պես հայտնվում էր որևէ հանրային դատավարության ընթացքում, որտեղ վկայություններ էր տալիս հարյուրավոր մարդկանց դեմ, ապա անհետանում, այս անգամ՝ ընդմիջտ: Այնուամենայնիվ, Ուիդերսն արդեն «չմարդ» էր: Նա գոյություն չուներ. երբեք էլ գոյություն չէր ունեցել: Ուինսթոնը որոշեց, որ բավական չէ փոխել միայն Մեծ եղբոր ելույթի միտումը: Ավելի լավ կլիներ նա խոսեր հիմնական թեմայի հետ բոլորովին կապ չունեցող մեկ այլ բանի մասին:

Նա կարող է շեղել ելույթի ուղղությունն ու պախարակել դավաճաններին ու մտքի հանցագործներին, բայց դա չափազանց ակնհայտ կլիներ, իսկ ռազմաճակատում հաղթանակ հորինելը կամ Իններորդ եռամյա պլանի գերակատարումը կարող էր շատ խճճել արձանագրությունները: Այստեղ անհրաժեշտ էր մաքուր երևակայություն: Հանկարծ ուղեղում փայլատակեց ընկեր Օզվիի՝ կարելի է ասել պատրաստի պատկերը. նա վերջերս զոհվել էր ճակատամարտում՝ հերոսական հանգամանքներում: Լինում էին դեպքեր, երբ Մեծ եղբայրն իր Օրվա հրամանը նվիրում էր Կուսակցության շարքային համեստ անդամի հիշատակին, որի կյանքն ու մահը օրինակելի էին բոլորի համար: Այսօր նրա խոսքը նվիրված կլինի ընկեր Օզվիին: Անշուշտ, ընկեր Օզվի անունով մարդ գոյություն չուներ, բայց մի քանի տպագիր տող, մի քանի կեղծ լուսանկար, և նա շուտով կյանքի կկոչվի:

Ուինսթոնը մի պահ մտածեց, հետո իր կողմը քաշեց խոսագրիչն ու սկսեց թելադրել Մեծ եղբոր ծանոթ ոճով՝ միաժամանակ ռազմական ու մանրակրկիտ ոճ, ինչը հեշտ էր կրկնօրինակել՝ հարցեր տալու և դրանց անմիջապես պատասխանելու հնարքի շնորհիվ («Ի՞նչ դաս ենք քաղում այս փաստից, ընկերներ: Դաս, որը նաև Անգլոնգի հիմնարար սկզբունքներից մեկն է, և այն, և այն»):

Երեք տարեկանում ընկեր Օգլվին հրաժարվել էր բոլոր խաղալիքներից՝ բացի թմբուկից, ինքնաձիգից և ուղղաթիռի մոդելից: Վեց տարեկանում, բացառության կարգով մեկ տարի շուտ, համալրել է Լրտեսների շարքերը, իսկ ինը տարեկանում արդեն դասակի հրամանատար էր: Տասնմեկ տարեկանում հորեղբորը մատնել էր Մտքի ոստիկանությանը, երբ գաղտնալսելով խոսակցությունը՝ հասկացել էր, որ նա հանցավոր գաղափարներ ունի: Տասնյոթ տարեկանում Երիտասարդական հակասեռային միության շրջանային ղեկավարն էր: Տասնինը տարեկանում հնարել էր ձեռքի նռնակ, որն ընդունվել էր Խաղաղության նախարարության կողմից և առաջին փորձարկման ընթացքում մեկ պայթյունով ոչնչացրել երեսունմեկ եվրասիացի գերի: Քսաներեք տարեկանում զոհվել էր ռազմական գործողությունների ժամանակ: Կարևոր հաղորդագրություններով Հնդկական օվկիանոսի վրայով թռչելիս նրան հետապնդել էին թշնամու կործանիչ ինքնաթիռները: Գնդացիրը մարմնին կապած՝ ուղղաթիռից թռել էր խոր ջրերի մեջ՝ իր հետ տանելով հաղորդագրությունները: «Նման վախճանը,– ասաց Մեծ եղբայրը,– կարող է դառնալ միայն նախանձի առարկա»: Մեծ եղբայրը մի քանի մեկնաբանություն արեց ընկեր Օգլվիի կյանքի մաքրության ու նպատակաուղղվածության վերաբերյալ: Նա չէր խնում և չէր ծխում, չուներ ժամանցի այլ տարբերակ, քան օրական մեկ ժամ մարզասրահում անցկացնելը, ամուրիության երդում էր տվել, քանզի կարծում էր, որ ամուսնությունն ու ընտանիքի խնամքը անհամատեղելի են պարտքին քսանչորս ժամ նվիրվելու պատրաստակամության հետ: Չուներ խոսակցության այլ թեմա, քան Անգոսցը, և ոչ մի նպատակ՝ բացի եվրասիական թշնամու դեմ հաղթանակից և լրտեսներ, վնասարարներ, մտքի հանցագործներ ու այլ դավաճաններ գտնելուց:

Ուինսթոնը երկար մտածում էր՝ չարժե՞ արդյոք շքանշան շնորհել ընկեր Օգլվիին «Գերազանց ծառայության համար»։ Ի վերջո, որոշեց չշնորհել, քանի որ դրա համար անհրաժեշտ էր մի քանի խաչաձև հղում:

Մի անգամ էլ նայեց դիմացի խցում աշխատող մրցակցին: Ինչոր բան նրան հուշում էր, որ Թիլոթսոնը հաստատ զբաղված է նույն գործով, ինչ ինքը: Անհնար էր կռահել, թե ում աշխատանքն ի վերջո կընդունվի, բայց նա միանգամայն վստահ էր, որ իր տարբերակն է ընդունվելու: Ընկեր Օգլվին, որ ընդամենը մեկ ժամ առաջ գոյություն չունեի, հիմա իրական էր: Ուիլսոնին հետաքրքիր թվաց այն փաստը, որ կարելի է ստեղծել մեռած մարդկանց, բայց ոչ ողջերին: Ընկեր Օգլվին, որ երբեք գոյություն չէր ունեցել ներկայում, հիմա գոյություն ուներ անցյալում, ու երբ կեղծման փաստը մոռացվի, նրա գոյությունը նույնքան հաստատ և անժխտելի կլինի, որքան Կարլ Մեծը կամ Հուլիոս Կեսարը:

V

Ցածր առաստաղով ճաշարանում, գետնի տակ, դանդաղ առաջ էր գնում ճաշին սպասողների հերթը: Սենյակն արդեն լի էր մարդկանցով ու խլացնող աղմուկով: Վաճառասեղանի ետևից քուլաքուլա բարձրանում էր շոգեխաշած մսի գոլորշին՝ թթու մետաղական հոտով, որին, սակայն, չէր հաջողվում ծնշել «Հաղթանակ» ջինի հոտը: Սրահի հեռավոր անկյունում փոքրիկ բար էր պատի մեջ բացված անցք, որտեղից ջինի մի մեծ ումպը կարելի էր գնել տասը սենթով:

– Ահա թե ում էի փնտրում,– լսեց Ուիլսոնը թիկունքից:

Նա շրջվեց: Մտերիմներից էր՝ Սայմը, որն աշխատում էր Հետազոտությունների բաժնում: «Մտերիմ» բառը թերևս տեղին չէ: Արդեն բարեկամներ չկային, միայն «ընկերներ»։ Բայց կային որոշ ընկերներ, որոնց ներկայությունն ավելի հաճելի էր, քան մյուսներինը: Սայմը բանասեր էր, նորալեզվի մասնագետ: Նա փորձագետների հսկայական թիմի կազմում էր, որոնք պատրաստում էին Նորալեզվի բառարանի տասնամեկերորդ հրատարակությունը: Ուիլսոնից էլ

1984

փոքրամարմին էր, մուգ մազերով և մեծ, դուրս պրծած աչքերով, որոնք միաժամանակ թե՛ տխուր էին, թե՛ ծիծաղելի, և զրուցակցի հետ խոսելիս կարծես ուսումնասիրում էին նրա դեմքը:

– Ուզում էի հարցնել՝ ածելի ունե՞ք,– ասաց նա:

– Ոչ մի հատ,– ասաց Ուինսթոնը մի տեսակ մեղավոր շտապողականությամբ:– Ամբողջ քաղաքում հարցրել եմ: Ոչ մի տեղ այլևս չկա:

Բոլորն ածելիներ էին փնտրում: Իրականում Ուինսթոնը երկու չօգտագործած ածելի ուներ, որոնք գանձի պես պահել էր: Ածելիներն անհետացել էին մի քանի ամիս առաջ: Ցանկացած պահի կուսակցական խանութներից մե՛կ այս անհրաժեշտ առարկան էր չքանում, մե՛կ մյուսը: Մերթ կոճակներն անհետ կկորչեն, մերթ թելը, երբեմն էլ՝ կոշկաքուղերը. հիմա էլ, ահա, ածելիներն էին չքվել: Եթե հնարավոր էր ձեռք բերել, ապա՝ միայն «սև» շուկայում, այն էլ՝ թաքուն ու դժվարությամբ:

– Վեց ամիս է՝ նույն ածելիով եմ սափրվում,– ստեց նա:

Հերթն առաջ շարժվեց: Երբ կանգ առան, Ուինսթոնը նորից շրջվեց դեպի Սայմը: Նրանք մեկական մետաղյա յուղոտ սկուտեղ վերցրին վաճառասեղանի եզրին շարված կույտից:

– Երեկ տեսա՞ք ինչպես կախաղան հանեցին գերիներին,– ասաց Սայմը:

– Աշխատում էի,– անտարբեր պատասխանեց Ուինսթոնը:– Երևի կինոյում կտեսնեմ:

– Բոլորովին համարժեք փոխատեղում չէ,– ասաց Սայմը:

Նրա քնծիծաղող հայացքը տնտղում էր Ուինսթոնի դեմքը: «Լան՛վ գիտենք ձեզ,– ասում էին նրա աչքերը:– Կարդում եմ մտքերդ: Շատ լավ հասկանում եմ՝ ինչու չես գնացել գերիների մահապատիժը նայելու»:

Ինտելեկտուալ Սայմը մոլեռանդ ուղղափառ էր: Տիպիկ ու ազատ գոհունակությամբ պատմում էր թշնամու գյուղերի վրա ուղղաթիռների գրոհների, մտքի հանցագործների դատավարությունների ու խոստովանությունների, Սիրո նախարարության նկուղներում

իրականացվող մահապատիժների մասին: Զրուցելիս ստիպված էիր շեղել նրան այդպիսի թեմաներից ու, եթե հաջողվեր, հարցնել նորալեզվի տեխնիկական միջոցներից, որոնց մասին խոսում էր հետաքրքրությամբ ու իմացությամբ: Ուիլսթոնը մի քիչ թեքեց գլուխը, որ խուսափի խոշոր սև աչքերի մանրազնին հայացքից:

– Գեղեցիկ մահապատիժ ստացվեց, – երազկոտ մրմնջաց Սայմը:– Իմ կարծիքով՝ երբ նրանց ոտքերը կապում են, փչացնում են ամբողջ տեսարանը: Սիրում եմ, երբ թափահարում են ոտքերը: Իսկ ամենից շատ սիրում եմ վերջին պահը, երբ դուրս է ընկնում լեզուն, կապույտ, վառ կապույտ լեզուն: Այդ մանրուքն ինձ շատ է գրավում:

– Հաջորդը, – շերեփը թափահարելով՝ ծչաց սպիտակ գոգնոցով պրոլը:

Ուիլսթոնն ու Սայմը մոտեցրին սկուտեղները: Երկուսին էլ արագորեն սովորական ճաշ շարտեցին. մետաղյա՝ մոխրավարդագույն միս, մի կտոր հաց, պանրի խորանարդիկ, մի բաժակ «Հալթանակ» սուրճ՝ առանց կաթի, և սախարինի մի կոճակ:

– Այնտեղ՝ այն հեռէկրանի տակ, սեղան կա, – ասաց Սայմը:– Եկեք ճամփին ջին վերցնենք:

Ջինը մատուցվում էր անպոչ ծենապակե գավաթներով: Նրանք կտրեցին–անցան մարդաշատ սրահը ու սկուտեղները դրեցին մետաղյա երեսով սեղանին, որի անկյունում ինչ–որ մեկը ճաշ էր թափել՝ կեղտոտ, ջրիկ, փսխուք հիշեցնող: Ուիլսթոնը վերցրեց ջինի գավաթը, մի պահ կանգ առավ՝ համարձակություն հավաքելու, ապա կուլ տվեց ծիթանման հեղուկը: Հետո կկոցեց արցունքոտ աչքերն ու հանկարծ բացահայտեց, որ քաղցած է: Սկսեց գդալել ճաշը. արգանակից բացի՝ ափսեի մեջ վարդագույն սպունգանման խորանարդիկներ կային. երևի մսի պատրաստուկ էր: Երկուսն էլ լուռ էին այնքան, մինչև դատարկեցին թասերը: Ուիլսթոնից ձախ՝ նրա թիկունքում, ինչ–որ մեկն անընդհատ ու արագ–արագ խոսում էր: Նրա հապճեպ շաղակրատանքը բադի կռնչոց էր հիշեցնում, որն առանձնանում էր ընդհանուր ժխորի մեջ:

- Բառարանի գործերն առաջ են գնում,- հարցրեց Ուինսթոնը՝ ձայնը բարձրացնելով, որ հաղթահարի աղմուկը:

- Դանդաղ,- ասաց Սայմը:- Ես ածականներով եմ զբաղվում: Հրաշալի է:

Նա անմիջապես պայծառացավ, երբ խոսք գնաց նորալեզվի մասին: Մի կողմ հրեց մետաղյա թասը, նուրբ ձեռքերից մեկով բռնեց հացի կտորը, մյուսով՝ պանիրը, ու կռացավ սեղանին, որ առանց գոռալու խոսի Ուինսթոնի հետ:

- Տասնմեկերորդ հրատարակությունը վերջնական է,- ասաց Նա:- Մենք վերջնական տեսքի ենք բերում լեզուն. այդպիսին կլինի լեզուն այն ժամանակ, երբ այլևս ոչ ոք չի խոսի ուրիշ լեզվով: Երբ ավարտենք այս գործը, ձեզ նման մարդիկ ստիպված կլինեն նորից սովորել լեզուն: Երևի կարծում եք, թե մեր գլխավոր գործը նոր բառեր հորինելն է: Ոչ մի դեպքում: Մենք ոչնչացնում ենք բառերը՝ տասնյակ բառեր, հարյուրավոր բառեր, ամեն օր: Մինչև ոսկորը տաշում ենք լեզուն: 2050 թվականին տասնմեկերորդ հրատարակությունում ներառված ոչ մի բառ հնացած չի լինի:

Նա ազահորեն կծեց հացը, ծամեց ու կուլ տվեց, ապա շարունակեց խոսել տառակերի կրքոտությամբ: Նիհար, թուխ դեմքն աշխուժացել էր, աչքերը կորցրել էին ծաղրական արտահայտությունը ու գրեթե երազկոտ էին:

- Բառերի ոչնչացումը գեղեցիկ բան է: Իհարկե, ամենաանպետքը բայերն ու ածականներն են, բայց կան նաև հարյուրավոր գոյականներ, որոնցից նույնպես կարելի է ազատվել: Հարցը միայն հոմանիշները չեն, կան նաև հականիշներ: Ի վերջո, ինչի՞ է պետք բառը, որն ընդամենը այլ բառի հակառակ իմաստն է: Բառն ինքնին իր հակառակ իմաստը պարունակում է: Օրինակ, վերցնենք «լավ» բառը: Եթե կա «լավ» բառը, ի՞նչ իմաստ ունի «վատը»: «Չլավ»-ը բավական է ու ավելի հարմար, քանի որ, ի տարբերություն նախորդի, ճշգրիտ հականիշն է: Կամ, եթե ուզում եք «լավ» բառի ավելի ուժեղ տարբերակ, ի՞նչ իմաստ ունի կիրառել այնպիսի աղոտ ու

անիմաստ բառեր, ինչպիսիք են «գերազանցը», «փառահեղը» և այլն: «Պլյուսլավ» բառն արտահայտում է ողջ իմաստը, կամ, եթե ավելի ուժեղ տարբերակ եք ուզում, «կրկնակիպլյուսլավ»: Իհարկե, մենք արդեն օգտագործում ենք այդ ձևերը, բայց նորալեզվի վերջնական տարբերակում մյուսներն այլևս չեն լինի: Ի վերջո, լավ ու վատ հասկացությունները կներկայացվեն վեց բառով, իսկ իրականում՝ ընդամենը մեկով: Զգո՛ւմ եք գեղեցկությունը, Ուի՛նսթոն: Անշուշտ, դա Մ. Ե.-ի գաղափարն է, - ավելացրեց՝ որպես ուշացած միտք:

Մեծ եղբոր անունը լսելիս Ուինսթոնի դեմքով անբովանդակ ջերմություն անցավ: Այնուամենայնիվ, Սայմը նկատեց նրա թույլ խանդավառությունը:

- Ըստ արժանվույն չեք գնահատում նորալեզուն, Ուի՛նսթոն, - տխուր ասաց նա: - Նույնիսկ նորալեզվով գրելիս հնալեզվով եք մտածում: Մի քանի անգամ կարդացել եմ ձեր հոդվածները «Թայմսում»: Լավն են, բայց թարգմանություններ են: Հոգու խորքում դուք նախընտրում եք կառչել հնալեզվից՝ իր ողջ անորոշությամբ ու իմաստի անհեթեթ երանգներով: Բառերի ոչնչացման գեղեցկությունը հասու չէ ձեզ: Գիտե՞ք, նորալեզուն աշխարհի միակ լեզուն է, որի բառապաշարն ամեն տարի պակասում է:

Անշուշտ, Ուինսթոնը գիտեր այդ մասին: Նա ժպտաց, որքան հնարավոր է, կարեկցանքով, բայց չհամարձակվեց խոսել: Սայմը կծեց մուգ հացի ևս մի կտոր, արագ ծամեց ու շարունակեց.

- Մի՞թե չեք հասկանում, որ նորալեզվի հիմնական նպատակը մտքի ծավալների նեղացումն է: Ի վերջո, մենք կհասնենք նրան, որ մտքի հանցագործությունը տառացիորեն անհնար կլինի. չեն լինի բառեր՝ այն արտահայտելու համար: Ցանկացած անհրաժեշտ հասկացություն կարտահայտվի միայն մեկ բառով, որի իմաստը խստորեն սահմանված կլինի, իսկ մյուս բոլոր լրացուցիչ իմաստները կվերանան ու կնոռացվեն: Արդեն տասնմեկերորդ հրատարակությունում մենք գրեթե հասնում ենք այդ նպատակին:

Բայց գործընթացը դեռ երկար կշարունակվի, նույնիսկ իմ ու ձեր մահից հետո: Ամեն տարի բառերն աստիճանաբար կքչանան, իսկ գիտակցության ծավալները կփոքրանան: Անշուշտ, նույնիսկ հիմա չկա մտքի հանցագործության ո՛չ պատճառ, ո՛չ արդարացում: Կա ինքնաղեկավարման, իրականության վերահսկման խնդիր: Բայց, ի վերջո, նույնիսկ դրա կարիքը չի լինի: Հեղափոխությունն ավարտված կլինի այն ժամանակ, երբ լեզուն կատարյալ լինի: Նորալեզուն Անգսոնն է, Անգսոնը՝ նորալեզուն,– ավելացրեց նա մի տեսակ միստիկական բավարարվածությամբ:– Ձեր մտքով երբևէ անցե՞լ է, Ուի՛նսթոն, որ ամենաուշը մինչ 2050 թվականը չի մնա ոչ մի մարդ, ով կկարողանա հասկանալ իմ ու ձեր խոսակցությունը:

– Բացի...– կասկածանքով սկսեց Ուինսթոնն ու անմիջապես կանգ առավ:

«Բացի պրոլներից»,– նրա լեզվի ծայրին էր: Բայց իսկույններ զգաց, որ այդ մեկնաբանությունը բավական է իրեն գաղափարներից շեղվելու մեջ մեղադրելու համար: Սակայն Սայմը գլխի էր ընկել, թե նա ինչ էր ուզում ասել:

– Պրոլները մարդ չեն,– անփույթ ասաց նա:– Մինչ 2050 թվականը կամ գուցե ավելի շուտ ոչ ոք չի տիրապետի հնալեզվին: Անցյալի ողջ գրականությունը կոչնչացվի: Չոսեր, Շեքսպիր, Միլթոն, Բայրոն. նրանց ստեղծագործությունները գոյություն կունենան միայն նորալեզվի տարբերակով. դրանք ոչ միայն կփոխվեն, այլև նոր տարբերակը կհակասի հնին: Կփոխվի նույնիսկ Կուսակցության գրականությունը: Անգամ կարգախոսները կփոխվեն: Ինչպե՞ս կկիրառվի «Ազատությունը ստրկությունն է» արտահայտությունը, երբ «ազատություն» հասկացությունը վերանա: Մտածողության մթնոլորտն այլ կլինի: Ըստ էության, միտքը, իր ժամանակակից իմաստով, նույնպես չի լինի: Ուղղափառը չի մտածում: Նա մտածելու կարիք չունի: Ուղղափառությունն անգիտակցական վիճակ է:

Հանկարծահաս խոր համոզմունքով Ուինսթոնը մտածեց, որ մոտ օրերս Սայմին «կգոլորշացնեն»: Նա չափազանց խելացի է:

Շատ պարզ է հասկանում ու շիտակ է խոսում: Կուսակցությունը չի սիրում այդպիսիներին: Նրա դեմքին էլ գրված է, որ մի օր անհետանալու է:

Ուինսթոնն արդեն կերել էր հացն ու պանիրը: Նա մի քիչ հետ ընկավ աթոռին, որ խմի մի գավաթ սուրճը: Նրանից ծախ՝ սեղանի առաջ, ճղճղան ձայնով մարդը դեռ անխղճորեն խոսում էր: Մի երիտասարդ կին, որ հավանաբար նրա քարտուղարուհին էր ու մեջքով էր նստած Ուինսթոնին, լսում էր նրան ու սիրով համաձայնում ամեն խոսքին: Ժամանակ առ ժամանակ Ուինսթոնի ականջին էր հասնում երիտասարդ ու բավական հիմար կանացի ձայնը, որն ասում էր՝ «Իրավացի եք: Լիովին համամիտ եմ ձեզ հետ»: Բայց մյուս ձայնը չէր դադարում ոչ մի վայրկյան, նույնիսկ երբ աղջիկն էր խոսում: Ուինսթոնը ճանաչում էր տղամարդուն, բայց միայն գիտեր, որ կարևոր պաշտոն է զբաղեցնում Գրականության բաժնում: Նա մոտ երեսուն տարեկան էր, մկանուտ կոկորդով ու մեծ, շարժուն բերանով: Գլուխը մի քիչ հետ էր գցել, և այդ դիրքի պատճառով լույսն ընկնում էր աչքերին, ու Ուինսթոնին թվում էր, թե աչքերի փոխարեն երկու դատարկ սկավառակ է: Սարսափելին այն էր, որ հնարավոր չէր գոնե մեկ բառ առանձնացնել նրա շուրթերից հորդող հնչյունների հոսքից: Միայն մեկ անգամ Ուինսթոնը հասկացավ արտահայտության մի պատառիկ՝ «գոլոթթայնականության լրիվ ու վերջնական վերացում»։ այդ պատառիկն այնքան արագ թռավ, որ ասես լինոտիպի տող լիներ: Իսկ մնացածն ընդամենը աղմուկ էր, կռնչոց՝ կռռ-կռռ-կռռ: Չնայած հնարավոր չէր լսել նրա խոսքը, անկասկած կարելի էր կռահել խոսակցության թեման: Կարևոր չէր՝ նա մեղադրում է Գոլոթթայնին և պահանջում ավելի՞ դաժան միջոցներ մտքի հանցագործների ու վնասարարների դեմ, քննադատում էր եվրասիական բանակի վայրագությունները, թե՞ գովերգում էր Մեծ եղբորը կամ Մալաբարի ռազմածակատի հերոսներին: Ինչ էլ լիներ, կարելի էր վստահ ասել՝ նրա յուրաքանչյուր բառը ուղղափառություն է, մաքուր Անգոց: Երբ Ուինսթոնն ուշադիր զննեց

Նրա անաչք դեմքը և շտապ-շտապ վերուվար անող բերանը, տարօրինակ զգացողություն ունեցավ: Ասես նրա առաջ ոչ թե կենդանի մարդ էր, այլ ինչ-որ մանեկեն: Խոսքը ծնվում էր ոչ թե ուղեղում, այլ կոկորդում: Նրանից հորդող զանգվածը բաղկացած էր բառերից, բայց խոսք չէր՝ բառի բուն իմաստով. անգիտակցաբար արտահայտված աղմուկ էր, որ նման էր բադի կռկռոցի:

Մի պահ Սայմը լուռ էր և գդալի պոչով խզմզում էր ճաշի ջրիկ մասը: Մյուս սեղանի հապճեպ կռկռոցը շարունակվում էր և ընկալելի էր՝ չնայած շրջապատող աղմուկին:

– Նորալեզվում մի բառ կա, – ասաց Սայմը: – Չգիտեմ՝ գիտեք, թե ոչ. բադախոսք, այսինքն՝ բադի կռկռոց: Սա այն հետաքրքիր բառերից է, որը երկու իրար հակասող իմաստ ունի: Եթե ասում ես հակառակորդիդ՝ վիրավորանք է, իսկ եթե համախոհիդ՝ գովասանք է:

«Անտարակույս, Սայմին կգոլորշացնեն», – նորից մտածեց Ուինսթոնը, մտածեց մի տեսակ տխրությամբ, թեև քաջ գիտակցում էր, որ Սայմն արհամարհում է իրեն ու առանձնապես չի սիրում և կարող է շատ հանգիստ մատնել որպես մտքի հանցագործի, եթե որևէ հիմք ունենա: Սայմի մեջ ինչ-որ բան այն չէր: Նրան ինչ-որ բան էր պակասում. շրջահայացություն, հեռատեսություն, մի ինչ-որ փրկարար հիմարություն: Չէր կարելի ասել, թե անուղղափառ է: Նա հավատում էր Անգսոցի սկզբունքներին, խորապես հարգում էր Մեծ եղբորը, ուրախանում էր հաղթանակներով, ատում էր հերետիկոսներին ոչ միայն անկեղծորեն, այլև անխոնջ եռանդով, ընդ որում՝ տեղյակ էր վերջին իրադարձություններից, որոնք չէին անցնում Կուսակցության շարքային անդամի մտքով: Սակայն նրանից անպարկեշտության հոտ էր փչում: Ասում էր այն, ինչ ավելի լավ կլիներ չասեր, չափազանց շատ գիրք էր կարդացել, հաճախ էր այցելում «Շագանակենի» սրճարան, որտեղ հավաքվում էին նկարիչներ ու երաժիշտներ: Չկար ոչ մի օրենք, նույնիսկ չգրված օրենք, «Շագանակենի» սրճարան հաճախելու դեմ, բայց այն վատ համբավ ուներ: Կուսակցության հին, իրենց հանդեպ վստահությունը

կորցրած ղեկավարները սովորություն ունեին հավաքվել այնտեղ, մինչ վերջնական զտումը: Ասում էին՝ տասնամյակներ առաջ այդտեղ տեսել էին հենց իրեն՝ Գոլդսթայնին: Սայմի ճակատագիրը դժվար չէր կանխատեսել: Բայց փաստ էր, որ եթե նույնիսկ երեք վայրկյանով Սայմը հասկանա իր՝ Ուինսթոնի գաղտնի մտքերի էությունը, անմիջապես կմատնի նրան Մտքի ոստիկանությանը: Ցանկացած մեկն էլ կմատներ, բայց Սայմը բոլորից շուտ: Եռանդը բավական չէր: Ուղղափառությունն անգիտակցություն է:

Սայմը բարձրացրեց գլուխը:

– Փարսոնսն է գալիս, – ասաց նա:

«Այդ անիծյալ հիմարը». ասես մտքում ավելացրեց նա: Եվ իսկապես, «Հաղթանակ» բնակելի տան Ուինսթոնի հարևանը քայլում էր սեղանների արանքով: Տակառանման, միջահասակ մարդ էր, խարտյաչ մագերով ու գորտի դեմքով: Թեև երեսունհինգ տարեկան էր, պարանոցն ու գոտկատեղը պատված էին ճարպի շերտերով, բայց շարժումները ժիր էին ու տղայական: Տեսքն այնպիսին էր, ասես փոքրիկ տղա լիներ, միայն թե՛ մեծացրած: Չնայած կանոնավոր կոմբինեզոնով էր, այնպիսի տպավորություն էր, թե հագին կապույտ կարճ տաբատ է, մոխրագույն վերնաշապիկ ու լրտեսի կարմիր վզկապ: Կարելի էր պատկերացնել նրա ծնկների փոսիկներն ու թմբիկ թևերին ծավալած թեզանիքները: Ամեն հարմար առիթով՝ հանրային էքսկուրսիաների կամ ֆիզիկական աշխատանք պահանջող միջոցառումների ժամանակ, Փարսոնսը կարճ տաբատ էր հագնում: Նա երկուսին էլ ուրախ-ուրախ բարևեց՝ ասելով ողջույն, ողջույն, ու նստեց սեղանի առաջ՝ քրտինքի ուժեղ հոտ տարածելով: Վարդագույն դեմքին քրտինքի կաթիլներ էին: Նրա քրտնարտադրությունն անհավանական էր: Հանրային կենտրոնում, ըստ թիակի պոչի խոնավության, կարելի էր գուշակել, թե նա երբ է սեղանի թենիս խաղացել: Սայմը հանել էր բառերի երկար սյունակով մի թղթի կտոր և ուսումնասիրում էր՝ թանաքի գրիչը մատների արանքում պահած:

1984

- Տես, է՛, ճաշի ժամին էլ է աշխատում,- ասաց Փարսոնսը՝ արմունկով հրելով Ուինսթոնին:- Շատ աշխատասեր է: Այդ ի՞նչ եք անում: Երևի իմ խելքի բանը չէ: Սմիթ, գիտե՞ք ինչու էի փնտրում ձեզ: Մոռացել եք անդամավճարը տալ ինձ:

- Ի՞նչ անդամավճար,- հարցրեց Ուինսթոնը՝ մեխանիկորեն գրպանում գումար փնտրելով: Աշխատավարձի մոտ մեկ քառորդը պետք է հատկացվեր կամավոր վճարներին, որոնք այնքան շատ էին, որ հաշիվը կորցնում էիր:

- Ատելության շաբաթի: Անդամավճար՝ ըստ բնակության վայրի: Ես մեր շենքի գանձապահն եմ: Ջանք չենք խնայում: Չենք ուզում սևերես լինել: Ուղիղ եմ ասում, եթե «Հաղթանակ» բնակելի տունը չզարդարվի ամենից շատ դրոշներով, քան փողոցի այլ շենքեր, ես մեղավոր չեմ: Երկու դուլար եք խոստացել:

Ուինսթոնը գտավ ու տվեց երկու ծալված ու կեղտոտ թղթադրամ, իսկ Փարսոնսը գրանցեց փոքր նոթատետրի մեջ՝ անգրագետի կոկիկ ձեռագրով:

- Ի դեպ,- ասաց նա,- լսել եմ՝ իմ փոքրիկ անիրավը երեկ պարսատիկից կրակել է ձեզ վրա: Դրա համար մի լավ դաս տվեցի: Ասացի, որ եթե կրկնվի, պարսատիկը կվերցնեն ձեռքից:

- Տրամադրությունը վատ էր. արգելել էին գնալ մահապատիժը տեսնելու,- ասաց Ուինսթոնը:

- Գիտե՞ք, պետք է ասել՝ միանգամից երևում է, որ ձիշտ ոգով է դաստիարակվել: Նրանք երկուսն էլ չարաձժի անիրավներ են, բայց այնպե՛ս են ոգևորված: Մտքներին միայն մի բան է՝ լրտեսներ և, իհարկե, պատերազմ: Գիտե՞ք՝ աղջնակս ինչ օյին է բերել անցած շաբաթ: Նրանք գնացել էին էքսկուրսիայի՝ Բերքհեմսթեյ: Իր հետ երկու աղջկա էլ տանելով՝ շեղվել է ճանապարհից և ամբողջ օրը հետևել մի անձանոթի: Երկու ժամ անտառով գնացել են նրա ետևից, իսկ հետո, երբ հասել են Ամերշեմ, հանձնել են պարեկախմբին:

- Ինչի՞ համար,- շփոթված հարցրեց Ուինսթոնը:

Փարսոնսը հաղթական շարունակեց.

- Աղջնակս գլխի էր ընկել, որ նա թշնամու գործակալ է, հնարավոր է՝ իջել է պարաշյուտով: Բայց ամենակարևորն ուրիշ բան է: Գիտե՞ք՝ ինչն էր կասկած առաջացրել նրա մեջ: Կոշիկներն են անսովոր թվացել: Ասում է՝ երբեք էդպիսի կոշիկներով մարդ չէի տեսել: Իսկ եթե օտարերկրացի՞ է: Յոթ տարեկան է, բայց ի՞նչ խելք ունի:

- Իսկ բռնվա՞ծն ինչ եղավ,- հարցրեց Ուինսթոնը:

- Չգիտեմ, չեմ կարող ասել: Բայց առանձնապես չէի զարմանա, եթե...- Փարսոնսը ձևացրեց, թե հրացանով նշան է բռնում, ու լեզվով չխկացրեց:

- Լավ է,- ցրված ասաց Սայմը՝ առանց գլուխը թղթից բարձրացնելու:

- Անշուշտ, մենք չպետք է կորցնենք զգոնությունը,- հնազանդ համաձայնեց Ուինսթոնը:

- Հասկանո՞ւմ եք, պատերազմ է,- ասաց Փարսոնսը:

Ի հաստատումն այս խոսքերի՝ նրանց գլխավերևում՝ հեռէկրանից, հնչեց շեփորը: Այս անգամ, սակայն, ոչ թե ռազմական հաղթանակի ազդարարում էր, այլ ընդամենը Առատության նախարարության հայտարարություն:

- Ընկերներ,- ձջաց եռանդուն ու երիտասարդ ձայնը,- Ուշադրություն, ընկերներ: Փառահեղ նորություն: Մենք հաղթանակ ենք տարել արտադրության ոլորտում: Բոլոր սպառողական ապրանքների արտադրության ամփոփագրերը ցույց են տալիս, որ կենսամակարդակն անցյալ տարվա համեմատ բարձրացել է ոչ պակաս, քան քսան տոկոսով: Այս առավոտ ամբողջ Օվկիանիայում կազմակերպվել են ինքնաբուխ ցույցեր: Բանվորները դուրս են եկել գործարաններից ու գրասենյակներից և դրոշներով անցել փողոցներով՝ իրենց երախտագիտությունն արտահայտելով Մեծ եղբորը նրա իմաստուն ղեկավարության ներքո սկսված մեր նոր, երջանիկ կյանքի համար: Ահա այն թվերը, որոնք արդեն պատրաստ են՝ սնունդ...

«Մեր նոր, երջանիկ կյանք» արտահայտությունը կրկնվեց մի քանի անգամ: Վերջին շրջանում այն Առատության նախարարության

սիրած արտահայտությունն էր: Փարսոնսը, որն իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էր շեփորականչի վրա, լսում էր բերանբաց ու ձանձրալի հանդիսավորությամբ: Նա չէր կարող հետևել թվերին, բայց հասկանում էր, որ դրանք պետք է գոհացնեն: Նա հանել էր մեծ ու գարշահոտ ծխամորժը, որը կիսով չափ լի էր ածխացած ծխախոտով: Ծխախոտի չափաբաժինը շաբաթական 100 գրամ էր, ուստի ծխամորժը մինչև վերջ լցնելը ճոխություն էր համարվում: Ուինսթոնը «Հաղթանակ» սիգարետ էր ծխում՝ ջանալով դրանք պահել հորիզոնական դիրքով: Նոր չափաբաժինը ստանալու էին հաջորդ օրը, իսկ նրա մոտ ընդամենը չորս սիգարետ էր մնացել: Մի պահ փակեց ականջները ընդհանուր աղմուկից ազատվելու և հեռէկրանից հնչող ձայնը լսելու համար: Պարզվեց՝ կազմակերպվել են ցույցեր, որտեղ մարդիկ շնորհակալություն են հայտնել Մեծ եղբորը՝ շոկոլադի չափաբաժինը շաբաթական քսան գրամի հասցնելու համար: Բայց չէ՞ որ երեկ հայտարարվեց, որ այն *կրժապվել է* քսան գրամի: Մի՞թե մարդիկ կհավատան: Չէ՞ որ ընդամենը քսանչորս ժամ է անցել: Այո, հավատում են: Փարսոնսը հեշտ հավատաց, ապուշ անասուն: Մյուս սեղանի առաջ նստած անաչք արարածը նույնպես հավատաց և հիմա լցված էր կրքոտ ու կատաղի ցանկությանը՝ գտնելու, մատնելու ու գոլորշացնելու որևէ մեկին, ով կասի, թե անցյալ շաբաթ չափաքանակը երեսուն գրամ է եղել: Սայմը նույնպես հավատաց՝ շատ ավելի բարդ տարբերակով. գործի դնելով կրկնամիտքը: Ուրեմն ի՞նչ, *միայն* Ուի՞նսթոնը հիշողություն ունի:

Առասպելական վիճակագրությունը շարունակում էր հորդել հեռէկրանից: Անցյալ տարվա համեմատ՝ ավելի շատ ուտելիք, ավելի շատ հագուստ, ավելի շատ տներ, ավելի շատ կահույք, ավելի շատ կաթսաներ, ավելի շատ վառելիք, ավելի շատ նավեր, ավելի շատ ուղղաթիռներ, ավելի շատ գրքեր, ավելի շատ երեխաներ. ամեն ինչ ավելի շատ՝ բացի հիվանդություններից, հանցագործություններից ու խելագարությունից: Տարեցտարի, բույս առ բույս ամեն ոք և ամեն ինչ արագորեն վեր էր սլանում: Ինչպես Սայմս

ավելի վաղ, Ուինսթոնը նույնպես վերցրել էր գդալը ու խաղում էր սեղանին թափված գունատ սոուսի հետ՝ երկարուկ լճակին ճիշտ ուղղություն տալով: Նա վրդովմունքով մտածում էր իր կենցաղի, կյանքի պայմանների մասին: Արդյո՞ք միշտ է այդպես եղել: Արդյո՞ք մնունդը միշտ այդպիսի համ է ունեցել: Ջննեց ճաշարանը: Ցածր առաստաղ, լեփ-լեցուն սրահ, պատերը սևացել էին անհամար մարդկանց դիպչելուց. հնամաջ մետաղյա սեղաններն ու աթոռներն այնքան մոտ էին, որ նստելիս մարդիկ արմունկներով դիպչում էին իրար. ծռմռված գդալներ, փոս ընկած սկուտեղներ, կոպիտ սպիտակ գավաթներ. բոլորի երեսները՝ յուղոտ, բոլոր ձեղքերը՝ կեղտակուր: Ամենուր թթվահոտ էր՝ բաղկացած անպետք ջինի, անպետք սուրճի, մետաղահամ սոուսի ու կեղտոտ շորերի բույրերից: Առաջ նո՞յնպես ստամոքսն ու մաշկն այնքան դժգոհ են եղել, որքան հիմա: Անցյալում նո՞յնպես զգացողություն կար, որ քեզ մերժեցին մի բան, ինչի իրավունքն ունեիր: Իսկապես, ամբողջ կյանքում ուրիշ ոչինչ չէր տեսել: Որքան իրեն հիշում էր, ուտելիքը երբեք չէր բավարարել, անծակ գուլպաներ կամ ներքնազգեստ չկար, կահույքը միշտ խփված էր ու երերուն, սենյակները՝ չտաքացվող, մետրոյի գնացքները՝ լեփ-լեցուն, տները՝ անկայուն, հացը՝ սև, թեյը՝ հազվադեպ, սուրճը՝ գարշելի, սիգարետը՝ հաշված: Եվ միայն սինթետիկ ջինս էր, որ էժան էր և առատ: Անշուշտ, տարիքի հետ ամեն ինչ ավելի վատ է թվում, բայց եթե մարդու սիրտը ծնվում է անհարմարավետությունից, կեղտից ու սակավությունից, անվերջ ծնեռներից, կոշտ գուլպաներից, մշտապես խափանված վերելակներից, սառը ջրից, ավազոտ օճառից, կոտրվող սիգարետից, տարօրինակ ու զզվելի համով մսնդից, մի՞թե այս ամենը չէր նշանակում, որ ինչ-որ բան *սխալ* է: Եթե հասկանում ես, որ այդ ամենն անտանելի է, մի՞թե ժառանգական հիշողությունը չի հուշում, որ կյանքը մի ժամանակ այլ է եղել:

Նա նորից գննեց ճաշարանը: Գրեթե բոլոր մարդիկ տգեղ էին և տգեղ կլինեին, եթե նույնիսկ հագնեին ոչ թե կապույտ

արտահագուստ, այլ որևէ այլ բան: Սենյակի հեռավոր անկյունում սեղանի առաջ միայնակ նստած էր փոքրամարմին, տարօրինակ, բզեզանման մի մարդ, որը սուրճ էր խմում, և փոքրիկ աչքերը կասկածամիտ նետահարում էին այս ու այն կողմ: «Երբ շուրջդ չես նայում,- մտածեց Ուինսթոնը,- ինչ հեշտ է հավատալ, որ կա և նույնիսկ գերակայում է Կուսակցության սահմանած կատարյալ տեսակը՝ բարձրահասակ, մկանուտ երիտասարդներ և փարթամ կրծքով աղջիկներ՝ շիկահեր, կենսախինդ, արևախանձ, անհոգ: Իրականում, ըստ Ուինսթոնի, Թոփչբուղի մեկի մարդկանց մեծամասնությունը փոքրամարմին էր, թխադեմ և տգեղ: Տարօրինակ է՝ ո՞նց է բզեզանման տեսակը բազմացել նախարարություններում. փոքրամարմին, կարճ ոտքերով, վաղ գիրացած, փութկոտ շարժումներով, գեր, անթափանց դեմքերով ու մանր աչքերով տղամարդիկ: Մարդու հենց այս տեսակն էր ծաղկում Կուսակցության գերիշխանության ներքո:

Առատության նախարարության հայտարարությունն ավարտվեց նոր շեփորականչով, ու սկսվեց թեթև երաժշտություն: Փարսոնսը թվերի ռմբակոծությունից խանդավառվել էր ու բերանից հանեց ծխամորձը:

- Այս տարի Առատության նախարարությունն իսկապես լավ աշխատեց,- ասաց նա գիտակի տեսքով:- Ի դեպ, Սմիթ, պատահմամբ ավելորդ ածելի չունե՞ք:

- Ոչ մի հատ,- ասաց Ուինսթոնը:- Արդեն վեց շաբաթ է՝ նույն ածելին եմ օգտագործում:

- Պարզ է... Հենց այնպես հարցրի:

- Ներող եղեք,- ասաց Ուինսթոնը:

Հարևան սեղանից հնչող կռկռոցը, որ նախարարության հայտարարության ընթացքում առժամանակ լռել էր, վերսկսվեց նախկին ուժով: Չգիտես ինչու, Ուինսթոնը հանկարծ մտածեց տիկին Փարսոնսի մասին. հիշեց նրա յուղոտ մազերն ու դեմքի ծալքերում ծվարած փոշին: Գալիք երկու տարում, եթե ոչ ավելի շուտ, երեխաները նրան

կմատնեն Մտքի ոստիկանությանը: Տիկին Փարսոնսին կգոլորշացնեն: Սայմին կգոլորշացնեն: Ուինսթոնին կգոլորշացնեն: Օ'Բրայենին կգոլորշացնեն: Փարսոնսին, հակառակը, երբեք չեն գոլորշացնի: Կռկռան ձայնով անաչք արարածին երբեք չեն գոլորշացնի: Փոքրիկ բզեզանման մարդկանց, որոնք շտապ-շտապ անցնում են նախարարությունների լաբիրինթանման միջանցքներում, նույնպես երբեք չեն գոլորշացնի: Գրականության բաժնի այն թխահեր աղջկան նույնպես երբեք չեն գոլորշացնի: Ուինսթոնին թվում էր՝ ինքը բնազդաբար գիտի՝ ով է ողջ մնալու, ով է անհետանալու. սակայն դժվար էր ասել, թե ինչ էր պետք ողջ մնալու համար:

Այդ պահին կուպիտ միջամտությունը նրան կտրեց մտքերից: Հարևան սեղանի աղջիկը փոքր-ինչ շրջվել ու նրան էր նայում: Հենց այն թխահեր աղջիկն էր: Նայում էր շեղ, անհասկանալի, սևեռուն հայացքով: Ու հենց որ նրանց հայացքները հանդիպեցին, աղջիկը շրջվեց:

Ուինսթոնի ողնաշարով սառը քրտինք ծորաց: Ահավոր սարսափ տիրեց նրա հոգում, որը գրեթե անմիջապես էլ անցավ, բայց թողեց թույլ կաշկանդվածության զգացողություն: Աղջիկն ինչո՞ւ էր ուսումնասիրում իրեն: Ինչո՞ւ էր շարունակում հետևել: Ցավոք, Ուինսթոնը չէր կարող հիշել՝ արդեն սեղանի մո՞տ էր, երբ ինքը եկավ, թե՞ հետո էր մոտեցել: Ամեն դեպքում երեկ՝ Ատելության երկրոպեի ընթացքում, աղջիկը նստած էր անմիջապես իր ետևում, թեև դրա կարիքը բնավ չկար: Շատ հավանական է, որ ուզում էր լսել Ուինսթոնին ու ստուգել՝ արդյո՞ք բավականաչափ բարձր է գոռում:

Ուինսթոնը նորից մտածեց, որ աղջիկը Մտքի ոստիկանությունից չէ, ուրեմն հաստատ սիրողական մակարդակի լրտես է, որն ամենավտանգավորն էր: Ուինսթոնը չգիտեր՝ աղջիկը վաղո՞ւց է հետևում իրեն. հավանաբար մոտ հինգ րոպե. չէ՞ որ ինքն այդ ընթացքում չի վերահսկել իր շարժումները: Չափազանց վտանգավոր է, սարսափելի է թույլ տալ, որ մտքերդ թափառեն, եթե հանրային վայրում ես կամ հեռեկրանի տեսադաշտում: Նույնիսկ ամենափոքր

1984

մանրուքը կարող է մատնել: Նյարդային շարժում, չգիտակցված անհանգիստ հայացք, քթի տակ մռթմռթալու սովորություն. ցանկացած երևույթ, որ կարող է դիտարկվել իբրև արտասովորություն կամ ինչ-որ բան թաքցնելու փորձ: Ամեն դեպքում, պատժի արժանի հանցագործություն էր դեմքի ոչ պատշաճ արտահայտությունը (օրինակ՝ երբ հայտարարում էին հաղթանակի մասին, և դեմքը թերահավատություն էր արտահայտում): Նորալեզվում նույնիսկ այդպիսի բառ կար՝ «դիմահանցագործություն»:

Աղջիկը նորից մեջքով շրջվել էր դեպի Ուինսթոնը: Շատ հավանական է, որ իրականում չէր հետևում Ուինսթոնին, գուցե զուգահիստություն էր, որ երկու օր անընդմեջ հայտնվում էր նրա կողքին: Ուինսթոնի սիգարետը հանգել էր, զգուշորեն դրեց սեղանի եզրին: Եթե ծխախոտը չթափվի միջից, աշխատանքից հետո կծխի: Հնարավոր է, որ հարևան սեղանի աղջիկը Մտքի ոստիկանության լրտես է, և շատ հավանական է, որ առաջիկա երեք օրվա ընթացքում ինքը հայտնվի Սիրո նախարարության խցերում, բայց սիգարետը չի կարելի փչացնել: Սայմը ծալեց թղթի կտորն ու դրեց գրպանը: Փարսոնսը նորից խոսեց:

– Ձեզ պատմե՛լ են,– ասաց՝ ծխամորժը բերանին ու ծիծաղելով,– թե իմ երկու չարածճիներն ինչպես են վառել շուկայում առևտուր անող ծեր կնոջ շրջագգեստը, որովհետև տեսել էին, թե ոնց է նրբերշիկը փաթաթում Մ. Ե.-ի ցուցապաստառի մեջ: Հետևից թաքուն մոտեցել ու վառել էին մի տուփ լուցկով: Կարծում են՝ կարգին վառվել է: Ա՛յ քեզ անպիտաններ: Բայց ի՞նչ ոգևորված են: Հիմա հետախույզներին շատ ավելի լավ են մարզում, քան մեր ժամանակ: Իսկ գիտե՛ք վերջերս նրանց ինչով են զինել՝ լսափողերով՝ բանալու անցքից գաղտնալսելու համար: Երեկ աղջիկս բերեց տուն, փորձեց մեր հյուրասենյակի դռան վրա, ասում է՝ կրկնակի լավ է լսվում, քան ականջն անցքին դնելով: Իհարկե, ասեմ ձեզ, ընդամենը խաղալիք է: Բայց մտքին ծիշտ ուղղություն է տալիս, այնպես չէ՞:

Այդ պահին հեռէկրանը ծակող սուլոց արձակեց: Աշխատանքին վերադառնալու ազդանշանն էր: Երեքն էլ վեր թռան, որպեսզի միանան սկսված հրմշտոցին, և մնացած ծխախոտը թափվեց Ուինսթոնի սիգարետից:

VI

Ուինսթոնը գրում էր օրագրում.

Երեք տարի առաջ էր: Մուֆ էր, երեկո, երկաթուղային մեծ կայարանին կից նեղ փողոցներից մեկում: Նա կանգնած էր մուրքի մոտ, փողոցային լապտերի տակ, որ համարյա լույս չէր տալիս: Երիտասարդ դեմքը պատված էր շպարի թանձր շերտով: Իրականում ինձ գրավեց շպարը, դեմքի ժերմակությունը, որ ասես դիմակ լիներ, ու վառ կարմիր շուրթերը: Կուսակցության կանայք երբեք չեն շպարվում: Փողոցում ուրիշ ոչ ոք չկար, հեռէկրաններ՝ նույնպես: Նա ասաց՝ երկու դոլար: Ես...

Մի պահ դժվարացավ շարունակել: Փակեց աչքերն ու մատներով սեղմեց քունքերը՝ փորձելով հեռացնել անընդհատ կրկնվող տեսիլքը: Նրան համակել էր հայիոյելու ցանկությունը՝ բարձրաձայն ու երկար: Կամ էլ կուզեր գլուխը խփել պատին, ոտքով շուռ տալ սեղանն ու թանաքամանը դուրս նետել պատուհանից. անել ինչ-որ կատաղի, աղմկոտ կամ ցավոտ մի բան, որ խլացներ տանջող հիշողությունը:

Նա հասկացավ, որ մարդու ամենավատ թշնամին նրա նյարդային համակարգն է: Ցանկացած պահի ներքին լարվածությունը կարող է արտացոլվել արտաքինում: Նա հիշեց մի անցորդի, որին շաբաթներ առաջ հանդիպել էր փողոցում. ոչնչով աչքի չէր ընկնում, Կուսակցության անդամ, երեսունհինգ-քառասուն տարեկան,

բարձրահասակ ու նիհար, ձեռքին՝ պայուսակ: Նրանք իրարից մի քանի մետրի վրա էին, երբ տղամարդու դեմքի ծախ կեսը հանկարծ ջղաձգորեն ծռնովեց: Երբ նրանք հավասարվեցին, կծկումը կրկնվեց. դա ընդամենը ջղային ցնցում էր, թրթռոց, ֆոտոխցիկի շխկոցի պես արագ, բայց, ըստ երևույթին, սովորական: Այդ պահին Ուինսթոնը մտածեց, որ խեղճի վերջը եկել է: Ամենասարսափելին այն էր, որ գործողությունը կատարվում էր անգիտակցաբար: Բայց ամենամահացու վտանգը քնի մեջ խոսելն էր: Ուինսթոնի կարծիքով՝ այդ դեպքում ընդհանրապես անհնար է ինքնավերահսկումը:

Նա շունչ առավ ու շարունակեց գրել.

*Ես նրա հետ մրա շքամուրք, իսկ այնպեղից ետնաբակով
քայլեցի դեպի նկուղային խոհանոց: Պարի տակ մահճակալ
կար, սեղանին՝ լուսամփոփ, որի լույսը շապր թոյլ էր: Կինը...*

Նա սեղմել էր ատամները: Ուզում էր թքել: Կնոջ հետ նկուղային խոհանոցում, միաժամանակ մտածում էր Քեթրինի՝ իր կնոջ մասին: Ուինսթոնն ամուսնացած էր, ավելի ճիշտ՝ մի ժամանակ ամուսնացած էր եղել. գուցե հիմա էլ դեռ ամուսնացած էր, քանի որ գիտեր՝ կինը չի մահացել: Նա կարծես թե նորից շնչում էր խոհանոցի գաղջ ու հեղձուկ օդը, փայտոջիլների ու կեղտոտ հագուստի խառը հոտը և զագրելի էժանագին օծանելիքի բույրը, որը, այնուամենայնիվ, հրապուրիչ էր, որովհետև Կուսակցության ոչ մի կին երբեք օծանելիք չէր օգտագործում ու չէր էլ կարող երագել դրա մասին: Օծանելիք օգտագործում էին միայն պրոլները: Ուինսթոնի պատկերացմամբ՝ օծանելիքի հոտն անքակտելիորեն կապված էր անառակության հետ:

Այդ կնոջ հետ հանդիպումը նրա առաջին մեղանչումն էր երկու տարվա ընթացքում: Մարմնավաճառների հետ շփվելն, անշուշտ, արգելված էր, բայց դա այն օրենքներից էր, որոնք երբեմն կարելի էր խախտել: Վտանգավոր էր, բայց կենաց-մահու հարց չէր: Եթե

բռնեին մարմնավաճառի հետ, հնարավոր է՝ հինգ տարով ընկնեիր տաժանապարտների ճամբար, եթե ծանրացուցիչ հանգամանքներ չլինեին: Իսկ դա հեշտ է, եթե, իհարկե, խուսափես դեպքի վայրում բռնվելուց: Աղքատ թաղամասերը լեփ-լեցուն էին կանանցով, որոնք պատրաստ էին վաճառել իրենց: Ոմանց նույնիսկ կարելի էր գնել մի շիշ ջինսով. պրոլներին ջին չէր համնում: Անկասկած, Կուսակցությունը խրախուսում էր մարմնավաճառությունը՝ որպես մեթոդ՝ ազատվելու այն բնագոյներից, որոնք անհնար է լրիվ ծնշել: Ինքնին անառակությունն այնքան էլ էական չէր, միայն թե թաքուն և անուրախ լիներ, ընդ որում՝ ցածր ու արհամարհված դասի կանանց հետ: Աններելի հանցագործություն էր համարվում Կուսակցության անդամների կապը: Ու չնայած մեծ զտումների ժամանակ մարդիկ միշտ խոստովանում էին այս հանցագործությունը, դժվար էր պատկերացնել, որ նման բան իրականում կարող է տեղի ունենալ:

Կուսակցությունը ձգտում էր ոչ միայն խանգարել, որ տղամարդիկ ու կանայք միություն կազմեն, որը հնարավոր չի լինի վերահսկել: Նրա իրական, չիրապարակված նպատակն էր վերացնել սեռական ակտի ամբողջ հաճույքը: Թշնամին ոչ թե սերն էր, այլ էրոտիկան, ինչպես ամուսնական կյանքում, այնպես էլ նրանից դուրս: Կուսակցության անդամների ամուսնությունները վավերացնում էր այդ նպատակով ստեղծված կոմիտեն, և, չնայած այդ սկզբունքը երբեք հստակ չէր նշվում, եթե երևում էր, որ ապագա ամուսինները ֆիզիկապես գրավիչ են միմյանց համար, թույլտվությունը միշտ մերժվում էր: Ամուսնության միակ ընդունված նպատակն էր ծնել երեխաներ Կուսակցությանը ծառայելու համար: Սեռական հարաբերությունը պետք է դիտարկվեր որպես մի քիչ զզվելի, ոչ կարևոր գործողություն, ինչպիսին հոգնան է: Դա երբեք ուղղակի չէր հայտարարվում, բայց մանկուց ներարկվում էր Կուսակցության յուրաքանչյուր անդամի մեջ: Նույնիսկ գոյություն ունեին կազմակերպություններ, ինչպիսին Հակասեռային երիտասարդական միությունն է, որը երկու սեռերին ամուրիություն էր քարոզում: Երեխաները պետք է

1984

ստեղծվեին արհեստական բեղմնավորման ճանապարհով (արհ-բեղմ, այդպես էր կոչվում նորալեզվով) և դաստիարակվեին հանրային հաստատություններում: Ուինսթոնը տեղյակ էր, որ այդ պահանջն այնքան էլ լուրջ չէր առաջադրվում, բայց ընդհանուր առմամբ տեղավորվում էր Կուսակցության ընդհանուր գաղափարախոսության շրջանակներում: Կուսակցությունը փորձում էր սպանել սեռական բնագոյը, կամ եթե սպանել չհաջողվեր, ապա աղճատել ու ապականել: Ուինսթոնը չէր հասկանում՝ ինչի համար էր այդ ամենը, բայց թվում էր՝ այդպես էլ պետք է լիներ: Ինչ վերաբերում է կանանց, այդ հարցում Կուսակցությունը հաջողություններ էր արձանագրել:

Նա նորից մտածեց Քեթրինի մասին: Ինը, տասը... գրեթե տասնմեկ տարի էր անցել իրենց բաժանումից: Ու որքա՞ն հազվադեպ էր մտածում նրա մասին: Պատահում էր՝ օրեր շարունակ չէր էլ հիշում, որ երբևէ ամուսնացած է եղել: Նրանք միայն տասնհինգ ամիս էին միասին ապրել: Կուսակցությունն արգելում էր ամուսնալուծությունները, բայց խրախուսում էր բաժանություններն այն դեպքում, եթե երեխաներ չկային:

Քեթրինը բարձրահասակ, խարտյաշ, սլացիկ աղջիկ էր, հոյակապ շարժումներով: Հստակ, արծվենի կիսադեմը կարելի էր ազնվական համարել, քանի դեռ չես հասկացել, որ այդ ամենի ետևում բացարձակապես ոչինչ չկա: Ամուսնական կյանքի հենց սկզբում Ուինսթոնը որոշել էր (գուցե պատճառն այն է, որ նրան ավելի մոտիկից էր ճանաչում, քան ուրիշներին), որ երբևէ չի հանդիպել ավելի հիմար, գռեհիկ ու դատարկ արարածի: Նրա գլխում բոլոր մտքերը բաղկացած էին կարգախոսներից, և չկար որևէ ապուշություն, որ ի վիճակի չլիներ մարսել, եթե Կուսակցությունը հրամայեր: Մտքում Ուինսթոնը նրան «քայլող գրամոֆոն» էր կոչում: Եվ գուցե կարողանար շարունակել համատեղ կյանքը, եթե չլիներ մի հանգամանք՝ սեքսը:

Հենց որ Ուինսթոնը դիպչում էր, նա սկսում էր ցնցվել ու փայտանալ: Նրան գրկելը նույնն էր, թե փայտե մանեկեն գրկեր:

Իսկ ամենատարօրինակն այն էր, որ երբ իրեն էր սեղմում Ուինսթոն-Չիլս, այնպիսի տպավորություն էր, ասես միաժամանակ ամբողջ ուժով վանում էր: Պատճառը նրա պիրկ մկաններն էին: Նա պառկում էր փակ աչքերով, ո՛չ դիմադրում էր, ո՛չ մասնակցում. *հնազանդվում էր*: Այդ ամենը սկզբում շփոթեցնում էր, հետո սարսափելի դարձավ: Բայց նույնիսկ այդ դեպքում Ուինսթոնը կդիմանար համատեղ կյանքին, եթե պայմանավորվեին դադարեցնել սեռական հարաբերությունները: Ջարմանալի է, բայց հենց Քեթրինը չհամաձայնեց: Ասում էր, որ եթե հաջողվի, պետք է երեխա ունենան: Ուստի ներկայացումը շարունակվում էր, խիստ կանոնավոր, շաբաթական մեկ անգամ, եթե խանգարող հանգամանք չկար: Նույնիսկ առավոտյան Ուինսթոնին հիշեցնում էր, թե ինչ է սպասվում երեկոյան, և որ այդ մասին չի կարելի մոռանալ: Սեռական հարաբերությունը կոչում էր երկու բառով: Առաջինը՝ «երեխայի ստեղծում», իսկ երկրորդը՝ «կուսակցական պարտք» (այդ՛, նա հենց այս արտահայտությունն էր օգտագործում): Շուտով Ուինսթոնը սկսեց վախենալ նշանակված օրվա մոտենալուց: Բայց, բարեբախտաբար, երեխա չծնվեց, ի վերջո, Քեթրինը համաձայնեց դադարեցնել փորձերը, և շուտով նրանք բաժանվեցին:

Ուինսթոնը անձայն հառաչեց: Նորից վերցրեց գրիչն ու գրեց.

Կինն ընկավ մահճակալին և միանգամից, առանց նախաբանի, ամենագռեհիկ ու վուլգար ձևով բարձրացրեց փեշը: Ես...

Նա տեսավ իրեն՝ լուսամփոփի աղոտ լույսի մեջ, ու նորից քիթը լցվեց փայտոցիլների ու էթանագին օձանելիքի հոտով, սիրտը նվաղեց պարտության ու վիրավորանքի զգացումից, որ նույնիսկ այդ պահին միախառնվեց Քեթրինի՝ Կուսակցության հիպնոսից ընդմիջտ սառած սպիտակ մարմնի հիշողության հետ: Ինչո՞ւ էր միջտ այսպես: Ինչո՞ւ չի կարող իր կինն ունենալ, ոչ թե ժամանակ առ ժամանակ բավարարվել կեղտոտ ու հապճեպ հանդիպումներով:

Բայց իսկական սիրավեպի մասին խոսք անգամ չէր կարող լինել: Կուսակցության բոլոր կանայք նման էին իրար: Կուսությունը նույնքան խոր արմատներ էր գցել նրանց մեջ, որքան հավատարմությունը Կուսակցության հանդեպ: Մանկուց ծրագրված մշակումների, դպրոցական խաղերի ու սառը ջրով լոգանքների, Լրտեսների միությունում ու Երիտասարդական լիգայում անընդհատ կրկնվող աղբի, դասախոսությունների, շքերթների, երգերի, լրզունգների ու ռազմական երաժշտության միջոցով նրանց մեջ սպանում էին բնական զգացմունքները: Պետք է որ լինեն բացառություններ՝ հուշում էր նրան բանականությունը, բայց սիրտը հրաժարվում էր հավատալ: Բոլորն անհասանելի էին. Կուսակցությանը հենց դա էր պետք: Իսկ Ուինսթոնը, սիրված լինելուց առավել, ցանկանում էր քանդել առաքինության այդ պատը, նույնիսկ եթե դա լիներ կյանքում մեկ անգամ: Հաջող սեռական ակտն արդեն իսկ ապստամբություն է: Ցանկությունը մտահանցագործություն է: Նույնիսկ եթե նրան ի վերջո հաջողվեր արթնացնել Քեթրինին, դա գայթակղության նման մի բան կլիներ, չնայած նա Ուինսթոնի կինն էր:

Բայց պետք էր մինչև վերջ գրի առնել պատմությունը: Նա գրեց.

ես ուժեղացրի լույսը: Երբ տեսա նրան լույսի տակ...

Խավարից հետո պարաֆինե մոմի թույլ լույսը շատ պայծառ թվաց: Առաջին անգամ ինչպես հարկն էր տեսավ կնոջը: Նա մի քայլ արեց դեպի կինը և կանգ առավ, տարփանքով ու սարսափով լի: Քաջ գիտակցում էր, թե ինչ վտանգի է դիմել այստեղ գալով: Շատ հավանական է, որ պարեկախումբը կբռնի իրեն հետդարձի ճանապարհին. գուցե հենց հիմա, այս պահին, սպասում են դռան ետևում: Նույնիսկ եթե հեռանա՝ առանց անելու այն, ինչի համար եկել էր...

Դա պետք էր գրի առնել, պետք էր խոստովանել: Լամպի լույսի տակ նա հանկարծ տեսել էր, որ կինը ծեր է: Շպարն այնպիսի թանձր

շերտով էր քսված դեմքին, որ թվում էր՝ ուր որ է կճաքի ստվարաթղթե դիմակի պես: Նրա մազերի մեջ սպիտակ փնջեր կային, իսկ ամենասարսափելի մանրամասնն այն էր, որ բերանը բաց էր, իսկ ներսում՝ ոչինչ, քարանձավի պես սև խոռոչ: Ոչ մի ատամ:

Ուինսթոնն արագ խզբզեց.

Երբ նրան տեսա լուսի տակ, պարզվեց, որ շարժեր է, առնվազն հիսուն տարեկան: Բայց կանգ չառա ու գործը հասցրեցի ավարտին:

Նա նորից մատները սեղմեց կոպերին: Ահա և վերջ. ամեն ինչ գրված էր, բայց ոչինչ չէր փոխվել: Բուժումը չէր օգնել: Ու բարձր-բարձր հայիոյելու ցանկությունը բնավ չէր նվազել:

VII

Եթե հույս կա (գրում էր Ուինսթոնը), ապա միակ հույսը պրոլներն են:

Եթե հույս կա, ապա այն պետք չէ փնտրել ուրիշ տեղ. միայն պրոլները՝ պետության հետնախորշերում վխտացող ու արհամարհված այդ զանգվածները, որոնք կազմում են Օվկիանիայի բնակչության 85 տոկոսը, կարող են կործանել Կուսակցությունը: Կուսակցությունը չէր կարող ոչնչացվել ներսից: Նրա թշնամիները, եթե, իհարկե, թշնամիներ կային, չէին կարող միավորվել կամ նույնիսկ ծանաչել միմյանց: Նույնիսկ եթե լիներ լեգենդար եղբայրությունը, ինչը չի բացառվում, անհնար է, որ նրա անդամները երկու կամ երեք հոգուց ավելի խմբեր կազմեն: Ապստամբությունը աչքերի արտահայտությունն էր, ծայնի ելևէջ կամ ամենաշատը՝ պատահական, շշուկով ասված խոսք: Բայց եթե կարողանային ինչ-որ կերպ գիտակցել

սեփական ուժը, դավադրությունների կարիք չէր լինի: Ընդամենը պետք էր, որ ոտքի կանգնեին ու թափ տային իրենց, ինչպես ձին է իր վրայից թափ տալիս ճանճերին: Եթե ցանկանային, կարող էին հենց վաղն առավոտյան հոդս ցնդեցնել Կուսակցությունը: Վաղ թե ուշ այդ գաղափարը ծնվելու էր նրանց մտքում: Բայցևայնպես...

Նա հիշեց. մի օր զբոսնում էր մարդաշատ փողոցում, երբ հանկարծ կողքից խլացնող, հարյուրավոր կանանց աղմուկից կազմված սարսափելի ճչոց լսեց: Զայրույթի և հուսահատության հզոր ողբ էր, թանձր ու բարձրաձայն «Ա՛ն՛ա՛ն՛ա՛ն՛ա՛ն՛ա՛ն՛հ», որը շարունակում էր բզզալ զանգի արձագանքի պես: Սիրտը սկսեց արագ բաբախել: «Սկսվեց, - մտածեց նա, - խռովություն է: Պրոլները վերջապես հավաքեցին ուժերը»: Երբ մոտեցավ, տեսավ երկու-երեք հարյուր կնոջից բաղկացած մի բազմություն. նրանք հավաքվել էին փողոցային շուկայի կրպակների շուրջը՝ ողբերգական դեմքերով, ինչպես սուզվող նավի ուղևորներ: Բայց այդ պահին համընդհանուր հուսահատության շուրջ հավաքված ամբոխը մասնատվեց՝ վերածվելով բազմաթիվ փոքրիկ վեճերի: Պարզվեց՝ կրպակներից մեկում թիթեղյա կաթսաներ էին վաճառվում: Դրանք շատ փխրուն էին ու անորակ, բայց հիմա դժվար էր կաթսա հայթայթել: Եվ ահա, ապրանքն անսպասելիորեն հայտնվել էր: Նրանք, ում բախտը բերել էր, հրմշտոցն ու ցնցումները հաղթահարելով՝ փորձում էին փախչել իրենց կաթսաներով, մինչդեռ տասնյակ ուրիշ կանայք գռռգռռում էին կրպակների շուրջը՝ տիրոջը մեղադրելով, թե ոմանց արտոնություններ են տվել ու կաթսաները թաքցրել կրպակի հետևը: Նորից ուժեղ ճչոց լսվեց: Երկու փքված կանայք, որոնցից մեկը՝ արձակած մագերով, բռնել էին նույն կաթսան ու տարբեր կողմեր էին ձգում: Երկուսն էլ քաշքշեցին այնքան, մինչև բռնակը պոկվեց: Ուինսթոնը զզվանքով հետևում էր նրանց: Սակայն ի՞նչ սարսափելի ուժ կար ընդամենը մի քանի հարյուր կոկորդից թռչող այդ ձիչի մեջ: Բայց ինչո՞ւ նրանք երբեք չեն ճշում որևէ արժեքավոր, կարևոր բանի համար:

Նա գրեց.

Մինչև չգիրակցեն՝ երբեք չեն ապստամբի, մինչև չապստամբեն՝ չեն կարող գիրակից դառնալ:

Կարծես արտագրություն լիներ Կուսակցության դասագրքերից մեկից: Կուսակցությունն, անշուշտ, պնդում էր, որ պրոլետերին ազատել է ստրկությունից: Մինչ հեղափոխությունը նրանք ահավոր ծնշումների էին ենթարկվում կապիտալիստների կողմից, մատնվում սովի ու ենթարկվում ծեծի. կանանց ստիպում էին աշխատել ածխահանքերում (իրականում կանայք հիմա էլ աշխատում էին ածխահանքերում), երեխաներին վեց տարեկանից վաճառում էին գործարաններին: Բայց, միաժամանակ, կրկնամտքի սկզբունքների համաձայն, Կուսակցությունը սովորեցնում էր, որ պրոլետերը ստորադաս մարդիկ են և, ինչպես կենդանիներին, նրանց էլ պետք է հպատակեցնել կիրառելով մի քանի պարզ օրենք: Իրականում պրոլետերի մասին քիչ բան էր հայտնի: Շատ իմանալու անհրաժեշտություն չկար: Քանի դեռ շարունակում են աշխատել ու բազմանալ, ինչով ուզում են թող զբաղվեն: Ինքնիշխան, ինչպես Արգենտինայի դաշտերում արածող եղջերավոր անասունները, նրանք որդեգրել էին մի կենսակերպ, որը բնական ու ժառանգական էր նրանց համար: Ծնվում ու մեծանում էին փողոցում, տասներկու տարեկանից սկսում էին աշխատել, ապրում էին ծաղկման ու սեռահասունության շրջանը, քսան տարեկանում ամուսնանում էին. երեսունը համարվում էր միջին տարիք, իսկ վաթսուն տարեկանում սովորաբար մահանում էին: Ծանր ֆիզիկական աշխատանք, տան ու երեխաների խնամք, դատարկ վեճեր հարևանների հետ, ֆիլմեր, ֆուտբոլ, գարեջուր և ամենակարևորը՝ թղթախաղ. ահա և ամբողջը, որ տեղավորում էր նրանց մտահորիզոնը: Դժվար չէր հսկողության տակ պահել նրանց: Մտքի ոստիկանության որոշ գործակալներ միշտ նրանց շարքերում էին, տարածում էին սուտ լուրեր, գտնում

1984

ու հեռացնում նրանց, ովքեր կարող էին վտանգավոր դառնալ, բայց նրանց Կուսակցության գաղափարախոսությանը մոտեցնելու փորձ չէր արվում: Ցանկալի չէր, որ հետաքրքրվեին քաղաքակա-նությանը: Միակ բանը, որ պահանջվում էր նրանցից, պարզունակ հայրենասիրությունն էր, որը կօգտագործվեր, երբ պետք լիներ ստիպել, որ հարմարվեին երկար աշխատանքային ժամերին կամ փոքր մթերաբաժնին: Եվ նույնիսկ երբ դժգոհում էին, ինչը երբեմն պատահում էր, դժգոհությունը նրանց ոչ մի տեղ չէր տանում. մի-ասնական գաղափարների բացակայության պատճառով այն ուղղ-ված էր կոնկրետ չնչին խնդիրների: Ավելի մեծ չարիքները մշտա-պես դուրս էին մնում նրանց ուշադրությունից: Պրոլների մեծամաս-նության տներում անգամ հեռէկրաններ չկային: Նույնիսկ քաղա-քացիական ոստիկանությունը հազվադեպ էր միջամտում նրանց կյանքին: Լոնդոնում հանցավորությունը հսկայական չափերի էր հասել. դա մի աշխարհ էր աշխարհի մեջ, ուր վխտում էին գողեր, ավազակներ, մարմնավաճառներ, թմրավաճառներ ու շորթողներ. բայց քանի որ այդ ամենը կատարվում էր հենց պրոլների շարքե-րում, դրա վրա ուշադրություն չէին դարձնում: Բարոյականության հարցերում նրանց թույլ էին տալիս առաջնորդվել նախնիների ավանդույթներով: Կուսակցության սեռական մաքրակենցաղությու-նը չէր տարածվում նրանց վրա: Անբարոյականությունն անպատիժ էր, ամուսնալուծությունը՝ թույլատրված: Ուստի աչք կփակեին նույ-նիսկ կրոնապաշտության վրա, եթե պրոլները ցանկություն կամ հակում դրսևորեին: Նրանց չէին կասկածում: Ինչպես ասում էր Կու-սակցության կարգախոսը. «Պրոլներն ու կենդանիները ազատ են»:

Ուինսթոնը կռացավ ու զգույշ քորեց երակային վերքը: Քորը վերսկսվեց: Նորից ականա վերադարձավ այն մտքին, որ անհնար էր իմանալ՝ ինչպիսին է իրականում եղել կյանքը հեղափոխությու-նից առաջ: Դարակից հանեց պատմության դպրոցական դասա-գիրքը, որ վերցրել էր տիկին Փարսոնսից, և սկսեց օրագրում ար-տագրել մի հատված:

Հին ժամանակներում, մինչ փառահեղ հեղափոխությունը, Լոնդոնն այն գեղեցիկ քաղաքը չէր, որ փեսնում ենք հիմա: Մռայլ, կեղտոտ, խղճուկ մի վայր էր, որտեղ գրեթե բոլորը քաղցած էին, հարյուր հազարավոր աղքատներ քայլում էին առանց կոշիկների և գլխավերևում փանփք չունեին: Ձեր փարեկից երեխաները ստիպված էին օրական փասներկու ժամ աշխատել դաժան փերերի մոտ, որոնք մարակներով ծեծում էին, եթե նրանք շատ դանդաղ էին աշխատում, և ուրելու ոչինչ չէին փախիս, բացի չոր հացից ու ջրից: Բայց այս սարսափելի չքավորության մեջ կանգնած էին հրաշալի, գեղեցիկ ու մեծ փներ, որտեղ ապրում էին հարուստ մարդիկ: Երբեմն մինչև երեսուն սպասավոր էր ծառայում ամեն փան մեջ: Այդ հարուստներին կոչում էին կապիտալիստներ: Նրանք գեր, տգեղ մարդիկ էին՝ չար դեմքերով, ինչպես հաջորդ էջում պատկերվածը: Ինչպես փեսնում եք, նա հագել է երկար սև վերարկու՝ սերթուկ, և փարօրինակ, փայլուն գլխարկ, որն իր փեսքով գազօջախի խողովակ է հիշեցնում ու կոչվում է ցիլինդր: Սա կապիտալիստների համազգեստն էր, և ուրիշ ոչ ոք իրավունք չունեի կրել այն: Աշխարհը պատկանում էր կապիտալիստներին, իսկ մյուսները նրանց ստրուկներն էին: Բոլոր հողերը, բոլոր փները, բոլոր գործարաններն ու ամբողջ փողը նրանցն էին: Եթե որևէ մեկը չէր ենթարկվում, նրան բանտ էին նետում կամ հեռացնում աշխատանքից ու սովի մատնում: Երբ սովորական մարդը խոսում էր կապիտալիստի հետ, ստիպված էր քծնել, խոնարհվել նրա առաջ, հանել գլխարկն ու նրան կոչել՝ սրբ: Բոլոր կապիտալիստների ղեկավարը Թագավորն էր, և...

Ուինսթոնն անգիր գիտեր շարունակությունը: Կհիշատակվեն եպիսկոպոսները՝ բատիստե թեզանիքներով, դատավորները՝ կզաքիսե թիկնոցներով, անարգանքի սյունները, կալանակոծողերը, աղացները, ինը պոչանի մտրակները, Լորդ-քաղաքապետի

1984

ճակերույթը և Պապի կոշիկը համբուրելու սովորությունը: Կար նաև, այսպես կոչված, «առաջին գիշերվա իրավունք», որը հավանաբար հիշատակված չէր երեխաների դասագրքում: Ըստ այդ օրենքի՝ ցանկացած կապիտալիստ իրավունք ունեւր քնելու իր գործարաններից որևէ մեկում աշխատող ցանկացած կնոջ հետ:

Ինչպե՞ս իմանաս՝ որն էր սուտ, որը՝ ճիշտ: Գուցե ճիշտ է, որ միջին մարդը հիմա ավելի բարեկեցիկ էր ապրում, քան մինչ հեղափոխությունը: Միակ վկայությունը սուր բողոքն էր մարդու ներսում, այն բնագոյային զգացողությունը, որ կյանքի պայմաններն անտանելի են, և ինչ-որ ուրիշ ժամանակ պետք է որ այլ կերպ եղած լինեն: Հանկարծ հասկացավ, որ ժամանակակից կյանքին բնորոշ են ոչ թե դաժանությունն ու անկայունությունը, այլ դատարկությունը, աղոտությունը, անտարբերությունը: Նայիր շուրջդ և կտեսնես՝ կյանքը նման չէ ոչ միայն հեռէկրանից հորդող ստերին, այլև նույնիսկ իդեալներին, որոնց Կուսակցությունը փորձում էր հասնել: Հիմնականում կյանքը, նույնիսկ Կուսակցության անդամների համար, չեզոք էր և ապաքաղաքականացված. նրանք զբաղվում էին տաղտկալի գործերով, պայքարում Մետրոյում տեղ գտնելու համար, կարկատում մաշված գուլպան, սախարինի կոճակ մուրում, խնայում սիգարետի քնթուկները: Կուսակցության կերտած իդեալը ինչ-որ մեծ, ահավոր ու շողշողուն բան էր՝ պողպատից ու բետոնից, հրեշավոր մեքենաներից ու սարսափազդու զենքերից կազմված մի աշխարհ՝ զինվորների ու մոլեռանդների երկիր, որոնք քայլում էին կատարյալ միասնության մեջ, մտածում նույն մտքերն ու գոռում նույն կարգախոսները, մշտապես աշխատում էին, պայքարում, հաղթանակում ու պատժում. երեք հարյուր միլիոն մարդ՝ բոլորը մեկ դեմքով: Իսկ իրականում՝ փտած, կեղտոտ քաղաքներ, ուր կիսաքաղց մարդիկ քայլում էին ծակ կոշիկներով, տասնիններորդ դարում կառուցված խարխուլ տներ, որոնցից միշտ կաղամբի և կեղտոտ զուգարանի հոտ էր փչում: Նրա առաջ հառնում էր Լոնդոնի տեսլականը՝ ավերածությունների, միլիոնավոր աղբարկղերի

հսկայական քաղաք. պատկերը լրացնում էր տիկին Փարսոնսի կերպարը՝ կնճռոտ դեմքով ու յուղոտ մազերով կնոջ, որը հուսահատ փորփրում էր կեղտաջրի խցանված խողովակը:

Նա կռացավ ու նորից քորեց կոճը: Գիշեր ու ցերեկ հեռէկրանները սղոցում էին ականջներդ՝ վիճակագրությամբ՝ ապացուցելով, որ այսօր մարդիկ ավելի շատ ուտելիք, ավելի շատ հագուստ, ավելի լավ տներ, ավելի ուրախ հանգիստ ունեն, որ նրանք ավելի երկար են ապրում, ավելի կարճ են աշխատում, ավելի խոշոր են, ավելի առողջ, ավելի ուժեղ, ավելի երջանիկ, ավելի խելացի, ավելի կրթված, քան հիսուն տարի առաջ: Այդ բառերից ոչ մեկը հնարավոր չէր ո՛չ ապացուցել, ո՛չ ժխտել: Կուսակցությունը, օրինակ, պնդում էր, որ ներկայում դեռահաս պրոլետրի քառասուն տոկոսը գրագետ է. ասում էին՝ մինչ հեղափոխությունն այդ թիվն ընդամենը 15 տոկոս էր: Կուսակցության պնդմամբ՝ մանկական մահացությունը հիմա հազար երեխայից 160 էր, մինչդեռ մինչ հեղափոխությունն այդ թիվը 300 էր, և այսպես շարունակ: Ասես երկու անհայտով պարզ հավասարում լիներ: Շատ հավանական էր, որ պատմության գրքերում գրված ամեն մի բառ, նույնիսկ այն, ինչ ընդունվում էր առանց կասկածի, մաքուր հորինվածք էր: Որքանով Ուինսթոնն էր տեղյակ, երբեք չէր կարող լինել այնպիսի օրենք, ինչպիսին «առաջին գիշերվա օրենքն» է, կամ այնպիսի արարած, ինչպիսին կապիտալիստն է, կամ այնպիսի գլխարկ, ինչպիսին ցիլինդրն է:

Ամեն ինչ խունանում էր մշուշում: Անցյալը վերացել էր, վերացման փաստը մոռացվել էր, սուտը դարձել էր ճշմարտություն: Կյանքում միայն մեկ անգամ և ամենակարևորը՝ մի իրադարձությունից հետո էր Ուինսթոնն իր ձեռքի տակ կեղծիքի կոնկրետ ու անսխալ վկայություն ունեցել: Այն ձեռքում էր պահել երեսուն վայրկյան: Դա կարծես 1973 թվականին էր. մի խոսքով, այն ժամանակ ինքն ու Քեթրինը բաժանվել էին: Իսկ ավելի կոնկրետ՝ յոթ կամ ութ տարի առաջ:

Իրականում պատմությունը սկսվել էր վաթսունականների կեսերին՝ մեծ զտումների ժամանակ, երբ մեկընդմիջտ բնաջնջվեցին

1984

Կուսակցության իսկական առաջնորդները: Մինչ 1970 թվականը նրանցից ոչ մեկն արդեն ողջ չէր, բացի Մեծ եղբորից: Բոլորին մերկացրել էին՝ որպես դավաճանների և հակահեղափոխականների: Գոլդաթայնը դիմել էր փախուստի և թաքնվում էր՝ հայտնի չէ, թե որտեղ. ինչ վերաբերում է մյուսներին, ապա ոմանք ուղղակի անհետացել էին, մինչդեռ մեծամասնությունը մահապատժի էր ենթարկվել աղմկոտ դատավարություններից հետո, որտեղ խոստովանել էին իրենց կատարած հանցագործությունները: Վերջին մազապուրծները երեքն էին՝ Ջոնսը, Աարոնսոնը և Ռադերֆորդը: Երևի 1965 թվականն էր, երբ երեքն էլ ձերբակալվեցին: Ինչպես հաճախ էր պատահում, նրանք անհետացան մեկ տարով կամ ավելի երկար, ուստի ոչ ոք չգիտեր՝ ո՞րք են, թե՞ մեռած, իսկ հետո հանկարծ վերադարձվեցին, որպեսզի սովորական ձևով մերկացնեն իրենք իրենց: Նրանք խոստովանեցին, որ լրտեսել են թշնամու համար (այն ժամանակ նույնպես թշնամին եվրասիան էր), յուրացրել են հանրային ֆոնդերը, սպանել Կուսակցության մի շարք նվիրված անդամների, խարդավանքների են դիմել Մեծ եղբոր ղեկավարության դեմ, ինչը սկսվել է հեղափոխությունից շատ առաջ, և մասնակցել են նենգադուլի դեպքերի, որոնք հանգեցրել են հարյուր հազարավոր մարդկանց մահվան: Այս ամենը խոստովանելուց հետո նրանց ներել էին, վերականգնել Կուսակցության շարքերում և տվել պաշտոններ, որոնք իրականում անաշխատ պաշտոններ էին, բայց կարևոր էին թվում: Երեքն էլ զղջման երկար հողավաճներ էին գրել («Թայմսում»)՝ վերլուծելով ուխտադրժության պատճառները և խոստանալով քավել մեղքերը:

Նրանց ազատ արձակելուց որոշ ժամանակ անց Ուինսթոնը երեքին էլ տեսել էր «Շագանակենի» սրճարանում: Հիշում էր, թե ինչ ահարկու գայթակղությամբ էր աչքի պոչով հետևում նրանց: Այդ տղամարդիկ տարիքով շատ մեծ էին, հին աշխարհի մնացուկներ, վերջին խոշոր կերպարները՝ Կուսակցության վաղ հերոսական օրերից: Ընդհատակյա պայքարի ու քաղաքացիական պատերազմի

փառավոր ոգին դեռ թեւածում էր նրանց շուրջը: Այնպիսի տպավորություն էր, որ չնայած փաստերն ու ամսաթվերը լրդզված էին, Ուինսթոնը նրանց ճանաչում էր շատ ավելի վաղուց, քան Մեծ եղբորը: Բայց նրանք հանցագործներ էին, թշնամիներ, իրավազուրկներ և առաջիկա մեկ-երկու տարվա ընթացքում անկասկած ենթարկվելու էին մահապատժի: Մտքի ոստիկանության ձեռքն ընկած որևէ մեկը երբևէ չէր ազատվել: Նրանք դիակներ էին, որ սպասում էին գերեզմանոց ուղարկվելուն:

Սեղանների մոտ նրանց շուրջը, ոչ ոք չկար: Նման մարդկանց կողքին երևալն անխոհեմ արարք էր: Նրանք լուռ նստած էին, դիմացը՝ մեխակի բույրով ջինի բաժակներ, որը սրճարանի ֆիրմային խմիչքն էր: Երեքից Ուինսթոնի վրա ամենամեծ ազդեցությունը թողեց Ռադերֆորդը: Մի ժամանակ նա հայտնի ծաղրանկարիչ էր, որի սուր ծաղրանկարները նպաստել էին հանրային կրքերի բորբոքմանը մինչև հեղափոխությունը և դրա ընթացքում: Նույնիսկ հիմա, ժամանակ առ ժամանակ, նրա ծաղրանկարները հայտնվում էին «Թայմսում»: Դրանք իր նախկին ոճի նմանակումն էին՝ զարմանալիորեն անկյանք ու անհամոզիչ: Միշտ հին թեմաների պատառիկներ՝ խրճիթներ հետնախորշերում, քաղցած երեխաներ, փողոցային կռիվներ, ցիլինդրներով կապիտալիստներ (նույնիսկ բարիկադների վրա կապիտալիստները չէին բաժանվում իրենց ցիլինդրներից)՝ անցյալ վերադառնալու անվերջ ու հուսահատ փորձեր: Նա վիթխարի մարդ էր՝ յուղոտ մոխրագույն մազերի բաշով, դեմքը պարկի պես կախված էր ու կնճռոտ, շուրթերը՝ փքված, ինչը հատուկ էր նեգրոիդ տիպին: Ժամանակին պետք է որ անսահման ուժեղ եղած լիներ. հիմա հսկայական մարմինը կորացել էր, թեքվել, այտուցվել, կախվել տարբեր ուղղություններով: Նա մարդու աչքի առաջ մասնատվում էր, ինչպես փլվող սարը:

Ժամը տասնհինգն էր՝ հանգստի ժամը: Ուինսթոնը չէր հիշում՝ այդ ժամին ինչպես էր հայտնվել սրճարանում: Ներսում գրեթե դատարկ էր: Հեռէկրանից տարածվում էր թեթև երաժշտություն:

Անկյունում նստած երեք տղամարդիկ անշարժ էին ու ոչ մի բառ չէին խոսում: Առանց պատվերի սպասելու՝ մատուցողը ևս մի քանի բաժակ ջին բերեց: Հարևան սեղանին շախմատի տախտակ կար. խաղաքարերը շարված էին, բայց խաղը չէր սկսվել: Իսկ հետո, մոտ կես ռուպե, հեռէկրանների հետ ինչ-որ բան պատահեց: Հնչող մեղեդին փոխվեց, երաժշտության տոնայնությունը՝ նույնպես: Ինչ-որ բան ներխուժեց, բայց թե ինչ՝ դժվար էր նկարագրել: Տարօրինակ, խելահեղ, սուր, ծաղրող հնչողություն. Ուինսթոնը մտքում այն կոչեց դեղին տոնայնություն: Իսկ հետո հեռէկրանից հնչեց երգը.

*Սաղարթաշար շագանակի ծառի տակ
Դու ծախեցիր ինձ, ես ծախեցի քեզ,
Պառկած ենք. նրանք՝ այնտեղ, մենք՝ այստեղ,
Սաղարթաշար շագանակի ծառի տակ:*

Երեք տղամարդիկ չշարժվեցին: Բայց երբ Ուինսթոնը նորից նայեց Ռադերֆորդի քայքայված դեմքին, տեսավ, որ նրա աչքերում արցունքներ կան: Առաջին անգամ ներքին սարսուռով, միևնույն ժամանակ չհասկանալով, թե ինչից սարսուռաց, Ուինսթոնը նկատեց, որ Աարոնսոնի և Ռադերֆորդի քթերը ջարդված են:

Շուտով երեքին էլ նորից ձերբակալեցին: Պարզվեց՝ ազատ արձակվելու պահից ի վեր նրանք զբաղվել են նոր դավադրություններով: Երկրորդ դատավարության ընթացքում նրանք դարձյալ խոստովանեցին նախկինում գործած, ինչպես և մի շարք նոր հանցագործություններ: Նրանց մահապատժի ենթարկեցին, նրանց ճակատագիրը հավերժացավ Կուսակցության պատմության մեջ՝ որպես դաս ապագա սերունդներին: Դրանից հինգ տարի անց՝ 1973 թվականին, Ուինսթոնը բացում էր օդաճնշական խողովակից հենց նոր իր գրասեղանին ընկած թղթերը, երբ հանկարծ ձեռքն ընկավ թղթի մի կտոր: Ըստ երևույթին, սխալմամբ էր հայտնվել մյուսների մեջ, իսկ հետո մոռացվել էր: Հենց որ շտկեց թուղթը, անմիջապես

հասկացավ դրա կարևորությունը: Մոտ տասը տարի առաջ «Թայմսից» պատռած կես էջ էր՝ վերևի կեսը, ուստի վրան ամսաթիվ կար. պատվիրակների լուսանկարն էր Նյու Յորքում՝ կուսակցական միջոցառման ժամանակ: Խմբի կենտրոնում աչքի էին ընկնում Ջոնսը, Աարոնսոնը և Ռադերֆորդը: Հնարավոր չէր չճանաչել, ամեն դեպքում նրանց անունները գրված էին լուսանկարի տակ:

Բայց չէ՞ որ երկու դատավարությանն էլ երեք տղամարդիկ խոստովանել էին, որ այդ օրը եղել են եվրասիական հողի վրա: Նրանք Կանադայի գաղտնի օդանավակայանից թռել էին Սիբիր՝ հանդիպման, և խորհրդակցել էին եվրասիական գլխավոր շտաբի անդամների հետ, որոնց հայտնել էին կարևոր ռազմական գաղտնիքներ: Ամսաթիվը հստակ ամրագրվել էր Ուինսթոնի հիշողության մեջ, որովհետև միջամառային օրն էր՝ հունիսի 23-ը, բայց ամբողջ պատմությունը պետք է որ գրանցված լիներ նաև բազմաթիվ այլ տեղերում: Կար միայն մեկ հնարավոր եզրակացություն. խոստովանությունները սուտ էին:

Անշուշտ, սա ինքնին բացահայտում չէր: Նույնիսկ այդ ժամանակ Ուինսթոնի մտքով չէր անցել, որ զտումներին զոհ գնացած մարդիկ իրականում գործել են այն հանցագործությունները, որոնցում մեղադրվում են: Բայց սա կոնկրետ ապացույց էր. անհետացած անցյալի մի պատահիկ, բրածո ոսկորի պես, որը հայտնվում է սխալ նստվածքաշերտում ու ոչնչացնում երկրաբանական տեսությունը: Միայն դա բավական էր Կուսակցությունը հյուպենների բաժանելու համար, եթե ինչ-որ կերպ աշխարհն իմանար այդ մասին, և նրա կարևորությունը հայտնի դառնար բոլորին:

Նա շարունակեց աշխատել: Երբ տեսավ լուսանկարն ու հասկացավ, թե դա ինչ է նշանակում, անմիջապես ծածկեց մի ուրիշ թղթով: Բարեբախտաբար, երբ հարթեցրեց թերթը, տեսավ, որ այն հակառակ է դրված և չի երևում հեռեկրանից:

Նա ծնկին դրեց նոթատետրը և աթոռը հրեց այնպես, որ հնարավորինս հեռանա հեռեկրանից: Դժվար չէր անարտահայտիչ

1984

դարձնել դեմքը, ու ջանքերի գնով նույնիսկ շնչառությունը կարելի էր վերահսկել. բայց հնարավոր չէր կառավարել սրտի զարկը, և հեռէկրանն այնքան նրբազգաց էր, որ կարող էր որսալ: Նա սպասեց, իր հաշվարկներով, մոտ տասը րոպե՝ ամբողջ ընթացքում տառապելով վախից, որ ինչ-որ դեպք, օրինակ՝ հանկարծակի միջանցիկ քամին, կարող է մատնել իրեն: Հետո, առանց լուսանկարը բացելու, գցեց հիշողության անցքը՝ այլ անպետք թղթերի հետ: Երևի հաջորդ րոպեի ընթացքում այն կվերածվի փոշու:

Տասը-տասնմեկ տարի առաջ էր: Այսօր թերևս կպահեր այդ լուսանկարը: Զարմանալի էր, որ այն իր ձեռքում պահելու փաստը շատ կարևոր էր նույնիսկ հիմա, երբ լուսանկարը, ինչպես և իրադարձությունը, որ պատկերված էր այնտեղ, ընդամենը հիշողություն էր: Նա մտածում էր՝ մի՞թե Կուսակցության կողմից անցյալի կառավարումը թուլացավ նրանից, որ *ինչ-որ ժամանակ* գոյություն է ունեցել մի վկայություն, որն այլևս գոյություն չունի:

Բայց այսօր, եթե լուսանկարը նույնիսկ ինչ-որ կերպ հառներ մոխրից, այն գուցե վկայություն էլ չլիներ: Այն ժամանակ, երբ Ուինսթոնն արել էր այդ հայտնագործությունը, Օվկիանիան այլևս չէր պատերազմում Եվրասիայի դեմ, և երեք մեռած տղամարդիկ հավանաբար իրենց երկիրը մատնել էին արևելասիացի գործակալներին: Այդ ժամանակից ի վեր եղել էին նաև ուրիշ փոփոխություններ՝ մեկ, երկու, նա չէր հիշում՝ քանիսը: Հավանական է, որ խոստովանությունները նորից ու նորից էին գրվել, այնքան, մինչև իսկական փաստերն ու տարեթվերը կորցրել էին նույնիսկ ամենաչնչին նշանակությունը: Անցյալը ոչ միայն փոխվել էր, այլև շարունակ փոխվում էր: Նրան ամենից շատ տանջում էր այն մղձավանջային միտքը, որ ինքը երբեք պարզ չէր հասկացել, թե ինչու էր արվում այս հսկայական խարդախությունը: Անցյալի կեղծման անմիջական առավելություններն ակնհայտ էին, բայց վերջնական շարժառիթն առեղծվածային էր: Նա դարձյալ վերցրեց գրիչն ու գրեց.

Ես հասկանում եմ՝ ԻՆՉՊԵՆ: Չեմ հասկանում՝ ԻՆՉՈՒ:

Ինչպես բազմիցս՝ նախկինում, այժմ էլ մտածում էր՝ արդյո՞ք ինքը խելագար չէ: Գուցե խելագար է նա, ով փոքրամասնություն է: Մի ժամանակ խելագարության նշան էր հավատալը, որ երկիրը պտտվում է արևի շուրջը. այսօր՝ որ անցյալն անփոփոխելի է: Հավանաբար միայն ինքն էր հավատում այդ համոզմունքին, իսկ եթե միայն ինքն էր, ուրեմն խելագար է: Խելագար լինելու միտքն այնքան էլ չէր անհանգստացնում. սարսափելին այն էր, որ ինքը գուցե սխալվում է:

Նա վերցրեց երեխաների պատմության դասագիրքը ու նայեց Մեծ եղբոր նկարին, որը գրքի ճակատին էր: Հիպնոսացնող աչքերը նայեցին Ուինսթոնի աչքերին: Ասես մի հսկայական ուժ ձնշում էր քեզ, թափանցում գանգո, տրորում ուղեղդ, վախեցնելով ստիպում հրաժարվել համոզմունքներից, գրեթե համոզում մերժել զգայարանների վկայությունը: Ի վերջո, Կուսակցությունը կհայտարարի, որ երկու անգամ երկու հավասար է հինգի, և ստիպված կլինեք հավատալ: Անխուսափելիորեն, վաղ թե ուշ նրանք կներկայացնեն այդ պահանջը. դա էր պահանջում նրանց իշխանության տրամաբանությունը: Ոչ միայն փորձի հիմնավորությունը, այլև ինքնին արտաքին իրականության գոյությունը անխոս մերժվում էր նրանց փիլիսոփայության կողմից: Ամենամեծ հերետիկոսությունն առողջ բանականությունն էր: Իսկ սարսափելին ոչ թե այն էր, որ քեզ կսպանեն այլ կերպ մտածելու համար, այլ այն, որ նրանք գուցե իրավացի են: Ի վերջո, ինչպե՞ս կարող եք իմանալ, որ երկու անգամ երկու չորս է: Կամ՝ ձգողականության ուժը գործում է: Կամ՝ անցյալն անփոփոխելի է: Եթե անցյալն ու արտաքին աշխարհը գոյություն ունեն միայն մտքում, ու եթե միտքն ինքնին վերահսկելի է, ուրեմն ի՞նչ:

Բայց ոչ: Հանկարծ նա խիզախության անսպասելի հոսք զգաց: Անհայտ է, թե ինչ զուգորդումով մտքում լողաց Օ'Բրայնի դեմքը: Հիմա, ավելի վստահ, քան առաջ, նա գիտեր, որ Օ'Բրայնը իր

կողքին է: Նա օրագիրը լրացնում էր Օ'Բրայենի համար՝ *Օ'Բրայենին*. ասես անվերջ նամակ լիներ, որը ոչ ոք երբեք չէր կարդալու, բայց ուղղված էր որոշակի մարդու, և իմաստավորված էր հենց դրանով:

Կուսակցությունը պատվիրում էր չհավատալ սեփական աչքերին ու ականջներին: Դա նրանց վերջնական, ամենակարևոր հրամանն էր: Նրա սիրտը նվաղեց, երբ մտածեց, թե ինչ հսկայական ուժ է կանգնել իր դեմ, թե Կուսակցության ցանկացած գաղափարախոս բանավեժի ժամանակ ինչ հեշտությամբ կտապալի իրեն նուրբ փաստարկներով, որոնք ինքն ի վիճակի չի լինի հասկանալ, առավել ևս՝ պատասխանել: Բայց միևնույն է, ինքն իրավացի է: Նրանք սխալ են, իսկ *ի նքը*՝ իրավացի: Պետք է պաշտպանել ակներևը, տարրականը, ճիշտը: Հանրահայտ ժշմարտությունները ճիշտ են. կառչե՛ք այդ մտքից: Աշխարհի գոյությունն աներեր է, նրա օրենքները չեն փոխվում: Քարերը պինդ են, ջուրը՝ թաց, հենման կետ չունեցող առարկաներն ընկնում են երկրի վրա: Այնպիսի զգացողությամբ, ասես խոսում է Օ'Բրայենի հետ և մի կարևոր արքիոն առաջադրում՝ Ուինսթոնը գրեց.

Ազգայությունը երկուսին գումարած երկու հավասար է ջորսի ասելու հնարավորությունն է: Եթե դա թույլատրվի, մտացած ամեն ինչ կրխի դրանից:

VIII

Ինչ-որ տեղից՝ միջանցքի խորքից, դեպի փողոց փչեց բոված սուրճի բույրը, իսկական, ոչ թե «Հաղթանակ» սուրճի: Ուինսթոնն ականա կանգ առավ: Մոտ երկու վայրկյանով նա վերադարձավ իր մանկության գրեթե մոռացված աշխարհ: Հետո դուռը շրխկոցով փակվեց ու ասես կտրեց բույրը, ինչպես հնչյուն:

Նա մի քանի կիլոմետր քայլել էր մայթերով, ու երակային վերքը տրոփում էր: Երեք շաբաթվա ընթացքում արդեն երկրորդ անգամ բաց էր թողնում Հանրային կենտրոնում կազմակերպված երեկոն. անխոհեմ քայլ էր, քանի որ կասկածից վեր է, որ այցելությունները Կենտրոն խնամքով հաշվվում են: Սկզբունքորեն Կուսակցության անդամն ազատ ժամանակ չուներ և երբեք մենակ չէր մնում, միայն՝ անկողնում: Ենթադրվում էր, որ երբ չի աշխատում, չի ուտում կամ քնում, ուրեմն մասնակցում է որևէ հանրային զվարճանքի. փոքրիկս վտանգավոր էր զբաղվել մի գործով, որը ենթադրում էր մե՜նակության հակում, նույնիսկ մենակ զբոսանքի գնալը: Նորալեզվում անգամ այդպիսի բառ կար՝ *սեփակյանք*, որը նշանակում էր անհատականություն և արտասովորություն: Բայց այս երեկո, նախարարությունից դուրս գալիս, ապրիլյան օդի քնքշությունը գայթակղեց նրան: Այդպիսի ջերմ կապույտ երկինք դեռ չէր տեսել այդ տարի, և հանկարծ՝ երկարատև, աղմկոտ երեկոն Կենտրոնում, ձանձրալի ու հոգնեցնող խաղերը, դասախոսությունները, ջինով օծված, բայց ճռճռան ընկերությունը անտանելի թվացին: Մի ներքին մղումով նա հեռացել էր ավտոբուսի կանգառից ու թափառել էր Լոնդոնի լաբիրինթոսում, նախ՝ դեպի հարավ, հետո՝ արևելք, հետո՝ նորից հյուսիս, և կորել էր անհայտ փողոցներում՝ չմտահոգվելով, թե ինչ ուղղությամբ է գնում:

Նա իր օրագրում գրել էր. «Եթե կա հույս, ապա հույսը պրոլներն են»: Այս դարձվածքն անընդհատ պտտվում էր գլխում՝ որպես միստիկական ճշմարտություն ու ակնհայտ անհեթեթություն: Նա ինչ-որ աղոտ, դարչնագույն հետնախորշերում էր՝ երբեմնի Սուրբ Պանկրասի կայարանից հյուսիս-արևելք: Քայլում էր սալարկված փողոցով՝ փոքրիկ երկհարկանի տների մոտով, որոնց խարխուլ մուտքերը բացվում էին ուղիղ մայթի վրա, և որոնք զարմանալիորեն առնետաբներ էին հիշեցնում: Այսուայնտեղ՝ սալարկների արանքում, կեղտաջրով լի փոսեր էին: Մռայլ մուտքերում և դրանցից դուրս, երկկողմ ճյուղավորված նեղ նրբանցքներն ի վար հավաքված էին

ապշելու թվով մարդիկ՝ հասուն, ծաղկման շրջանում գտնվող աղջիկներ՝ կոպիտ ներկած շուրթերով, երիտասարդներ, որոնք հետապնդում էին աղջիկներին, հաստաբետ շորորուն կանայք, որոնց տեսքից կարելի էր կռահել՝ ինչպիսին կլինեն աղջիկները տասը տարի անց, ծեր, կորացած արարածներ, որ օրորվում էին ծուռ ոտքերի վրա, և ցնցոտիապատ ոտաբոբիկ երեխաներ, որոնք խաղում էին ջրափոսերում, իսկ հետո ցրվում մայրիկների բարկացած ձչոցներից: Փողոցի պատուհանների գրեթե մեկ քառորդը կտրված էր ու տախտակապատ: Համարյա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում Ուինսթոնին, բայց ոմանք ուղեկցում էին զգուշավոր ու հետաքրքրասեր հայացքով: Երկու խոշորամարմին կին՝ աղյուսագույն թևերը գոգնոցներին կանթած, խոսում էին մուտքի մոտ: Մոտենալով՝ Ուինսթոնը խոսակցության պատառիկներ լսեց.

– Այո՛, ասում եմ նրան, ամեն ինչ շատ լավ է, ասում եմ: Բայց իմ փոխարեն դու էլ նույնը կանեիր: Հեշտ է, ասում եմ, քննադատել, բայց որ իմ օրին լինեիր...

– Հա՛, – ասաց մյուսը, – ճիշտ է: Շատ էլ ճիշտ ես ասում:

Ճղճղան ձայները կտրուկ դադարեցին: Կանայք թշնամական լռությամբ ուսումնասիրեցին անցնող Ուինսթոնին: Ավելի ճիշտ՝ ոչ թե թշնամություն էր, այլ զգուշություն, վայրկենական քարացում, ինչպես պատահում է, երբ կողքից ինչ-որ անձանոթ կենդանի է անցնում: Կուսակցության կապույտ տաբատը սովորական երևույթ չէր նման փողոցում: Իսկապես, նման վայրում հայտնվելն անխուհեմություն էր, եթե, իհարկե, չես եկել որոշակի գործով: Պարեկախումբը կարող է կանգնեցնել, եթե պատահաբար հանդիպես նրանց: «Կարելի՞ է ձեր փաստաթղթերը, ընկեր: Ի՞նչ եք անում այստեղ: Ժամը քանիսի՞ն եք դուրս եկել աշխատանքից: Սա ձեր տան սովորական ճանապարհն է», և այլն, և այլն: Իհարկե, ոչ սովորական ճանապարհով տուն գնալն արգելող ոչ մի օրենք չկար, բայց բավական էր Մտքի ոստիկանությունը լսեր այդ մասին, և ձեզ վրա ուշադրություն կսևեռեիր:

Հանկարծ ամբողջ փողոցը սկսեց խլրտալ: Բոլոր կողմերից նախազգուշացնող ծիչեր լսվեցին: Մարդիկ ճագարների պես պահ մտան իրենց տներում: Ուինսթոնից մի քայլի վրա մի երիտասարդ կին դուրս թռավ մուտքից, բռնեց ջրափոսում խաղացող փոքրիկ երեխային, գոգնոցով փաթաթեց ու հետ սուրաց. ամեն ինչ ասես մեկ շարժումով կատարվեց: Նույն ակնթարթում հարևան ծառուղուց հայտնվեց ակորդեոն հիշեցնող սև կոստյումով մի տղամարդ, վազեց Ուինսթոնի ուղղությամբ՝ հուզված ցույց տալով դեպի երկինք:

– Շոգենավ,– ճչաց նա:– Նայի, դեկավա՛ր: Հիմա կընկնի գլխնե-րիս: Արագ պառկեք:

Չգիտես ինչու, պրոլները հրթիռին «շոգենավ» էին ասում: Ուինսթոնը բերանքսիվայր ընկավ գետնին: Պրոլները գրեթե միշտ իրավացի էին, երբ զգուշացնում էին նման բաներից: Նրանք օժտված էին ինչ-որ բնազդով, որը մի քանի վայրկյան առաջ հայտնում էր հրթիռի մոտենալու մասին, չնայած ենթադրվում էր, որ հրթիռը ձայնից արագ է սլանում: Ուինսթոնը թևերով ծածկեց գլուխը: Այնպիսի թնդյուն լսվեց, որն ասես ցնցեց մայթը. թեթև առարկաների տարափ տեղաց մեջքին: Երբ ոտքի կանգնեց, պարզեց, որ պատված է մոտակա պատուհանի ապակու կտորտանքով:

Շարունակեց քայլել: Ռումբը 200 մետրի վրա մի քանի տուն էր ավերել: Օդում ծխի սև սյուն էր կանգնած, նրա տակ, գիպսափոշու ամպի մեջ, ավերակների շուրջն արդեն մարդիկ էին հավաքվում: Նրա առաջ՝ մայթի վրա, սվաղի փոքրիկ կույտ էր, որի կենտրոնում Ուինսթոնը բաց կարմիր շերտագիծ տեսավ: Երբ մոտեցավ, պարզվեց՝ կտրված դաստակ է: Բացի արյունոտ վերքից՝ ձեռքն ամբողջությամբ սպիտակել էր, ինչպես գիպսե կաղապար:

Ոտքով խփեց-զցեց ջրատարը, հետո, ամբոխից խուսափելու համար, քայլեց աջ՝ նրբանցքն ի վար: Երեք կամ չորս րոպեում հեռացավ ռումբի ավերած տարածքից. այստեղ՝ փողոցներում, թշվառ, մրջնային կյանքը շարունակվում էր այնպես, ասես ոչինչ էլ չէր պատահել: Մոտավորապես երեկոյան ութն էր, և խմիչքի

1984

խանութները, ուր հաճախում էին պրոլները (դրանք կոչվում էին «պանդոկներ»), լեփ-լեցուն էին հաճախորդներով: Մրոտ դռներից, որ անվերջ բացվում ու փակվում էին, փչում էր մեզի, թեփի ու թթու գարեջրի հոտը: Շարքից առաջ ընկած շենքի անկյունում կիպ կանգնել էին երեք տղամարդ. մեջտեղինը ձեռքում ծալված թերթ ուներ, որը մյուս երկուսը նրա ուսի վրայից ուսումնասիրում էին: Ուինսթոնը դեռ այնքան մոտ չէր՝ նրանց դեմքի արտահայտությունը տեսնելու համար, բայց զգում էր, որ մարմնի բոլոր մասերով կլանված են իրենց գործով: Պարզ էր, որ ինչ-որ կարևոր նորություն են կարդում: Ուինսթոնը մի քանի քայլ հեռավորության վրա էր, երբ հանկարծ խումբը բաժան-բաժան եղավ, ու տղամարդկանցից երկուսը կատաղի վեճի բռնվեցին: Մի պահ թվաց՝ կանցնեն բռունցքների:

- Բթամիտ, չե՞ս լսում՝ ինչ են ասում: Ասում են՝ յոթով վերջացող ոչ մի թիվ չի հաղթել տասնչորս ամսվա ընթացքում:

- Ես էլ ասում եմ՝ հաղթել է:

- Ոչ, չի հաղթել: Տանը ունեն երկու տարվա բոլոր գրանցումները: Գրանցում են ժամացույցի ճշտությամբ: Ասում են՝ յոթով վերջացող ոչ մի թիվ...

- Չէ՛, յոթը հաղթել է: Կարող եմ նույնիսկ անիծյալ թիվն ասել: Վերջանում էր չորս զրո յոթով: Փետրվարին էր: Փետրվարի երկրորդ շաբաթը:

- Փետրվարին քու տատիկը... Գրել եմ սևով սպիտակի վրա: Ասում եմ քեզ՝ յոթով ոչ մի թիվ...

- Դե վերջ տվեք, - ասաց երրորդ տղամարդը:

Վիճակախաղի մասին էին խոսում: Ուինսթոնը հետ նայեց, երբ երեսուն մետր հեռացել էր: Նրանք դեռ վիճում էին՝ վառվող, կրքոտ դեմքերով: Վիճակախաղը, ամեն շաբաթ հանձնվող հսկայական մրցանակներով, միակ հանրային իրադարձությունն էր, որին պրոլները լուրջ ուշադրություն էին դարձնում: Հնարավոր է՝ միլիոնավոր պրոլների համար վիճակախաղն ապրելու գլխավոր, եթե ոչ

միակ պատճառն էր: Դա նրանց բերկրանքն էր, նրանց խենթությունը, նրանց ցավի ամոքումը, նրանց ինտելեկտուալ խթանը: Երբ հարցը վերաբերում էր վիճակախաղին, նույնիսկ մարդիկ, ովքեր հազիվ էին կարդում ու գրում, ցուցաբերում էին ապշեցուցիչ հիշողություն և բարդ հաշվարկների ունակություն: Կար մարդկանց մի ամբողջ խումբ, որն ապրուստ էր հայթայթում համակարգեր, կանխատեսումներ ու թալիսմաններ վաճառելով: Ուինսթոնը ոչ մի կապ չունեի վիճակախաղի հետ, որով զբաղվում էր Առատության նախարարությունը, բայց տեղյակ էր (անշուշտ, Կուսակցությունում բուլտրն էին տեղյակ), որ մրցանակները հիմնականում երևակայական էին: Իրականում վճարվում էին միայն փոքր գումարներ, իսկ մեծ մրցանակների հաղթողները գոյություն չունեցող մարդիկ էին: Դա դժվար չէր կազմակերպել, քանի որ բացակայում էր որևէ իրական փոխադարձ կապ Օվկիանիայի մասերի միջև:

Բայց եթե հույս կա, ապա հույսը պրոլներն էին: Պետք է կառչել դրանից: Երբ բառերով ես արտահայտում, միտքը թվում է բանական. իսկ երբ նայում ես կողքիցդ անցնող մարդ արարածներին, մտածումը վերածվում է հավատի: Փողոցը, ուր նա թեքվեց, զառիթափ էր: Այնպիսի զգացողություն ուներ, որ առաջ էլ է եղել այս թաղամասում, և որ մայրուղին մոտակայքում է: Առջևում՝ ինչ-որ տեղից, գոռգոռոցներ լսվեցին: Փողոցը կտրուկ թեքվեց, ապա ավարտվեց խուլ նրբանցք տանող մի քանի աստիճանով, ուր մի քանի կրպակատերեր թոշնած բանջարեղեն էին վաճառում: Այդ պահին Ուինսթոնը հիշեց, թե որտեղ է: Նրբանցքը տանում էր դեպի գլխավոր փողոց, իսկ հաջորդ խաչմերուկում՝ ընդամենը հինգ րոպեի հեռավորության վրա, հնավաճառի խանութն էր. այնտեղից էր գնել տետրը, որը հիմա իր օրագիրն էր: Իսկ ոչ հեռու գտնվող գրենական պիտույքների փոքրիկ խանութում գնել էր գրչակոթ ու մի շիշ թանաք:

Մի պահ կանգ առավ աստիճանների գլխին: Նրբանցքի հակառակ կողմում անշուք փոքրիկ պանդոկ էր, որի պատուհաններն առաջին հայացքից եղյամապատ, բայց իրականում ընդամենը

1984

պատված էին փոշով: Մի շատ ծեր մարդ՝ կռացած, բայց եռանդուն, ծովախեցգետնի կախված, սպիտակ բեղերով, բացեց ճոճվող դուռն ու ներս մտավ: Ուինսթոնը կանգնած հետևում էր, երբ հանկարծ հասկացավ, որ այդ ծեր մարդը, որն ամնվազն ութսուն տարեկան էր, միջին տարիքի է եղել, երբ սկսվել է հեղափոխությունը: Նա և իր նման մի քանիսը կապիտալիզմի անհետացած աշխարհի հետ կապող վերջին թելն էին: Կուսակցությունում քչերը կային, որոնց գաղափարները ձևավորվել էին մինչ հեղափոխությունը: Ավագ սերունդը գերազանցապես բնաջնջվել էր հիսունականների ու վաթսունականների մեծ գտումների ժամանակ, և այն քչերը, որ ողջ էին մնացել, շատ վաղուց սարսափից ենթարկվել էին կատարյալ մտավոր կապիտուլյացիայի: Եթե դեռ կար որևէ ողջ մարդ, ով կարող էր ճշգրիտ նկարագրել դարասկզբի կյանքի պայմանները, ապա դա կարող էր միայն պրոլ լինել: Հանկարծ Ուինսթոնի մտքում հայտնվեց պատմության գրքի հատվածը, որն արտագրել էր օրագրի մեջ, և համակվեց խելագարի մղումով: Կմտնի պանդոկ, կծանոթանա ծերունու հետ ու կհարցնի. «Պատմե՞ք՝ ինչպե՞ս էիք ապրում, երբ փոքր էիք: Ինչպիսի՞ն էր կյանքն այն ժամանակ: Ավելի լա՞վ, քան հիմա, թե՞ ավելի վատ»:

Արագ-արագ, որ չհասցնի վախենալ, նա իջավ աստիճաններով և անցավ նեղ փողոցը: Անշուշտ, այդ ամենը խենթություն էր: Ինչպես միշտ, պրոլների հետ խոսելն ու պանդոկի հաճախելն արգելող որևէ որոշակի օրենք չկար, բայց անհնար էր, որ այդ արտասովոր գործողությունն աննկատ մնար: Եթե պարեկախումբը հայտնվի, ինքը կձևացնի, թե հանկարծ տկարություն է զգացել, բայց քիչ հավանական է, որ իրեն կհավատան: Հրեց-բացեց դուռը, ու դեմքին փչեց թթու գարեջրի գարշելի հոտը: Երբ ներս մտավ, ժխորը կիսով չափ պակասեց: Թիկունքում զգում էր, որ բոլորը նայում են իր կապույտ տաբատին: Սենյակի հակառակ ծայրում շարունակվող տեգախաղը դադարեց ուղիղ երեսուն վայրկյան: Ծերունին, ում ետևից Ուինսթոնը եկել էր, կանգնած էր բարի մոտ ու վիճում էր

բարմենի՝ թիկնեղ, գեր, արծվաքիթ ու հսկայական բազուկներով երիտասարդի հետ: Մի քանիսը, շուրջը կանգնած, ձեռքերին մի-մի բաժակ ջին, հետևում էին տեսարանին:

- Կարծես պարզ ասացի քեզ, չէ՞,- ասաց ծերուկը՝ կռվի տրամադրությամբ շտկելով ուսերը:- Իսկ դու ասում ես՝ պինտանոց գավաթ չունես անիծյալ պանդոկում:

- Գրողը տանի, ի՞նչ է նշանակում պինտա,- հարցրեց բարմենը՝ մասների ծայրերով հենվելով վաճառասեղանին:

- Սրա՞ն տեսեք: Իրեն բարմեն է կոչում ու չգիտի՝ ինչ է պինտան: Լսի՛ր, պինտան կվարտայի կեսն է, իսկ գալունի մեջ չորս կվարտա կա: Մյուս անգամ այբուբենն են սովորեցնելու:

- Երբեք չէի լսել,- կարծ կապեց բարմենը:- Լիտր ու կես լիտր. մենք այդպես ենք մատուցում: Բաժակները ձեր դիմաց են՝ դարակի վրա:

- Ինձ պինտան է դուր գալիս,- պնդեց ծերունին:- Քեզ համար, ի՞նչ է, դժվար է մի պինտա գարեջուր տալը: Երբ որ ջահել էի, գրողի տարած լիտրեր չկային:

- Երբ ջահել էիք, բոլորս ծառերի վրա էինք ապրում,- ասաց բարմենը՝ հայացք նետելով մյուս հաճախորդներին:

Բարձր ծիծաղ լսվեց, և Ուինսթոնի մտնելուց ստեղծված անհարմար վիճակը կարծես անցավ: Ծերունու սպիտակ դեմքը վարդագունել էր: Նա շրջվեց՝ ինքնիրեն փնթփնթալով, ու բախվեց Ուինսթոնին: Ուինսթոնը հանդարտ բռնեց նրա թևը:

- Կարող եմ խմիչք հյուրասիրել,- ասաց նա:

- Դուք ազնվազարմ մարդ եք,- ասաց ծերուկը՝ դարձյալ շտկելով ուսերը: Նա կարծես չէր նկատել Ուինսթոնի կապույտ կոմբինեզոնը:- Պինտա,- հարձակողական տոնով դիմեց բարմենին:- Մի պինտա քոթակ:

Բարմենը խշռոցով մուգ դարչնագույն գարեջուր լցրեց երկու կեսլիտրանոց հաստ պատերով գավաթները, որոնք մինչ այդ ողողել էր վաճառասեղանի տակ դրված դոյլի մեջ: Գարեջուրը միակ խմիչքն էր, որ կարելի էր գտնել պրոլների պանդոկներում:

1984

Պրոլներին ջին չէր հասնում, թեև իրականում կարող էին հեշտությամբ ճարել: Տեգախաղը դարձյալ եռում էր, և բարի մոտ հավաքված տղամարդիկ խոսում էին վիճակախաղի տոմսերից: Ուինսթոնի ներկայությունը մի պահ մոռացվեց: Պատուհանի տակ սոճու փայտից սեղան կար, որտեղ էլ նա և ծերունին կարող էին խոսել՝ առանց վախենալու, որ իրենց կլսեն: Վտանգն ահռելի էր, բայց, համենայնդեպս, սենյակում հեռէկրան չկար. համոզվել էր ներս մտնելուն պես:

- Գոնե մի պինտա լցներ,- փնթփնթաց ծերունին՝ նստելով բաժակի առաջ:- Կես լիտրը բավական չէ: Չի հագեցնում: Իսկ մի լիտրը չափից ավել է: Միզապարկա լցվում է: Էլ չասած գնի մասին:

- Դուք պետք է որ մեծ փոփոխություններ տեսած լինեք երիտասարդ տարիքից ի վեր,- փորձնական ասաց Ուինսթոնը:

Ծերունու բաց կապույտ աչքերը նախ նայեցին տեգախաղի տախտակին, ապա տեղափոխվեցին բար, իսկ բարից՝ տղամարդկանց զուգարանի դռանը, ասես սպասում էր, որ փոփոխությունները տեղի են ունենալու սրահում:

- Գարեջուրն ավելի լավն էր,- ի վերջո ասաց նա:- Եվ ավելի էժան: Երբ որ ջահել էի, ոչ թունդ գարեջրի՝ քոթակի (մենք այդպես էինք ասում) պինտան չորս փենս արժեր: Իհարկե, դա պատերազմից առաջ էր:

- Ո՞ր պատերազմից,- ասաց Ուինսթոնը:

- Պատերազմները չեն վերջանում,- անորոշ ասաց ծերունին: Նա վերցրեց գավաթն ու դարձյալ շտկեց ուսերը:- Լավագույն ցանկություններով:

Նրա նեղ կոկորդում սրածայր ադամախնձորը զարմանալի արագ թռչկոտեց, ու գարեջուրն անհետացավ: Ուինսթոնը մոտեցավ բարին ու վերադարձավ ևս երկու կեսլիտրանոց գավաթով: Ծերունին երևի մոռացել էր մի ամբողջ լիտր խմելու վնասի մասին:

- Դուք ինձնից շատ տարիքով եք,- ասաց Ուինսթոնը:- Մինչև իմ ծնվելը երևի արդեն մեծ եք եղել: Կարո՞ղ եք հիշել՝ ինչպիսին էր կյանքը հին օրերում՝ հեղափոխությունից առաջ: Իմ տարեկիցներն

իրականում ոչինչ չգիտեն այն ժամանակների մասին: Մենք կարող ենք իմանալ միայն գրքերից, իսկ ո՞վ գիտի՝ ճիշտ է դա, թե՞ սուտ: Կուզեի իմանալ ձեր կարծիքը: Պատմության գրքերում գրված է, որ մինչև հեղափոխությունը կյանքը միանգամայն տարբեր էր այսօրվա կյանքից: Ահավոր ծնունդներ, անարդարություն, չքավորություն՝ այս ամենը՝ ավելի սարսափելի, քան կարող ենք պատկերացնել: Այստեղ՝ Լոնդոնում, մարդիկ ծնված օրից մինչև մահ երբեք բավարար չէին սնվում: Նրանց կեսը նույնիսկ կոշիկ չունեին: Աշխատում էին օրական տամներկու ժամ, ինը տարեկանից թողնում էին դպրոցը, սենյակում քնում էին տասը հոգով: Եվ միևնույն ժամանակ փոքր թվով մարդիկ, ընդամենը մի քանի հազար կապիտալիստներ (այդպես էին կոչում նրանց) հարուստ էին ու հզոր: Նրանք տիրում էին այն ամենին, ինչին հնարավոր էր տիրել: Ապրում էին մեծ, շքեղ տներում՝ երեսուն սպասավորների հետ, շրջում էին մեքենաներով ու չորսձիանի կառքերով, խմում էին շամպայն, կրում էին ցիլինդրներ...

Ծերունին հանկարծ պայծառացավ:

– Ցիլինդրներ՝,– ասաց նա:– Ինչ լավ բան հիշեցիր: Հենց երեկ էի մտածում նույն բանի մասին: Չգիտեմ ինչու: Ուղղակի մտածում էի, քանի տարի է՝ աչքովս ցիլինդր չի ընկնում: Ոչ ոք չի կրում: Վերջին անգամ հագել եմ հարսիս թաղման ժամանակ: Ու դա... դե, ամսաթիվը չեմ կարող ասել, բայց երևի հիսուն տարի առաջ էր: Հասկանալի է, որ վարձով էի վերցրել այդ դեպքի համար:

– Ցիլինդրներն այնքան էլ կարևոր չեն,– համբերատար ասաց Ուինսթոնը:– Բանն այն է, որ այդ կապիտալիստները, նրանք ու մի շարք փաստաբաններ, քահանաներ և այլն, որոնք ապրում էին նրանց հաշվին, աշխարհի տերերն էին: Ամեն ինչ ստեղծված էր նրանց համար: Դուք՝ սովորական մարդիկ, աշխատողներ, նրանց ստրուկներն էիք: Նրանք ձեզ հետ կարող էին վարվել այնպես, ինչպես կուզեին: Կարող էին անասունների պես նավով ուղարկել Կանադա: Եթե ցանկանային, կարող էին քնել ձեր դուստրերի հետ: Կարող էին հրամայել, որ ձեզ ծեծեն, այսպես կոչված,

1984

յոթպոչանի մտրակով: Երբ անցնում էին ձեր կողքով, պարտավոր էիք հանել գլխարկը: Յուրաքանչյուր կապիտալիստ քայլում էր սպասավորների մի մեծ խմբով, որոնք...

Ծերունին դարձյալ պայծառացավ:

- Սպասավորներ,- ասաց նա:- Այդ բառը վաղուց չէի լսել: Սպասավորներ: Հիշողությունների գիրկն ընկա: Հիշում եմ, շատ տարիներ առաջ մեկ-մեկ կիրակի օրերին գնում էի Հայր Փարք՝ ելույթներ լսելու: Փրկության բանակ, հռոմեացի կաթոլիկներ, հրեաներ, հնդկացիներ. ամեն տեսակ մարդ կար այնտեղ: Բայց միայն մեկը, անունը չեմ հիշում, բայց նա իսկապես հզոր էր խոսում: Ո՛նց էր խոսում: Սպասավորները,- ասում էր,- բուրժուաների սպասավորները: Ղեկավար դասի ծառաները: Մակաբույծներ. նրանց այդպես էլ էր կոչում: Եվ բորենիներ. հաստատ նրանց բորենիներ էր ասում: Իհարկե, հասկանում ես, որ խոսքը վերաբերում էր Աշխատավորական կուսակցությանը:

Ուինսթոնն այնպիսի զգացողություն ուներ, որ ինքն ու ծերունին իրար չէին հասկանում:

- Իրականում ահա թե ինչ էի ուզում իմանալ,- ասաց նա:- Դուք զգո՞ւմ եք, որ հիմա ավելի ազատություն ունեք, քան այն ժամանակ: Ձեզ վերաբերվում են ինչպես մարդ արարածի՞: Անցյալում հարուստ մարդիկ, իշխանության գլուխ կանգնած մարդիկ...

- Լորդերի պալատը,- ասես մտաբերելով՝ ասաց ծերունին:

- Թող լինի Լորդերի պալատ: Ուզում էի հարցնել, այդ մարդիկ կարո՞ղ էին վերաբերվել ձեզ ինչպես ստորակարգի, միայն այն բանի համար, որ իրենք հարուստ էին, իսկ դուք՝ աղքատ: Ճի՞շտ է, որ դուք ստիպված էիք նրանց ասել «Սըր» և հանել գլխարկը, երբ անցնում էին ձեր կողքով:

Ծերունին ասես խոր մտքերի մեջ ընկավ: Մինչ պատասխանելը նա խմեց իր գարեջրի մոտ մեկ քառորդը:

- Այո,- ասաց նա:- Նրանց դուր էր գալիս, երբ մատներդ տանում էիր գլխարկիդ: Հարգանքի նշան էր: Ես համաձայն չէի, բայց ինքս էլ էի հաճախ անում: Ինչպես ասում եք, ստիպված էի:

– Ճիշտ է, որ, ես միայն մեջբերում եմ իմ կարդացած պատմության գրքերը, որ այդ մարդկանց ու իրենց սպասավորների համար սովորական բան էր ձեզ մայթից ջրատարը հրելը:

– Նրանցից մեկը ինձ մի անգամ հրեց,– ասաց ծերունին:– Հիշում եմ, ինչպես երեկ: Թիավարման մրցումների երեկոն էր (Նրանք սովորաբար սարսափելի կռվարար էին դառնում Թիավարման մրցումների ժամանակ), ես Շաֆթսբերի պողոտայում բախվեցի մի երիտասարդի: Ազնվականի արտաքին ուներ. վերնաշապիկ, ցիլինդր, սև վերարկու: Զիզգզգ գնում էր մայթով, ու ես պատահաբար բախվեցի: Ասում է՝ չե՛ս նայում՝ ուր ես գնում, ասում է: Ասում եմ՝ առել ե՛ս այս անիծյալ մայթը: Ասում է՝ հիմա կպոկեմ գլուխդ, եթե շարունակես կոպտել: Ասում եմ՝ հարբած ես, կես բուպեից ոստիկաններին կհանձնեմ քեզ, ասում եմ: Հավատում ե՛ս: Նա ձեռքը դնում է կրծքիս ու այնպես է հրում, որ ընկնում եմ ավտոբուսի անիվների տակ: Դե, այն ժամանակ երիտասարդ էի ու կարող էի բռնել նրան, ուղղակի...

Ուինսթոնին համակեց հուսահատության զգացումը: Ծերունու հիշողությունն ընդամենը մանրամասների աղբակույտ էր: Կարելի էր ամբողջ օրը հարցեր տալ նրան՝ առանց որոշակի տեղեկատվություն ստանալու: Կուսակցության պատմությունը գուցե ճիշտ էր ինչ–որ իմաստով, իսկ գուցե միանգամայն ճիշտ էր: Նա մի վերջին փորձ արեց:

– Գուցե պարզ չարտահայտվեցի,– ասաց նա:– Իրականում ուզում էի ասել, որ դուք երկար կյանք եք ապրել. ձեր կյանքի կեսն ապրել եք մինչև հեղափոխությունը: Օրինակ՝ 1925 թվականին արդեն հասուն մարդ էիք: Կարո՞ղ եք ասել, ըստ ձեր հիշողությունների, 1925 թվականին կյանքն ավելի լավ էր, քան հիմա, թե՞ ավելի վատ: Եթե ընտրելու հնարավորություն ունենայիք, այն ժամանակը կընտրեիք, թե՞ ներկան:

Ծերունին մտազբաղ նայեց տեգախաղի տախտակին: Ու մինչև վերջ խմեց գարեջուրը, առաջվանից ավելի դանդաղ: Եվ սկսեց խոսել փիլիսոփայական համբերատարությամբ, ասես գարեջուրը փափկացրել էր նրան:

- Գիտեն, թե ինչ խոսք ես սպասում,- ասաց նա:- Սպասում ես, որ կասեն՝ նախընտրում եմ երիտասարդ լինել: Մարդկանց մեծ մասը կասի՝ նախընտրում եմ երիտասարդ լինել, եթե հարցնեք: Երբ երիտասարդ ես, առողջ ես և ուժեղ: Երբ հասնում ես իմ տարիքին, այնքան էլ լավ չես զգում: Ահավոր տառապում եմ ուղքերիս ցավից, միզապարկս սարսափելի է: Գիշերը վեց-յոթ անգամ վեր եմ կենում անկողնուց: Մյուս կողմից՝ ծեր լինելը մեծ առավելություն է: Հոգսերը վերանում են: Ոչ մի հարաբերություն կանանց հետ, իսկ դա շատ մեծ բան է: Կհավատա՞ս, մոտ երեսուն տարի է՝ կին չեմ տեսել: Ու ամենակարևորը՝ չեմ էլ ուզում:

Ուինսթոնը հետ ընկավ պատուհանագոգին: Շարունակելն անիմաստ էր: Նա պատրաստվում էր էլի գարեջուր գնել, երբ ծերունին հանկարծ ոտքի կանգնեց ու փութկոտ քայլերով շտապեց դեպի սենյակի կողքի գարշահոտ զուգարանը: Լրացուցիչ կես լիտրն արդեն ազդել էր: Ուինսթոնը մեկ-երկու բուպե նստած նայում էր իր դատարկ գավաթին, իսկ հետո չնկատեց էլ, թե ոտքերն ինչպես իրեն նորից քարշ տվեցին դեպի փողոց: Մտածեց, որ ամենաշատը քսան տարուց «Հեղափոխությունից առաջ էր կյանքն ավելի լավ, թե՞ հիմա» մեծ ու պարզ հարցն այլևս ընդմիջտ անպատասխան էր մնալու: Իրականում նույնիսկ հիմա հնարավոր չէր պատասխանել, քանի որ հին աշխարհի ցրիվ եկած մազապուրծներն ի վիճակի չէին մի դարաշրջանը համեմատել մյուսի հետ: Նրանք հիշում էին միլիոնավոր անիմաստ բաներ՝ վեճը գործընկերոջ հետ, հեծանվի կորած պոմպի փնտրտուքը, վաղուց մահացած քրոջ դեմքի արտահայտությունը, փոշու պտտահողմը յոթանասուն տարի առաջ՝ քամոտ առավոտյան. բայց բոլոր կարևոր փաստերը նրանց տեսադաշտից դուրս էին: Նման էին մրջյունների, որոնք փոքր առարկաները տեսնում են, իսկ մեծերը՝ ոչ: Ու երբ հիշողությունը չէր արդարացնում իրեն, իսկ արձանագրությունները կեղծվում էին, ապա ստիպված էիր ընդունել Կուսակցության պնդումը, որ մարդկային կյանքի պայմանները բարելավվել են, որովհետև գոյություն չունեն

ու երբեք չէր կարող գոյություն ունենալ որևէ նախնական տվյալ ստուգելու համար:

Այդ պահին Նրա մտքի թելը կտրվեց: Կանգ առավ ու նայեց վեր: Մի նեղ փողոցում էր, որի բնակելի շենքերի արանքն էին խցկվել մի քանի գորշ փոքրիկ կրպակներ: Անմիջապես գլխավերևում կախված էին երեք գունաթափ մետաղյա գնդեր, որոնք այնպիսի տեսք ունեին, ասես մի ժամանակ ոսկեզօծված են եղել: Նա կարծես ճանաչեց փողոցը: Իհարկե: Կանգնած էր հնավաճառի խանութի առաջ, որտեղից գնել էր օրագիրը:

Վախի խայթոցն անցավ մարմնով: Նախ, գիրք գնելը բավական անմիտ գործ էր, ու նա երդվել էր այլևս երբեք չնոտենալ այդ վայրին: Այն պահին, սակայն, երբ իրեն թույլ տվեց մտածել, ոտքերը հետ բերեցին այստեղ: Բայց չէ՞ որ օրագիր պահելիս հույս էր ունեցել իրեն պաշտպանել ինքնասպանության նմանատիպ բնազդներից: Միևնույն ժամանակ նկատեց, որ չնայած գրեթե ժամը քսանմեկն էր՝ խանութը դեռ բաց էր: Զգալով, որ ներսում պակաս նկատելի կլինի, քան մայթի վրա, ներս մտավ: Եթե հարցնեին, կասեր, որ փորձում է ածելի գտնել:

Խանութի տերը հենց Նոր կախել էր նավթի լամպը, որն անմաքուր, բայց ծանոթ հոտ էր տարածում: Մոտ վայթսուն տարեկան տղամարդ էր, թուլակազմ ու կռացած, երկար, բարյացակամ քթով ու մեղմ աչքերով, որոնք աղավաղվում էին հաստ ակնոցից: Մազերը գրեթե սպիտակ էին, իսկ հոնքերը՝ հաստ ու սև: Նրա ակնոցը, ազնվագարմ, անհանգիստ շարժումները, սև թավջից մաշված բաճկոնը ինտելիգենտ տեսք էին տալիս, ասես գրականագետ էր կամ երաժիշտ: Ձայնը փափուկ էր, խունացած, իսկ առոգանությունն այնքան աղավաղված չէր, որքան պրոլների մեծ մասինը:

- Ես ճանաչեցի ձեզ մայթին, - անմիջապես ասաց նա: - Դուք էիք, որ երիտասարդ աղջկա հուշանվեր-ալբոմ գնեցիք: Լավ թուղթ էր, շա՛տ լավ: Կրեմապատ թուղթ: Այդպիսի թուղթ չի արտադրվել, ըն՛... իմ կարծիքով՝ արդեն հիսուն տարի, - նա ակնոցի

1984

վրայից նայեց Ուինսթոնին:— Ինչո՞վ կարող եմ օգնել: Թե՞ ուղղակի ուզում էիք նայել:

— Անցնում էի,— անորոշ ասաց Ուինսթոնը:— Պարզապես ներս մտա, ոչ մի հատուկ բան չեմ ուզում:

— Դե, ավելի լավ,— ասաց մարդը,— չեմ կարծում, թե կկարողանայի գոհացնել ձեզ,— փամփուխ ձեռքը ներողություն հայցող շարժում արեց:— Ինքներդ եք տեսնում. կարելի է ասել, խանութը դատարկ է: Մեր մեջ ասած, հնաոճ իրերի վաճառք գրեթե չկա: Պահանջարկ չկա, պաշարներ՝ նույնպես: Կահույքը, ճենապակին, ապակին քիչ-քիչ կտորվեցին: Իսկ մետաղյա իրերի մեծ մասն ուղարկվել է վերածուլման: Արդեն քանի տարի է՝ պղնձե մոմակալ չեմ տեսել:

Իրականում նեղիկ խանութում ասեղ գցելու տեղ չկար, բայց գրեթե չկար նաև որևէ արժեքավոր իր: Հատակին ազատ տեղ համարյա չկար. բոլոր պատերի տակ նկարների անհամար փոշոտ շրջանակներ էին: Ցուցափեղկում պնդողակներով ու գնդերիթներով սկուտեղներ էին, մաշված հատիչներ, ջարդված սայրերով գրչահատներ, անփայլ ժամացույցներ, որ նույնիսկ չէին ձևացնում, թե սարքին են, և այլ բազմազան աղբ: Միայն անկյունի փոքրիկ սեղանի մանրուքները՝ քթախոտի լաքապատ տուփերը, ագաթե կրծքազարդերը, և նման այլ բաները կարող էին փոքր-ինչ հետաքրքրություն առաջացնել: Երբ Ուինսթոնը քայլեց սեղանի կողմը, աչքին ընկավ մի կլոր, հարթ բան, որ թույլ փայլում էր լամպի լույսի տակ: Ուինսթոնը վերցրեց:

Ապակու ծանր կտոր էր, մի կողմը՝ ծոված, մյուսը՝ հարթ. ասես երկու կիսագունդ լիներ: Ապակու թե՛ գույնի, թե՛ կառուցվածքի մեջ յուրահատուկ փափկություն կար, կարծես անձրևաջուր լիներ: Իսկ կենտրոնում, խոշոր ծոված մակերեսով, տարօրինակ, վարդագույն, պարուրածև իր էր, որը վարդ կամ ծովային հողմածաղիկ էր հիշեցնում:

— Ի՞նչ է սա,— հմայված հարցրեց Ուինսթոնը:

— Մարջան է, մարջան,— ասաց ծերունին:— Պետք է որ Հնդկական օվկիանոսից բերված լինի: Մի ժամանակ այն տեղադրում էին

ապակու մեջ: Առնվազն հարյուր տարեկան է: Նույնիսկ ավելի տեսքից դատելով:

- Գեղեցիկ իր է,- ասաց Ուինսթոնը:

- Գեղեցիկ է,- երախտագիտությամբ արձագանքեց տղամարդը: Պետք է ասել, որ մեր օրերում նման իրերը չեն գնահատվում,- նա հազաց: Հիմա, եթե ցանկանաք գնել, ձեզ համար արժի չորս դոլար: Հիշում եմ, մի ժամանակ այսպիսի իրի համար ութ ֆունտ էին վճարում, իսկ ութ ֆունտը, հիմա չեմ կարող ասել՝ որքան էր, բայց շատ մեծ գումար էր ժամանակին: Բայց հիմա ո՛ւմ են պետք իսկական հին գործերը. դրանցից շատ քիչ է մնացել:

Ուինսթոնն անմիջապես վճարեց չորս դոլար և ցանկալի իրը գցեց գրպանը: Նրան գրավեց ոչ թե գեղեցկությունը, այլ այն, որ այն ներկայից միանգամայն տարբեր, այլ ժամանակի շունչն էր կրում, ուրիշ դարի բույրը: Անձրևաջրի պես փափուկ ապակին նման չէր իր տեսած որևէ այլ ապակու: Իրը կրկնակի գրավիչ էր, որովհետև միանգամայն անպիտան էր, չնայած Ուինսթոնը կռահում էր, որ մի ժամանակ որպես ճնշած ծանր է օգտագործվել: Այնքան ծանր էր, որ գրպանը կախվել էր, բայց բարեբախտաբար դուրս չէր ցցվել: Տարօրինակ, Կուսակցության անդամի համար նույնիսկ վարկաբեկիչ իր էր: Ամենայն հիմնը, եթե ավելի շիտակ՝ ամենայն գեղեցիկը կասկածի տեղիք էր տալիս: Հնավաճառը, սակայն, ակնհայտորեն աշխուժացել էր չորս դոլարը ստանալով: Ուինսթոնը հասկանում էր, որ կհամաձայներ նաև երեք կամ նույնիսկ երկու դոլարով:

- Վերևում մի սենյակ էլ կա: Եթե ուզում եք, կարող եք նայել,- ասաց նա: Համարյա դատարկ է: Ընդամենը մի քանի իր: Եթե վերև բարձրանանք, մեզ լույս պետք կգա:

Նա ևս մի լամպ վառեց ու մեջքը ծռելով դանդաղ շարժվեց վերձև շվաճ ու դիք աստիճաններով, նեղ միջանցքով Ուինսթոնին տարավ դեպի սենյակը, որի պատուհանները ոչ թե փողոցին, այլ սալարկված բակին ու կափարիչավոր բազմաթիվ ծխնետույզներին էին նայում: Ուինսթոնը նկատեց, որ կահույքը դասավորված է այնպես,

ասես սենյակում պետք է մարդ ապրի: Հատակին՝ ուղեգորգ, պատերին՝ մեկ-երկու նկար, խոր, փնթի բազկաթոռ՝ բուխարու առաջ: Տասներկուժամանոց թվատախտակով հին ապակյա ժամացույցը թիկթակում էր բուխարու դարակին: Պատուհանի տակ հսկայական, սենյակի գրեթե մեկ քառորդը զբաղեցնող մահճակալն էր՝ ներքնակով:

- Այստեղ էինք ապրում մինչ կնոջս մահը,- ասես ներողություն խնդրելով՝ ասաց ծերունին:- Կահույքը մաս-մաս վաճառում եմ: Ահա կարմիր փայտից հրաշալի մահճակալ է... Կամ այդպիսին կլինի, եթե կարողանաք միջից վռնդել փայտոջիներին: Ասենք, երևի ձեզ այն չափազանց մեծ թվա:

Նա բարձրացրել էր լամպը, որ ամբողջ սենյակը լուսավորվի, և տաք ու աղոտ լույսի տակ այն զարմանալիորեն գրավիչ էր թվում: Ուխտաթղթի ուղեղում մի միտք ծագեց. վատ չէր լինի շաբաթական մի քանի դուլարով վարձել սենյակը, եթե համարձակությունս հերիքի: Այդ վայրի ու անիրագործելի միտքը չբացավ նույնքան անսպասելի, որքան ծնվել էր. բայց սենյակը նրա մեջ կարոտաբաղձություն, ինչ-որ ժառանգական հիշողություն արթնացրեց: Թվաց, թե լավ գիտի՝ ինչ բան է նստել այսպիսի սենյակում, բազկաթոռի մեջ, բուխարու կրակի կողքին, ոտքերը ցանցին հենած, իսկ ջեռոցին՝ թեյաման. լրիվ մենակ, լրիվ անվտանգ, ոչ ոք չի հետևում, ոչ մի ձայն չի հետապնդում, ոչ մի հնչյուն չկա, բացի թեյամանի երգից ու ժամացույցի սիրալիր կտկտոցից:

- Հեռէկրան չկա,- հանկարծ քրթմնջաց Ուխտաթուր:

- Ախ է՛դ,- ասաց ծերունին:- Այստեղ երբեք նման բան չի եղել: Չափազանց թանկ է: Ես երբեք չեմ զգացել անհրաժեշտությունը: Այնտեղ՝ անկյունում, լավ, ծավլող սեղան կա: Չնայած, եթե ցանկանաք սեղանը բացել, անշուշտ կարող եք փոխել ծխսիները:

Մյուս անկյունում փոքրիկ գրապահարան կար, և Ուխտաթուր արդեն ձգվեց այդ կողմը: Այնտեղ կատարյալ աղբ էր: Ինչպես ամենուր, այնպես էլ պրոլների թաղամասերում գրքերի որսն ու

ոչնչացումը նույնքան հիմնավոր էին կատարվում: Քիչ հավանական է, որ Օվկիանիայի որևէ հատվածում պահպանված լինի 1960 թվականից վաղ տպագրված որևէ գրքի օրինակ: Ծերունին, լամպը ձեռքին, կանգնած էր վարդափայտի շրջանակով նկարի առաջ, որը կախած էր բուխարու մյուս կողմում՝ մահճակալի դիմաց:

– Եթե ձեզ հետաքրքրում են հին լուսանկարչական ավբոմները...– նրբանկատորեն սկսեց նա:

Ուինսթոնը մոտեցավ, որ լավ տեսնի նկարը: Ուղղանկյուն պատուհաններով և առաջամասում փոքրիկ աշտարակով օվալաձև շենքի պողպատե փորագրություն էր: Շենքի շուրջը ցանկապատ կար, իսկ թիկունքում՝ մի բան, որ հավանաբար արձան էր: Ուինսթոնը մի քանի րոպե ուշադիր զննեց: Շենքը ծանոթ թվաց, բայց արձանը չէր հիշում:

– Շրջանակն ամրացված է պատին,– ասաց ծերունին,– բայց եթե ուզում եք, կհանեն:

– Ես գիտեմ այդ շենքը,– վերջապես ասաց Ուինսթոնը:– Հիմա քանդված է: Փողոցի կենտրոնում՝ Արդարադատության պալատի հետևը:

– Ճիշտ է: Դատարանի առաջ: Ռմբակոծության տակ ընկավ... օ՛, շատ տարիներ առաջ: Մի ժամանակ եկեղեցի էր: Սուրբ Կլեմենտի եկեղեցին, դանիացիների Սուրբ Կլեմենտը,– նա մեղավոր ժպտաց՝ ասես հասկանալով, որ ինչ-որ անհետբեթ բան է ասում, ու ավելացրեց,– «Նարինջներ ու կիտրոններ – Սուրբ Կլեմենտի զանգերն են»:

– Ի՞նչ է դա,– ասաց Ուինսթոնը:

– Հա՛... «Նարինջներ ու կիտրոններ – Սուրբ Կլեմենտի զանգերն են»: Արտասանում էինք այդ բանաստեղծությունը, երբ փոքր էի: Շարունակությունը չեմ հիշում, բայց գիտեմ՝ ինչպես էր ավարտվում: «Ահա և մոմը, որ լուսավորի ննջարանդ, ահա և կացինը, որ կտրի գլուխդ»: Պարի պես բան էր: Մյուսները կանգնում էին ձեռք ձեռքի, իսկ դու պիտի անցնեիր տակով, ու երբ համնում էին «Ահա կացինը, որ կտրի գլուխդ» տողին, իջեցնում էին թևերն ու բռնում քեզ:

Միայն եկեղեցիների անուններ էին: Լոնդոնի բոլոր եկեղեցիների անունները, այսինքն՝ գլխավոր եկեղեցիների:

Ուիսսթոնը ցրված մտածում էր՝ ո՞ր դարի եկեղեցի է: Միշտ էլ դժվար էր որոշել լոնդոնյան շենքերի տարիքը: Եթե շենքը մեծ էր ու տպավորիչ, ուներ համեմատաբար թարմ արտաքին, ապա համարվում էր, որ կառուցվել է հեղափոխությունից հետո, իսկ ակնհայտորեն տարիքավները վերագրվում էին ինչ-որ հեռավոր, անորոշ ժամանակի, որ միջին դարեր էր կոչվում: Կապիտալիզմի դարերում որևէ արժեքավոր բան չէր ստեղծվել: Ոչ գրքերի, ոչ էլ ճարտարապետության օգնությամբ հնարավոր չէր իմանալ պատմությունը: Արձանները, մակագրությունները, հուշաքարերը, փողոցների անունները. ամեն ինչ, որ կարող էր լույս սփռել անցյալի վրա, պարբերաբար փոխվում էր:

- Չգիտեի, որ եկեղեցի է եղել,- ասաց նա:

- Իրականում եկեղեցիներ շատ կան,- ասաց ծերունին,- պարզապես օգտագործվում են այլ նպատակներով: Ինչպե՞ս էր բանաստեղծությունը: Հա՛, հիշեցի:

*«Նարինջներ ու կիպրոսներ»,- Սուրբ Կլեմենտի զանգերն են:
«Երեք ֆարթինգ պարպք ես ինձ»,- Սուրբ Մարթինն է
զնգում միշտ:*

Այդքանն են հիշում: Ֆարթինգը փոքրիկ պղնձե մետաղադրամ էր, սենթի նման:

- Իսկ որտե՞ղ էր Սուրբ Մարթինի եկեղեցին,- հարցրեց Ուիսսթոնը:

- Սուրբ Մարթինը: Դեռ կանգուն է: Հաղթանակի հրապարակում, պատկերասրահի կողքին: Դիմացից եռանկյուն նախասրահ ունի, սյուներ ու երկար սանդուղք:

Ուիսսթոնը լավ գիտեր այդ շենքը: Թանգարան էր՝ նախատեսված տարբեր քարոզչական ցուցադրությունների համար. հրթիռների ու

Լողացող ամրոցների հսկայական մոդելներ, թշնամու վայրագությունները ցուցադրող մոմե համայնապատկերներ և այլն, և այլն:

– «Սուրբ Մարթինը դաշտերում», այդպես էր կոչվում,– ավելացրեց ծերունին,– չնայած չեմ հիշում, որ այդ կողմերում որևէ տեղ դաշտ լինի:

Ուինսթոնը զգնեց նկարը: Դա շատ ավելի անհեթեթ գնում կլիներ, քան ապակե ճնշածձանը, և անհնար էր տուն տանել, եթե, իհարկե, չհանվեր շրջանակից: Բայց մի քանի րոպե էլ մնաց, խոսեց ծերունու հետ, որի անունը, ինչպես Ուինսթոնը պարզեց, ոչ թե Ուիքս էր, ինչը կարելի էր ենթադրել խանութի ճակատամասի գրությունից, այլ Չարինգթոն: Պարզվեց՝ պարոն Չարինգթոնի կինը մահացել է, նա վաթսուներեք տարեկան էր և արդեն երեսուն տարի ապրում էր այս խանութում: Այդ ընթացքում շարունակ մտադրվում էր փոխել խանութի անունը, բայց այդպես էլ չփոխեց: Ամբողջ զրույցի ընթացքում Ուինսթոնի գլխում պտտվում էր կիսատ բանաստեղծությունը. «Նարինջներ ու կիտրոններ»,– Սուրբ Կլեմենտի գանգերն են: «Երեք ֆարթինգ պարտք ես ինձ»,– Սուրբ Մարթինն է զնգում միշտ»: Տարօրինակ էր, բայց երբ քեզուքեզ արտասանում ես, թվում է՝ լսում ես զանգերի ղողանջը, անհետացած Լոնդոնի զանգերի, որոնք դեռ գոյություն ունեն ինչ–որ տեղ, անձանաչելի ու մոռացված: Նա կարծես լսում էր՝ ինչպես են մեկը մյուսի ետևից ղողանջում ցնորական զանգակատները: Մինչդեռ որքան հիշում էր, իրական կյանքում երբեք եկեղեցիների զանգերի ղողանջ չէր լսել:

Նա հրաժեշտ տվեց պարոն Չարինգթոնին ու մենակ իջավ աստիճաններով, որ ծերունին չտեսնի, թե ինքն ինչպես է զննում փողոցը՝ մինչ դռնից դուրս գալը: Արդեն որոշել էր, որ միառժամանակ սպասելով, օրինակ՝ մի ամսից, կրկին կդիմի խանութ այցելելու ռիսկին: Դա, թերևս, ավելի վտանգավոր չէր, քան Կենտրոնի երեկոն բաց թողնելը: Նրա կողմից լուրջ անմտություն էր օրագիրը գնելուց հետո դարձյալ այստեղ վերադառնալը՝ չիմանալով՝ արդյո՞ք կարելի է վստահել խանութի տիրոջը: Բայցևայնպես...

1984

Այո, ասաց ինքն իրեն, պետք է վերադառնալ: Էլի մի գեղեցիկ անպետքություն կգնի: Ասենք, դանիացիների Սուրբ Կլեմենտի փորագրանկարը, կհանի շրջանակից ու կոմբինեզոնի տակ թաքցրած՝ կտանի տուն: Պարոն Չարինգթոնի հիշողությունից կկորզի բանաստեղծության մնացած մասը: Նույնիսկ վերևի սենյակը վարձելու խելագար ծրագիրը նորից ակնթարթորեն անցավ նրա մտքով: Մոտ հինգ վայրկյան տևած պոռթկումը մոռանալ տվեց զգուշության մասին, ու նա փողոց ելավ՝ առանց նախապես պատուհանից նայելու: Նույնիսկ քթի տակ երգում էր հորինած մեղեդին.

*«Նարինջներ ու կիպրոններ»,- Սուրբ Կլեմենտի զանգերն են:
«Երեք ֆարթինգ պարտք ես ինձ»,- Սուրբ Մարթինն է
զնգում միշտ...*

Հանկարծ սիրտն ասես սառավ, աղիքները սեղմվեցին: Մայթի վրա, մոտ տասը մետր հեռավորությունից մոտենում էր կապույտ կոմբինեզոնով մեկը: Գրականության բաժնի այն աղջիկն էր, թխահեր աղջիկը: Արդեն մթնում էր, բայց Ուինսթոնը հեշտությամբ ճանաչեց նրան: Աղջիկը նայեց ուղիղ նրա դեմքին, հետո արագ շարունակեց քայլել, ասես չէր տեսել:

Մի քանի վայրկյան Ուինսթոնը չէր կարողանում շարժվել: Հետո շրջվեց դեպի աջ ու ծանրաքայլ առաջ անցավ՝ մի պահ չնկատելով, որ գնում է սխալ ուղղությամբ: Ամեն դեպքում, մի բան պարզ էր. անկասկած, աղջիկը լրտեսում էր իրեն: Երևի հետևելով հասել է այստեղ, որովհետև անհավանական է, որ զուտ պատահականությամբ հենց նույն երեկոյան զբոսներ նույն անհայտ փողոցում՝ մի քանի կիլոմետր հեռու այն թաղամասից, որտեղ ապրում էին Կուսակցության անդամները: Չափազանց շատ էր՝ զուգադիպություն լինելու համար: Կարևոր չէր՝ նա իսկապե՞ս Մտքի ոստիկանության գործակալ է, թե՞ ուղղակի սիրողական մակարդակի լրտես, որին առաջ էր մղում պնդերեսությունը: Բավական էր, որ աղջիկը

հետևում էր իրեն: Երևի նաև տեսել էր, թե Ուիլսթոնն ինչպես է մտնում պանդոկ:

Քայլելու համար մեծ ջանքեր էին պահանջվում: Ամեն քայլափոխի գրպանի ապակու կտորը հարում էր ազդրը, ու նա անընդհատ ուզում էր հանել ու դնել նետել: Ամենաանտանելին, սակայն, ստամոքսի ցավն էր: Մի քանի րոպե այնպիսի զգացողություն ուներ, որ կմեռնի, եթե շուտ զուգարան չհասնի: Բայց նման թաղամասում հանրային զուգարան չէր կարող լինել: Հետո կծկումներն անցան, մնաց միայն բուֆ ցավը:

Պարզվեց՝ փողոցը փակուղի է: Ուիլսթոնը կանգ առավ, մի քանի վայրկյան ցրված մտածեց, թե ինչ անի, հետո շրջվեց ու քայլեց հակառակ ուղղությամբ: Երբ շրջվեց, մտքով անցավ, որ աղջիկն իր կողքով անցել է երեք րոպե առաջ, և վազելու դեպքում գուցե կարողանա հասնել Նրան: Կարող է գնալ աղջկա հետևից՝ մինչև կհասնեն մի խաղաղ տեղ, հետո սալաքարով ջարդուփշուր կանի Նրա գանգը: Գրպանի ապակու կտորը ծանր է և հարմար՝ այդ գործին: Բայց անմիջապես հրաժարվեց այդ գաղափարից, որովհետև որևէ ֆիզիկական ջանք անելու միտքն անգամ անտանելի էր: Վազել չէր կարող, հարվածել՝ նույնպես: Բացի այդ, աղջիկը երիտասարդ էր և ուժեղ ու կպաշտպանվեր: Մտածեց նաև շտապ Հանրային կենտրոն հասնելու և մինչ փակվելն այնտեղ մնալու մասին, որ մասնակի ալիբի ապահովի երեկոյի համար: Բայց դա նույնպես անհնար էր: Նրան համակել էր մահացու հոգնածությունը: Միակ բանը, որ ուզում էր, արագ տուն հասնելն ու հանգիստ նստելն էր:

Քսաներկուան անց էր, երբ հասավ տուն: Լոյսն անջատելու էին քսաներեքն անց երեսունին: Մտավ խոհանոց ու համարյա մի թեյի բաժակ «Հաղթանակ» ջին կուլ տվեց: Հետո մոտեցավ խորշում դրված սեղանին, նստեց ու դարակից հանեց օրագիրը: Բայց անմիջապես չբացեց: Հեռկրանից հնչող կնոջ մետաղյա ձայնը հայրենասիրական երգ էր ձղձղում: Նա նստել ու նայում էր

գրքի մարմարե կազմին՝ ճայնն իր գիտակցությունից հեռացնելու անհաջող փորձեր անելով:

Հետևիցդ գալիս են գիշերը, միշտ գիշերը: Ամենաձիշտը մինչև նրանց գալը ինքնասպանություն գործելն էր: Անկասկած, ոմանք այդպես էլ վարվում էին: Իրականում անհետացումների մեծ մասն ինքնասպանություններ էին: Բայց աշխարհում, որտեղ հնարավոր չէր հրազեն կամ արագ ազդող ու հուսալի թույն գտնել, ինքնասպան լինելու համար պետք էր ունենալ հուսահատ խիզախություն: Նա զարմանքով մտածեց ցավի ու վախի կենսաբանական անպիտանության, մարդկային մարմնի դավաճանության մասին, որը միշտ անշարժանում է հատկապես այն պահին, երբ հատուկ ջանքեր են պետք: Նա կարող էր լռեցնել թխահեր աղջկան, եթե բավականաչափ արագ գործեր, բայց հենց չափազանց մեծ վտանգի պատճառով կորցրեց գործելու ուժը: Ճգնաժամի պահերին մտածում էր, որ մարդ երբեք չի կռվում արտաքին թշնամու, այլ միշտ՝ իր մարմնի դեմ: Նույնիսկ հիմա, չնայած ջիկին, ստամոքսի բույս ցավը խանգարում էր մտքերի կապակցվածությանը: Նա հասկացավ, որ նույնը լինում է բոլոր հերոսական կամ ողբերգական իրավիճակներում. ռազմաճակատում, տանջախցում, սուզվող նավի վրա միշտ մոռացվում է, թե ինչի համար ես պայքարում, որովհետև մարմինն այնքան է ուռչում, մինչև լցնում է տիեզերքը, և նույնիսկ երբ վախը կամ ցավից ծչալը չի անշարժացնում քեզ, կյանքը վայրկյան առ վայրկյան վերածվում է պայքարի՝ սովի կամ ցրտի ու անքնության, ստամոքսի այրոցի կամ ցավող ատամի դեմ:

Նա բացեց օրագիրը: Կարևոր էր գոնե ինչ-որ բան գրի առնել: Հեռէկրանի կինը նոր երգ էր սկսել: Ձայնը փշրված ապակու սուր բեկորների պես խրվում էր ուղեղի մեջ: Նա փորձեց մտածել Օ'Բրայենի մասին, ում համար կամ ում գրում էր օրագիրը, բայց դրա փոխարեն սկսեց մտածել, թե ինչ կպատահի, երբ Մտքի ստիկանությունը ձերբակալի իրեն: Էական չէր անմիջապես՝ կսպանեն, թե՞ ոչ: Սպանությունը սպասելի էր: Բայց մահից առաջ (ոչ ոք

չէր խոսում նման բաներից, սակայն բոլորը գիտեին այդ մասին) լինում էին որոշակի հերթականությամբ խոստովանություններ, որոնց միջով պարտավոր էիր անցնել՝ հատակին սողալով, աղերսելով, որ խնայեն, կոտրված ոսկորների չխկչխկոցով, ջարդված ատամներով և պռճոկած մազերի արյունոտ թանձրուկներով:

Ինչո՞ւ պիտի դիմանաս այս ամենին. մեկ է, վերջը միշտ էլ նույնն է: Մի՞թե հնարավոր չէ կրճատել կյանքը մի քանի օրով կամ շաբաթով: Ոչ ոք երբեք չէր խուսափում մերկացումից, և բոլորը խոստովանում էին: Մտքի հանցագործություն կատարելուն պես պարզ էր դառնում, որ մինչև որոշակի օր մեռնելու ես: Այդ դեպքում ինչո՞ւ ապագայում դիմանալ այդ սարսափին, որը ոչինչ չէր փոխում:

Նա նորից փորձեց արթնացնել Օ'Բրայենի պատկերը, և այս անգամ ավելի մեծ հաջողությամբ, քան նախկինում: «Մենք կհանդիպենք այնտեղ, ուր խավար չկա», - ասել էր Օ'Բրայենը: Ուինսթոնը գիտեր՝ դա ինչ է նշանակում, կամ կարծում էր, թե գիտի: Այն վայրը, ուր խավար չկա, երևակայական ապագան է, որը երբեք չես տեսնի, բայց կանխատեսելով՝ կարող ես միստիկական կերպով հաղորդակցվել նրան: Բայց քանի դեռ հեռէկրանի ձայնն անդադար հնչում էր ականջների մեջ, այլևս չէր կարող հետևել մտքի ընթացքին: Նա սիգարետը դրեց բերանը: Ծխախոտի կեսն անմիջապես թափվեց լեզվին, ու դժվար էր թքել դառը փոշին: Մեծ եղբոր դեմքը լողաց մտքում՝ փոխարինելով Օ'Բրայենին: Ինչպես մի քանի օր առաջ, Ուինսթոնը գրպանից հանեց մի մետաղադրամ ու նայեց: Դեմքը նայում էր իրեն՝ ծանր, հանդարտ, հայրաբար. բայց ի՞նչ ժպիտ էր թաքնված սև բեղերի տակ: Եվ կապարե մահազանգի պես վերադարձան բառերը.

**ՊԱՏԵՐԱԶՄԸ ԽՂՂՂՈՒԹՅՈՒՆ Է
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆ Է
ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺ Է**

ՄԱՍ II

I

Առավոտ էր. Ուինսթոնը դուրս եկավ խցից, որ զուգարան գնա:

Երկար, վառ լուսավորված միջանցքի մյուս ծայրից մեկը գալիս էր նրա ուղղությամբ: Թխահեր աղջիկն էր: Չորս օր էր անցել այն երեկոյից, երբ նրան հանդիպեց հնավաճառի խանութի մոտ: Երբ աղջիկը մոտեցավ, Ուինսթոնը տեսավ, որ աջ թևը վիրակապի մեջ է, որը նկատելի չէր հեռվից, քանի որ կոմբինեզոնի գույնին էր: Երևի ձեռքը վնասել էր մեծ գեղադիտակը պատտելիս, որի վրա «ուրվագծվում էին» վեպերի սյուժեները: Դա սովորական բան էր Գրականության բաժնում:

Նրանց միջև տարածությունը մոտ չորս մետր էր, երբ աղջիկը սայթաքեց ու համարյա բերանքսիվայր ընկավ: Նա ցավի սուր ճիչ արձակեց: Երևի հենց վնասված թևի վրա էր ընկել: Ուինսթոնը կտրուկ կանգ առավ: Աղջիկը չոքել էր: Դեմքը կաթնագույն-դեղին էր, ինչից կարմիր բերանն ավելի էր ընդգծվում: Աչքերն աղաչանքով նայում էին Ուինսթոնին, և նրանց մեջ ավելի շատ վախ կար, քան ցավ:

Ուինսթոնի սիրտը համակեց մի տարօրինակ զգացում: Նրա առաջ թշնամի էր, որ փորձում էր սպանել իրեն. նրա առաջ նաև մարդ արարած էր, որը ցավ էր զգում կամ գուցե կոտորվածք ուներ: Ուինսթոնն արդեն բնագդաբար առաջ նետվեց օգնելու: Երբ տեսավ, թե աղջիկն ինչպես ընկավ վիրակապած թևի վրա, ասես ցավն իր մարմնով անցավ:

– Վնասվեցի՞ք, – հարցրեց նա:

– Ոչինչ: Թևս է: Հիմա կանցնի:

Շնչակտուր էր խոսում, ասես սիրտն անտանելի արագ բարախելիս լիներ: Եվ իսկապես շատ էր գունատվել:

- Կոտրվա՞ծք է,- ասաց Ուինսթոնը:

- Չէ, ամեն ինչ կարգին է: Ընդամենը մի պահ էր, ցավեց ու անցավ:

Աղջիկն առողջ ձեռքը պարզեց Ուինսթոնին, և նա օգնեց, որ վեր կենա: Աղջկա գույնը փոքր-ինչ տեղն էր եկել, երևում է՝ ավելի լավ էր զգում:

- Բան չկա,- արագ կրկնեց աղջիկը:- Մի քիչ ցավեցրի դաստակս: Շնորհակալ եմ, ընկեր:

Եվ նա միջանցքով քայլեց առաջ, նույնքան առույգ ու աշխույժ, ասես իրոք ոչինչ չէր պատահել: Ամբողջ տեսարանը երևի կես թուպեից էլ պակաս տևեց: Զգացմունքները դեմքին չարտահայտելու սովորությունը վերածվել էր բնագրի, ու նաև այդ ամենը ուղիղ հեռէկրանի դիմաց էր կատարվում: Այնուամենայնիվ, Ուինսթոնը դժվարությամբ զսպեց զարմանքը. այդ երկու-երեք վայրկյանի ընթացքում, երբ օգնում էր աղջկան, նա ինչ-որ բան էր խցկել Ուինսթոնի ափր: Կասկած չկար, որ այդ ամենը դիտավորյալ էր արվել: Ինչ-որ փոքր ու հարթ բան էր: Զուգարան մտնելով՝ Ուինսթոնն այն տեղափոխեց գրպանն ու շոշափեց մատների ծայրերով: Թղթի քառակուսի ծավված կտոր էր:

Միզարանի առաջ կանգնած՝ որոշ ջանքերից հետո նրան հաջողվեց բացել թուղթը: Ամենայն հավանականությամբ, ինչ-որ հաղորդագրություն էր պարունակում: Մի պահ նրան գայթակղեց զուգարանի խցերից մեկում անմիջապես կարդալու միտքը: Բայց դա մեծ անհեթեթություն կլիներ. նա լավ գիտեր: Սա այն վայրն էր, ուր կարող էիր միանգամայն վստահ լինել՝ հեռէկրաններն անդադար հետևում են քեզ:

Նա վերադարձավ իր խուցը, նստեց, թղթի կտորն անփույթ նետեց գրասեղանի մյուս թղթերի մեջ, դրեց ակնոցն ու մոտ հրեց խոսագրիչը: «Հինգ թուպե,- ասաց ինքն իրեն,- ամենաքիչը հինգ

րոպե»։ Սիրտը խփում էր վախեցնող աղմուկով։ Բարեբախտաբար, գործը, որով զբաղվում էր, սովորական էր՝ թվերի երկար շարքի ուղղում, ուստի մանրակրկիտ ուշադրություն չէր պահանջվում։

Գրությունը պետք է որ քաղաքական իմաստ ունենար։ Որքան ինքն էր հասկանում, երկու տարբերակ կար։ Առաջինը ամենահավանականն էր. աղջիկը Մտքի ոստիկանության գործակալ է, ինչից ինքը վախենում էր։ Անհասկանալի էր՝ Մտքի ոստիկանությունն ինչու է ընտրել իր հաղորդագրություններն այդպես տեղ հասցնելու ուղին, բայց գուցե նրանք իրենց պատճառներն ունեին։ Թղթին գրվածը գուցե սպառնալիք էր, կոչ, ինքնասպանություն գործելու հրաման, ինչ-որ թակարդ։ Բայց կար մեկ այլ՝ ավելի վայրի տարբերակ, որը գլուխ էր բարձրացնում, թեև Ուինսթոնն այն ծնշելու ապարդյուն փորձեր էր անում։ Իսկ գուցե այդ հաղորդագրությունը բոլորովին էլ Մտքի ոստիկանությունից չէ, այլ ինչ-որ ընդհատակյա կազմակերպությունից։ Գուցե եղբայրությունն իսկապես գոյություն ուներ։ Գուցե աղջիկը անդամ էր։ Անկասկած, գաղափարն անհեթեթ էր, բայց մտքում ծնվեց այն պահին, երբ շոշափեց թղթի կտորը։ Միայն թույններ անց նրա գլխում ավելի հավանական բացատրություն ծագեց։ Եվ նույնիսկ հիմա, երբ բանականությունն ասում էր, որ հաղորդագրությունը թերևս մահ է նշանակում, Ուինսթոնը չէր ուզում հավատալ, և անիմաստ հույսը չէր մարում, սիրտը բարբախում էր, ու նա դժվարությամբ էր զսպում ծայնի դողը, երբ թվերը թելադրում էր խոսագրիչին։

Նա փաթաթեց մշակած թղթերի կապոցը ու խցկեց օդաճնշական խողովակի մեջ։ Ութ թույն էր անցել։ Քթարմատին շտկեց ակնոցը, հոգոց հանեց ու մոտ քաշեց հաջորդ փաթեթը, որի վրա թղթի կտորն էր դրել։ Ուինսթոնը հարթեցրեց թուղթը։ Վրան խոշոր, չճևավորված ձեռագրով գրած էր.

Ես սիրում եմ ձեզ։

Այնպես էր ապշել, որ նույնիսկ չկարողացավ հանցանքի առարկան անմիջապես գցել հիշողության անցքը: Չնայած քաջ գիտակցում էր, թե որքան վտանգավոր է չափից դուրս հետաքրքրասիրությունն ցուցաբերելը, չկարողացավ դիմադրել ու նորից կարդաց՝ համոզվելու, որ գրածն աչքին չի երևացել:

Մինչև ընդմիջումը աշխատելը շատ դժվարացավ: Ստիպված էր միտքը կենտրոնացնել մի շարք ծանծրալի գործերի վրա, բայց ամենավատն այն էր, որ պետք էր հեռէկրանից թաքցնել հուզմունքը: Թվաց՝ ստանոքսն այրվում է: Լանչը շոգ, բազմամարդ, աղմկոտ ճաշարանում իսկական տառապանք էր: Հույս ուներ, որ այդ ժամին գոնե մի քիչ մենակ կմնա, բայց դժբախտաբար տխմար Փարսոնսը շրմփոցով ընկավ կողքին, քրտինքի սուր հոտով գրեթե խլացրեց շոգեխաշած մսի մետաղական հոտը ու երկար-բարակ խոսք բացեց Ատելության շաբաթվա նախապատրաստությունների մասին: Հատկապես խանդավառված էր Մեծ եղբոր գլխի՝ երկումետրանոց մոդելով, որը միջոցառման համար պապյե մաշեից պատրաստում էր իր դստեր խումբը՝ Լրտեսների միությունում: Զայրացնում էր հատկապես, որ ծայների գվվոցի մեջ Ուինսթոնը վատ էր լսում Փարսոնսին և անընդհատ ստիպված էր խնդրել, որ կրկնի միևնույն տխմարությունը: Միայն մեկ անգամ տեսավ աղջկան՝ սեղանի մոտ, սրահի հեռավոր անկյունում, երկու ուրիշ աղջիկների հետ: Աղջիկը կարծես չէր նկատել նրան, և Ուինսթոնն այլևս չնայեց այդ ուղղությամբ:

Օրվա երկրորդ կեսն ավելի տանելի էր: Լանչից անմիջապես հետո նուրբ, բարդ աշխատանք ուղարկվեց, որը խլելու էր մի քանի ժամ. նա ստիպված էր մնացած ամեն ինչ մի կողմ դնել: Պետք էր այնպես կեղծել երկու տարվա վաղեմություն ունեցող արտադրական հաշվետվությունները, որպեսզի վարկաբեկվի Ներքին կուսակցության մի հայտնի անդամ, ում գլխին հիմա սև ամպեր էին կուտակվում: Այդ գործում Ուինսթոնը հմուտ էր, և նրան հաջողվեց ավելի քան երկու ժամ մոռանալ աղջկան: Հետո նրա դեմքը

1984

վերականգնվեց հիշողության մեջ, և Ուինսթոնին համակեց մենակ մնալու մոլեգին, անդիմադրելի ցանկություն: Մինչև մենակ չմնա, հնարավոր չի լինի վերլուծել տեղի ունեցածը: Երեկոյան պետք է մասնակցեր Հանրային կենտրոնի միջոցառմանը: Նա ճաշարանում կուլ տվեց ևս մի անհամ ճաշ, շտապեց Կենտրոն, մասնակցեց «խմբակային քննարկման» հանդիսավոր տխմարությանը, երկու անգամ սեղանի թենիս խաղաց, խմեց մի քանի բաժակ ջին և կես ժամ դասախոսություն լսեց՝ «Անգոսցի կապը շախմատի հետ» վերնագրով: Նրա հոգին կծկվում էր ձանձրոյթից, բայց, իր սովորությանը հակառակ, չէր ուզում խուսափել Կենտրոնում կազմակերպված երեկոյից: «*ես սիրում եմ ձեզ*» բառերը ողջ մնալու ցանկություն էին արթնացրել նրա մեջ, և մանր վտանգների ենթարկվելը հիմարություն էր թվում: Միայն ժամը քսաներեքին, երբ արդեն տանն էր, անկողնու մեջ (խավարում նույնիսկ հեռէկրանները վտանգավոր չեն, եթե լուռ ես) վերագտավ մտածելու ունակությունը:

Մի տեխնիկական խնդիր կար, որը պետք է լուծվեր. ինչպես շփվել աղջկա հետ ու հանդիպում կազմակերպել: Նա մի կողմ էր թողել այն ենթադրությունը, թե աղջիկը ծուղակ է լարում իր դեմ: Գիտեր, որ այդպես չէ, որովհետև աղջիկը ակնհայտորեն հուզվում էր երկտողն իրեն հանձնելիս: Ակնհայտ էր, որ մահու չափ վախեցած է, ու դա բնական էր: Ուինսթոնի մտքով անգամ չէր անցնում մերժել նրա առաջարկը: Ընդամենը հինգ օր առաջ մտադրվել էր սալաքարով ջարդուփշուր անել աղջկա գանգը, բայց դա այլևս կարևոր չէր: Ուինսթոնը պատկերացրեց նրա մերկ, երիտասարդ մարմինը, ինչպես տեսել էր իր երազում: Նրան թվացել էր, թե աղջիկն էլ մյուսների պես հիմար է, գլուխը ստերով ու ատելությամբ լի, իսկ գոտկատեղից ներքև՝ սառույց: Ինչ-որ տենդ համակեց նրան այն մտքից, որ կարող է կորցնել աղջկան, որ սպիտակ երիտասարդ մարմինը կարող է սահել-հեռանալ իրենից: Իսկ ամենից ավելի վախենում էր, որ նա պարզապես կարող է փոխել միտքը, եթե ինքը շտապ չկապվի նրա հետ: Բայց հանդիպումը չափազանց

դժվար էր: Նույնն էր, թե շախմատում փորձես քայլ անել մատից հետո: Որ կողմ շրջվում էիր, հեռեկրանը նայում էր դեմքիդ: Իրականում նրա հետ շփվելու բոլոր հնարավոր ուղիները հաշվել էր երկտողը կարդալուց հետո՝ հինգ թուպեի ընթացքում, բայց հիմա, երբ մտածելու ժամանակ կար, հերթով վերլուծեց դրանք, ասես գործիքներ էր դասավորում սեղանին:

Ակնհայտ է, որ այս առավտովա հանդիպումը կրկնել չի կարելի: Եթե աղջիկն աշխատեր Արձանագրությունների բաժնում, ավելի հեշտ կլիներ, բայց Ուինսթոնը շատ աղոտ էր պատկերացնում, թե որտեղ է Գրականության բաժնի շենքը, և պատրվակ չունեի այնտեղ գնալու համար: Եթե իմանար՝ որտեղ է ապրում նա և որ ժամին է դուրս գալիս աշխատանքից, կարող էր ճանապարհին հանդիպելու հնար գտնել. բայց վտանգավոր կլիներ նրա ետևից գնալ տուն. ստիպված էր լինելու թրև գալ նախարարության մոտ, ինչը կնկատվեր: Ինչ վերաբերում է փոստով նամակ ուղարկելուն, ապա դա նույնիսկ քննարկման ենթակա չէր: Նույնիսկ գաղտնիք չէր, որ բոլոր նամակները բացվում են: Իրականում շատ քչերն էին նամակ գրում: Եթե անհրաժեշտ էր նամակ ուղարկել, գոյություն ունեին պատրաստի արտահայտություններով բացիկներ. ընդամենը պետք էր ջնջել քեզ ոչ անհրաժեշտ դարձվածքները: Ամեն դեպքում, նա չգիտեր աղջկա անունը, առավել ևս՝ հասցեն: Ի վերջո որոշեց, որ ամենաապահով տեղը ծաշարանն է: Եթե իրեն հաջողվի նստել աղջկա սեղանի մոտ, ինչ-որ տեղ՝ սենյակի կենտրոնում, հեռեկրանի աչքից հեռու, և եթե շուրջը խոսակցությունների բավարար բզզոց լինի, և այդ ամենը շարունակվի, ասենք, երեսուն վայրկյան, հնարավոր կլինի մի քանի խոսք փոխանակել:

Դրանից հետո մեկ շաբաթ շարունակ կյանքը վերածվեց անհանգիստ երազի: Հաջորդ օրը աղջիկը ծաշարան մտավ, երբ Ուինսթոնն արդեն հեռանում էր ազդանշանի սուլոցից հետո: Հավանաբար նրան տեղափոխել էին ավելի ուշ հերթափոխի: Նրանք առանց նայելու անցան իրար կողքով: Հաջորդ օրը նա ծաշարանում

էր սովորական ժամին, բայց՝ երեք ուրիշ աղջիկների հետ և ուղիղ հեռէկրանի տակ: Հետո երեք սոսկալի օր ընդհանրապես չհայտնվեց: Ուինսթոնի միտքն ու մարմինը անտանելի զգայուն էին դարձել, մի տեսակ թափանցիկ, և յուրաքանչյուր շարժում, ամեն մի հնչյուն, հպում, բառ, որ ստիպված էր ասել կամ լսել, վերածվում էին խոշտանգման: Նույնիսկ քնի մեջ չէր կարող փախչել նրա պատկերից: Այդ օրերին Ուինսթոնը չէր դիպչում օրագրին: Միակ բանը, որ թեթևացնում էր, աշխատանքն էր. աշխատելիս երբեմն կարողանում էր անընդմեջ տասը թույն մոռացության գիրկն ընկնել: Բացարձակ գաղափար չուներ, թե ինչ է կատարվում իր հետ: Ոչ ոքի չէր կարող հարցնել: Գուցե աղջկան «գոլորշացրել» էին, գուցե ինքնասպան էր եղել, գուցե տեղափոխվել էր Օվկիանիայի մյուս ծայրը. և ինչը ամենավատն էր ու ամենահավանականը, գուցե պարզապես փոխել էր միտքն ու որոշել խուսափել Ուինսթոնից:

Հաջորդ օրը նա նորից հայտնվեց: Թևն այլևս վիրակապի մեջ չէր, միայն դաստակը փաթաթված էր կաչուն սպեղանիով: Ուինսթոնն այնպիսի թեթևություն զգաց նրան տեսնելով, որ չկարողացավ զսպել իրեն և մի քանի վայրկյան ուղիղ նայեց աղջկան: Հաջորդ օրը քիչ էր մնում հաջողվեր խոսել նրա հետ: Երբ մտավ ծաշարան, նա նստած էր պատից շատ հեռու ու սեղանի մոտ մենակ էր: Դեռ վաղ էր, ու սրահը չէր լցվել մարդկանցով: Հերթն առաջ էր գնում, Ուինսթոնը գրեթե մոտեցել էր վաճառասեղանին, բայց երկու թույն կանգնած մնաց, որովհետև իրենից առաջ ինչ-որ մեկը դժգոհում էր, թե չի ստացել սախարիսի իր հաբը: Բայց աղջիկը դեռ մենակ էր, երբ Ուինսթոնը վերցրեց սկուտեղն ու գնաց նրա կողմը: Անփույթ քայլեց աղջկա ուղղությամբ, իսկ աչքերն իբր տեղ էին փնտրում նրա սեղանի ետևում: Իրարից երեք մետրի վրա էին: Եվս երկու վայրկյան, և կիրագործի նպատակը: Հետո թիկունքից մի ձայն կանչեց. «Սմիթ»: Նա ձևացրեց, թե չի լսել: «Սմիթ» կրկնեց ձայնը ավելի բարձր: Ձևանալն անիմաստ էր: Ուինսթոնը շրջվեց: Խարտյաշ մազերով, տխմար դեմքով երիտասարդը՝

Ուիլշեր անունով, որին հազիվ էր ճանաչում, ժպտալով հրավիրում էր զբաղեցնել ազատ տեղն իր սեղանի մոտ: Մերժելն անվտանգ չէր: Հիմա, երբ իրեն արդեն ճանաչել էին, չէր կարող գնալ ու նստել անձանոթ աղջկա սեղանի առաջ: Դա չափից դուրս նկատելի կլի- նի: Ուինսթոնը նստեց՝ սիրալիր ժպտալով: Հիմար շիկահերի դեմքը փայլեց ի պատասխան: Ուինսթոնը պատկերացրեց, թե ոնց է քլուն- գով խփում գանգին՝ ուղիղ կենտրոնին: Քիչ անց աղջկա սեղանի մոտ արդեն ազատ տեղ չկար:

Բայց նա պետք է որ տեսած լիներ, թե Ուինսթոնն ինչպես է մոտենում, ու հավանաբար հասկացել էր ակնարկը: Հաջորդ օրը Ուինսթոնն աշխատեց շուտ գալ: Այո՛, աղջիկը նստած էր սեղանի մոտ՝ նույն տեղում և կրկին մենակ: Հերթում Ուինսթոնից անմիջա- պես առաջ մի փոքրամարմին, արագաշարժ, բզեզանման մարդ էր՝ հարթ դեմքով ու մանր, կասկածամիտ աչքերով: Երբ Ուինսթոնը, սկուտեղը ձեռքին, շրջվեց վաճառասեղանից, տեսավ, թե այդ փոք- րամարմինն ինչպես է ուղիղ գնում դեպի աղջկա սեղանը: Հույսերը նորից հօդս ցնդեցին: Հեռու սեղանի մոտ ազատ տեղ կար, բայց փոքրամարմին տղամարդու արտաքինը հուշում էր, որ նա հոգ կտանի իր հարմարավետության մասին ու կընտրի ամենաազատ սեղանը: Ծանրացած սրտով Ուինսթոնը հետևեց նրան: Ոչինչ չի ստացվի, եթե աղջիկը մենակ չլինի: Այդ պահին ահավոր թնդյուն լսվեց: Փոքրամարմին մարդը չորեքթաթ հայտնվել էր հատակին, սկուտեղը թռչում էր, ապուրի ու սուրճի երկու առվակ հոսում էր հատակին: Նա վեր կացավ՝ չարացած հայացք նետելով Ուինսթոնի վրա, հավանաբար կասկածելով, որ նա է ոտք գցել: Բայց ամեն ինչ կարգին էր: Հինգ վայրկյանից, թնդացող սրտով, Ուինսթոնն արդեն նստած էր աղջկա սեղանի մոտ:

Նա չէր նայում աղջկան: Դատարկեց սկուտեղն ու արագ սկսեց ուտել: Շատ կարևոր էր անմիջապես խոսել, քանի դեռ ոչ ոք չէր եկել, բայց մի ահավոր սարսափ էր համակել նրան: Մեկ շաբաթ էր անցել այն օրից, երբ աղջիկն առաջին անգամ մոտեցավ իրեն:

1984

Գուցե փոխել է միտքը, հաստատ փոխել է: Անհնար է, որ այս ամենը երջանիկ ավարտ ունենա. իրական կյանքում նման բաներ չեն լինում: Նա գուցեև հրաժարվել խոսելուց, եթե այդ պահին չտեսներ Ամփլֆորթին՝ մազոտ ականջներով պոետին, որը սկուտեղը ձեռքին՝ նստելու տեղ փնտրելով, կաղին էր տալիս սրահում: Ամփլֆորթը ինչ-որ աղոտ կապ ուներ Ուինսթոնի հետ և հաստատ կնստեր նրա սեղանի մոտ, եթե տեսներ նրան: Գործելու համար մնացել էր մեկ րոպե: Թե՛ Ուինսթոնը, թե՛ աղջիկը համառորեն ուտում էին ջրիկ ռագուն, որն իրականում լոբու ապուր էր: Ուինսթոնը կիսաձայն խոսեց: Իրար չէին նայում. համաչափ, գդալ առ գդալ բերաններն ուղարկելով վռիկը՝ շշուկով և առանց դեմքի արտահայտությունը փոխելու ասում էին անհրաժեշտ բառերը:

– Ժամը քանիսի՞ն եք դուրս գալիս աշխատանքից:

– Տասնութ երեսունին:

– Որտե՞ղ կարող ենք հանդիպել:

– Հաղթանակի հրապարակում, արձանի մոտ:

– Այնտեղ ամենուր հեռէկրաններ են:

– Դա կարևոր չէ, այնտեղ մարդիկ շատ են:

– Որևէ ազդանշա՞ն:

– Ո՛չ: Չմոտենաք ինձ, մինչև բազմության մեջ չլինեմ: Եվ չնայեք ինձ: Ուղղակի մոտակայքում եղեք:

– Ժամը քանիսի՞ն:

– Տասնիննին:

– Շատ լավ:

Ամփլֆորթը չտեսավ Ուինսթոնին ու նստեց ուրիշ սեղանի մոտ: Նրանք այլևս չխոսեցին և չէին նայում իրար, որքան դա հնարավոր է նույն սեղանի մոտ դեմ դիմաց նստած մարդկանց համար: Աղջիկն արագ ավարտեց ճաշն ու գնաց, իսկ Ուինսթոնը մնաց՝ ծխելու:

Ուինսթոնը Հաղթանակի հրապարակում էր նշանակված ժամից շուտ: Հետուառաջ էր անում հսկա ակոսավոր սյան հիմքի մոտ,

որի գագաթից Մեծ եղբոր արձանը նայում էր դեպի երկնակամարի հարավակողմը, որտեղ Թռիչքուղի մեկի համար մղված ծակատամարտում նա ջախջախել էր եվրասիական օդուժը (մի քանի տարի առաջ այն արևելասիական էր): Հանդիպակաց փողոցում ձիավորի արձան կար. ենթադրվում էր, որ Օլիվեր Քրոմվելն էր: Նշանակված ժամից հինգ րոպե էր անցել, աղջիկը դեռ չկար: Դարձյալ սարսափելի վախը համակեց Ուինսթոնին: Չի գալու, միտքը փոխել է: Ուինսթոնը դանդաղ քայլեց դեպի հրապարակի հյուսիսային կողմը և մի տեսակ կիսատ ուրախացավ՝ ճանաչելով Սուրբ Մարթինի եկեղեցին, որի զանգերը, երբ դեռ զանգեր ուներ, ղողանջում էին. «Երեք ֆարթինգ պարտք ես ինձ»: Հետո տեսավ արձանի պատվանդանի մոտ կանգնած աղջկան, որը կարդում էր, կամ ձևացնում էր, թե կարդում է սյան վրա պարուրածն բարձրացող ազդագիրը: Մոտենալն անվտանգ չէր, քանի դեռ ավելի շատ մարդ չէր հավաքվել: Պատվանդանի շուրջը ամենուր հեռէկրաններ էին: Բայց այդ պահին ինչ-որ տեղ՝ ձախից, գոռգոռոցներ ու ծանր մեքենաների աղմուկ լսվեց: Հանկարծ բոլորը սկսեցին վազել այդ կողմը: Աղջիկն արագ անցավ հուշարձանի պատվանդանի մոտ տեղադրված առյուծների կողքով ու միացավ վագոնների խմբին: Ուինսթոնը հետևեց նրան: Վազելիս նա գոռոցներից հասկացավ, որ եվրասիացի ռազմագերիների խումբ են տանում:

Մարդկային մի հոծ զանգված արդեն փակել էր հրապարակի հարավային կողմը: Ուինսթոնը, որը սովորաբար նման խառնամբուխի մեջ նախընտրում էր հայտնվել ծայրին, խցկվում էր, խառնվում, գալարվում՝ փորձելով ուղի հարթել դեպի ամբոխի կենտրոնը: Շուտով արդեն կարող էր մեկնել ձեռքն ու դիպչել աղջկան, բայց մտե անանցանելի պատի նման ճանապարհը փակեցին մի հսկայամարմին պրոլ և գրեթե նույնքան հսկայական կին, որ հավանաբար նրա կողակիցն էր: Ուինսթոնը գալարվեց և ամբողջ ուժով ուռ մխրձեց նրանց արանքը: Մի պահ նրան թվաց՝ փորոտիքը մինչև միջուկն աղվեց երկու մկանուտ գոտկատեղի արանքում, բայց ևս այսպես

անցավ՝ մի քիչ քրտնելով: Նա աղջկա կողքին էր: Կանգնած էին ուս ուսի, և երկուսն էլ սևեռուն առաջ էին նայում:

Բեռնատար մեքենաների մի երկար շարք դանդաղ անցնում էր փողոցով. ամեն անկյունում զգաստ կանգնած էին փայտացած դեմքերով, ինքնաձիգներով զինված պահնորդները: Մեքենաների մեջ կիպ, կողք կողքի կույզ էին եկել հնամաշ կանաչավուն համազգեստներով փոքրամարմին դեղնավուն տղամարդիկ: Նրանց տխուր, մոնղոլական դեմքերը լարված ու միանգամայն անտարբեր նայում էին թափքակողերի վրայից: Ժամանակ առ ժամանակ, երբ որևէ բեռնատար ցնցվում էր, մետաղի զնգոց էր լսվում. բոլոր բանտարկյալները ոտնաշղթաներով էին: Իրար ետևից անցնում էին տխուր դեմքերով լի բեռնատարները: Ուփնսթոնը լսել էր նրանց անցնելը, բայց հազվադեպ էր տեսել: Աղջկա ուսն ու թևը՝ մինչև արմունկը, սեղմվել էին նրան: Այտն այնքան մոտ էր, որ Ուփնսթոնը համարյա զգում էր նրա ջերմությունը: Աղջիկն անմիջապես վերցրեց նախաձեռնությունը, ձիշտ այնպես, ինչպես ճաշարանում: Նա սկսեց խոսել նույն անարտահայտիչ ձայնով, ինչպես այն ժամանակ, շուրթերը հազիվ էին շարժվում, իսկ շշուկը հեշտությամբ սուզվում էր ժխորի և բեռնատարների մոնչոցի մեջ:

– Լսո՞ւմ եք ինձ:

– Այո:

– Կարո՞ղ եք կիրակի կեսօրին դուրս գալ:

– Այո:

– Ուրեմն ուշադիր լսեք: Դուք պետք է հիշեք: Գնացեք Փահինգթոն կայարան:

Ուփնսթոնին ապշեցրեց զինվորական ճշգրտությունը, որով նա ուրվագծեց Ուփնսթոնի անցնելիք ճանապարհը: Կես ժամ՝ գնացքով. կայարանից՝ ձախ. երկու կիլոմետր՝ ճանապարհով. դարպաս՝ առանց վերևի հեծանի. արահետ դաշտի միջով. խոտածածկ շավիղ. ճանապարհ թիերի միջով. չորացած ծառ, վրան՝ մամուռ: Ասես գլխում քարտեզ կար:

- Կարո՞ղ եք հիշել այս ամենը,- վերջապես շշնջաց նա:

- Այո:

- Կթեքվեք ձախ, հետո աջ, ապա նորից ձախ: Իսկ դարպասի վրա հեծան չկա:

- Այո: Ո՞ր ժամին:

- Տասնհինգին մոտ: Գուցե ստիպված լինեք սպասել: Ես կգամ ուրիշ ծանապարհով: Վստա՞հ եք, որ ամեն ինչ հիշում եք:

- Այո:

- Ուրեմն արագ հեռացեք:

Դա հիշեցնելու կարիք չկար: Բայց մի պահ նրանք չէին կարողանում ազատվել ամբոխից: Բեռնատարները դեռ անցնում էին իրար ետևից, մարդիկ անհագ նայում էին՝ զարմանքից բաց բերաններով: Սկզբում բղավոցներ ու սուլոցներ էին լսվում, բայց աղմկում էին միայն ամբոխի մեջ գտնվող Կուսակցության անդամները, ու շուտով նրանք էլ լռեցին: Հիմա իշխում էր միայն սովորական հետաքրքրասիրությունը: Օտարականները՝ եվրասիայից, թե Արևելասիայից, նման էին անծանոթ կենդանիների: Դու նրանց երբեք չես տեսել, միայն ռազմագերու դերում, այն էլ՝ հպանցիկ: Անհայտ էր նաև նրանց հետագա ճակատագիրը, բացի նրանցից, որոնց կախաղան էին հանում որպես ռազմական հանցագործների. մյուսներն ուղղակի անհետանում էին, ենթադրվում էր՝ տաժանապարտների ճամբարներում: Կլոր մոնղոլական դեմքերին փոխարինեցին ավելի եվրոպական տիպի դեմքերը՝ կեղտոտ, մազակալած, ուժասպառ: Երբեմն որևէ մագոտ դեմքից աչքերը տարօրինակ լարվածությամբ նայում էին Ուինսթոնի աչքերին և առկայծելով՝ կրկին անհետանում: Մեքենաների երթն ավարտվում էր: Վերջին բեռնատարի թափքում Ուինսթոնը տեսավ մի տարիքով մարդու՝ ճերմակ մազակալած դեմքով. կանգնած էր ուղիղ, դաստակները խաչած, ասես ընտելացել էր, որ թևերը պետք է անազատության մեջ լինեն: Եկավ Ուինսթոնի ու աղջկա բաժանվելու ժամանակը: Բայց վերջին պահին, մինչ ամբոխն իր մեջ էր պահում նրանց, աղջկա ձեռքը դիպավ իր ձեռքին և արագ սեղմեց:

1984

Դա տևեց ընդամենը տասը վայրկյան, բայց նրան թվաց՝ վաղուց են ձեռք ձեռքի կանգնած: Ուինսթոնը հասցրեց ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել նրա ձեռքը: Ուշադիր զննեց երկար մատները, սուր եղունգները, աշխատելուց պնդացած, կոշտուկապատ ափը, հարթ մաշկը՝ դաստակի տակ: Շոշափելով այնպես զննեց, որ արդեն տեսնելով կծանաչեր: Նույն ակնթարթում Ուինսթոնը հասկացավ, որ չգիտի՝ ինչ գույնի են աղջկա աչքերը: Հավանաբար դարչնագույն էին, բայց թխահերները երբեմն կապույտ աչքեր են ունենում: Գլուխը շրջելն ու նրան նայելը անհեթեթություն կլիներ: Ամուր բռնած ձեռքերով, մարմինների միջև սեղմված, նրանք համառորեն նայում էին առաջ, և Ուինսթոնին թախծոտ նայում էին ոչ թե աղջկա, այլ տարեց գերու աչքերը՝ մազե մացառուտների միջից:

II

Ուինսթոնը բարձրանում էր կածանն ի վեր՝ առկայծող լույսի ու ստվերի միջով, թաղվելով ոսկելույսի լճակներում՝ այնտեղ, որտեղ սաղարթը խիտ չէր: Ձախից, ծառերի տակ, հողի վրա մշուշի պես տարածվել էին զանգակածաղիկները: Օդն ասես համբուրում էր մաշկը: Մայիսի երկուսն էր: Անտառի սրտից լսվում էր վայրի աղավնիների միալար դզզոցը:

Նա մի քիչ շուտ էր եկել: Ուղևորության ընթացքում բարդություններ չեղան. երևում է՝ աղջիկն այնքան փորձված էր, որ Ուինսթոնն ավելի քիչ էր վախենում, քան նման այլ իրավիճակներում: Հավանաբար կարելի էր նրան վստահել ապահով տեղ գտնելու գործը: Չնայած չէր կարելի ասել, թե գյուղում ավելի ապահով է, քան Լոնդոնում: Հեռէկրաններ, իհարկե, չկային, բայց միշտ կար թաքցված խոսափողների վտանգը, որոնցով ձայնը կարող էր ձայնագրվել ու ճանաչվել. բացի այդ, հեշտ չէր մենակ մեկնել ուղևորության ու չհայտնվել ուշադրության կենտրոնում: Հարյուր կիլոմետրից պակաս

տարածությունների համար անձնագրում նշում անել չէր պահանջվում, բայց երկաթուղային կայարանների մոտ երբեմն պարեկներ էին լինում, որոնք ստուգում էին Կուսակցության ցանկացած անդամի փաստաթղթերը և անհարմար հարցեր տալիս: Այնուամենայնիվ, պարեկներ չհայտնվեցին, և, կայարանից ճանապարհվելով, ուսի վրայից ժամանակ առ ժամանակ զգույշ հայացքներ նետող Ուինսթոնը համոզվեց, որ իրեն չեն հետևում: Գնացքը լի էր պրովներով. ամառային եղանակը տոնական տրամադրություն էր հաղորդել նրանց: Փայտե նստարաններով վագոնը, որով ճամփորդում էր, ամբողջությամբ գրավել էր մի հսկայական ընտանիք՝ անատամ մեծ տատիկից մինչև մեկ ամսական փոքրիկը, որոնք մեկնում էին գյուղ կեսօրը խնամիների հետ անցկացնելու, և ինչպես անկաշկանդ բացատրեցին Ուինսթոնին՝ սև շուկայից մի քիչ կարագ գնելու:

Ծառերը նահանջեցին, և մի թռչնից Ուինսթոնը ելավ աղջկա սասած կածանը. դա անասունների բացած արահետ էր, որ անցնում էր թփերի միջով: Ուինսթոնը ժամացույց չունեց, բայց զգում էր. դեռ ժամը տասնհինգը չկա: Զանգակաձաղիկներն այնքան խիտ էին ոտքերի տակ, որ անհնար էր չտորոել: Նա ծնկի իջավ ու սկսեց հավաքել ձաղիկները՝ մասամբ ժամանակ սպանելու, մասամբ՝ աղջկան հանդիպելիս նրան ծաղկեփունջ նվիրելու աղոտ ցանկությամբ: Մի մեծ փունջ էր հավաքել ու զգում էր նրանց թույլ, սրտխառնոց առաջացնող հոտը, երբ քարացավ թիկունքից լսած ձայնից. չէր սխալվում. ժյուղերը ճարճատում էին ինչ-որ մեկի ոտքերի տակ: Նա շարունակեց զանգակաձաղիկներ հավաքել: Ամենալավ տարբերակը դա էր: Գուցե աղջիկն էր, կամ, ի վերջո, գուցե իրեն հետևում են: Շրջվել՝ նշանակում էր ցույց տալ, որ մեղավոր ես: Նա պոկեց էլի մի ծաղիկ, ևս մեկը: Մի ձեռք թեթև դիպավ ուսին:

Նա վեր նայեց: Աղջիկն էր: Օրորեց գլուխը՝ ըստ երևույթին զգուշացնելով, որ Ուինսթոնը պետք է լռի, հետո հետ մղեց թփերն ու նեղ արահետով արագ առաջնորդեց դեպի անտառ: Երևում էր՝ էլի է եղել այդտեղ, քանի որ վստահ շրջանցում էր ճահճուտները:

1984

Ուինսթոնը, ծաղկեփունջը ձեռքին, հետևում էր Նրան: Նրա առաջին զգացողությունը թեթևությունն էր, բայց հիմա, երբ հետևում էր իրեն առաջնորդող, ալ կարմիր գոտու պրկումով ազդրերն ընդգծած ուժեղ գեղիրան մարմնին, սեփական ստորադասության զգացումը սկսեց ճնշել Նրան: Նույնիսկ հավանական էր թվում, որ եթե աղջիկը շրջվի ու Նայի իրեն, ի վերջո միտքը կփոխի: Օդի քնքշությունն ու տերևների կանաչը վախեցնում էին Նրան: Դեռևս կայարանից գալիս մայիսյան արևը ստիպել էր իրեն կեղտոտ ու հիվանդոտ, տնաբույս արարած զգալ, որի մաշկի ծակոտիներում Լոնդոնի մրոտ փոշին էր: Ուինսթոնը մտածեց, որ մինչև հիմա աղջիկն իրեն երբեք չի տեսել բաց տարածության մեջ՝ արևի լույսի տակ: Նրանք հասան ընկած ծառին, որի մասին ասել էր աղջիկը: Նա ցատկեց և իրարից հեռացրեց թփերը, որոնք փակել էին ճանապարհը: Երբ Ուինսթոնը գնաց Նրա ետևից, պարզեց, որ իրենք բնական բացատում են՝ փոքրիկ խոտածածկ բլրակի վրա՝ շրջապատված բարձր նորատունկ ծառերով, որոնք թաքցնում էին բացատը: Աղջիկը կանգնեց ու շրջվեց:

– Հասանք,- ասաց նա:

Ուինսթոնը նայում էր աղջկան մի քանի քայլ հեռավորությունից: Ու չէր համարձակվում մոտենալ:

– Չէի ուզում խոսել ճանապարհին,- շարունակեց աղջիկը,- հնարավոր է՝ թաքցրած խոսափող լինի: Քիչ հավանական է, բայց հնարավոր է: Միշտ էլ հնարավոր է, որ այդ խոզերից մեկնումեկը ճանաչի ձայնդ: Այստեղ ապահով է:

Ուինսթոնը դեռ մոտենալու համարձակություն չուներ:

– Այստեղ ապահով է,- կրկնեց նա:

– Այո՛: Նայեք ի՞նչ ծառեր են:- Դրանք փոքրիկ հացենիներ էին, որ մի ժամանակ կտրվել, ապա նորից բողբոջել էին՝ դառնալով մարդու դաստակից ոչ հաստ քեղիների անտառ:- Այնքան բարակ են, որ հնարավոր չէ խոսափող թաքցնել: Բացի այդ, ես էլի եմ եղել այստեղ:

Նրանք ընդամենը խոսում էին: Ուիսսթոնը մի քիչ էլ էր մոտեցել: Աղջիկը շիտակ կանգնած էր նրա առաջ ու ժպտում էր թույլ հեզանքով, ասես մտածում էր՝ Ուիսսթոնն ինչո՞ւ է այսքան հապաղում: Զանգակածաղիկները թափվել էին գետնին: Ու դա ոչ ոք չէր նկատել: Նա բռնեց աղջկա ձեռքը:

– Կհավատա՞ք,– ասաց,– մինչ այս պահը չգիտեի՝ ինչ գույնի են ձեր աչքերը:– Աղջկա աչքերը դարչնագույն էին, բաց դարչնագույն, մուգ թարթիչներով:– Հիմա, երբ տեսաք՝ ինչպիսին եմ, հաճելի՞ է նայել ինձ:

– Այո, իհարկե:

– Երեսունինը տարեկան եմ: Ունեմ կին, որից չեմ կարողանում ազատվել: Երակների լայնացում ունեմ: Հինգ արհեստական ատամ:

– Դա ինձ չի հետաքրքրում,– ասաց աղջիկը:

Հաջորդ պահին, դժվար է ասել, թե ում նախաձեռնությամբ, աղջիկը հայտնվեց նրա գրկում: Սկզբում Ուիսսթոնը ոչինչ չէր զգում, միայն մտածում էր՝ չի՞ կարող պատահել: Երիտասարդ մարմինը սեղմվել էր նրան, մուգ, թանձր մազերը դիպչում էին դեմքին, և, այո՛, աղջիկը բարձրացրել էր գլուխն, ու Ուիսսթոնը համբուրում էր խոշոր, կարմիր շուրթերը: Նա փաթաթվել էր Ուիսսթոնի պարանոցին ու շնչում էր՝ «թանկագինս, գանձս, սիրելիս»: Ուիսսթոնը նրան ձգեց ներքև, և աղջիկը չէր դիմադրում, Ուիսսթոնը կարող էր ուզածն անել: Բայց իրականում ֆիզիկապես ոչինչ չէր զգում, բացի հպումից: Միակ զգացողությունը հպարտությունն էր, նաև կասկածը՝ մի՞թե իրականությունն է: Ուրախ էր, որ այդ ամենը կատարվում է, բայց ֆիզիկական ցանկությունն չունեիր: Ամեն ինչ շատ արագ կատարվեց... նրա ջահելությունն ու գեղեցկությունը վախեցնում էին Ուիսսթոնին... սովորել էր առանց կանանց ապրելուն... ինքն էլ չէր հասկանում՝ ինչու: Աղջիկը նստեց ու մազերի միջից հանեց զանգակածաղիկը: Հետո սեղմվեց Ուիսսթոնին ու գրկեց մեջքը:

– Ոչինչ, սիրելիս: Շտապելու բան չունենք: Ամբողջ ցերեկը մեր տրամադրության տակ է: Լավ թաքստոց է, չէ՞: Գտա, երբ մի

անգամ կորել էի հանրային էքսկուրսիայի ժամանակ: Եթե որևէ մեկը մոտենա, կլսենք հարյուր մետրից:

- Ի՞նչ է անունդ,- հարցրեց Ուինսթոնը:

- Ջուլիա: Իսկ ես քոնը գիտեմ՝ Ուինսթոն: Ուինսթոն Սմիթ:

- Ինչպե՞ս ես իմացել:

- Երևի ավելի ընդունակ հետախույզ եմ, քան դու, սիրելիս: Ասա՛ ի՞նչ էիր մտածում իմ մասին Նախքան երկտողս ստանալը:

Նա չէր ուզում խաբել աղջկան: Ամենասկզբից ամենավատ բանն ասելը սիրո առաջարկության պես բան կլիներ:

- Ատում էի քեզ,- ասաց նա:- Ուզում էի բռնաբարել, հետո՝ սպանել: Երկու շաբաթ առաջ լրջորեն մտածում էի գլուխդ սալաքարով ջարդելու մասին: Եթե ուզում ես ժշմարտությունն իմանալ՝ մտածում էի, որ կապ ունես Մտքի ոստիկանության հետ:

Աղջիկը հիացած ծիծաղեց՝ ակնհայտորեն դա որպես իր կերպարանափոխության գերազանց գնահատական ընդունելով:

- Միայն թե ոչ Մտքի ոստիկանության: Իրո՞ք այդպես էիր կարծում:

- Դե, գուցե ոչ այդպես: Բայց քո տեսքից... միայն նրանից, որ երիտասարդ ես, թարմ ու առողջ, հասկանո՞ւմ ես... մտածեցի, որ հավանաբար...

- Կարծում էիր՝ Կուսակցության օրինակելի անդամ եմ: Մաքուր՝ թե՛ խոսքով, թե՛ գործով: Դրոշակներ, երթեր, կարգախոսներ, խաղեր, հանրային էքսկուրսիաներ և նման այլ բաներ: Ու մտածում էիր՝ նույնիսկ փոքր հնարավորության դեպքում կմատնեմ քեզ որպես մտքի հանցագործի ու կկործանե՞մ:

- Այո, նման մի բան: Շատ երիտասարդ աղջիկներ այդպես են, գիտե՞ս:

- Դրա մեղավորն այս գրողի տարածն է,- ասաց Ջուլիան՝ պրկելով երիտասարդական հակասեռային միության ալ կարմիր գոտին ու նետելով թփերի մեջ: Հետո, ասես գոտկատեղին դիպչելիս ինչ-որ բան հիշելով, աղջիկը ձեռքը տարավ տաբատի գրպանն

ու շոկոլադի մի փոքրիկ սալիկ հանեց: Կիսեց ու կտորներից մեկը տվեց Ուինսթոնին: Դեռ չվերցրած՝ Ուինսթոնը հոտից զգաց, որ սովորական շոկոլադ չէ: Մուգ էր, փայլուն, փաթաթված արծաթագույն թղթով: Սովորաբար շոկոլադը թույլ դարչնագույն էր լինում ու փխրուն, իսկ համը, եթե, իհարկե, կարելի է նկարագրել, վառվող աղբ էր հիշեցնում: Բայց ժամանակին կերել էր աղջկա տված շոկոլադից: Հոտը միանգամից ինչ-որ բան հիշեցրեց, թե ինչ՝ Ուինսթոնը չէր կարողանում հիշել, բայց՝ հզոր էր ու տագնապալի:

- Որտեղի՞ց ես ճարել:

- Սև շուկայից,- անտարբեր ասաց աղջիկը:- Հա՛, արտաքուստ այսպիսին եմ: Լավ մարզուհի: Լրտեսուհիների դասակի հրամանատար: Շաբաթը երեք անգամ երեկոյան կամավոր աշխատանք եմ կատարում Երիտասարդական հակասեռային միությունում: Ինչքան ժամանակ եմ վատնել՝ դրանց անիծյալ թերթիկները ողջ Լոնդոնում տարածելով: Երթերի ժամանակ միշտ ցուցապաստառ եմ պահում: Միշտ ուրախ տեսք ունեմ ու երբեք ոչնչից չեմ խուսափում: «Միշտ գոռա ամբոխի հետ», - ասում եմ ինձ: Դա ապահով լինելու միակ միջոցն է:

Շոկոլադի առաջին կտորը հավել էր Ուինսթոնի լեզվի վրա: Համը սքանչելի էր: Բայց նրա գիտակցության մեջ դեռ շրջում էր այդ հիշողությունը, ինչ-որ բան, որ ուժեղ զգում էր, բայց չէր կարողանում հստակ ձև տալ, աչքի պոչով տեսած առարկայի պես մի բան: Նա իրենից հեռացրեց այդ անկոչ զգացումը՝ հասկանալով, որ դա ինչ-որ արարքի հիշողություն է, որը հաճույքով կվերացներ, եթե կարողանար:

- Դու շատ երիտասարդ ես,- ասաց նա:- Ինձնից տասը-տասնհինգ տարով փոքր: Քեզ ի՞նչը գրավեց ինձ նման տղամարդու մեջ:

- Դեմքիդ ինչ-որ բան կար: Մտածեցի, որ կարող եմ փորձել: Ես լավ եմ կռահում՝ ով ով է: Հենց քեզ տեսա՝ հասկացա, որ նրանց դեմ ես:

«Նրանց» ասելով՝ նկատի ուներ Կուսակցությունը, իսկ ավելի կոնկրետ՝ Ներքին կուսակցությունը, որի մասին խոսում էր բացահայտ ծաղրալի ատելությամբ. դրանից Ուինսթոնը տեղը չէր

1984

գտնում, չնայած գիտեր, որ այստեղ իրենք ավելի ապահով են, քան որևէ այլ տեղ: Աղջկա մեջ նրան ապշեցնում էր լեզվի կուպտությունը: Կուսակցության անդամներին չէր թույլատրվում հայիոյե, և Ուիկսթոնն ինքն էլ հազվադեպ էր հայիոյում, համենայնդեպս՝ բարձրաձայն: Սակայն Ջուլիան կարծես ի վիճակի չէր հիշատակել Կուսակցությունը, և հատկապես Ներքին կուսակցությունը, առանց այնպիսի բառերի, որոնք կավիճով գրում են ցանկապատերին: Եվ դա Ուիկսթոնին չէր վանում: Դա Կուսակցության և նրա քաղաքականության դեմ աղջկա ապստամբության արտահայտություններից մեկն էր ընդամենը և նույնքան առողջ ու բնական էր թվում, որքան Նեխած խոտ հոտոտած ձիու փռշտոցը: Նրանք դուրս էին եկել բացատից ու նորից շրջում էին պուտավոր սովերների միջով, գրկախառնված, երբ տեղը նեղ էր լինում կողք կողքի քայլելու համար: Հիմա, երբ գոտին այլևս չկար, նկատեց, թե որքան փափուկ է աղջկա իրանը: Խոսում էին շշուկով: Ջուլիան ասաց, որ բացատից դուրս ավելի լավ է լուռ քայլել: Եվ ահա մոտեցան փոքրիկ բացատի ծայրին: Նա կանգնեցրեց Ուիկսթոնին:

– Բաց տեղ դուրս չգաս: Գուցե ինչ–որ մեկը հետևում է: Ապահով կլինի, եթե մտանք ճյուղերի ետևում:

Նրանք կանգնած էին թփակաղնու ստվերում: Արևի լույսը, անհամար տերևների միջով թափանցելով, տաքացնում էր դեմքերը: Ուիկսթոնը նայում էր առջևում փռված դաշտին ու տարածքն աստիճանաբար ճանաչելու տարօրինակ զգացում ուներ: Նրան ծանոթ էր այդ վայրը: Հին, կարճ խուզած արոտավայր՝ կենտրոնը հատող արահետով ու այսուայնտեղ խլուրդաբնի թմբիկներով: Մյուս կողմում՝ հին ցանկապատի մոտ, կնձենիների ճյուղերը նկատելի ճոճվում էին զեփյուռից, և նրանց խիտ տերևները թույլ տարուբերվում էին կնոջ մազերի նման: Հաստատ մոտակայքում, բայց մարդու տեսադաշտից դուրս, պետք է որ կանաչ ջրափոսեր լինեին, որտեղ լողում են մանրածածանները:

– Մոտակայքում գետակ չկա՞, – շշուկով հարցրեց Ուիկսթոնը:

- Ճիշտ է, գետակ կա: Մյուս դաշտի եզրին է: Նրա մեջ ձկներ կան, մեծ ձկներ: Կարող ես տեսնել, թե պոչերը թափահարելով ոնց են լողում ուռիների տակ՝ գետակներում:

- Ոսկե երկիրն է... Համարյա,- մրմնջաց Ուինսթոնը:

- Ոսկե երկիր:

- Ուշադրություն մի դարձրու: Այս տեղը մի անգամ տեսել եմ երազում:

- Նայիր,- շշուկով ասաց Ջուլիան:

Մոտ հինգ մետրի վրա, համարյա նրանց դեմքերին հավասար, կեռնեխը նստել էր ճյուղին: Երևի չէր տեսել նրանց: Կեռնեխն արևի տակ էր, նրանք՝ ստվերում: Կեռնեխը տարածեց թևերը, նորից զգույշ ծալեց, մի պահ թեքեց գլուխը՝ ասես հնազանդվելով արևին, հետո սկսեց հորդաբուխ մի երգ: Կեսօրվա լռության մեջ ձայնը խլացուցիչ բարձր էր հնչում: Ուինսթոնն ու Ջուլիան սեղմվեցին իրար ու հմայված քարացան: Երաժշտությունը շարունակվում էր, բոպե առ բոպե, ապշեցուցիչ վարիացիաներով, որ երբեք չէին կրկնվում, ասես թռչունը դիտավորյալ ցուցադրում էր իր հանճարեղությունը: Երբեմն մի քանի վայրկյանով դադար էր առնում, տարածում, ապա նորից ծալում թևերը, հետո ուռցնում էր խատուտիկ կուրծքը, և նորից հնչում էր մի նոր երգ: Ուինսթոնը նայում էր նրան աղոտ երկյուղածությամբ: Ո՛ւմ համար, ինչի՞ համար էր երգում այդ թռչունը: Նրան չէր հետևում ոչ ընկեր, ոչ թշնամի: Ի՞նչն էր ստիպում միայնակ նստել անտառի եզրին ու երգը նետել դեպի ոչմիտեղ: Ուինսթոնը մտածում էր՝ գուցե իսկապե՞ս մոտակայքում խոսափող է թաքցված: Ինքն ու Ջուլիան խոսել էին միայն ցածր շշուկով. խոսափողը չէր լսի՝ ինչ են խոսել, բայց կլսեր կեռնեխի ձայնը: Գուցե սարքի մյուս ծայրին մի փոքրամարմին, բզեզանման մարդ ուշադիր լսում է... լսում է *երգը*: Բայց աստիճանաբար երաժշտության հեղեղը մտքից վանեց բոլոր մտորումները: Մեղեդին հեղեղի պես թափվում էր Ուինսթոնի վրա ու խառնվում տերևների միջով թափանցող արևի լույսին: Նա դադարեց մտածել և սկսեց միայն

1984

զգայ: Աղջկա գոտկատեղն իր արմունկի տակ փափուկ էր ու տաք: Նա շրջեց աղջկան այնպես, որ կուրծք կրծքի լինեն. նրա մարմինն ասես հավվում էր իր մարմնի մեջ: Ուր դիպչում էր՝ ջրի պես փափուկ էր: Նրանց շուրթերը միացան. դա միանգամայն տարբերվում էր այն կրքոտ համբույրներից, որ փոխանակել էին սկզբում: Երբ հետ քաշվեցին իրարից, երկուսն էլ խոր հոգոց հանեցին: Թռչունը վախեցավ ու թռավ՝ շխկացնելով թևերը:

Ուինսթոնը շուրթերը մոտեցրեց նրա ականջին:

– Հիմա, – շնջաց նա:

– Ոչ այստեղ, – շնջաց աղջիկն ի պատասխան: – Գնանք թաքստոց: Այնտեղ ավելի ապահով է:

Արագորեն, ճյուղերն անընդհատ ճռճռացնելով, նրանք վերադարձան բացատ: Երբ հայտնվեցին նորատունկ ծառերի օղակում, աղջիկը շրջվեց ու նայեց Ուինսթոնին: Երկուսն էլ արագ էին շնչում, բայց աղջկա շուրթերին ժպիտ էր հայտնվել: Մի պահ կանգնած նայեց Ուինսթոնին, հետո ձեռքը տարավ կոմբինզոնի շղթային: Եվ այո, ամեն ինչ գրեթե այնպես էր, ինչպես երազում: Համարյա նույնքան արագ, ինչպես երևակայել էր, Ջուլիան պատռեց-հանեց շորերը ու հագուստը նետեց նույն վեհաշուք շարժումով, որով կարելի էր մի ամբողջ քաղաքակրթություն ոչնչացնել: Ճերմակ մարմինը փայլում էր արևի տակ: Բայց մի պահ Ուինսթոնը չնայեց նրա մարմնին. աչքերը խարսխվել էին հանդուգն ժպտացող պեպենտո դեմքին: Նա ծնկի եկավ աղջկա առաջ ու բռնեց նրա ձեռքերը:

– Քեզ հետ նման բան էլի՞ է եղել:

– Իհարկե: Հարյուրավոր անգամներ. լա՛վ, տասնյակ անգամներ:

– Կուսակցության անդամների հե՛տ:

– Այո, միշտ Կուսակցության անդամների հետ:

– Ներքի՞ն կուսակցության անդամների:

– Միայն թե ոչ այդ խոզերի, ո՛չ: Բայց շատերը կցանկանային, եթե մի փոքր հնարավորություն ունենային: Նրանք այնքան սուրբ չեն, որքան ձևանում են:

Ուիլսոնի սիրտը թրթռաց: Տասնյակ անգամներ. թող լիներ հարյուր, հազար անգամ՝ մտածում էր նա: Այն ամենը, ինչից անբարոյականության հոտ էր փչում, նրան լցնում էր վայրի հույսով: Ով գիտի, գուցե Կուսակցությունը ներսից փտա՞ծ է, իսկ եռանդի ու ինքնաժխտման պաշտամունքը՝ ընդամենը քայքայումը թաքցնող սո՞ւտ: Եթե կարողանար բոլորին վարակել բորոտությամբ կամ սիֆիլիսով, ի՞նչ ուրախությամբ կաներ: Ցանկացած բան, միայն թե ապականեր, թուլացներ, քայքայեր: Նա աղջկան ներքև քաշեց. հիմա երկուսն էլ ծնկաչոք էին՝ դեմ հանդիման:

– Լսիր, որքան մեծ է քո տղամարդկանց թիվը, այնքան շատ եմ սիրում քեզ: Հասկանո՞ւմ ես:

– Այո, հրաշալի:

– Ատում եմ մաքրակենցաղությունը: Ատում եմ առաքինությունը: Չեմ ուզում որևէ տեղ առաքինություն լինի: Ուզում եմ, որ բոլորը փչացած լինեն մինչև ոսկորները:

– Ուրեմն ես հարմար եմ քեզ: Մինչև ոսկորներս փչացած եմ:

– Սիրո՞ւմ ես սրանով զբաղվել: Ոչ միայն ինձ հետ: Առհասարակ:

– Պաշտո՞ւմ եմ:

Ամենից շատ հենց դա էր ուզում լսել: Ոչ թե սեր մի մարդու հանդեպ, այլ կենդանական բնագր, պարզ, չտարբերակված ցանկություն. այդ ուժը կարող էր մասնատել Կուսակցությունը: Նա Ջուլիային գցեց խոտի վրա՝ թափված զանգակաձաղիկների մեջ: Այս անգամ դժվարություն չեղավ: Քիչ անց նրանց սրտի բաբախյունը հասավ սովորական արագության, և հեռացան իրարից հաճելի անօգնականության զգացումով: Արևը կարծես ավելի ուժեղ էր այրում: Երկուսն էլ քնել էին ուզում: Ուիլսոնը ձեռքը պարզեց դեմ նետած հագուստին ու ծածկեց Ջուլիային: Գրեթե անմիջապես երկուսն էլ քնով անցան ու քնեցին մոտ կես ժամ:

Առաջինն արթնացավ Ուիլսոնը: Նստեց ու նայեց պեպե-նոտ դեմքին, որ խաղաղ հպվել էր իր ափին: Երևի միայն բերանն էր գեղեցիկ: Մոտիկից նայելիս կարելի էր մեկ-երկու կնճիռ

1984

տեսնել աչքերի շուրջը: Կարճ թուխ մազերը զարմանալիորեն խիտ ու փափուկ էին: Ուինսթոնը հիշեց, որ դեռ չգիտի նրա ազգանունը, կամ՝ որտեղ է ապրում:

Երիտասարդ, ուժեղ մարմինը անօգնական էր քնի մեջ, և Ուինսթոնի մեջ արթնացավ խղճահարության, պաշտպանելու ցանկություն: Բայց չկար այն անմիտ քնքշությունը, որ զգացել էր թփակաղնու տակ, երբ կեռնեխը երգում էր: Նա բարձրացրեց կոմբինեզոնի եզրը ու նայեց նրա հարթ, սպիտակ կողին: Նախկինում, մտածեց նա, տղամարդը նայում էր աղջկա մարմնին, տեսնում, որ այն ցանկալի է ու՝ վերջ: Բայց հիմա չի կարող ո՛չ մաքուր սեր, ո՛չ մաքուր տարփանք լինել: Ոչ մի զգացմունք մաքուր չէ, ամեն ինչ խառնված է վախի ու ատելության հետ: Նրանց գրկախառնությունը ճակատամարտ էր, զագաթնակետը՝ հաղթանակ: Դա հարված էր Կուսակցությանը: Դա քաղաքական ակտ էր:

III

– Մենք կարող ենք էլի գալ այստեղ, – ասաց Ջուլիան: – Ընդհանրապես ապահով է թաքստոցն օգտագործել երկու անգամ: Բայց, հիարկե, ոչ առաջիկա մեկ-երկու ամսվա ընթացքում:

Արթնանալուն պես Ջուլիայի պահվածքը փոխվեց: Նա այլևս զգոն ու գործնական էր, հագավ շորերը, գոտկատեղին կապեց ալ կարմիր գոտին ու սկսեց բացատրել վերադարձի ճանապարհի մանրամասները: Բնական էր, որ այդ գործը նրան էր թողնված: Նա օժտված էր գործնական ճարպկությամբ, ինչից Ուինսթոնը զուրկ էր, բացի այդ, անհամար հանրային էքսկուրսիաների ընթացքում մանրակրկիտ ուսումնասիրել էր Լոնդոնի ողջ շրջակայքը: Ուղին, որի մասին ասել էր Ուինսթոնին, տարբերվում էր եկած ճանապարհից և ավարտվում էր ուրիշ երկաթուղային կայարանով: «Երբեք մի՛ վերադարձիր այն ճանապարհով, որով եկել ես», – ասաց նա այնպես, կարծես ինչ-որ

ընդհանրական սկզբունք էր շարադրում: Ինքը, ասաց, առաջինը կհեռանա, իսկ Ուիլսթոնը պետք է կես ժամ սպասի:

Ջուլիան նշել էր այն վայրը, որտեղ կարող էին հանդիպել, երբ աշխատանքն ավարտվեր՝ երեկոյան չորսից հետո: Աղքատ թաղամասի փողոց էր դա, որտեղ բաց շուկա կար՝ սովորաբար մարդաշատ ու աղմկոտ: Ջուլիան շրջելու էր կրպակների մոտ՝ ձևացնելով, թե կոշկաքուղեր կամ թել է փնտրում: Եթե համարի, որ տարածքը մաքուր է, Ուիլսթոնի մոտենալուն պես աղմուկով կմաքրի քիթը, հակառակ դեպքում նա պետք է անցնի Ջուլիայի կողքով, ասես չի ճանաչում: Իսկ եթե նրանց բախտը բերի, ամբոխի մեջ ապահով կլինի մեկ քառորդ ժամ գրուցել ու պայմանավորվել մեկ այլ հանդիպման համար:

- Իսկ հիմա պետք է գնամ,- ասաց Ջուլիան, երբ Ուիլսթոնն արդեն յուրացրել էր հրահանգները:- Պետք է վերադառնամ մինչ տասնինն անց երեսուն: Երկու ժամ պիտի աշխատեմ Երիտասարդական հակասեռային միության համար, թռուցիկներ բաժանեմ կամ նման մի բան: Ջզվելի է, չէ՞: Վրայիցս թափ կտամ փոշին: Մազերիս մեջ ծյուղեր չկա՞ն: Վստա՞հ ես: Դե ուրեմն ցտեսություն, իմ սե՛ր, ցտեսություն:

Նա նետվեց Ուիլսթոնի գիրկը, գրեթե մոլեգին համբուրեց նրան ու արդեն մի վայրկյան անց, ճանապարհի հարթելով նորատունկ ծառերի միջով, անաղմուկ անհետացավ անտառում: Նույնիսկ հիմա Ուիլսթոնը չգիտեր նրա ազգանունը կամ հասցեն: Բայց դա ոչ մի նշանակություն չուներ, որովհետև անհավանական էր, որ երբևէ հանդիպեն տանը կամ նամակագրական կապ պահեն:

Պատահեց այնպես, որ նրանք այլևս չվերադարձան անտառ: Մայիս ամսվա ընթացքում նրանց միայն մեկ անգամ հաջողվեց սեր անել: Դա ևս մի թաքուն վայր էր, որ հայտնի էր Ջուլիային՝ ավերակ եկեղեցու զանգակատունը գյուղի գրեթե անմարդաբնակ հատվածում, ուր երեսուն տարի առաջ ատոմային ռումբ էր ընկել: Լավ թաքստոց էր, բայց մինչ այնտեղ ճանապարհը շատ վտանգավոր էր:

Մնացած դեպքերում հանդիպում էին միայն փողոցներում, ամեն երեկո՝ տարբեր վայրում և միշտ կես ժամից ոչ երկար: Փողոցում ինչ-որ կերպ կարելի էր խոսել: Երբ շարժվում էին բազմամարդ մայթերի հոսքով, իրարից հեռու և առանց իրար նայելու, տարօրինակ խոսակցություն էին վարում, փարոսի ճառագայթների պես ընդհատուն, որը հանկարծ սուզվում էր լռության մեջ, երբ մոտենում էր Կուսակցության համազգեստով մեկը, կամ մոտակայքում հեռէկրան էր հայտնվում, խոսակցությունը թուփանք անց վերսկսվում էր նախադասության կեսից, ապա կտրուկ ընդհատվում, երբ նրանք բաժանվում էին պայմանավորված տեղում, հետո շարունակվում էր հաջորդ օրը՝ գրեթե առանց նախաբանի: Երևում է՝ Ջուլիան սովոր էր նմանատիպ խոսակցությունների, որոնք «տարժամկետ զրույց» էր անվանում: Նաև զարմանալիորեն հմուտ խոսում էր՝ առանց շուրթերը շարժելու: Մեկ ամսում, գրեթե ամեն երեկո հանդիպելով, նրանց միայն մի անգամ հաջողվեց համբուրվել: Նրանք լուռ քայլում էին նրբանցքն ի վար (Ջուլիան երբեք չէր խոսում, երբ հեռու էին գլխավոր փողոցներից), երբ խլացնող դղրդյուն լսվեց, հողը բարձրացավ, օդը մգացավ, և կապտուկներով պատված ու վախեցած Ուինսթոնը հայտնվեց գետնին: Հրթիռը հավանաբար չափազանց մոտ էր ընկել: Հանկարծ մի քանի սանտիմետր այն կողմ ճանաչեց Ջուլիայի դեմքը. մեռյալի պես սպիտակ, կավձի նման ծերմակ: Նույնիսկ շուրթերը սպիտակ էին: Մեռած է: Նա Ջուլիային սեղմեց իրեն և հասկացավ, որ կենդանի, տաք դեմք է համբուրում: Միայն թե շուրթերին փոշու պես ինչ-որ բան կար: Երկուսի երեսներն էլ պատված էին կրափոշու հաստ շերտով:

Լինում էին երեկոներ, որ երբ հասնում էին ժամադրավայր, հետո ստիպված էին լինում անցնել իրար կողքով՝ առանց որևէ նշանի, որովհետև պարեկը հայտնվում էր փողոցի անկյունում, կամ էլ գլխավերևում ուղղաթիռ էր պտտվում: Նույնիսկ եթե պակաս վտանգավոր էր լինում, միևնույն է, դժվար էր հանդիպելու ժամանակ գտնել: Ուինսթոնի աշխատանքային շաբաթը բաղկացած

էր վաթսուն ժամից, Ջուլիայինը ավելի երկար էր, և նրանց ազատ օրերն էլ տարբեր էին լինում՝ կախված աշխատանքի ծավալից, ու հաճախ չէին համընկնում: Ամեն դեպքում, Ջուլիան հազվադեպ էր լրիվ ազատ երեկո ունենում: Նա զարմանալիորեն շատ ժամանակ էր ծախսում դասախոսությունների ու ցույցերի վրա, գրականություն էր բաժանում երիտասարդական հակասեռային միությունում, դրոշակներ պատրաստում Ատելության շաբաթվա համար, բարեգործական արշավների համար գումարներ հավաքում և այլն, և այլն: Ասում էր, որ դա քողարկում է: Եթե ենթարկվես փոքր կանոններին, կարող ես խախտել մեծերը: Նոյնիսկ Ուինսթոնին համոզել էր զոհել իր երեկոներից մեկը ու մասնակցել զինամթերք պատրաստելու աշխատանքներին, որ աշխատանքից դուրս կամավոր հիմունքներով կատարում էին Կուսակցության եռանդուն անդամները: Ու հիմա նա շաբաթական չորս ժամ ձանձրոյթից մեռնելով բանում էր քամոտ, թոյլ լուսավորված արիեստանոցում, որտեղ մուրճերի հարվածները խառնվում էին հեռէկրաններից հնչող ձանձրալի երաժշտությանը. Ուինսթոնն ինչ-որ երկաթի կտորներ էր պտուտակում, հավանաբար ռումբի պայթուցիչների մասեր:

Երբ հանդիպեցին եկեղեցու աշտարակում, նրանց կցկտուր խոսակցության դադարները լցվեցին: Շոգ օր էր: Ջանգակատան վերևի փոքրիկ քառակուսի սենյակում շոգ էր ու գաղջ, աղավառու ծերտի հոտ էր փչում էր: Մի քանի ժամ նստած էին փոշոտ, ժյուղերով ծածկված հատակին. ժամանակ առ ժամանակ նրանցից մեկը վեր էր կենում, որպեսզի նայի պատուհանից ու համոզվի, որ ոչ ոք չի գալիս:

Ջուլիան քսանվեց տարեկան էր: Երեսուն ուրիշ աղջիկների հետ ապրում էր հանրակացարանում («Ամեն ինչից կնկա հոտ է գալիս: Ո՛նց եմ ատում կնիկներին»,- իմիջիայլոց ասաց նա) և աշխատում էր, ինչպես Ուինսթոնը կռահել էր, Գրականության բաժնի վիպագրական մեքենաների վրա: Աշխատանքը, որ հիմնականում բաղկացած էր հզոր, բայց խորթին էլեկտրական շարժիչն աշխատեցնելուց ու սպասարկելուց, դուր էր գալիս: Նա «ընդունակ» չէր, բայց

1984

սիրում էր աշխատել ձեռքերով ու հրաշալի գլուխ էր հանում տեխնիկայից: Կարող էր նկարագրել վեպ գրելու ամբողջ գործընթացը՝ սկսած Պլանավորման կոմիտեի հաստատած ընդհանուր հրահանգներից մինչև Խմբագրական կազմի վերջնական ուղղումները: Բայց ավարտուն արդյունքը՝ նրան չէր հետաքրքրում: Ասում էր, որ կարդալն իրեն այնքան էլ չի հետաքրքրում: Գիրքն ընդամենը լայն սպառման ապրանք է, որ պետք է արտադրվի, ինչպես ջեմը կամ կոշկաքուղերը:

Նա ոչինչ չէր հիշում վաթսունականների սկզբի մասին, և ճանաչած մարդկանցից միակը, ով հաճախ խոսում էր նախահեղափոխական շրջանից, պապիկն էր, որն էլ անհետացել էր, երբ Ջուլիան ութ տարեկան էր: Դպրոցում հոկեյի թիմի ավագ էր եղել, երկու տարի անընդմեջ՝ մարմնամարզության առաջնության հաղթող: Եղել էր Լրտեսների դասակի հրամանատար և Պատանեկան միության բաժանմունքի քարտուղար, մինչև երիտասարդական հակասեռային միությունն ընդունվելը: Նրան նույնիսկ (բարի համբավի անսխալ գնահատական) ընտրել էին Պոռնոբաժնում աշխատելու. դա Գրականության ենթաբաժին էր, որն էժանազին պոռնոգրաֆիա էր թողարկում պրոլների համար: Ասաց, որ աշխատակիցները բաժինը «Գոմաղբի տուն» էին կոչում: Այնտեղ մնացել էր մեկ տարի, որ այնպիսի գրքույկներ էին արտադրում, ինչպիսիք էին «*Չարածժի պարմությունները*» կամ «*Մեկ գիշեր՝ աղջիկների դպրոցում*»-ը, հետո դրանք առաքում էին կնքած ծրարներով, ու պրոլետար երիտասարդները թաքուն գնում էին՝ կարծելով, թե արգելված բան է:

– Դրանք ի՞նչ գրքեր են,– հետաքրքրվեց Ուինսթոնը:

– Գարշելի աղբ: Իսկապես ձանձրալի են: Ընդամենը վեց սյուժե, որ քիչումիչ փոփոխվում են: Իհարկե, ես միայն գեղադիտակի վրա էի աշխատում: Երբեք չեմ եղել Խմբագրական կազմում: Լավ չեմ հասկանում գրականությունից, սիրելիս... Գիտելիքս բավարար չէ:

Ուինսթոնը զարմանքով տեղեկացավ, որ Պոռնոբաժնի բոլոր աշխատողները, բացի բաժնի ղեկավարից, աղջիկներ են: Ըստ տեսության՝ տղամարդկանց սեռական բնազդները պակաս

վերահսկելի են, քան կանանցը, հետևաբար ավելի հավանական է, որ այդ կեղտոտ աշխատանքը փչացնի տղամարդկանց:

- Նույնիսկ չեն ուզում, որ ամուսնացած կանայք աշխատեն,- ավելացրեց Ջուլիան:- Համարվում է, որ աղջիկները մաքուր են: Բայց կա մեկը, ով այդպիսին չէ:

Ջուլիայի առաջին սիրային արկածը պատահել էր տասնվեց տարեկանում՝ վաթսունամյա կուսակցականի հետ, որը հետո ինքնասպան եղավ բանտարկվելուց խուսափելու համար:

- Եվ այդպես ավելի լավ էր,- ասաց Ջուլիան:- Հակառակ դեպքում, երբ նա խոստովաներ, իմ անունը հայտնի կդառնար:

Դրանից հետո տարբեր տղամարդիկ էր ունեցել: Ջուլիայի կարծիքով՝ կյանքը պարզ ու հասարակ բան էր: Դու ուզում ես ուրախ ապրել, «նրանք», այսինքն՝ Կուսակցությունը, ուզում են խանգարել քեզ, դու որքան կարող ես՝ խախտում ես օրենքները: Ջուլիան բնական էր համարում թե՛ այն, որ «նրանք» ցանկանում են քեզ զրկել հաճույքներից, թե՛ այն, որ դու ցանկանում ես խուսափել բռնվելուց: Ատում էր Կուսակցությունը և դրա մասին արտահայտվում ամենակրպիտ խոսքերով, բայց ընդհանուր առմամբ չէր քննադատում: Նրան չէր հետաքրքրում Կուսակցական դոկտրինը, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսքը վերաբերում էր իր կյանքին: Ուինսթոնը նկատեց, որ նա երբեք Նորալեզվի բառեր չի օգտագործում, բացի նրանցից, որ կիրառվում էին ամեն օր: Երբեք չէր լսել Եղբայրության մասին և հրաժարվում էր հավատալ նրա գոյությանը: Նրան հիմարություն էր թվում ցանկացած կազմակերպված խռովություն Կուսակցության դեմ, քանի որ դատապարտված էր ձախողման: Ամենախելացին օրենքները խախտելն ու, չնայած դրան, ողջ մնալն էր: Ուինսթոնը աղոտ մտածում էր՝ մի՞թե երիտասարդ սերնդի մեջ շատ են նման մարդիկ, որ մեծացել են Հեղափոխության աշխարհում, ուրիշ ոչինչ չգիտեն, բացի նրանից, որ Կուսակցությունն աներեր է ինչպես երկինքը, չեն ապստամբում նրա իշխանության դեմ, այլ ընդամենը խուսափում են, ինչպես ծագարը շնից:

1984

Նրանք չէին քննարկում ամուսնության հնարավորությունը: Այն-
քան հեռավոր միտք էր, որ չարժեր մտածել այդ մասին: Ոչ մի կո-
միտե երբեք չէր հաստատի նման ամուսնությունը, նույնիսկ եթե
ինչ-որ կերպ հնարավոր լիներ ազատվել «Քեթրինից» Ուինսթոնի
կնոջից: Դա անհույս էր նույնիսկ երազանքներում:

- Ինչպիսի՞ն էր նա... քո կինը,- հարցրեց Ջուլիան:

- Նա... գիտե՞ս նորալեզվի «բարեմիտ» բառը: Նշանակում է՝
քնությունից ուղղամիտ, վատ բան մտածելու անընդունակ:

- Չէ, բառը չգիտեի, բայց ճանաչում եմ նման մարդկանց:

Ուինսթոնը սկսեց պատմել իր ամուսնական կյանքի մասին,
բայց որքան էլ տարօրինակ էր, Ջուլիան արդեն գիտեր դրա կա-
րևոր հատվածները: Ջուլիան, գրեթե այնպես, ասես տեսել կամ
զգացել էր, նկարագրեց Ուինսթոնին՝ ինչպես էր փայտանում «Քեթ-
րինի մարմինը, երբ նա դիպչում էր, ինչպես էր նա ամբողջ ուժով
հրում Ուինսթոնին, նույնիսկ երբ ամուր գրկում էր նրան: Նրա հա-
մար հեշտ էր Ջուլիայի հետ խոսել նման բաների մասին. ամեն
դեպքում, «Քեթրինը վաղուց ցավոտ հիշողությունից վերածվել էր
զգվելի հիշողության:

- Ես կկարողանայի դիմանալ, եթե չլիներ մի բան,- ասաց
Ուինսթոնը ու պատմեց փոքրիկ պաղ արարողության մասին, որ
«Քեթրինը պարտադրում էր ամեն շաբաթվա նույն օրը՝ երեկոյան:-
Ատում էի դա, բայց նրան որևէ կերպ անհնար էր խանգարել: Կոչում
էր... երբեք չես կռահի:

- Կուսակցական պա՛րտք,- արագ ասաց Ջուլիան:

- Որտեղի՞ց գիտես:

- Ես էլ եմ դպրոց գնացել, սիրելի՛ս: Շաբաթը մեկ գրույց-
ներ սեքսի մասին՝ տասնվեցից բարձրերի համար: Նաև պա-
տանիների միությունում: Այդ միտքը գլուխդ եմ մտցնում տա-
րիներ շարունակ: Պետք է ասեմ, որ շատ դեպքերում ազդում
է: Բայց երբեք չես կարող գուշակել. մարդիկ այնքա՛ն կեղծա-
վոր են:

Նա տարվեց թեմայով: Զուլիայի խոսքն անփոփոխ հանգում էր սեփական սեքսուալությանը: Երբ խոսքը հասնում էր դրան, Նրա դատողությունները չափազանց խորաթափանց էին դառնում: Ի տարբերություն Ուինսթոնի՝ Նա ըմբռնել էր Կուսակցության սեքսուալ պուրիտանիզմի ներքին նշանակությունը: Բանն այն չէ, որ սեռական բնազդը ստեղծում էր յուրօրինակ աշխարհ, որը դուրս էր Կուսակցության հսկողությունից, հետևաբար, հնարավորության դեպքում, պետք է ոչնչացվեր: Ավելի կարևոր էր այն, որ սեռական քաղցը հիստերիա էր առաջացնում, իսկ դա ցանկալի էր, որովհետև կարելի էր փոխարկել պատերազմական տենդի և ղեկավարի երկրպագության: Նա այսպես ձևակերպեց.

– Սեր անելիս էներգիա ես ծախսում. հետո երջանիկ ես զգում ու ոչնչի մասին չեմ մտահոգվում: Նրանք չեն կարող նման բան թույլ տալ: Նրանք ուզում են, որ էներգիան անընդհատ եռա քո մեջ: Դրանց այդ բոլոր երթերը, գոռում-գոչյունները, դրոշների թափահարումը ընդամենը թթված սեքս է: Եթե ինքնին երջանիկ ես, ինչո՞ւ պիտի հուզվես Մեծ եղբոր, Եռամյա պլանի, Ատելության երկրպագի և մնացած անիծյալ անհեթեթությունների պատճառով:

Շատ ճիշտ է՝ մտածեց Ուինսթոնը: Մաքրաբարոյության և քաղաքական ուղղափառության միջև ուղիղ ու սերտ կապ կա: Հակառակ դեպքում ինչպե՞ս անհրաժեշտ եռման աստիճանի հասցնել վախը, ատելությունն ու խելագար վստահությունը, որ Կուսակցությունը պահանջում էր իր անդամներից, եթե ոչ՝ հզոր բնազդը խցանելով ու որպես շարժիչ ուժ օգտագործելով: Սեռական բնազդը վտանգավոր էր թվում Կուսակցությանը, և Կուսակցությունն օգտագործում էր այն: Նման աճպարարություն անում էին նաև ծնողական բնազդով: Ընտանիքն իրականում չէր կարելի վերացնել, և, անշուշտ, մարդկանց խրախուսում էին սիրել իրենց երեխաներին, գրեթե հին ձևով: Մյուս կողմից՝ երեխաներին պարբերաբար տրամադրում էին ծնողների դեմ և սովորեցնում լրտեսել Նրանց ու զեկուցել շեղումների մասին: Արդյունքում ընտանիքը դարձել էր

Մտքի ուստիկանության բաղկացուցիչ մասը, գործիք, որի միջոցով ցանկացած ոք գիշեր-ցերեկ շրջապատված էր լրտուններով, որոնց մոտիկից էր ճանաչում:

Միտքն անսպասելի վերադարձավ Քեթրինին: Անկասկած, Քեթրինն իրեն կմատներ Մտքի ուստիկանությանը, եթե այդքան հիմար չլիներ ու կարողանար հասկանալ իր կարծիքների անուղղափառությունը: Բայց այս պահին Ուինսթոնին կնոջ մասին հիշեցրեց ցերեկվա տապը, որից ծակատը քրտնել էր: Նա սկսեց Ջուլիային պատմել մի բան, որ պատահել էր, ավելի ճիշտ՝ չէր պատահել մի հեղձուկ ամառային օր, տասնմեկ տարի առաջ:

Նրանց ամուսնանալուց երեք-չորս ամիս անց էր: Հանրային էքսկուրսիայի ժամանակ, ինչ-որ տեղ՝ Քենթում, հետ էին մնացել խմբից: Ընդամենը մի քանի րոպե, բայց հասցրել էին սխալ կողմ թեքվել ու հայտնվել էին կավձաքարի հին հանքի եզրին: Տասը-քսան մետր երկարությամբ ուղղաձիգ զառիթափ էր, ներքևում՝ գլաքարեր: Ոչ ոք չկար, ումից կարող էին ճանապարհի հարցնել: Երբ Քեթրինը հասկացավ, որ կորել են, շատ անհանգստացավ: Նույնիսկ մեկ ակնթաթ զբոսաշրջիկների աղմկոտ խմբից հեռու լինելը նրան սխալ բան էր թվում: Ուզում էր շտապ վերադառնալ եկած ճանապարհով ու սկսել որոնումներն այլ ուղղությամբ: Բայց այդ պահին Ուինսթոնը նկատեց արնախոտի մի քանի թուփ, որ աճում էին ներքևում՝ ժայռի ճեղքերում: Թփերից մեկը երկու գույն ուներ՝ մանուշակագույն և աղյուսագույն, երևում էր, որ աճում են նույն արմատից: Երբեք նման բան չէր տեսել ու կանչեց Քեթրինին:

– Տե՛ս, Քեթրին: Նայիր ի՞նչ ծաղիկներ են: Ներքևի թփին նայիր: Տեսնո՞ւմ ես՝ երկգույն է:

Կինն արդեն շրջվել էր, որ գնա, բայց մի վարկյանով վերադարձավ՝ չթաքցնելով զարյույթը: Նույնիսկ կռացավ ժայռի վրա, որ տեսնի, թե ինչ էր ցույց տալիս Ուինսթոնը: Նա կանգնած էր ետևում ու ձեռքով պահում էր կնոջ գոտկատեղը, որ չընկնի: Այդ պահին հանկարծ հասկացավ, որ իրենք մեն-մենակ են: Ոչ մի կենդանի

արարած, ոչ մի տերև չի շարժվում, նույնիսկ թռչուն չկա: Նման վայրերում վտանգը, թե ինչ-որ տեղ թաքցված խոսափող կա, շատ փոքր է, և նույնիսկ եթե լիներ էլ, միայն հնչյուններ էր որսալու: Հետկեսօրի ամենաշոգ, ամենաքնկոտ ժամն էր: Արևը վառվում էր նրանց գլխավերևում, քրտինքը խուտուտ էր տալիս Ուինսթոնի դեմքը: Ու նրա գլխում մի միտք ծագեց...

- Ինչո՞ւ մի լավ չհրեցիր նրան,- հարցրեց Ջուլիան:- Ես կանեի:

- Այո՛, սիրելիս, դու կանեիր: Ես էլ կանեի, եթե այն ժամանակ լինեի այնպիսին, ինչպիսին հիմա եմ: Կամ գուցե... Վստահ չեմ:

- Ափսոսո՞ւմ ես, որ չես արել:

- Այո, ընդհանուր առմամբ ափսոսում եմ:

Նրանք կողք կողքի նստել էին փոշոտ հատակին: Ուինսթոնը գրկեց Ջուլիային: Աղջկա գլուխը նրա ուսին էր, ու մազերի հաճելի բույրը ուժեղ էր աղավառ: Ծերտի հոտից: Նա շատ երիտասարդ է, մտածեց Ուինսթոնը, դեռ սպասելիքներ ունի կյանքից, չի հասկանում, որ տհաճ մարդուն ժայռից հրելը ոչ մի խնդիր չի լուծում:

- Իրականում դա ոչինչ չէր փոխի,- ասաց նա:

- Ուրեմն ինչո՞ւ ես ափսոսում, որ չես արել:

- Միայն որովհետև դրականը նախընտրում եմ բացասականից: Այս խաղում, որ խաղում ենք, անհնար է հաղթել: Պարզապես որոշ անհաջողություններ մյուսներից լավ են, այդքանը:

Ուինսթոնը զգաց, թե Ջուլիան ինչպես անհամաձայնությամբ թափահարեց ուները: Միշտ հակաճառում էր, երբ Ուինսթոնը նման բաներ էր ասում: Չէր ուզում որպես բնության օրենք ընդունել, որ անհատը միշտ դատապարտված է պարտության: Մի կողմից՝ հասկանում էր, որ ինքն էլ է դատապարտված, որ վաղ թե ուշ Մտքի ուստիկանությունը կբռնի ու կսպանի իրեն, բայց մյուս կողմից՝ հավատում էր, որ ինչ-որ կերպ հնարավոր է կառուցել գաղտնի աշխարհ, որտեղ կարող ես ապրել ուզածիդ պես: Դրա համար միայն հաջողություն է պետք, մեկ էլ ճարակություն ու խիզախություն պիտի ունենաս: Նա չէր հասկանում, որ երջանկություն գոյություն չունի,

1984

որ միակ հաղթանակը հեռավոր ապագայում է՝ մահից երկար ժամանակ անց, որ Կուսակցությանը պատերազմ հայտարարելուն պես ավելի լավ է քեզ դիակ համարես:

- Մենք մեռած ենք,- ասաց Ուինսթոնը:

- Դեռ մեռած չենք,- գործնական հակառակվեց Ջուլիան:

- Ֆիզիկապես՝ ոչ: Վեց ամիս, մեկ տարի, ենթադրենք՝ հինգ տարի: Ես վախենում եմ մահից: Դու երիտասարդ ես, ուստի կարծում եմ՝ իմ չափ չես վախենում: Իհարկե, պետք է հնարավորինս հետաձգենք: Բայց դա քիչ բան է փոխում: Քանի դեռ մարդ արարածը մարդ է մնում, կյանքն ու մահը նույն բանն են:

- Հիմարություն է: Ո՞ւմ հետ կնախընտրեիր քնել՝ ի՞նձ հետ, թե՞ խրտվիլակի: Չե՞ս ուրախանում, որ ողջ ես: Քեզ դուր չի՞ գալիս զգացողությունը, որ սա ես եմ, սա՛ իմ ձեռքը, սա՛ իմ ոտքը: Ես իրական եմ: Ես քայլում եմ, շնչում եմ: Ես ողջ եմ: Քեզ դուր չի՞ գալիս:

Նա շրջվեց ու կրծքով սեղմվեց Ուինսթոնին: Ուինսթոնը հագուստի միջով զգում էր նրա կուրծքը՝ հասուն, բայց պիրկ: Նրա մարմնից իր մարմնի մեջ էր լցվում երիտասարդությունն ու եռանդը:

- Այո, դուր է գալիս,- ասաց նա:

- Ուրեմն բավական է խոսես մեռնելու մասին: Հիմա լսիր, սիրելիս, մենք պետք է պայմանավորվենք հաջորդ հանդիպման մասին: Կարող ենք նաև վերադառնալ նույն տեղը՝ անտառ: Վաղուց այնտեղ չենք եղել: Բայց այս անգամ պետք է ուրիշ ծանապարհով գնանք: Դու գնացք կնստես... Սպասիր, հիմա կնկարեմ:

Եվ իրեն հատուկ գործնականությամբ հատակին փոշու մի փոքրիկ քառակուսի կազմեց ու աղավնու բնից վերցրած ժյուղով սկսեց քարտեզ գծել:

IV

Ուինսթոնը զննեց պարոն Չարինգթոնի փոքրիկ, հին սենյակը: Պատուհանի մոտ դրված հսկայական մահճակալը ծածկված էր հնամաշ վերնակներով ու անծածկոց բարձերով: Տասներկուժամանոց թվատախտակով հնաոճ ժամացույցը տկտկում էր բութաբարու դարակին: Անկյունում՝ ծավլող սեղանին դրված ապակյա ճնշածածանը, որ բերել էր նախորդ այցելության ժամանակ, մեղմ շողշողում էր կիսախավարում:

Բութաբարու ցանցի մեջ թիթեղյա մաշված նավթավառ էր, կաթսա ու երկու բաժակ, որ պարոն Չարինգթոնն էր հայթայթել: Ուինսթոնը վառեց այրիչն ու կաթսայով ջուր դրեց, որ եռա: Մի լիքը փաթեթ «Հաղթանակ» սուրճ ու սախարինի մի քանի կոճակ էր բերել: Ժամացույցի սլաքները ցույց էին տալիս ութին քսան աշխատած, դա նշանակում էր՝ տասնինն անց քսան է: Նա գալու էր տասնինն անց երեսունին:

Խելագարություն, խելագարություն՝ շարունակ ասում էր սիրտը, գիտակցված ու առանց պատճառի, մահացու խելագարություն: Բոլոր հանցագործություններից, որ թույլատրված էին Կուսակցության անդամին, այս մեկը գրեթե հնարավոր չէր թաքցնել: Իրականում գաղափարը նրա մտքում առաջին անգամ ծագեց տեսիլքի ձևով. ապակե ճնշածածան, որն արտացոլվել է ծավլող սեղանի մակերեսին: Ինչպես կանխատեսել էր՝ պարոն Չարինգթոնը հեշտությամբ վարձով տվեց սենյակը: Ակնհայտորեն ուրախ էր, որ սենյակն իրեն մի քանի դուլարի եկամուտ է բերելու: Իսկ երբ պարզվեց, որ այն Ուինսթոնին պետք է սիրային արկածի համար, նա կարծես ոչ զարմացավ, ոչ էլ անցավ զզվելի մտերմավար տոնի: Փոխարենը, հայացքը փախցնելով, խոսում էր ընդհանուր թեմաներից՝ այնքան նրբանկատ, որ թվում էր՝ մասամբ անտեսանելի է դարձել: Առանձնանալը, ասաց, շատ կարևոր է: Բոլորն էլ մի տեղ են ուզում, ուր կարող են ժամանակ առ ժամանակ մենակ մնալ: Ու երբ գտնում են, այդ մասին իմացողները, քաղաքավարությունից

1984

դրդված, պարտավոր են պահել գաղտնիքը: Նա (մի պահ թվաց, թե արդեն գոյություն չունի) ավելացրեց, որ տունն ունի երկու մուտք. երկրորդը՝ ետնաբակից, իսկ բակից կարելի է ելնել նրբանցք:

Պատուհանի տակ ինչ-որ մեկը երգում էր: Ուինսթոնը դուրս նայեց՝ թաքնվելով բեհեզյա վարագույրի մեջ: Հունիսյան արևը բարձր էր, իսկ ներքևում՝ արևով պարուրված բակում, մի վիթխարի կին՝ նորմանդական սյան պես պինդ, մկանուտ կարմիր նախաբազուկներով ու գոտկատեղին կապած պարկանման գոգնոցով, ծանրաքարշ հետուառաջ էր անում լվացքի տաշտի ու պարանի միջև՝ ինչ-որ քառակուսի սպիտակ շորեր փռելով, որոնց մեջ Ուինսթոնը մանկական տակաշորեր նկատեց: Երբ բերանն ազատվում էր շորերի կեռիկներից, երգում էր հզոր կոնտրալտոյով.

*Դա միայն անհույս պատրանք էր ու հույս,
Որ գարնան պայծառ օրվա պես անցավ,
Բայց այնչո՞՞ք հայացք, բառ ու հույզ,
Ու գողացավ իմ սիրտը, գողացավ:*

Վերջին շաբաթներին այդ մեղեդին անընդհատ հնչում էր Լոնդոնում: Այն միանման անհամար երգերից էր, որ Երաժշտության բաժնի ենթաբաժիններից մեկը թողարկում էր պրոլների համար: Այդ երգերի խոսքերը հորինվում էին առանց մարդու միջամտության, տաղաչափ կոչվող սարքով: Բայց կինն այնքան լավ էր երգում, որ սարսափելի տխմարությունը վերածվում էր գրեթե հաճելի երաժշտության: Ուինսթոնը լսում էր կնոջ ձայնն ու նրա կոշիկների քստքստոցը սալաքարերի վրա, և երեխաների ճչոցները փողոցում, և ինչ-որ տեղ՝ հեռվում, երթևեկության աղուտ դղրոյունը, մինչդեռ սենյակը զարմանալիորեն լուռ էր՝ շնորհիվ հեռեկրանի բացակայության:

«Խելագարություն, խելագարություն, խելագարություն», – նորից մտածեց նա: Անհավանական էր, որ կարողանան մի քանի շաբաթից ավելի լինել այստեղ ու չբռնվել: Բայց մոտակայքում սեփական

տանիքն ու թաքստոցն ունենալու գայթակղությունն ավելի մեծ էր երկուսի համար: Եկեղեցու զանգակատնից հետո որոշ ժամանակ հնարավոր չէր եղել հանդիպում կազմակերպել: Ատելության շաբաթվա առիթով աշխատանքային ժամերը կտրուկ ավելացել էին: Մնացել էր մեկ ամսից քիչ ավելի, բայց հսկայական բարդ նախապատրաստությունները ավելացրել էին բոլորի աշխատանքը: Ի վերջո, նրանց հաջողվեց ազատ ժամանակ գտնել նույն օրը՝ ցերեկով: Պայմանավորվել էին վերադառնալ անտառի թաքստոց: Նախօրեին՝ երեկոյան, կարճ հանդիպում ունեցան փողոցում: Ինչպես միշտ, Ուինսթոնը գրեթե չնայեց Ջուլիային, երբ դեմ հանդիման անցան ամբոխի միջով, բայց իր վրա զցած հապճեպ հայացքից զգաց, որ Ջուլիան սովորականից գունատ է:

– Չախողվեց,– քրթմնջաց Ջուլիան, երբ համարեց, որ խոսելն ապահով է:– Նկատի ունեմ՝ վաղը:

– Ի՞նչ:

– Վաղը ցերեկը չեմ կարող գալ:

– Ինչո՞ւ:

– Սովորական պատմություն է: Այս անգամ ավելի շուտ սկսվեց:

Սկզբում Ուինսթոնը սարսափելի զայրացավ: Ծանոթության մեկ ամսվա ընթացքում նրա ցանկության բնույթը փոխվել էր: Սկզբում իսկական զգացմունքայնությունը քիչ էր: Նրանց առաջին սիրային հանդիպումն ընդամենը կամքի դրսևորում էր: Բայց երկրորդից ամեն ինչ փոխվեց: Նրա մազերի բույրը, շուրթերի համը, մաշկի հիշողությունը ասես ներծծվել էին Ուինսթոնի մեջ կամ տարրալուծվել օդում: Ջուլիան դարձել էր ֆիզիկական անհրաժեշտություն. ոչ միայն ցանկանում էր նրան, այլև զգում, որ ունի դրա իրավունքը: Երբ ասում էր, որ չի կարող գալ, Ուինսթոնին թվում էր՝ խաբում է: Բայց այդ պահին ամբոխը նրանց սեղմեց իրար, ու ձեռքերը պատահաբար հանդիպեցին: Նա թեթև սեղմեց Ուինսթոնի մատների ծայրերը, ու թվաց՝ ոչ թե կիրք է խնդրում, այլ՝ սեր: Ուինսթոնը հասկացավ, որ երբ տղամարդն ապրում է կնոջ հետ, նման հիպոթափությունները

1984

պետք է սովորական, կրկնվող երևույթ լինեն. և նրան հանկարծ համակեց խոր քնքշությունը, որ առաջ չէր զգացել Ջուլիայի հանդեպ: Կուզեր, որ տասը տարվա ամուսիններ լինեին: Կուզեր նրա հետ քայլել փողոցներով՝ ճիշտ այնպես, ինչպես հիմա, բայց բացահայտ ու առանց վախի, խոսել առօրյա բաներից ու տան համար տարբեր մանրուքներ գնել: Իսկ ամենից շատ կուզեր գտնել մի վայր, որտեղ կարող էին մենակ լինել՝ առանց այն պարտադրանքի, որ ամեն հանդիպման ժամանակ պետք է սիրով զբաղվեն: Պարոն Չարինգթոնի սենյակը վարձելու միտքը նրա գլխում ծագեց ոչ թե այդ պահին, այլ հաջորդ օրը: Երբ առաջարկեց Ջուլիային, նա անսպասելի պատրաստակամությամբ համաձայնեց: Երկուսն էլ գիտեին, որ խենթություն է: Ասես դիտավորյալ մոտենում էին իրենց գերեզմանին: Երբ մահճակալի եզրին նստած սպասում էր, դարձյալ մտածեց Սիրո նախարարության խցերի մասին: Ջարմանալի էր՝ այդ նախասահմանված սարսափն ինչպես է հայտնվում ու անհետանում մարդու գիտակցությունից: Նա այնտեղ էր՝ ապագայում, ու նրան հաջորդում էր մահը, ինչպես 99-ին 100-ն է հաջորդում: Անհնար էր խուսափել նրանից, բայց հետաձգել կարելի էր. ու դրա փոխարեն ժամանակ առ ժամանակ գիտակցված, կամավոր գործողությամբ մարդը կարճացնում էր այդ տարածությունը:

Այդ պահին աստիճանների վրա արագ քայլեր լսվեցին: Ջուլիան խուժեց սենյակ: Ձեռքին դարչնագույն կոպիտ կտավից գործիքների պայուսակն էր. այդ պայուսակով նա Ջուլիային երբեմն նախարարությունում էր տեսել: Ուինսթոնը առաջ գնաց, որ գրկի նրան, բայց Ջուլիան շտապ ազատվեց, մասամբ՝ որովհետև գործիքների պայուսակը դեռ ձեռքին էր:

– Մի վայրկյան, – ասաց նա: – Թող ցույց տամ՝ ինչ եմ բերել: Այդ զզվելի «Հաղթանակ» սուրճից ես բերել, չէ՞: Այդպես էլ գիտեի: Կարող ես դուրս նետել, որովհետև մեզ պետք չի գա: Տե՛ս:

Նա չոքեց, բացեց պայուսակն ու հանեց մանեկաբանալիներն ու պտուտակահանը, որ պայուսակի մեծ մասն էին զբաղեցնում:

Դրանց տակ մի քանի կոկիկ թղթե փաթեթ կար: Առաջինը, որ փոխանցեց Ուինսթոնին, մի տեսակ տարօրինակ էր, բայց ծանոթ էր թվում: Լի էր ծանր, ավազանման նյութով, որը դիպչելիս սեղմվում էր:

- Շաքարավա՞ճ է,- հարցրեց Ուինսթոնը:

- Իսկական շաքարավաճ: Ոչ թե սախարին, այլ շաքարավաճ: Սա էլ հաց, իսկական սպիտակ հաց, ոչ թե մեր աղբը... ու մի փոքր բանկա ջեմ: Իսկ սա կաթ է... Բայց նայիր, ահա իմ իսկական հպարտությունը: Ստիպված քաթանով փաթաթեցի, որովհետև...

Բայց կարիք չկար ասելու, թե ինչու է փաթաթել: Բույրն արդեն տարածվում էր սենյակում. թանձր ու տաք բույրը, որն ասես Ուինսթոնի վաղ մանկության հիշողություն լիներ, բայց նույնիսկ հիմա կարելի էր երբեմն հանդիպել. մերթ զգացվում էր միջանցքում, մինչ դուռը շրխկոցով կփակվեր, մերթ առեղծվածային տարածվում մարդաշատ փողոցում, մի պահ զգացվում, ապա նորից կորչում:

- Սո՛ւրճ է,- մրմնջաց Ուինսթոնը,- իսկական սուրճ:

- Ներքին կուսակցության սուրճից: Մի ամբողջ կիլոգրամ,- ասաց Ջուլիան:

- Ո՞նց ճարեցիր այս ամենը:

- Մթերքներ Ներքին կուսակցության համար: Այդ խոզերն ամեն ինչ ունեն, ամեն ինչ: Բայց, իհարկե, մատուցողները, սպասավորներն ու մյուսները գողանում են և... տե՛ս, թեյի փոքրիկ փաթեթ:

Ուինսթոնը պազել էր նրա կողքին: Պատռեց փաթեթի անկյունը:

- Իսկական թեյ է, ոչ թե մոշենու տերևներ:

- Վերջին շրջանում շատ թեյ կա: Գրավել են Հնդկաստանը կամ նման մի բան,- անորոշ ասաց աղջիկը:- Բայց լսիր, սիրելի՛ս: Ուզում եմ, որ շրջվես ու երեք րոպե չնայես ինձ: Մյուս կողմից նստիր մահձակալին: Պատուհանին չմոտենաս: Ու չշրջվես, մինչև չասես:

Ուինսթոնը մտահոգ նայեց բեհեզյա վարագույրի ետևից: Ներքևում՝ բակում, կարմրաբազուկ կինը դեռ հետուառաջ էր անում լվացքի տաշտի ու պարանի միջև: Նա ևս երկու կեռիկ հանեց բերանից ու երգեց խոր զգացմունքով.

1984

*Ասում են՝ կանցնի, կանցնի ամեն ինչ,
 Ասում են՝ ողջը դեռ կմոռանաս,
 Բայց ժպիպներն ու արցունքները հին
 Հուզում են սրտիս լարերը բարակ:*

Երևում էր՝ անգիր գիտեր ամբողջ անհեթեթ երգը: Ձայնը լողում էր դուրեկան ամառային օդում, չափազանց մեղեդային, լեցուն ինչ-որ երջանիկ մեղամաղձությամբ: Զգացողությունն այնպիսին էր, թե նա միանգամայն գոհ կլիներ, եթե հունիսյան երեկոն չավարտվեր, ու լվացքը չվերջանար, որ հազար տարի մնար այնտեղ՝ տակաշորեր կախելով ու հիմար երգը երգելով: Ուինսթոնը զարմանքով հասկացավ, որ երբեք չի տեսել Կուսակցության որևէ անդամի մենակ ու ինքնաբերական երգելիս: Դա կարող էր համարվել անուղղահավատություն, վտանգավոր արտասովորություն՝ ինքն իր հետ խոսելու նման: Գուցե մարդիկ երգելու բան են ունենում միայն այն ժամանակ, երբ մոտ են սովահարությանը:

– Հիմա կարող ես շրջվել, – ասաց Զուլիան:

Ուինսթոնը շրջվեց ու մի պահ գրեթե չկարողացավ ճանաչել նրան: Սպասում էր, որ մերկ կտեսնի: Բայց նա մերկ չէր: Կերպարանափոխությունը շատ ավելի ապշեցուցիչ էր: Նա շպարվել էր:

Անկասկած մտել է ինչ-որ խանութ պրոլետարական թաղամասերում ու դիմահարդարման նյութերի ամբողջական հավաքածու գնել: Շուրթերը մուգ կարմիր էին, այտերը՝ շպարված, քիթը՝ դիմափռոշով. նույնիսկ ինչ-որ բան էր քսել աչքերի տակ. ավելի էին պայծառացել: Այդ ամենն այնքան էլ հնուտ չէր արված, բայց Ուինսթոնի պահանջներն այդ հարցերում այնքան էլ մեծ չէին: Նա առաջ երբեք չէր տեսել կամ պատկերացրել կուսակցական կնոջ շպարված դեմքով: Զուլիան զարմանալիորեն լավիկն էր դարձել: Մի քանի վրձնահարված ձիշտ տեղերում, և նա ոչ միայն շատ ավելի գեղեցիկ էր, այլև, ամենակարևորը, շատ ավելի կանացի: Կարճ սանրվածքն ու տղայական հագուստն ընդամենը մեծացնում էին

տպավորությունը: Երբ գրկեց Ջուլիային, մանուշակների սինթետիկ բույրը ողողեց քթանցքերը: Հիշեց նկուղի խոհանոցի կիսախավարը և կնոջ խոռոչանման բերանը: Ճիշտ նրա օծանելիքից էր, բայց այդ պահին դա ոչ մի նշանակություն չունեց:

- Նաև՝ օծանելիք,- ասաց Ուինսթոնը:

- Այո՛, սիրելիս, նաև՝ օծանելիք: Իսկ գիտե՞ս, թե հիմա ինչ եմ անելու: Որևէ տեղից կնոջ իսկական զգեստներ կգտնեմ ու կհագնեմ այս գարշելի տաբատի փոխարեն: Մետաքսե զուգագուլպաներ ու բարձրակրունկ կոշիկներ կհագնեմ: Այս սենյակում ես կին եմ լինելու, ոչ թե կուսակցական ընկեր:

Նրանք նետեցին հագուստն ու ցատկեցին հսկայական կարմրավուն մահճակալին: Առաջին անգամ էր, որ Ուինսթոնը մերկանում էր Ջուլիայի ներկայությամբ: Մինչ այդ շատ էր ամաչում իր գունատ ու վտիտ մարմնից, սրունքների դուրս ցցված, լայնացած երակներից, կոճի խունացած սպեղանուց: Սավաններ չկային, բայց ծածկոցը, որի վրա պառկել էին, մաշվելուց հարթվել էր, իսկ մահճակալի չափն ու առաձգականությունը երկուսին էլ զարմացնում էին:

- Հաստատ փայտոջիլներով լիքն է, բայց կարևոր չի,- ասաց Ջուլիան:

Երկտեղանոց մահճակալներ կարելի էր միայն պրոլների տներում գտնել: Փոքր ժամանակ Ուինսթոնն այդպիսի մահճակալի վրա էր քնում. իսկ Ջուլիան, որքան հիշում էր, երբեք:

Հետո նրանք մի քիչ քնեցին: Երբ Ուինսթոնն արթնացավ, ժամացույցի սլաքները գրեթե մոտեցել էին իննին: Չէր շարժվում, որովհետև Ջուլիան քնած էր՝ գլուխը նրա թևին: Շպարի մեծ մասն անցել էր Ուինսթոնի դեմքին ու բարձին, բայց բաց կարմիր բիծը դեռ ընդգծում էր նրա այտոսկրի գեղեցկությունը: Մայր մտնող արևի դեղին ճառագայթն ընկել էր մահճակալի ոտնակողմին ու լուսավորում էր բուխարին, որտեղ կաթսայով ջուր էր եռում: Բակում կինը չէր երգում այլևս, բայց փողոցից աղոտ լսվում էր երեսանների ղժվժոցը: Ուինսթոնը ծուլ-ծուլ մտածեց՝ արդյո՞ք չքացած

անցյալում սովորական բան է եղել, որ զով ամառային երեկոյան առանց հագուստի կին ու տղամարդ պառկեն անկողնում, սեր անեն՝ երբ ուզեն, խոսեն՝ ինչից ուզեն, վեր կենալու որևէ պարտադրանք չունենան, ուղղակի պառկեն ու լսեն դրսի խաղաղ ծայները: Հաստատ երբեք չի եղել այնպիսի ժամանակ, երբ այդ ամենը սովորական էր: Զուլիան արթնացավ, տրորեց աչքերն ու արմունկին հենվելով՝ բարձրացավ, որ նայի նավթավառին:

- Զրի կեսը գոլորշացել է,- ասաց նա:- Հիմա վեր կկենամ ու սուրճ կեփեմ: Մի ժամ ունենք: Ձեր շենքում լույսը ե՞րբ են անջատում:

- Բսաներեքն անց երեսուն:

- Իսկ հանրակացարանում՝ քսաներեքին: Բայց պետք է ավելի շուտ վերադառնալ, որովհետև... Հե՛յ, կորի, կեղտո՛տ անասուն:

Նա հանկարծ կռացավ անկողնուց, հատակից առավ կոշիկն ու տղայական շարժումով թափ առնելով՝ նետեց դեպի անկյունը, ծիշտ այնպես, ինչպես այդ առավոտ՝ Ատելության երկրոպեին, բառարանն էր նետել Գոլդսթայնի վրա:

- Ի՞նչ էր,- զարմացած հարցրեց Ուինսթոնը:

- Առնետ: Տեսա՛ ո՞նց հանեց սարսափելի քիթը: Բույն է դրել այնտեղ: Բայց լա՛վ վախեցրի:

- Առնետներ,- քրթմնջաց Ուինսթոնը:- Այս սենյակո՞ւմ:

- Լիքն են,- անտարբեր ասաց Զուլիան ու նորից պառկեց:- Նույնիսկ հանրակացարանի խոհանոցում ենք գտել: Լոնդոնի որոշ շրջաններում ուղղակի վխտում են: Գիտե՞իր, որ հարձակվում են երեխաների վրա: Այո՛, այո՛: Տեղեր կան, ուր կանայք չեն համարձակվում նույնիսկ երկու րոպեով մենակ թողնել կրծքի երեխաներին: Հսկա դարձնագույն առնետներ են հարձակվում: Իսկ ամենազգվելին այն է, որ այդ անասունները միշտ...

- Մի՛ շարունակիր,- Ուինսթոնը ամուր փակեց աչքերը:

- Սիրելի՛ս: Գույնդ գցեցիր: Ի՞նչ պատահեց: Զգվո՞ւմ ես առնետներից:

- Աշխարհում ամենասարսափելի բանը... առնետն է:

Ջուլիան սեղմվեց նրան, փաթաթվեց թևերով ու ոտքերով՝ ասես հանգստացնելով իր մարմնի ջերմությանը: Ուինսթոնը դեռ երկար չէր բացում աչքերը: Մի քանի վայրկյան նրան թվում էր՝ դարձյալ հայտնվել է ծանոթ մղձավանջում, որ կյանքի ողջ ընթացքում ունենում էր: Ու միշտ նույնն էր: Ինքը կանգնած է խավարի պատի առաջ, իսկ դրանից այն կողմ ինչ-որ անդիմադրելի, սարսափելի բան էր, որին վախենում է նայել: Երագում ամենախոր զգացումն ինքնախաբեությունն էր, քանի որ իրականում գիտեր, թե ինչ կա խավարի պատից այն կողմ: Սոսկալի ջանքով, ասես փորձելով սեփական ուղեղից մի կտոր պոկել, կկարողանար նույնիսկ լույսաշխարհի հանել այն: Միշտ արթնանում էր՝ առանց պարզելու, թե ինչ կար այնտեղ... Եվ ահա Ջուլիայի ընդհատված խոսքը ինչ-որ կապ ուներ այդ մղձավանջի հետ:

– Ների՛ր, – ասաց նա: – Բան չկա, ուղղակի առնետ չեմ սիրում:

– Մի՛ անհանգստացիր, սիրելի՛ս, այդ զգվելի անասուններն այլևս չեն գա: Հեռանալուց առաջ անցքը կփակեն պարկի կտորով: Երբ մյուս անգամ այստեղ գանք, կսվաղեն ինչպես հարկն է:

Խուճապի սև ակնթաթոթը գրեթե մոռացվել էր: Մի քիչ ամաչելով՝ Ուինսթոնը հենվեց մահճակալի գլխին: Ջուլիան իջավ մահճակալից, հագավ կոմբինեզոնն ու սուրճ դրեց: Կաթսայից տարածվող բույրն այնքան ուժեղ ու գայթակղիչ էր, որ պատուհանը փակեցին. բակում մեկնումեկը կարող էր զգալ ու հետաքրքրվել: Ամենահաճելին սուրճի հոտը չէր, այլ այն, որ շաքարավազից լեզուն մետաքսաման էր դառնում, զգացողություն, որ Ուինսթոնը բոլորովին մոռացել էր՝ տարիներ շարունակ սախարին օգտագործելով: Մի ձեռքը՝ գրպանում, մյուսով՝ մի կտոր հաց ու ջեմ բռնած, Ջուլիան շրջում էր սենյակում՝ անտարբեր նայելով գրապահարանին, նշում, թե որն է ծավլող սեղանը նորոգելու լավագույն տարբերակը, ընկնում էր հնամաշ ճոճաթողին՝ ստուգելու՝ արդյո՞ք հարմարավետ է, ուրախ ու քամահրանքով ուսումնասիրում տամերկուժամանոց թվատախտակով անհեթեթ ժամացույցը: Նա ապակե ճնշածձանը բերեց անկողին, լույսին

մոտիկ, որ լավ տեսնի: Ուիսսթոնը վերցրեց ձեռքից, ինչպես միշտ՝ հիացած ապակու փափուկ, անձրևաջուր հիշեցնող տեսքով:

– Քո կարծիքով՝ սա ինչի՞ համար է,– հարցրեց Ջուլիան:

– Կարծում եմ՝ ոչ մի բանի: Ինձ թվում է՝ երբեք էլ չի օգտագործվել: Ու ինձ հենց դա է դուր գալիս: Կարծես պատմության մի փոքրիկ մասնիկ լինի, որ մոռացել են փոխել: Հաղորդագրություն նախորդ դարից, եթե, իհարկե, կարողանաս կարդալ:

– Իսկ այն նկարը,– աղջիկը գլխով ցույց տվեց դիմացի պատի փորագրությունը,– նո՞ւյնպես նախորդ դարից է:

– Ավելի հին: Թերևս՝ նախանցյալ դարից: Ո՞վ գիտի: Հիմա անհնար է պարզել որևէ բանի տարիքը:

Ջուլիան մոտեցավ, որ նայի:

– Այ այստեղից էր այդ անասունը ցցել քիթը,– ասաց նա ու քաշեց խփեց նկարի տակի տախտակադրվագին:– Սա ի՞նչ է: Ինչ-որ տեղ տեսել եմ:

– Եկեղեցի է, համենայնդեպս՝ եղել է: Կոչվել է դանիացիների Սուրբ Կլեմենտի եկեղեցի,– հանկարծ նա հիշեց բանաստեղծության հատվածը, որ սովորեցրել էր պարոն Չարինգթոնը, ու տխուր ավելացրեց,– «Նարինջներ ու կիտրոններ»,– Սուրբ Կլեմենտի զանգերն են»:

Ի զարմանս նրա՝ Ջուլիան շարունակեց տողը.

*«Երեք ֆարթինգ պարպռ ես ինձ»,– Սուրբ Մարթինն է
զնգում միշտ:*

«Պարպրերդ ե՞րբ ես տալու»,– Հին Բեյլին է ժամհարում:

– Շարունակությունը մոռացել եմ, բայց հիշում եմ՝ ոնց էր վերջանում. «Ահա մոմ, որ լուսավորի դեպի մահձակալ ճանապարհդ, ահա կացին, որ կտրի գլուխդ»:

Դա ասես նշանաբանի երկու մաս լիներ: Բայց «Հին Բեյլիի զանգերը» տողից հետո պետք է որ էլի տող լիներ: Գուցե հնարավոր լինի պեղել պարոն Չարինգթոնի հիշողությունից, եթե ճիշտ հուշում արվի:

– Ո՞վ է սովորեցրել քեզ,– հարցրեց Ուինսթոնը:

– Պապիկս: Երբ փոքր էի: Նրան գուրջացրին, երբ ութ տարեկան էի... ամեն դեպքում, անհետացավ: Հետաքրքիր է՝ կհտրոնն ինչ է եղել,– անսպասելի ասաց նա:– Իսկ նարինջ տեսել եմ: Կլոր դեղնավուն միրգ է՝ հաստ կաշվով:

– Կհտրոնները հիշում եմ,– ասաց Ուինսթոնը:– Հիսունականներին շատ կար: Այնքան թթու էին, որ երբ հոտ էիր քաշում, ատամներդ սրտում էին:

– Գրագ կգամ, որ նկարի հետևը փայտոջիլներ կան,– ասաց Զուլիան:– Մի օր կհանեմ ու մի լավ կմաքրեմ: Կարծում եմ՝ մեր գնալու ժամանակն է: Դեռ պիտի մաքրեմ շպարս: Ի՞նչ ծանծրոյթ: Հետո դեմքիցդ շրթներկս կմաքրեմ:

Ուինսթոնը մի քանի րոպե էլ պառկած մնաց: Սենյակը մթնում էր: Նա շրջվեց լույսի կողմն ու պառկած նայում էր ապակյա ճնշածծանին: Ոչ թե մարջանը, այլ ապակու ներքին տեսքն էր անվերջանալի հետաքրքրություն առաջացնում: Այնքան խոր էր, բայց միևնույն ժամանակ՝ օդի պես թափանցիկ: Ասես ապակու մակերեսը երկնակամար էր, որ իր մթնոլորտով ամբողջությամբ շրջանակել էր մի փոքրիկ աշխարհ: Ուինսթոնին թվում էր՝ կարող է մտնել ներս, և իրականում ներսում է, և իր հետ՝ կարմրավուն մահճակալն ու ծավվող սեղանը, ժամացույցը, պողպատե փորագրությունն ու հենց ինքը՝ ճնշածծանը: Դա հենց այս սենյակն էր, իսկ մարջանը՝ Զուլիայի և իր կյանքը, որ պարփակվել էր հավերժության մեջ՝ բյուրեղի սրտում:

V

Սայմն անհետացել էր: Առավոտը բացվեց, ու նա չեկավ աշխատանքի. անխոհեմները խոսում էին նրա բացակայության մասին: Հաջորդ օրը ոչ ոք չհիշատակեց նրան: Երրորդ օրը Ուինսթոնը մտավ Արձանագրությունների բաժնի նախասրահ՝

1984

հայտարարությունների տախտակը նայելու: Կախված էր Շախմատի կոմիտեի անդամների ցուցակը, որի անդամ էր Սայմը: Ցուցակը համարյա հին տեսքն ուներ, ջնջված անուն չկար, բայց մի անվամբ կրճատվել էր: Դա էլ բավական էր: Սայմը դադարել էր գոյություն ունենալ. նա երբեք գոյություն չէր ունեցել:

Անտանելի շոգ էր: Նախարարության լաբիրինթոսներում, անպատուհան խցիկներում օդորակիչները նորմալ ջերմաստիճան էին պահպանում, բայց դրսում մայթերը խանձում էին ոտքերդ, իսկ պիկ ժամերին Մետրոյի գարշահոտությունը սարսափելի էր: Ատելության շաբաթվա նախապատրաստությունները շարունակվում էին ամբողջ թափով, և բոլոր նախարարություններն աշխատում էին արտաժամյա: Շքերթներ, հանրահավաքներ, զորահանդեսներ, դասախոսություններ, մոմե ծեփվածքների ցուցադրություն, ցուցահանդեսներ, կինոցուցադրություններ, հեռէկրանի հաղորդումներ. այդ ամենը պետք է կազմակերպվեր. պետք էր տրիբունաներ կառուցել, տեղադրել նկարներ, հորինել կարգախոսներ, գրել երգեր, տարածել բամբասանքներ, կեղծել լուսանկարներ: Գրականության բաժնի Ջուլիայի ստորաբաժանումն ազատվել էր վեպերի գործից ու շտապ թողարկում էր գրքույկներ գազանությունների մասին: Ուինսթոնը, բացի իր սովորական աշխատանքից, ամեն օր երկար ժամանակ էր ծախսում՝ աչքի անցկացնելով «Թայմսի» թղթապանակները, փոխելով ու գեղազարդելով նորությունները, որոնք պետք է մեջբերվեին ելույթներում: Ուշ գիշերներին, երբ կռվարար պրոլների ամբոխները թափառում էին փողոցներում, քաղաքի օդը զարմանալիորեն տենդագին էր: Հրթիռներն ընկնում էին սովորականից հաճախ, երբեմն հեռու-հեռվում լսվում էին հրեշավոր պայթյուններ, որոնց բացատրությունը ոչ ոք չէր կարող տալ. դրանց մասին վարյիվերո բամբասանքներ էին պտտվում:

Նոր մեղեդին, որ պետք է լիներ Ատելության շաբաթվա թեմատիկ երգը (կոչվում էր «Ատելության երգ»), արդեն հորինվել ու անվերջ հնչում էր հեռէկրաններից: Կոպիտ ու հաչոց հիշեցնող

ռիթմ ուներ. չէր կարելի կոչել երաժշտություն, այլ նման էր թմբուկի զարկի: Սարսափելի էր, երբ հարյուրավոր ծայներ ոռնում էին երգը ոտքերի դոփյունին համընթաց: Երգը դուր էր գալիս պրոլետերին, և արդեն գիշերային փողոցներից դուրս էր մղում դեռևս ժողովրդականություն վայելող «Դա միայն անհույս պատրանք էր ու հույս» երգը: Փարսոնսի երեխաներն օր ու գիշեր, անտանելիորեն, նվագում էին սանրով ու զուգարանի թղթի կտորով: Ուփսթոնի երեկոները, առավել քան երբևէ, ծանրաբեռնված էին: Փարսոնսի հավաքած կամավորների ջոկատները փողոցը պատրաստում էին Ատելության շաբաթվան. դրոշներ էին կարում, պաստառներ նկարում, տանիքներին տեղադրում դրոշակափայտեր և վտանգելով իրենց կյանքը՝ փողոցով մեկ լարեր էին քաշում՝ դրոշների համար: Փարսոնսը պարծենում էր, որ միայն «Հաղթանակ» բնակելի շենքից կկախվի չորս հարյուր մետր դրոշի կտավ: Նա տարերքի մեջ էր ու արտույտի պես զվարթ: Շոգն ու ֆիզիկական աշխատանքը լավ պատրվակ էին, որ երեկոյան զգեստափոխվի՝ հագնելով կարճ տաբատ ու բաց վերնաշապիկ: Նա միաժամանակ ամենուր էր՝ ձգում էր, հրում, սղոցում, մուրճով խփում, հորինում, ընկերական քարոզներով ոգևորում բոլորին, իսկ մարմնի ամեն ծալքից արտադրվում էր կծվահամ քրտինքի անսպառ պաշարը:

Ամբողջ Լոնդոնը հանկարծ զարդարվեց նոր ազդագրով, որը մակագրություն չուներ. հսկա, երեք-չորսմետրանոց, անարտահայտիչ մոնղոլական դեմքով ու հսկա սապոզներով եվրասիացի զինվորը նայողի վրա էր գալիս՝ նշան բռնելով ազդրից կրակի առած հրացանով: Որ անկյունից էլ նայեիր, թվում էր՝ հրացանի փողը, որ խոշորանում էր հեռվից նայելիս, հենց քեզ է ուղղված: Պաստառը փակցված էր յուրաքանչյուր պատի յուրաքանչյուր ազատ հատվածում և նույնիսկ թվով գերազանցում էր Մեծ եղբոր պատկերները: Սովորաբար պատերազմի հանդեպ անտարբեր պրոլետերին դա, ինչպես պարբերաբար կատարվում էր, հանգեցրեց հայրենասիրական մոլեգնության: Ասես ընդհանուր տրամադրությամբ

Ներդաշնակվելու համար հրթիռները սովորականից շատ մարդ էին սպանում: Մեկն ընկավ Սթեֆնիի լեփ-լեցուն կինոթատրոնի վրա՝ ավերակների տակ թաղելով մի քանի հարյուր մարդու: Թաղամասի ողջ բնակչությունը մասնակցեց երկարուձիգ թաղման թափորին, որը ձգվեց մի քանի ժամ ու վերածվեց բողոքի ցույցի: Մեկ այլ հրթիռ ընկավ պարապուտում, որն իբրև մանկական խաղահրապարակ էր օգտագործվում, ու մի քանի տասնյակ երեխա կտոր-կտոր եղան: Ջայրագին ցույցերը շարունակվեցին, վառեցին Գոլդսթայնի խրտվիլակը, եվրասիացի զինվորի ցուցապաստառի հարյուրավոր օրինակներ պատռվեցին ու հրո ճարակ դարձան, անկարգությունների ընթացքում թալանվեց մի քանի խանութ. հետո լուրեր տարածվեցին, որ լրտեսներն են ուղղորդում հրթիռները ռադիոալիքներով, վառեցին մի ծեր զույգի տունը, որոնց կասկածում էին, թե օտարերկրյա ծագում ունեն, ու նրանք շնչահեղձ եղան:

Երբ հաջողվում էր հասնել պարոն Չարինգթոնի խանութի վերևի սենյակը, Ջուլիան ու Ուինսթոնը կողք կողքի պառկում էին չհարդարված մահճակալին՝ բաց պատուհանի տակ, մերկ, որպեսզի զովանան: Առնետն այդպես էլ չվերադարձավ, իսկ փայտոջիլները սոսկալի բազմանում էին շոգ եղանակին: Բայց դա կարևոր չէր: Կեղտոտ թե մաքուր՝ սենյակը դրախտ էր: Ներս մտնելուն պես ամեն ինչի վրա սև շուկայից առած պղպեղ էին ցանում, հանում էին հագուստներն ու քրտնած մարմիններով տրվում սիրուն, հետո քնում էին ու արթանանալով պարզում, որ փայտոջիլները ուշքի եկել ու համախմբվում են հակազրոհի համար:

Չորս, հինգ, վեց... յոթ անգամ հանդիպեցին հունիսին: Ուինսթոնը հրաժարվել էր օրվա ցանկացած ժամի ջին խմելու սովորությունից: Կարծես դրա անհրաժեշտությունը չէր զգում: Գիրացել էր, երակային խոցը սպիացել էր՝ միայն դարչնագույն բիծ թողնելով կոճի մաշկին, վաղ առավոտվա հագի նոպաները դադարել էին: Կյանքի ընթացքն այնքան էլ անտանելի չէր. նա այլևս հեռէկրանին ծամածռություններ անելու կամ բարձրաձայն հայհոյելու

ցանկություն չունենք: Հիմա, երբ ապահով թաքստոց ունենիս, համարյա տուն, այլևս զրկանք չէր թվում այն, որ կարող են հանդիպել ոչ հաճախ և երբեմն՝ մի քանի ժամով: Կարևորն այն էր, որ իրենք սենյակ ունեն հնաոճ իրերի խանութի վերնահարկում: Գիտակցումը, որ այն կա և անձեռնմխելի է, գրեթե հավասար էր այնտեղ լինելուն: Սենյակն աշխարհ էր, անցյալի պահոց, որտեղ կարող էին շրջել բնաջնջված կենդանիներ: Ուինսթոնը մտածեց, որ Չարինգթոնը նույնպես բնաջնջված կենդանի է: Վեր բարձրանալիս նա սովորաբար կանգ էր առնում՝ տանտիրոջ հետ մի քանի րոպե խոսելու: Ծերունին հազվադեպ էր լինում դրսում կամ երբեք չէր լինում, մյուս կողմից էլ՝ գրեթե հաճախորդ չունենք: Նա ուրվականի գոյություն էր պահպանում՝ փոքրիկ, մռայլ խանութի ու խորքում գտնվող ավելի փոքր խոհանոցի միջև, որտեղ պատրաստում էր իր ուտելիքը, և որտեղ, բացի այլ իրերից, կար անհավանական հին մի գրամոֆոն՝ հսկայական փողով: Նա ուրախանում էր, երբ զրուցելու հնարավորություն էր ընձեռնվում: Դեգերելով իր էժանագին իրերի արանքում՝ երկար քթով, հաստ ակնոցով ու թավշե պիջակի մեջ կորացած ուսերով ծերունին միշտ ավելի նման էր հավաքորդի, քան վաճառականի: Նա թույլ խանդավառությամբ ձեռքն էր առնում իր այս կամ այն անպետք իրը՝ շշի ձենապակե փական, քթախոտի կոտրված տուփի ներկած կափարիչ, վաղուց մահացած երեխայի մազերով ոսկեպղնձե մեդալիոն՝ ոչ թե խնդրելով, որ Ուինսթոնը գնի, այլ ակնկալելով, որ կհիանա դրանով: Նրա հետ խոսելը նման էր մաշված երաժշտական արկղիկի կոկոտոցը լսելուն: Իր հիշողության անկյուններից պեղել էր մոռացված բանաստեղծությունների ևս մի քանի պատառիկ: Մեկը չորս ու քսան սև կենդեխների մասին էր, երկրորդը՝ ճմռված եղջյուրով կովի, իսկ երրորդը՝ խեղճ աքաղաղ Ռոբինի մահվան մասին: «Ինձ թվաց՝ կհետաքրքրի ձեզ», - հերթական հատվածն արտասանելիս ասում էր հավանություն չտվող քմծիծաղով: Բայց երբեք որևէ բանաստեղծության մի քանի տողից ավելի չէր կարողանում հիշել:

1984

Երկուսն էլ գիտեին, ինչ-որ կերպ երբեք չէին մոռանում, որ այն, ինչ կատարվում է, չի կարող երկար տևել: Լինում էին պահեր, երբ մոտալուտ մահվան փաստը նույնքան շոշափելի էր, որքան մահճակալը, որի վրա պառկած էին, և նրանք փարվում էին իրար մի տեսակ հուսահատ զգայականությամբ, ինչպես անիծված հոգիներ, որոնք տրվում են հաճույքի վերջին պատառին, երբ ժամացույցի զարկին հինգ րոպե է մնացել: Բայց լինում էին նաև պահեր, երբ նրանց համակում էր ոչ միայն ապահովության, այլև հարատևության պատրանքը: Երկուսին էլ թվում էր՝ քանի դեռ այս սենյակում են, իրենց ոչ մի վտանգ չի սպառնում: Այնտեղ հասնելը դժվար էր ու վտանգավոր, բայց սենյակն ինքնին ապաստարան էր: Ճիշտ նույն կերպ էլ ճնշածանին էր նայել՝ զգացողությամբ, որ կարող է հայտնվել ապակյա աշխարհի ներսում, և երբ հայտնվի, ժամանակը կանգ կառնի: Հաճախ նրանք տրվում էին փրկության ցնորքներին: Հաջողությունն անվերջ կշարունակվի, ու մինչև կյանքի վերջը կշարունակեն գաղտնի սիրավեպը: Կամ Քեթրինը կմահանա, և նուրբ խորամանկությամբ Ուինսթոնին ու Ջուլիային կհաջողվի ամուսնանալ: Կամ էլ երկուսով ինքնասպան կլինեն: Կամ կանհետանան, անձանաչելիորեն կփոխվեն, կյուրացնեն պրոլետարական առգանությունը, աշխատանքի կանցնեն գործարանում ու հետնաբակերում անձանաչելի կապրեն իրենց կյանքը: Երկուսն էլ գիտեին, որ այդ ամենն անհեթեթություն է: Իրականում փրկություն չկար: Իրագործելի էր միայն մի ծրագիր՝ ինքնասպանությունը, բայց չէին շտապում իրագործել: Սպասողական վիճակում ապրել օր առ օր, շաբաթ առ շաբաթ՝ հյուսելով ներկան, որ չուներ ապագա. դա անհաղթահարելի բնագոյ էր, ինչպես թոքերն են միշտ հաջորդ շունչն առնում, քանի դեռ օդ կա:

Երբեմն նրանք խոսում էին նաև Կուսակցության դեմ ակտիվ խռովության մասին, բայց գաղափար չունեին՝ ինչպես անել առաջին քայլը: Նույնիսկ եթե առասպելական Եղբայրությունն իրականություն է, մեկ է՝ դժվար է գտնել նրա ուղին: Նա Ջուլիային

պատմեց այն տարօրինակ մտերմության մասին, որ գոյություն ուներ կամ թվում էր, թե գոյություն ունի իր ու Օ'Բրայենի միջև, և այն մասին, որ իր մեջ երբեմն ցանկություն է առաջանում գնալ Օ'Բրայենի մոտ, հայտարարել, որ ինքը Կուսակցության թշնամի է, ու պահանջել նրա օգնությունը: Ջուլիան զարմանալիորեն դա խելագարություն չէր համարում: Նա սովոր էր մարդկանց դատել ըստ նրանց դեմքի, ու նրան բնական էր թվում, որ Ուինսթոնը, հիմնվելով աչքերի փայլի ուժի վրա, հավատում է՝ Օ'Բրայենը վստահելի է: Ավելին, նա ինքնին հասկանալի էր համարում, որ բոլորը կամ գրեթե բոլորը գաղտնի ատում են Կուսակցությունն ու կխախտեին օրենքները, եթե դա անվտանգ լիներ: Բայց հրաժարվում էր հավատալ, որ գոյություն ունի կամ կարող է գոյություն ունենալ համատարած ու կազմակերպված դիմադրություն: Ջուլիան ասում էր, որ Գոլդսթայնի ու նրա ընդհատակյա բանակի մասին հեքիաթներն ընդամենը աղբ են, որ Կուսակցությունը հորինել էր իր նպատակների համար, և պետք է ձևացնես, թե հավատում ես: Կուսակցության ժողովների և ինքնաբուխ ցույցերի ժամանակ քանի՜ անգամ էր գոռացել՝ մահապատիժ պահանջելով մարդկանց համար, որոնց անունները երբեք չէր լսել ու բնավ չէր հավատում նրանց կատարած հանցագործություններին: Երբ դռնբաց դատավարությունները սկսվում էին, նա զբաղեցնում էր իր տեղը Երիտասարդական միության ջոկատներում, որոնք առավտոից գիշեր շրջապատում էին դատարանները՝ ընդմիջումներին երգելով «Մահ դավաճաններին» երգը: Ատելության երկրոպեի ընթացքում Գոլդսթայնի հասցեին վիրավորանքներ հնչեցնելու գործում միշտ գերազանցում էր բոլորին: Սակայն շատ աղոտ պատկերացում ուներ Գոլդսթայնի և նրա ուսմունքի մասին: Նա մեծացել էր հեղափոխությունից հետո և չափազանց երիտասարդ էր, որպեսզի հիշեր հիսունական ու վաթսունական թվականների գաղափարական մարտերը: Նա չէր կարող երևակայել այն, ինչ կոչվում էր անկախ քաղաքական շարժում, բայց ամեն դեպքում Կուսակցությունն անհաղթահարելի էր:

Միշտ գոյություն կունենա և միշտ նույնը կլինի: Դու կարող ես ընդդիմանալ նրան գաղտնի անհնազանդությամբ կամ, ամենաշատը, բռնության մամնավոր գործողություններով, օրինակ՝ ինչ-որ մեկին սպանելով կամ ինչ-որ բան պայթեցնելով:

Որոշ հարցերում նա Ուինսթոնից խորաթափանց էր ու պակաս դյուրազգաց Կուսակցության քարոզչության հանդեպ: Մի անգամ, երբ ինչ-որ բանի հետ կապված հիշատակեց Եվրասիայի դեմ պատերազմը, Ջուլիան ապշեցրեց նրան՝ անփոյթ ասելով, որ իր կարծիքով՝ ոչ մի պատերազմ էլ չկա: Ամեն օր Լոնդոնի վրա ընկնող հրթիռները հավանաբար հենց Օվկիանիայի կառավարությունն էլ արձակում է՝ «մարդկանց վախեցնելու համար»: Այս գաղափարը երբեք չէր ծագել նրա գլխում: Ջուլիան նաև նախանձ առաջացրեց Ուինսթոնի մեջ՝ ասելով, որ Ատելության երկրոպեի ընթացքում իր համար ամենադժվարը ծիծաղը զսպելն է: Բայց կասկածի տակ էր դնում Կուսակցության ուսմունքն այն ժամանակ, երբ դա վերաբերում էր իր անձնական կյանքին: Հաճախ պատրաստ էր ընդունել պաշտոնական առասպելաբանությունը, միայն որովհետև ճշմարտության ու կեղծիքի տարբերությունը կարևոր չէր նրա համար: Օրինակ՝ հավատում էր, որ Կուսակցությունն է օդանավ ստեղծել, ինչպես սովորել էր դպրոցում: (Ուինսթոնը հիշում էր, որ դպրոցական տարիներին՝ հիսունականների վերջին, Կուսակցությունը պնդում էր, որ ուղղաթիռ է ստեղծել. տասնյակ տարիներ անց, երբ Ջուլիան էր սովորում դպրոցում, արդեն պնդում էր օդանավի մասին. մեկ սերունդ հետո էլ կասի, թե շոգեքարշն է ստեղծել): Ու երբ նրան պատմեց, որ օդանավեր գոյություն են ունեցել իր ծննդից և հեղափոխությունից շատ առաջ, այդ փաստը նույնիսկ չհետաքրքրեց Ջուլիային: Ի վերջո, ի՞նչ կարևոր է, թե ով է օդանավ ստեղծել: Ուինսթոնին ավելի քան ցնցեց, երբ պատահական խոսակցությունից պարզեց. Ջուլիան չի հիշում, որ չորս տարի առաջ Օվկիանիան պատերազմել է Արևելաասիայի դեմ ու խաղաղության մեջ է եղել Եվրասիայի հետ: Ճիշտ է, Ջուլիան ողջ պատերազմը կեղծիք

էր համարում, բայց ակնհայտ էր, որ Նույնիսկ չի նկատել, որ թշնամու անունը փոխվել է:

- Կարծում էի՝ միշտ պատերազմել ենք Եվրասիայի դեմ,- անտարբեր ասաց Նա:

Դա մի քիչ վախեցրեց Ուինսթոնին: Օդանավերը Ջուլիայի ծննդից շատ առաջ էին հայտնագործվել, բայց թշնամու փոփոխությունը տեղի էր ունեցել ընդամենը չորս տարի առաջ, երբ Ջուլիան արդեն մեծ էր: Նա մոտ քառորդ ժամ վիժում էր Ջուլիայի հետ: Ի վերջո, հաջողվեց արթնացնել աղքատ հիշողությունը, և Նա դժվարությամբ մտաբերեց, որ մի ժամանակ թշնամին իսկապես եղել է ոչ թե Եվրասիան, այլ Արևելասիան: Բայց անտարբեր էր:

- Մեկ չի՞,- անհամբեր ասաց Նա:- Մի անիծյալ պատերազմը միշտ հաջորդում է մյուսին, ու բոլորն էլ գիտեն, որ տեղեկագրերը սուտ են:

Երբեմն Ջուլիայի հետ խոսում էր Արձանագրությունների բաժնի ու իր լկտի կեղծարարության մասին: Նման բաները չէին վախեցնում Ջուլիային: Նա չէր զգում, որ հողը բացվում է ոտքերի տակ այն մտքից, որ սուտը վերածվում է ճշմարտության: Նա Ջուլիային պատմում էր Ջոնսի, Աարոնսոնի ու Ռադերֆորդի մասին, ինչպես և այն ակնթարթի, երբ թուղթը՝ ապշեցուցիչ հանցանշանը, պահել էր ձեռքում: Դա մեծ տպավորություն չթողեց Ջուլիայի վրա: Նույնիսկ միանգամից չհասկացավ պատմության իմաստը:

- Նրանք քո ընկերներն էին,- հարցրեց:

- Ոչ, երբեք չեմ ճանաչել նրանց: Ներքին կուսակցության անդամներ էին: Բացի այդ, ինձնից շատ ավելի տարիքով են: Նրանք հին, նախահեղափոխական ժամանակներից են: Դեմքով հազիվ էի ճանաչում:

- Ուրեմն անհանգստանալու ի՞նչ կա: Մարդկանց սպանում են բոլոր ժամանակներում, ճիշտ չէ՞:

Նա փորձեց բացատրել Ջուլիային:

- Դա բացառիկ դեպք էր: Հարցն այն չէր, որ ինչ-որ մեկին սպանել են: Հասկանո՞ւմ ես, անցյալը, սկսած երեկվանից, վերացվում է:

1984

Եթե ինչ-որ տեղ գոյություն էլ ունի, ապա միայն նյութական իրերում, որոնց ոչ մի անուն չի կցվում, ինչպես այդ ապակու կտորը: Մենք արդեն տառացիորեն ոչինչ չգիտենք հեղափոխության ու դրան նախորդած տարիների մասին: Ցանկացած արձանագրություն վերացված կամ կեղծված է, բոլոր գրքերը վերաշարադրված են, նկարները՝ նորից նկարված, արձանները, փողոցներն ու շենքերը՝ վերանվանված, բոլոր ամսաթվերը՝ փոխված: Ու դա շարունակվում է օր առ օր, բոլոր առ բոլոր: Պատմությունը կանգ է առել: Ոչինչ չկա, բացի անվերջ ներկայից, որտեղ Կուսակցությունը միշտ իրավացի է: Իհարկե, ես գիտեմ, որ անցյալը կեղծվում է, բայց երբեք չեմ կարողանա ապացուցել, նույնիսկ եթե ինքս եմ կեղծել: Երբ գործն արված է, ապացույցներն անհետանում են: Միակ վկայությունն իմ մտքում է, ու ես հաստատ չգիտեմ՝ արդյո՞ք մեկ այլ մարդ արարած կիսում է իմ հիշողությունները: Իմ ամբողջ կյանքում, դեպքից *հետո*, տարիներ անց, միայն մեկ անգամ եմ իրական ու կոնկրետ ապացույց ունեցել:

– Իսկ ի՞նչ օգուտ դրանից:

– Ոչ մի օգուտ, որովհետև բոլորներ անց դեն նետեցի այն: Բայց եթե այսօր նույնը պատահեր, կպահեի:

– Իսկ ես չեի պահի,– ասաց Ջուլիան:– Պատրաստ եմ դիմել վտանգի, բայց միայն արժեցող բանի համար, ոչ թե հին թերթի կտորի: Ի՞նչ պիտի անեիր դրանով, եթե պահած լինեիր:

– Գուցե ոչ շատ բան: Բայց դա ապացույց էր: Ոմանց կմղեի կասկածելու, եթե համարձակվեի ցույց տալ: Չեմ պատկերացնում, որ կարող ենք որևէ բան փոխել մեր կյանքում: Բայց կարելի է երևակայել, որ այստեղ ու այնտեղ դիմադրության փոքրիկ օջախներ կհայտնվեն. մարդկանց փոքր խմբերը կհամախմբվեն, աստիճանաբար կշատանան, գուցե նույնիսկ ինչ-որ փաստաթղթեր թողնեն իրենցից հետո, որպեսզի հաջորդ սերունդը կարողանա շարունակել մեր կիսատ գործը:

– Ինձ չի հետաքրքրում հաջորդ սերունդը, սիրելիս: Ինձ հետաքրքրում ենք *մենք*:

- Դու միայն գոտկատեղից ներքև ես ապստամբ,- ասաց Ուինսթոնը Նրան:

Ջուլիային դա փայլուն սրամտություն թվաց, ու հիացմունքով փարվեց Ուինսթոնին:

Նրան բոլորովին չէին հետաքրքրում Կուսակցության ուսմունքի խճողումները: Երբ Ուինսթոնը սկսում էր խոսել Անգլոսոցի սկզբունքների, կրկնամտքի, փոփոխելի անցյալի, օբյեկտիվ իրականության մերժման ու նորալեզվի բառերի օգտագործման մասին, Ջուլիան ձանձրանում էր, շփոթվում, ասում էր, որ երբեք ուշադրություն չի դարձրել նման բաների վրա: Բոլորը գիտեին, որ դա աղբ է, ուրեմն ինչո՞ւ անհանգստանար: Գիտե՞ր՝ երբ ծափահարի ու երբ գոռա. դա բավական էր: Եթե շարունակում էր խոսել նման բաներից, Ջուլիան սովորաբար քնում էր, ինչից Ուինսթոնը շփոթվում էր: Աղջիկը նրանցից էր, որոնք կարողանում են քնել ցանկացած ժամի ու ցանկացած դիրքում: Նրա հետ խոսելիս Ուինսթոնը գիտակցում էր, թե որքան հեշտ է ուղղահավատության պատրանք ստեղծել՝ միաժամանակ գաղափար չունենալով, թե այն ինչ է ներկայացնում իրենից: Ինչ-որ առումով Կուսակցության աշխարհայացքն ամենից հաջող արմատավորվում էր նրանց մեջ, ովքեր ի վիճակի չէին այն հասկանալ: Նրանց կարելի էր ստիպել, որ ընդունեն իրականության աղաղակող խեղաթյուրումները, որովհետև երբեք չէին գիտակցում՝ ինչ ահռելի բան են պահանջում իրենցից. հանրային միջոցառումները չէին հետաքրքրում նրանց, ու չէին նկատում, թե ինչ է կատարվում: Կույ էին տալիս ամեն ինչ, և կույ տվածը չէր վնասում նրանց, որովհետև չէր թողնում ոչ մի մնացորդ, ինչպես եգիպտացորենի հատիկը, որ առանց մարսվելու դուրս է գալիս թռչնի մարմնից:

VI

Վերջապես դա կատարվեց: Սպասված լուրը եկավ: Ուինսթոնին թվում էր՝ ամբողջ կյանքում հենց դրան էր սպասել:

Նա քայլում էր նախարարության երկար միջանցքով ու գրեթե հասել էր այնտեղ, ուր Ջուլիան իր ափի մեջ էր դրել երկտողը, երբ զգաց, որ իրենից խոշոր մեկը քայլում է ետևից: Անծանոթը թեթև հագաց՝ որպես խոսելու նախաբան: Ուինսթոնը կտրուկ կանգ առավ ու շրջվեց: Օ'Բրայենն էր:

Վերջապես նրանք դեմ դիմաց էին, և Ուինսթոնին պատեց փախչելու ցանկությունը: Սիրտն ուժգին բաբախեց: Նա չէր կարողանա խոսել: Սակայն Օ'Բրայենը շարունակեց քայլել առաջվա պես՝ մի պահ ընկերաբար դիպչելով Ուինսթոնի ձեռքին, ու երկուսով քայլեցին կողք կողքի: Օ'Բրայենը խոսեց յուրահատուկ ծանրակշիռ քաղաքավարությամբ, ինչով առանձնանում էր Ներքին կուսակցության անդամների մեծամասնությունից:

– Ես ձեզ հետ խոսելու առիթի էի սպասում,– ասաց նա:– Վերջերս «Թայմսում» կարդում էի նորալեզվով ձեր հոդվածներից մեկը: Որքան հասկացա՝ ձեր հետաքրքրությունը նորալեզվի հանդեպ գիտական բնույթ ունի:

Ուինսթոնը մասամբ վերագտել էր ինքնատիրապետումը:

– Հազիվ թե գիտական,– ասաց նա:– Ես պրոֆեսիոնալ չեմ: Դա իմ մասնագիտությունը չէ: Երբեք կապ չեմ ունեցել լեզվի գործնական կառուցվածքի հետ:

– Բայց շատ նրբագեղ եք գրում,– ասաց Օ'Բրայենը:– Դա միայն իմ կարծիքը չէ: Վերջերս խոսում էի ձեր ընկերներից մեկի հետ, որը մասնագետ է: Անունը սոռաջել եմ:

Ուինսթոնի սիրտը դարձյալ ցավով կծկվեց: Ակնհայտ էր, որ խոսքը Սայմի մասին է: Բայց Սայմը պարզապես մեռած չէր. նրան վերացրել էին, նա ոչ ոք էր: Նրան վերաբերող ցանկացած հղում մահացու վտանգավոր կլիներ: Օ'Բրայենի դիտողությունը պետք է

ընդունել որպես ազդանշան, գաղտնաբառ: Մտքի մի փոքրիկ հան-
ցագործություն կատարելով՝ Օ'Բրայենը Ուիլսթոնին մեղսակից
դարձրեց: Նրանք շարունակեցին դանդաղ քայլել միջանցքով,
բայց Օ'Բրայենը հանկարծ կանգ առավ: Քթարմատին շտկեց ակ-
նոցը մի շարժումով, որի մեջ միշտ տարօրինակ, զինաթափող
սիրալիրություն կար: Հետո շարունակեց.

- Իրականում ուզում էի ասել՝ նկատեցի, որ ձեր հողվածում օգ-
տագործել եք երկու բառ, որոնք հնացել են: Բայց հնացել են միայն
բոլորովին վերջերս: Տեսե՛լ եք Նորալեզվի բառարանի տասներորդ
հրատարակությունը:

- Ոչ,- ասաց Ուիլսթոնը:- Չգիտեի, որ արդեն լույս է տեսել:
Արձանագրությունների բաժնում մենք դեռ իններորդ հրատարա-
կությունն ենք օգտագործում:

- Կարծում եմ՝ տասներորդ հրատարակությունը դեռ մի քանի
ամիս էլ չի հայտնվի: Բայց մի քանի նախնական տարբերակ արդեն
շրջանառության մեջ է: Մեկն ինձ մոտ է: Գուցե ձեզ հետաքրքրի՞:

- Շա՛տ,- ասաց Ուիլսթոնը՝ անմիջապես հասկանալով, թե ուր է
գնում խոսակցությունը:

- Որոշ նորամուծություններ շատ սրամիտ են: Բայերի թվի կրճա-
տումը... կարծում եմ՝ ձեզ դուր կգա: Կուզե՞ք բառարանը ձեզ ուղար-
կեմ ցրիչի միջոցով: Բայց վախենամ, որ չափազանց մոռացկոտ եմ
նման հարցերում: Գուցե դուք ձեզ հարմար պահի գաք իմ տուն ու
վերցնեք: Սպասե՛ք: Հիմա կտամ իմ հասցեն:

Նրանք կանգնած էին հեռէկրանի առաջ: Օ'Բրայենը ցրված
քրքրեց գրպանները, ապա փոքրիկ կաշեպատ նոթատետր ու ոս-
կեգոյն թանաքամատիտ հանեց: Անմիջապես հեռէկրանի տակ,
այնպիսի դիրքում, որ մյուս կողմում ցանկացած ոք կարող էր կար-
դալ, թե ինչ է գրում, խզբզեց հասցեն, պատռեց էջն ու փոխանցեց
Ուիլսթոնին:

- Սովորաբար երեկոները տանն եմ,- ասաց նա:- Հակառակ
դեպքում սպասավորս ձեզ կփոխանցի բառարանը:

Նա գնաց՝ թողնելով Ուինսթոնին թղթի կտորը ձեռքին, որն այս անգամ թաքցնելու կարիք չկար: Այնուամենայնիվ, նա զգուշորեն մտապահեց, ինչ գրված էր թղթի վրա, և մի քանի ժամ անց թերթիկը նետեց հիշողության անցքի մեջ՝ բազում այլ թղթերի հետ:

Նրանք խոսել էին ընդամենը մեկ-երկու րոպե: Այդ միջադեպը միայն մի բան կարող էր նշանակել: Հանդիպումը կազմակերպվել էր Օ'Բրայենի հասցեն Ուինսթոնին հանձնելու համար: Ուրիշ հնար չկար. որևէ մեկի բնակության վայրը պարզելու միակ միջոցն ուղիղ հարցն էր: Հասցեագիրք չկար: «Եթե ցանկանաք տեսնել ինձ, կարող եք գտնել այսինչ տեղում», - ասել էր Օ'Բրայենը: Գուցե բառարանում թաքցրած գրություն կա: Բայց ամեն դեպքում մի բան պարզ էր. դավադրությունը, որի մասին երազել էր, գոյություն ունի, ու նա արդեն ընդհուպ մոտեցել էր դրան:

Ուինսթոնը գիտեր, որ վաղ թե ուշ կհնազանդվի Օ'Բրայենի կանչին: Գուցե վաղը, գուցե երկար հապաղումից հետո. հաստատ չգիտեր: Ինչ կատարվում է հիմա, տարիներ առաջ սկսված գործընթացի զարգացումն է: Առաջին քայլը թաքուն, անսպասելի միտքն էր, երկրորդը՝ օրագիրը: Նա մտքից անցել էր բառերի, իսկ հիմա բառերից՝ գործողությունների: Վերջին քայլը կլինի այն, ինչ կկատարվի Սիրո նախարարությունում: Նա հաշտվել էր դրա հետ: Վերջը սկզբի մեջ է: Բայց դա վախեցնում էր. կամ, ավելի ճշգրիտ, նա ասես կանխաձաշակում էր մահը, արդեն պակաս կենդանի էր: Նույնիսկ Օ'Բրայենի հետ խոսելիս, երբ ընկալեց հրավերի իմաստը, պաղ սարսուռը պատեց նրան: Այնպիսի զգացողություն էր, ասես իջել էր խոնավ գերեզմանափոսը. առաջ էլ գիտեր, որ գերեզմանը հեռու չէ ու սպասում է իրեն, բայց դրանից թեթևություն չզգաց:

VII

Ուիսթոնն արթնացավ արցունքն աչքերին: Ջուլիան քնատ փաթաթվեց նրան՝ ինչ-որ բան քրթմնջալով, կարծես ասում էր՝ «Ի՛նչ է պատահել»:

- Երազ տեսա,- սկսեց նա ու արագ կանգ առավ: Չափազանց դժվար էր բառերով արտահայտել: Երազը երազ էր, բայց կար և նրա հետ կապված հիշողությունը, որ արթնանալուց վայրկյաններ անց դուրս լողաց մտքի մեջ:

Նա նորից պառկեց, փակեց դեռևս երազով լեցուն աչքերը: Դա մեծ, լուսաշող երազ էր, որի մեջ իր ամբողջ կյանքն ասես փռվել էր իր առաջ, ինչպես ամառային երեկոյի պատկերը՝ անձրևից հետո: Այդ ամենը կատարվել էր ապակե ճնշածանի ներսում, բայց ապակու մակերեսը երկնակամարն էր, իսկ երկնակամարի ներսում ամեն ինչ ողողված էր պարզ ու փափուկ լույսով, որտեղից կարելի էր անցնել դեպի անսահման հեռուներ: Երազի թեման և, անշուշտ, ինչ-որ իմաստով՝ բովանդակությունը թևի շարժումն էր, որ իր մայրիկն էր անում, և երեսուն տարի անց կրկնել էր վավերագրական ֆիլմում տեսած հրեա կինը, որը փոքրիկ տղային փորձում էր պաշտպանել փամփուշտներից, մինչև որ ուղղաթիռը երկուսին էլ պատառ-պատառ արեց:

- Գիտես,- ասաց նա,- մինչ այս պահը թվում էր՝ ես եմ սպանել մայրիկիս:

- Ինչո՞ւ ես սպանել,- կիսարթուն ասաց Ջուլիան:

- Ես չեմ սպանել նրան: Համենայնդեպս՝ ֆիզիկապես:

Երազում նա հիշել էր այն պահը, երբ վերջին անգամ տեսավ մորը, իսկ արթնանալուց վայրկյաններ առաջ վերհիշեց նույն օրը պատահած մի քանի մանր դեպքերի շղթան: Տարիների ընթացքում երևի դիտավորյալ վանել էր այդ հիշողությունն իր գիտակցությունից: Տարեթիվը հաստատ չէր հիշում, բայց հավանաբար առնվազն տասը տարեկան էր, գուցե՝ տասներկու, երբ դա պատահեց:

1984

Հայրն անհետացել էր որոշ ժամանակ առաջ, բայց չէր հիշում, թե որքան: Ավելի լավ հիշում էր այդ ժամանակի աղմկոտ, անհանգիստ հանգամանքները. պարբերաբար կրկնվող խուճապ՝ կապված օդային հարձակումների հետ, և ապաստանի որոնում Մետրոյի կայարաններում, ամենուր՝ քարերի կույտեր, փողոցների անկյուններում փակցված անընթեռնելի հայտարարություններ, նույն գույնի վերնաշապիկներով երիտասարդների խմբեր, հսկայական հերթեր հացի փռերի առաջ, գնդացրի ընդհատվող կրակահերթ հեռվում, և ամենակարևորը՝ ուտելիքը երբեք չէր հերիքում: Նա հիշում էր հետկեսօրյա երկար ժամերը, որ անց էր կացնում ուրիշ տղաների հետ աղբամանների ու աղբակույտերի շուրջը խնված՝ հավաքելով կաղամբի թերեր, կարտոֆիլի կեղևներ, երբեմն պատահում էր՝ հացի չորացած կեղևներ, որոնցից զգուշորեն հեռացնում էին մոխիրը. հիշեց նաև՝ ինչպես էին սպասում որոշակի երթուղով շարժվող բեռնատարներին, որոնք անասնակեր էին տանում, ու երբ ցնցվում էին ճանապարհի կարկատանների վրա, երբեմն քուսպի մի քանի կտոր էր ընկնում:

Երբ հայրն անհետացավ, մայրը զարմանքի կամ սաստիկ վշտի ոչ մի նշան ցույց չտվեց, միայն հանկարծակի փոխվեց: Թվում էր՝ նրա մեջ կյանք չկա: Նույնիսկ Ուինսթոնի համար պարզ էր, որ սպասում է մի բանի, որ, նրա կարծիքով, անխուսափելի էր: Անում էր անհրաժեշտ ամեն ինչ՝ եփում էր, լվանում, կարկատում, հարդարում անկողինը, լվանում էր հատակը, մաքրում բուխարու դարակի փողին, միայն թե միշտ շատ դանդաղ ու զարմանալիորեն՝ առանց ավելորդ շարժումների, ինչպես նկարչի շարժվող մանեկեն: Նրա խոշոր, բարեկազմ մարմինն ասես բնական ճանապարհով ընկնում էր հանդարտության գիրկը: Երբեմն ժամերով գրեթե անշարժ նստում էր մահճակալին, կերակրում կրտսեր քրոջը՝ երկուերեք տարեկան փոքրիկ, հիվանդոտ, լուռուճունջ երեխային, որի դեմքը նիհարությունից կապիկի էր նմանվել: Հազվադեպ գրկում էր Ուինսթոնին ու երկար սեղմում կրծքին՝ առանց որևէ բան ասելու:

Չնայած երեխայությանն ու եսասիրությանը՝ Ուինսթոնը գիտեր, որ դա ինչ-որ կապ ունի շուտով կատարվելիք մի բանի հետ, որի մասին նա երբեք չէր խոսում:

Նա հիշում էր սենյակը, որտեղ ապրում էին՝ մռայլ, հեղձուցիչ սենյակ, որի կեսը զբաղեցնում էր սպիտակ ծածկոցով մահճակալը: Կար բուխարի՝ գազօջախով, և պահարան, որտեղ ուտելիք էր պահվում, իսկ դրսում՝ սանդղահարթակում, դարչնագույն կավե լվացարանն էր՝ նախատեսված մի քանի սենյակի համար: Նա հիշում էր մայրիկի արձանակերպ մարմինը, որը կռանում էր գազօջախի վրա, որպեսզի ինչ-որ բան խառնի կաթսայի մեջ: Ամենից լավ հիշում էր իր անվերջ քաղցն ու կատաղի և անազնիվ կռիվները ճաշի ժամին: Նորից ու նորից հարցնում էր մայրիկին՝ ինչու ուտելիքն ավելի շատ չէ, գոռում էր նրա վրա ու մոլեգնում (նույնիսկ հիշում էր իր ձայնի տոնայնությունը. շատ շուտ սկսեց խզվել ու երբեմն յուրահատուկ թնդում էր), կամ թնկթնկան պաթոսով ջանում էր ավելի մեծ չափաբաժին ստանալ: Մայրը պատրաստ էր տալ ավելին: Այդպես էլ պետք է լինի, մտածում էր մայրը, «տղան» պետք է ամենամեծ բաժինը ստանա. բայց որքան էլ շատ էր լցնում, նա միշտ ավելին էր պահանջում: Ամեն անգամ ճաշելիս մայրն աղաչում էր չլինել եսասեր ու հիշել, որ փոքր քույրը հիվանդ է և նույնպես ուտելիքի կարիք ունի, բայց անօգուտ էր: Երբ մայրը չէր լցնում ճաշը, նա զայրացած գոռում էր, փորձում նրա ձեռքից ուժով խլել կաթսան ու գդալը, պատառներ խլում քրոջ ափսեից: Գիտեր, որ սովի է մատնում երկուսին էլ, բայց չէր կարող զսպել իրեն. նույնիսկ զգում էր, որ ունի այդ իրավունքը: Ստամոքսում բողբոջող քաղցը կարծես արդարացնում էր նրան: Ուտելուց առաջ և հետո, եթե մայրը չէր հսկում, միշտ թռցնում էր դարակի ուտելիքի խղճուկ պաշարները:

Մի օր շոկոլադի չափաբաժին սահմանվեց: Շաբաթներ կամ ամիսներ առաջ նման բան չկար: Նա միանգամայն հստակ հիշում էր շոկոլադի այդ փոքրիկ անգին կտորը: Երկու ունցիա քաշով կտոր էր (այն ժամանակ դեռ ունցիաներով էին հաշվում)՝ երեք հոգու

1984

համար: Անշուշտ, պետք է բաժանվեր երեք հավասար մասի: Հանկարծ, ասես կողքից, Ուինսթոնը լսեց, թե ինչպես է բարձրաձայն հոխորտալով պահանջում ամբողջ կտորը: Մայրն ասաց, որ ագահություն չանի: Հետո երկար ու ծանծրալի վեճ ծավալվեց՝ կրկնվող գռռոցներով, նվնվոցով, արցունքներով, բողոքներով, սակարկություններով: Փոքրիկ քույրը, որ երկու ձեռքով կառչել էր մայրիկից, ճիշտ կապկի ձագուկի պես, նրա ուսի վրայից նայում էր խռոր, տխուր աչքերով: Ի վերջո, մայրը կոտրեց շոկոլադի երեք քառորդն ու տվեց Ուինսթոնին, իսկ մնացած մեկ քառորդը՝ քրոջը: Փոքրիկ աղջիկը վերցրեց ու բուրջ նայում էր՝ գուցե չհասկանալով, թե ինչ է: Ուինսթոնը մի պահ հետևում էր նրան: Հետո հանկարծակի սրընթաց թռիչքով ձանկեց շոկոլադի կտորը քրոջ ձեռքից ու սլացավ դեպի դուռը:

- Ուինսթոն, Ուինսթոն,- կանչեց մայրը նրա ետևից:- Վերադարձիր: Շոկոլադը քրոջդ տուր:

Կանգ առավ, բայց չվերադարձավ: Մոր անհանգիստ աչքերը կենտրոնացել էին նրա դեմքին: Նույնիսկ հիմա մտածում էր ինչ-որ բանի մասին՝ անհայտ, բայց շուտով կատարվելիք բանի: Քույրը, հասկանալով, որ իրեն զրկեցին ինչ-որ բանից, թույլ-թույլ թնկթնկում էր: Մայրը գրկեց երեխային ու դեմքը սեղմեց իր կրծքին: Նրա շարժումը Ուինսթոնին հուշեց, որ քույրը մահանում է: Նա շրջվեց ու իջավ աստիճաններով՝ մածուցիկ շոկոլադը ձեռքում պահած:

Նա այլևս երբեք չտեսավ մորը: Շոկոլադը խժռելուց հետո ամոթի զգացում ունեցավ ու մի քանի ժամ շրջում էր փողոցներում, մինչև քաղցը տուն քշեց: Երբ վերադարձավ, մայրն անհետացել էր: Այն ժամանակ դա արդեն սովորական երևույթ էր դառնում: Սենյակից ոչինչ չէր պակասել, բացի մորից ու քրոջից: Նրանք հագուստ չէին վերցրել, նույնիսկ մայրիկի վերարկուն: Մինչ այսօր Ուինսթոնը վստահ չէր, որ մայրը մահացել է: Չի բացառվում, որ նրան պարզապես ուղարկել են տաժանապարտների ճամբար: Ինչ վերաբերում է քրոջը, ապա գուցե նրան էլ, ինչպես

Ուինսթոնին, տեղափոխել էին անօթևան երեխաների գաղութներից մեկը (դրանք կոչվում էին «Ուղղիչ կենտրոններ»), որոնք ստեղծվել էին քաղաքացիական պատերազմի հետևանքով, կամ գուցե մոր հետ ուղարկել էին ճամբար, կամ ուղղակի թողել էին ինչ-որ տեղ՝ մեռնելու:

Երագի հիշողությունը, հատկապես թևի գրկող, պաշտպանող շարժումը, որի մեջ դրա ամբողջ իմաստն էր, դեռ վառ էր նրա մտքում: Հիշեց երկու ամիս առաջ տեսած մեկ այլ երագ: Այսօրվա երագում մայրը նստել էր մրոտ սպիտակ ծածկոցով մահճակալին, երեխան գրկին, իսկ այն մեկում՝ սուզվող նավի մեջ էր և ամեն թույն ավելի խոր սուզվելով՝ դեռ նայում էր իրեն մզացող ջրերի միջից:

Նա Ջուլիային պատմեց մոր անհետանալու պատմությունը: Առանց աչքերը բացելու՝ Ջուլիան շրջվեց ու ավելի հարմար տեղավորվեց:

– Պատկերացնում եմ՝ ինչ վայրենի փոքրիկ խոզուկ ես եղել այն ժամանակ,– քրթմնջաց նա:– Բոլոր երեխաներն էլ խոզուկներ են:

– Այո, բայց ամենակարևորն այն է...

Աղջկա շնչառությունից զգացվում էր, որ նորից քնելու է: Ուինսթոնը կուզեր շարունակել պատմությունը մայրիկի մասին: Մոր մասին իր հիշողություններից չէր կարելի եզրակացնել, թե նա արտասովոր կին է եղել, առավել ևս՝ գրագետ. բայց օժտված էր ինչ-որ մեծահոգությամբ, մաքրությամբ, պարզապես որովհետև չափանիշները, որոնց նա ենթարկվում էր, մասնավոր էին: Նրա զգացմունքներն իր սեփականն էին և չէին կարող փոփոխվել դրսից: Նրա մտքով չէր անցնում, որ եթե գործողությունն արդյունք չունի, ապա անիմաստ է: Եթե սիրում ես որևէ մեկին, ուրեմն սիրում ես, իսկ երբ այլևս ոչինչ չունես տալու, տալիս ես սերոյ: Երբ շոկոլադը վերջանում էր, մայրը երեխային սեղմում էր կրծքին: Դա անօգուտ էր, ոչինչ չէր փոխում, ավելի շատ շոկոլադ չէր հայտնվում, երեխայի կամ իր մահը չէր կասեցվում, բայց նրա համար բնական էր: Փախստական կինը նավակի մեջ նույնպես թևով ծածկել էր երեխային, բայց դա նույնքան անօգուտ էր, որքան թղթի կտորով փամփուշտից պաշտպանվելը:

1984

Կուսակցությունը սարսափելի բան է արել. համոզել է քեզ, որ բնագոյները, զգացմունքները ինքնին կարևոր չեն, ու միևնույն ժամանակ խլել է նյութական աշխարհի հանդեպ ցանկացած իշխանություն: Կուսակցության ճանկերում հայտնվելուն պես միևնույն էր դառնում՝ ինչ զգում կամ չէիր զգում, ինչ անում էիր կամ խուսափում էիր անել: Ինչ էլ պատահեր՝ անհետանալու ես, ու ոչ ոք երբեք չի լսելու ոչ քո, ոչ արարքներիդ մասին: Քեզ առանձնացնում էին պատմության հոսքից: Մինչդեռ ընդամենը երկու սերունդ առաջ այդ ամենն այնքան էլ կարևոր չէր թվա ոչ մեկին, որովհետև նրանք չէին փորձում փոխել պատմությունը: Նրանց դեկավարում էր անձնական հավատարմությունը, որը երբեք կասկածի տակ չէր դրվում: Կարևոր էին անձնական հարաբերությունները և միանգամայն անօգնական շարժումը, գրկախառնությունը, արցունքը, մեռնող մարդուն ուղղված խոսքն ինքնին կարող էր արժեք ունենալ: Նա հանկարծ հասկացավ, որ պրոլները մնացել են այդ վիճակում: Նրանք հավատարիմ են ոչ թե կուսակցությանը, երկրին կամ գաղափարին, այլ իրար: Կյանքում առաջին անգամ Ուինսթոնը չէր արհամարհում պրոլներին կամ նրանց վերաբերվում լոկ որպես իներտ ուժի, որը մի օր կյանքի կկոչվի ու կվերածնի աշխարհը: Պրոլները մարդ էին մնացել: Չէին կարծրացել ներքուստ: Պահպանել էին պարզագույն զգացմունքները, որոնք Ուինսթոնը ստիպված էր վերստին սովորել գիտակցաբար: Այդ մասին մտածելիս նա, կարծես ոչ տեղին, հիշեց, թե ինչպես մի քանի շաբաթ առաջ մայթին մի կտրված ձեռք տեսավ ու ոտքով խփեց-զցեց առուն, ասես կաղամբի ցողուն լիներ:

– Պրոլները մարդ են,– բարձրաձայն ասաց նա:– Իսկ մենք՝ ոչ:

– Ինչո՞ւ,– հարցրեց Ջուլիան, որը նորից արթնացել էր:

Ուինսթոնը մի քիչ միտք արեց:

– Երբևէ մտքովդ չի՞ անցել,– ասաց նա,– որ մեզ համար լավագույն ելքն ուղղակի այստեղից հեռանալն ու այլևս երբեք չհանդիպելն է, քանի դեռ շատ ուշ չէ:

- Այո՛, սիրելի՛ս, շատ եմ մտածել: Բայց, մեկ է, չեմ անի:

- Մեր բախտը բերում էր,- ասաց Ուինսթոնը,- բայց դա երկար տևել չի կարող: Դու երիտասարդ ես: Նորմալ, անմեղ տեսք ունես: Եթե հեռու մնաս ինձ նմաններից, գուցե մի հիսուն տարի էլ ապրես:

- Չէ, ես ամեն ինչի մասին մտածել եմ: Կանեմ այն, ինչ կանես դու: Մի՛ վիատվիր: Ես լավ գիտեմ՝ ինչպես ողջ մնամ:

- Կարող է դեռ վեց ամիս էլ միասին լինենք կամ՝ մի տարի, ո՞վ գիտի: Ի վերջո, հաստատ կբաժանվենք: Հասկանո՞ւմ ես՝ ինչքան միայնակ կլինենք: Երբ մեզ բռնեն, մեկմեկու համար չենք կարողանա անել ոչինչ, տառաջցիորեն ոչինչ: Եթե խոստովանեմ, քեզ կգնդակահարեն, եթե հրաժարվեմ խոստովանել, միևնույն է՝ կգնդակահարեն: Ինչ էլ որ անեմ կամ ասեմ, կամ զսպեմ ինձ ու չասեմ, չեմ կարող գոնե հինգ րոպեով հետաձգել քո մահը: Մեզնից ոչ ոք նույնիսկ չի իմանա՝ մյուսը ո՞րջ է, թե՞ մեռած: Մենք կատարելապես անզոր կլինենք: Կարևոր է մի բան. մենք չպիտի դավաճանենք իրար, եթե նույնիսկ դրանից ոչինչ չի փոխվելու:

- Եթե նկատի ունես խոստովանությունը,- ասաց Ջուլիան,- խելք-խելք կխոստովանենք: Բոլորն էլ խոստովանում են: Անհնար է խուսափել դրանից: Նրանք տանջում են:

- Խոստովանությունը նկատի չունեմ: Խոստովանությունը դավաճանությունն է: Կարևոր չէ՝ ինչ ես ասում կամ անում. կարևորը միայն զգացմունքներն են: Եթե ինձ ստիպեն, որ դադարեմ սիրել քեզ, դա կլինի իսկական դավաճանություն:

Ջուլիան մտքի մեջ ընկավ:

- Չեն կարող,- ի վերջո ասաց նա:- Դա միակ բանն է, որ նրանք չեն կարող: Կարող են ստիպել, որ ասես ցանկացած բան, *ցանկացած*, բայց չեն ստիպի, որ հավատաս դրան: Նրանք չեն կարող հայտնվել քո ներսում:

- Ո՛չ,- ոչ այնքան հուսահատ ասաց Ուինսթոնը:- Ո՛չ: Ճիշտ ես: Նրանք չեն կարող հայտնվել քո ներսում: Եթե զգաս, որ արժի մարդ մնալ, նույնիսկ եթե դա անօգուտ է, ուրեմն կհաղթես նրանց:

Ուիկսթոնը մտածեց հեռէկրանի ու նրա մշտարթուն ականջի մասին: Նրանք կարող են լրտեսել քեզ օր ու գիշեր, բայց եթե զգոն լինես, կարող ես խորամանկությամբ գերազանցել նրանց: Չնայած իրենց խելացիությանը՝ նրանք չեն տիրապետում ուրիշի մտքերը կարդալու գաղտնիքին: Գուցե, երբ հայտնվես նրանց ձեռքերում, պարզվի, որ այդքան էլ այդպես չէ: Ոչ ոք չգիտեր՝ ինչ է կատարվում Սիրո նախարարության ներսում, բայց հնարավոր էր կռահել. կտտանքներ, թմրադեղեր, նուրբ գործիքներ, որոնք արձանագրում են քո նյարդային արձագանքը, աստիճանաբար թմրեցում՝ անքնության միջոցով, միայնություն և անվերջ հարցաքննություններ: Ամեն դեպքում հնարավոր չէ թաքցնել փաստերը: Դրանք ջրի երես կելնեն հարցաքննությամբ, կկորզվեն խոշտանգումներով: Բայց եթե նպատակը ոչ թե ողջ մնալն է, այլ մարդ մնալը, ապա ի՞նչ տարբերություն: Նրանք չեն կարող փոխել քո զգացմունքները. ասենք՝ ինքդ էլ չես կարող փոխել, նույնիսկ եթե ցանկանաս: Նրանք կարող են ամենայն մանրամասնությամբ պարզել, թե ինչ ես արել, ասել կամ մտածել, բայց սիրտը, որի մղումներն առեղծված են նույնիսկ քեզ համար, կմնա անմատչելի:

VIII

Նրանց հաջողվեց: Նրանց վերջապես հաջողվեց:

Կանգնել էին երկարուկ, թույլ լուսավորված սենյակում: Հեռէկրանի ձայնն իջեցված էր՝ թույլ խշշում էր. մուգ կապույտ գորգն այնքան ճոխ էր, որ թվում էր՝ քայլում ես թավշի վրայով: Սենյակի հեռավոր ծայրին կանաչ լուսամտիկի տակ դրված սեղանի առաջ նստած էր Օ'Բրայենը, սեղանին, աջ ու ձախ թղթերի տրցակներ էին: Նա նույնիսկ չբարձրացրեց գլուխը, երբ սպասավորը ներս ուղեկցեց Ջուլիային ու Ուիկսթոնին:

Ուիկսթոնի սիրտն այնքան ուժեղ էր բաբախում, որ վստահ չէր՝ կկարողանա՞ խոսել: Նրանց հաջողվել էր, վերջապես հաջողվել էր.

միայն այդ մասին էր մտածում: Այստեղ գալն ընդհանրապես հապճեպ քայլ էր, իսկ միասին գալը՝ բացահայտ անմտություն, չնայած իսկապես եկել էին տարբեր ճանապարհներով ու հանդիպել միայն Օ'Բրայենի տան շենին: Բայց նման դռնից ներս մտնելը մեծ ջանք էր պահանջում: Որևէ մեկին հազվադեպ էր վիճակվում տեսնել ներքին կուսակցության անդամների բնակարանները ներսից, կամ նույնիսկ հայտնվել քաղաքի այն թաղամասում, որտեղ նրանք ապրում էին: Հսկայական բնակելի շենքի ամբողջ մթնոլորտը, հարստությունն ու ընդարձակությունը, լավ ուտելիքի ու լավ ծխախոտի անձանոթ բույրերը, վերովար անող անձայն ու անհավանական արագ վերելակները, հետուառաջ շտապող սպիտակ բաճկոնավոր մատուցողները սարսափեցնում էին: Չնայած այստեղ գալու հիանալի առիթ ուներ, ամեն քայլափոխի Ուինսթոնին հետապնդում էր վախը, որ սև համազգեստով պահնորդը հանկարծ կհայտնվի անկյունից, կպահանջի իր փաստաթղթերն ու կիրամայի հեռանալ: Օ'Բրայենի սպասավորը, սակայն, նրանց ընդունեց առանց երկմտանքի: Փոքրամարմին, թխահեր տղամարդ էր՝ սպիտակ բաճկոնով, շեղանկյուն, միանգամայն անարտահայտիչ դեմքով. գուցե չինացի էր: Միջանցքը, ուր առաջնորդեց հյուրերին, պատված էր փափուկ գորգերով, կաթնագույն պաստառներով ու մաս-մաքուր սպիտակ մանրահատակով: Դա էլ էր վախեցնում: Ուինսթոնը չէր հիշում՝ երբևէ մարդկային մարմինների շփումից չկեղտոտված միջանցք տեսել է:

Օ'Բրայենը ձեռքում թղթի կտոր էր բռնել ու կարծես ուշադիր ուսումնասիրում էր: Ծանր դեմքը՝ թեքված այնպես, որ հնարավոր էր տեսնել քթի ուրվագիծը, միաժամանակ ահարկու և խելացի էր: Մոտ քսան վայրկյան անշարժ նստած էր: Հետո մոտեցրեց խոսագրիչը ու նախարարությունների հիբրիդային ժարգոնով մի հաղորդագրություն շարադրեց.

– Հոդված մեկ ստորակետ հինգ ստորակետ յոթ հավանություն տալ ամբողջը վերջակետ առաջարկություն պարունակվել հողված

1984

վեց կրկնակիպլյուս անհեթեթ սահմանային մտահանցագործություն հետաձգել վերջակետ չչարունակել կառուցողական նախաստացում պլյուս գնահատում մեքենայական վերադիր վերջակետ ավարտ հաղորդագրությամբ:

Նա զգուշորեն բարձրացավ աթոռից ու գորգի վրայով անձայն մոտեցավ նրանց: Պաշտոնական մթնոլորտը նորալեզվի բառերով կարծես մի քիչ թուլացավ, սակայն Օ'Բրայենի դեմքի արտահայտությունը սովորականից մռայլ էր, ասես դժգոհ էր, որ իրեն անհանգստացրին: Սարսափը, որ Ուինսթոնն արդեն զգում էր, հանկարծ ընդհատվեց սովորական շփոթմունքով: Նրան թվաց՝ պարզապես հիմար սխալ է թույլ տվել: Ի՞նչ ապացույց կա, որ Օ'Բրայենն իսկապես քաղաքական դավադիր է: Ոչինչ՝ բացի աչքերի փայլից ու երկինաստ դիտողությունից. իսկ մնացյալը միայն սեփական թաքուն երևակայությունն էր՝ հիմնված երազի վրա: Նույնիսկ չէր կարող պատճառ բռնել, թե եկել է բառարանը վերցնելու. անհնար կլիներ բացատրել Ջուլիայի ներկայությունը: Հեռէկրանի կողքով անցնելիս Օ'Բրայենի գլխում մի միտք ծագեց: Նա կանգ առավ, շրջվեց ու սեղմեց պատի անջատիչը: Սուր շխկոց լսվեց: Ձայնը դադարեց:

Ջուլիան թույլ ծչաց զարմանքից: Չնայած խուճապահար վիճակին՝ Ուինսթոնը չկարողացավ զսպել իրեն:

- Դուք այն կարող եք անջատել, - հարցրեց:

- Այո, - ասաց Օ'Բրայենը: - Մենք կարող ենք անջատել: Մենք ունենք այդ արտոնությունը:

Հիմա Օ'Բրայենը ուղիղ դիմացն էր: Պատկառելի տեսքն իշխում էր նրանց վրա, իսկ դեմքի արտահայտությունը դեռ անվերծանելի էր: Նա համառորեն սպասում էր, որ Ուինսթոնը խոսի, բայց ինչի՞ մասին: Նույնիսկ հիմա հասկանալի էր, որ նա ուղղակի զբաղված մարդ է ու զայրացած մտածում է՝ ինչու իրեն խանգարեցին: Բոլորը լուռ էին: Հեռէկրանը անջատելուց հետո սենյակում մեռյալ լռություն էր: Վայրկյանները դանդաղ անցնում էին իրար ետևից: Ուինսթոնը դժվարությամբ էր նայում Օ'Բրայենի աչքերին: Հետո հանկարծ

մռայլ դեմքը մեղմացավ ապագա ժպիտի նշույլով: Իրեն հատուկ շարժումով Օ'Բրայենն ուղղեց ակնոցը քթի վրա:

– Ե՛ս ասեմ, թե՛ դուք,– հարցրեց նա:

– Ես կասեմ,– աշխույժ պատասխանեց Ուինսթոնը:– Այն իսկապե՛ս անջատված է:

– Այո, ամեն ինչ անջատված է: Մենք մենակ ենք:

– Մենք եկել ենք այստեղ, որովհետև...

Նա լռեց՝ առաջին անգամ հասկանալով, թե որքան աղոտ են իր շարժառիթները: Քանի որ իրականում չգիտեր, թե ինչ օգնություն ակնկալի Օ'Բրայենից, դժվար էր բացատրել՝ ինչու է եկել: Նա շարունակեց՝ գիտակցելով, որ իր խոսքերը թույլ ու հավակնոտ են հնչում:

– Կարծում ենք՝ ինչ-որ դավադրություն կա, ինչ-որ գաղտնի կազմակերպություն, որը գործում է Կուսակցության դեմ, ու դուք Նրա անդամ եք: Ցանկանում ենք անդամագրվել ու աշխատել Նրա համար: Մենք Կուսակցության թշնամիներն ենք: Չենք հավատում Անգսոնցի սկզբունքներին: Մենք մտքի հանցագործներ ենք: Նաև՝ դավաճաններ: Սա ասում եմ, որովհետև ուզում ենք հանձնվել ձեզ: Եթե ցանկանում եք, որ այլ հանցագործություններ էլ խոստովանենք, պատրաստ ենք:

Նա լռեց ու հետ նայեց ուսի վրայով՝ ասես զգալով, որ դուռը բացվել է: Իսկապես, փոքրամարմին, դեղնավուն դեմքով սպասավորն առանց թակելու՝ ներս էր մտել: Ուինսթոնը տեսավ, որ Նրա ձեռքին սկուտեղ կա՝ գրաֆինով ու բաժակներով:

– Մարթինը յուրային է,– հանդարտ խոսեց Օ'Բրայենը:– Խմիչքն այստեղ բերեք, Մարթին: Դրեք կլոր սեղանին: Աթոռները հերիքո՛ւմ են: Ուրեմն կարող ենք նստել ու հանգիստ զրուցել: Ձեզ համար աթոռ բերեք, Մարթին: Գործ կա: Առաջիկա տասը թուրքերին դուք սպասավոր չեք:

Փոքրամարմին մարդը բավական հանգիստ նստեց, բայց՝ սպասավորի պես, որը վայելում է իր արտոնությունը: Ուինսթոնը աչքի

1984

պոչով հետևում էր նրան: Մտածեց, որ այդ մարդն ամբողջ կյանքում ինչ-որ դեր է խաղացել ու հիմա վախենում է նույնիսկ մի պահ դուրս գալ իր դերից: Օ'Բրայենը բռնեց գրաֆինի վզից ու բաժակները լցրեց մուգ կարմիր հեղուկով: Ուինսթոնը աղոտ հիշեց վաղուց տեսած մի բան՝ պատի կամ ցանկապատի վրա. էլեկտրական լույսերից պատրաստված հսկայական շիշ, որն ասես բարձրանում-իջնում էր ու պարունակությունը լցնում բաժակի մեջ: Վերևից հեղուկը գրեթե սև էր, բայց գրաֆինի մեջ շողում էր սուտակի պես: Քաղցր-թթու հոտ ուներ: Նա տեսավ, թե Ջուլիան ինչպես վերցրեց իր բաժակն ու անկեղծ հետաքրքրասիրությամբ հոտոտեց:

– Կոչվում է գինի,– թույլ ժպիտով ասաց Օ'Բրայենը:– Անկասկած, կարդացել եք դրա մասին: Վախենամ՝ Արտաքին կուսակցությունում հազվադեպ է հանդիպում,– դեմքին նորից խորհրդավորության ստվեր հայտնվեց: Բարձրացրեց գավաթը,– կարծում եմ՝ տեղին է սկսել կենացից: Մեր առաջնորդի՝ Էմանուել Գոլդսթայնի համար:

Ուինսթոնը եռանդով բարձրացրեց գավաթը: Գինու մասին նա կարդացել ու երագել էր: Ինչպես ապակե ճնշածձանը կամ պարոն Չարինգթոնի կիսատ հիշած բանաստեղծությունները՝ այն պատկանում էր անհետացած, ռոմանտիկ անցյալին, վաղեմի ժամանակներին, ինչպես Ուինսթոնը սիրում էր մտքում անվանել: Չգիտես ինչու՝ միշտ մտածել էր, որ գինին պետք է շատ քաղցր լինի, ինչպես մոշի ջեմը, և անմիջապես արբեցնի: Իրականում առաջին ունակից գինին հիասթափեցրեց նրան: Տարիներ շարունակ ջին խմելուց հետո գրեթե չզգաց գինու համը: Դատարկ գավաթը դրեց սեղանին:

– Ուրեմն իսկապե՞ս Գոլդսթայն անունով մարդ կա,– հարցրեց նա:

– Այո, այդպիսի անձնավորություն կա, ու նա ողջ է: Բայց չգիտեմ, թե որտեղ է:

– Իսկ դավադրությունը... կազմակերպությունը: Իրական է: Միթե Մտքի ոստիկանության հորինվածքը չէ:

– Ո՛չ, իրական է: Մենք այն կոչում ենք եղբայրություն: Դուք երբեք ավելին չեք իմանա եղբայրության մասին, բացի նրանից, որ այն կա, և դուք նրա անդամն եք: Ես դեռ կվերադառնամ այդ թեմային, – նա նայեց ձեռքի ժամացույցին: – Նույնիսկ Ներքին կուսակցության անդամի համար անխոհեմ քայլ է հեռէկրանը կես ժամից ավելի անջատելը: Դուք չպետք է միասին գայիք և ստիպված կլինեք հեռանալ առանձին-առանձին: Դուք, ընկեր, – ասաց Ջուլիային, – առաջինը կգնաք: Մենք դեռ մոտ քսան բուպե ունենք: Երևի հասկանում եք, որ պետք է ձեզ որոշ հարցեր տամ: Ընդհանուր առմամբ, ինչի՞ եք պատրաստ:

– Այն ամենին, ինչ կարող ենք, – ասաց Ուինսթոնը:

Օ՛րբայենը մի քիչ թեքվել էր աթոռի վրա և հիմա նայում էր Ուինսթոնին: Նա գրեթե անտեսում էր Ջուլիային՝ ասես համարելով, որ Ուինսթոնը կարող է խոսել նրա փոխարեն: Մի պահ կոպերն իջան աչքերի վրա: Սկսեց ցածր, անարտահայտիչ ձայնով հարցնել, ասես սովորական երևույթ էր, ասես ինչ-որ կատեխիզիս էր ընթերցում, ու հարցերի մեծ մասն արդեն ծանոթ էր նրան:

– Պատրա՛ստ եք զոհել ձեր կյանքը:

– Այո:

– Պատրա՛ստ եք սպանություն գործել:

– Այո:

– Զբաղվել սաբոտաժով, որը կարող է հանգեցնել հարյուրավոր անմեղ մարդկանց մահվան:

– Այո:

– Դավաճանել ձեր երկիրն ու հանձնվել օտար պետությունների:

– Այո:

– Պատրա՛ստ եք խաբել, կեղծել, շանտաժ անել, այլասերել երեխաների մտքերը, թմրանյութեր տարածել, խրախուսել մարմնավաճառությունը, տարածել վեներական հիվանդություններ. անել ամենը, ինչը կարող է հանգեցնել բարոյալքման և թուլացնել Կուսակցության ուժը:

- Այո:

- Եթե, օրինակ, մեր շահերից բխի ծծմբական թթու լցնել երեխայի դեմքին, պատրաստ եք անել:

- Այո:

- Պատրաստ եք փոխել ձեր ինքնությունն ու մնացած ամբողջ կյանքն ապրել որպես մատուցող կամ նավանորոգարանի աշխատող:

- Այո:

- Պատրաստ եք ինքնասպանություն գործել, երբ հրամայենք:

- Այո:

- Դուք՝ երկուսդ, պատրաստ եք բաժանվել ու այլևս երբեք չտեսնել իրար:

- Ոչ,- ընդհատեց Ջուլիան:

Ուինսթոնին թվաց՝ մինչ իր պատասխանը երկար ժամանակ անցավ: Մի պահ նույնիսկ թվաց, թե զրկվել է խոսելու ունակությունից: Լեզուն անձայն շարժվում էր՝ նախ կազմելով մի բառի առաջին վանկը, հետո՝ մյուսինը, նորից ու նորից: Մինչ պատասխանն արտաբերելը չգիտեր, թե ինչ է ասելու:

- Ոչ,- վերջապես ասաց նա:

- Կեցցեք, որ ասացիք,- գոչեց Օ'Բրայենը:- Մեզ անհրաժեշտ է իմանալ ամեն ինչ:

Նա շրջվեց Ջուլիայի կողմն ու ավելացրեց ավելի արտահայտիչ ձայնով.

- Հասկանո՞ւմ եք, եթե նույնիսկ նա ողջ մնա, հնարավոր է՝ դառնա ուրիշ մարդ: Գուցե ստիպված լինենք փոխել նրա ինքնությունը: Դեմքը, շարժումները, ձեռքերի ձևը, մազերի գույնը... նույնիսկ ձայնը ուրիշ կլինի: Դուք ինքներդ կարող եք վերածվել ուրիշ մարդու: Մեր վիրաբույժները կարող են անձանաչելիորեն փոխել մարդկանց: Երբեմն դա անհրաժեշտ է: Երբեմն նույնիսկ մարմնի վերջույթներ ենք կտրում:

Ուինսթոնը չկարողացավ զսպել իրեն ու նորից նայեց Մարթինի մոնղոլական դեմքին: Ոչ մի սպի չտեսավ: Ջուլիան այնպես էր

գունատվել, որ պեպենները երևում էին, բայց խիզախ նայում էր Օ'Բրայենին: Նա համաձայնության նման մի բան քրթմնջաց:

- Լավ: Ուրեմն պայմանավորվեցինք:

Սեղանին արծաթե ծխախոտատուփ կար: Օ'Բրայենը ցրված տեսքով մի սիգարետ վերցրեց, հետո վեր կացավ ու սկսեց դանդաղ հետուառաց անել, ասես կանգնած ավելի լավ էր մտածում: Սիգարետները շատ լավն էին, հաստ, խիտ լցված, թղթի անսովոր մետաքսանման փափկությամբ: Օ'Բրայենը նորից նայեց ձեռքի ժամացույցին:

- Լավ կլինի վերադառնաք մառան, Մա'րթին,- ասաց նա:- Քառորդ ժամից կմիացնեն: Գնալուց առաջ ուշադիր նայեք այս ընկերներին: Դուք էլի եք հանդիպելու նրանց: Ես՝ գուցե ոչ:

Ճիշտ ինչպես մուտքի դռան մոտ՝ փոքրամարմին տղամարդու մուգ աչքերը շողշողացին նրանց դեմքերի վրայով: Նրա շարժումներում բարյացակամություն չկար: Մտապահեց արտաքինը, բայց հետաքրքրություն նրանց հանդեպ չունեի կամ էլ ցույց չէր տալիս: Ուինսթոնը մտածեց, որ գուցե սինթետիկ դեմքն ի վիճակի չէ փոխել իր արտահայտությունը: Առանց որևէ խոսքի կամ հրաժեշտ տալու՝ Մարթինը դուրս եկավ՝ ետևից անձայն փակելով դուռը: Օ'Բրայենը քայլում էր սենյակում՝ մի ձեռքը սև տաքատի գրպանում, իսկ մյուսում՝ սիգարետ:

- Հասկանո՞ւմ եք,- ասաց նա,- որ պայքարելու եք խավարի մեջ: Միշտ կլինեք խավարի մեջ: Կստանաք հրամաններ ու կենթարկվեք դրանց՝ առանց իմանալու, թե ինչու: Ավելի ուշ ձեզ գիրք կուղարկեն, որից կսովորեք մեր հասարակության իրական էությունը և ռազմավարությունը, որի միջոցով այն պետք է ոչնչացնենք: Երբ կարողաք գիրքը, կդառնաք Եղբայրության լիիրավ անդամ: Ասկայն բացի ընդհանուր նպատակներից, հանուն որոնց պայքարում ենք, և կոնկրետ անհետաձգելի առաջադրանքներից՝ երբեք ոչինչ չեք իմանա: Ասում եմ ձեզ՝ Եղբայրությունը գոյություն ունի, բայց չեմ կարող ասել՝ նրա անդամները հարյուրն են, թե՞ տասը միլիոն:

Երբեք չեք կարող ձեր անձնական կապերով իմանալ՝ արդյոք նրանք տասից ավելի՞ են: Դուք կունենաք երեք կամ չորս մտերիմ, որոնք ժամանակ առ ժամանակ կանհետանան, և կհայտնվեն նորերը: Քանի որ սա ձեր առաջին կապն էր, կպահպանվի: Երբ հրամաններ ստանաք, իմացեք, որ իմ կողմից են: Եթե մեզ պետք լինեք, կկապվենք Մարթինի միջոցով: Երբ ձեզ ի վերջո բռնեն, կխոստովանեք: Դա անխուսափելի է: Բացի ձեր սեփական գործողություններից, ուրիշ ոչինչ պետք չի լինի խոստովանել: Դուք կարող եք մատնել միայն մի քանի ոչ կարևոր մարդու: Գուցե նույնիսկ ինձ չմատնեք: Հնարավոր է՝ մինչ այդ մահացած լինեմ կամ ուրիշ մարդ դառնամ՝ ուրիշ արտաքինով:

Նա շարունակեց հետուառաջ քայլել փափուկ գորգի վրա: Չնայած մարմնի խոշորությանը՝ շարժումներում զգալի նրբագեղություն կար: Դա երևում էր նույնիսկ ձեռքը գրպանը տանելուց կամ ծխախոտ բռնելուց: Այնպիսի տպավորություն էր, որ օժտված է ուժով, բայց առավել՝ վստահությամբ ու հեզնախառն խորաթափանցությամբ: Չնայած լրջությանը՝ նրա մեջ չկար նեղմտության ոչ մի նշույլ, որ հատուկ է մոլեռանդներին: Երբ խոսում էր սպանության, ինքնասպանության, վեներական հիվանդությունների, անդամահատված վերջույթների ու փոխված դեմքերի մասին, խոսքի մեջ հեզնանք էր նկատվում: «Դա անխուսափելի է,– կարծես ասում էր նրա ձայնը,– մենք դա պարտավոր ենք անել՝ առանց նահանջելու: Բայց այլևս ստիպված չենք լինի անել, երբ զգանք, որ դարձյալ արժի ապրել»: Ուինսթոնը Օ'Բրայենի հանդեպ հիացմունքի ալիք զգաց, գրեթե երկրպագություն: Մի պահ մոռացել էր Գոլդսթայնի մշուշոտ կերպարը: Նայելով Օ'Բրայենի հզոր ուսերին ու կոպիտ, տգեղ, բայց քաղաքակիրթ դեմքին, անհնար էր հավատալ, որ նրան կարելի է հաղթել: Չկար մի հնարք, որ չկարողանար բացահայտել, մի վտանգ, որ չկարողանար կանխատեսել: Նույնիսկ Ջուլիան էր տպավորված: Նա հանգցրել էր սիգարետն ու լարված լսում էր: Օ'Բրայենը շարունակեց.

– Դուք, անշուշտ, լսել եք եղբայրության մասին բամբասանքները: Անկասկած, ձեր պատկերացումն ունեք նրա մասին: Հավանաբար պատկերացրել եք դավադիրների հսկա ընդհատակյա աշխարհ, որոնք գաղտնի հանդիպում են մառաններում, պատերի վրա խզբզում հաղորդագրություններ, միմյանց ծանաչում գաղտնաբառերի կամ ձեռքերի հատուկ շարժումների միջոցով: Ոչ մի նման բան: Անհնար է, որ եղբայրության անդամները ծանաչեն իրար. նրանցից յուրաքանչյուրը չի կարող ծանաչել մի քանիսից ավելի մարդկանց: Գողթսթայնն ինքը, եթե ընկնի Մտքի ոստիկանության ձեռքը, չի կարող տալ եղբայրության անդամների ամբողջական ցուցակը կամ որևէ տեղեկություն, որի միջոցով ձեռք կբերեն այդ ցուցակը: Նման ցուցակ գոյություն չունի: Եղբայրությունը հնարավոր չէ վերացնել, որովհետև այն կազմակերպություն չէ՝ բառի սովորական իմաստով: Այն ոչինչ չի միավորում, բացի գաղափարից, որն անխորտակելի է: Երբեք ոչ մի բանի վրա չեք կարող հենվել, բացի գաղափարից: Չեք ունենա ոչ ընկերներ, ոչ քաջալերում: Երբ ձեզ ի վերջո բռնեն, օգնություն չեք ստանա: Մենք երբեք չենք օգնում մեր անդամներին: Առավելագույնը, երբ անհրաժեշտ է լինում ապահովել ինչ-որ մեկի լուրջությունը, երբեմն կարողանում ենք գաղտնի կերպով ածելի հասցնել բանտարկվածի խուց: Դուք ստիպված կլինեք ընտելանալ առանց արդյունքների ու հույսերի ապրելուն: Միառժամանակ կաշխատեք, կբռնվեք, կխոստովանեք ու հետո կմեռնեք: Ուրիշ արդյունք չեք տեսնի: Անհնար է, որ ձեր կյանքում տեղի ունենա որևէ նկատելի փոփոխություն: Մենք մեռյալներ ենք: Մեր միակ իրական կյանքն ապագայում է: Մասնակցելու ենք նրան որպես մի բուռ փոշի և ոսկորի փշուրներ: Բայց չգիտենք՝ որքան հեռու է ապագան: Գուցե՝ հազար տարի անց: Ներկայում ոչինչ հնարավոր չէ, բացի ողջամտության տարածքը մի քիչ մեծացնելուց: Մենք չենք կարող խմբով գործել: Կարող ենք միայն մեր իմացությունը փոխանցել մեկից մյուսին, սերնդից սերունդ: Մտքի ոստիկանությունը մեր դեմ ուրիշ ոչ մի միջոց չունի:

Նա կանգ առավ ու երրորդ անգամ նայեց ձեռքի ժամացույցին:

1984

- Մոտենում է ձեր գնալու ժամանակը, ընկե՛ր,- ասաց նա Ջուլիային: - Սպասե՛ք: Գրաֆինը դեռ կիսով չափ լի է:

Նա լցրեց գավաթներն ու բարձրացրեց իրենը:

- Հիմա՞ ինչ կենաց խմենք,- ասաց նա թույլ հեգնանքով:- Մտքի ուստիկանության շփոթմունքի՞, Մեծ եղբոր մահվա՞ն, մարդասիրության՞, ապագայի՞ համար:

- Անցյալի համար,- ասաց Ուինսթոնը:

- Անցյալն ավելի կարևոր է,- ծանրակշիռ համաձայնեց Օ'Բրայենը:

Նրանք դատարկեցին գավաթները, և մեկ րոպե անց Ջուլիան վեր կացավ, որ հեռանա: Օ'Բրայենը մի փոքր տուփ վերցրեց պահարանի վերևից, նրան տվեց մի հարթ, սպիտակ հաբ ու ասաց, որ դ՛նի լեզվի վրա: Ասաց, որ դա պետք է գինու հոտը թաքցնելու համար. վերելակավարները շատ ուշադիր են: Երբ դուռը փակվեց Ջուլիայի ետևից, ասես մոռացավ նրա գոյության մասին: Մեկ-երկու քայլ արեց, ապա կանգ առավ:

- Որոշ մանրամասներ պետք է քննարկվեն,- ասաց նա:- Ենթադրում եմ, որ ինչ-որ թաքստոց ունեք:

Ուինսթոնը բացատրեց, որ պարոն Չարինգթոնի խանութի վերևում սենյակ կա:

- Դա առայժմ բավական է: Ավելի ուշ ուրիշ տեղ կգտնենք ձեզ համար: Կարևոր է հաճախ փոխել թաքստոցը: Իսկ մինչ այդ ես ձեզ կուղարկեմ *գիրքը* (Ուինսթոնը նկատեց, որ նույնիսկ Օ'Բրայենն է այդ բառը շեշտված արտասանում), Գոլդսթայնի գիրքը, հնարավորինս շուտ: Գուցե մի քանի օր պահանջվի այն ձեռք բերելու համար: Երևի պատկերացնում եք, որ քանակը սահմանափակ է: Մտքի ուստիկանությունը որսում ու ոչնչացնում է դրանք գրեթե նույն արագությամբ, ինչպես հրատարակում ենք: Բայց դա գրեթե ոչինչ չի փոխում: Գիրքը հնարավոր չէ ոչնչացնել: Եթե վերջին օրինակն էլ վերանա, կվերահրատարակենք գրեթե բառ առ բառ: Պայուսակո՞վ եք գնում աշխատանքի,- ավելացրեց նա:

– Որպես կանոն՝ այո:

– Ինչպիսի՞ն է:

– Սև, խիստ հնամաշ: Երկու ճարմանդով:

– Սև, երկու ճարմանդ, հնամաշ... լավ է: Մոտ օրերս, կոնկրետ օրը չեմ կարող ասել, ձեր առավոտյան աշխատանքային առաջադրանքներից մեկում տառասխալով բառ կլինի, ու ստիպված կլինեք կրկնություն խնդրել: Հաջորդ օրը աշխատանքի կգնաք առանց պայուսակի: Օրվա ընթացքում մի պահի փողոցում մի մարդ կդիպչի ձեր թևին ու կասի. «Կարծես թե գցել եք ձեր պայուսակը»: Նա ձեզ մի պայուսակ կտա, որի մեջ կլինի Գոլդսթայնի գրքի կրկնօրինակը: Կվերադարձնեք տամնչորս օրվա ընթացքում:

Մի պահ նրանք լուռ էին:

– Ձեր հեռանալուն մի քանի րոպե է մնացել,– ասաց Օ'Բրայենը:– Մենք նորից կհանդիպենք... եթե հանդիպենք...

Ուինսթոնը նայեց Օ'Բրայենին.

– Այնտեղ, ուր խավար չկա՞,– անվստահ ավարտեց:

Օ'Բրայենը գլխով հավանության նշան արեց՝ առանց զարմանքի նշույլի:

– Այնտեղ, ուր խավար չկա,– ասաց նա, ասես հասկացել էր ակնարկը:– Իսկ մինչ այդ՝ կուզե՞ք որևէ բան ասել հեռանալուց առաջ: Որևէ ցանկություն: Որևէ հարց:

Ուինսթոնը մտածեց: Կարծես չկար որևէ հարց, որ կուզեր տալ, բայց նաև չէր ուզում բարձրագույն տափակություններ ասել: Օ'Բրայենի կամ Եղբայրության հետ անմիջական կապ ունեցող որևէ այլ բանի փոխարեն նրա մտքում հայտնվեցին մութ ննջասենյակի բաղադրյալ պատկերը, որտեղ մայրն անցկացրել էր վերջին օրերը, պարոն Չարինգթոնի խանութի վերևի սենյակը, թղթե ճնշածաման ու պողպատե փորագրությունը՝ վարդափայտե շրջանակով: Նա գրեթե իմիջիպլոց ասաց.

– Երբևէ լսե՞լ եք այս հին բանաստեղծությունը, այսպես է սկսվում. «Նարինջներ ու կիտրոններ»,– Սուրբ Կլեմենտի զանգերն են»:

1984

Օ'Բրայենը դարձյալ գլխով նշան արեց և ծանրակշիռ ու սիրալիիր ավարտեց տունը.

– «Նարինջներ ու կիպրոններ»,– Սուրբ Կլեմենտի զանգերն են:

«Երեք ֆարթինգ պարպր ես ինձ»,– Սուրբ Մարթինն է
զնգում միշտ:

«Պարպրերդ երբ ես տալու»,– Հին Բեյլին է ժամհարում:

«Գանձերիս եմ սպասում»,– Շորդիթի զանգն է ասում:

– Դուք գիտե՞ք վերջին տողը,– ասաց Ուինսթոնը:

– Այո, գիտեմ վերջին տողը: Վախենամ՝ հիմա ձեր գնալու ժամանակն է: Բայց սպասեք. ձեզ էլ հաբ տամ...

Երբ Ուինսթոնը վեր կացավ, Օ'Բրայենը մեկնեց ձեռքը: Նրա հզոր թաթը ճմլեց Ուինսթոնի ափի ոսկորները: Դռան մոտ Ուինսթոնը հետ նայեց, բայց Օ'Բրայենն արդեն մոռանում էր նրա մասին: Նա սպասում էր՝ ձեռքը հեռէկրանի անջատիչին: Նրա ետևում Ուինսթոնը տեսնում էր գրասեղանը՝ վրան կանաչ լուսամուկով լամպ, խոսազորիչ ու թղթերով լեփ-լեցուն լարահյուս զամբյուղներ: Միջադեպը մոռացվեց: Ուինսթոնը մտածեց, որ երեսուն վայրկյան անց Օ'Բրայենը կվերադառնա իր ընդհատված ու կարևոր կուսակցական աշխատանքին:

IX

Ուինսթոնը հոգնածությունից վերածվել էր դոնդողի: Դոնդողը ամենահարմար բառն էր ու հանկարծ ծագեց նրա մտքում: Մարմինը ոչ միայն դոնդողի պես թուլացել էր, այլև թափանցիկ դարձել: Թվում էր՝ ձեռքը բարձրացնի, լույսը կթափանցի միջով: Աշխատանքային խրախճանքը խմել էր ամբողջ արյունն ու ավիշը՝ միայն նյարդերի, ոսկորների ու մաշկի փխրուն կառույցը թողնելով: Բոլոր

զգացողությունները կարծես սրվել էին: Կոմբինեզոնը հարում էր ուսերը, մայրը խուտուտ էր տալիս ոտքերը, նույնիսկ ձեռքը բացելն ու փակելը այնպիսի ջանք էին պահանջում, որից հողերը ճրթճրթում էին:

Հինգ օրվա ընթացքում աշխատել էր ավելի քան իննսուն ժամ: Նույնքան՝ նախարարության բոլոր ծառայողները: Հիմա ամեն ինչ ավարտվել էր, ու նա տառացիորեն ոչ մի գործ չունեի, ոչ մի կուսակցական աշխատանք՝ մինչև վաղը առավոտ: Կարող էր վեց ժամ անցկացնել թաքստոցում, իսկ մյուս ինը ժամը՝ անկողնում: Ցերեկային մեղմ արևի տակ նա դանդաղ քայլեց կեղտոտ փողոցն ի վեր՝ դեպի պարոն Չարինգթոնի խանութը, մի աչքով հետևելով՝ պարեկներ կա՞ն, թե՞ ոչ, բայց չգիտես ինչու՝ համոզված, որ այսօր ոչ ոք իրեն չի խանգարի: Ծանր պայուսակը ամեն քայլափոխի հարվածում էր ծնկին՝ ցավը տարածելով ոտքով մեկ: Պայուսակում գիրքն էր, որն արդեն վեց օր իր մոտ էր, բայց ոչ բացել էր, ոչ էլ նայել:

Ատելության շաբաթվա վեցերորդ օրը՝ երթերից, ելույթներից, գոռում-գոչյուններից, երգերից, դրոշներից, ազդագրերից, ֆիլմերից, մոմե արձանիկներից, թմբուկի զարկերից ու շեփոռի ձցոցներից, երթի մասնակիցների ոտնադոփյուններից, տանկերի թրթուրների աղմուկից, ինքնաթիռների դղրոյունից, թնդանոթների հրետազարկից հետո... վեց օր տևած այս ամենից հետո, երբ հանրային օրգազմը մոտենում էր գազաթնակետին, իսկ Եվրասիայի դեմ համընդհանուր ատելությունն արդեն հասել էր այնպիսի զառանցանքի, որ եթե ամբոխի ձեռքն ընկնեին այն 2000 Եվրասիացի ռազմագերիները, որոնք պիտի հրապարակավ կախաղան հանվեին արարողությունների վերջին օրը, նրանց անկասկած պատառ-պատառ կանեին. հենց այդ ժամանակ հայտարարվեց, որ Օվկիանիան բնավ չի պատերազմում Եվրասիայի դեմ: Օվկիանիան պատերազմի մեջ է Արևելաասիայի հետ: Եվրասիան դաշնակից էր:

Անշուշտ, խոսք չկար, ինչ-որ փոփոխություն է եղել: Միայն հայտնի դարձավ, հանկարծակի ու ամենուր, որ թշնամին ոչ թե Եվրասիան է, այլ Արևելաասիան: Երբ դա պատահեց, Ուինսթոնը

1984

մասնակցում էր Լոնդոնի կենտրոնական հրապարակներից մեկում ընթացող ցույցին: Գիշեր էր, և սպիտակ դեմքերն ու ալ կարմիր դրոշները ողողված էին լուսարձակների մեռած լույսով: Հրապարակում մի քանի հազար մարդ էր հավաքվել, նրանց թվում՝ հազարին մոտ դպրոցականների մի խումբ՝ Լրտեսների համազգեստով: Ալ կարմիր կտորով պատած ամբիոնից Ներքին կուսակցության մի հռետոր՝ փոքրամարմին վտիտ մի մարդ, անհամաչափ երկար թևերով ու մեծ, ճաղատ գլխով, որի վրա մի քանի բարակ խոպոպ էր ցրված, ճառում էր ամբոխի առաջ: Ատելությունից ջղաձգվող գաճաճը մի ձեռքով խեղդում էր խոսափողի վիզը, մինչդեռ մյուսի ոսկրոտ ու ահռելի թաթը սպառնալից քրքրում էր օդն իր գլխավերևում: Բարձրախոսների պատճառով մետաղական դարձած ձայնը թնդյունով խոսում էր անվերջ վայրենությունների, սպանությունների, աքսորների, կողոպուտների, բռնաբարությունների, ռազմագերիների խռտանգումների, խաղաղ բնակչության ռմբակոծությունների, քարոզչական հորինվածքների, լկտի հարձակումների, խախտված պայմանագրերի մասին: Գրեթե անհնար էր լսել նրան ու մեկ րոպե անց՝ չհավատալ, իսկ երկու րոպեից՝ չգազազել: Ժամանակ առ ժամանակ ամբոխի մոլեգնությունը եռում էր, և ելույթ ունեցողի ձայնը սուզվում էր վայրի, գազանային մռնչոցի մեջ, որն ինքնաբուխ դուրս էր թռչում հազարավոր կոկորդիներից: Ամենից վայրագ ճչում էին դպրոցականները: Արդեն մոտ քսան րոպե խոսել էր, երբ շտապ ամբիոն բարձրացավ սուրհանդակը ու թղթի մի կտոր խցկեց ելույթ ունեցողի ձեռքը: Նա բացեց թուղթն ու կարդաց՝ առանց ելույթն ընդհատելու: Ոչինչ չփոխվեց ոչ ձայնի, ոչ շարժումների, ոչ էլ խոսքի բովանդակության մեջ, բայց հանկարծ փոխվեցին անունները: Առանց որևէ խոսքի ամբոխի միջով հորդեց ըմբռնումի ալիքը: Պատերազմում էր Արևելասասիայի՝ դեմ: Հաջորդ պահին սոսկալի իրարանցում սկսվեց: Բոլոր դրոշներն ու պաստառները, որոնցով զարդարված էր հրապարակը, սխալ էին: Կեսի վրա ընդհանրապես սխալ դեմքեր էին: Վնասարարություն: Գոլդսթայնի գործակալների արածն է:

Բուռն դադար եղավ. այդ ընթացքում պաստառները պոկվեցին պատերից, դրոշակները պատառ-պատառ եղան ու նետվեցին ոտքերի տակ: Լրտեսները ճարպկության հրաշքներ էին գործում՝ մազլցում էին տանիքներն ու պոկում ծխնելույզների արանքում թպրտացող պաստառները: Երկու-երեք րոպեից ամեն ինչ վերջացած էր: Հռետորը, որն այդպես էլ բաց չէր թողել խոսափողի վիզը, շարունակեց ելույթը՝ ուսերն առաջ թեքած, ազատ ձեռքով քերելով օդը: Եվս մի րոպե, ու նորից պայթեց ամբոխի կատաղի մռչոցը: Ատելությունը շարունակվում էր, ասես ոչինչ չէր փոխվել. միայն թիրախն էր ուրիշ:

Վերհիշելով՝ Ուինսթոնն ապշեց նրանից, որ հռետորը գիծը փոխել էր տառացիորեն նախադասության կեսին՝ ոչ միայն առանց դադարի, այլև նույնիսկ առանց շարահյուսությունը փոխելու: Բայց այդ պահին միտքն այլ բանով էր զբաղված: Հենց իրարանցման պահին, երբ պաստառներն էին պատռում, մեկը, որի դեմքը չէր հիշում, դիպավ ուսին ու ասաց.

– Ներեցեք, ինձ թվում է՝ գցել եք ձեր պայուսակը:

Նա ցրված վերցրեց պայուսակը ու ոչինչ չասաց: Գիտեր, որ միայն մի քանի օր անց կկարողանա նայել ներսը: Հենց որ ցույցն ավարտվեց, գնաց ուղիղ Ճշմարտության նախարարություն, չնայած գրեթե ժամը քսաներեքն էր: Նախարարության ամբողջ կազմը նույն կերպ վարվեց: Աշխատավայր վերադառնալու մասին արդեն հեռէկրանից արձակվող հրամաններն անտեղի էին:

Օվկիանիան պատերազմում է Արևելաասիայի դեմ. Օվկիանիան միշտ էլ պատերազմել էր Արևելաասիայի դեմ: Վերջին հինգ տարիների քաղաքական գրականության մեծ մասը միանգամից հնացավ: Բոլոր կարգի գեկուցումներն ու արձանագրությունները, թերթերը, գրքերը, գրքույկները, ֆիլմերը, երգերը, լուսանկարները. ամեն ինչ պետք էր շտկել կայծակնային արագությամբ: Չնայած որևէ ցուցում չէր եղել, հայտնի դարձավ, որ ղեկավարները որոշել են մեկ շաբաթվա ընթացքում ամենուր վերացնել ցանկացած հիշատակում Եվրասիայի դեմ պատերազմի կամ Արևելաասիայի

1984

հետ դաշինքի մասին: Ահռելի աշխատանք էր, մանավանդ որ դրա հետ կապված որևէ բան չէր կարելի կոչել իր իսկական անունով: Արձանագրությունների բաժնի բոլոր ծառայողներն աշխատում էին օրական տասնութ ժամ՝ երկու անգամ երեքական ժամ կարճատև քնով: Նկուղներից ներքնակներ էին բերել ու փռել միջանցքներում. ուտելիքը սենդվիչն ու «Հաղթանակ» սուրճը, սպասավորներն անվավոր սայլակներով բերում էին ճաշարանից: Ամեն քնադադարից առաջ Ուինսթոնը փորձում էր գրասեղանն ազատել թղթերից, բայց ամեն անգամ, երբ կիսախուփ աչքերով ու ցավից ջարդվող մարմնով հետ էր սողում, պարզվում էր, որ թղթե գլանների նոր տարափ է տեղացել սեղանին՝ ծնակույտի նման, կիսով չափ ծածկելով խոսագրիչն ու թափվելով հատակին, ուստի առաջին գործը բավական կոկիկ կոյտ դասավորելն էր լինում, որ աշխատելու տեղ բացվի: Ամենավատն այն էր, որ աշխատանքը լրկ մեխանիկական չէր: Հաճախ բավական էր միայն մի անունը փոխարինել մյուսով, բայց իրադարձությունների մանրամասն նկարագրությունը զգուշություն ու երևակայություն էր պահանջում: Նույնիսկ պատերազմն աշխարհի մի վայրից մյուսը տեղափոխելու համար աշխարհագրության իմացություն էր պետք:

Երրորդ օրը աչքերն անտանելի ցավում էին, ու մի քանի րոպե ստիպված էր մաքրել ակնոցը: Դա նման էր ուժասպառ անող ֆիզիկական աշխատանքի. թվում է՝ կարող ես և հրաժարվել, բայց նյարդային գրգռվածությունը առաջ ու առաջ է մղում: Մտածելու ժամանակ չէր ունենում, բայց կարծես նրան չէր անհանգստացնում, որ խոսագրիչի մեջ ասված ցանկացած բառ, թանաքի մատիտի յուրաքանչյուր շարժում կանխամտածված սուտ են: Նա, ինչպես բաժնի ցանկացած այլ աշխատակից, ջանում էր, որ կեղծումը կատարյալ լինի: Վեցերորդ օրվա առավոտյան թղթագլանների հոսքը նվազեց: Մոտ կես ժամ խողովակից ոչինչ չընկավ. հետո՝ ևս մի գլան, իսկ հետո՝ ոչինչ: Գրեթե նույն ժամանակ աշխատանքն ամենուր թեթևացավ: Բաժնում բոլորը խոր, բայց թաքուն հոգոց հանեցին:

Կատարվել էր հզոր գործ, որի մասին երբեք չի կարելի հիշատակել: Հիմա ոչ մի մարդ արարած չի կարող փաստաթղթով ապացուցել, որ Եվրասիայի դեմ երբեք պատերազմ չի եղել: Տասներկու զրո-զրոյին անսպասելի հայտարարվեց, որ նախարարության բոլոր աշխատողներն ազատ են մինչև առավոտ: Ուինսթոնը՝ ձեռքին պայուսակը, որի մեջ գիրքն էր (քանի աշխատում էր, պայուսակը ոտքերի արանքում էր, քնելիս տակն էր դնում), գնաց տուն, սափրվեց ու քիչ էր մնում քներ լոգարանում, չնայած ջուրը բոլորովին էլ տաք չէր:

Հոդերը հաճույքով ճրթճրթացնելով՝ նա բարձրացավ պարոն Չարինգթոնի խանութի աստիճաններով: Հոգնած էր, բայց քնել չէր ուզում: Բացեց պատուհանը, վառեց փոքրիկ կեղտոտ գազօջախը ու կաթսայով ջուր դրեց՝ սուրճի համար: Շուտով Ջուլիան գալու էր. իսկ մինչ այդ գիրքը կկարդար: Նստեց յուղոտված բազկաթոռի մեջ ու բացեց պայուսակը:

Ծանր սև հատորի ինքնաշեն կազմին վերնագիր չկար: Տպագրությունը նույնպես փոքր-ինչ անկանոն էր: Էջերի ծայրերը մաշված էին ու հեշտ էին բացվում. գիրքը շատ էր ձեռքից ձեռք անցել: Անվանաթերթի վրա գրված էր.

ՕԼԻԳԱՐԽԻՎԿԱԼ ԿՈՆԵԿՏԻՎԻԶՄԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ԴՐՎԿՏԻԿԱԼ

Էմանուել Գոլդսթայն

Ուինսթոնը սկսեց կարդալ.

Գլուխ I

Տգիտությունը ուժ է

Արձանագրված պատմության ամբողջ ընթացքում և գուցե նեոլիթյան դարաշրջանի ավարտից ի վեր աշխարհում գոյություն է

1984

ունեցել մարդկանց երեք տեսակ՝ բարձր, միջին և ցածր: Նրանք խմբերի են բաժանվել տարբեր եղանակներով, կրել են բազում տարբեր անուններ, նրանց քանակը, ինչպես և վերաբերմունքը միմյանց հանդեպ, տարբեր դարաշրջաններում տարբեր է եղել բայց հասարակության հիմնարար կառուցվածքը մնացել է անփոփոխ: Նույնիսկ հսկայական տեղաշարժերից ու անշրջելի թվացող փոփոխություններից հետո այդ կառույցը վերահաստատվել է այնպես, ինչպես գիրոսկոպն է միշտ վերագտնում հավասարակշռությունը, որ կողմ էլ հրես:

Այս խմբերի նպատակները բացարձակապես անհամատեղելի են...

Ուինսթոնը դադար տվեց՝ գլխավորապես գնահատելու համար, որ կարդում է հանգիստ ու ապահով պայմաններում: Մենակ էր. ոչ մի հեռէկրան, ոչ մի ականջ բանալու անցքից, հետ նայելու կամ ձեռքով էջը փակելու ոչ մի նյարդային մղում: Ամառային մեղմ օդը շոյում էր այտը: Հեռվից հասնում էին երեխաների աղոտ գոռում-գոչյունները. իսկ սենյակում՝ ոչ մի ձայն, միայն ժամացույցն էր թիկթակում ճռիկի պես: Նա ավելի խոր ընկղմվեց բազկաթոռի մեջ ու ոտքերը դրեց բուխարու ճաղավանդակին: Դա երանություն էր, հավերժություն: Հանկարծ, ինչպես այն դեպքերում, երբ գիտես, որ, մեկ է, գիրքը ծայրեծայր կարդալու ու նույնիսկ վերընթերցելու ես, բացեց մի պատահական էջ ու հայտնվեց երրորդ գլխի սկզբին: Շարունակեց կարդալ.

Գլուխ III

Պատերազմը խաղաղություն է

Աշխարհի մասնատումը երեք հզոր գերտերության մի իրադարձություն էր, որը կարելի էր կանխագուշակել և անշուշտ կանխագուշակվել էր մինչ քսաներորդ դարի կեսը: Ռուսաստանի կողմից՝

Եվրոպայի, իսկ Միացյալ Նահանգների կողմից Բրիտանական կայսրության կլանումից հետո գոյություն ունեցող երեք տերություններից երկուսը՝ Եվրասիան և Օվկիանիան, արդեն արդյունավետ գոյատևում էին: Երրորդը՝ Արևելասիան, որպես ամբողջական միավոր ձևավորվեց անկանոն կռիվներով լի մեկ տասնամյակ անց: Երեք գերտերությունների միջև սահմանները որոշ տեղերում հստակ չեն, իսկ այլ տեղերում փոփոխվում են՝ կախված պատերազմի արդյունքից, բայց ընդհանուր առմամբ համապատասխանում են աշխարհագրական սահմաններին: Եվրասիան զբաղեցնում է Եվրոպական ու ասիական մայրցամաքների ամբողջ հյուսիսային մասը՝ Պորտուգալիայից մինչև Բերինգի նեղուց: Օվկիանիան բաղկացած է Հյուսիսային և Հարավային Ամերիկաներից, Ատլանտյան կղզիներից, Ներառյալ Բրիտանական կղզիները, Ավստրալասիայից և Աֆրիկայի հարավային հատվածից: Արևելասիան, որ մյուսներից ավելի փոքր է և չունի հաստատուն արևմտյան սահման, ներառում է Հինաստանն ու Նրանից հարավ ընկած երկրները, Ճապոնական կղզիներն ու Մանջուրիայի, Մոնղոլիայի ու Տիբեթի խոշոր, բայց ոչ մշտական հատվածները:

Այս կամ այն համադրությամբ այս երեք գերտերությունները մշտապես պատերազմում են, և դա շարունակվում է արդեն քսանհինգ տարի: Սակայն պատերազմն այլևս այն հուսահատ, ոչնչացնող հակամարտությունը չէ, ինչպիսին էր քսաներորդ դարի առաջին տասնամյակներում: Դրանք սահմանափակ նպատակների համար մղվող ռազմական գործողություններ են մարտնչող կողմերի միջև, որոնք ի վիճակի չեն ոչնչացնել միմյանց, չունեն կռվելու որևէ նյութական պատճառ և իսկական գաղափարական տարբերություններ: Սակայն ճիշտ չի լինի կարծել, թե պատերազմ վարելու եղանակներն ու նրա նկատմամբ գերիշխող վերաբերմունքը պակաս արյունարբու կամ ավելի ասպետական են դարձել: Հակառակը՝ պատերազմական հիստերիան շարունակական ու համատարած երևույթ է բոլոր երկրներում, իսկ այնպիսի գործողությունները,

1984

ինչպիսիք են բռնությունը, կողոպուտը, երեխաների սպանությունը, ամբողջ բնակչության վերածումը ստրուկների, ռազմագերիների խոշտանգումները, որոնք հասնում էին ընդհուպ մինչև մարդկանց շոգեխաշելուն ու ողջ-ողջ թաղելուն, համարվում են սովորական երևույթ և նույնիսկ՝ սխրանք, եթե կատարվում են ոչ թե թշնամու, այլ յուրայինների կողմից: Բայց ֆիզիկապես պատերազմին մասնակցում են փոքրաթիվ մարդիկ, գերազանցապես բարձրորակ մասնագետներ, ինչի շնորհիվ մարդկային կորուստները համեմատաբար փոքր են: Մարտերը մղվում են հեռավոր սահմանագծերում, որոնց տեղադրությունը շարքային քաղաքացին կարող է ընդամենը գուշակել, կամ էլ Լողացող ամրոցների շուրջը, որոնք հսկում են ծովային ուղիների՝ ռազմավարական նշանակություն ունեցող կետերը: Քաղաքակրթության կենտրոններում պատերազմը չի նշանակում ավելին, քան սպառողական ապրանքների անվերջ պակաս և պարբերաբար պայթող հրթիռներ, որոնք կարող են բազում մարդկանց կյանքեր խել: Ըստ էության, պատերազմը փոխել է իր էությունը: Ավելի կոնկրետ՝ փոխվել է պատերազմի պատճառների դասավորությունը՝ ըստ կարևորության: Շարժառիթները, որոնք մասամբ առկա էին քսանմեկերորդ դարի սկզբի մեծ պատերազմներում, հիմա դարձել են գերակայող, մարդիկ դրանք գիտակցել և առաջնորդվում են դրանցով:

Ժամանակակից պատերազմի բնույթը հասկանալու համար (չնայած մի քանի տարին մեկ կատարվող վերախմբավորմանը՝ պատերազմը միշտ նույնն է) նախևառաջ պետք է գիտակցել, որ այն չի կարող որոշիչ լինել: Երեք գերտերություններից ոչ մեկը չի կարող պարտվել, եթե նույնիսկ մյուս երկուսը միավորվեն: Ուժերը խիստ հավասար են, իսկ բնական պաշտպանվածությունը՝ չափազանց ամուր: Եվրասիան պաշտպանված է իր անձայրածիր հողային տարածքներով, Օվկիանիան՝ Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների լայնությամբ, Արևելաասիան՝ իր բնակիչների արգասաբերությամբ ու արտադրողականությամբ: Երկրորդ՝ նյութական առումով

այլևս պատերազմելու պատճառ չկա: Ինքնաբավ տնտեսական համակարգերի ձևավորումով, որտեղ արտադրությունն ու սպառումը փոխկապված ու փոխապայմանավորված են, սպառման շուկաների համար պայքարը, որը նախկին պատերազմների հիմնական պատճառն էր, դադարեց, իսկ հումքի համար մրցակցությունն այլևս կյանքի ու մահվան խնդիր չէ: Ամեն դեպքում, երեք գերտերություններից յուրաքանչյուրն այնքան ընդարձակ է, որ կարող է իր սահմանների ներսում հայթայթել գրեթե ողջ անհրաժեշտ հումքը: Ինչ վերաբերում է պատերազմի զուտ տնտեսական նպատակին, ապա այն մղվում է աշխատուժի համար: Գերտերությունների սահմանների միջև ընկած է մի անհավասար քառանկյուն, որը մշտապես չի գտնվում դրանցից ոչ մեկի տիրապետության տակ, քառանկյան անկյունները Տանժերի, Բրազավիլի, Դարվինի և Հոնգկոնգի լեռնագագաթներն են, այնտեղ բնակվում է երկրի բնակչության մոտ մեկ հինգերորդը: Հենց այս խիտ բնակեցված շրջաններին և հյուսիսային սառցե գլխարկին տիրանալու համար էլ մշտապես պայքարում են երեք գերտերությունները: Փաստացի՝ տերություններից ոչ մեկը երբեք ամբողջությամբ չի վերահսկում վիճելի տարածքը: Նրա մասերը շարունակ ձեռքից ձեռք են անցնում, և որևէ դավաճանական զորաշարժով այս կամ այն մասը ժանկելը թելադրում է դաշնակիցների փոփոխության մի անվերջանալի շարք:

Բոլոր վիճելի տարածքներում կան արժեքավոր հանածոներ, որոշ հատվածներ կարևոր բուսական հումք են արտադրում, ինչպիսին է, օրինակ, կաուչուկը, որն ավելի ցուրտ կլիմայական պայմաններում անհրաժեշտ է սինթեզել համեմատաբար թանկ եղանակներով: Բայց ամենագլխավորը՝ էժան աշխատուժի անսահմանափակ պաշարներ ունեն: Որ տերությունը ձեռք գցի Հասարակածային Աֆրիկան կամ Մերձավոր Արևելքի երկրները, Հարավային Հնդկաստանը կամ Ինդոնեզական կղզիախումբը, կունենա հարյուրավոր միլիոններով ցածր վճարվող և ծանր աշխատանք կատարող բանվորներ: Այս տարածքների բնակիչները, որոնք այսպես

թե այնպես հայտնվել են ստրուկի վիճակում, շարունակ մի նվաճողից մյուսին են անցնում և օգտագործվում են ինչպես քարածուխը կամ նավթը. նպատակը ավելի շատ զենք արտադրելն է՝ ավելի մեծ տարածք նվաճելու, ավելի շատ աշխատուժ վերահսկելու, ավելի շատ զենք արտադրելու համար, և այդպես շարունակ: Պետք է նշել, որ մարտական գործողությունները երբեք չեն անցնում վիճելի տարածքների սահմաններից այն կողմ: Եվրասիայի սահմանները հետ ու առաջ են տեղաշարժվում Կոնգոյի ավազանի ու Միջերկրական ծովի հյուսիսային ափերի միջև. Հնդկական և Խաղաղ օվկիանոսների կղզիները գրավվում ու վերագրավվում են մերթ օվկիանիայի, մերթ Արևելասիայի կողմից. Մոնղոլիայում Եվրասիան և Արևելասիան բաժանող գիծը երբեք կայուն չէ. Բևեռի մոտ բոլոր երեք տերությունները հսկայական տարածքների հավակնություն ունեն, որոնք իրականում գերազանցապես բնակեցված և ուսումնասիրված չեն. սակայն ուժերի հավասարակշռությունը միշտ պահպանվում է, և յուրաքանչյուր գերտերության կենտրոնական մասը միշտ մնում է անփոփոխ: Ավելին, համաշխարհային տնտեսությանը, ըստ էության, պետք չէ հասարակածային գոտու շահագործող ժողովուրդների աշխատանքը: Նրանք ոչինչ չեն ավելացնում աշխարհի հարստությանը, քանի որ ինչ արտադրում են, օգտագործվում է պատերազմի համար, իսկ պատերազմի նպատակը միշտ ավելի լավ դիրքում հայտնվելն է՝ մեկ այլ պատերազմ մղելու համար: Ստրուկներն իրենց աշխատանքով պարզապես ուժգնացնում են անընդմեջ պատերազմի թափը: Բայց եթե նրանք գոյություն չունենային, համաշխարհային հանրության կառուցվածքը և գործընթացը, որի շնորհիվ այն պահպանվում է, սկզբունքորեն չէր փոխվի:

Ժամանակակից պատերազմների գլխավոր նպատակը (*կրկնամյա* սկզբունքների համաձայն՝ այդ նպատակը միաժամանակ և՛ ճանաչվում է, և՛ չի ճանաչվում՝ ներքին կուսակցության առաջնորդող ուղեղների կողմից) մեքենայի արտադրանքը մինչև վերջ օգտագործելն է՝ առանց ընդհանուր կենսամակարդակը բարձրացնելու:

Խնդիրը, թե ինչպես վարվել սպառողական ապրանքների ավելցուկի հետ, ենթագիտակցորեն հասունանում էր արդյունաբերական հասարակության մեջ տասնիններորդ դարի վերջից: Այսօր, երբ բավարար ուտելիք բոլորը չէ, որ ունեն, այդ խնդիրն ակնհայտորեն հրատապ չէ և գուցե հրատապ չդառնար, եթե չազդեին կործանման արհեստական գործընթացները: Ներկայիս աշխարհը մերկ, քաղցած, խարխուլ մի վայր է՝ այն աշխարհի համեմատ, որ գոյություն ուներ մինչև 1914 թվականը, առավել ևս՝ երևակայական ապագայի համեմատ, որը ակնկալում էին այդ ժամանակի մարդիկ: Քսաներորդ դարի սկզբին ապագա հասարակության տեսլականը՝ աներևակայելի հարուստ, ժամանցներով լի, կոկիկ և արդյունավետ (ապակուց, պողպատից ու ծյունաճերմակ բետոնից կառուցված շողշողուն հականեխիչ աշխարհ), ապրում էր գրեթե յուրաքանչյուր գրագետ մարդու գիտակցության մեջ: Գիտությունն ու տեխնիկան զարգանում էին ապշեցուցիչ արագությամբ, և բնական էր ենթադրել, որ կշարունակեն զարգանալ: Դա տեղի չունեցավ՝ մասամբ աղքատության պատճառով, որը հետևանք էր պատերազմների ու հեղափոխությունների երկար շարանի, մասամբ որովհետև գիտատեխնիկական առաջընթացը կախված էր էմպիրիկ մտածողությունից, որը չէր կարող դիմակայել խիստ համակարգված հասարակությանը: Աշխարհն ընդհանուր առմամբ այսօր ավելի պարզունակ է, քան հիսուն տարի առաջ: Որոշ հետամնաց տարածքներ զարգացել են, ստեղծվել են արդիական ու բազմազան սարքավորումներ, որոնք, այնուամենայնիվ, միշտ ինչ-որ կերպ կապ ունեն պատերազմի ու ոստիկանական լրտեսման հետ, բայց փորձերն ու հայտնագործությունները հիմնականում դադարեցված են, իսկ հազար ինը հարյուր հիսունականների միջուկային պատերազմի ավերածություններն այդպես էլ ամբողջությամբ չեն վերականգնվել: Այնուամենայնիվ, մեքենայի բերած վտանգները չեն անհետացել: Այն պահից, երբ առաջին անգամ հայտնվեց մեքենան, բոլոր մտածող մարդկանց պարզ դարձավ, որ վերացել է մարդու սևագործ

աշխատանքի, հետևաբար նաև մեծ առումով մարդկային անհավասարության պատճառը: Եթե մեքենան ուղղորդված օգտագործվեր այդ նպատակով, ապա քաղցը, արտաժամյա աշխատանքը, կեղտը, անգրագիտությունն ու հիվանդությունները կարելի կլիներ վերացնել մի քանի սերնդի ընթացքում: Ըստ էության, անգամ նման նպատակների համար չօգտագործվելու դեպքում, այլ ավտոմատացման համակարգով, այսինքն՝ արտադրելով բարիքներ, որոնք երբեմն անհնար էր բաշխել, մեքենան վերջին հիսուն տարիների ընթացքում՝ տասնիններորդ դարի վերջին և քսաներորդ դարի սկզբին, բարձրացրեց միջին մարդու կենսամակարդակը:

Բայց նաև պարզ էր, որ բարեկեցության համընդհանուր աճը սպառնում էր կործանել հիերարխիկ հասարակությունը, իսկ որոշ իմաստով հենց նրա կործանումն էր: Աշխարհում, որտեղ աշխատանքային օրը կարճ է, ամեն ոք ունի բավարար ուտելիք, ապրում է լոգարանով ու սառնարանով տան մեջ և ունի մեքենա կամ նույնիսկ ինքնաթիռ, անհավասարության ամենաակնհայտ ու գուցե ամենակարևոր տեսակն արդեն անհետանում է: Համընդհանուր դառնալու դեպքում հարստությունն այլևս տարբերակիչ լինել չի կարող: Անկասկած, հնարավոր է պատկերացնել մի հասարակություն, որտեղ *հարստությունը*, անձնական սեփականության ու ճոխությունների առումով, հավասարապես կբաշխվի, մինչդեռ *իշխանությունը* կմնա փոքրաթիվ արտոնյալների ձեռքին: Բայց իրականում նման հասարակությունը երկար ժամանակ կայուն լինել չի կարող: Որովհետև եթե բոլորը հավասարապես վայելեն ժամանցներն ու ապահովվածությունը, մարդկանց մի հսկա, սովորաբար՝ աղքատությունից բթացած բազմություն գրագետ կդառնա և կսովորի ինքնուրույն մտածել: դրանից հետո նրանք վաղ թե ուշ կգիտակցեն, որ արտոնյալ փոքրամասնությունը ոչ մի գործառույթ չունի, ու կվերացնեն նրանց: Վերջիվերջո, հիերարխիկ հասարակությունը հնարավոր է միայն աղքատության ու տգիտության հիմքի վրա: Գյուղական կենսակերպին վերադառնալը, ինչը որոշ

մտածողներ երազում էին քսաներորդ դարի սկզբին, իրական ելք չէր: Այն հակասում էր մեքենայացման ճգնաժամը, որը կեղծ բնագրի էր վերածվել գրեթե ամբողջ աշխարհում, բացի այդ, արդյունաբերության առումով հետամնաց երկիրն անօգնական էր ռազմական իմաստով և ուղղակի կամ անուղղակի ստիպված էր ենթարկվել ավելի առաջադեմ մրցակիցներին:

Իրեն չարդարացրեց նաև ապրանքների արտադրությունը սահմանափակելով զանգվածներին աղքատության մեջ պահելու եղանակը: Դա հիմնականում դիտվում էր կապիտալիզմի վերջին փուլում՝ 1920-1940-ական թվականներին: Շատ երկրների տնտեսություններ լճանում էին, հողը չէր մշակվում, սարքավորումները չէին նորացվում, բնակչության ստվար խմբեր աշխատանք չունեին և գոյություն էին պահպանում պետական բարեգործական կազմակերպությունների շնորհիվ: Բայց դա նույնպես հանգեցրեց ռազմական ուժի թուլացման, ու քանի որ զրկանքները բոլորովին անհրաժեշտ չէին, անխուսափելիորեն ընդդիմություն առաջացավ: Խնդիրը հետևյալն էր՝ արդյունաբերությունն աշխատեցնել ամբողջ թափով՝ չավելացնելով աշխարհի իրական հարստությունը: Ապրանքները պետք է արտադրվեն, բայց չպետք է բաշխվեն: Գործնականում դրան հասնելու միակ ուղին շարունակական պատերազմն էր:

Պատերազմի էությունը ոչնչացումն է՝ ոչ միայն մարդկային կյանքերի, այլև մարդկային աշխատանքի պտուղների: Պատերազմել՝ նշանակում է ջարդուփշուր անել, մթնոլորտում փոշիացնել կամ ծովի խորքերում սուզել նյութեր, որոնք կարող էին օգտագործվել մարդու կյանքը հարմարավետ, հետևաբար, վերջիվերջո, նրան ավելի բանական դարձնելու համար: Նույնիսկ երբ զենքը չի ոչնչացվում մարտի դաշտում, դրա արտադրությունը հարմար միջոց է աշխատուժը ծախսելու՝ չարտադրելով որևէ բան, որ կարելի է սպառել: Լողացող ամրոցը, օրինակ, այնքան աշխատանք է պահանջում, որը բավարար կլիներ հարյուրավոր բեռնատար նավեր կառուցելու համար: Ի վերջո, այն հնանում է՝ առանց որևէ մեկին

որևէ նյութական օգուտ բերելու, հետո ահռելի աշխատանքի շնորհիվ կառուցվում է մեկ այլ Լողացող ամրոց: Սկզբունքորեն պատերազմը կազմակերպված է այնպես, որ մինչև վերջ սպառի ցանկացած ավելցուկ, որը գուցե մնացել է հասարակության խղճուկ կարիքները բավարարելուց հետո: Իրականում հասարակության կարիքները միշտ թերագնահատվում են, ինչի հետևանքով առաջանում է կենսական պահանջունքների խրոնիկական պակաս, բայց դա առավելություն է համարվում: Սա միտումնավոր քաղաքականություն է. նույնիսկ արտոնյալ խմբերին պահել զրկանքների եզրին, որովհետև համընդհանուր սակավությունը մեծացնում է փոքր արտոնությունների կարևորությունը՝ այդպիսով մեծացնելով տարբերությունը խմբերի միջև: Ըստ քսաներորդ դարասկզբի չափանիշների՝ նույնիսկ Ներքին կուսակցության անդամն ասկետական ու բազմազբաղ կյանքով է ապրում: Այնուամենայնիվ, փոքրիկ ճոխությունները, որ նա իրեն թույլ է տալիս՝ ընդարձակ, բարեկարգ բնակարան, ավելի լավ գործվածքից հագուստ, ավելի որակյալ ուտելիք, խմիչք ու ծխախոտ, երկու-երեք սպասավոր, անձնական ավտոմեքենա կամ ուղղաթիռ, զգալիորեն հեռացնում են նրան Արտաքին կուսակցության անդամի աշխարհից, և Արտաքին կուսակցության անդամն էլ նույն արտոնություններն ունի՝ աղքատացած զանգվածների համեմատ, որոնց կոչում ենք «պրոլներ»: Ասես պաշարված քաղաքի սոցիալական մթնոլորտ լինի, որտեղ հարստության ու աղքատության սահմանը որոշվում է մի կտոր ձիու մսով: Միևնույն ժամանակ, գիտակցությունը, որ մասնակցում ես պատերազմին, հետևաբար վտանգի տակ ես, ստիպում է կարծել, թե ամբողջ իշխանությունը մի փոքր խմբի ձեռքում պահելը գոյատևման բնական, անխուսափելի պայման է:

Ինչպես տեսնում եք, պատերազմը ոչ միայն անհրաժեշտ ավերում է գործում, այլև դա անում է հոգեբանորեն ընդունելի տարբերակով: Սկզբունքորեն շատ ավելի հեշտ կլինեն աշխատանքի ավելցուկը ծախսել տաճարներ ու բուրգեր կառուցելով, փոսեր փորելով

ու դարձյալ լցնելով կամ նույնիսկ մեծ քանակով ապրանքներ արտադրելով և հետո այրելով: Բայց դա կապահովի հիերարխիկ հասարակության միայն տնտեսական և ոչ զգացմունքային հիմքը: Այստեղ խոսքը ոչ թե զանգվածների բարոյական վիճակի մասին է, որոնց վերաբերմունքը կարևոր չէ այնքան ժամանակ, քանի դեռ կայուն զբաղվում են աշխատանքով, այլ ինքնին Կուսակցության բարոյական վիճակի: Նույնիսկ Կուսակցության ամենահամեստ անդամը պետք է բանիմաց, աշխատասեր և նույնիսկ որոշակիորեն խելացի լինի, բայց նույնքան կարևոր է, որ լինի անբարբառ ու անհրազեկ մոլեռանդ, նրան պետք է տիրեն վախը, ատելությունը, քծնանքն ու խրախճանական ցնծությունը: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է, որ նրա միտքը համապատասխանի պատերազմական վիճակին: Կարևոր չէ՝ իրականում պատերազմ կա, թե ոչ, ու քանի որ վճռական պատերազմն անհնար է, կարևոր չէ՝ պատերազմը լավ է ընթանում, թե վատ: Անհրաժեշտ է միայն մեկ բան. միշտ լինել պատերազմական վիճակում: Մտավոր կարողության ճեղքումը, որ Կուսակցությունը պահանջում է իր անդամներից, ու որին ավելի հեշտ կարելի է հասնել պատերազմի մթնոլորտում, հիմա գրեթե համընդհանուր բնույթ ունի, բայց որքան մարդու դիրքը բարձր է, այն առավել է դրսևորվում: Հատկապես Ներքին կուսակցությունում են ուժեղ հիստերիան ու ատելությունը թշնամու հանդեպ: Ներքին կուսակցության անդամը որպես վարչարար հաճախ պարտավոր է իմանալ, որ պատերազմական այս կամ այն ամփոփագիրը չի համապատասխանում իրականությանը, ու հաճախ կարող է տեղյակ լինել, որ ամբողջ պատերազմը շինծու է կամ չկա, կամ էլ մոլվում է ոչ հայտարարված պատճառներով, սակայն այդ գիտելիքը հեշտությանը չեզոքացվում է *կրկնամտքի* տեխնիկայի միջոցով: Մինչդեռ Ներքին կուսակցության ոչ մի անդամի հոգում չի սասանվի միստիկական հավատն առ այն, որ պատերազմն իրական է և պետք է ավարտվի հաղթանակով, և Օվկիանիան պիտի դառնա ամբողջ աշխարհի անառարկելի դեկավարը:

1984

Ներքին կուսակցության բոլոր անդամների համար այդ գալիք հաղթանակը հավատո հանգանակ է: Դրան պետք է հասնել կամ աստիճանաբար՝ ձեռք բերելով ավելի ու ավելի մեծ տարածքներ՝ հետևաբար ստեղծելով իշխանության հզոր գերակշռող ուժ, կամ որևէ նոր ու հավասարը չունեցող զենքի հայտնագործումով: Նոր զենքերի փնտրտուքը շարունակվում է առանց դադարի և այն փոքրաթիվ ոլորտներից է, որտեղ կարող է որևէ արդյունք տալ թե՛ հնարամիտ, թե՛ սպեկուլյատիվ միտքը: Այսօր Օվկիանիայում գիտությունը, իր հին իմաստով, համարյա դադարել է գոյություն ունենալ: Նորալեզվում «Գիտություն» բառ չկա: Մտածողության էմպիրիկ մեթոդը, որի վրա հիմնված էին անցյալի բոլոր գիտական ձեռքբերումները, հակադրվում է Անգստցի ամենահիմնարար սկզբունքներին: Նույնիսկ տեխնոլոգիական առաջընթացը տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ նրա արդյունքը կարող է ինչ-որ կերպ օգտագործվել մարդկային ազատությունը կրճատելու համար: Բոլոր օգտակար արհեստներում աշխարհը կամ չի շարժվում, կամ նահանջում է: Դաշտերը վարում են ծիու գութանով, իսկ գրքերը գրում են մեքենաները: Բայց կենսական կարևորություն ունեցող հարցերում, այսինքն՝ պատերազմի և ոստիկանական լրտեսման գործում, էմպիրիկ մոտեցումը դեռ խրախուսվում կամ գոնե հանդուրժվում է: Կուսակցությունն ունի երկու նպատակ՝ նվաճել երկիր մոլորակի ողջ մակերևույթն ու մեկընդմիջտ ռչնչացնել անկախ մտքի հնարավորությունը: Հետևաբար Կուսակցությունը ցանկանում է լուծել երկու մեծ խնդիր: Մեկը՝ ինչպես մարդու կամքից անկախ բացահայտել, թե նա ինչ է մտածում, իսկ մյուսը՝ ինչպես մի քանի վարկյանում սպանել մի քանի հարյուր միլիոն մարդ՝ առանց նախապես զգուշացնելու: Եթե դեռ կա գիտական հետազոտություն, ապա հիմնականում զբաղվում է այս խնդրով: Այսօրվա գիտնականը կամ հոգեբանի ու հավատաքննիչի համադրություն է, որն իսկապես կանոնավոր ճշգրտությամբ ուսումնասիրում է դեմքի արտահայտության, շարժումների ու ծայրի տոնի նշանակությունը

և փորձարկում թմրադեղերի, շոկային թերապիայի, հիպնոսի ու ֆիզիկական տանջանքների ազդեցությունը, որոնք գործադրվում են մարդուց ճշմարտությունն իմանալու համար, կամ էլ քիմիկոս է, ֆիզիկոս կամ կենսաբան, որին մտահոգում են գիտության այնպիսի հատուկ ժյուղեր, որոնք կապված են մարդու կյանքը խլելու հետ: Խաղաղության նախարարության ընդարձակ լաբորատորիաներում ու բրազիլական անտառներում, ավստրալական անապատում կամ Անտարկտիկայի կորած կղզիներում թաքնված փորձարարական կայաններում փորձագետների թիմերն անխոնջ աշխատում են: Ոմանք զբաղված են միայն ապագա պատերազմների լոգիստիկան կազմելով, մյուսները ստեղծում են ավելի ու ավելի մեծ հրթիռներ, ավելի ու ավելի հզոր պայթուցիկ նյութեր և ավելի հզոր զենք ու զրահ. մյուսները հնարում են նոր ու ավելի մահացու գազեր կամ լուծվող թույներ, որոնք հնարավոր է արտադրել այնպիսի քանակով, որ կարելի լինի կործանել ամբողջ մայրցամաքի բուսական աշխարհը, կամ հիվանդությունների նոր մանրէներ, որոնք ինուսիտետ ունեն բոլոր հնարավոր հակամարմինների դեմ. մյուսները ջանում են փոխադրամիջոց արտադրել, որը կարող է հողի տակ շարժվել այնպես, ինչպես սուզանավը՝ ջրի տակ, կամ ինքնաթիռ, որն առագաստանավի պես անկախ կլինի իր բազայից. մյուսներն ուսումնասիրում են ապագայի ծրագրեր, օրինակ՝ հազարավոր կիլոմետրերի վրա կախված ոսպնյակների միջով կենտրոնացնել արևի ճառագայթները տարածության մեջ կամ ստեղծել արհեստական երկրաշարժ ու մակընթացության ալիքներ՝ հասնելով երկրի շիկացած կենտրոնը:

Բայց այս նախագծերից ոչ մեկը չնոտեցավ իրականացմանը, և երեք գերտերություններից ոչ մեկին չհաջողվեց զգալի գերիշխող դիրք գրավել մյուսների հանդեպ: Զարմանալին այն է, որ բոլոր երեք տերություններն արդեն ունեն միջուկային ռումբ՝ զենք, որը շատ ավելի հզոր է, քան այն, ինչ գուցե ստեղծեն ներկայիս հետազոտողները: Չնայած Կուսակցությունը, սովորության համաձայն,

1984

փորձում է յուրացնել հայտնագործությունը, միջուկային ռումբերը հայտնվել են դեռևս հազար ինը հարյուր քառասունական թվականներին և առաջին անգամ լայնորեն օգտագործվել են մոտ տասը տարի անց: Այն ժամանակ մի քանի հարյուր հրթիռ ընկավ արդյունաբերական կենտրոնների վրա՝ գերազանցապես Ռուսաստանի եվրոպական հատվածում, Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում: Արդյունքում բոլոր երկրների իշխող խմբերը համոզվեցին՝ ևս մի քանի միջուկային ռումբ ստեղծելը կնշանակի վերջ տալ կազմակերպված հասարակությանը, հետևաբար՝ սեփական իշխանությանը: Դրանից հետո, չնայած պաշտոնական համաձայնություն երբեք չեղավ կամ չակնարկվեց, հրթիռներ այլևս չընկան: Բոլոր երեք տերությունները լոկ շարունակում են արտադրել ու պահեստավորել միջուկային ռումբերը՝ համոզված, որ վաղ թե ուշ նման վճռական հնարավորություն լինելու է: Մինչդեռ վերջին երեսուն-քառասուն տարվա ընթացքում պատերազմի արվեստը գրեթե չի փոխվել: Ուղղաթիռներ ավելի շատ են օգտագործվում, քան նախկինում, ռմբակոծիչները լայնորեն փոխարինվում են անօդաչու արկերով, իսկ դյուրաբեկ ռազմական նավերն իրենց տեղը զիջում են գրեթե անսուզելի Լողացող ամրոցին. մնացած հարցերում զարգացումները թույլ են: Տանկը, սուզանավը, տորպեդը, գնդացիը, նույնիսկ հրացանն ու ձեռքի նռնակը դեռ օգտագործվում են: Չնայած անվերջ արյունահեղությունների մասին մամուլի ու հեռկրանների տեղեկություններին՝ ավելի վաղ շրջանի հուսահատ ճակատամարտերը, որոնց ընթացքում հաճախ մի քանի շաբաթում սպանվում էին հարյուր հազարավոր կամ նույնիսկ միլիոնավոր մարդիկ, երբեք չեն կրկնվում:

Երեք գերտերություններից ոչ մեկը չի ձեռնարկում որևէ զորաշարժ, որը լուրջ պարտության վտանգ ունի: Ցանկացած խոշոր գործողություն սովորաբար անակնկալ հարձակումն է դաշնակցի դեմ: Բոլոր երեք տերությունները հետևում կամ ձևացնում են, թե հետևում են նույն ռազմավարությանը: Ծրագիրը հետևյալն է՝

պատերազմական գործողությունների, բանակցությունների ու ճիշտ պահին դավաճանական քայլերի միջոցով այս կամ այն թշնամի երկիրն ամբողջությամբ շրջապատել բազաների օղակով, ապա թշնամու հետ բարեկամության դաշինք կնքել ու խաղաղ հարաբերություններ պահպանել այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է կասկածները թմրեցնելու համար: Այդ ընթացքում կարելի է ռազմավարական նշանակություն ունեցող բոլոր կետերում տեղակայել միջուկային մարտագլխիկներով հրթիռներ և, ի վերջո, զանգվածային հարված հասցնել, որի հետևանքն այնքան կործանարար կլինի, որ պատասխան հարվածն անհնար կդառնա: Հետո վրա կհասնի երրորդ գերտերության հետ բարեկամության դաշինք կնքելու և նոր հարձակման պատրաստվելու ժամանակը: Ավելորդ է ասել, որ այս ծրագիրն ընդամենը երազանք է, որն անհնար է իրականացնել: Ավելին, մարտերը միշտ գնում են միայն Հասարակածի ու Բևեռի վիճելի տարածքներում. երբեք թշնամու տարածքի վրա որևէ արշավանք չի կատարվել: Դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ որոշ տեղերում գերտերությունների միջև սահմաններն անորոշ են: Օրինակ, Եվրասիան կարող էր հեշտությամբ նվաճել Բրիտանական կղզիները, որոնք աշխարհագրական առումով Եվրոպայի մի մասն են, իսկ մյուս կողմից Օվկիանիայի սահմանները հնարավոր կլիներ տեղաշարժել մինչև Հռենոս կամ Նույն-իսկ Վիստուլա: Բայց դա կխախտեր մշակութային միասնության սկզբունքը, որին հետևում էին բոլոր կողմերը, չնայած դա երբեք ձևակերպում չի ստացել: Եթե Օվկիանիան նվաճեր ժամանակին Ֆրանսիա և Գերմանիա անուններով հայտնի տարածքները, անհրաժեշտ կլիներ կամ բնաջնջել բնակչությանը, ինչը ֆիզիկապես դժվար իրականացնելի է, կամ ծուլել մոտ հարյուր միլիոնանոց ժողովրդին, որը տեխնիկական զարգացման առումով Նույն մակարդակի վրա է, ինչ Օվկիանիան: Բոլոր երեք գերտերությունների խնդիրը Նույնն է: Նրանց կառուցվածքը պահանջում է, որ ոչ մի շփում չլինի օտարերկրացիների հետ, բացի ռազմագերիներից ու

գունանորթ ստրուկներից, այն էլ՝ խիստ սահմանափակ: Նույնիսկ տվյալ պահի պաշտոնական դաշնակցին վերաբերվում են խիստ կասկածանքով: Բացի ռազմագերիներից՝ Օվկիանիայի շարքային քաղաքացին երբեք չի տեսնում Եվրասիայի կամ Արևելաասիայի որևէ քաղաքացու, և նրան արգելված է սովորել օտար լեզուներ: Եթե նրան թույլ տան շփվել օտարերկրացիների հետ, կպարզի, որ նրանք էլ իր նման արարածներ են, իսկ նրանց մասին պատմությունների մեծ մասը սուտ է: Կնքված աշխարհը, որտեղ նա ապրում է, կոչնչանա, և վախը, ատելությունն ու սեփական արդարացիության զգացումը, որից կախված է իր բարոյական վիճակը, գուցե վերանա: Հետևաբար բոլոր կողմերն էլ հասկանում են, որ ինչքան էլ հաճախ Պարսկաստանը, Եգիպտոսը, Ճավան կամ Ցեյլոնը ձեռքից ձեռք անցնեն, որևէ բան երբեք չպետք է խախտի գլխավոր սահմանները, բացի հրթիռներից:

Դրա տակ թաքնված է երբեք չբարձրաձայնվող, բայց անխոս հասկացվող ու իրականացվող այն փաստը, որ կյանքի պայմանները բոլոր երեք գերտերություններում հիմնականում նույնն են: Օվկիանիայում գերիշխող փիլիսոփայությունը կոչվում է Անգոց, Եվրասիայում՝ նեոբոլշևիզմ, իսկ Արևելաասիայում արտահայտվում է մի չինարեն բառով, որ սովորաբար թարգմանվում է որպես Մահվան երկրպագություն, բայց գուցե ավելի լավ կմեկնաբանվի՝ որպես սեփական անձի ոչնչացում: Օվկիանիայի բնակչին չի թույլատրվում որևէ բան իմանալ մյուս երկու փիլիսոփայությունների մասին, բայց նրան սովորեցնում են նզովել դրանք՝ որպես բարբարոս բռնություն բարոյականության և ողջամտության նկատմամբ: Իրականում երեք գաղափարախոսությունները գրեթե չեն տարբերվում իրարից, իսկ սոցիալական համակարգերը, որոնց հիման վրա դրանք ստեղծվել են, լրիվ նույնն են: Ամենուր նույն բրգաձև կառուցվածքն է, կիսաաստված-առաջնորդի նույն երկրպագությունը, նույն տնտեսությունը, որն ապրում է շարունակական պատերազմով և պատերազմի համար: Դրանից հետևում է, որ երեք

գերտերությունները ոչ միայն չեն կարող նվաճել միմյանց, այլև դրանից ոչ մի օգուտ չեն ունենա: Հակառակը քանի դեռ հակադրության մեջ են, նեցուկ են կանգնում իրար ցորենի երեք կապուկների պես: Եվ ինչպես միշտ, բոլոր երեք գերտերությունների իշխող խմբերը միաժամանակ գիտակցում ու չեն գիտակցում, թե ինչ են անում: Նրանց կյանքը նվիրված է աշխարհի նվաճմանը, բայց հասկանում են, որ անհաղթանակ պատերազմը պետք է անվերջ տևի: Եվ նրա շնորհիվ, որ նվաճման վտանգը բացառվում է, հնարավոր է դառնում իրականության բացառումը. սա բնութագրական գիծ է և՛ Անգստցի, և՛ մրցակից ուսմունքների համար: Այստեղ հարկ է կրկնել նախկինում ասվածը. մշտական դառնալով՝ պատերազմը փոխել է իր բնույթը:

Նախորդ դարերում պատերազմը բնորոշվում էր որպես մի բան, որը վաղ թե ուշ ավարտվում է՝ սովորաբար անտարակույս հաղթանակով կամ պարտությամբ: Բացի այդ, անցյալում պատերազմը մեկն էր այն գլխավոր գործիքներից, որոնցով հասարակությունը պահպանում էր կապը ֆիզիկական իրականության հետ: Բոլոր դարաշրջաններում բոլոր ղեկավարները փորձում էին իրենց հետևորդների վզին փաթաթել աշխարհի մասին կեղծ պատկերացումներ, բայց չէին կարող իրենց թույլ տալ որևէ պատրանք, որը կթուլացներ ռազմական ուժը: Քանի դեռ պարտությունը նշանակում է անկախության կորուստ կամ որևէ այլ ընդհանուր առմամբ անցանկալի արդյունք, պարտության դեմ պետք է կիրառել լուրջ նախազգուշական միջոցներ: Ֆիզիկական փաստերը չի կարելի անտեսել: Փիլիսոփայության, կրոնի, էթիկայի կամ քաղաքականության մեջ երկու անգամ երկու գուցե հինգ է, բայց երբ թնդանտք կամ ինքնաթիռ ես նախագծում, երկու անգամ երկուն չորս պիտի լինի: Անգործունակ պետությունը վաղ թե ուշ ավարտվում է, իսկ գործունակությունը չի կարող հիմնվել պատրանքների վրա: Բացի այդ, գործունակ լինելու համար անհրաժեշտ էր դասեր քաղել անցյալից, նշանակում է՝ բավական ճշգրիտ գաղափար ունենալ

այն մասին, թե ինչ է եղել անցյալում: Թերթերն ու պատմության գրքերն, անշուշտ, միշտ չափազանցված էին ու կողմնակալ, բայց այսօր կիրառվող կեղծումներն այն ժամանակ անհնար էին: Պատերազմն, անշուշտ, ողջամտության երաշխիք էր, իսկ իշխող դասակարգերի համար թերևս ամենակարևոր երաշխիքն էր: Քանի դեռ հնարավոր էր հաղթել կամ տանուլ տալ պատերազմները, ոչ մի իշխող դասակարգ չէր կարող անպատասխանատու լինել:

Բայց երբ պատերազմը տառաջիորեն շարունակական է դառնում, նաև դադարում է վտանգավոր լինելուց: Երբ պատերազմը շարունակական է, գոյություն չունի այնպիսի հասկացություն, ինչպիսին ռազմական անհրաժեշտությունն է: Տեխնիկական առաջընթացը կարող է դադարել, կարելի է ժխտել կամ արհամարհել ամենաակնհայտ փաստերը: Ինչպես տեսանք, հետազոտությունները, որոնք կարելի է գիտական կոչել, դեռ իրականացվում են պատերազմական նպատակներով, բայց դրանք հիմնականում յուրատեսակ երազանք են, ու կարևոր չէ, որ չի հաջողվում արդյունք ստանալ: Գործունակությունը, նույնիսկ մարտունակությունը, այլևս պետք չէ: Օվկիանիայում ոչինչ արդյունք չի տալիս, բացի Մտքի ուստիկանությունից: Քանի որ երեք գերտերություններն էլ անպարտելի են, նրանցից յուրաքանչյուրն ըստ էության մի առանձին տիեզերք է, որի ներսում հնարավոր է ապահով դրսևորել մտքի գրեթե ցանկացած այլասերում: Իրականությունը միայն ճնշում է գործադրում առօրյա կյանքի կարիքների միջով՝ ուտելու և խմելու, ապաստան ու հագուստ ձեռք բերելու, թույն խմելու կամ բարձր հարկի պատուհանից դուրս նետվելու կարիք և այլն: Կյանքի ու մահվան, ֆիզիկական հաճույքի ու ֆիզիկական ցավի միջև կա տարբերություն, բայց միայն այդքանը: Արտաքին աշխարհի ու անցյալի հետ շփումից կտրված՝ Օվկիանիայի քաղաքացին նման է միջաստղային տարածության մեջ ապրող մարդու, որը հնարավորություն չունի իմանալու՝ որտեղ է վերևը, որտեղ՝ ներքևը: Նման պետության կառավարիչներն օժտված են բացարձակ իշխանությամբ,

որ չունենին փարավոնները կամ կեսարները: Նրանք չպետք է թույլ տան, որ իրենց հովանավորյալները չափազանց մեծ քանակով մեռնեն քաղցից, երբ դա արդեն որոշակի անհարմարություն է ստեղծում, նրանք պարտավոր են ռազմական տեխնիկան պահել նույն ցածր մակարդակի վրա, ինչպես մրցակիցները, բայց նվազագույնին հասնելուն պես կարող են իրականությունն այլասերել այնպես, ինչպես ուզում են:

Հետևաբար պատերազմը, եթե դատենք նախորդ պատերազմների չափանիշներով, ընդամենը խարդախություն է: Այն նման է որոշ խոտաճարակների ճակատամարտի, որոնց եղջյուրներն այնպիսի անկյան տակ են, որ ի վիճակի չեն վնասել իրար: Բայց չնայած պատերազմն իրական չէ, նաև անիմաստ չէ: Այն կլանում է սպառողական ապրանքների ավելցուկը և օգնում պահպանել հատուկ հոգևոր մթնոլորտ, որն անհրաժեշտ է հիերարխիկ հասարակությանը: Ինչպես տեսնում ենք, հիմա պատերազմը լոկ ներքին գործ է: Անցյալում բոլոր երկրների իշխող խմբերը, չնայած գուցե հասկանում էին իրենց ընդհանուր շահերն ու, հետևաբար, սահմանափակում պատերազմի կործանարարությունը, կռվում էին իրար դեմ, և հաղթողը միշտ թալանում էր պարտվողին: Մեր օրերում նրանք չեն կռվում իրար դեմ: Յուրաքանչյուր իշխող խումբ պատերազմ է մղում իր ենթակաների դեմ, իսկ պատերազմի նպատակը ոչ թե տարածքի նվաճումը կամ դրա կանխումն է, այլ հասարակության կառուցվածքն անեղծ պահելը: Հենց «պատերազմ» բառը, հետևաբար, մոլորեցնում է: Գուցե ավելի ճշգրիտ կլիներ ասել, որ շարունակական դառնալով՝ պատերազմը դադարեց պատերազմ լինելուց: Յուրահատուկ ժնշումը, որ այն գործադրում էր մարդկության վրա՝ սկսած նեոլիթյան դարաշրջանից մինչև քսանմեկերորդ դարի սկիզբ, անհետացել է ու փոխարինվել միանգամայն այլ բանով: Արդյունքը ճիշտ նույնը կլիներ, եթե երեք գերտերություններն իրար դեմ կռվելու փոխարեն համաձայնեին ապրել հավիտենական խաղաղության մեջ, անձեռնմխելի և յուրաքանչյուրը՝ իր

1984

սահմանների ներսում: Այդ դեպքում յուրաքանչյուրը կլիներ ինքնամփոփ տիեզերք, ընդմիջտ ազատված արտաքին վտանգի սթափեցնող ազդեցությունից: Իսկապես մշտական խաղաղությունն իրականում կլիներ նույնը, ինչ մշտական պատերազմը: Թեև Կուսակցության անդամների մեծամասնությունը դա մակերեսորեն է հասկանում, սրա մեջ է ամփոփված Կուսակցության *Պատերազմը խաղաղություն է* կարգախոսի խորքային իմաստը:

Մի պահ Ուինսթոնը դադարեց կարդալ: Ինչ-որ տեղ՝ հեռու-հեռվում, որոտ լսվեց. հրթիռ էր պայթել: Մենակ՝ արգելված գրքի հետ, սենյակում, ուր հեռէկրան չկա. այդ երանելի զգացողությունը չէր մարել: Մենակությունն ու ապահովությունը ֆիզիկական զգացողություններ էին, որոնց հետ ինչ-որ կերպ խառնվում էին մարմնի հոգնածությունը, աթոռի փափկությունը, պատուհանից ներս սահող թեթև զեփյուռի հպումը, որ խաղում էր այտի վրա: Գիրքը հմայում էր նրան կամ ավելի կոնկրետ՝ վստահություն էր տալիս: Ինչ-որ իմաստով գիրքը նրան ոչ մի նոր բան չէր ասում, ու հենց դա էլ գրավում էր Ուինսթոնին: Գրված էր այն, ինչ ինքը կասեր, եթե հնարավոր լիներ կարգավորել ցիրուցան մտքերը: Դա նույնպիսի մտքի արգասիք էր, ինչպես իրենն է, բայց շատ ավելի հզոր, ավելի համակարգված ու պակաս սարսափահար: Նա համարում էր, որ լավագույն գրքերը պատմում են այն, ինչ արդեն գիտես: Ուզում էր վերադառնալ առաջին գլխին, երբ լսեց Ջուլիայի ոտնաձայները սանդուղքի վրա, վեր կացավ աթոռից, որ դիմավորի նրան: Ջուլիան հատակին նետեց գործիքների իր դարչնագույն պայուսակը ու նետվեց Ուինսթոնի գիրկը: Արդեն մեկ շաբաթ չէին հանդիպել:

– *Գիրքն* ինձ մոտ է, – ասաց Ուինսթոնը, երբ բաց թողեցին իրար: – *Հա՛, արդե՛ն:* Լավ է, – ասաց նա առանց առանձնակի հետաքրքրության ու գրեթե անմիջապես չոքեց գազօջախի մոտ՝ սուրճ եփելու:

Գրքին վերադարձան անկողնում կես ժամ անցկացնելուց հետո միայն: Երեկոն բավական զով էր, ուստի արժեր ծածկվել

ծածկոցով: Ներքևից լսվում էր երգի ծանոթ մեղեդին ու երկարաձիտ կոշիկների ճռռոցը՝ սալաքարերի վրա: Մարմնեղ, կարմրաթև կինը, որին Ուինսթոնը տեսել էր իր առաջին այցելության ժամանակ, գրեթե չէր հեռանում բակից: Թվում էր՝ ցերեկը չկա մի ժամ, որ նա հետուառաջ չանի լվացքի տաշտի ու պարանի միջև՝ ժամանակ առ ժամանակ բերանը փակելով լվացքի ամրակներով, ապա շարունակելով զիլ երգը: Ջուլիան նստել էր նրա կողքին ու թվում էր շուտով կքնի: Ուինսթոնը հատակից բարձրացրեց գիրքն ու հենվեց մահճակալի գլխին:

- Պետք է կարդանք,- ասաց նա:- Դու էլ: Եղբայրության բոլոր անդամները պիտի կարդան:

- Դու կարդա,- աչքերը փակ ասաց աղջիկը:- Բարձրաձայն: Այդպես ավելի լավ է: Ընթացքում կարող ես նաև բացատրել:

Ժամացույցը ցույց էր տալիս վեցը, այսինքն՝ տասնութն էր: Նրանց մնացել էր երեք-չորս ժամ: Նա գիրքը հենեց ծնկներին ու սկսեց կարդալ:

Գլուխ I

Տգիտությունը ուժ է

Արձանագրված պատմության ամբողջ ընթացքում կամ հավանաբար նեոլիթյան դարաշրջանի ավարտից ի վեր աշխարհում գոյություն ունեն երեք դասի մարդիկ՝ բարձր, միջին ու ցածր: Նրանք բաժանվել են բազում տարբեր եղանակներով, կրել անհամար տարբեր անուններ, ու նրանց քանակական հարաբերակցությունը, ինչպես և վերաբերմունքը միմյանց հանդեպ, տարբերվել է դարաշրջանից դարաշրջան, բայց հասարակության հիմնական կառուցվածքը երբեք չի փոխվել: Նույնիսկ ահռելի տեղաշարժերից ու անդառնալի թվացող փոփոխություններից հետո նույն մոդելը վերահաստատվել է, ինչպես գիրոսկոպն է միշտ վերադառնում հավասարակշռության կետին, որքան էլ հրես...

- Ջոնլիա, արթոնն ես,- հարցրեց Ուինսթոնը:
- Այո, իմ սեր, լսում եմ: Շարունակիր: Հրաշալի է:
Նա շարունակեց կարդալ:

Այս երեք խմբերի նպատակները միանգամայն անհամատեղելի են: Բարձր դասի նպատակն է մնալ նույն տեղում: Միջին դասի նպատակն է փոխել տեղը բարձրի հետ: Ցածր դասի նպատակը (եթե նպատակ ունի, քանի որ ցածր դասի մշտական բնորոշ գիծն այն է, որ ձգնված են ծանր աշխատանքով և լոկ ժամանակ առ ժամանակ են գիտակցում այն, ինչ դուրս է իրենց առօրյա կյանքից) բոլոր տարբերությունները վերացնելն ու ստեղծելն է հասարակություն, որտեղ բոլորը հավասար կլինեն: Այսպիսով, ամբողջ պատմության ընթացքում անընդհատ կրկնվում է պայքարը, որի հիմնական գծերը միշտ նույնն են: Երկար ժամանակ բարձր դասը կայուն պահում է իշխանության դեկը, բայց վաղ թե ուշ միշտ էլ գալիս է մի պահ, երբ նրանք կորցնում են կամ հավատը սեփական անձի հանդեպ, կամ արդյունավետ կառավարելու ունակությունը, կամ էլ երկուսը միասին: Նրանց տապալում է միջին դասը, որը ցածր դասին քաշում է իր կողմը՝ ձևացնելով, թե պայքարում է հանուն ազատության ու արդարության: Իր նպատակին հասնելով՝ միջին դասը ցածր դասին հրում է հետ՝ դեպի ստրկության իր հին դիրքը, իսկ ինքը դառնում է բարձր: Հետո նոր միջին դասը բաժանվում է մյուս խմբերից մեկից կամ երկուսից էլ, ու պայքարը վերսկսվում է: Երեք դասերից միայն ցածրին երբեք չի հաջողվում թեկուզ ժամանակավոր հասնել իր նպատակներին: Չափազանցություն կլիներ ասել, որ պատմության ընթացքում նյութական առաջընթաց չի գրանցվել: Նույնիսկ այսօր՝ անկման շրջանում, շարքային մարդն ավելի բարեկեցիկ է ապրում, քան մի քանի դար առաջ: Բայց բարեկեցության, վարվելակերպի մեղմացման աճը, հեղափոխությունը կամ բարեփոխումները երբեք մի միլիմետր անգամ չեն մոտեցրել մարդկային հավասարությունը: Ցածր դասի տեսանկյունից՝ ոչ մի

պատմական փոփոխություն երբեք չի եղել ավելին, քան ղեկավարների անունների փոփոխություն:

Մինչև տասնիններորդ դարի վերջը այս մոդելի կրկնությունն ակնհայտ էր շատ դիտորդների համար: Այն ժամանակ ստեղծվեցին ուսմունքներ, որոնք պատմությունը մեկնաբանում էին որպես փուլային գործընթաց և ապացուցում, որ անհավասարությունը մարդկային կյանքի անփոփոխ օրենքն է: Այս ուսմունքն, անշուշտ, միշտ էլ ունեցել է հետևորդներ, բայց հիմա մատուցվում է միանգամայն այլ կերպ: Անցյալում հասարակության հիերարխիկ կառուցվածքի անհրաժեշտությունը բարձր դասի համար ստեղծված ուսմունք էր: Քարոզվում էր թագավորների ու արիստոկրատների, ինչպես և նրանց վրա մակաբույծի պես կպած հոգևորականների, փաստաբանների ու այլոց կողմից և ընդհանուր առմամբ մեղմվում անդրշիրիմյան երևակայական աշխարհում փոխհատուցման խոստումներով: Միջին դասը, քանի դեռ պայքարում էր իշխանության համար, միշտ օգտվում էր այնպիսի եզրույթներից, ինչպիսիք են ազատությունը, արդարությունն ու եղբայրությունը: Սակայն հիմա մարդկային եղբայրության գաղափարի վրա հարձակում են սկսել մարդիկ, որոնք ղեկավար պաշտոններում չեն եղել, բայց նման հույս էին փայփայում: Նախկինում միջին դասը հեղափոխություն էր անում հավասարության դրոշի ներքո, իսկ հնի կործանումից հետո հաստատում նոր բռնապետություն: Նոր միջին դասակարգի խմբերը նախապես են հռչակել իրենց բռնապետությունը: Սոցիալիզմը՝ տեսություն, որն ի հայտ է եկել տասնիններորդ դարի սկզբին ու դեռևս անտիկ ժամանակներում ստրուկների ապստամբություններից սկիզբ առած գաղափարական ավանդույթի շղթայի վերջին օղակն էր, խորապես վարակված էր նախորդ դարերի ուտոպիզմով: Բայց սոցիալիզմի բոլոր տարբերակները, որոնք հայտնվեցին 1900 թվականից սկսած, ավելի ու ավելի բացահայտ մոռացության էին մատնում ազատություն ու հավասարություն հաստատելու նպատակը: Դարակեսին ծագած նոր շարժումների՝ Անգսոնը՝

Օվկիանիայում, Նեոբրուչևիզմը՝ Եվրասիայում, Մահվան երկրպագությունը, ինչպես այն սովորաբար կոչում էին, Արևելասիայում, գիտակցված նպատակը մշտնջենական Անազատությունն ու Անհավասարությունն էր: Այս նոր շարժումներն, անշուշտ, ծագել էին հներից, պահպանել իրենց անուններն ու խոսքով հավատարիմ էին գաղափարախոսությանը: Բայց այդ ամենի նպատակն էր արգելել առաջընթացն ու ցանկացած պահի սառեցնել պատմությունը: Ծանոթ ճոճանակը պետք է ճոճվեր ևս մեկ անգամ, ապա կանգ առներ: Սովորաբար բարձր դասակարգը տապալվում էր միջին դասակարգի կողմից, որը դառնում էր բարձր դասակարգ. բայց այս անգամ գիտակցական ռազմավարության միջոցով բարձր դասակարգը կկարողանա մշտապես պահպանել իր դիրքը:

Նոր ուսմունքների ծագումը բացատրվում է մասամբ պատմական գիտելիքի կուտակմամբ ու պատմական մտածողության աճով, ինչը գրեթե գոյություն չունեի մինչև տասնիններորդ դարը: Պատմության փուլային ընթացքն այժմ հասկանալի է կամ թվում է հասկանալի, ու եթե հասկանալի է, ուրեմն նաև փոփոխելի է: Բայց հիմնական թաքուն սկզբունքն այն էր, որ քսաներորդ դարի սկզբին մարդկային հավասարությունը տեխնիկապես հնարավոր էր: Ճիշտ է, որ մարդիկ հավասար չեն իրենց բնածին տաղանդով, և գործառույթները պետք է բաժանվեն այնպես, որ որոշ անհատներ առավելություն ունենան մյուսների նկատմամբ, բայց այլևս չկա դասակարգային տարբերությունների կամ հարստության անհավասարության որևէ անհրաժեշտություն: Ավելի վաղ դարաշրջաններում դասակարգային տարբերությունները ոչ միայն անխուսափելի էին, այլև ցանկալի: Քաղաքակրթության դիմաց պետք էր վճարել անհավասարությամբ: Մեքենայական արտադրության զարգացմամբ, սակայն, վիճակը փոխվեց: Թեև մարդիկ դեռ պետք է կատարեին ոչ միանման աշխատանք, նրանք այլևս կարիք չունեին ապրելու տարբեր սոցիալական կամ տնտեսական մակարդակների վրա: Հետևաբար, նոր խմբերի

տեսանկյունից, որոնք մոտեցել էին իշխանությունը նվաճելուն, մարդկանց հավասարությունն այլևս ոչ թե իդեալ էր, որի համար կարելի էր պայքարել, այլ վտանգ, որը պետք է կասեցնել: Ավելի պարզունակ դարաշրջաններում, երբ արդարացի ու խաղաղ հասարակությունն անհնար էր, շատ հեշտ էր հավատալ դրան: Հազարավոր տարիներ մարդկային երևակայությունը հետապնդում էր երկրային դրախտի գաղափարը, որտեղ մարդիկ իրար հետ պետք է ապրեն եղբոր պես, առանց օրենքների ու տաժանակիր աշխատանքի: Եվ այս տեսլականը հիմնովին արմատավորվել էր Նույնիսկ այնպիսի խմբերում, որոնք օգուտ էին քաղում ցանկացած պատմական փոփոխությունից: Ֆրանսիական, անգլիական ու ամերիկյան հեղափոխությունների ժառանգները մասամբ հավատում էին մարդու իրավունքների, խոսքի ազատության, օրենքի առջև հավասարության ու նման բաների մասին իրենց խոսքերին և Նույնիսկ թույլ էին տալիս, որ իրենց վարքագիծն ինչ-որ չափով ենթարկվի դրա ազդեցությանը: Բայց մինչև քսաներորդ դարի չորրորդ տասնամյակը քաղաքական մտքի բոլոր հիմնական ուղղություններն ավտորիտար էին: Երկրային դրախտին այլևս չհավատացին այն պահից, երբ այն դարձավ իրականանալի: Յուրաքանչյուր Նոր քաղաքական տեսություն, ինչպես էլ որ կոչվեր, տանում էր հետ՝ դեպի հիերարխիա և կազմակերպվածություն: Իսկ հայացքների ընդհանուր կոշտացման պատճառով, որը սկսվեց մոտավորապես 1930 թվականին, վաղուց, երբեմն հարյուրավոր տարիներ մոռացված սովորույթները՝ առանց դատ ու դատաստանի բանտարկություն, ռազմագերիների ստրկական աշխատանք, հրապարակային մահապատիժներ, խոշտանգումներ՝ խոստովանություն կորզելու նպատակով, պատանդառություն և ամբողջ ժողովուրդների արտաքսում, ոչ միայն դարձյալ սովորական էին դարձել, ավելին, դրանք հանդուրժում և դրանց Նույնիսկ հավանություն էին տալիս մարդիկ, որոնք իրենց լուսավորյալ ու առաջադիմական էին համարում:

Աշխարհի բոլոր մասերում մեկ տասնամյակ տևած ազգային պատերազմներից, քաղաքացիական պատերազմներից, հեղափոխություններից ու հակահեղափոխություններից հետո ծագեցին Անգոն և Նրա մրցակիցները՝ որպես լիովին մշակված քաղաքական տեսություն: Բայց դրանց մասին ազդարարել էին զանազան համակարգեր, որոնք ընդհանուր անունով կոչվում էին տոտալիտար և հայտնվել էին դարասկզբին. վաղուց պարզ էին նաև այն աշխարհի ուրվագծերը, որը ծագելու էր գերիշխող քառսից: Ակնհայտ էր նաև, թե ովքեր են ղեկավարելու այդ աշխարհը: Նոր ազնվականությունը հիմնականում կազմված էր բյուրոկրատներից, գիտնականներից, ինժեներներից, արհմիութենական կազմակերպիչներից, գովազդի մասնագետներից, սոցիոլոգներից, ուսուցիչներից, լրագրողներից ու պրոֆեսիոնալ քաղաքական գործիչներից: Այդ մարդկանց, որոնք սերում էին աշխատավարձով ապրող միջին դասից ու աշխատավոր դասակարգի ավելի բարձր շերտերից, ձևավորել և համախմբել էր մոնոպոլիստական արտադրության ու կենտրոնացած կառավարման անբովանդակ աշխարհը: Նախորդ դարերում իրենց խմբերի համեմատ՝ նրանք պակաս ազահ էին, քիչ էին գայթակղվում շքեղությամբ, բայց տենչում էին մաքուր իշխանության, և ամենակարևորը՝ ավելի լավ էին գիտակցում, թե ինչ են անում, ու ավելի շատ էին ձգտում հարձակվել ընդդիմության վրա: Այս վերջին տարբերությունը որոշիչ էր: Ներկայի համեմատ՝ անցյալի բոլոր բռնատիրությունները թվում էին անվճռական ու ապարդյուն: Իշխող խմբերը միշտ ինչ-որ չափով վարակված էին ազատական գաղափարներով և սիրում էին ամեն տեղ կիսատ գործեր թողնել, արձագանքել միայն բացահայտ գործողություններին ու չէին հետաքրքրվում ենթակաների կարծիքներով: Ըստ ժամանակակից չափանիշների՝ նույնիսկ կաթոլիկ եկեղեցին միջին դարերում հանդուրժող էր: Պատճառը մասամբ այն էր, որ անցյալում ոչ մի կառավարություն չուներ քաղաքացիներին մշտական հսկողության տակ պահելու իշխանություն:

Սակայն տպագրության հայտնագործությունը հեշտացրեց հանրային կարծիքը նենգափոխելու գործը, իսկ կինոն ու ռադիոն ավելի զարգացրին գործընթացը: Հեռուստատեսության ստեղծումն ու տեխնիկական առաջընթացը, որը հնարավորություն տվեց միաժամանակ ընդունել և հեռարձակել նույն սարքից, վերջ տվեցին անձնական կյանքին: Յուրաքանչյուր քաղաքացի կամ առնվազն յուրաքանչյուր ոք, որին արժի հետևել, օրական քսանչորս ժամ պետք է լինի ոստիկանության հսկողության ներքո և լսի պաշտոնական քարոզչության ձայնը, իսկ հաղորդակցության մյուս միջոցները պետք է փակ լինեն: Առաջին անգամ հնարավորություն էր ստեղծվել ոչ միայն լրիվ հնազանդություն պարտադրել պետության կամքին, այլև կարծիքի միասնություն՝ բոլոր թեմաների շուրջ:

Հիտուն-վաթսունական թվականների հեղափոխական շրջանից հետո հասարակությունը, ինչպես միշտ, բաժանվեց բարձր, միջին և ցածր դասերի: Բայց նոր բարձր դասը, ի տարբերություն իր նախորդների, ոչ թե գործում էր ըստ բնագրի, այլ գիտեր, թե ինչ է պետք իր դիրքերն ապահովելու համար: Վաղուց հասկանալի էր, որ օլիգարխիայի միակ հուսալի հիմքը կոլեկտիվիզմն է: Հարստությունն ու արտոնությունները լավագույնս պաշտպանվում էին, երբ համատեղ սեփականություն էին: Այսպես կոչված՝ «անձնական ունեցվածքի ոչնչացումը», որը տեղի ունեցավ դարի կեսերին, իրականում նշանակում էր ունեցվածքի կենտրոնացում ավելի քիչ մարդկանց ձեռքերում, քան առաջ. բայց այն տարբերությամբ, որ նոր սեփականատերերը խումբ էին և ոչ թե անհատների զանգված: Կուսակցության ոչ մի առանձին անդամ ոչինչ չունի, բացի մի քանի անձնական իրերից: Կոլեկտիվ առումով այն ամենը, ինչ կա Օվկիանիայում, պատկանում է Կուսակցությանը, որովհետև այն ղեկավարում է ամեն ինչ և տնօրինում է ապրանքներն այնպես, ինչպես ճիշտ է համարում: Հեղափոխությանը հաջորդած տարիներին այն կարողացավ իշխող դիրք ձեռք բերել գրեթե առանց դիմադրության, որովհետև ամբողջ գործընթացը ներկայացվում էր որպես

1984

կոլեկտիվիզմի ակտ: Ընդունված էր, որ եթե կապիտալիստների ունեցվածքը բռնագրավվի, վրա կհասնի սոցիալիզմը. անկասկած, կապիտալիստները զրկվել էին ամեն ինչից: Գործարաններ, հանքեր, հող, տներ, տրանսպորտային միջոցներ. ամեն ինչ խլվեց նրանցից. ու քանի որ այս ամենն արդեն անձնական սեփականություն չէր, նշանակում է դարձել էր հանրային սեփականություն: Անգստցը, որն առաջացել էր հին սոցիալիստական շարժումից և ժառանգել նրա լեզվական ոճը, փաստորեն իրականացրել էր սոցիալիստական ծրագրի գլխավոր կետը. արդյունքը, որը կանխատեսել էր ու որին ձգտել էր նախօրոք, այն էր, որ տնտեսական անհավասարությունը դարձել էր հարատև:

Բայց հիերարխիկ հասարակությունը հավերժացնելու խնդիրներն ավելի խոր հիմքեր ունեն: Կա միայն չորս միջոց, որով իշխող խումբը կարող է գահընկեց արվել. կա՛մ նվաճվում է դրսից, կա՛մ անարդյունավետ է դեկավարում, և զանգվածները ցանկանում են ապստամբել, կա՛մ դա թույլ է տալիս ձևավորել ուժեղ ու դժգոհ միջին դաս, կա՛մ կորցնում է ինքնավստահությունն ու կառավարելու պատրաստակամությունը: Այս պատճառները չեն ազդում առանձին-առանձին, և որպես կանոն՝ չորսն էլ ինչ-որ չափով ներկա են: Իշխող դասը, որը կարող է պաշտպանվել բոլորից, մշտապես մնում է իշխանության գլխին: Վերջին հաշվով, որոշիչ գործոնը բուն իշխող դասակարգի հոգեբանական վիժակն է:

Սույն դարի կեսից հետո առաջին վտանգը գործնականում անհետացավ: Երեք տերություններն էլ, որոնք հիմա բաժանում են աշխարհը, իրականում անպարտելի են, և նրանց հնարավոր էր հաղթել միայն աստիճանական ժողովրդագրական փոփոխությունների միջոցով, որոնք, սակայն, մեծ լիազորություններով օժտված կառավարությունը կարող է հեշտությամբ կանխել: Երկրորդ վտանգը նույնպես միայն տեսական է: Զանգվածները երբեք ինքնուրույն չեն ապստամբում, երբեք չեն ապստամբում միայն նրա համար, որ ճնշված են: Անշուշտ, քանի դեռ նրանց թույլ չեն

տալիս համեմատության եզրեր ունենալ, նույնիսկ երբեք չեն հասկանում, որ ճնշված են: Անցյալի կրկնվող տնտեսական ճգնաժամերը միանգամայն անտեղի էին ու հիմա արգելված էին, բայց ուրիշ և հավասարապես մեծ տեղաշարժեր կարող են պատահել և պատահում են առանց քաղաքական հետևանքների, որովհետև դժգոհությունն արտահայտելու այլ ընկալելի եղանակի որևէ հնարավորություն չկա: Ինչ վերաբերում է գերարտադրության խնդրին, որը հասունացել էր մեր հասարակության մեջ մեքենայական տեխնիկայի զարգացումից ի վեր, ապա այն լուծվում է շարունակական պատերազմի միջոցով (տե՛ս Գլուխ III), որը նույնպես օգտակար է հասարակության բարոյական վիճակը մինչ անհրաժեշտ աստիճան շիկացնելու համար: Մեր ներկայիս ղեկավարների տեսանկյունից՝ իսկական վտանգներն են ուժեղ, քիչ աշխատող, իշխանության ծարավի մարդկանց նոր խմբի ստեղծումը, ինչպես և լիբերալիզմի ու սկեպտիցիզմի աճը յուրայինների շարքերում: Այլ կերպ ասած՝ խնդիրը դաստիարակչական է: Դա թե՛ ուղղորդող, թե՛ ավելի բազմաքանակ կատարող խմբերի գիտակցության անվերջ կաղապարումն է: Բավական է զանգվածների գիտակցության վրա ընդամենը ազդել բացասական առումով:

Իմանալով այս ամենը՝ կարելի է ենթադրել, եթե, իհարկե, դեռ չգիտենք, Օվկիանիայի հասարակության ընդհանուր կառուցվածքը: Բուրգի գազաթին Մեծ եղբայրն է: Մեծ եղբայրն անսխալական է ու ամենակարող: Ցանկացած հաջողություն, ցանկացած ձեռքբերում, ցանկացած հաղթանակ, ցանկացած գիտական հայտնագործություն, ամբողջ իմացությունը, ամբողջ իմաստությունը, ամբողջ երջանկությունը, ամբողջ արժանիքը բխում է անմիջաբար նրա ղեկավարությունից ու ոգեշնչումով: Ոչ ոք երբեք չի տեսել Մեծ եղբորը: Նրա դեմքը պատկերված է ազդագրերի վրա, ձայնը լսվում է հեռէկրանից: Կարող ենք վստահ լինել, որ նա երբեք չի մահանա, և արդեն զգալի անորոշություն կա՝ կապված նրա ծննդավայրի հետ: Մեծ եղբայրը կերպար է, որով Կուսակցությունը

ցանկանում է ներկայանալ աշխարհին: Նրա գործառույթն է ծառայել որպես կենտրոնացնող կետ սիրո, վախի ու մեծարանքի համար՝ զգացմունքներ, որոնք ավելի հեշտ կարելի է տածել անհատի, քան կազմակերպության հանդեպ: Մեծ եղբորից ներքև Ներքին կուսակցությունն է, որի անդամների թիվը սահմանափակ է՝ վեց միլիոն մարդ կամ Օվկիանիայի բնակչության երկու տոկոսից էլ պակաս: Ներքին կուսակցությունից ներքև Արտաքին կուսակցությունն է. եթե Ներքին կուսակցությունը համարվում է պետության ուղեղը, ապա Արտաքինը կարելի է նմանեցնել ձեռքերին: Նրանից ներքև մարդկային համր զանգվածներն են, որոնց սովորույթի ուժով կոչում ենք «պրոլներ»։ Նրանք կազմում են բնակչության գրեթե 85 տոկոսը: Ըստ մեր ավելի վաղ դասակարգման՝ պրոլները ցածր դասակարգ են, քանզի հասարակածային շրջանների ստրուկ բնակչությունը, որը մի նվաճողից շարունակ անցնում է մյուսին, հասարակության մշտական և անհրաժեշտ մաս համարվել չի կարող:

Ըստ էության, այս երեք խմբերին անդամակցելը ժառանգական չէ: Ներքին կուսակցության անդամ ծնողների երեխան իրավունքի ուժով չի դառնում Ներքին կուսակցության անդամ: Կուսակցության երկու ժյուղում էլ ընդունելությունը կատարվում է քննությամբ, որն անցկացվում է տասնվեց տարեկանում: Չկա ոչ ռասայական խտրականություն, ոչ որևէ նահանգի նկատելի առավելություն մյուսի նկատմամբ: Հրեաների, սևամորթների, գտարյուն հնդկական ծագումով հարավամերիկացիների կարելի է հանդիպել Կուսակցության բարձրագույն շարքերում, իսկ ցանկացած ոլորտի կառավարիչներ միշտ ընտրվում են նույն տարածքի բնակիչներից: Օվկիանիայի ոչ մի շրջանում բնակիչներն իրենց չեն զգում գաղութային ազգ, որը ղեկավարվում է հեռավոր մայրաքաղաքից: Օվկիանիան մայրաքաղաք չունի, և նրա անվանական ղեկավարը մի մարդ է, որի գտնվելու վայրը ոչ ոքի հայտնի չէ: Բացի նրանից, որ անգլերենը՝ գլխավոր, իսկ նորալեզուն պաշտոնական լեզուն է, կյանքն այլ կերպ կենտրոնացած չէ: Ղեկավարներին միավորում է ոչ թե

արյունակցական կապը, այլ հավատարմությունն ընդհանուր ուսմունքին: Ճիշտ է, մեր հասարակությունը շերտավորված է, խիստ շերտավորված, և առաջին հայացքից շերտավորումը ժառանգական բնույթ ունի: Հասարակական սանդուղքով շարժումը վեր ու վար հիմա ավելի քիչ է, քան կապիտալիզմի օրոք կամ նույնիսկ նախարդյունաբերական շրջանում: Կուսակցության երկու ճյուղերի միջև առկա է որոշակի փոխանակում, բայց միայն այնքան, որքան անհրաժեշտ է Ներքին կուսակցությունից թույլերին հեռացնելու և Արտաքին կուսակցության փառասեր անդամների անվտանգությունն ապահովելու համար՝ նրանց տալով աճելու հնարավորություն: Ըստ էության, պրոլետարներին թույլ չեն տալիս ընդունվել Կուսակցության մեջ: Նրանցից ամենաշնորհալիներին, որոնք գուցե վերածվեն դժգոհության օջախի, Մտքի ոստիկանությունն ուղղակի արձանագրում ու վերացնում է: Բայց այդպիսի վիճակը սկզբունքային չէ իրավակարգի համար, ոչ էլ նույնիսկ անփոփոխ: Կուսակցությունը դասակարգ չէ բառի հնացած իմաստով: Այն իշխանությունը որպես այդպիսին երեխաներին փոխանցելու նպատակ չունի, ու եթե ամենաընդունակ մարդկանց վերևում պահելու այլ միջոց չլինի, պատրաստ է պրոլետարիատի շարքերից կազմել մի ամբողջ նոր սերունդ: Վճռական տարիներին այն փաստը, որ Կուսակցությունը ժառանգական մարմին չէ, օգնել է չեզոքացնելու ընդդիմությունը: Սոցիալիստների ավելի հին տեսակը, որին պատրաստել են, այսպես կոչված, «դասակարգային արտոնությունների» դեմ պայքարելու համար, ենթադրում էր, որ այն, ինչ ժառանգական չէ, չի կարող մշտական լինել: Նա չէր հասկանում՝ պարտադիր չէ, որ օլիգարխիայի անընդհատությունը ֆիզիկական լինի, բայց չէր էլ մտածում, որ ժառանգական արիստոկրատիան միշտ կարճ կյանք է ունեցել, մինչդեռ ընտրովի կազմակերպությունները, ինչպիսին է կաթոլիկ եկեղեցին, երբեմն գոյություն են ունեցել մի քանի հարյուր կամ հազար տարի: Օլիգարխիական կառավարման էությունն այլևս ոչ թե հորից որդուն փոխանցումն է, այլ որոշակի

1984

աշխարհայացքի ու կենսակերպի հաստատակամությունը, որ մեռ-
յալները թելադրում էին ողջերին: Իշխող խումբն իշխող խումբ է
այնքան ժամանակ, քանի դեռ կարող է ժառանգորդներ նշանակել:
Կուսակցությանը մտահոգում է ոչ թե իր արյունը, այլ ինքն իրեն հա-
վերժացնելու խնդիրը: Կարևոր չէ՝ ով է իշխանության ղեկին, միայն
թե հիերարխիկ կառուցվածքը միշտ նույնը մնա:

Մեր ժամանակներին բնորոշ բոլոր դավանանքները, սովոր-
ույթները, ճաշակները, զգացմունքները, մտավոր վերաբերմուն-
քը ըստ էության ստեղծված են, որպեսզի պահպանեն Կուսակցու-
թյան իրական առեղծվածը և կանխեն ժամանակակից հասարա-
կության իրական էության ըմբռնումը: Ֆիզիկական խռովությունը
կամ խռովության տանող ցանկացած նախնական քայլ այժմ ան-
հնար է: Պրովետարներից վախենալու պատճառ չկա: Եթե նրանց
հանգիստ թողնեն, սերնդեսերունդ ու դարեդար կշարունակեն
աշխատել, բազմանալ ու մեռնել՝ ոչ միայն առանց ապստամբե-
լու ցանկության, այլև առանց հասկանալու, որ աշխարհը կարող
է ուրիշ լինել: Նրանք կարող են վտանգավոր դառնալ միայն այն
դեպքում, եթե արդյունաբերական տեխնիկայի առաջընթացը ծնի
ավելի լավ կրթության անհրաժեշտություն. բայց քանի որ ռազմա-
կան ու առևտրային մրցակցությունն այլևս կարևոր չէ, ժողովրդա-
կան կրթության մակարդակն իրականում նվազում է: Ինչ կարծիք
ունեն կամ չունեն զանգվածները՝ մատնվում է անտարբերության:
Նրանց կարող է շնորհվել ինտելեկտուալ ազատություն, որովհե-
տև ինտելեկտ չունեն: Մյուս կողմից՝ Կուսակցության անդամին չի
թույլատրվում կարծիքի ամենափոքր իսկ շեղում ամենաանկարևոր
թեմաների շուրջ:

Կուսակցության անդամը ծննդից մինչև մահ Մտքի ոստիկանու-
թյան աչքի առաջ է: Նույնիսկ երբ մենակ է, երբեք չի կարող վստահ
լինել, որ մենակ է: Որտեղ էլ լինի՝ քնած թե արթուն, աշխատելիս թե
հանգստանալիս, լոգարանում թե անկողնում, հսկողության տակ
է՝ առանց զգուշացման ու առանց իմանալու, որ իրեն հետևում են:

Նրա ոչ մի քայլ անուշադրության չի մատնվում: Նրա ընկերները, թուլությունները, վերաբերմունքը կնոջ ու երեխաների հանդեպ, դեմքի արտահայտությունը, երբ մենակ է, խոսքերը, որ շնջում է քնի մեջ, նույնիսկ մարմնի բնորոշ շարժումները մանրակրկիտ ուսումնասիրվում են: Ոչ միայն որևէ զանցանք, այլև ցանկացած, թեկուզ չնչին արտասովոր քայլ, սովորությունների ցանկացած փոփոխություն, որևէ նյարդային շարժում, որ կարող է ներքին պայքարի արտահայտիչ լինել, հաստատ կնկատվի: Նա չունի ընտրության ազատություն որևէ բնագավառում: Մյուս կողմից՝ նրա գործողությունները չեն կարգավորվում օրենքով կամ վարքագծի հստակ ձևակերպված նորմերով: Օվկիանիայում օրենք չկա: Մտքերն ու գործողությունները, որոնք նկատվելու դեպքում անտարակույս մահ են նշանակում, պաշտոնապես արգելված չեն, և անվերջ գտումները, ձերբակալությունները, խոշտանգումներն ու գոլորշացումները այն հանցագործությունները պատժելու համար չեն, որոնք ըստ էության կատարվել են, այլ հեռացնելու համար նրանց, ովքեր գուցե հանցագործ դառնան՝ ապագայում: Կուսակցության անդամից պահանջում են ոչ միայն ճիշտ կարծիքներ, այլև ճիշտ բնագղներ: Նրանցից պահանջվող համոզմունքների ու հայացքների մեծ մասը հստակ ձևակերպված չէ ու չի էլ կարող ձևակերպվել՝ առանց Անգսոցին հատուկ հակասությունները նշելու: Եթե անհատը բնածին ուղղահավատ է (նորալեզվով՝ բարեմիտ), նա բոլոր հանգամանքներում առանց մտածելու կիմանա, թե որն է ճիշտ համոզմունքը կամ ցանկալի զգացմունքը: Բայց ցանկացած դեպքում մանուկ հասակի մանրակրկիտ մտավոր վարժանքը, որը հիմնված է նորալեզվի այնպիսի բառերի վրա, ինչպիսիք են՝ «հանցականգր», «սևասպիտակը» և «կրկնամիտքը», նրա մեջ մեռցնում է այս կամ այն հարցի մասին խոր մտածելու ցանկությունը:

Կուսակցության անդամը անհատական զգացմունքներ ու խանդավառության ընդմիջումներ չպիտի ունենա: Համարվում է, որ նա պետք է ապրի ատելության շարունակական մոլեգնության մեջ՝

1984

ընդդեմ օտարերկրյա թշնամիների և ներքին դավաճանների, տոնի բոլոր հաղթանակները և նվաստանա Կուսակցության իշխանության ու իմաստության առջև: Նրա դատարկ, չգոհացնող կյանքից ծնված դժգոհությունները միտումնավոր ուղղվում են դեպի դուրս և փարատվում այնպիսի միջոցներով, ինչպիսին է Ատելության երկրոպեն, և մտորումները, որոնք գուցե կհանգեցնեին հոռետեսական կամ ապստամբական վերաբերմունքի, սպանվում են նախապես՝ վաղ հասակում ձեռք բերված ներքին կարգապահությամբ: Կարգապահության առաջին և ամենապարզ աստիճանը, որ կարելի է սովորեցնել նույնիսկ փոքր երեխաներին, նորալեզվով կոչվում է հանցականգ: Հանցականգ նշանակում է ասես բնազդով որևէ վտանգավոր մտքի շեմին կանգ առնելու ունակություն, որը ներառում է մի քանի հատկություն՝ համաբանությունները չտեսնելու, տրամաբանական սխալները չընկալելու, պարզագույն փաստարկները սխալ հասկանալու, եթե դրանք դեմ են Անգսոցին, և ծանծրանալու կամ զզվելու այն մտքերից, որոնք կարող են հանգեցնել հերետիկոսության: Կարճ ասած՝ հանցականգը փրկարար հիմարություն է: Բայց հիմարությունը բավական չէ: Հակառակը՝ ուղղահավատությունը լրիվ իմաստով պահանջում է սեփական մտավոր գործընթացների վերահսկողություն՝ նույնքան կատարյալ, որքան մարմնամարզիկն է վերահսկում իր մարմինը: Օվկիանիայի հասարակությունն ի վերջո հիմնվում է այն հավատի վրա, որ Մեծ եղբայրը ամենազոր է, իսկ Կուսակցությունը՝ անսխալական: Բայց քանի որ իրականում Մեծ եղբայրն ամենազոր չէ, ու Կուսակցությունն էլ անսխալական չէ, անհրաժեշտ է փաստերի հանդեպ վերաբերմունքի մեջ դրսևորել անխոնջ, անդադար ձկունություն: Այստեղ գաղտնաբառը սևասպիտակն է: Ինչպես նորալեզվի բառերի մեծ մասը, այս բառն ունի իրար հակասող երկու նշանակություն: Հակառակորդին դիմելիս նշանակում է սովորություն, երբ մարդը հանդգնում է ասել, որ սևը սպիտակ է՝ հակառակ պարզ փաստերի: Եթե վերաբերում է Կուսակցության անդամի, նշանակում է

անձնվեր պատրաստականություն՝ ասելու, որ սևը սպիտակ է, երբ այդպես է պահանջում Կուսակցության կարգապահությունը: Բայց դա նաև նշանակում է ունակություն՝ հավատալու, որ սևը սպիտակ է, ավելին՝ իմանալու, որ սևը սպիտակ է, և մոռանալու, որ երբևէ հավատացել է հակառակին: Դա պահանջում է անցյալի անդադար վերափոխում, որը հնարավոր է մտքի՝ մնացած ամեն ինչն ընդգրկող և նորալեզվում «կրկնամիտք» կոչվող համակարգի միջոցով:

Անցյալի վերափոխումն անհրաժեշտ է երկու պատճառով. նրանցից մեկը երկրորդական է և այսպես ասած՝ կանխարգելիչ: Այն է՝ Կուսակցության անդամը, ինչպես պրոլետարը, դիմանում է ներկայիս պայմաններին, մասամբ որովհետև չունի համեմատության եզրեր: Նա պետք է կտրված լինի անցյալից, ճիշտ այնպես, ինչպես օտար երկրներից, որովհետև պետք է հավատա, որ ավելի լավ է ապրում, քան իր նախնիները, և որ նյութական ապահովության միջին մակարդակն անընդհատ աճում է: Բայց անցյալի վերաշտկման ավելի կարևոր պատճառն այն է, որ անհրաժեշտ է պահպանել Կուսակցության անսխալականությունը: Ամենատարբեր ելույթները, վիճակագրությունն ու արձանագրությունները պետք է անընդհատ թարմացվեն՝ ապացուցելու, որ Կուսակցության կանխատեսումները բոլոր դեպքերում ճիշտ են եղել: Բացի այդ, երբեք չի կարելի ընդունել որևէ փոփոխություն ուսմունքի կամ քաղաքական ուղու մեջ, քանի որ կարծիք կամ նույնիսկ քաղաքականություն փոխելը նշանակում է ընդունել սեփական թուլությունը: Եթե, օրինակ, Եվրասիան կամ Արևելաասիան (կարևոր չէ, թե որը) այսօր թշնամի է, ուրեմն միշտ թշնամի է եղել: Ու եթե փաստերը հակառակն են ասում, ապա պետք է փոխել փաստերը: Այսպիսով, պատմությունը շարունակ վերաշարադրվում է: Անցյալի այս ամենօրյա կեղծումը, որով զբաղվում է Ճճմարտության նախարարությունը, նույնքան կարևոր է վարչակարգի կայունության համար, որքան Սիրո նախարարության բռնաճնշումներն ու լրտեսումները:

Անցյալի փոփոխական բնույթն Անգսոնցի գլխավոր սկզբունքն է: Պնդում են, որ անցյալի իրադարձություններն օբյեկտիվորեն գոյություն չունեն, այլ պահպանվում են միայն գրավոր արձանագրություններում ու մարդկային հիշողությունների մեջ: Անցյալն այն է, ինչը ձևավորվում է արձանագրությունների ու հիշողությունների համադրությունից: Ու քանի որ Կուսակցությունը լիովին վերահսկում է ինչպես բոլոր փաստաթղթերը, այնպես էլ իր անդամների մտքերը, հետևաբար անցյալն այն է, ինչ Կուսակցությունն է ցանկանում: Դրանից հետևում է նաև, որ թեև անցյալը փոփոխելի է, այն երբեք, ոչ մի պահ չի փոխվել: Որովհետև երբ վերստեղծվում է այնպես, ինչպես անհրաժեշտ է այդ պահին, ապա անցյալն այս նոր տարբերակն է, և ուրիշ անցյալ երբեք գոյություն չի ունեցել: Այս ամենն արդյունավետ է նույնիսկ երբ, ինչպես հաճախ է պատահում, պետք է տարվա ընթացքում մի քանի անգամ անձանաչելիորեն փոխել նույն իրադարձությունը: Բոլոր ժամանակներում Կուսակցությունը տնօրինել է բացարձակ ժշմարտությունը. պարզ է, որ բացարձակը չի կարող տարբերվել ներկայից: Պարզ է նաև, որ անցյալի վերահսկումն ամենից առաջ կախված է հիշողության մարզումից: Բոլոր գրավոր արձանագրությունները սովյալ պահի ուղղահավաստությանը համապատասխանեցնելն ընդամենը մեխանիկական գործողություն է: Բայց նաև անհրաժեշտ է *հիշել*, որ իրադարձությունները տեղի են ունեցել այնպես, ինչպես ցանկալի է: Իսկ եթե անհրաժեշտ է վերադասավորել հիշողությունները կամ միջամտել գրավոր արձանագրություններին, ապա անհրաժեշտ է *մոռանալ*, որ նման բան ես արել: Այդ հնարքը կարելի է սովորել, ինչպես մտավոր աշխատանքի ցանկացած այլ մեթոդ: Կուսակցության անդամների մեծ մասը և անշուշտ բոլորը, ովքեր խելացի են և ուղղահավատ, դա սովորում են: Տալեզվում դա ուղղակի կոչվում է «իրականության վերահսկում»: Նորալեզվում՝ *կրկնամիտք*, թեև կրկնամիտքն ավելի մեծ իմաստ է պարունակում:

Կրկնամիտք՝ նշանակում է մտքում միաժամանակ երկու միմյանց հակասող հավատ պահելու և երկուսին էլ հավատալու ունակություն: Կուսակցական ինտելեկտուալը գիտի, թե ինչ ուղղությամբ փոխի իր հիշողությունները. հետևաբար գիտի, որ խաղում է իրականության հետ, բայց վարժելով *կրկնամիտքը*՝ նաև բավարարվում է նրանով, որ իրականությունն անձեռնմխելի է: Գործընթացը պետք է լինի գիտակցված, այլապես չի իրականացվի բավարար ճշգրտությամբ, սակայն պետք է լինի նաև չգիտակցված, այլապես կառաջացնի ստի, հետևաբար՝ նաև մեղքի զգացում: Կրկնամիտքն ընկած է Անգսոնի հենց կենտրոնում, քանի որ Կուսակցության հիմնական գործը գիտակցված խաբեությունն օգտագործելն է՝ միաժամանակ անսասան պահելով նպատակը, որն ուղեկցվում է լիակատար ազնվությամբ: Ասել միտումնավոր ստեր, միաժամանակ անկեղծորեն հավատալ դրանց, մոռանալ ցանկացած փաստ, որ անհարմար է դարձել, իսկ հետո, երբ կրկին անհրաժեշտ լինի, հետ բերել մոռացությունից այնքան ժամանակով, որքան անհրաժեշտ է, ժխտել օբյեկտիվ իրականության գոյությունը և ամբողջ ընթացքում հաշվի առնել այն իրականությունը, որը ժխտում ես. այս ամենը խիստ անհրաժեշտ է: Նույնիսկ «*կրկնամիտք*» բառն օգտագործելիս անհրաժեշտ է մարզել *կրկնամիտքը*: Քանի որ բառն օգտագործելիս ընդունում ես, որ միջամտում ես իրականությանը. ևս մի *կրկնամիտք* գործելով՝ ոչնչացնում ես այդ գիտելիքը, և այդպես անվերջ, թեև սուտը միշտ մի քայլ առաջ է ճշմարտությունից: Ի վերջո, *կրկնամիտքի* շնորհիվ է, որ Կուսակցությանը հաջողվել է և գուցե դեռ կհաջողվի հազարավոր տարիներ խափանել պատմության ընթացքը:

Նախկին բոլոր օլիգարխիաներն իրենց իշխանությունը կորցրել են կամ ոսկրանալու, կամ փափկելու հետևանքով: Նրանք կամ հիմար ու ամբարտավան են դարձել, չեն կարողացել հարմարվել փոխվող հանգամանքներին և տապալվել են, կամ էլ դարձել են ազատամիտ ու երկչուտ, գնացել զիջումների այն ժամանակ, երբ

պետք էր ուժ կիրառել, և դարձյալ տապալվել են: Այլ կերպ ասած՝ տապալվել են գիտակցության կամ անգիտակցության պատճառով: Կուսակցության ձեռքբերումը մտածողության այնպիսի համակարգի ստեղծումն է, որում երկու վիճակներն էլ կարող են միաժամանակ գոյություն ունենալ: Կուսակցության գերիշխանությունը չէր կարող մշտական լինել ուրիշ ոչ մի ինտելեկտուալ հենքի վրա: Եթե ինչ-որ մեկը պետք է իշխի ու շարունակի իշխել, պիտի կարողանա խախտել իրականության զգացումը: Իշխելու գաղտնիքն է սեփական անսխալականության հանդեպ հավատը համադրել անցյալի սխալներից դասեր քաղելու ունակության հետ:

Կարիք չկա ասելու, որ *կրկնամյա* ամենանուրբ մասնագետները նրանք են, ովքեր հորինել են *կրկնամիտքը* և գիտեն, որ դա մտավոր խաբեության հսկայական համակարգ է: Մեր հասարակության մեջ նրանք, ովքեր լավագույնս տեղյակ են, թե ինչ է կատարվում, բոլորովին ունակ չեն տեսնելու աշխարհն այնպիսին, ինչպիսին կա: Ընդհանրապես, որքան շատ են հասկանում, այնքան պատրանքն ավելի մեծ է. որքան ավելի խելացի՝ այնքան ավելի խենթ: Դրա պարզ օրինակներից է այն փաստը, որ պատերազմի հիստերիայի լարվածությունն աճում է, երբ մարդը բարձրանում է սոցիալական սանդուղքով: Պատերազմի հանդեպ ամենատրամաբանական վերաբերմունքը հատուկ է վիճելի տարածքների ենթակա ժողովուրդներին: Այս մարդկանց համար պատերազմն ընդամենը շարունակական աղետ է, որ մակընթացության ալիքի պես անցնում է նրանց մարմինների վրայով: Նրանց բոլորովին չի հետաքրքրում, թե որ կողմը կհաղթի: Նրանք գիտեն, որ իշխանության փոփոխության դեպքում իրենք անելու են նույն գործը, ինչ առաջ, միայն թե՛ նոր տերերի համար, որոնք իրենց հետ վարվելու են նույն կերպ, ինչպես հները: Փոքր-ինչ ավելի լավ վիճակում գտնվող աշխատողները, որոնց կոչում ենք «պրոլներ», միայն երբեմն-երբեմն են գիտակցում, որ պատերազմ է: Անհրաժեշտության դեպքում նրանց կարելի է հասցնել մոլեգին վախի և ատելության, բայց երբ հանգիստ են թողնում, ի վիճակի են

երկար ժամանակով մոռանալ շարունակվող պատերազմի մասին: Կուսակցության և հատկապես Ներքին կուսակցության շարքերում կարելի է հանդիպել իսկական պատերազմական խանդավառության: Աշխարհի նվաճմանը ամենից շատ հավատում են նրանք, ովքեր գիտեն, որ դա անհնար է: Երկու հակադրությունների այս յուրահատուկ կապը՝ գիտելիք և տգիտություն, ցինիզմ ու մոլեռանդություն, Օվկիանիայի հասարակության ամենակարևոր տարբերակիչ գծերից է: Պաշտոնական գաղափարախոսությունն առատ է հակասություններով, նույնիսկ երբ դրանց իրական կարիքը չկա: Այսպիսով, Կուսակցությունը հերքում ու վատաբանում է ցանկացած սկզբունք, որի վրա ի սկզբանե հիմնվում էր սոցիալիստական շարժումը, և դա անում է հանուն սոցիալիզմի: Քարոզում է արհամարհանք աշխատավոր դասի հանդեպ՝ մի բան, որ չի եղել նախորդ դարերում, և իր անդամներին հագցնում է համազգեստ, որը մի ժամանակ բնորոշ էր ֆիզիկական աշխատանք կատարողներին և ընդունված էր հենց այդ պատճառով: Հետևողականորեն քայքայում է ընտանիքի համերաշխությունը և իր առաջնորդին կոչում է անունով, որն ընտանեկան հավատարմության ուղղակի կոչ է: Նույնիսկ մեզ կառավարող չորս նախարարությունների անունները փաստերը միտումնավոր խեղաթյուրելու անամոթության օրինակ են: Խաղաղության նախարարությունը զբաղվում է պատերազմով, ճշմարտության նախարարությունը՝ ստերով, Սիրո նախարարությունը՝ խոշտանգումներով, իսկ Առատության նախարարությունը սովամահ է անում: Այս հակասությունները ոչ պատահական են, ոչ էլ սերել են կեղծավորությունից. դրանք *կրկնամիտքն* են՝ գործողության մեջ: Քանզի իշխանությունն անվերջ կարելի է պահպանել միայն հակասությունների հաշտեցման պարագայում: Հին շրջապտույտն այլ կերպ խզել հնարավոր չէ: Եթե մարդկային հավասարությունը պետք է ընդմիջտ անհնարին դարձվի, եթե բարձր դասը, ինչպես մենք ենք կոչում, ցանկանում է հարատև պահել իր դիրքերը, ապա գերիշխող մտավոր վիճակը պիտի լինի վերահսկվող խելագարությունը:

1984

Բայց կա մի հարց, որը մինչ այս պահը գրեթե անտեսել ենք. *ինչո՞ւ* խոչընդոտել մարդկային հավասարությանը: Ենթադրենք՝ գործընթացի մեխանիզմը ճիշտ է՝ նկարագրված, այդ դեպքում ո՞րն է այս հսկայական, մանրամասն մշակված, մի որոշակի կետում պատմությունը սառեցնելու միտված գործունեության շարժառիթը:

Եվ ահա հասնում ենք գլխավոր գաղտնիքին: Ինչպես տեսանք, Կուսակցության և առաջին հերթին Ներքին կուսակցության շուրջ առասպելը կախված է *կրկնամիտքից*: Բայց դրա տակ թաքնված է նախնական շարժառիթը՝ երբևէ չուսումնասիրված բնագոյը, որը նախ հանգեցրեց իշխանության բռնազավթման, ապա ծնեց և՛ *կրկնամիտքը*, և՛ Մտքի ոստիկանությունը, և՛ շարունակվող պատերազմը, և՛ վարչակարգի այլ անհրաժեշտ բաղադրիչներ: Այս շարժառիթն իրականում...

Ուինսթոնը զգաց լռությունը, ինչպես մարդը նոր հնչյունն է զգում: Նրան թվաց՝ Ջուլիան վաղուց չի շարժվել: Աղջիկը կողքի էր պառկած, գոտկատեղից վեր՝ մերկ, ավր՛ այտի տակ, սև մազափունջն ընկել էր աչքերին: Կուրծքը դանդաղ ու համաչափ վերուվար էր անում:

– Ջո՛ւլիա:

Պատասխան չկար:

– Ջո՛ւլիա, արթո՞ւն ես:

Պատասխան չկար: Ջուլիան քնած էր: Նա փակեց գիրքը, զգույշ դրեց հատակին, պառկեց և ծածկոցը զցեց իր ու Ջուլիայի վրա:

Մտածում էր, որ այդպես էլ դեռ չիմացավ գլխավոր գաղտնիքը: Հասկանում էր՝ *ինչպես*, բայց չէր հասկանում՝ *ինչո՞ւ*: Առաջին գլուխը, ինչպես և երրորդը, նրան որևէ նոր բան չէր ասել, ընդամենը համակարգել էր իմացածը: Բայց կարդալուց հետո վերջնականապես հանգզվեց, որ խելագար չէ: Փոքրամասնություն լինելը, նույնիսկ եթե այն բաղկացած է մեկ հոգուց, չի նշանակում, որ խելագար ես: Կա ճշմարտություն, և կա սուտ, ու եթե կառչում ես ճշմարտությունից՝

Նույնիսկ հակառակ ամբողջ աշխարհի, խենթ չես: Մայրամուտի արևի դեղին ճառագայթը պատուհանից թեք ընկել էր բարձին: Նա փակեց աչքերը: Դեմքին ընկած արևից ու նրանից, որ իրեն էր դիպչում կնոջ ողորկ մարմինը, նրան պատեց վստահության ուժեղ ու քնատ զգացումը: Ինքն ապահով էր, ու ամեն ինչ կարգին էր: Ուիներինը քնեց՝ շնչալով՝ «Ողջամտությունը վիճակագրական երևույթ չէ», ու նրան թվում էր՝ այդ արտահայտության մեջ խորունկ իմաստնություն կա:

X

Արթնացավ այնպիսի զգացողությամբ, ասես վաղուց քնած էր, բայց նայելով հնաոճ ժամացույցին՝ հասկացավ, որ ընդամենը ժամը քսաներեքն է: Նա մի փոքր էլ ննջեց, հետո ներքևից՝ այգուց, լսվեց ծանոթ կրծքային ձայնը.

*Դա միայն անհույս պատրանք էր ու հույս,
Որ գարնան պայծառ օրվա պես անցավ,
Բայց ալեկոծեց հայացք, բառ ու հույզ
Ու գողացավ իմ սիրտը, գողացավ:*

Հիմար երգը դեռ տարածված էր: Ամենուր երգում էին: Այն ավելի երկար կյանք ունեցավ, քան «Ատելության երգը»: Ջուլիան արթնացավ ձայնից, ձգվեց ու իջավ մահճակալից:

- Քաղցած եմ,- ասաց նա:- Արի էլի սուրճ եփենք: Գրողը տանի: Նավթավառը հանգել է, ջուրը սառել,- նա բարձրացրեց նավթավառն ու թափ տվեց:- Նավթ չկա:

- Գուցե ծերուկ Չարինգթոնից մի քիչ խնդրենք:

- Զարմանալի է, ախր լիքն էր: Հագնվեմ,- ավելացրեց նա:- Կարծես թե ցրտել է:

Ուինսթոնը նույնպես վեր կացավ ու հագնվեց: Անխոնջ ձայնը շարունակում էր երգել.

*Ասում են՝ կանցնի, կանցնի ամեն ինչ,
Ասում են՝ ողջը դեռ կմոռանաս,
Բայց ժպիպներն ու արցունքները հին
Հուզում են սրտիս լարերը բարակ:*

Գոտին ձգելով՝ նա մոտեցավ պատուհանին: Արևն իջել էր տների հետևը, բակը արդեն չէր լուսավորում: Սալաքարերը թաց էին, ասես հենց նոր էին լվացվել, և Ուինսթոնին թվաց՝ երկինքը նույնպես լվացել են, քանի որ թարմ ու պայծառ կապտին էր տալիս ծխնելույզների արանքում: Կինն առանց հոգնելու հետ ու առաջ էր քայլում՝ բացուխուփ անելով բերանը, մերթ երգելով, մերթ լռելով և էլի ու էլի տակաշորեր փռելով: Ուինսթոնը մտածեց՝ գուցե կինը լվացքով ապրուստ է հայթայթում կամ քսան-երեսուն թռռան հագուստ լվանում: Ջուլիան կանգնել էր կողքին. նրանք հիացմունքով անթարթ նայում էին բակի ամրակազմ կերպարին: Երբ Ուինսթոնը տեսավ կնոջն իր սովորական վիճակում (հաստ թևերը մեկնում էր պարանին՝ դուրս ցցելով զամբիկի հզոր հետույքը), առաջին անգամ մտածեց, որ նա գեղեցիկ է: Առաջ մտքով չէր անցել, որ հիսուն տարեկան կնոջ՝ հղիություններից ահռելի չափսերի հասած, կոշտացած, աշխատանքից կոպտացած ու հասուն շաղգամի պես այնպացած մարմինը կարող է գեղեցիկ լինել: Բայց այդպես էլ կա, ի վերջո, մտածեց նա, ինչո՞ւ ոչ: Գրանխոտ բեկորի պես ամուր, տձև մարմինը և թեփոտ կարմիր մաշկը նույնքան նման էին աղջկական մարմնի, որքան մասուրը՝ վարդի: Մի՞թե պտուղը ծաղկից վատն է:

- Գեղեցիկ է,- շնչաց Ուինսթոնը:
- Ազդրերի լայնքը երկու մետր կլինի,- արձագանքեց Ջուլիան:
- Նրա գեղեցկությունն այլ է,- ասաց Ուինսթոնը:

Նա մի թևով գրկել էր Ջուլիայի ճկուն իրանը: Աղջիկն ազդրից ծունկը սեղմվել էր Ուինսթոնի ազդրին: Նրանց մարմինները երբեք երեխա չեն բերի լույս աշխարհի: Նրանք դա երբեք չեն կարողանա: Գաղտնիքը կարող էին փոխանցել միմիայն խոսքով՝ մի բանականությունից մյուսին: Բակում երգող կինը բանականություն չունի. ունի միայն ամուր թևեր, ջերմ սիրտ և պտղաբեր արգանդ: Ուինսթոնը մտածում էր՝ քանի՞ երեխա է լույս աշխարհ բերել: Շատ հնարավոր է, որ տասնհինգ: Նա կարճ ժամանակ՝ գուցե մեկ տարի, ծաղկել է վայրի վարդի գեղեցկությամբ, հետո հանկարծ փքվել պարարտացված մրգի պես, ամրացել, կարմրել ու կոշտացել, ու գնաց՝ լվացք արա, տունը հավաքիր, կարկատան արա, եփիր-թափիր, հատակն ավլիր, փոշիներն առ, կարկատան արա, տունը հավաքիր, լվացք արա՝ նախ երեխաների համար, հետո՝ թռռների, և այդպես՝ երեսուն տարի շարունակ: Եվ այդ ամենից հետո դեռ երգում էր: Առեղծվածային ակնածանքը, որ զգում էր կնոջ հանդեպ, ինչ-որ կերպ միախառնված էր գունատ, անամպ երկնքի պատկերի հետ, որը ծխնելույզների ետևից սահում էր դեպի անսահման հեռուներ: Տարօրինակ էր մտածել, որ երկինքը նույնն է բոլորի համար՝ և՛ Եվրասիայում, և՛ Արևելասիայում, և՛ այստեղ: Եվ երկնքի տակ ապրող մարդիկ նույնպես նույնն էին՝ ամենուր, ամբողջ աշխարհում, հարյուրավոր, հազար միլիոնավոր մարդիկ նույնն են, ինչպես այս կինը. նրանք չգիտեն միմյանց գոյության մասին, բաժանված են իրարից ատելության ու ստի պատով, մինչդեռ գրեթե նույնն են, մարդիկ, որ երբեք չեն սովորել մտածել, բայց իրենց սրտում, որովայնի մեջ ու մկաններում մի ուժ են ամբարում, որը մի օր շրջելու է աշխարհը: Եթե հույս կա, ապա դա պրոլներն են: Առանց գիրքը մինչև վերջ կարդալու էլ նա գիտեր, որ այդպիսին է լինելու Գոլդաթայնի վերջին եզրահանգումը: Ապագան պրոլներին է: Կարո՞ղ է արդյոք վստահ լինել, որ երբ գա նրանց ժամանակը, իր՝ Ուինսթոն Սմիթի համար նրանց կառուցած աշխարհը նույնքան օտար չի լինի, որքան Կուսակցության աշխարհը: Այո, հնարավոր է,

որ այն ողջամտության աշխարհ լինի: Որտեղ կա հավասարություն, կարող է լինել և ողջամտություն: Վաղ թե ուշ դա կկատարվի, ուժը կվերածվի գիտակցության: Պրոլներն անմահ են, դրանում կարելի էր վստահ լինել՝ տեսնելով բակի անվեհեր կերպարը: Ի վերջո, նրանք կարթնանան: Իսկ մինչ դա կկատարվի, թեկուզև հազարավոր տարիներ անցնեն, նրանք կապրեն՝ ի հեճուկս ամեն ինչի՝ թռչունների պես մարմնից մարմին փոխանցելով կենսունակությունը, որը Կուսակցությունը չի բաշխում ու չի կարող սպանել:

- Հիշում ես,- հարցրեց Ուինսթոնը,- այն կեռնեխին, որ երգում էր մեզ համար առաջին օրը՝ անտառի եզրին:

- Նա մեզ համար չէր երգում,- ասաց Ջուլիան:- Երգում էր իր հաճույքի համար: Նույնիսկ դրա համար էլ չէ: Ուղղակի երգում էր:

Թռչունները երգում էին, պրոլները երգում էին, իսկ Կուսակցությունը չէր երգում: Ամբողջ աշխարհում՝ Լոնդոնում ու Նյու Յորքում, Աֆրիկայում ու Բրազիլիայում և սահմաններից այն կողմ՝ առեղծվածային, արգելված երկրներում, Փարիզի ու Բեռլինի փողոցներում, ռուսական անծայրածիր տափաստանի գյուղերում, Չինաստանի ու Ճապոնիայի շուկաներում, ամենուր նույն պինդ, անհաղթ կերպարն էր, որն ահռելի չափերի էր հասել ծննդաբերություններից ու դարավոր ծանր աշխատանքից, ու դեռ երգում է: Այս հզոր գրկից երբևէ կելնի բանական արարածների ցեղը: Դու մեռյալ ես, ապագան նրանցն է: Բայց կարող ես առնչվել այդ ապագային, եթե նույնքան արթուն պահես բանականությունդ, որքան նրանք՝ իրենց մարմինը, և փոխանցես գաղտնի ուսմունքն այն մասին, որ երկու անգամ երկու չորս է:

- Մենք մեռյալներ ենք,- ասաց նա:

- Մենք մեռյալներ ենք,- հնազանդ համաձայնեց Ջուլիան:

- Դուք մեռյալներ եք,- հնչեց երկաթյա ձայնը նրանց թիկունքից:

Նրանք հետ թռան իրարից: Ուինսթոնի աղիքներն ասես սառույց էին կտրել: Նա տեսավ՝ ինչպես մեծացան Ջուլիայի աչքերը: Դեմքը դեղնակաթնագույն էր: Շպարի բիծը, որ դեռ այտուսկերի

վրա էր, վառ ընդգծված էր, ասես կապ չուներ նրա տակ գտնվող մաշկի հետ:

- Դուք մեռյալներ եք,- կրկնեց երկաթե ձայնը:

- Նկարի ետևում էր,- շշնջաց Ջուլիան:

- Նկարի ետևում էր,- ասաց ձայնը:- Մնացեք տեղում: Ոչ մի քայլ՝ առանց հրամանի:

Ահա՛: Սկսվեց, ի վերջո սկսվեց: Նրանք ոչինչ չէին կարող անել, միայն կանգնել ու նայել իրար աչքերի: Փախչել ու փրկվել, հեռանալ տնից, քանի դեռ շատ ուշ չէ. նման միտք չծագեց: Անիմաստ էր չենթարկվել պատից լսվող երկաթե ձայնին: Լսվեց չրթոց, ասես փականը պտտվեց, ապա՝ փշրվող ապակու զնգոց: Նկարն ընկել էր հատակին՝ բացելով հեռէկրանը, որ ետևում էր:

- Հիմա նրանք տեսնում են մեզ,- ասաց Ջուլիան:

- Հիմա մենք տեսնում ենք ձեզ,- ասաց ձայնը:- Կանգնեք սենյակի կենտրոնում: Մեջք մեջքի: Ձեռքերը գլխի ետևում: Չդիպչեք իրար:

Նրանք իրար չէին դիպչում, բայց Ուինսթոնին թվում էր՝ զգում է Ջուլիայի մարմնի դողը: Կամ գուցե իր մարմինն էր դողում: Նա զսպում էր ատամների գրնգոցը, բայց ծնկները վերահսկել չէր կարող: Ներքևում՝ տան ներսից ու դրսից, կոշիկների դոփյուն լսվեց: Թվում էր՝ բակը լի է մարդկանցով: Ինչ-որ բան էին քարշ տալիս քարերի վրայով: Կնոջ երգը կտրուկ ընդհատվել էր: Երկար, թավալվող շառաչյուն լսվեց, ասես լվացքի տաշտակը քարշ էին տալիս բակով, ապա զայրագին բղավոցներ, որոնք ավարտվեցին ցավի ճիչով:

- Տունը շրջապատված է,- ասաց Ուինսթոնը:

- Տունը շրջապատված է,- ասաց ձայնը:

Նա լսեց Ջուլիայի ատամների կրճտոցը:

- Կարծում եմ՝ կարող ենք հրաժեշտ տալ իրար,- ասաց նա:

- Կարող եք հրաժեշտ տալ իրար,- ասաց ձայնը: Ապա խառնվեց մի լրիվ ուրիշ, բարձր ու մշակված ձայն, որը ծանոթ թվաց

Ուիւնսթոնին:– Ի դեպ, քանի որ անդրադարձել ենք այդ թեմային. «Ահա մոմը, որ լուսավորի քեզ դեպի անկողին, ահա կացինը, որ կտրի գլուխդ»:

Ուիւնսթոնի թիկունքում զնգոցով ինչ-որ բան թափվեց մահճակալին: Սանդուղքը պատուհանից ներս էին հրել, ու ծայրը լռվել էր շրջանակի մեջ: Ինչ-որ մեկը ներս էր խցկվում պատուհանից: Տան աստիճանների վրա բազմաթիվ բարձրացողների ոտնաձայներ լսվեցին: Սենյակը լեւի-լեցուն էր ամրակազմ տղամարդկանցով՝ սև համազգեստներով, պայտած կրունկներով երկարաճիտ կոշիկներով, ձեռքերին՝ մահակներ:

Ուիւնսթոնն այլևս չէր դողում: Նույնիսկ աչքերը համարյա հանդարտվել էին: Կարևոր էր միայն մի բան. լռել, լռել ու առիթ չտալ, որ խփեն: Նրա դիմաց կանգնեց բռնցքամարտիկի ծանր ծնոտով ու բերանի փոխարեն խոռոչով մեկը՝ մտազբաղ տարուբերելով մահակը բույթ մատով ու ցուցամատով: Ուիւնսթոնի ու նրա հայացքները հանդիպեցին: Մերկության զգացումն այն պատճառով, որ կանգնած եմ՝ ձեռքերդ գլխիդ ետևում, իսկ դեմքդ ու մարմինդ անպաշտպան եմ, գրեթե անտանելի էր: Տղամարդը դուրս ցցեց սպիտակ լեզվի ծայրը, լիզեց այն տեղը, որտեղ շուրթերը պիտի լինեն, հետո անցավ նրա կողքով: Նորից շրխկոց լսվեց: Ինչ-որ մեկը սեղանից վերցրել էր ապակե ճնշածաման ու բուխարուն խփելով՝ կտոր-կտոր արել:

Մարջանի կտորը՝ փոքրիկ վարդագույն մի բեկոր, որը տորթից պոկված շաքարի փշուր էր հիշեցնում, գլորվեց հատակի շորի վրա: «Ինչ փոքրի՛կ է,– մտածեց Ուիւնսթոնը,– ինչ փոքրի՛կ է եղել միշտ»: Թիկունքում ծանր շնչառություն լսվեց, հետո մի փափուկ բանի խփելու ձայն. ոտքով հարվածեցին Ուիւնսթոնի կոճին, ու նա գրեթե կորցրեց հավասարակշռությունը: Տղամարդկանցից մեկը բռունցքով խփել էր Ջուլիայի արևափայտակին, ու նա ծալվել էր գրպանի քանոնի պես: Թավալվում էր հատակին ու չէր կարողանում շունչ առնել: Ուիւնսթոնը չէր համարձակվում նույնիսկ մեկ միլիմետր թեքել գլուխը, բայց երբեմն Ջուլիայի գունատ, հևացող

դեմքը հայտնվում էր տեսադաշտում: Չնայած սարսափին՝ ասես սեփական մարմնով զգում էր նրա ցավը, մահացու ցավը, որը, սակայն, այնքան անտանելի չէր, որքան շնչառությունը վերականգնելու ջանքը: Նա գիտեր, թե ինչ է դա. սարսափելի, տանջող, անսահանջ ցավ, որին պետք չէ դիմանալ, որովհետև ամեն ինչ լցված է 'նույն ձիչով' օ՛ղ: Հետո տղամարդկանցից երկուսը բարձրացրին նրան ծնկներից և ուսերից ու պարկի նման դուրս տարան: Ուինսթոնը մի պահ տեսավ աղջկա կախ ընկած, դեղին ու աղավաղված դեմքը, փակ աչքերով, իսկ այտերին՝ շպարի բծեր. վերջին անգամ էր տեսնում նրան:

Քարացավ տեղում: Դեռ ոչ ոք նրան չէր հարվածել: Գլխում միանգամայն անտեղի մտքեր ծագեցին. պարոն Չարինգթոնին բռնել էն, թե՞ ոչ, ի՞նչ են արել բակի կնոջը: Նա նկատեց, որ շատ է ուզում միգել, և մի փոքր զարմացավ, որովհետև զուգարան էր գնացել ընդամենը երկու-երեք ժամ առաջ: Նկատեց, որ բուխարու վրա դրված ժամացույցը ցույց է տալիս ժամը ինը, այսինքն՝ քսանմեկ: Բայց կարծես դեռ շատ լույս էր: Մի՞թե օգոստոսյան երեկոյին ժամը քսանմեկին մոտ չի մթնում: Մտածում էր՝ մի՞թե ինքն ու Ջուլիան շփոթել են ժամը, քնել են ու կարծել, թե ժամը քսանն անց երեսուն է, մինչդեռ իրականում առավոտվա ութն անց երեսուն էր: Բայց այդ միտքը չզարգացրեց: Հետաքրքիր չէր:

Միջանցքում ավելի թեթև քայլեր լսվեցին: Սենյակ մտավ պարոն Չարինգթոնը: Սև համազգեստով տղամարդիկ անմիջապես սսկվեցին: Ինչ-որ բան էր փոխվել նաև պարոն Չարինգթոնի արտաքինի մեջ: Նա աչքը գցեց ապակե ճնշածձանի բեկորների վրա:

– Հավաքե՛ք ապակին, – կտրուկ ասաց նա:

Սևազգեստներից մեկը հնազանդ կռացավ: Լոնդոնյան առոգանությունն անհետացել էր. Ուինսթոնը հանկարծ հասկացավ, որ մի քանի րոպե առաջ հեռէկրանով հենց նրա ձայնն էր լսել: Պարոն Չարինգթոնի հագին դեռ իր հին թավշե պիջակն էր, բայց գրեթե սպիտակ մազերը սևացել էին: Եվ ակնոց էլ չունեիր: Նա սրաթափանց

Նայեց Ուինսթոնին, ասես ստուգելիս լիներ ինքնությունը, ու այլևս ուշադրություն չդարձրեց: Նրան դեռ կարելի էր ծանաչել, բայց արդեն Նույն մարդը չէր: Մարմինն ուղղվել էր ու կարծես խոշորացել: Դեմքն աննշան փոփոխությունների էր ենթարկվել, որոնք, սակայն, լրիվ փոխել էին Նրան: Սև հոնքերն այնքան էլ թավ չէին, կնճիռներն անհետացել էին, դիմագծերը փոխվել: Նույնիսկ քիթն ավելի կարճ էր թվում: Մոտ երեսունհինգ տարեկան տղամարդու զգոն, սառը դեմք էր: Ուինսթոնը մտածեց, որ կյանքում առաջին անգամ ամենայն որոշակիությամբ իր առջև Մտքի ոստիկանության աշխատակցի է տեսնում:

ՄԱՍ III

I

Նա չգիտեր՝ որտեղ է: Ենթադրում էր, որ Սիրո նախարարությունում, բայց հնարավոր չէր վստահ ասել: Բարձր առաստաղով, անպատուհան, փայլող, սպիտակ ձենապակուց պատերով խցում էր: Քողարկված լամպերն այն ողողում էին պաղ լույսով, լսվում էր ցածր, անդադար բզզոց, որը, Ուինսթոնի կարծիքով, ինչ-որ կապ ուներ օդափոխության հետ: Պատի ամբողջ երկայնքով նստարան թե պահարան էր, այնքան լայն, որ հնարավոր էր նստել այն ընդհատվում էր միայն դռնով, իսկ հեռավոր ծայրում՝ դռան դիմաց, զուգարանակոնք էր՝ առանց փայտե նստելատեղի: Չորս հեռկրան կար, յուրաքանչյուր պատին՝ մեկական:

Ստամոքսում բուրջ ցավ էր զգում: Դա սկսվել էր այն օրից, երբ նրան խցկել էին փակ վագոն ու տարել: Բայց նաև քաղցած էր. կրծող, անառողջ քաղց էր: Վերջին անգամ կերել էր երևի քսանչորս, գուցե երեսունվեց ժամ առաջ: Դեռ չգիտեր ու երևի երբեք էլ չիմանար՝ առավոտ էր, թե երեկո, երբ իրեն ձերբակալեցին: Ձերբակալվելուց ի վեր ոչինչ չէր կերել:

Հնարավորինս անշարժ նստել էր նեղ նստարանին՝ ձեռքերը ծնկներին խաչած: Արդեն սովորել էր անշարժ նստելուն: Եթե անսպասելի շարժումներ ես անում, հեռկրանից գոռում են վրադ: Բայց քաղցը հասունանում էր նրա մեջ: Ամենից շատ փափագում էր մի կտոր հաց: Գլխում միտք ծագեց, գուցե գրպանում մի քանի փշուր հա՞ց լինի: Նույնիսկ հնարավոր է՝ չորացած հացի մեծ կտոր (դրա մասին մտածեց, որովհետև ինչ-որ բան ժամանակ առ ժամանակ խուտուտ էր տալիս ոտքը): Ի վերջո, պարզելու գայթակղությունը հաղթահարեց վախը. նա ձեռքը տարավ գրպանը:

– Սմիթ, – ժպտ ձայնը հեռէկրանից:– 6079, Սմիթ Ու.: Խցում ձեռքերը հանել գրպաններից:

Նա նորից անշարժ նստեց՝ ձեռքերը ծնկներին խաչած: Մինչ այստեղ ընկնելը նրան ուրիշ տեղ էին տարել՝ սովորական բանտ թե պարեկային ժամանակավոր կալանախուց: Չգիտեր՝ ինչքան է մնացել այնտեղ. համենայնդեպս՝ մի քանի ժամ. ժամացույց չկար, ցերեկային լույս՝ նույնպես, ուստի դժվար էր իմանալ ժամը: Աղմկոտ, գարշահոտ վայր էր: Նրան տեղավորել էին նույնպիսի մի խցում, որտեղ հիմա էր, բայց՝ սարսափելի կեղտոտ և միշտ տասրտանսիննգ մարդկանցով լի: Մեծամասնությունը սովորական հանցագործներ էին, բայց նրանց թվում մի քանի քաղաքական բանտարկյալ կար: Նա անձայն նստել էր պատի տակ, որին հենվել էին կեղտոտ մարմինները. վախից ու ստամոքսի ցավից ուշադրություն չէր դարձնում խցակիցներին, սակայն նկատեց կուսակցական բանտարկյալների և մյուսների վարքի ապշեցուցիչ տարբերությունը: Կուսակցական բանտարկյալները միշտ լուռ էին ու սարսափահար, իսկ սովորական հանցագործները կարծես չէին վախենում որևէ մեկից: Նրանք վիրավորական խոսքերով էին դիմում պահնորդներին, կատաղի կռվում, երբ բռնագրավում էին իրենց իրերը, հատակին գրում էին անպարկեշտ բառեր, ուտում մաքսանենգ ուտելիք, որ հանում էին իրենց հագուստի առեղծվածային թաքստոցներից և նույնիսկ հոխորտում հեռէկրանի վրա, երբ փորձում էր կարգի հրավիրել իրենց: Մյուս կողմից՝ ոմանք կարծես թե լավ հարաբերությունների մեջ էին հսկիչների հետ, նրանց կոչում էին մականուններով և փորձում կեղծավորությամբ դռան անցքից սիգարետ ձեռք բերել: Վերակացուները նույնպես սովորական հանցագործներին որոշակի համբերատարությամբ էին վերաբերվում, նույնիսկ երբ ստիպված էին լինում ուժ կիրառել: Շատ էին խոսակցությունները տաժանապարտների ճամբարների մասին, ուր ուղարկվելու էր բանտարկյալների մեծամասնությունը: Ճամբարներում ամեն ինչ «կարգին է», մտածեց Ուինսթոնը, եթե ունես

1984

լավ ծանոթներ ու կապեր: Կաշառակերություն կար, հովանավորչություն և զանազան նենգաշորթություն, համասեռամոլություն և մարմնավաճառություն, նույնիսկ կարտոֆիլից թորած արգելված ալկոհոլ: Բարձր պաշտոնները վստահում էին միայն սովորական հանցագործներին, հատկապես ավազակներին ու մարդասպաններին, որոնք ազնվականությունն էին: Բոլոր կեղտոտ գործերն անում էին քաղբանտարկյալները:

Անընդհատ գալիս ու գնում էին տարբեր բանտարկյալներ. թմրավաճառներ, գողեր, ավազակներ, սպեկուլյանտներ, հարբեցողներ, մարմնավաճառներ: Հարբեցողներից ոմանք այնքան կատաղի էին, որ մյուս բանտարկյալները ստիպված միավորվում էին նրանց ծնշելու համար: Չորս պահնորդ չորս կողմից բռնած քարջ տալով ներս բերեցին մի հսկայական, խոշտանգված կնոջ մոտ վաթսուն տարեկան, մեծ, կախված կրծքով ու սպիտակ մազերի հաստ հյուսքերով, որ ցաքուցրիվ էին եղել կովշտոցի ընթացքում: Նա ոտքերով խփում ու գոռում էր: Պահնորդները հանեցին երկարաձիկ կոշիկները, որոնցով փորձում էր խփել իրենց, ու կնոջը շարտեցին Ուինսթոնի ծնկներին՝ գրեթե կոտրելով նրա ազդրուկները: Կինը նստեց ու ճանապարհեց նրանց՝ ճչալով. «Անիծյալ տականքներ»: Հետո, նկատելով, որ նստած է անհարթ տեղում, Ուինսթոնի ծնկներից սահեց նստարանին:

- Ների՛ր, սիրելի՛ն,- ասաց նա: - Չէի ուզում նստել վրադ, ստորներն ինձ այդտեղ գցեցին: Չգիտեն կնոջ հետ վարվելու ձևը, չէ՞,- նա լռեց, թփթփացրեց կրծքին ու գխտաց:- Ների՛ր,- ասաց նա:- Չէի ուզում:

Նա թեքվեց առաջ և առատ փսխեց հատակին:

- Հիմա ավելի լավ է,- ասաց նա՝ աչքերը փակ, պատին հենվելով:- Մի բան կասեմ՝ երբեք մեջդ չպահես: Հանիր դուրս, քանի փորումդ չի թթվել:

Նա ուշքի եկավ, շրջվեց, որ մի անգամ էլ նայի Ուինսթոնին, ու թվաց՝ անմիջապես համակրեց նրան: Խոշոր թևը գցեց Ուինսթոնի

ուսով ու նրան քաշեց իր կողմը՝ գարեջրի ու փսխուքի հոտ փչելով նրա դեմքին:

– Անունդ ի՞նչ է, սիրելիս,– հարցրեց:

– Ամիթ,– ասաց Ուինսթոնը:

– Ամիթ,– կրկնեց կինը:– Տե՛ս, է՛: Իմ ազգանունն էլ է Ամիթ,– ու հուզված ավելացրեց,– ես կարող էի քո մայրը լինել:

Գուցե, մտածեց Ուինսթոնը, նա իր մայրն է: Գրեթե նույն տարիքի էր և նույն կազմվածքով, և հնարավոր է՝ մարդն ինչ-որ կերպ փոխվում է քսանյոթ տարի տաժանապարտների ճամբարում անցկացնելուց հետո:

Ուրիշ ոչ ոք չէր խոսել նրա հետ: Զարմանալի էր, թե սովորական հանցագործներն ինչպես էին արհամարհում կուսակցական բանտարկյալներին: Անտարբեր արհամարհանքով նրանց կոչում էին «քաղցործիչներ»: Ձերբակալված կուսակցականները կարծես վախենում էին խոսել որևէ մեկի, իսկ ամենից առավել՝ իրար հետ: Միայն մեկ անգամ, երբ Կուսակցության երկու անդամի՝ երկու կնոջ, շատ մոտ էին նստեցրել նստարանին, նրանց հապճեպ շշնջոցի մեջ լսեց մի ինչ-որ «սենյակ հարյուր մեկի» մասին ու ոչինչ չհասկացավ:

Մոտ երկու-երեք ժամ էր անցել, որ նրան բերել էին այստեղ: Ստամոքսի բույթ ցավը չէր անցնում, երբեմն թուլանում էր, երբեմն ուժեղանում, ու մտքերն էլ համապատասխանաբար զարգանում ու կրճատվում էին: Երբ ցավն ուժեղանում էր, մտածում էր միայն ցավի և ուտելու ցանկության մասին: Երբ թուլանում էր, նրան համակում էր խուճապը: Լինում էին պահեր, երբ կանխատեսում էր ապագան, այնքան պարզ, որ սիրտն արագ բաբախում էր, իսկ շլչառույթունը կանգ էր առնում: Զգում էր մահակի հարվածն արմունկներին և պայտած կոշիկները՝ սրունքների վրա. տեսնում էր իրեն՝ հատակին թավալվելիս, փշրված ատամներով գութ աղերսելիս: Զուլիայի մասին գրեթե չէր մտածում: Չէր կարողանում միտքը կենտրոնացնել նրա վրա: Սիրում էր նրան ու չէր դավաճանի, բայց դա ընդամենը հանրահայտ փաստ էր, ինչպես իր իմացած

թվաբանության օրենքները: Սեր չէր տաճում Ջուլիայի հանդեպ և գրեթե չէր մտածում՝ ինչ է կատարվում նրա հետ: Ավելի հաճախ առկայծող հույսով մտածում էր Օ'Բրայենի մասին: Օ'Բրայենը գուցե գիտի, որ իրեն ձերբակալել են: Նա ասել էր, որ եղբայրությունը երբեք չի փորձում փրկել իր անդամներին: Բայց կար նաև ածելին. եթե կարողանան, ածելի կուղարկեն: Կանցնի հինգ վայրկյան, մինչև պահակը կշտապի խուց: Ածելին կկտրի այրող սառնությամբ, և նույնիսկ այն բռնաձ մատները մինչև ոսկոր կկտրվեն: Այս ամենը զգում էր իր հիվանդ մարմնով, որն ընկրկում էր անգամ ամենաթույլ ցավի դեպքում: Վստահ չէր, որ կօգտվի ածելուց, նույնիսկ եթե հնարավորություն ունենա: Ավելի բնական է ապրել այս պահի համար՝ ընդունելով կյանքի ևս տասը րոպեն, նույնիսկ հստակ գիտակցելով, որ այն ավարտվելու է տանջանքով:

Երբեմն փորձում էր հաշվել խցի պատերի ձենապակյա սալիկները: Թվում էր՝ հեշտ գործ է, բայց միշտ նույն կամ ուրիշ կետում կորցնում էր հաշիվը: Ավելի հաճախ մտածում էր՝ որտեղ է և օրվա որ ժամն է: Մի պահ վստահ էր, որ դրսում ցերեկ է, իսկ հաջորդ պահին՝ նույնչափ վստահ, որ անթափանց խավար է: Բնագոբար զգում էր, որ այստեղ լույսը երբեք չեն անջատում: Այստեղ խավար չկա. հիմա հասկանում էր, թե Օ'Բրայենն ինչու էր հասկացել ակնարկը: Սիրո նախարարությունում պատուհաններ չկան: Իր խուցը գուցե շենքի կենտրոնում է կամ արտաքին պատի դիմաց. գուցե տասը հարկ գետնի տակ կամ երեսուն հարկ վերև: Մտքով մի տեղից մյուսն էր տեղափոխվում ու փորձում էր մարմնի զգացողությամբ որոշել՝ օ՞ր է բարձրացել, թե՞ թաղվել գետնի տակ:

Դրսում համաչափ ոտնաձայներ լսվեցին: Պողպատե դուռն աղմուկով բացվեց: Մի երիտասարդ սպա՝ կոկիկ սև համազգեստով կերպար, որ ամբողջությամբ փայլում էր լաքապատ կաշվից, և որի գունատ, ուղիղ դիմագծերով դեմքն ասես մոմե դիմակ լիներ, վստահ ներս մտավ շեմից: Դրսի պահակներին ձեռքով նշան արեց, որ բերեն բանտարկյալին, որին ուղեկցում էին:

Բանաստեղծ Ամփլֆորթը քստքստացնելով մտավ խուց: Դուռը դարձյալ աղմուկով փակվեց:

Ամփլֆորթը մեկ-երկու անվստահ քայլ արեց մի կողմից մյուսը, ասես մտածում էր, թե ելքի մեկ այլ դուռ կա, ապա սկսեց հետուառաջ անել խցում: Դեռ չէր նկատել Ուինսթոնին: Անհանգիստ հայացքը հառել էր պատին, որ մեկ մետր բարձր էր Ուինսթոնի գլխից: Նա բորբիկ էր. մեծ, կեղտոտ մատները դուրս էին պրծել գուլպաների անցքերից: Մի քանի օր չէր սափրվել: Խոզանակ հիշեցնող մորուքը ծածկել էր դեմքը մինչև այտուկները՝ նրան խուլիզանի տեսք տալով, որ սազում էր մեծ, թուլացած մարմնին ու նյարդային շարժումներին:

Ուինսթոնը մի քիչ սթափվեց թմրությունից: Նա պետք է խոսի Ամփլֆորթի հետ՝ ի հեճուկս հեռեկրանի ձեռքի: Չի բացառվում, որ ածելին հենց Ամփլֆորթի մոտ է:

- Ամփլֆորթ,- ասաց նա:

Հեռեկրանից ձեռք չլսվեց: Ամփլֆորթը, փոքր-ինչ վախեցած, կանգ առավ: Աչքերը դանդաղ կենտրոնացան Ուինսթոնի վրա:

- Ա՛հ, Սմիթ,- ասաց նա:- Դուք է՛լ եք այստեղ:

- Իսկ դո՞ւք ինչի համար եք այստեղ:

- Ճիշտն ասած...- նա վախեցած նստեց Ուինսթոնի դիմացի նստարանին:- Միայն մեկ հանցանք կա, ճիշտ չէ՞,- ասաց նա:

- Ու դուք այն գործե՞լ եք:

- Երևում է՝ գործել եմ:

Նա ձեռքը դրեց ճակատին ու մի պահ սեղմեց քունքերը՝ ասես փորձելով ինչ-որ բան հիշել:

- Նման բաներ պատահում են,- անորոշ սկսեց նա:- Ես կարող եմ հիշել մի դեպք... հնարավոր է՝ դեպք: Անկասկած, անխտեմություն էր: Մենք տպագրության էինք պատրաստում Քիվիլինգի բանաստեղծությունների լիակատար ժողովածուն: Ես թույլ տվեցի, որ «Աստված» բառը մնա տողի վերջում: Չդիմացա,- գրեթե վրդովված ավելացրեց նա՝ բարձրացնելով գլուխը, որ նայի

Ուփնսթոնին:– Անհնար էր փոխել տողը: Հանգը «հարվածն» էր: Հասկանում եք, ամբողջ լեզվում «հարված» բառն ընդամենը տասներկու հանգ ունի: Օրեր շարունակ չարչարում էի ուղեղս: Ուրիշ ոչ մի հանգ չկար:

Նրա դեմքի արտահայտությունը փոխվեց: Անհանգստությունն անցավ, ու մի պահ գրեթե գոհ էր: Կեղտոտ ու խոզանականման մազերի միջով շողաց-անցավ ինտելեկտուալ ջերմություն, տառալերի ուրախություն, որն ինչ-որ անպետք փաստ էր հայտնաբերել:

– Ձեր մտքով երբևէ անցել է,– ասաց նա,– որ անգլիական պոեզիայի ամբողջ պատմությունը սահմանվում է այն փաստով, որ անգլերենը հանգեր չունի:

Ոչ, դա երբեք չէր անցել Ուփնսթոնի մտքով: Նույնիսկ որոշ հանգամանքներում չէր մտածել, թե դա շատ կարևոր է կամ հետաքրքիր:

– Գիտե՞ք՝ ժամը քանիսն է,– հարցրեց նա:

Ամփիֆորթը նորից վախեցավ:

– Ձեմ մտածել այդ մասին: Ինձ ձերբակալեցին երևի երկու-երեք օր առաջ,– հայացքը թափառում էր պատերի վրա, ասես հույս ուներ ինչ-որ տեղ պատուհան գտնել: – Այստեղ տարբերություն չկա գիշերվա ու ցերեկվա միջև: Ձեմ հասկանում՝ ինչպես կարելի է որոշել ժամանակը:

Նրանք ևս մի քանի րոպե կցկտուր խոսեցին, ապա առանց որևէ պատճառի հեռեկրանից հնչած ձնոցը հրամայեց լռել: Ուփնսթոնը նստեց՝ լուռ, ձեռքերը խաչած: Ամփիֆորթը շատ խոշոր էր ու չէր կարողանում տեղավորվել նստարանին, անհանգիստ այսուայնկողմ էր անում՝ նիհար թևերով գրկելով նախ մի ծունկը, հետո մյուսը: Հեռեկրանը հաչեց՝ անշարժ նստել: Ժամանակն անցնում էր: Քսան րոպե, մեկ ժամ. դժվար էր պարզել: Մի անգամ էլ դրսից երկարաճիտ կոշիկների դոփյուն լսվեց: Ուփնսթոնի աղիները կծկվեցին: Շուտով, շատ շուտով, գուցե հինգ րոպեից, գուցե հիմա. այդ դոփյունը նշանակելու էր, որ իր հերթն է:

Դուռը բացվեց: Պաղ դեմքով երիտասարդ սպան մտավ խուց: Ձեռքի փոփոխ շարժումով ցույց տվեց Ամփիֆորթին:

– Սենյակ 101,– ասաց նա:

Ամփոփորթն անփոյթ թայլերով անցավ պահակների միջով, դեմքը փոքր-ինչ հուզված էր ու շփոթված:

Երևում է՝ շատ ժամանակ էր անցել: Ուինսթոնի ստամոքսի ցավը նորից հայտնվել էր: Միտքը շարունակ պտտվում էր նույն թեմայի շուրջ, ինչպես գնդակը նորից ու նորից ընկնում է նույն անցքի մեջ: Ընդամենը վեց բանի մասին էր մտածում: Ստամոքսի ցավ, հացի կտոր, արյուն ու ճեղքներ, Օ'Բրայեն, Ջուլիա, ածելի: Աղիքները դարձյալ ջղաձգվեցին. ծանր կոշիկների դոփյունը մոտենում էր: Երբ դուռը բացվեց, օդի ալիքն իր հետ բերեց սառը քրտինքի ուժեղ հոտ: Փարսոնսը մտավ խուց: Հագին բաց կանաչ կարճ տաբատ ու մարզական վերնաշապիկ էր:

Այս անգամ Ուինսթոնը ինքնամոռացության աստիճանի վախեցավ:

– Դուք, այստե՛ղ,– ասաց նա:

Փարսոնսը Ուինսթոնի վրա մի հայացք նետեց, որի մեջ ոչ հետաքրքրություն կար, ոչ զարմանք. միայն թշվառություն: Նա սկսեց նյարդային հետուառաջ անել. ականհայտ էր, որ չէր կարող հանգիստ նստել: Ամեն անգամ, երբ ուղղում էր թմբիկ ծնկները, երևում էր, որ դողում են: Ջարմանքից չռված աչքերով անթարթ նայում էր ինչ-որ հեռավոր կետի:

– Ինչի՞ համար եք այստեղ,– հարցրեց Ուինսթոնը:

– Մտքի հանցագործության,– ասաց Փարսոնսը՝ գրեթե հեկեկալով: Ձայնից միանգամից երևաց սեփական մեղքի լիակատար ընդունումն ու մի տեսակ անվստահ սարսափ. մի՞թե այդ բանն ինչ-որ կապ ունի իր հետ: Նա կանգնեց Ուինսթոնի դիմաց ու ոգևորված դիմեց նրան.

– Ինձ չեն գնդակահարի, ճի՛շտ է, Սմիթ: Եթե իրականում ոչինչ չես արել, չեն գնդակահարում. գնդակահարում են միայն մտքերի համար, որոնք հնարավոր չէ զսպել: Գիտեմ, որ այնտեղ կլսեն, կհասկանան: Դրանում համոզված եմ: Նրանք գիտեն՝ ինչքան ջանք եմ թափել, ճի՛շտ է: Դուք հո գիտեք, թե ինչ մարդ եմ: Ի դեպ, վատ

1984

մարդ չեմ: Անշուշտ, խելացի չեմ, բայց խորաթափանց եմ: Ջանք չեմ խնայել Կուսակցության համար, այնպես չէ՞: Ի՞նչ եք կարծում, հինգ տարով կազատագրվե՞մ: Թեկուզ տասը տարով: Ինձ նման մարդը կարող է մեծ օգուտ բերել աշխատանքային գաղութին: Ինձ չեն սպանի միայն մեկ անգամ սխալվելու համար:

– Մեղավոր եք,– հարցրեց Ուինսթոնը:

– Իհարկե մեղավոր եմ,– ճշաց Փարսոնսը՝ ստորաքարշ հայացք նետելով հեռէկրանին:– Մի՞թե Կուսակցությունը կձերբակալի անմեղ մարդու, ի՞նչ եք կարծում,– նրա գորտանման դեմքը խաղաղվեց և նույնիսկ փոքր-ինչ սրբանման արտահայտություն ստացավ:– Մտահանցագործությունը սարսափելի բան է, ընկե՛ր,– խրատական տոնով ասաց նա:– Նենգ է: Վրա է հասնում առանց քո իմացության: Գիտե՞ք՝ ինչպես վրա հասավ: Քնի մեջ: Այո՛, փաստ է: Աշխատում էի, ամեն ջանք թափում էի՝ չիմանալով, որ իմ գլխում վատ մտքեր կան: Հետո սկսեցի խոսել քնիս մեջ: Գիտե՞ք՝ նրանք ինչ են լսել,– նա իջեցրեց ձայնը, ասես բժշկական պատճառներով ստիպված էր տհաճ բան ասել:– «Կորչի Մեծ եղբայրը»: Ահա թե ինչ եմ ասել: Երևում է՝ մի քանի անգամ: Մեր մեջ ասած՝ ուրախ եմ, որ ինձ բերեցին այստեղ, քանի դեռ շատ հեռուն չէի գնացել: Գիտե՞ք՝ ինչ կասեմ նրանց, երբ կանգնեմ դատարանի առաջ: Կասեմ՝ շնորհակալություն, շնորհակալ եմ, որ ինձ փրկեցիք ճիշտ ժամանակին:

– Ո՛վ մատնեց ձեզ,– հարցրեց Ուինսթոնը:

– Փոքր աղջիկս,– թախծոտ հպարտությամբ ասաց Փարսոնսը:– Բանալու անցքից գաղտնի լսում էր: Լսել էր, թե ինչ եմ ասում, ու հենց հաջորդ օրը ծլկել պարեկների մոտ: Խելացի քայլ է յոթ տարեկանի համար, ճիշտ չէ՞: Քեն չեմ պահում դրա համար: Հակառակը՝ հպարտանում եմ նրանով: Դրանից երևում է, որ ճիշտ ոգով եմ դաստիարակել նրան:

Նա ևս մի քանի անգամ նյարդային նստեց ու վեր կացավ՝ բաղձալի հայացք գցելով զուգարանակոնքին: Հետո հանկարծ իջեցրեց կարճ տաբատը:

- Ներող եղեք, ծերո՛ւկ,- ասաց նա:- Չեմ դիմանում: Հուզմունքից է: Նա մեծ հետույքը թմփացրեց զուգարանակոնքին: Ուինսթոնը ձեռքերով ծածկեց երեսը:

- Սմի՛թ,- ճչաց հեռէկրանը:- 6079, Սմիթ Ու.: Բացե՛ք ձեր դեմքը: Խցերում դեմքը չփակե՛լ:

Ուինսթոնը բացեց դեմքը: Փարսոնսը աղմկոտ ու առատ օգտվեց զուգարանակոնքից: Հետո պարզվեց, որ կափարիչն անսարք է, և ժամեր անց խցում գարշահոտություն էր:

Փարսոնսին տարան: Առեղծվածային կերպով գալիս ու գնում էին բազմաթիվ բանտարկյալներ: Մեկին՝ մի կնոջ, հանձնարարվեց անցնել «Սենյակ 101», և Ուինսթոնը նկատեց, թե նա ինչպես կուչ եկավ ու գունատվեց՝ լսելով այդ խոսքերը: Եթե իրեն բերել էին առավոտյան, ապա հիմա ցերեկ էր, իսկ եթե բերել էին ցերեկը, ապա կեսգիշեր էր: Խցում վեց բանտարկյալ կար՝ տղամարդ ու կին: Բոլորն անշարժ նստած էին: Ուինսթոնի դիմաց նստած էր մի մարդ՝ առանց կզակի ու մեծ ատամներով. շատ նման էր մեծ անվնաս կրծողի: Նրա գեր, բծավոր այտերը պարկանման էին ներքևի մասում, ու այնպիսի տպավորություն էր, որ այնտեղ սննդի փոքրիկ պահոցներ կան: Նրա բաց մոխրագույն աչքերը երկչոտ թափառում էին մի մարդուց մյուսը և հանդիպելով որևէ մեկին՝ արագ փախչում:

Դուռը բացվեց, ու ներս բերվեց ևս մի բանտարկյալ, որի տեսքից Ուինսթոնի մարմնով սարսուռ անցավ: Սովորական, տհաճ արտաքինով մարդ էր, գուցե ինժեներ կամ տեխնիկ: Բայց ամենասարսափելին նրա դեմքի հյուծվածությունն էր: Ասես գանգ լիներ: Նիհարության պատճառով բերանն ու աչքերը անհամաչափորեն մեծ էին երևում, իսկ աչքերն ասես լի էին ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի հանդեպ անսանձ ատելությամբ:

Տղամարդը նստեց Ուինսթոնից քիչ հեռու: Ուինսթոնն այլևս չէր նայում նրան, բայց տանջված, գանգանման դեմքն այնքան վառ էր նրա ուղեղում, ասես աչքի առաջ լիներ: Հանկարծ հասկացավ՝

բանն ինչ է: Տղամարդը մեռնում էր քաղցից: Նույն միտքը գրեթե միաժամանակ ծագեց նյունների մեջ: Նստարանով թույլ շարժում անցավ: Անկզակ մարդն աչքերը հառում էր գանգանման դեմքով մարդու վրա, հետո մեղավոր շրջում հայացքը, ապա նորից նայում անդիմադրելի գայթակղությամբ: Հետո սկսեց անհանգիստ շարժվել տեղում: Ի վերջո ոտքի կանգնեց, անփույթ օրորվելով քայլեց խցում, ձեռքը մտցրեց տաբատի գրպանն ու հացի մի կեղտոտ կտոր շփոթված մեկնեց գանգանման դեմքով տղամարդուն:

Հեռէկրանից մոլեգին, խլացնող գոռոց լսվեց: Անկզակ մարդը վեր թռավ: Գանգանման դեմքով մարդը ցնցվեց ամբողջ մարմնով՝ ասես ողջ աշխարհին ցուցադրելով, որ հրաժարվել է նվերից:

- Բանսթեղ,- գոռաց ձայնը:- 2713, Բանսթեղ Ջեյ: Գցե՛ք հացի կտորը:

Անկզակ մարդը հացի կտորը զգեց հատակին:

- Կանգնել տեղո՛ւմ,- հրամայեց ձայնը:- Դեմքով դեպի դո՛ւռը: Չշարժվե՛լ:

Անկզակ մարդը ենթարկվեց: Նրա մեծ, պարկանման այտերն անվերահսկելի դողում էին: Դուռը կրնկի վրա բացվեց: Երբ երիտասարդ սպան ներս մտավ ու մի կողմ կանգնեց, թիկունքից հայտնվեց կարծահասակ անդակազմ մի վերակացու՝ հսկայական թևերով և ուներով: Նա կանգնեց անկզակ մարդու դիմաց, ապա, սպայի ազդանշանով, մարմնի ամբողջ ծանրությամբ մի սարսափելի հարված հասցրեց ուղիղ բերանին: Հարվածի ուժը բավական էր նրան հատակին շարտելու համար: Մարմինը թռավ դեպի դիմացի պատն ու ընկավ զուգարանակոնքի մոտ: Մի պահ ապշած ընկած էր, իսկ բերանից ու քթից մուգ արյուն էր ծորում: Իրենից անկախ՝ մարմնից թույլ հեծկտոց թե ճռռոց լսվեց: Հետո շրջվեց ու երերալով հենվեց ձեռքերին ու ծնկներին: Բացի արյունից ու թքից, բերանից ընկան նաև դնովի ատամների երկու կեսերը:

Բանտարկյալներն անշարժ նստած էին՝ ձեռքերը ծնկներին խաչած: Անկզակ մարդը մագլցեց իր տեղը: Դեմքի մի կողմը մզանում

էր: Բերանն ուռել էր ու վերածվել տձև, բալագոյն զանգվածի, որի մեջտեղում անցք կար:

Ժամանակ առ ժամանակ մի քիչ արյուն էր կաթում կոմբինեզոնի կրծքին: Մոխրագոյն աչքերը դեռ անցնում էին մի դեմքից մյուսը՝ ավելի մեղավոր արտահայտությամբ, ասես փորձում էին պարզել՝ ուրիշներն ինչքա՞ն են արհամարհում իրեն ստորացման համար:

Դուռը բացվեց: Սպան ձեռքի թեթև շարժումով ցույց տվեց գանգանման դեմքով մարդուն:

– Սենյակ 101,– ասաց նա:

Ուինսթոնը կողքից ծանր շնչառություն ու հուզմունք զգաց: Տղամարդը, ձեռքերն աղերսագին կրծքին դրած, ծնկի էր եկել հատակին:

– Ընկեր: Սպա՛,– գոռաց նա:– Մի՛ տարեք այնտեղ: Մի՞թե արդեն ամեն ինչ չեմ ասել: Ուրիշ ի՞նչ եք ուզում իմանալ: Ես ամեն ինչ կխոստովանեմ, ամեն՞ ինչ: Ասացեք, ու անմիջապես կխոստովանեմ: Գրեք, ու ես կստորագրեմ... ցանկացած բան: Միայն թե ոչ Սենյակ 101-ը:

– Սենյակ 101,– կրկնեց սպան:

Տղամարդու դեմքը, որն արդեն իսկ շատ գունատ էր, մի գույն առավ, որն անհավանական թվաց Ուինսթոնին: Դա հաստատ, անկասկած կանաչի երանգ էր:

– Ինչ ուզում եք արե՛ք, ինչ ուզում եք արե՛ք,– ճչաց մարդը:– Մի քանի շաբաթ է՝ չեք կերակրում: Ավարտին հասցրեք գործը, թողեք, որ մեռնեմ: Գնդակահարեք: Կախաղան հանեք: Դատապարտեք քսանհինգ տարվա ազատազրկման: Ուրիշ ո՞ւմ մատնեմ: Միայն ասացե՛ք՝ ում, ու կասեմ՝ ինչ ուզում եք: Ինձ չի հետաքրքրում՝ ով է, կամ ինչպես կվարվեք նրա հետ: Ես ունեմ կին ու երեք երեխա: Ավագը վեց տարեկան էլ չկա: Կարող եք բոլորին էլ բռնել, իմ աչքի առաջ կտրել կոկորդները, իսկ ես կկանգնեմ ու կնայեմ: Միայն թե ոչ Սենյակ 101-ը:

– Սենյակ 101,– ասաց սպան:

Տղամարդը մոլեգնած նայեց մյուս բանտարկյալներին, ասես մտադրվել էր իր փոխարեն ուրիշ գոհ գտնել: Աչքերը կենտրոնացան անկզակ մարդու ջնջխված դեմքին: Պարզեց նիհար թևը:

- Ոչ թե ինձ պիտի բռնեք, այլ նրան,- գոռաց նա: - Չլսեցիք, թե ինչ ասաց, երբ խփեցիք դեմքին: Ինձ հնարավորություն տվեք, ու կասեմ բառ առ բառ: Ոչ թե ես, այլ նա է Կուսակցության դեմ:- Պահնորդներն առաջ եկան: Տղամարդու ծայնը վերածվեց ճղղոցի:- Դուք չլսեցիք նրան,- կրկնեց:- Հեռէկրանը լավ չէր աշխատում: Ձեզ նա՛ է պետք: Նրա՛ն տարեք, ոչ թե ինձ:

Երկու պնդակազմ վերակացունները կանգնել էին, որ բռնեն թևերից: Բայց հենց այդ պահին նա ընկավ խցի հատակին ու բռնեց նստարանի երկաթե ոտքից: Կենդանու պես անխոս ոռնաց: Պահակները փորձեցին պոկել, բայց ապշեցուցիչ ուժով էր կառչել: Մոտ քսան վայրկյան փորձում էին պոկել նրան: Բանտարկյալները լուռ նստած էին, ձեռքերը խաչած ծնկներին, և ուղիղ նայում էին իրենց դիմաց: Ոռնոցը դադարեց. տղամարդու շունչը հերիքում էր միայն կառչելուն: Հետո ուրիշ աղաղակ լսվեց: Պահակը կոշիկի հարվածով ջարդել էր ձեռքի մատները: Նրան քարշ տալով ոտքի կանգնեցրին:

- Սենյակ 101,- ասաց սպան:

Տղամարդուն դուրս տարան. քայլում էր երեքալով, գլխահակ, տորոբելով վնասված ձեռքը. նա այլևս չէր դիմադրում:

Երկար ժամանակ անցավ: Եթե գանգամանան դեմքով մարդուն տարել էին կեսգիշերին, ապա հիմա առավոտ էր. եթե տարել էին առավոտյան, ապա հիմա ցերեկ էր: Ուինսթոնը մենակ էր, արդեն մի քանի ժամ մենակ էր: Նեղ նստարանին նստելուց այնպիսի ցավ էր սկսվել, որ հաճախ վեր էր կենում ու քայլում, իսկ հեռէկրանը չէր կշտամբում: Հացի կտորն այնտեղ էր, ուր գցել էր անկզակ մարդը: Սկզբում մեծ ջանք էր պահանջվում, որ չնայի հացին, բայց հետո քաղցին փոխարինեց ծարավը: Բերանը մածուցիկ էր ու գարշահոտ: Բզզոցից ու անփոփոխ սպիտակ լույսից գլխում անորոշություն էր,

դատարկության զգացում: Վեր էր կենում, որովհետև ոսկորների ցավն այլևս անտանելի էր, իսկ հետո գրեթե միանգամից դարձյալ նստում էր, որովհետև գլուխը պտտվում էր, ու վստահ չէր՝ արդյոք կկարողանա՞ կանգնել տեղում: Երբ հաջողվում էր վերահսկել ֆիզիկական զգացողությունները, սարսափը վերադառնում էր: Երբեմն մարող հոյսով մտածում էր Օ'Բրայենի և ածելու մասին: Հնարավոր է, որ ածելին իրեն հասնի ուտելիքի մեջ, եթե երբևէ կերակրեն: Ավելի աղոտ մտածում էր Ջուլիայի մասին: Ինչ-որ տեղ նա տառապում էր, գուցե իրենից էլ շատ: Գուցե հիմա ծչում է ցավից: «Եթե կարողանայի փրկել Ջուլիային՝ կրկնապատկելով իմ ցավը, կանեի՞», - մտածում էր նա, - այո, կանեի»: Բայց սա ընդամենը մտավոր որոշում էր, և կայացվեց, որովհետև ինքն այդպես էր ճիշտ համարում: Բայց ոչինչ չէր զգում: Այստեղ ոչինչ չես կարող զգալ, բացի ցավից ու ցավի կանխազգացումից: Բացի այդ, հնարավոր է տառապել ցավից և այդ ընթացքում ցավն ուժեղացնելու որևէ պատճառ փնտրել: Բայց այդ հարցը դեռ պատասխան չուներ:

Դարձյալ ոտնաձայներ լսվեցին: Դուռը բացվեց: Ներս եկավ Օ'Բրայենը:

Ուինսթոնը ոտքի կանգնեց: Նա այնպես էր ապշել իր տեսածից, որ կորցրել էր վախը: Շատ տարիների ընթացքում առաջին անգամ մոռացել էր հեռէկրանի ներկայության մասին:

- Ձեզ է՞լ են բռնել,- գոռաց նա:

- Ինձ վաղուց են բռնել,- ասաց Օ'Բրայենը մեղմ, գրեթե կարեկցող հեզնանքով: Նա մի կողմ քաշվեց: Թիկունքից հայտնվեց թիկնեղ պահնորդը՝ ձեռքին երկար, սև մահակ:

- Դուք գիտեիք, Ուինսթոն,- ասաց Օ'Բրայենը:- Մի խաբեք ձեզ: Գիտեիք... միշտ էլ գիտեիք:

Այո, հիմա հասկանում էր, որ միշտ գիտեր: Բայց մտածելու ժամանակ չկար: Միայն նայում էր պահակի ձեռքի մահակին: Այն կարող էր հարվածել ցանկացած տեղ՝ գլխին, ականջի ծայրին, ուսին, արմունկին...

1984

Արմունկին: Ցավից գրեթե կաթվածահար՝ նա ծնկի էր եկել՝ մյուս ձեռքով բռնելով վնասված արմունկը: Ամեն ինչ վառվում էր դեղին լույսով: Անհավատալի էր, անհավատալի էր, որ մի հարվածը կարող է այդպիսի ցավ պատճառել: Դեղին լույսն անցավ, և նա տեսավ իրեն նայող երկու մարդու: Պահնորդը ծիծաղում էր նրա աղավաղված տեսքի վրա: Ամեն դեպքում, մի բան պարզ էր: Երբեք և ոչ մի պատճառով չես ցանկանում, որ ցավն ուժեղանա: Ցավից միայն մի բան ես ուզում. որ դադարի: Աշխարհում չկա ավելի վատ բան, քան ֆիզիկական ցավը: «Ցավի առաջ չկան հերոսներ, չկան հերոսներ», – շարունակ մտածում էր նա՝ հատակին կուչ եկած և անօգուտ սեղմելով վնասված ձախ թևը:

II

Պառկած էր մի բանի վրա, որ նման էր ծալովի մահճակալի, բայց հատակից ավելի բարձր, և այնպես էր ամրացված, որ նա չէր կարող շարժվել: Սովորականից ուժեղ լույսն ընկել էր դեմքին: Օ՛րբայենը կանգնել էր կողքին և ուշադիր նայում էր: Նրա մյուս կողմում սպիտակ վերարկուով մարդ էր՝ ձեռքին ենթամաշկային ներարկիչ:

Նույնիսկ աչքերը բացելուց հետո աստիճանաբար էր ընկալում շրջապատը: Այնպիսի տպավորություն էր, ասես այդ սենյակ էր լողացել լրիվ այլ աշխարհից՝ ստորջրյա աշխարհից, որ ներքևում էր: Չգիտեր՝ ինչքան ժամանակ էր այդտեղ: Ձերբակալվելուց ի վեր չէր տեսել ոչ խավար, ոչ լույս: Բացի այդ, հիշողությունները միշտ ընդհատվում էին: Երբեմն գիտակցությունը, նույնիսկ այն, որ պահպանվում է քնի մեջ, անջատվում էր, ապա հայտնվում դատարկ ընդմիջումից հետո: Բայց անհնար էր պարզել՝ այդ ընդմիջումները տևել են օրե՞ր, շաբաթնե՞ր, թե՞ ընդամենը վայրկյաններ:

Արմունկին ստացած առաջին հարվածից սկսվել էր մղձավանջը: Ավելի ուշ պետք է հասկանար. այն, ինչ եղավ այն ժամանակ,

ընդամենը նախապատրաստական, սովորական հարցաքննություն էր, որին ենթարկվում էին գրեթե բոլոր բանտարկյալները: Բոլորը պարտավոր էին խոստովանել հանցագործությունների մի երկար շարք՝ լրտեսություն, նենգաշորթություն և նման բաներ: Խոստովանությունը ձևականություն էր, իսկ տանջանքը՝ իրական: Չէր կարող հիշել իրեն քանի անգամ են ծեծել և ինչ տևողությամբ: Նրանով միշտ զբաղվում էր միաժամանակ հինգ-վեց մարդ՝ սև համազգեստներով: Երբեմն խփում էին բռունցքներով, երբեմն՝ մահակներով, երբեմն՝ պողպատե ձողերով, երբեմն էլ՝ երկարաձիտ կոշիկներով: Լինում էին պահեր, երբ նա գլորվում էր հատակին, առանց ամոթի, կենդանու պես, ողջ մարմնով կուչ էր գալիս՝ ոտքերի հարվածներից խուսափելու անվերջ, անհույս փորձեր անելով, բայց ավելի ու ավելի շատ հարվածներ ստանալով կողերին, փորին, արմունկներին, սրունքներին, աճուկներին, ամորձիներին, ողնաշարի հիմքի ոսկորներին: Լինում էին պահեր, երբ դա տևում ու տևում էր այնքան, որ նրան թվում էր՝ ամենադաժանը, չարն ու աններելին ոչ թե այն է, որ պահակները շարունակում են ծեծել իրեն, այլ որ իրեն չի հաջողվում կորցնել գիտակցությունը: Լինում էին պահեր, երբ նյարդերը տեղի էին տալիս, ու նա սկսում էր գութ աղերսել նույնիսկ ծեծը վերսկսվելուց առաջ, երբ միայն հարվածի պատրաստվող բռունցքի տեսքը բավական էր իրական ու երևակայական հանցագործությունների խոստովանության հեղեղ տեղալու համար: Լինում էին նաև պահեր, երբ վճռում էր ոչինչ չխոստովանել, և յուրաքանչյուր բառ ուժով ու ցավի հևցնելով էին դուրս քաշում նրանից. պատահում էր, որ երբ փոխգիջման գնալու թույլ փորձ էր անում, ասում էր ինքն իրեն. «Կխոստովանեմ, բայց ոչ հիմա: Պետք է դիմանամ, քանի դեռ ցավն անտանելի չէ: Եվս երեք հարված ոտքով, ևս երկու հարված, հետո կասեմ՝ ինչ ուզում են»: Երբեմն նրան այնքան էին ծեծում, որ հազիվ էր ոտքի կանգնում, հետո կարտոֆիլի պարկի նման նետում էին խցի քարե հատակին, մի քանի ժամ թողնում, որ վերականգնի ուժերը, ապա տանում

1984

ու նորից ծեծում: Լինում էին նաև ուժերի վերականգնման ավելի տևական շրջաններ: Դրանք աղոտ էր հիշում, քանի որ հիմնականում քնած կամ ընդարմացած վիճակում էր լինում: Հիշում էր խուցը՝ պատին ամրացված դարակ հիշեցնող ծավիղ մահճակալով ու թիթեղյա վացարանով, հիշում էր ուտելիքը՝ տաք ապուր, հաց, երբեմն սուրճ: Հիշում էր նոթոտ սափրիչին, որը գալիս էր իր կզակը քերելու և մազերը կտրելու, ինչպես և գործարար, ոչ համակրելի տեսքով տղամարդկանց՝ սպիտակ վերարկուներով, որոնք չափում էին իր զարկերակը, ստուգում ռեֆլեքսները, բարձրացնում կոպերը, կոպիտ մատներով ստուգում՝ կոտրված ոսկորներ ունի՞, և քնաբեր ներարկում թևի մեջ:

Ծեծում էին ավելի հազվադեպ. ծեծը գլխավորապես սպառնալիք էր դարձել, սարսափ, որ նրա հանդեպ կարող էր կիրառվել ցանկացած պահի, երբ պատասխանը գոհացնող չլիներ: Հիմա նրան հարցաքննում էին ոչ թե սև համազգեստներով սրիկաներ, այլ կուսակցական ինտելեկտուալներ՝ թմբիկ տղամարդիկ՝ արագ շարժումներով ու փայլող ակնոցներով. նրանք Ուիսթոնի հետ աշխատում էին հերթափոխով. երբեմն դա տևում էր (այդպես կարծում էր, բայց չէր կարող վստահ լինել) տասը-տասներկու ժամ: Այս մյուս հարցաքննողները ջանում էին, որ նա մշտապես թույլ ցավ զգա, բայց նրանց գլխավոր մեթոդը ցավը չէր: Ապտակում էին նրան, ձգում ականջները, քաշում մազերը, ստիպում կանգնել մեկ ոտքի վրա, արգելում էին միզել, դեմքին շլացնող լույս էին պահում՝ այնքան, մինչև աչքերից ջուր էր հոսում, բայց այդ ամենի իմաստն ընդամենը նրան նվաստացնելն էր և վիճելու ու բանական մտածելու ունակության ոչնչացումը: Նրանց իրական զենքն անգույթ, անընդհատ, ժամեր ու ժամեր տևող հարցաքննությունն էր. նրան խժժում էին, նրա համար ծուղակներ էին լարում, նենգափոխում նրա ասած ամեն մի խոսքը, ամեն քայլափոխի ապացուցում, որ ստում է ու հակասում ինքն իրեն, այնքան, մինչև սկսում էր արտասվել թե՛ ամոթից, թե՛ նյարդային ուժասպառությունից: Երբեմն մեկ հարցաքննության

ընթացքում հինգ-վեց անգամ արտասվում էր: Հիմնականում նրանք վիրավորական խոսքերով էին դիմում, և ամեն անգամ, երբ հապաղում էր, սպառնում էին, որ դարձյալ կհանձնեն պահնորդների ձեռքը. բայց երբեմն նրանք հանկարծ փոխում էին խոսելաոճը, նրան անվանում էին ընկեր, կոչ անում Անգուցի և Մեծ եղբոր անունից ու տխրությամբ հարցնում՝ արդյոք նույնիսկ հիմա՞ բավարար հավատարմություն չունի Կուսակցության հանդեպ և չի ցանկանում զղջալ իր գործած չարիքի համար: Երբ ժամեր տևած հարցաքննություններից հետո նյարդերը տեղի էին տալիս, նույնիսկ նման կոչը նրան ստիպում էր արտասվել: Ի վերջո, փնթփնթան ճայները նրան ավելի հիմնովին էին ոչնչացնում, քան պահնորդների կոշիկներն ու բռունցքները: Նա վերածվել էր բերանի, որ խոսում էր, ձեռքի, որ ստորագրում էր այն ամենը, ինչ պահանջում էին իրենից: Նրա միակ մտահոգությունն էր պարզել, թե ինչ խոստովանություն են պահանջում, հետո արագ խոստովանել՝ սպասելով նոր ծեծի: Նա նշանավոր կուսակցականների սպանություն խոստովանեց, ընդդիմադիր ազդագրերի տարածում, հանրային ֆոնդերի յուրացում, ռազմական գաղտնիքների վաճառք, ամեն տեսակի վնասարարություն: Խոստովանեց, որ դեռևս 1968 թվականից աշխատել է որպես արևելասահական կառավարության վճարվող լրտես: Խոստովանեց, որ հավատացյալ է, կապիտալիզմի հետևորդ, և որ այլասերված է: Խոստովանեց, որ սպանել է իր կնոջը, թեև գիտեր, և հարցաքննողներն էլ չէին կարող չհիմանալ, որ կինը դեռ ողջ է: Խոստովանեց, որ տարիներ շարունակ անձամբ կապ է ունեցել Գոլդսթայնի հետ և եղել ընդհատակյա կազմակերպության անդամ, որի անդամ են նաև իր գրեթե բոլոր ծանոթները: Ավելի հեշտ էր խոստովանել ամեն ինչ և հանցակից դարձնել բոլորին: Բացի այդ, ինչ-որ չափով այդ ամենը ծիջտ էր: Նա իսկապես եղել էր Կուսակցության թշնամի, իսկ Կուսակցության համար տարբերություն չկար մտքի և արարքի միջև:

Կային նաև այլ հիշողություններ: Դրանք իրար հետ կապ չունեին, ինչպես սևով շրջանակված նկարներ:

1984

Նա խցում էր. այնտեղ գուցե մուօ էր, գուցե լույս, որովհետև բացի մի զույգ աչքից, ուրիշ ոչինչ չէր տեսնում: Մոտիկից դանդաղ ու համաչափ ինչ-որ գործիք էր տկտկում: Աչքերը խոշորացել էին ու ավելի ուժեղ էին փայլում: Հանկարծ նա դուրս թռավ տեղից, սուզվեց աչքերի մեջ, և աչքերը կուլ տվեցին նրան:

Նրան կապել էին աթոռին՝ շլացուցիչ լույսի տակ, շրջապատված թվատախտակներով: Սպիտակ վերարկուով մի մարդ հետևում էր թվատախտակին: Դրսում ծանր երկարաճիտ կոշիկների աղմուկ լսվեց: Դուռը կրնկի վրա բացվեց: Մոմե դեմքով սպան քայլեց ներս. նրա ետևից մտան երկու պահնորդ:

– Սենյակ 101,– ասաց սպան:

Սպիտակ վերարկուով տղամարդը չշրջվեց: Ուիսթոնին նա նույնպես չնայեց. նայում էր միայն թվատախտակներին:

Նա սահում էր հզոր, մեկ կիլոմետր լայնությամբ միջանցքն ի վար՝ լեցուն փառահեղ ոսկեգույն լույսով, բարձր ծիծաղում էր ու ողջ կոկորդով խոստովանություններ գոռում: Նա խոստովանում էր ամեն ինչ, նույնիսկ այն, ինչ կարողացել էր թաքցնել տանջանքների ժամանակ: Իր կյանքի ամբողջ պատմությունը ներկայացնում էր հանդիսատեսին, որն արդեն գիտեր այդ մասին: Նրա հետ պահնորդներ կային, ուրիշ հարցաքննողներ, սպիտակ վերարկուներով մարդիկ, Օ'Բրայենը, Ջուլիան, պարոն Չարինգթոնը, բոլորը միասին սահում էին միջանցքով ու բարձր ծիծաղում: Իրեն հաջողվել էր խուսափել ապագայում ամրագրված մի սարսափելի բանից, որը չէր պատահել: Ամեն ինչ կարգին էր, ցավ այլևս չկար, կյանքի վերջին մանրամասնը բաց էր, հասկացված ու ներված:

Նա վեր թռավ տախտակե մահճակալից՝ վստահ, որ լսել է Օ'Բրայենի ձայնը: Թեև հարցաքննության ամբողջ ընթացքում երբեք չէր տեսել նրան, միշտ այն զգացողությունն էր, որ Օ'Բրայենը կողքին է, միայն թե ինքը չի տեսնում նրան: Օ'Բրայենն էր թելադրում ամեն ինչ: Հենց նա էր պահակներ նշանակել Ուիսթոնի համար և թույլ չէր տվել, որ նրան սպանեն: Հենց նա էր որոշում՝

Ուինսթոնը երբ ճչա ցավից, երբ կարճատև ընդմիջում ունենա, երբ նրան կերակրեն, երբ քնի, երբ թմրադեղ ներարկվի նրա թևի մեջ: Հենց նա էր հարցեր տալիս ու պատասխաններ առաջարկում: Նա էր տանջողը, նա էր պաշտպանը, նա էր հավատաքննիչը, նա էր ընկերը: Մի անգամ (Ուինսթոնը չէր հիշում՝ թմրաքնի՞ մեջ էր, իսկակա՞ն քնի, թե՞ նույնիսկ արթմնի) մի ծայն շշնջաց ականջին. «Մի՛ անհանգստացեք, Ուինսթոն, դուք իմ հովանու տակ եք: Յոթ տարի է՝ հետևում եմ ձեզ: Հիմա եկել է շրջադարձային պահը: Ես կփրկեմ ձեզ: Կատարյալ կդարձնեմ»: Նա վստահ չէր՝ արդյո՞ք Օ՛Բրայենի ծայնն էր, բայց հենց նույն ծայնը յոթ տարի առաջ ուրիշ երագում ասել էր. «Մենք կհանդիպենք մի վայրում, ուր մթություն չկա»:

Նա չէր հիշում՝ հարցաքննությունը վերջ ունեցա՞վ, թե՞ ոչ: Վրա հասավ մի սև շրջան, որից աստիճանաբար նյութականացավ խուցը կամ սենյակը, որտեղ հիմա էր: Ուղիղ պառկած էր և ի վիճակի չէր շարժվել: Մարմինն ամրացված էր բոլոր կենսական կետերում: Նույնիսկ ծոծրակն ինչ-որ կերպ ամրացված էր: Օ՛Բրայենը մռայլ ու բավական տխուր նայում էր վերևից: Ներքևից նրա դեմքը կուպիտ ու մաշված տեսք ուներ, աչքերի տակ պարկեր էին, իսկ քթից մինչև կզակը՝ ծալքեր: Նա ավելի տարիքով էր, քան Ուինսթոնն էր կարծում. գուցե քառասունութ-հիսուն տարեկան: Ձեռքը կլոր թվատախտակի լծակին էր:

– Ես ասացի ձեզ,– ասաց Օ՛Բրայենը,– որ եթե հանդիպենք, ապա՝ այստեղ:

– Այո,– ասաց Ուինսթոնը:

Առանց որևէ այլ նախազգուշացման, բացի Օ՛Բրայենի ձեռքի թեթև շարժումից, մարմնով ցավի ալիք անցավ: Սարսափելի ցավ էր. նա չէր տեսնում՝ ինչ է կատարվում, և այն զգացողությունն ուներ, թե իրեն մահացու վնասվածք են հասցնում: Չգիտեր՝ դա իսկապե՞ս կատարվում էր, թե՞ էլեկտրականության ազդեցությունն էր, բայց մարմինն աղավաղվում էր, իսկ հոդերը դանդաղ հեռանում էին իրարից: Չնայած ցավից ճակատին քրտինք էր հայտնվել,

1984

ամենից շատ վախենում էր, թե ողնաշարն ուր որ է կկտրվի: Նա սեղմեց ատամները և խոր շունչ քաշեց քթով՝ փորձելով հնարավորինս լուռ մնալ:

- Դուք վախենում եք,- ասաց Օ'Բրայենը՝ ուսումնասիրելով նրա դեմքը,- որ ձեր մեջ ինչ-որ բան կկտրվի: Ամենից շատ՝ որ կկտրվի հենց ողնաշարը: Վառ տեսնում եք այն պատկերը, թե ողերն ինչպես են հեռանում իրարից, իսկ հեղուկը կաթում է նրանցից: Ահա թե ինչի մասին եք մտածում, ճի՞շտ է, Ուի՛նսթոն:

Ուինսթոնը չպատասխանեց: Օ'Բրայենը հետ մղեց լծակը: Ցավի ալիքը հեռացավ նույնքան արագ, որքան հայտնվել էր:

- Քառասուն էր,- ասաց Օ'Բրայենը:- Տեսնո՞ւմ եք, այս թվատախտակի վրա թվերը հասնում են հարյուրի: Խնդրում եմ, մեր խոսակցության ընթացքում հիշեք, որ ես իրավունք ունեմ ցավ պատճառելու ցանկացած պահի և ցանկացած աստիճանի: Եթե ստեք կամ փորձեք խուսափել պատասխանից, կամ նույնիսկ պատասխանեք ոչ այնպես, ինչպես թույլ են տալիս ձեր մտավոր կարողությունները, ամմիջապես ճչալու եք ցավից: Հասկացա՞ք:

- Այո,- ասաց Ուինսթոնը:

Օ'Բրայենը մի փոքր մեղմացավ: Նա մտազբաղ ուղղեց ակնոցը և մեկ-երկու քայլ արեց: Հիմա խոսում էր մեղմ ու համբերատար ձայնով: Ասես բժիշկ լինել կամ ուսուցիչ, կամ նույնիսկ քահանա. ավելի շատ ջանում էր բացատրել ու համոզել, քան պատժել:

- Շատ եմ տանջվում ձեզ հետ, Ուինսթոն,- ասաց նա,- որովհետև դուք արժանի եք դրան: Դուք փայլուն հասկանում եք, թե ինչ է կատարվում ձեզ հետ: Վաղուց գիտեք, թեև չեք ցանկանում խոստովանել: Դուք մտավոր խնդիրներ ունեք: Տառապում եք հիշողության արատից: Ի վիճակի չեք հիշել իրական դեպքերը և համոզում եք ձեզ, որ հիշում եք դեպքեր, որ երբեք չեն պատահել: Բարեբախտաբար, դա հնարավոր է բուժել: Երբեք չեք բուժվել, որովհետև չեք ցանկացել: Դրա համար մի փոքր կամքի ուժ էր պետք, որին պատրաստ չէիք: Ես քաջատեղյակ եմ, որ նույնիսկ հիմա կառչում

եք ձեր հիվանդությունից՝ կարծելով, թե դա արժանիք է: Հիմա մի օրինակ կբերեմ: Այս պահին Օվկիանիան ո՞ր տերության դեմ է պատերազմում:

- Երբ ինձ ձերբակալեցին, Օվկիանիան պատերազմում էր Արևելաասիայի դեմ:

- Արևելաասիայի: Լավ: Օվկիանիան միշտ էլ պատերազմել է Արևելաասիայի դեմ, ճիշտ է:

Ուինսթոնը շունչ քաշեց: Նա բացեց բերանը, որ խոսի, բայց չխոսեց: Չէր կարողանում աչքերը հեռացնել թվատախտակից:

- Խնդրում եմ՝ ժշմարտությունը, Ուինսթոն: Ձեր ժշմարտությունը: Ասացեք ինձ՝ ի՞նչ եք հիշում:

- Հիշում եմ, որ իմ ձերբակալվելուց ընդամենը մեկ շաբաթ առաջ բնավ պատերազմ չէինք մղում Արևելաասիայի դեմ: Դաշնակից էինք նրան: Պատերազմը Եվրասիայի դեմ էր: Տևեց չորս տարի: Մինչ այդ...

Օ'Բրայենը ձեռքի շարժումով ընդհատեց նրան:

- Մեկ ուրիշ օրինակ,- ասաց նա:- Մի քանի օր առաջ դուք իսկապես լուրջ մոլորության մեջ էիք: Հավատացած էիք, որ երեք մարդ՝ Կուսակցության երբեմնի անդամներ Ջոնսը, Աարոնսոնն ու Ռադերֆորդը, մարդիկ, որոնց մահապատժի էին ենթարկել դավաճանության ու նենգաշորթության համար՝ այն բանից հետո, երբ ամեն ինչ ամբողջությամբ խոստովանեցին, մեղավոր չեն այն հանցագործությունների համար, որոնց մեջ մեղադրվում էին: Հավատում էիք, որ տեսել եք անսխալ փաստաթուղթ, որն ապացուցում էր նրանց խոստովանությունների կեղծ լինելը: Կա մի լուսանկար, որը ձեզ հայտնվել է տեսիլքում: Հավատացած էիք, որ այն պահել եք ձեր ձեռքին: Լուսանկարը համարյա այսպիսին էր:

Թերթի երկարավուն կտորը հայտնվել էր Օ'Բրայենի ձեռքին: Մոտ հինգ վայրկյան Ուինսթոնի տեսադաշտում էր: Դա լուսանկար էր, իսկ թե ինչ լուսանկար՝ ոչ մի կասկած չկար: Հենց ԱՅՆ լուսանկարն էր: Ջոնսի, Աարոնսոնի և Ռադերֆորդի նյույորքյան կուսակցական հանդիպման լուսանկարի ևս մի օրինակ, որը Ուինսթոնը

1984

պատահաբար տեսել էր տասնմեկ տարի առաջ ու արագորեն ոչնչացրել: Միայն մի պահ այն աչքի առաջ էր, հետո դարձյալ անհետացավ տեսադաշտից: Բայց ինքը տեսել էր այն, անկասկած, տեսել էր: Անհույս, ցավոտ ջանքով փորձեց մարմինը պոկել մահճակալից: Անհնար էր որևէ ուղղությամբ նույնիսկ մեկ սանտիմետր շարժվել: Մի պահ նույնիսկ մոռացել էր թվատախտակի մասին: Միայն ուզում էր դարձյալ մատներով դիպչել լուսանկարին կամ գոնե տեսնել:

- Այն գոյությունն ունի,- ճչաց նա:

- Ոչ,- ասաց Օ'Բրայենը:

Նա սկսեց քայլել սենյակում: Դիմացի պատի մեջ հիշողության անցք կար: Օ'Բրայենը բարձրացրեց ցանցավոր կափարիչը: Թղթի փխրուն կտորը հեռացավ տաք օդի հոսանքով. անհետացավ բոցերի մեջ: Օ'Բրայենը շրջվեց պատից:

- Մոխիր,- ասաց նա:- Նույնիսկ ոչ թե մոխիր, այլ փոշի: Այն գոյություն չունի ու երբեք էլ գոյություն չի ունեցել:

- Բայց եղել է: Գոյություն ունի: Գոյություն ունի հիշողության մեջ: Ես հիշում եմ: Դուք հիշում եք:

- Ես չեմ հիշում,- ասաց Օ'Բրայենը:

Ուինսթոնի սիրտը տակնուվրա եղավ: Դա կրկնամիտք էր: Նա մահացու անօգնականության զգացում ուներ: Եթե վստահ լիներ, որ Օ'Բրայենը ստում է, դա այնքան էլ կարևոր չէր լինի: Բայց չի բացառվում, որ Օ'Բրայենն իրոք մոռացել է լուսանկարի մասին: Ու եթե այդպես է, ապա երևի արդեն մոռացել է նաև այն, որ հերքել է, որ հիշում է, և մոռացել է, որ մոռացել է: Ինչպե՞ս կարող ես վստահ լինել, որ դա հասարակ խաբեություն է: Գուցե մտքի մեջ խելագար տեղաշարժն իրական է. այդ միտքը հուսահատեցնում էր:

Օ'Բրայենը մտազբաղ նայում էր նրան: Ավելի քան երբևէ նման էր ուսուցչի, որը չարչարվում է կամակոր, բայց խոստումնալից երեխայի հետ:

- Կա կուսակցական մի կարգախոս, որն առնչվում է հիշողության վերահսկման հետ,- ասաց նա:- Կրկնեք, խնդրեմ:

– Ով վերահսկում է անցյալը, վերահսկում է ապագան. ով վերահսկում է ներկան, վերահսկում է անցյալը,– հնազանդ կրկնեց Ուինսթոնը:

– Ով վերահսկում է ներկան, վերահսկում է անցյալը,– ասաց Օ'Բրայենը՝ գլխով հավանության նշան անելով:– Ուինսթոն, ձեր կարծիքով՝ անցյալն իսկապե՞ս գոյություն ունի:

Ուինսթոնին դարձյալ համակեց անօգնականության զգացումը: Աչքերը թափառում էին թվատախտակի վրա: Նա չգիտեր՝ ո՞ր պատասխանն իրեն կփրկի ցավից՝ «այո՞»–ն, թե՞ «ոչ»–ը. բայց նաև չգիտեր, թե որ պատասխանն էր ճիշտ:

Օ'Բրայենը թույլ ժպտաց:

– Դուք մետաֆիզիկ չեք, Ուինսթոն,– ասաց նա:– Մինչ այս պահը երբեք չեք մտածել՝ ինչ է նշանակում գոյություն: Ավելի կոնկրետ կարտահայտվեմ: Անցյալը գոյություն ունի՞ կոնկրետ, տարածության մեջ: Կա՞ որևէ տեղ, մի վայր, ֆիզիկական առարկաների աշխարհ, որտեղ անցյալը դեռ շարունակվում է:

– Ոչ:

– Եթե անցյալ գոյություն ունի, ապա՞ որտե՞ղ:

– Արձանագրություններում: Գրի է առնված:

– Արձանագրություններում: Ե՞վ:

– Մտքում: Մարդկային հիշողության մեջ:

– Հիշողության մեջ: Շատ լավ: Մենք՝ Կուսակցությունը, վերահսկում ենք բոլոր արձանագրություններն ու բոլոր հիշողությունները: Հետևաբար վերահսկում ենք անցյալը, ճիշտ է:

– Բայց ինչպե՞ս կարող եք մարդկանց ստիպել մոռանալ,– դարձյալ ծջաց Ուինսթոնը՝ մի պահ մոռանալով թվատախտակի մասին:– Դա լինում է կամքից անկախ: Վեր է մարդու ուժերից: Ինչպե՞ս կարող եք վերահսկել հիշողությունը: Դուք չեք վերահսկել իմ հիշողությունը:

Օ'Բրայենի շարժումները դարձյալ խստացան: Ձեռքը դրեց թվատախտակի վրա:

1984

- Հակառակը,- ասաց նա,- *դո՛ւք* չեք վերահսկել այն: Եվ դրա համար էլ ձեզ այստեղ են բերել: Դուք այստեղ եք, որովհետև չկարողացաք լինել հնազանդ և կարգապահ: Դուք չհնազանդվեցիք, ինչի դիմաց վճարելու եք հոգեկան առողջությանը: Նախընտրեցիք լինել խելագար, փոքրամասնություն դառնալ: Միայն կարգապահ միտքը կարող է տեսնել իրականությունը, Ուի՛նսթոն: Դուք կարծում եք՝ իրականությունը օբյեկտիվ, արտաքին, ինքնուրույն գոյություն ունեցող երևույթ է: Կարծում եք նաև, որ իրականության բնույթն ակնհայտ է: Երբ խաբում եք ինքներդ՝ ձեզ՝ կարծելով, թե ինչ-որ բան եք տեսնում, ենթադրում եք, որ բոլորն էլ տեսնում են նույնը: Բայց ասում եմ ձեզ, Ուի՛նսթոն. իրականությունն արտաքին երևույթ չէ: Իրականությունը գոյություն ունի մարդու գիտակցության մեջ և ուրիշ ոչ մի տեղ: Ոչ թե անհատական գիտակցության մեջ, որը կարող է սխալվել և ամեն դեպքում շուտով անհետանալու է. միայն Կուսակցության գիտակցության մեջ, որը հավաքական է և անմահ: Ճշմարտություն է այն, ինչ Կուսակցությունն է ճշմարտություն համարում: Անհնար է տեսնել իրականությունը, եթե չնայես Կուսակցության աչքերով: Դուք պետք է դա նորից սովորեք, Ուի՛նսթոն: Դրա համար պետք է ինքնառջնաջացում, կամքի ուժ: Դուք պետք է զսպեք ձեզ, մինչև վերագտնեք մտավոր հավասարակշռությունը:

Նա մի քանի վայրկյան դադար առավ, որպեսզի Ուի՛նսթոնը յուրացնի իր ասածը:

- Հիշո՛ւմ եք,- շարունակեց նա,- ինչպես էիք գրել ձեր օրագրում. «Ազատություն է՝ ազատ ասել, որ երկու գումարած երկու չորս է»:

- Այո,- ասաց Ուի՛նսթոնը:

Օ՛րայենը ձախ ձեռքը մեկնեց Ուի՛նսթոնին, թաքցրեց բութն ու բացեց չորս մատները:

- Քանի՞ մատ է, Ուի՛նսթոն:

- Չորս:

- Իսկ եթե Կուսակցությունն ասում է, որ ոչ թե չորս է, այլ հինգ, ապա քանի՞ն է:

– Չորս:

Վերջին բառից հետո հևաց ցավից: Թվատախտակի սլաքը ցույց էր տվել հիսունհինգ: Ուինսթոնի ամբողջ մարմինը պատվել էր քրտինքով: Օդը ներխուժում էր թոքերն ու դուրս գալիս խոր տնքոցներով, որ Ուինսթոնը չէր կարող զսպել նույնիսկ ատամները սեղմելով: Դեռ չորս մատները պարզած՝ Օ'Բրայենը հետևում էր նրան: Նա հետ տարավ լծակը: Այս անգամ ցավը միայն մի փոքր թուլացավ:

– Քանի՞ մատ է, Ուինսթոն:

– Չորս:

Սլաքը հասավ վաթսունի:

– Քանի՞ մատ է, Ուինսթոն:

– Չորս, չորս: Ուրիշ ի՞նչ կարող եմ ասել: Չորս:

Սլաքը երևի դարձյալ բարձրացել էր, բայց Ուինսթոնը չէր նայում: Նրա տեսադաշտում միայն ծանր, դաժան դեմքն ու չորս մատներն էին: Մատներն աչքի առաջ ասես սյուներ լինեին՝ հսկայական, աղոտ, կարծես շարժվում էին, բայց կասկած չկար. չորսն էին:

– Քանի՞ մատ է, Ուինսթոն:

– Չորս: Բավական է: Բավական է: Ինչպե՞ս կարող եք շարունակել: Չորս, չորս:

– Քանի՞ մատ է, Ուինսթոն:

– Հինգ: Հինգ: Հինգ:

– Ոչ, Ուինսթոն, անօգուտ է: Դուք ստում եք: Դեռևս մտածում եք, որ չորս մատ է: Ասացեք խնդրեմ, քանի՞ մատ է:

– Չորս: Հինգ: Չորս: Որքան ուզում եք: Միայն թե վերջ տվեք, վերջ տվեք ցավին:

Հանկած պարզվեց, որ նստած է, իսկ Օ'Բրայենը գրկել է նրա ուսերը: Երևում է՝ Ուինսթոնը մի քանի վայրկյան կորցրել էր գիտակցությունը: Մարմինը պրկող կապերը թուլացրել էին: Նա շատ էր մրսում, անվերահսկելի դողում էր, ատամները զնգում էին, այտերով արցունքներ էին հոսում: Մի պահ երեխայի նման փարվեց Օ'Բրայենին ու զարմանալի հարմարավետություն զգաց, երբ նա իր

1984

ծանր թևով գրկեց նրա ուսերը: Թվում էր՝ Օ'Բրայենն իր պաշտպանն է, որ ցավը եկել է դրսից, ուրիշ ծագում ունի, և որ հենց Օ'Բրայենը կփրկի իրեն ցավից:

- Դանդաղ եք սովորում, Ուինսթոն,- մեղմ ասաց Օ'Բրայենը:

- Ի՞նչ կարող եմ անել,- հեկեկաց նա: - Ինչպե՞ս չտեսնեմ այն, ինչ աչքիս առաջ է: Երկու գումարած երկու հավասար է չորս:

- Երբեմն, Ուինսթոն: Երբեմն հինգ է: Երբեմն՝ երեք: Երբեմն՝ բոլորը միաժամանակ: Դուք պետք է ջանք թափեք: Նորմալ հոգեվիճակը վերականգնելն այնքան էլ հեշտ չէ:

Նա Ուինսթոնին պառկեցրեց մահճակալին: Վերջույթների կապերը դարձյալ ձգվեցին, բայց ցավը տեղի էր տվել, իսկ դողը դադարել էր՝ թողնելով միայն թուլություն և մրսածություն: Օ'Բրայենը ձեռքով արեց սպիտակազգեստ մարդուն, որն այդ բոլոր գործողությունների ընթացքում անշարժ կանգնած էր: Սպիտակազգեստը կռացավ ու մոտիկից նայեց Ուինսթոնի աչքերի մեջ, չափեց նրա զարկերակը, ականջը դրեց կրծքավանդակին, թփթփացրեց այսուայնտեղ, ապա գլխով ցույց տվեց Օ'Բրայենին:

- Նորից,- ասաց Օ'Բրայենը:

Ցավը հեղեղեց Ուինսթոնի մարմինը: Սլաքը երկի հասել էր յոթանասուն-յոթանասունհինգի: Այս անգամ նա փակեց աչքերը: Գիտեր, որ մատները դեռ աչքի առաջ են, ու դեռ չորսն են: Հիմա մի բան էր կարևոր. դիմանալ ջղաձգությանը: Նա այլևս չէր նկատում՝ լալի՞ս է, թե՞ ոչ: Ցավը դարձյալ պակասեց: Նա բացեց աչքերը: Օ'Բրայենը հետ էր տարել լծակը:

- Քանի՞ մատ է, Ուինսթոն:

- Չորս: Երկի չորս: Եթե կարողանայի, հինգ կտեսնեի: Ես փորձում եմ հինգ մատ տեսնել:

- Ի՞նչ եք ուզում՝ համոզել ինձ, որ հի՞նգ եք տեսնում, թե՞ իսկապես տեսնել:

- Իսկապես տեսնել:

- Նորից,- ասաց Օ'Բրայենը:

Այլաքը երևի ութսուն-ինսունի վրա էր: Միայն ժամանակ առ ժամանակ Ուինսթոնին հաջողվում էր հիշել, թե ցավն ինչից էր: Սեղմած կոպերի ետևում թվում էր՝ մատների անտառը պարում էր, ավելանում ու պակասում, մեկը մյուսի ետևից անհետանում և դարձյալ հայտնվում: Նա փորձում էր հաշվել դրանք, բայց չէր հիշում՝ ինչու: Միայն գիտեր, որ անհնար է հաշվել, և պատճառը գուցե առեղծվածային նույնությունն էր հինգի ու չորսի: Ցավը դարձյալ թուլացավ: Երբ բացեց աչքերը, պարզեց՝ դեռ նույն բանն է տեսնում: Շարժվող ծառեր հիշեցնող անհամար մատները շարված էին բոլոր կողմերում՝ մերթ խաչվելով, մերթ հեռանալով: Նա նորից փակեց աչքերը:

– Քանի՞ մատ են ցույց տալիս, Ուինսթոն:

– Չգիտեմ: Չգիտեմ: Դուք կսպանեք ինձ, եթե կրկնեք: Չորս, հինգ, վեց. անկեղծ, չգիտեմ:

– Ավելի լավ է, – ասաց Օ'Բրայենը:

Ասեղը մտավ Ուինսթոնի թևի մեջ: Գրեթե նույն պահին էլ երանելի, ապաքինող ջերմություն տարածվեց ողջ մարմնով: Ցավը գրեթե մոռացվեց: Նա բացեց աչքերն ու երախտապարտ նայեց Օ'Բրայենին: Տեսնելով նրա ծանր, ակոսված դեմքը՝ այնքան տգեղ ու այնքան խելացի, սիրտն ասես տակնուվրա եղավ: Եթե կարողանար շարժվել, կմեկներ ձեռքն ու կդիպչեր Օ'Բրայենի թևին: Երբեք այդքան չէր սիրել նրան, որքան այդ պահին, և ոչ միայն այն պատճառով, որ նա վերջ էր տվել ցավին: Վերադարձել էր հին զգացողությունը, ու հիմա կարևոր չէր ով է Օ'Բրայենը՝ ընկե՞ր, թե՞ թշնամի: Օ'Բրայենը մարդ է, ում հետ կարելի է խոսել: Գուցե մարդը ոչ այնքան սիրվելու, որքան հասկացված լինելու կարիք ունի: Օ'Բրայենը տանջանքով իրեն հասցրել էր խելագարության, իսկ քիչ անց անկասկած մահվան գիրկն էր ուղարկելու: Կարևոր չէր: Ինչ-որ իմաստով իրենց կապում էր մի բան, որ ընկերությունից էլ խոր էր. թեև դրա մասին երբեք չէր խոսվում, ինչ-որ տեղ կար մի վայր, ուր նրանք կարող են հանդիպել ու խոսել:

1984

Օ'Բրայենը նայում էր նրան այնպիսի արտահայտությամբ, ասես նույնն էր մտածում: Նա խոսեց թեթև, անբռնազբոսիկ:

- Գիտե՞ք՝ որտեղ եք, Ուի՛նսթոն,- հարցրեց նա:
- Չգիտեմ: Կռահում եմ, որ Սիրո նախարարությունում եմ:
- Գիտե՞ք՝ երբվանից եք այստեղ:
- Չգիտեմ: Օրեր, շաբաթներ, ամիսներ... կարծում եմ՝ ամիսներ:
- Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ ենք մարդկանց այստեղ բերում:
- Որպեսզի նրանց ստիպեք խոստովանել:
- Ոչ, պատճառը դա չէ: Նորից փորձեք:
- Որպեսզի պատժեք նրանց:

- Ոչ,- բացականչեց Օ'Բրայենը: Նրա ձայնն անձանաչելիորեն փոխվեց, իսկ դեմքը հանկարծ լրջացավ ու աշխուժացավ:- Ո՛չ: Ոչ միայն խոստովանություն կորզելու, ոչ միայն ձեզ պատժելու համար: Կուզե՞ք՝ բացատրեմ ինչու ենք ձեզ այստեղ բերել: Որպեսզի բուժենք: Որպեսզի ձեզ ողջամիտ դարձնենք: Հասկանո՞ւմ եք, Ուի՛նսթոն, բոլոր նրանք, ում բերում ենք այստեղ, հեռանում են բուժված: Մեզ չեն հետաքրքրում ձեր գործած հիմար հանցանքները: Կուսակցությանը չի հետաքրքրում բացահայտ գործողությունը. մեզ մտահոգում է միայն միտքը: Մենք ոչ միայն ոչնչացնում ենք մեր թշնամիներին, այլև փոխում ենք նրանց: Հասկանո՞ւմ եք՝ դա ինչ է՝ նշանակում:

Նա կռացավ Ուի՛նսթոնի վրա: Մոտիկության պատճառով դեմքը հսկայական էր թվում ու նաև՝ սարսափելի տգեղ, քանի որ Ուի՛նսթոնը նայում էր ներքևից: Ավելին, նրա դեմքին նկատելի էր ինչ-որ խանդավառություն, խելագար լարվածություն: Ուի՛նսթոնի սիրտը դարձյալ կծկվեց: Եթե հնարավոր լիներ, ավելի խոր կույզ կգար անկողնու մեջ: Նա վստահ էր, որ Օ'Բրայենը պատրաստվում է հենց այնպես ձգել լծակը: Սակայն այդ պահին Օ'Բրայենը շրջվեց: Նա մեկ-երկու քայլ հետուառաջ արեց: Հետո շարունակեց ոչ այնքան կրքոտ, որքան առաջ:

- Նախևառաջ պետք է հասկանաք, որ այստեղ չկան նահատակներ: Դուք կարդացել եք անցյալի կրոնական հալածանքների

մասին: Միջին դարերում գոյություն ուներ ինկվիզիցիա: Սակայն ձախողվեց: Նպատակը հերետիկոսությունն արմատախիլ անելն էր, մինչդեռ հավիտենական դարձրեց այն: Խարույկի մեջ այրված յուրաքանչյուր հերետիկոսի հետևում էին հազարավորները: Ինչո՞ւ: Որովհետև ինկվիզիցիան բացահայտ սպանում էր իր թշնամիներին և սպանում էր նաև չզղջացողներին. իրականում սպանում էր, որովհետև չէին զղջում: Մարդիկ մահանում էին, որովհետև չէին հրաժարվում իրենց իրական համոզմունքներից: Բնականաբար, փառքը լիովին բաժին էր ընկնում զոհին, իսկ ամոթը՝ հավատաքննիչին, ով այրում էր նրան: Ավելի ուշ՝ քսաներորդ դարում, դա կոչվեց ամբողջատիրական համակարգ: Կային գերմանացի նացիստներ և ռուս կոմունիստներ: Ռուսները հալածում էին հերետիկոսությունն ավելի դաժանորեն, քան ինկվիզիցիան: Նրանք կարծում էին, որ դասեր են քաղել անցյալի սխալներից. ամեն դեպքում, նրանք գիտեին, որ մարտիրոս ստեղծելու կարիք չկա: Մինչ իրենց զոհերին հանրության դատին հանձնելը, միտումնավոր ոչնչացնում էին նրանց արժանապատվությունը: Բանտարկյալներին ոչնչացնում էին խոշտանգումներով ու մենությանբ և վերածում արիամարիելի, ստորաքարշ թշվառ արարածների, որոնք խոստովանում էին այն ամենը, ինչ ասում էին. իրենց ողողում էին վիրավորանքներով, մեղադրում միմյանց, թաքնվում իրար թիկունքում, թնկթնկում և գուփ աղերսում: Սակայն ընդամենը մի քանի տարի անց դարձյալ նույնն էր կրկնվում: Մեռյալները դառնում էին մարտիրոսներ, նրանց ստորաքարշությունը մոռացվում էր: Կրկնում եմ՝ ինչո՞ւ: Նախևառաջ, որովհետև նրանց խոստովանություններն ակնհայտորեն կորզված էին ու ոչ ծշմարիտ: Մենք նման սխալներ թույլ չենք տալիս: Այստեղ արված բոլոր խոստովանությունները ծիշտ են: Մենք ծիշտ ենք դարձնում դրանք: Ամենակարևորը՝ թույլ չենք տալիս, որ մեռյալները կանգնեն մեր դեմ: Պետք չէ երևակայել, որ սերունդները կարդարացնեն ձեզ, Ուի՛նսթոն: Ժառանգները երբեք չեն լսի ձեր մասին: Ձեզ կմաքրեն պատմության հոսքից: Մենք ձեզ

կվերածենք գազի ու բաց կթողնենք ստրատոսֆերա: Ձեզնից ոչինչ չի մնա՝ ոչ անուն ցուցակներում, ոչ հիշողություն կենսականի մարդկանց ուղեղներում: Ձեզ կոչնչացնեն ինչպես անցյալում, այնպես էլ ապագայում: Ասես երբեք էլ գոյություն չեք ունեցել:

«Այդ դեպքում ինչո՞ւ եք տանջում ինձ»,– մի պահ դառնացած մտածեց Ուինսթոնը: Օ’Բրայենը դադարեց խոսել, ասես Ուինսթոնն իր միտքը բարձրաձայն էր արտահայտել: Նա իր մեծ, տզեղ դեմքը մոտեցրեց Ուինսթոնին. աչքերը փոքր-ինչ նեղացան:

– Մտածում եք,– ասաց նա,– որ եթե մտադրվել ենք լիովին ոչնչացնել ձեզ, այնպես, որ ձեր ասած ոչ մի բառ փոքրիկ նշանակություն անգամ չի ունենա, այդ դեպքում ինչո՞ւ ենք նախ հարցաքննում ձեզ: Այդ մասին էիք մտածում, ճի՞շտ է:

– Այո,– ասաց նա:

Օ’Բրայենը թույլ ժպտաց:

– Դուք ընդհանրական կարգի արատն եք, Ուինսթոն: Բիժ եք, որը պետք է մաքրել: Հենց նոր չասացի՞, որ մենք տարբերվում ենք անցյալի հալածողներից: Մեզ չի գոհացնում խուլ հնազանդությունը և ոչ էլ անարգ հպատակությունը: Երբ ի վերջո հանձնվեք մեզ, դա կլինի ձեր կամքի ազատ դրսևորում: Մենք ոչնչացնում ենք հերետիկոսին ոչ թե որ դիմադրում է մեզ. քանի դեռ դիմադրում է, չենք ոչնչացնում: Մենք նրան շրջում ենք, գրավում նրա ներքին միտքը, վերափոխում նրան: Նրանից հեռացնում ենք ամբողջ չարիքն ու պատրանքները. մեր կողմն ենք քաշում նրան, ոչ թե պաշտոնապես, այլ անկեղծորեն, սրտով ու հոգով: Նա դառնում է մեզ–նից մեկը, հետո սպանում ենք նրան: Մեզ համար անընդունելի է, որ աշխարհում ինչ–որ տեղ կա սխալ միտք, որքան էլ գաղտնի ու թույլ լինի այն: Նույնիսկ մահվան պահին չենք կարող ընդունել որևէ շեղում: Անցյալում հերետիկոսը նույնիսկ խարոյկի մոտ շարունակում էր փառաբանել հերետիկոսությունը, հրժվել դրանով: Նույնիսկ ռուսական զտումների զոհը միջանցքում քայլելիս և փամփուշտի սպասելիս կարող էր իր գանգի մեջ փակ պահել ապստամբ միտքը:

Մինչ ուղեղը ոչնչացնելը, մենք նախ այն կատարյալ ենք դարձնում: Հին դեսպոտիզմի հրամանը սկսվում է այսպես՝ «Չհամարձակվե՛ս»: Ամբողջատերերի հրամանը՝ «Դու պետք է»: Մեր հրամանն է՝ «Դո՛ւ ես»: Այստեղ բերվածներից ոչ ոք չի ընդդիմանում մեզ: Բոլորին մաքրում ենք: Ի վերջո մեզ հաջողվեց կոտրել նույնիսկ այն երեք թշվառ դավաճաններին՝ Ջոնսին, Աարոնսոնին և Ռադերֆորդին, որոնց անմեղությանը մի ժամանակ հավատում էիք: Տեսել եմ, թե նրանց ինչպես են աստիճանաբար տանջում, ինչպես են նրանք թնկթնկում, քծնում, արտասվում, ի վերջո, ոչ թե ցավից կամ վախից, այլ միայն զղջումից: Երբ ավարտեցինք աշխատանքը, նրանք ընդամենը մարդու կաղապար էին: Նրանց ներսում ոչինչ չէր մնացել՝ բացի արածի համար զղջումից և Մեծ եղբոր հանդեպ սիրուց: Հուզիչ էր տեսնել, թե ինչպես են սիրում նրան: Աղաչում էին, որ իրենց արագ գնդակահարեն, որպեսզի մեռնեն, քանի դեռ միտքը մաքուր է:

Նրա ճայնը գրեթե երազկոտ էր դարձել: Դեմքին փառաբանություն, խելագար խանդավառություն էր փայլում: «Նա չի ձևացնում, - մտածեց Ուինսթոնը, - նա կեղծավոր չէ, հավատում է իր ամեն մի խոսքին»: Ամենից շատ նրան ճնշում էր սեփական ինտելեկտուալ թերարժեքության գիտակցումը: Նա հետևում էր, թե այդ ծանրամարմին, բայց վայելչագեղ մարդն ինչպես է քայլում՝ մերթ հայտնվելով իր տեսադաշտում, մերթ դուրս գալով: Օ'Բրայենը բոլոր առումներով իրենից խոշոր էր: Չկար մի գաղափար, որ երբևէ ծագել էր կամ կարող էր ծագել Ուինսթոնի մտքում, որն Օ'Բրայենը վաղուց չէր իմացել, ստուգել ու մերժել: Նրա միտքը *պարունակում էր Ուինսթոնի միտքը*: Բայց այդ դեպքում Օ'Բրայենն ինչպե՞ս կարող էր խենթ լինել: Ավելի հավանական է, որ ինքը՝ Ուինսթոնն է խենթ: Օ'Բրայենը կանգ առավ և նայեց նրան: Չայնը դարձյալ խստացավ:

- Մի՛ երևակայեք, թե կփրկվեք, Ուինսթոն, նույնիսկ եթե ամբողջովին հանձնվեք մեզ: Մենք երբեք չենք խնայում որևէ մեկին, ով գոնե մեկ անգամ շեղվել է ուղուց: Ու եթե նույնիսկ որոշենք թույլ

1984

տալ, որ ապրեք մինչև ձեր բնական մահը, միևնույն է, երբեք չեք խուսափի մեզանից: Այն, ինչ այստեղ կատարվում է ձեզ հետ, հավերժ է: Նախօրոք իմացեք: Այնպես կոչնչացնենք, որ ոտքի չեք կանգնի: Ձեզ հետ կպատահեն դեպքեր, որոնցից չեք կարող վերականգնվել, նույնիսկ եթե հազար տարի ապրեք: Այլևս երբեք չեք ունենա սովորական մարդկային զգացմունքներ: Ձեր ներսում ամեն ինչ կմեռնի: Այլևս երբեք չեք զգա սեր, ընկերություն, կյանքի ուրախություն, ծիծաղ, հետաքրքրասիրություն, խիզախություն կամ մաքրություն: Դուք դատարկ կլինեք: Մինչև վերջին կաթիլը կձգմենք ձեզ, ապա կլցնենք մեզնով:

Նա կանգ առավ ու ձեռքով նշան արեց սպիտակագգեստ տղամարդուն: Ուինսթոնը զգաց, թե ինչպես թիկունքից ինչ-որ ծանր սարքավորում մոտեցրին գլխին: Օ'Բրայենը նստել էր մահճակալին այնպես, որ դեմքը հավասար լինի Ուինսթոնի դեմքին:

- Երեք հազար,- ասաց նա՝ Ուինսթոնի գլխի վրայով դիմելով սպիտակագգեստին:

Երկու փափուկ, փոքր-ինչ խոնավ բարձիկ սեղմվեց Ուինսթոնի քունքերին: Նա ցնցվեց: Նորից ցավ զգաց, բայց՝ ուրիշ ցավ: Օ'Բրայենը բռնեց նրա ձեռքը՝ համոզելով, գրեթե սիրալիր:

- Այս անգամ ցավ չի լինի,- ասաց նա:- Նայեք ուղիղ աչքերիս մեջ:

Այդ պահին կործանիչ պայթյուն եղավ, կամ թվաց, թե պայթյուն էր, չնայած վստահ չէր՝ արդյո՞ք ուղեկցվեց աղմուկով: Լույսի կուրացնող բռնկումը, սակայն, անկասկած էր: Ուինսթոնը չէր վնասվել, բայց տապալվել էր: Չնայած արդեն պառկած էր մեջքի վրա, երբ դա պատահեց, տարօրինակ զգացողություն ունեցավ, ասես իրեն գցել են, ու հայտնվել է այդ դիրքում: Սարսափելի անցավ հարվածը տապալեց նրան: Գլխի հետ նույնպես ինչ-որ բան էր պատահել: Երբ տեսողությունը պարզվեց, նա հիշեց, թե ով է և որտեղ է, ճանաչեց իր դեմքին ուշադիր նայողին, բայց ինչ-որ տեղ ընդարձակ դատարկություն էր, ասես ուղեղից մի կտոր հեռացրել էին:

- Երկար չի տևի,- ասաց Օ'Բրայենը: - Նայեք աչքերիս մեջ: Օվկիանիան ո՞ր երկրի դեմ է պատերազմում:

Ուիսթոնը մտածեց: Նա գիտեր՝ ինչ է Օվկիանիան, և որ ինքը Օվկիանիայի քաղաքացի է: Նաև հիշեց Եվրասիան և Արևելա-ասիան, բայց չգիտեր՝ ով ում դեմ է պատերազմում: Ըստ էության, տեղյակ էլ չէր, որ պատերազմ է:

- Չեմ հիշում:

- Օվկիանիան պատերազմում է Արևելաասիայի դեմ: Հիմա հիշեցի՞ք:

- Այո:

- Օվկիանիան միշտ էլ պատերազմել է Արևելաասիայի դեմ: Ձեր ծնունդից, Կուսակցության ստեղծումից, պատմության առաջին օրից ի վեր պատերազմը շարունակվում է առանց դադարի, միշտ նույն պատերազմը: Հիշո՞ւմ եք դա:

- Այո:

- Տասնմեկ տարի առաջ դուք լեգենդ եք հորինել երեք մարդու մասին, որոնք դավաճանության համար դատապարտվել են մահ-վան: Հորինել եք, թե տեսել եք նրանց անմեղությունն ապացուցող թղթի մի կտոր: Այդպիսի թուղթ երբևէ գոյություն չի ունեցել: Դուք հնարել եք, իսկ ավելի ուշ սկսել եք հավատալ դրան: Հիմա հիշո՞ւմ եք այն պահը, երբ առաջին անգամ հորինեցիք: Հիշո՞ւմ եք:

- Այո:

- Հենց նոր ձեզ ցույց տվեցի մատներս: Դուք տեսաք հինգ մատ: Հիշո՞ւմ եք:

- Այո:

Օ'Բրայենը բարձրացրեց ձախ ձեռքի մատները՝ թաքցնելով բութ մատը:

- Հինգ մատ է: Տեսնո՞ւմ եք հինգ մատ:

- Այո:

Մի կարճ ակնթարթ նա տեսավ դրանք, իսկ հետո մտքում տեսարանը փոխվեց: Տեսավ հինգ մատ՝ առանց աղավաղման: Հետո

1984

ամեն ինչ նորից կարգին էր, և հին վախը, ատելությունն ու շփոթմունքը դարձյալ ներս էին խցկվել: Բայց եղավ լուսաշող վստահության մի պահ, նա չէր հիշում՝ որքան, գուցե երեսուն վայրկյան, երբ Օ'Բրայենի ցանկացած նոր առաջարկ լցրեց դատարկության կտորը ու դարձավ բացարձակ ճշմարտություն, երբ երկու գումարած երկու հավասար կլիներ երեքի, ինչպես և հինգի, եթե դրա կարիքը լիներ: Այդ վիճակն անցավ ավելի շուտ, քան Օ'Բրայենը կթողներ նրա ձեռքը, բայց չնայած Ուինսթոնը չէր կարող վերականգնել այդ վիճակը, հիշում էր այն, ինչպես հիշում ես կյանքում ինչ-որ ժամանակ պատահած պայծառ դեպքը, երբ դու, ըստ էության, այլ մարդ էիր:

– Հիմա տեսնո՞ւմ եք,– ասաց Օ'Բրայենը,– որ դա ցանկացած դեպքում հնարավոր է:

– Այո,– ասաց Ուինսթոնը:

Օ'Բրայենը բավարարված ոտքի կանգնեց: Ուինսթոնը տեսավ, թե իր ձախ կողմում սպիտակազգեստ մարդն ինչպես կոտրեց սրվակն ու քաշեց ներարկիչի մխոցը: Օ'Բրայենը ժպիտով շրջվեց Ուինսթոնի կողմը: Նա առաջվա պես ուղղեց ակնոցը քթի վրա:

– Հիշո՞ւմ եք՝ ինչպես էիք գրել օրագրում,– ասաց նա,– կարևոր չէ՝ ես ընկեր եմ, թե թշնամի, քանի որ միակ մարդն եմ, ով հասկանում է ձեզ, և որի հետ կարելի է խոսել: Դուք իրավացի եք: Ինձ համար հաճելի է խոսել ձեզ հետ: Ձեր մտածողությունն ինձ դուր է գալիս: Նման է իմ մտածողությանը, այն տարբերությամբ, որ դուք խենթ եք: Մինչ գրույցն ավարտելը կարող եք մի քանի հարց տալ, եթե ուզում եք:

– Ցանկացած հա՞րց:

– Ցանկացած,– նա տեսավ, որ Ուինսթոնն աչքերը հառել էր թվատախտակին:– Անջատված է: Ո՞րն է ձեր առաջին հարցը:

– Ի՞նչ եք արել Ջուլիային,– ասաց Ուինսթոնը:

Օ'Բրայենը դարձյալ ժպտաց:

– Նա դավաճանեց ձեզ, Ուինսթոն: Անմիջապես և անվերապահորեն: Հազվադեպ ենք հանդիպում մարդկանց, որոնք այդքան

արագ են հանձնվում մեզ: Եթե տեսնեիք, հազիվ թե ճանաչեիք նրան: Ապստամբ ոգին, ստախոսությունը, անխոհեմությունը, արատավոր միտքը. ամեն ինչ վերացել էր նրանից: Կատարյալ փոփոխություն էր: Դասագրքային օրինակ:

– Դուք տանջե՞լ եք նրան:

Օ՛րբայենը չպատասխանեց հարցին:

– Հաջորդ հարցը,– ասաց նա:

– Մեծ եղբայրը գոյություն ունի՞:

– Իհարկե գոյություն ունի: Կուսակցությունը գոյություն ունի: Մեծ եղբայրը Կուսակցության մարմնավորումն է:

– Նա նույն կե՞րպ գոյություն ունի, ինչպես ես:

– Դուք գոյություն չունեք,– ասաց Օ՛րբայենը:

Դարձյալ անօգնականության զգացումը համակեց նրան: Նա գիտեր կամ կարող էր պատկերացնել այն փաստարկները, որոնք կապացուցեին իր չգոյությունը, բայց դրանք անհեթեթ էին, ընդամենը բառախաղ: Մի՞թե «դուք գոյություն չունեք» դրույթը տրամաբանական անհեթեթություն չի պարունակում: Բայց ի՞նչ իմաստ ունի ասել դա: Միտքը կծկվում էր, երբ մտածում էր այն անհերքելի, խենթ փաստարկների մասին, որոնցով Օ՛րբայենը ջախջախում էր իրեն:

– Կարծում եմ՝ ես գոյություն ունեմ,– հոգնած ասաց նա:– Ես գիտակցում եմ իմ էությունը: Ես ծնվել եմ և կմեռնեմ: Ունեմ թևեր ու ոտքեր: Որոշակի տարածություն եմ զբաղեցնում: Ոչ մի պինդ առարկա չի կարող ինձ հետ միաժամանակ նույն տեղը զբաղեցնել: Այդ իմաստով Մեծ եղբայրը գոյություն ունի՞:

– Կարևոր չէ: Նա գոյություն ունի:

– Մեծ եղբայրը երբևէ կմեռնի՞:

– Իհարկե ոչ: Ինչպե՞ս կարող է մեռնել: Հաջորդ հարցը:

– Եղբայրություն գոյություն ունի՞:

– Դուք դա երբեք չեք իմանա, Ուի՛նսթոն: Եթե որոշենք ազատել ձեզ, երբ ավարտենք գործը ձեզ հետ, ու եթե ապրեք մինչև իննսուն տարեկան, միևնույն է, երբեք չեք իմանա պատասխանը՝

1984

այո թե ոչ: Որքան ապրեք, այնքան չգուշակված հանելուկը մնալու է ձեր մտքում:

Ուինսթոնը լուռ պառկած էր: Նրա կուրծքն ավելի արագ էր վերուվար անում: Նա դեռ չէր տվել այն հարցը, որն առաջինն էր ծագել մտքում: Պետք է տար այդ հարցը, մինչդեռ լեզուն չէր պտտվում: Նույնիսկ նրա ակնոցն էր հեգնական փայլում: «Գիտի՛,– հանկարծ մտածեց Ուինսթոնը,– գիտի, թե ինչ եմ ուզում հարցնել»: Այդ մտքից բառերն իրենք իրենց հորդեցին:

– Ի՞նչ կա Սենյակ 101-ում:

Օ'Բրայենի դեմքի արտահայտությունը չփոխվեց: Նա չոր պատասխանեց.

– Դուք գիտե՞ք ինչ կա Սենյակ 101-ում: Բոլորն էլ գիտեն՝ ինչ կա Սենյակ 101-ում:

Նա մատով նշան արեց սպիտակազգեստին: Ակնհայտ էր, որ գրույցն ավարտված էր: Ասեղը մտավ Ուինսթոնի թևի մեջ: Նա գրեթե անմիջապես խոր քուն մտավ:

III

– Ձեր վերականգնումը բաղկացած է երեք փուլից,– ասաց Օ'Բրայենը:– Ուսում, ըմբռնում և ընդունում: Հիմա ժամանակն է, որ անցնենք երկրորդ փուլին:

Ինչպես միշտ, Ուինսթոնը պառկած էր մեջքի վրա: Բայց վերջին շրջանում կապերը թուլացնում էին: Նրան դեռ գամված էին պահում անկողնուն, բայց կարող էր փոքր-ինչ շարժել ծնկները, մի կողմից մյուս կողմ շրջել գլուխը և արմունկից բարձրացնել թևերը: Թվատախտակի հանդեպ սարսափը նույնպես պակասել էր: Կարող էր խուսափել դրա պատճառած ցավից, եթե բավական հնարամիտ լիներ. հիմնականում Օ'Բրայենը քաշում էր լծակը, երբ Ուինսթոնն ինչ-որ հիմարություն էր դուրս տալիս: Երբեմն ամբողջ

խոսակցությունն անցնում էր առանց թվատախտակն օգտագործելու: Նա չէր հիշում՝ քանի գրույց են ունեցել: Թվում էր՝ ամբողջ գործընթացը ձգվել էր երկար, անորոշ ժամանակ՝ գուցե շաբաթներ, իսկ գրույցների միջև ընդմիջումները երբեմն տևում էին մի քանի օր, երբեմն՝ ընդամենը մեկ-երկու ժամ:

- Քանի դեռ պառկած էիք այստեղ,- ասաց Օ'Քրայենը,- հաճախ եք մտածել, նույնիսկ հարցրել եք ինձ. ինչո՞ւ է Սիրո նախարարությունն այսքան ժամանակ ու ջանք թափում ձեզ վրա: Իսկ երբ ազատ էիք լինում, ըստ էության նույն հարցի շուրջ էիք մտածում: Դուք հասկացել եք այն հասարակության մեխանիկան, որի մեջ ապրում եք, բայց չեք ընկալել նրա հիմքում ընկած շարժառիթները: Հիշո՞ւմ եք՝ ինչ էիք գրել ձեր օրագրում. «ես հասկանում եմ՝ *ինչպես*, բայց չեմ հասկանում՝ *ինչու*»: Հենց այն ժամանակ, երբ մտածեցիք՝ ինչո՞ւ, կասկածի տակ դրեցիք ձեր սեփական ողջամտությունը: Դուք կարդացել եք *գիրքը*, Գոլդսթայնի *գիրքը*, կամ գոնե որոշ գլուխներ: Այստեղ հանդիպե՞լ եք որևէ բանի, որի մասին չգիտեիք:

- Դուք այն կարդացե՞լ եք,- հարցրեց Ուինսթոնը:

- Ես եմ գրել: Այսինքն՝ մասնակցել եմ ստեղծմանը: Ինչպես գիտեք, ոչ մի գիրք հնարավոր չէ ստեղծել մենակ:

- Ինչ գրված է, ժիշտ է:

- Նկարագրությունը՝ այո: Առաջադրված ծրագիրն անհեթեթություն է: Գաղտնի կուտակել իմացություն... աստիճանաբար լուսավորել զանգվածներին... ի վերջո՞ պրոլետարական ապստամբություն... Կուսակցության տապալում: Ինքներդ էիք կռահում՝ հետո ինչ է լինելու: Այդ ամենն անհեթեթություն է: Պրոլետարները երբեք չեն ապստամբի, նույնիսկ հազար կամ միլիոն տարի հետո: Նրանք չեն կարող: Կարիք չկա, որ բացատրեմ պատճառը. դուք արդեն գիտեք: Եթե երբևէ մոլեգին ապստամբության երազանքներ եք փայփայել, թողե՛ք դրանք: Կուսակցության տապալումն անհնար է: Կուսակցության իշխանությունը հարատև է: Սա թող դառնա ձեր մտքերի ելակետը:

1984

Նա մոտեցավ մահճակալին:

- Հավերժ,- կրկնեց նա:- Իսկ հիմա թույլ տվեք վերադառնալ «ինչպես» և «ինչու» հարցերին: Դուք բավական լավ եք հասկանում, թե Կուսակցությունն *ինչպես* է պահպանում իր իշխանությունը: Հիմա ասացե՛ք՝ մենք *ինչու* ենք կառչում իշխանությունից: Ո՞րն է մեր շարժառիթը: Մեզ ինչի՞ համար է պետք իշխանությունը: Դե, խոսե՛ք,- ավելացրեց նա, քանի որ Ուիլսթոնը լուռ էր:

Այնուամենայնիվ, Ուիլսթոնը ևս մեկ-երկու վայրկյան չխոսեց: Նրան համակել էր հոգնածությունը: Խանդավառության աղոտ, խենթ փայլը դարձյալ հայտնվեց Օ'Բրայենի դեմքին: Նա նախապես գիտեր, թե ինչ է ասելու Օ'Բրայենը. որ իշխանությունը Կուսակցությանը պետք է ոչ թե իր, այլ մեծամասնության բարեկեցության համար: Իշխանություն պետք է, որովհետև մարդկանց մեծամասնությունը թուլամորթ, երկչոտ արարածներ են, որոնք չեն կարող դիմանալ ազատությանը, չեն կարող նայել ճշմարտության աչքերին. նրանց պետք է կառավարեն և կանոնավոր ստեն նրանք, ովքեր իրենցից ուժեղ են: Որ մարդկությունն ընտրության առաջ է՝ ազատություն կամ երջանկություն, որ մարդկության մեծ մասի համար երջանկությունն ավելի լավ է: Որ Կուսակցությունը թույլերի հավերժական պաշտպանն է, նվիրյալների խումբ, որը չարիք է գործում՝ հանուն մոտալուտ բարիքի, զոհում իր երջանկությունը՝ հանուն ուրիշների: Ուիլսթոնը մտածում էր՝ սարսափելին ու ահավորն այն է, որ երբ Օ'Բրայենն ասի դա, ինքը կհավատա: Դա գրված էր նրա դեմքին: Օ'Բրայենն ամեն ինչ գիտի: Ուիլսթոնից հազար անգամ ավելի լավ գիտի, թե իրականում ինչ է աշխարհը, ինչպիսի անկում է ապրում մարդկային հասարակության մեծամասնությունը, և թե ինչ ստերով ու բարբարոսություններով է Կուսակցությունը նրանց պահում այդ վիճակում: Նա ամեն ինչ հասկացել էր, ամեն ինչ կշռադատել, բայց ոչինչ չէր փոխվել. վերջնական նպատակն արդարացնում է ամեն ինչ: «Ի՞նչ կարող ես անել,- մտածեց Ուիլսթոնը,- խելագարի դեմ, որը

քեզնից խելացի է, որն անկողմնակալ լսում է փաստարկներդ, ապա ուղղակի պնդում իր խելագարությունը:

- Դուք մեզ իշխում եք ձեր շահերից ելնելով,- խամրած ձայնով ասաց նա:- Դուք հավատում եք, որ մարդ արարածները չեն կարող կառավարել իրենց, հետևաբար...

Նա ցնցվեց ու գրեթե ճչաց: Ցավը խայթեց մարմինը: Օ'Բրայենը լծակը հասցրել էր երեսունհինգի:

- Հիմարություն է, Ուի'նսթոն, հիմարություն,- ասաց նա:- Նման բան ասելուց առաջ ավելի լավ մտածեք:

Նա հետ քաշեց լծակն ու շարունակեց.

- Հիմա ինքս կպատասխանեմ իմ հարցին: Ահա թե ինչ: Կուսակցությունն իշխանության է ձգտում միայն սեփական շահի համար: Մեզ չի հետաքրքրում ուրիշների բարօրությունը. հետաքրքրում է միայն իշխանությունը: Ո՛չ հարստություն, ո՛չ ճոխություն, ո՛չ երկար կյանք, ո՛չ երջանկություն. միայն իշխանություն, մաքուր իշխանություն: Շուտով կհասկանաք, թե ինչ է մաքուր իշխանությունը: Մենք գիտենք, թե ինչ ենք անում, ու դրանով էլ տարբերվում ենք անցյալի բոլոր օլիգարխներից: Մյուսները, նույնիսկ նրանք, որ նման են մեզ, վախկոտ ու կեղծավոր էին: Գերմանացի նացիստներն ու ռուս կոմունիստներն իրենց մեթոդներով շատ էին մոտեցել մեզ, բայց երբեք համարձակություն չունեցան հասկանալու սեփական շարժառիթները: Նրանք երևակայում կամ գուցե նույնիսկ հավատում էին, որ զավթել են իշխանությունն իրենց կամքից անկախ և սահմանափակ ժամանակով, իսկ մոտակայքում՝ թեկուզ հենց առաջին շրջադարձին, դրախտն է, որտեղ մարդիկ կլինեն ազատ ու հավասար: Մենք ուրիշ ենք: Գիտենք, որ ոչ ոք երբեք չի զավթում իշխանությունը նրանից հրաժարվելու մտադրությամբ: Իշխանությունը միջոց չէ, նպատակ է: Դիկտատուրան հեղափոխությունը պաշտպանելու համար չի հաստատվում. հեղափոխությունն արվում է դիկտատուրա հաստատելու համար: Հետապնդման նպատակը հետապնդումն է: Տանջանքի նպատակը

1984

տանջանքն է: Իշխանության նպատակն իշխանությունն է: Հիմա հասկանո՞ւմ եք ինձ:

Ուինսթոնըն ապշեց, ինչպես և ավելի վաղ, Օ'Բրայենի դեմքի հոգնածությունից: Այն ուժեղ էր, մտտ ու դաժան. դեմքին երևում էր խելք և մի տեսակ զսպված կիրք, որի առաջ նա անօգնական էր. բայց դեմքը հոգնած էր: Աչքերի տակ պարկեր էին, իսկ մաշկը կախ էր ընկել այտոսկրերից: Օ'Բրայենը կռացավ նրա վրա՝ միտումնա-վոր մոտեցնելով տանջված դեմքը:

- Դուք մտածում եք,- ասաց նա,- որ իմ դեմքը ծեր է ու հոգ-նած: Մտածում եք, որ խոսում եմ իշխանության մասին, մինչդեռ ի վիճակի չեմ կանխել իմ սեփական մարմնի քայքայումը: Չե՞ք հասկանում, Ուինսթոն, որ անհատն ընդամենը բջիջ է: Բջջի հոգնածությունն օրգանիզմի ուժն է: Դուք մեռնո՞ւմ եք, երբ կտրում եք ձեր եղունգները:

Նա շրջվեց մահճակալից ու սկսեց հետուառաջ անել՝ մի ձեռքը գրպանում:

- Մենք իշխանության քրմերն ենք,- ասաց նա:- Աստված իշխանություն է: Բայց ինչ վերաբերում է ձեզ, իշխանությունն ընդամենը բառ է: Ժամանակն է, որ գաղափար կազմեք, թե ինչ է նշանակում իշխանություն: Նախևառաջ պետք է հասկանաք, որ իշխանությունը հավաքական է: Անհատն իշխանություն է ձեռք բերում այն դեպքում, երբ դադարում է անհատ լինել: Ձեզ հայտնի է Կուսակցության կարգախոսը. «Ազատությունը ստրկություն է»: Երբևէ մտածե՞լ եք, որ այն կարելի է փոխել: Ստրկությունն ազատություն է: Մենակ և ազատ մարդը միշտ պարտության է մատնված: Այդպես էլ պետք է լինի, որովհետև յուրաքանչյուր արարած դատապարտված է մահվան, իսկ դա մեծագույն ձախողումներից մեկն է: Բայց եթե նրան հաջողվի ամբողջությամբ, անմնացորդ ենթարկվել, եթե հաջողվի հրաժարվել իր ինքնությունից, եթե ձուլվի Կուսակցությանը, Կուսակցությունն էլ՝ իրեն, ապա կդառնա հզոր և անմահ: Երկրորդ. դուք պետք է հասկանաք, որ իշխանությունը մարդկանց

իշխելն է: Իշխանություն մարմնի, բայց առավել՝ մտքի վրա: Մատերիայի կամ ինչպես դուք եք կոչում՝ արտաքին իրականության վրա իշխանություն ունենալն արժեք չունի: Մատերիայի հանդեպ մենք արդեն բացարձակ իշխանություն ունենք:

Մի պահ Ուիսթոնն անտեսեց թվատախտակը: Ջանքերի գերլարումով փորձեց նստել, բայց նրան հաջողվեց միայն ցավեցնել մարմինը:

– Բայց ինչպե՞ս կարող եք վերահսկել մատերիան, – Ուիսթոնն ասես պայթեց: – Դուք նույնիսկ չեք կարող վերահսկել եղանակը կամ ձգողականության օրենքը: Կան հիվանդություններ, ցավ, մահ...

Օ՛րբայենը ձեռքի շարժումով լռեցրեց նրան:

– Մենք վերահսկում ենք մատերիան, որովհետև վերահսկում ենք միտքը: Իրականությունն ուղեղի ներսում է: Աստիճանաբար կտոկորեք դա, Ուիսթոն: Մեզ համար անհնար ոչինչ չկա: Անտեսանելիություն, ազատ անկում, ցանկացած բան: Եթե ուզեմ, կարող եմ թռչել հատակից օձառի պղպջակի պես: Ես դա չեմ ուզում, որովհետև Կուսակցությունը չի ուզում: Դուք պետք է ազատվեք բնության օրենքների մասին տասնիններորդ դարի պատկերացումներից: Մենք ինքներս ենք ստեղծում բնության օրենքները:

– Չեք ստեղծում: Դուք նույնիսկ այս մոլորակի տերերը չեք: Իսկ ի՞նչ կասեք Եվրասիայի և Արևելաասիայի մասին: Դուք դեռ չեք նվաճել դրանք:

– Կարևոր չէ: Կնվաճենք, երբ մեզ հարմար լինի: Ու եթե չնվաճենք, ի՞նչ տարբերություն: Կարող ենք վերացնել դրանք: Օվկիանիան է ամբողջ աշխարհը:

– Բայց աշխարհն ընդամենը փոշեհատիկ է: Իսկ մարդը՝ փոքրիկ ու անօգնական: Նա երբևիցե գոյություն ունի: Միլիոնավոր տարիներ երկիրը բնակեցված չէր:

– Անհետեթություն է: Երկիրը մեր տարիքին է, ոչ ավելի: Ինչպե՞ս կարող է ավելի մեծ լինել: Մարդկային գիտակցությունից դուրս ոչինչ գոյություն չունի:

1984

– Բայց ապարաշերտերը լի են բնաջնջված կենդանիների ոսկորներով. մամոնտներ, մաստոդոնտներ և հսկայական սողուններ, որ ապրել են այստեղ մարդու ծագումից շատ ավելի առաջ:

– Դուք երբևէ տեսե՞լ եք այդ ոսկորները, Ուի՛նսթոն: Իհարկե՛ ոչ: Տասնիններորդ դարի կենսաբաններն են հնարել դրանք: Մարդուց առաջ ոչինչ չի եղել: Մարդուց հետո, եթե նրա վերջը գա, ոչինչ չի լինի: Մարդուց դուրս ոչինչ չկա:

– Բայց ամբողջ տիեզերքը մեզնից դուրս է: Նայեք աստղերին: Նրանց մի մասը միլիոնավոր լուսային տարվա պատմություն ունի: Մենք երբեք չենք հասնի նրանց:

– Ի՞նչ են աստղերը,– անտարբեր ասաց Օ՛րայենը:– Այստեղից մի քանի կիլոմետր հեռու գտնվող կրակի կտորներ: Եթե ցանկանանք, կարող ենք հասնել նրանց: Կամ կարող ենք բնաջնջել: Երկիրը տիեզերքի կենտրոնն է: Արևն ու աստղերը պտտվում են նրա շուրջը:

Ուիլսթոնը մի ջղաձգական շարժում էլ արեց: Բայց այս անգամ ոչինչ չասաց: Օ՛րայենը շարունակեց, ասես պատասխանում էր նրա առարկությանը:

– Դա, իհարկե, պիտանի չէ որոշակի նպատակների համար: Երբ նավարկում ենք օվկիանոսով կամ կանխատեսում ենք խավարումը, հաճախ ավելի հարմար է ենթադրել, որ Երկիրը պտտվում է արևի շուրջը, և որ միլիոնավոր կիլոմետրերի վրա աստղեր կան: Բայց դրանից ի՞նչ: Կարծում եք՝ չե՞նք կարող ստեղծել աստղագիտության կրկնակի համակարգ: Աստղերը կարող են լինել մոտ կամ հեռու՝ կախված մեր ցանկությունից: Կարծում եք՝ մեր մաթեմատիկոսներն ի գորու չե՞ն դրան: Մոռացե՛լ եք կրկնամտքի մասին:

Ուիլսթոնը դարձյալ պառկեց մահձակալին: Ինչ էլ ասում էր, արագ պատասխանը մահակի պես տապալում էր նրան: Բայց նա գիտեր, գիտե՛ր, որ իրավացի է: Հավատը, որ մեր գիտակցությունից դուրս ոչինչ չկա... հաստատ կա այն հերքելու որևէ միջոց: Մի՞թե դա վաղուց մոլորություն չի համարվում: Նույնիսկ անուն ունի, միայն թե

Նա մոռացել էր: Օ'Բրայենի շուրթերին թույլ ժպիտ հայտնվեց, երբ նայեց Ուիլսթոնին:

– Ասել եմ ձեզ, Ուիլսթոն,– ասաց նա,– որ թույլ եք մետաֆիզիկայից: Բառը, որ փորձում եք հիշել, սոլիպսիզմն է: Բայց դուք սխալվում եք: Դա սոլիպսիզմ չէ: Հավաքական սոլիպսիզմ, եթե կուզեք: Բայց դա այլ բան է. իրականում՝ հակառակը: Շեղվեցինք թեմայից,– ավելացրեց նա այլ տոնով:– Իրական իշխանությունը, իշխանություն, որի համար ստիպված ենք պայքարել գիշեր ու ցերեկ, իշխանությունն է ոչ թե իրերի, այլ մարդկանց հանդեպ,– նա լռեց ու մի պահ նորից հայտնվեց դպրոցի տնօրենի դերում, որը հարցեր է տալիս խոստումնալից աշակերտին:– Մարդն ինչպե՞ս է իշխանություն հաստատում ուրիշ մարդու վրա, Ուիլսթոն:

Ուիլսթոնը մտածեց.

– Նրան տառապանք պատճառելով,– ասաց նա:

– Իրավացի եք: Նրան տառապանք պատճառելով: Հնազանդությունը բավական չէ: Եթե նա չտառապի, ինչպե՞ս կարող եք վստահ լինել, որ հնազանդվում է ձեր և ոչ թե իր կամքին: Իշխանությունը ցավ պատճառելու և ստորացնելու մեջ է: Իշխանությունը հետևյալն է. կտոր–կտոր անել մարդկանց մտքերը ու կրկին հավաքել նոր ձևով՝ ինչպես ինքդ ես ուզում: Հիմա հասկանո՞ւմ եք, թե ինչ աշխարհ ենք ստեղծում: Սա հիմար հեղուհստական ուտոպիայի ծիշտ հակառակն է, որ երևակայում էին հին բարեփոխողները: Վախի ու դավաճանության աշխարհը չարչարանք է, տրորողների ու տրորվողների աշխարհ, աշխարհ, որը բարեփոխվելով՝ ոչ թե պակաս, այլ *ավելի* անգույթ կդառնա: Մեր աշխարհում առաջընթացն ավելացնելու է ցավը: Հին քաղաքակրթությունները պնդում էին, որ հիմնվել են սիրո կամ արդարության վրա: Մերը հիմնված է ատելության վրա: Մեր աշխարհում չեն լինի այլ զգացմունքներ՝ բացի վախից, ցասումից, հրձվանքից ու ինքնանվաստացումից: Մենք կոչչացանք մնացած ամեն ինչ: Արդեն արմատախիլ ենք անում մտածողության եղանակները՝ նախահեղափոխական շրջանի

1984

մնացուկները: Կտրել ենք կապերը երեխայի ու ծնողի, մարդու և այլ մարդու, տղամարդու և կնոջ միջև: Ոչ ոք այլևս չի համարձակվում վստահել կնոջը, երեխային կամ ընկերոջը: Բայց ապագայում չեն լինի ո՛չ կանայք, ո՛չ ընկերներ: Ծնվելուն պես երեխաներին կխլեն մայրերից, ինչպես ծուն են հավից առնում: Սեռական բնագղն արմատախիլ կարվի: Վերարտադրողականությունը կդառնա ամենամյա ձևականություն, ինչպես մթերային քարտի թարմացումը: Կվերացնենք օրգազմը: Մեր նյարդաբանները հիմա աշխատում են այդ ուղղությամբ: Չի լինի հավատարմություն՝ բացի Կուսակցության հանդեպ հավատարմությունից: Չի լինի սեղձ բացի Մեծ եղբոր հանդեպ սիրուց: Չի լինի ծիծաղ՝ բացի պարտված թշնամու դեմ հաղթական ծիծաղից: Չեն լինի ո՛չ արվեստ, ո՛չ գրականություն, ո՛չ գիտություն: Երբ ամենակարող լինենք, գիտության կարիք այլևս չի լինի: Չի լինի տարբերություն գեղեցիկի և տգեղի միջև: Չեն լինի հետաքրքրություն և հաճույք կյանքի ընթացքի հանդեպ: Մնացած բոլոր հաճույքները կվերացվեն: Բայց միշտ, մի՛ մոռացեք սա, Ուի՛նսթոն, միշտ կլինի իշխանության արբեցում, որ մշտապես կաճի ու մշտապես կսրվի: Միշտ, ցանկացած պահի կլինի հաղթանակի հրճվանք, ցնծություն, երբ կոխտոտենք անօգնական թշնամուն: Եթե ձեզ պետք է ապագայի պատկերը, պատկերացրեք երկարաժիտ կոշիկ, որով տրորում են մարդու դեմքը. ընդմիջտ:

Նա լռեց, ասես սպասում էր, որ Ուի՛նսթոնը կխոսի: Ուի՛նսթոնը դարձյալ փորձեց կուչ գալ մահճակալի մեջ: Նա ոչինչ չէր կարող ասել: Սիրտն ասես սառած լիներ: Օ՛րբայենը շարունակեց.

– Ընդմիջտ հիշեք: Միշտ կլինի դեմք, որը կկոխտոտեն: Միշտ կլինի հերետիկոս՝ հասարակության թշնամի, որին կհաղթեն ու կնվաստացնեն: Այն ամենը, ինչի ենթարկվել եք մեր ձեռքում հայտնվելուց ի վեր, այդ ամենը կշարունակվի, ու դեռ ավելի վատ: Լրտեսությունը, մատնությունները, ձերբակալությունները, խոշտանազունները, մահապատիժները, անհետացումները երբեք չեն վերանա: Դա կլինի որքան սարսափի, այնքան էլ հաղթանակի աշխարհ:

Որքան հզոր լինի Կուսակցությունը, այնքան անհամբեր կլինի. որքան ընդդիմությունը թույլ լինի, այնքան բռնատիրությունը կուժեղանա: Գոլդաթայնը և Նրա հերետիկոսությունները միշտ կլինեն: Ամեն օր, ամեն վայրկյան դրանք կպարտվեն, կպատվազրկվեն, կենթարկվեն ծաղրի, նրանք վրա կթքեն, բայց նրանք կպահպանեն իրենց գոյությունը: Այս դրաման, որ խաղում եմ ձեզ հետ յոթ տարի, կշարունակվի նորից ու նորից, սերնդից սերունդ՝ միշտ ավելի նուրբ ձևով: Մեր տրամադրության տակ միշտ կլինի հերետիկոս, որը կճչա ցավից, կլինի կոտրված ու արհամարհելի, որն ի վերջո, փրկվելով ինքն իրենից, ինքնակամ մեր ոտքերի տակ սողալով, կզղջա: Սա է աշխարհը, որ պատրաստում ենք, Ուի՛նսթոն: Հաղթանակ հաղթանակի ետևից, ցնծություն ցնծության ետևից. ազդե՛լ, ազդե՛լ, ազդե՛լ իշխանության նյարդերի վրա: Ինչպես տեսնում եմ, սկսում եք հասկանալ, թե ինչպիսին է լինելու աշխարհը: Բայց վերջում ոչ միայն կհասկանաք: Դուք կընդունեք այն, կողջունեք և կդառնաք նրա մի մասը:

Ուի՛նսթոնը բավականաչափ ուշքի էր եկել, որ խոսեր:

- Չեք կարող,- թույլ-թույլ ասաց նա:

- Ի՞նչ եք ուզում ասել, Ուի՛նսթոն:

- Դուք չեք կարող ստեղծել ձեր նկարագրած աշխարհը: Դա երազ է: Անհնար է:

- Ինչո՞ւ:

- Անհնար է վախի, ատելության և դաժանության վրա քաղաքակրթություն հիմնել: Այն չի հարատևի:

- Ինչո՞ւ:

- Կենսունակ չի լինի: Կմասնատվի: Ինքնասպան կլինի:

- Անհեթեթություն է: Դուք հավատացած եք, որ ատելությունն ավելի հոգնեցնող է, քան սերը: Իսկ ինչո՞ւ: Եթե նույնիսկ այդպես լիներ, ի՞նչ կփոխվեր: Ենթադրենք, մենք որոշում ենք ավելի արագ մաշվել: Ենթադրենք, մարդկային կյանքն արագացնում ենք այնպես, որ մարդը ծերունի դառնա երեսուն տարեկանում: Միևնույն է,

1984

ի՛նչ կփոխվի: Չե՞ք հասկանում, որ անհատի մահը մահ չէ: Կուսակցությունն անմահ է:

Ինչպես միշտ, նրա ձայնը Ուի՛նսթոնին հուսահատության գիրկը գցեց: Ավելին, վախենում էր, որ եթե շարունակի վիճել, Օ'Բրայենը դարձյալ կդիմի թվատախտակին: Բայց չէր կարող լռել: Թույլ, առանց փաստարկների դարձյալ անցավ հարձակման. նրան ոչինչ չէր օգնում՝ բացի սարսափից, որ զգում էր Օ'Բրայենի խոսքերի հանդեպ:

– Չգիտեմ... Ինձ չի հետաքրքրում: Ձեզ չի հաջողվի: Ինչ-որ բան կհաղթի ձեզ: Կյանքը կհաղթի ձեզ:

– Մենք վերահսկում ենք կյանքը, Ուի՛նսթոն, նրա բոլոր մակարդակներում: Երևակայում եք, թե կա մարդկային էություն կոչվող մի բան, որին կվիրավորենք մեր գործողություններով, և որը կկանգնի մեր դեմ: Բայց մենք ենք ստեղծում մարդկային էությունը: Մարդիկ անսահման դյուրաբեկ են: Կամ գուցե վերադարձել եք ձեր երբեմնի գաղափարի՞ն, որ պրոլետարները կամ ստրուկները ոտքի կկանգնեն ու կտապալեն մեզ: Հանեք դա ձեր մտքից: Նրանք անօգնական են, ինչպես կենդանիները: Մարդկությունը Կուսակցությունն է: Մյուսները, որ դրսում են, ոչ մի արժեք չունեն:

– Ինձ չի հետաքրքրում: Ի վերջո նրանք կհաղթեն ձեզ: Վաղ թե ուշ նրանք կտեսնեն, թե ով եք իրականում, ու ձեզ պատառպատառ կանեն:

– Դուք որևէ փաստ ունե՞ք, որ նման բան կկատարվի: Իսկ ինչո՞ւ պիտի լինի:

– Ոչ: Ես հավատում եմ: *Գիտեմ*, որ կործանվելու եք: Այս տիեզերքում կա ինչ-որ բան, չգիտեմ, թե ինչ, ինչ-որ հոգի, ինչ-որ սկզբունք, որ երբեք հնարավոր չէ հաղթահարել:

– Դուք հավատո՞ւմ եք Աստծուն, Ուի՛նսթոն:

– Ոչ:

– Այդ դեպքում ո՞րն է այն սկզբունքը, որ կհաղթի մեզ:

– Չգիտեմ: Մարդու ոգին:

– Իսկ դուք ձեզ մարդ համարո՞ւմ եք:

– Այո:

– Եթե դուք մարդ եք, Ուի՛նսթոն, ապա վերջին մարդն եք: Ձեր տեսակը բնաջնջվել է. մենք կժառանգենք երկիրը: Հասկանո՞ւմ եք, որ մենակ եք: Դուք դուրս եք պատմությունից, դուք գոյություն չունեք, – նա հանկարծ դաժանացավ ու կտրուկ ասաց:– Եվ ձեզ բարոյապես մեզնից գերազա՛նց եք համարում՝ ձեր ստերով ու դաժանությա՛մբ:

– Այո, ես ինձ գերազանց եմ համարում:

Օ՛րբայենը լուռ էր: Ուի՛նսթոնը երկու ուրիշ ձայն լսեց: Շուտով ճանաչեց դրանցից մեկը. իր ձայնն էր: Իր ու Օ՛րբայենի գրոյցի ձայնագրությունն էր՝ այն գիշեր, երբ ինքը մտավ Եղբայրության մեջ: Նա լսեց, թե ինչպես է խոստանում ստել, գողանալ, կեղծել, սպանել, խրախուսել թմրամոլությունն ու մարմնավաճառությունը, տարածել վնասերական հիվանդություններ, երեխայի դեմքին արջասպ լցնել: Օ՛րբայենը ձեռքի անհամբեր շարժում արեց, կարծես ուզում էր ասել, որ այլևս չարժի լսել: Հետո սեղմեց կոճակը, ու ձայները լռեցին:

– Վեր կացեք մահճակալից, – ասաց նա:

Կապերը թուլացել էին: Ուի՛նսթոնը կռացավ հատակին և անհաստատ ոտքի կանգնեց:

– Դուք վերջին մարդն եք, – ասաց Օ՛րբայենը:– Դուք մարդկային հոգու պաշտպան եք: Դուք ձեզ պետք է տեսնեք այնպիսին, ինչպիսին կաք: Հանվե՛ք:

Ուի՛նսթոնը քանդեց թուրը, որը պահում էր կոմբինեզոնը: Շղթայիկը վաղուց էին պոկել: Նա չէր հիշում՝ ձերբակալությունից ի վեր գոնե մի անգամ շոր հանե՞լ էր: Կոմբինեզոնի տակից մարմինը պատել էին կեղտոտ դեղնավուն ցնցոտիները. դժվարությամբ ճանաչեց նախկին ներքնաշորերի մնացորդները: Երբ հագուստը նետեց հատակին, տեսավ, որ սենյակի հեռավոր անկյունում եռակողմ հայելի կա: Մոտեցավ դրան ու քարացավ: Ու ճչաց: Ակամա:

– Շարունակեք, – ասաց Օ՛րբայենը:– Կանգնեք հայելու թևերի միջև: Ձեզ կողքից էլ կտեսնեք:

1984

Ուիսսթոնը քարացել էր վախից: Հայելուց նրան էր մոտենում կորացած, մոխրագույն, խրտվիլականման մի երևույթ: Նրա իրական արտաքինը վախեցնող էր ոչ միայն այն պատճառով, որ գիտեր՝ դա ինքն էր, այլև ինքնին: Նա մոտեցավ հայելուն: Թվաց՝ արարածի դեմքը դուրս է ցցվել կորացած կեցվածքի պատճառով: Կալանավորի չարչրկված դեմք՝ դուրս պրծած ճակատով, լերկ գանգ, ներս ընկած քիթ, ասես ցնջխված այտոսկրեր, կատաղի ու զգուշավոր հայացք: Այտերը կնճռոտ էին, բերանն ասես սուզված լիներ դրանց մեջ: Դա հաստատ իր դեմքն էր, բայց նրան թվում էր՝ դեմքն ավելի շատ է փոխվել, քան ներսը: Նրա ցուցադրած զգացմունքները տարբերվում էին իր զգացածից: Լրիվ ճաղատացել էր: Առաջին պահին մտածեց, որ մազերն են սպիտակել, բայց իրականում գանգը մոխրագույն էր դարձել: Բացի ձեռքերից ու դեմքի շրջագծից, մարմինն ամբողջովին մոխրագույն էր՝ հին ու ներծծված կեղտից: Կեղտի տակ, այսուայնտեղ վերքերի կարմիր սպիներ էին, իսկ կոճի մոտ երակային խոցը վերածվել էր բորբոքված գանգվածի, որից մաշկի թեփիկներ էին պոկվում: Բայց ամենասարսափելին մարմնի հյուծվածությունն էր: Կողերի գլանը նեղ էր, ինչպես խրտվիլակինը. ոտքերն այնպես էին բարակել, որ ծնկներն ազդրերից հաստ էին: Հիմա նա տեսնում էր, թե Օ'Բրայենն ինչ նկատի ուներ՝ խոսելով կողքից նայելու մասին: Ողնաշարի թեքությունն ապշեցնող էր: Բարակ ուսերը կռացել էին առաջ՝ այնպես, որ կրծքավանդակին խոռոչ էր գոյացել, վտիտ պարանոցն ասես կրկնակի ծավվել էր գանգի ծանրության տակ: Կարելի էր ասել, որ դա վաթսուն տարեկան տղամարդու մարմին է, որը տառապում է ինչ-որ մահացու հիվանդությունից:

– Երբեմն մտածում էիք,– ասաց Օ'Բրայենը,– որ իմ դեմքը՝ Ներքին կուսակցության անդամի դեմքը, ծեր է ու մաշված: Իսկ ի՞նչ կարծիքի եք ձեր դեմքի մասին:

Նա բռնեց Ուիսսթոնի ուսն ու նրան շրջեց իր կողմը:

– Տեսեք, թե ինչ վիճակում եք,– ասաց նա:– Նայեք՝ կեղտն ինչպես է ներծծվել ձեր ամբողջ մարմնի մեջ: Նայեք՝ ինչ կեղտ կա ձեր

ուղքերի մատների արանքում: Նայեք ձեր ուղքի թարախոտ զզվելի վերքին: Գիտե՞ք, որ այժի պես գարշահոտում եք: Իսկ գուցե դադարե՞լ եք նկատել: Նայե՞ք՝ ինչպես եք հյուժվել: Տեսնո՞ւմ եք: Ես կարող եմ բթամատով ու ցուցամատով բռնել ձեր մկանը: Կարող եմ կծել ձեր պարանոցը, ինչպես գազար կկծեի: Գիտե՞ք, որ մեր ձեռքն ընկնելուց ի վեր քսանհինգ կիլոգրամ նիհարել եք: Նույնիսկ ձեր մազերն են բռերով թափվում: Նայե՞ք, - նա բռնեց Ուինսթոնի գլխից ու մի խուրձ մազ պոկեց: - Բացե՛ք բերանը: Ի՛նը, տասը, տասնմեկ ատամ է մնացել: Քանի՞ ատամ ունեիք, երբ եկաք մեզ մոտ: Ասենք, մնացած մի քանիսն էլ պոկվելու վրա են: Տեսեք:

Նա ցուցամատով և ուժեղ բույժ մատով քաշեց մնացած դիմացի ատամներից մեկը: Սուր ցավը խայթեց Ուինսթոնի կզակը: Օ՛Բրայենը արմատով պոկեց առջևի ատամը: Ու շարտեց հատակին:

- Դուք փտում եք, - ասաց նա, - քայքայվում եք: Ի՞նչ եք դուք: Կեղտի պարկ: Հիմա շրջվեք ու նորից նայեք հայելու մեջ: Տեսնո՞ւմ եք՝ ով է նայում ձեզ: Վերջին սա՛րդը: Եթե դուք մարդ եք, ապա սա է մարդկությունը: Հիմա դարձյալ հագեք ձեր հագուստը:

Ուինսթոնը սկսեց հագնվել դանդաղ, անվճռական շարժումներով: Մինչև հիմա կարծես չէր նկատել՝ որքան նիհար ու թույլ է: Միայն մի միտք կար ուղեղում. երևի այստեղ է շատ ավելի վաղուց, քան պատկերացնում էր: Հետո հանկարծ, երբ թշվառ ցնցոտիները քաշեց մարմնին, նրան տիրեց ափսոսանքն իր կործանված մարմնի համար: Չհասկանալով, թե ինչ է անում, ընկավ մահճակալի կողքին դրված աթոռակին ու սկսեց լաց լինել: Գիտեր իր տգեղության, անվայելույց տեսքի մասին. նա ոսկորների մի կապոց էր՝ կեղտոտ ներքնաշորերով, որ նստել արտասվում էր ծակող սպիտակ լույսի տակ, բայց չէր կարող դադարել: Օ՛Բրայենը գրեթե քնքորեն ձեռքը դրեց նրա ուսին:

- Հավերժ այդպես չի լինի, - ասաց նա: - Դուք կարող եք խուսափել դրանից, եթե ցանկանաք: Ամեն ինչ կախված է ձեզնից:

- Դո՛ւք, - հեծեճաց Ուինսթոնը: - Դուք եք ինձ հասցրել այս վիճակին:

1984

– Ո՛հ, Ուի՛նսթոն, դուք եք ձեզ հասցրել այս վիճակին: Դուք ընդունեցիք դա, երբ ընդդիմացաք Կուսակցությանը: Ամեն ինչ սկսվեց առաջին գործողությունից: Չի եղել ոչինչ, որ հնարավոր չէր կանխատեսել:

Նա մի փոքր դադար տվեց, ապա շարունակեց.

– Մենք ծեծել ենք ձեզ, Ուի՛նսթոն: Մենք կոտորել ենք ձեզ: Տեսաք, թե ինչպիսին է ձեր մարմինը: Ձեր միտքը նույն վիճակում է: Ձե՛մ կարծում, թե ձեր մեջ հպարտություն է մնացել: Ձեզ տրորել են ոտքերով, մտրակել ու վիրավորել, դուք ճչացել եք ցավից, թավալվել եք հատակին՝ ձեր իսկ արյան ու փսխուքի մեջ: Գուցե եք աղերսել, դավաճանել եք բոլորին և ամեն ինչի: Մտածե՛լ եք ձեր անկման մասին, որի հավասարը չկա:

Ուի՛նսթոնն այլևս չէր լալիս. արցունքներն իրենք իրենց էին հոսում: Նա դեմքը դարձրեց Օ՛Բրայենին:

– Ես չեմ դավաճանել Ջուլիային, – ասաց նա:

Օ՛Բրայենը մտածկոտ նայեց Ուի՛նսթոնին:

– Այո՛, – ասաց նա, – այո՛: Միանգամայն ճիշտ է: Դուք չեք դավաճանել Ջուլիային:

Օ՛Բրայենի հանդեպ յուրահատուկ ակնածանքը, որ թվում էր՝ հնարավոր չէ վերացնել, դարձյալ ողողեց Ուի՛նսթոնի սիրտը: «Ի՛նչ խելացի է, – մտածեց նա, – ի՛նչ խելացի է»: Օ՛Բրայենը միշտ հասկացել էր նրան: Աշխարհում ցանկացած ոք անմիջապես կասեր, որ նա դավաճանել է Ջուլիային: Բայց ինչո՞ւ դա նրանից չէին կորզել տանջանքներով: Նրանց պատմել էր այն ամենը, ինչ գիտեր Ջուլիայի մասին, սովորությունները, բնավորությունը, անցյալ կյանքը. ամենայն մանրամասնությամբ խոստովանել էր այն ամենը, ինչ պատահել էր իրենց հանդիպումների ժամանակ, այն ամենը, ինչ ինքն ասել էր նրան, ու նա՛ իրեն, սև շուկայից գնած ուտելիքները, իրենց դավաճանությունները, անհասկանալի դավադրությունը Կուսակցության դեմ. ամեն ինչ: Բայց նա չէր դավաճանել Ջուլիային այնպես, ինչ իմաստով հիմա մտածում էր: Նա չէր դադարել սիրել

Ջուլիային. Նրա հանդեպ իր զգացմունքները Նույնն էին մնացել: Օ'Բրայենը հասկացել էր նրան. բացատրության կարիք չկար:

- Ասացեք,- հարցրեց նա,- ինձ ե՞րբ են գնդակահարելու:

- Գուցե և շատ ուշ,- ասաց Օ'Բրայենը:- Ձեր գործը բարդ է: Բայց մի՛ հուսահատվեք: Բոլորն էլ վաղ թե ուշ ապաքինվում են: Ի վերջո, մենք կգնդակահարենք ձեզ:

IV

Նա շատ ավելի լավ էր զգում: Գիրանում և ուժ էր հավաքում օրեցօր, եթե իհարկե կարելի էր խոսել օրերի մասին:

Սպիտակ լույսն ու գվվոցը առաջվա պես էին, բայց խուցը փոքր-ինչ հարմարավետ էր նախորդներից: Սենյակում աթոռ կար, որի վրա կարելի էր նստել, իսկ տախտակե մահճակի վրա՝ բարձ ու ներքնակ: Նրան տարել էին բաղնիք, թույլ էին տալիս, որ հաճախ լվացվի անագե լվացարանի մեջ: Նույնիսկ տաք ջուր էին տալիս լվացվելու համար: Նոր ներքնաշորեր ու մի ձեռք մաքուր վերնազգեստ էր ստացել: Երակային վերքի վրա հանգստացնող քսուք էին քսել: Հեռացրել էին ատամների մնացորդներն ու նոր ատամ-նաշար դրել:

Երևի շաբաթներ կամ ամիսներ էին անցել: Ցանկության դեպքում հիմա հնարավոր էր հետևել ժամանակի ընթացքին, քանի որ նրան կարծես թե կանոնավոր էին կերակրում: Ենթադրում էր, որ իրեն մտունդ են տալիս օրական երեք անգամ. երբեմն հարցնում էր իրեն՝ գիշերն է ուտում, թե՞ ցերեկը: Ուտելիքը զարմանալիորեն լավն էր. ամեն երրորդին՝ միս: Մի անգամ նույնիսկ մի տուփ ծխախոտ բերեցին: Լուցկի չուներ, բայց անխոս պահակը, որ ուտելիք էր բերում, վառում էր ծխախոտը: Երբ առաջին անգամ փորձեց ծխել, սրտխառնոց զգաց, բայց դիմացավ ու երկար օգտագործեց տուփը՝ ամեն անգամ ուտելուց հետո կես ծխախոտ ծխելով:

1984

Նրան սպիտակ թերթաքար էին տվել, որի անկյունում մատիտ էր ամրացված: Սկզբում Ուիլսոնը չօգտվեց դրանից: Նույնիսկ արթուն ժամանակ լրիվ թմրած էր: Հաճախ մի ճաշից մյուսը գրեթե անշարժ պառկում էր, երբեմն քնում, իսկ երբեմն էլ հայտնվում էր աղոտ անուրջների մեջ, երբ շատ դժվար էր բացել աչքերը: Արդեն ընտելացել էր դեմքին ընկած ուժեղ լույսի տակ քնելուն: Տարբերություն չկար, միայն թե երազները հիմա փոքր-ինչ կապված էին իրար հետ: Ամբողջ ընթացքում հաճախ երազներ էր տեսնում ու միշտ՝ երջանիկ երազներ: Նա Ոսկե երկրում էր կամ Նստած էր հսկայական փառահեղ, արևի լույսով ողողված ավերակների մեջ մոր, Զուլիայի, Օ'Բրայենի հետ, ոչինչ չէր անում, միայն Նստում էր արևի տակ ու խոսում խաղաղ բաներից: Արթուն ժամանակ գերազանցապես մտածում էր իր երազների մասին: Հիմա, երբ ցավի ազդակը վերացել էր, նա ասես կորցրել էր մտավոր ջանք գործադրելու ունակությունը: Չէր ձանձրանում, զրուցելու կամ ցրվելու ցանկություն չուներ: Միանգամայն գոհ էր, որ մենակ է, որ իրեն չեն ծեծում կամ հարցաքննում, որ կուշտ է և մաքուր տեսք ունի:

Ժամանակի ընթացքում սկսեց ավելի քիչ քնել, բայց անկողնուց վեր կենալու ցանկություն չուներ: Նրան մի բան էր պետք. հանգիստ պառկել և զգալ, թե ուժն ինչպես է կուտակվում մարմնում: Շոշափում էր մարմնի տարբեր մասերը՝ փորձելով համոզվել՝ արդյոք պատրանք չէ՞, որ մկանները կլորանում են, իսկ մաշկը՝ պրկվում: Ի վերջո, լիովին համոզվեց, որ գիրանում է. հիմա ազդրերը զգալիորեն ավելի հաստ էին, քան ծնկները: Հետո, նախ դժկամորեն, սկսեց կանոնավոր մարզվել: Շատ շուտով նրան հաջողվեց քայլել երեք կիլոմետր՝ քայլերով չափելով խուցը, և կորացած ուսերը սկսեցին ուղղվել: Ավելի բարդ վարժություններ փորձեց և ապշած ու նվաստացած պարզեց, թե ինչ չի կարող անել: Կարող է տեղաշարժվել միայն քայլելով, չի կարող աթոռակը երկար պահել պարզած թևով, չի կարող կանգնել մի ոտքի վրա՝ առանց ընկնելու: Նա պազեց ու պարզեց, որ միայն ազդրի ու սրունքի տանջալի ցավով է

հաջողվում ուռքի կանգնել: Ուղիղ պառկեց փորին ու փորձեց ձգվել ձեռքերի վրա: Բայց անհույս էր, ոչ մի սանտիմետր չկարողացավ բարձրանալ հատակից: Սակայն մի քանի օր անց, ևս մի քանի անգամ սնվելուց հետո այդ սխրանքը հաջողվեց: Որոշ ժամանակ անց կարողացավ նույնիսկ վեց անգամ անընդմեջ ձգվել: Նա սկսեց հպարտանալ իր մարմնով ու երբեմն-երբեմն փայփայել հավատը, որ դեմքը նույնպես վերագտնում է սովորական տեսքը: Միայն այն ժամանակ, երբ պատահաբար դիպավ ճաղատ գլխին, հիշեց սպիապատ ու ավերակ դեմքը, որ նայում էր իրեն հայելուց:

Նրա միտքն արթնացավ: Նստեց տախտակե մահճակալին, դեմքը հենեց պատին, թերթաքարը դրեց ծնկներին ու սկսեց զբաղվել ինքնակրթությամբ:

Նա հանձնվել էր. դա վճռված էր: Իրականում, ինչպես հիմա էր հասկանում, պատրաստ էր հանձնվել որոշում կայացնելուց շատ առաջ: Սկսած այն պահից, երբ հայտնվեց Սիրո նախարարությունում, ո՛չ, նույնիսկ այն բույներին, երբ ինքն ու Ջուլիան անօգնական կանգնած էին սենյակում, իսկ հեռէկրանից հնչող երկաթե ձայնը հրահանգում էր, թե ինչ անեն, նա գիտակցեց, թե որքան թեթևամիտ ու մակերեսային էին Կուսակցության իշխանությանն ընդդիմանալու իր փորձերը: Հիմա գիտեր, որ Մտքի ոստիկանությունը յոթ տարի հետևել է իրեն, ինչպես բզեզին՝ խոշորացույցով: Չկար ոչ մի ֆիզիկական գործողություն, բարձրաձայն խոսք, որ նրանք չէին նկատել, ոչ մի միտք, որ չէին կռահել: Նույնիսկ օրագրի կազմի վրա հայտնված ճերմակ փոշեհատիկը զգուշորեն դրել էին տեղը: Նրանք Ուինսթոնի համար միացրել էին ձայնագրություններ, ցույց էին տվել լուսանկարներ: Այդ թվում և՛ Ջուլիայի ու իր լուսանկարները: Այո, նույնիսկ... Նա այլևս չէր կարող պայքարել Կուսակցության դեմ: Բացի այդ, Կուսակցությունն իրավացի էր: Հավանաբար իրավացի էր. ինչպե՞ս կարող է սխալվել անմահ, հավաքական ուղեղը: Ի՞նչ արտաքին չափանիշով կարելի է ստուգել նրա դատողությունները: Ողջամտությունը վիճակագրական

1984

երևույթ է: Պետք է միայն մի բան՝ սովորել մտածել նրանց պես: Միայն դա:

Մատների մեջ մատիտը հաստ ու անշտորիք էր թվում: Նա սկսեց գրի առնել գլխում ծագած մտքերը: Նախ գրեց խոշոր, ծուռուսուռ մեծատառերով.

ԱԶՋՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՏՐԿՈՒԹՅՈՒՆ Է

Հետո գրեթե միանգամից՝ դրա տակ.

ԵՐԿՈՒ ԳՈՒՄԱՐՎԾ ԵՐԿՈՒ ՀԱՎԱՍԱՐ Է ՀԻՆԳ

Բայց հետո մի տեսակ դադար եղավ: Միտքը, կարծես ինչ-որ բանից վարանելով, ի վիճակի չէր կենտրոնանալ: Գիտեր՝ որն է հաջորդ միտքը, բայց չէր կարողանում հիշել: Իսկ երբ հիշում էր, դրան հասնում էր միայն դատողությունների միջոցով. միտքը ինքնաբերաբար չէր գալիս: Նա գրեց.

ԱՍՏՎԱԾ ՈՒՃ Է

Նա ընդունեց ամեն ինչ: Անցյալը փոփոխելի է: Անցյալը երբեք չի փոխվել: Օվկիանիան պատերազում է Արևելաասիայի դեմ: Օվկիանիան միշտ էլ պատերազմել էր Արևելաասիայի դեմ: Ջոնսը, Աարոնսոնը և Ռադերֆորդը մեղավոր էին այն հանցագործությունների համար, որոնց մեջ մեղադրվում էին: Ինքը երբեք չէր տեսել նրանց մեղքը հերքող լուսանկարը: Այն երբեք էլ գոյություն չի ունեցել, ինքը հորինել է: Հիշեց, որ հակառակն ապացուցող փաստեր էր հիշում, բայց դրանք կեղծ հիշողություններ էին, ինքնախաբեության արդյունք: Ինչ հեշտ էր ամեն ինչ: Միայն հնագանդվիր, մնացածն ինքն իրեն կգա: Դա նման էր հոսանքին հակառակ լողալուն. որքան շատ ես պայքարում, այնքան հոսանքը հետ է շարտում քեզ, հետո

հանկարծ որոշում ես շրջվել ու գնալ Նրա ուղղությամբ և ոչ հակառակ: Ոչինչ չէր փոխվել, բացի սեփական վերաբերմունքից. ամեն դեպքում, կատարվել էր Նախասահմանվածը: Նա չէր հասկանում, թե ինչու է ապստամբել: Ամեն ինչ հեշտ էր, բացի...

Ցանկացած բան կարող էր ճիշտ լինել: Այսպես կոչված՝ բնության օրենքներն անհերթելիություն են: Ձգողականության օրենքն անհերթելիություն է: «Եթե ցանկանամ,- ասել էր Օ'Բրայենը,- կարող եմ օձառի պղպջակի պես թռչել հատակից»: Ուինսթոնը մշակել էր Նրա միտքը: «Եթե նա *կարծում է*, որ կարող է թռչել հատակից, ու եթե ես միաժամանակ *մտածեմ*, որ տեսնում եմ դա, ապա այդպես էլ կա»: Հանկարծ, ինչպես խորտակված նավի բեկորն է հայտնվում ջրի երեսին, Նրա գլխում միտք ծագեց. «Իրականում նման բան չկա: Մենք երևակայում ենք: Դա պատրանք է»: Բայց անմիջապես վանեց այդ միտքը: Ակնհայտ սխալ էր: Ենթադրում էր, որ ինչոր տեղ՝ մարդուց դուրս, գոյություն ունի «իրական» աշխարհ, որտեղ տեղի են ունենում «իրական» դեպքեր: Բայց ինչպե՞ս կարող էր նման աշխարհ գոյություն ունենալ: Իրերի մասին մենք գիտենք այն, ինչ կա մեր մտքում: Ամեն ինչ կատարվում է մարդու գիտակցության մեջ: Այն, ինչ կատարվում է բոլորի գիտակցության մեջ, իսկապես կատարվում է:

Նա հեշտությամբ գտավ իր սխալը, և կրկին սխալվելու վտանգ այլևս չկար: Այնուամենայնիվ, գիտակցում էր, որ իր հետ այլևս նման բան չի լինի: Երբ որևէ վտանգավոր միտք ծագի, մտքում պետք է առաջանա կույր կետ: Գործընթացը պետք է լինի ավտոմատ, քնազդային: Նորալեզվում դա կոչվում է *հանցականք*:

Նա սկսեց մարզել հանցականքը: Իրեն պնդումներ էր առաջարկում. «Կուսակցությունն ասում է, որ երկիրը հարթ է», «Կուսակցությունն ասում է, որ սառույցը ջրից ծանր է», և սովորում էր չտեսնել կամ չհասկանալ դրանց հակասող փաստարկները: Հեշտ չէր: Անհրաժեշտ էր կշռադատելու և իմպրովիզացիայի ունակություն: Թվաբանական խնդիրները, օրինակ՝ այնպիսիք, որ

1984

ծագում էին «երկու գումարած երկու հավասար է հինգ» պնդումից, դուրս էին նրա մտավոր կարողություններից: Պահանջվում էր նաև մտքի ձկունություն, նախ՝ տրամաբանությունից նրբորեն օգտվելու, իսկ հաջորդ պահին՝ ամենակոպիտ տրամաբանական սխալները չգիտակցելու ունակություն: Հիմարությունը նույնքան անհրաժեշտ էր, որքան խելքը, և նույնքան դժվար էր ձեռք բերել:

Այդ ամբողջ ընթացքում նրա միտքը զբաղեցնում էր մի հարց՝ ե՞րբ կգնդակահարեն իրեն: «Ամեն ինչ կախված է ձեզնից», – ասել էր Օ'Բրայենը, բայց Ուինսթոնը գիտեր, որ չի կարող մոտեցնել այն որևէ գիտակցված գործողությամբ: Գուցե տասը րոպե, իսկ գուցե՝ տասը տարի անց: Հնարավոր է, որ տարիներ շարունակ իրեն պահեն միտեղանոց բանտախցում, գուցե ուղարկեն աշխատանքային գաղութ, գուցե որոշ ժամանակով ազատ արձակեն, ինչպես երբեմն անում էին: Միանգամայն հնարավոր է, որ իր բանտարկության և հարցաքննության ամբողջ դրաման դարձյալ կրկնվի գնդակահարությունից առաջ: Մի բան հաստատ էր. մահը երբեք չի գալիս, երբ նրան սպասում ես: Ավանդույթ է, ավանդույթ, որի մասին ոչ ոք չի խոսում. ինչ-որ տեղից գիտես, բայց երբեք չես լսել դրա մասին. գնդակահարում են թիկունքից. միշտ ծոծրակին, երբ քայլում ես միջանցքով՝ մի խցից մյուսը:

Մի օր, թեև «մի օրը» ձիշտ բառ չէ. գուցե հենց գիշերվա կեսին. մի անգամ նա ընկավ տարօրինակ, երանելի մոռացության գիրկը: «Քայլում էր միջանցքով՝ սպասելով գնդակի: Գիտեր՝ դա լինելու է հաջորդ իսկ պահին: Ամեն ինչ որոշված էր, դասավորված, վճռված: Այլևս չկային կասկածներ, փաստարկներ, չկար ցավ, չկար վախ: Մարմինն առողջ էր և ուժեղ: Նա թեթև քայլում էր, ուրախանում իր շարժումներից և թվում էր՝ քայլում է արևի լույսի տակ: Նա այլևս Սիրո նախարարության նեղ ու սպիտակ միջանցքներում չէր, այլ արևի լույսով ողողված, մեկ կիլոմետր լայնությամբ հսկա միջանցքում, ու թվում էր՝ շարժվում է թմրազառանցանքի մեջ: Նա Ոսկե երկրում էր, քայլում էր հին, ճագարների կրծոտած մարգագետնի արահետով:

Զգում էր՝ ոտքերի տակ ինչպես է զսպանակվում տորֆը, իսկ արևը տաքացնում դեմքը: Մարգագետնի եզրին թույլ օրորվում էին ծփիները, ինչ-որ տեղ՝ հեռվում, գետակ կար, իսկ ուռիների տակ՝ կանաչ ավազաններում, մանրածածաններ էին լողում:

Հանկարծ սարսափահար ցնցվեց: Ողնաշարը պատվեց քրտինքով: Նա լսեց իր ճիչը.

– Զո՛ւլիա, Զուլիա: Զուլիա, իմ սե՛ր: Զո՛ւլիա:

Մի պահ թվաց՝ Զուլիան կողքին է: Բայց ոչ միայն կողքին, այլև իր ներսում: Ասես մտել էր մաշկի հյուսվածքների մեջ: Այդ պահին սիրում էր Զուլիային ավելի ուժգին, քան երբ միասին էին և ազատ: Նաև գիտեր, որ նա կա ինչ-որ տեղ, դեռ ողջ է և իր օգնության կարիքն ունի:

Նա հենվեց մահճակալին ու փորձեց հավաքել մտքերը: Ի՞նչ արեց: Մի պահ տևած թուլությամբ քանի՞ տարով երկարացրեց իր ստրկությունը:

Ապա դրսից ոտնաձայներ լսեց: Անհնար էր, որ նման պոռթկումն անպատիժ մնար: Հիմա նրանք կիմանան, եթե, իհարկե, դեռ չգիտեն, որ նա խախտում է պայմանավորվածությունը: Հնազանդվել էր Կուսակցությանը, բայց առաջվա պես ատում էր Կուսակցությունը: Նախկինում արտաքին համաձայնության քողի տակ թաքցրել էր հերետիկոսի իր մտքերը: Հիմա նահանջել էր ևս մի քայլով. բանականությամբ հնազանդվել էր, բայց հույս ուներ անաղարտ պահել սիրտը: Գիտեր, որ սխալվում է, բայց նախընտրում էր սխալվել: Նրանք կհասկանան. Օ՛րբայենը կհասկանա: Իսկ այդ հիմար ճչոցը մատնեց իրեն:

Նա ստիպված կլինի ամեն ինչ սկսել նորից: Գուցե տարիներ տևի: Ուիսթոնը ափը քսեց դեմքին, որպեսզի լավ պատկերացնի, թե ինչպիսին է: Այտերի վրա խոր ակոսներ կային, այտոսկրերը սրվել էին, քիթը՝ տափակել: Բացի այդ, վերջին անգամ իրեն հայելու մեջ տեսնելուց հետո լրիվ նոր ատամնաշար էին դրել: Հեշտ չէր պահպանել անթափանցությունը, երբ չգիտես, թե ինչպիսին է

դեմքը: Ամեն դեպքում, միայն դիմագծերը վերահսկելը բավական չէր: Նա առաջին անգամ գիտակցեց, որ եթե ուզում ես գաղտնիք պահել, այն պետք է թաքցնես քեզնից: Պետք է իմանաս, որ կա, բայց քանի դեռ անհրաժեշտ չէ, թույլ տաս, որ գիտակցությանդ մեջ մուտք գործի այն տեսքով, որին կարելի է անուն տալ: Այսուհետ նա ոչ միայն պետք է ճիշտ մտածի, այլև ճիշտ զգա, տեսնի ճիշտ երազներ: Միևնույն ժամանակ պետք է ատելությունը կողպած պահի իր ներսում, ինչպես մատերիայի մաս, որ իր մասն է, բայց միևնույն ժամանակ անջատ է իրենից, գոյացության պես:

Մի օր Նրանք կորոշեն գնդակահարել իրեն: Անհայտ է՝ երբ, բայց վայրկյաններ առաջ գուցե հնարավոր լինի կռահել: Կրակում են միշտ թիկունքից, երբ քայլում ես միջանցքով: Տասը վայրկյանը բավական կլինի: Այդ պահին իր ներքին աշխարհը կարող է գլխիվայր շուռ գալ: Եվ հետո հանկարծ, առանց մի բառ արտաբերելու, առանց երերուն քայլերի, առանց դիմագծերի փոփոխության, հանկարծ կնետի դիմակը, և ատելությունը կպայթի: Ատելությունը կլցնի իր ներսը ահռելի մռնչացող բոցի նման: Եվ գրեթե նույն պահին դուրս կթռչի գնդակը՝ չափազանց ուշ կամ չափազանց շուտ: Նրանք իր ուղեղը փշուր-փշուր կանեն մինչև բուժելը: Հրետիկոսի միտքը չի պատժվի, չի ապաշխարի, երբեք չի ընկնի Նրանց ձեռքը: Նրանք կկրակեն իրենց իդեալի վրա: Մեռնել՝ Նրանց ատելով. ահա թե որն է ազատությունը:

Նա փակեց աչքերը: Դա ավելի դժվար էր, քան մտավոր կարգուկանոն ընդունելը: Դա հավասար է ինքնառնչացման, ինքնախեղման: Սուզվել էր ամենակեղտոտ կեղտի մեջ: Իսկ ի՞նչն էր ամենասարսափելին, ամենազզվելին: Նա մտածում էր Մեծ եղբոր մասին: Հսկայական դեմքը (պաստառների վրա անընդհատ տեսնելով այդ դեմքը՝ մտածում էր, որ այն մեկ մետր լայնություն ունի)՝ թանձր սև բեղերով ու աչքերով, որոնք երբեք չէր կտրում քեզնից, ասես իր կամքից անկախ հառնում էր աչքերի առաջ: Իրականում ի՞նչ զգացմունքներ էր տածում Մեծ եղբոր հանդեպ:

Միջանցքում ծանր ոտնաձայներ լսվեցին: Պողպատե դուռը շառաչյունով բացվեց: Օ'Բրայենը մտավ խուց: Նրա թիկունքում մոմե դեմքով սպան և սև համազգեստով պահնորդներն էին:

- Վեր կացեք,- ասաց Օ'Բրայենը:- Եկեք այստեղ:

Ուինսթոնը կանգնեց նրա դիմաց: Օ'Բրայենն իր ամուր ձեռքերով բռնեց Ուինսթոնի ուսերն ու ուշադիր նայեց նրան:

- Մտածում էիք՝ կխաբե՞ք ինձ,- ասաց նա:- Հիմարություն է: Ուղիղ կանգնեք: Նայեք դեմքիս:

Նա լռեց, ապա շարունակեց ավելի մեղմ ձայնով:

- Դուք ուղղվում եք: Ինտելեկտուալ առումով շատ քիչ խնդիրներ ունեք: Միայն թե զգացմունքային առումով ոչ մի առաջընթաց չկա: Ասացեք ինձ, Ուինսթոն, և հիշեք՝ չստե՛լ. դուք գիտեք, որ դժվար է ինձնից սուտ թաքցնել. ասացեք՝ իրականում ինչպե՞ս եք վերաբերվում Մեծ եղբորը:

- Ատում եմ նրան:

- Ատում եք նրան: Լավ: Ուրեմն ժամանակն է, որ անեք վերջին քայլը: Դուք պետք է սիրեք Մեծ եղբորը: Հնազանդվելը բավական չէ. պետք է սիրեք նրան:

Օ'Բրայենը թողեց Ուինսթոնի ուսերը ու նրան թեթև հրեց պահակների կողմը:

- Սենյակ 101,- ասաց նա:

V

Բանտարկության յուրաքանչյուր փուլում Ուինսթոնը գիտեր կամ կարծում էր՝ գիտի, թե առանց պատուհանների շենքի կոնկրետ որ մասում է: Գուցե օդի ճնշման ինչ-որ տարբերություն էր զգում: Խցերը, որտեղ պահակները ծեծում էին իրեն, գետնից ներքև էին: Սենյակը, որտեղ Օ'Բրայենը հարցաքննել էր իրեն, բարձր էր՝ տանիքին մոտ: Իսկ այս խուցը գետնի տակ էր՝ շատ ներքև, գուցե հենց ամենաներքևում:

Իր տեսած խցերից ամենամեծն էր: Բայց նա չէր էլ նկատում՝ ինչ կա շուրջը: Նկատեց միայն, որ ուղիղ իր առաջ երկու փոքր սեղան կա՝ երկուսն էլ պատված կանաչ մահուդով: Մեկն իրենից մեկ-երկու մետր էր հեռու, իսկ մյուսը՝ ավելի հեռու, դռան մոտ: Նրան այնքան ամուր էին կապել աթոռին, որ նույնիսկ գլուխը չէր կարողանում շարժել: Ծոծրակին ինչ-որ բարձիկ էր ամրացված, որը նրան ստիպում էր ուղիղ առաջ նայել:

Մի պահ նա մենակ էր, հետո դուռը բացվեց, ու ներս մտավ Օ՛Բրայենը:

– Մի անգամ ինձ հարցրիք,– ասաց Օ՛Բրայենը,– թե ինչ կա 101 սենյակում: Ասացի, որ ինքներդ արդեն գիտեք պատասխանը: Բոլորն էլ գիտեն: Բանն այն է, որ սենյակ 101-ն աշխարհի ամենավատ բանն է:

Դուռը նորից բացվեց: Պահակը ներս մտավ, ձեռքին՝ հաղորդալարերից հյուսված ինչ-որ բան՝ զամբյուղ թե վանդակ: Դրեց հեռու սեղանի վրա: Օ՛Բրայենը խանգարում էր. Ուինսթոնը չէր տեսնում՝ ինչ է:

– Ամենավատ բանն աշխարհում,– ասաց Օ՛Բրայենը,– տարբեր է տարբեր մարդկանց համար: Մեկի համար սարսափելին ողջ-ողջ թաղվելն է կամ հրդեհից մեռնելը, մյուսի համար՝ ջրի մեջ խեղդվելը, ցից հանվելը. հարյուրավոր տարբեր մահեր: Կան դեպքեր, երբ դա առօրյա երևույթ է, նույնիսկ՝ ոչ մահացու:

Նա մի կողմ քաշվեց, որպեսզի Ուինսթոնն ավելի լավ տեսնի՝ ինչ է դրված սեղանին: Հաղորդալարից պատրաստված երկարավուն վանդակ էր, որը բռնակ ուներ՝ տեղափոխելու համար: Դիմացից ամրացրած էր մի բան, որ ցանցավոր դիմակ էր հիշեցնում՝ գոգավոր մասով դեպի դուրս: Չնայած վանդակը երեք-չորս մետր հեռու էր, նա տեսնում էր, որ այն երկարությամբ բաժանված է երկու բաժնի, յուրաքանչյուրում՝ ինչ-որ արարածներ: Առնետներ էին:

– Ձեր դեպքում,– ասաց Օ՛Բրայենը,– աշխարհում ամենասարսափելին առնետներն են:

Վանդակը տեսնելու առաջին իսկ պահից Ուինսթոնի մարմնով ինչ-որ նախազգացման սարսուռ անցավ, վախ. չգիտեր, թե ինչից: Բայց այդ պահին հանկարծ հասկացավ, թե ինչ է նշանակում վանդակի դիմականման հարմարանքը: Աղիները կծկվեցին:

- Դուք դա չե՞ք անի,- գոռաց նա բարձր, խզված ձայնով:- Չե՞ք անի: Չե՞ք կարող: Անհնար է:

- Հիշո՞ւմ եք,- ասաց Օ'Բրայենը,- խուճապի այն պահը, որ հաճախ էր վրա հասնում ձեր երազներում: Ձեր դիմաց խավարի պատ էր, իսկ ականջներում՝ մռնչոց: Պատից այն կողմ ինչ-որ սարսափելի բան կար: Կարծում էիք՝ գիտեք, թե ինչ, բայց չէիք համարձակվում խոստովանել: Իրականում պատի հետևը առնետներ էին:

- Օ'Բրայեն,- ասաց Ուինսթոնը՝ ջանալով վերահսկել իր ձայնը:- Դուք գիտեք, որ դրա կարիքը չկա: Ի՞նչ եք ուզում, որ անեմ:

Օ'Բրայենը ուղիղ պատասխան չտվեց: Ու խոսեց ուսուցանող ոճով, որ երբեմն սիրում էր գործածել: Նա մտահոգ նայեց հեռուն, ասես դիմում էր Ուինսթոնի թիկունքում գտնվող հանդիսատեսին:

- Ինքնին ցավը,- ասաց նա,- երբեմն բավարար չէ: Լինում են դեպքեր, երբ մարդն ընդդիմանում է ցավին մինչև մահվան պահը: Բայց բոլորի համար էլ կա ինչ-որ անդիմադրելի բան, մի բան, որ հնարավոր չէ նախատեսել: Խիզախությունն ու երկչոտությունը կապ չունեն: Երբ ընկնում ես բարձունքից, պարանից կառչելը վախկոտություն չէ: Երբ ընկնում ես խոր ջրերի մեջ, թոքերդ օդով լցնելը վախկոտություն չէ: Դա ընդամենը բնագոյ է, որ անհնար է ոչնչացնել: Նույնն էլ՝ առնետների դեպքում: Ձեզ համար դրանք անտանելի են: Դա ճնշման մի տեսակ է, որին չեք կարող դիմադրել, նույնիսկ եթե ցանկանաք: Դուք կանեք այն, ինչ պահանջում են ձեզնից:

- Բայց ի՞նչ, ի՞նչ են ուզում ինձնից: Ինչպե՞ս կարող եմ անել, եթե չգիտեմ, թե ինչ է պետք:

Օ'Բրայենը վերցրեց վանդակը ու տեղափոխեց մոտակա սեղանին: Զգուշորեն դրեց մահուդե սփռոցի վրա: Ուինսթոնը զգում էր արյան հոսքն ականջներում: Այնպիսի զգացողություն ուներ, որ

1984

Նստած է կատարյալ միայնության մեջ: Նա մեծ, անմարդաբնակ դաշտի կենտրոնում էր, արևի լույսով ողողված հարթ անապատում, ու բոլոր ձայները հեռու տարածություններից հասնում էին նրան: Սակայն առնետների վանդակն իրենից երկու մետր հեռավորության վրա էր: Ահռելի առնետներ էին: Հասել էին այն տարիքին, երբ առնետի դունչը կոպտանում ու կատաղի է դառնում, իսկ մորթին ոչ թե մոխրագույն է, այլ դարչնագույն:

- Առնետը,- ասաց Օ'Բրայենը՝ դեռևս դիմելով իր անտեսանելի հանդիսատեսին,- չնայած կրծող, բայց մսակեր է: Դուք դա գիտեք: Երևի լսել եք, թե ինչ է կատարվում այս քաղաքի աղքատ թաղամասերում: Որոշ փողոցներում մայրերը չեն համարձակվում կրծքի երեխային մենակ թողնել տանը, նույնիսկ հինգ բուլբուլ: Առնետները հաստատ կհարձակվեն նրա վրա: Կարճ ժամանակում երեխայից միայն ոսկորները կթողնեն: Հարձակվում են նաև հիվանդ կամ մեռնող մարդկանց վրա: Ապշելու է, բայց հասկանում են, թե մարդը երբ է անօգնական:

Վանդակում ծղրտոց բարձրացավ: Թվաց՝ աղմուկը հեռվից է հասնում Ուինսթոնին: Առնետները կռվում էին. նրանք փորձում էին միջնապատը հաղթահարելով հասնել իրար: Նաև հուսահատության խոր հառաչանք լսեց: Դա նույնպես ասես դրսից էր գալիս:

Օ'Բրայենը վերցրեց վանդակը և ինչ-որ բան սեղմեց: Սուր չիսկոց լավեց: Ուինսթոնը մոլեգին ջանքով փորձեց պոկվել աթոռից: Բայց անհույս էր. մարմնի բոլոր մասերը, նույնիսկ գլուխը ամրացված էին: Օ'Բրայենը մոտեցրեց վանդակը: Հիմա այն Ուինսթոնի դեմքից մի մետրի վրա էր:

- Սեղմեցի առաջին լծակը,- ասաց Օ'Բրայենը:- Դուք գիտեք այս վանդակի կառուցվածքը: Դիմակը կհարմարեցվի ձեր գլխին՝ բացառելով փախուստի հնարավորությունը: Երբ սեղմեմ մյուս լծակը, վանդակի դուռը սահելով կբարձրանա: Այս սովյալ գազանները փամփուշտի նման դուրս կթռչեն: Երբևէ տեսել՞ եք՝ առնետն ինչպես է ցատկում օդում: Նրանք կցատկեն ձեր դեմքին ու կսկսեն

կրծոտել: Երբեմն հարձակվում են նախ աչքերի վրա: Երբեմն անցք են բացում այտերի մեջ ու խժռում լեզուն:

Վանդակը մոտ էր. ու ավելի էր մոտենում: Ուհնսթոնը հաճախակի սուր ծղրտոցներ լսեց, որ ասես շրջում էին օդում՝ իր գլխավերևում: Բայց կատաղի պայքարեց իր խուճապի դեմ: Մտածել, մտածել, նույնիսկ եթե մեկ վայրկյան է մնացել. մտածելը միակ հույսն էր: Հանկարծ քթանցքերին հասավ գազամանների գարշելի բորբոսահոտը: Ներսում սրտխառնուքի կատաղի կծկում էր, ու նա գրեթե կորցրեց գիտակցությունը: Ամեն ինչ կորել էր սևի մեջ: Մի պահ նա վերածվեց խելագար, ճչացող կենդանու: Սակայն խավարից դուրս եկավ՝ կառչելով մի գաղափարից: Փրկվելու միայն մեկ միջոց կար: Իր ու առնետների միջև պետք է դնել մեկ այլ մարդու, մեկ այլ մարդու *մարմին*:

Դիմակի շրջագիծն այնքան մեծ էր, որ փակում էր մնացած ամեն ինչ: Ցանցադռնակը մի քանի թիզ էր հեռու դեմքից: Առնետները հասկանում էին, թե ինչ է լինելու հիմա: Նրանցից մեկը վերուվար էր ցատկոտում, մյուսը՝ կոյաջրերի ծեր ու թեփուկավոր պապիկը, կանգնել էր՝ վարդագույն թաթերով ճաղերին հենված, ու կատաղի ներս էր քաշում օդը: Ուհնսթոնը տեսնում էր բեղերն ու դեղին առամները: Դարձյալ սև խուճապը տիրեց նրան: Նա կույր էր, անօգնական և ոչինչ չէր հասկանում:

– Ընդունված պատիժ էր Չինական կայսրությունում, – շարունակեց Օ'Բրայենը խրատական ոճով:

Դիմակը մոտենում էր դեմքին: Հաղորդալարը դիպչում էր այտին: Եվ ահա... ոչ, դա փրկություն չէր, միայն հույս, հույսի մի փոքր նշույլ: Չափազանց ուշ է, գուցե չափազանց ուշ է: Բայց Ուհնսթոնը հանկարծ հասկացավ, որ ամբողջ աշխարհում միայն մի մարդ կա, ում կարող է փոխանցել իր պատիժը. *մի* մարմին, որ կարող է խցկվել իր ու առնետների արանքը: Ու նա մի քանի անգամ մոլեգին գոռաց.

– Ջոնլիային տվեք նրանց: Ջոնլիային: Ո՛չ ինձ: Ջոնլիային: Ինձ համար մեկ է՝ ինչպես կվարվեք նրա հետ: Պատառոտե՛ք նրա դեմքը, կրծոտե՛ք մինչև ոսկորները: Ո՛չ ինձ: Ջոնլիային: Ո՛չ ինձ:

Նա մեջքի վրա ընկնում էր հսկայական խորության մեջ՝ առնետներից հեռու: Դեռ սեղմված էր աթոռին, բայց հատակի, շենքի պատերի, երկրի, օվկիանոսների, մթնոլորտի միջով ընկնում էր արտաքին աշխարհ, միջաստղային անդունդ՝ միշտ հեռու, հեռու, առնետներից հեռու: Նրանց բաժանում էր լուսային տարիների հեռավորությունը, բայց Օ'Բրայենը դեռ կանգնած էր իր կողքին: Իսկ սառը հաղորդալարը դեռևս դիպչում էր այտին: Բայց իրեն պարուրած խավարի միջով Ուինսթոնը մի մետաղական շաչյուն էլ լսեց և հասկացավ, որ վանդակի դուռը ոչ թե բացվեց, այլ փակվեց:

VI

«Շագանակենի» սրճարանը համարյա դատարկ էր: Արևի շողը պատուհանից շեղակի ընկել էր փոշոտ սփռոցների վրա: Ժամը տասնհինգն էր. հանգստի ժամ: Հեռէկրաններից աշխույժ երաժշտություն էր տարածվում:

Ուինսթոնը նստել էր իր սովորական անկյունում և կլանված նայում էր դատարկ գավաթին: Ժամանակ առ ժամանակ հայացք էր նետում հսկայական դեմքի վրա, որ իրեն հետևում էր դիմացի պատից: «ՄԵԾ ԵՂԲԱՅՐԸ ՀԵՏԵՎՈՒՄ Է ՔԵԶ», – ասում էր մակագրությունը: Առանց կանչելու՝ մատուցողը եկավ, նրա բաժակը «Հաղթանակ» ջին լցրեց, ապա խառնեց մի քանի կաթիլ մեկ այլ շշից, որի խցանի մեջ խողովակ կար: Դա մեխակի թուրմով սախարին էր՝ սրճարանի ֆիրմային խմիչքը:

Ուինսթոնը լսում էր հեռէկրանը: Հիմա միայն երաժշտություն էր հնչում, բայց ցանկացած պահի կարելի էր սպասել Խաղաղության նախարարության հատուկ ամփոփագրին: Աֆրիկյան ռազմաճակատից չափազանց անհանգստացնող նորություններ էին ստացվում: Օրվա ընթացքում նա անընդհատ անհանգստանում էր այդ մասին: Եվրասիական բանակը (Օվկիանիան պատերազմում էր Եվրասիայի

դեմ. Օվկիանիան միշտ էլ պատերազմել էր Եվրասիայի դեմ) սարսափազդու արագությամբ շարժվում էր դեպի հարավ: Կեսօրվա ամփոփագրում ոչ մի հիշատակություն չկար որոշակի տարածքի մասին, բայց հնարավոր է՝ արդեն կռիվներ էին մղվում Կոնգոյի մոտ: Բրազավիլն ու Լեոպոլդվիլը վտանգի մեջ էին: Քարտեզին նայելու կարիք չկար՝ հասկանալու համար, թե դա ինչ է նշանակում: Ինդիորը միայն Կենտրոնական Աֆրիկան կորցնելը չէր. ամբողջ պատերազմի ընթացքում առաջին անգամ վտանգված էր հենց Օվկիանիայի տարածքը:

Նրան համակեց մի մոլեգին զգացմունք, ոչ թե վախ, այլ ինչոր անորոշ հուզմունք, ապա դարձյալ անհետացավ: Նա դադարեց մտածել պատերազմի մասին: Այդ օրերին մի քանի ռուպեից երկար չէր կարողանում միտքը կենտրոնացնել որևէ բանի վրա: Վերցրեց գավաթն ու մի ումպով դատարկեց: Ինչպես միշտ, սարսուռաց ջինից և նույնիսկ թույլ գխտաց: Հեղուկը սարսափելի էր: Մեխակն ու սախարինը, որ ինքնին բավական զզվելի էին, անկարող էին թաքցնել ջինի անհամ յուղային հոտը. իսկ ամենասարսափելին այն էր, որ օր ու գիշեր իրեն ուղեկցող ջինի հոտն անքակտելիորեն խառնված էր նրանց հոտին...

Երբեք, նույնիսկ մտքում, անուն չէր տալիս նրանց և ամեն կերպ փորձում էր մտքում անգամ չտեսնել: Նրանք կիսով չափ գիտակցված էին, թռչում էին իր դեմքի առաջ, իսկ հոտը չէր հեռանում քթանցքերից: Երբ ջինը բարձրացավ ստամոքսում, բխկաց մուգ կարմիր շուրթերի արանքից: Ազատ արձակվելուց հետո գիրացել էր, երեսի նախկին գույնը վերականգնվել էր, այսինքն՝ ավելի վառ էր դարձել: Դիմագծերը կոպտացել էին, քթի ու այտոսկրերի մաշկը՝ կոշտացել ու կարմրել, նույնիսկ ճաղատ գլուխն էր մուգ վարդագույն: Մատուցողը, դարձյալ առանց պատվերի, շախմատի տախտակ ու «Թայմս» թերթի վերջին համարը բերեց՝ շախմատային խնդրի վրա բացված էջով: Հետո, տեսնելով, որ Ուինսթոնի գավաթը դատարկ է, բերեց ջինի շիշն ու լցրեց: Պատվիրելու կարիք

չկար: Նրանք գիտեին իր սովորությունները: Շախմատի տախտակը միշտ սպասում էր իրեն, անկյունի սեղանը միշտ ազատ էր. նույնիսկ երբ սրճարանը լիքն էր, նա մենակ էր զբաղեցնում սեղանը. ոչ ոք չէր ուզում, որ իրեն նկատեն Ուինսթոնի կողքին: Երբեք չէր հաշվում, թե քանի բաժակ է խմել: Երբեմն-երբեմն նրան թղթի մի կեղտոտ կտոր էին տալիս և ասում, որ հաշիվն է. բայց այնպիսի տպավորություն ուներ, որ միշտ ավելի փոքր հաշիվ են գրում: Բայց եթե նույնիսկ այդպես չլիներ, դա նրան չէր անհանգստացնի: Հիմա ձեռքին միշտ շատ գունար կար: Նույնիսկ աշխատանք ուներ՝ անաշխատ պաշտոն, որի համար ավելի լավ էին վարձատրում, քան նախորդ աշխատավայրում:

Հեռէկրանից հնչող երաժշտությունը դադարեց. ճայն լսվեց: Ուինսթոնը բարձրացրեց գլուխն ու ականջ դրեց: Սակայն ռազմաճակատից հաղորդագրություն չկար: Միայն Առատության նախարարության համառոտ հայտարարությունն էր: Պարզվում է՝ նախորդ եռամսյակում կոշկաքուղերի տասներորդ եռամյա պլանի մասնաբաժինը գերակատարվել է 98 տոկոսով:

Նա ուսումնասիրեց շախմատային խնդիրն ու դասավորեց խաղաքարերը: Խորամանկ խաղավարտ էր՝ երկու ձիով: «Սկսում են սպիտակները: Մատ երկու քայլից»: Ուինսթոնը նայեց Մեծ եղբոր դիմանկարին: «Սպիտակները միշտ մատ են անում», - մտածեց նա աղոտ միստիցիզմով: Միշտ, առանց բացառության, այդպես է լինում: Անհիշելի ժամանակներից ի վեր սևերը երբեք չեն հաղթում շախմատային խաղում: Մի՞թե դա չի խորհրդանշում չարի հանդեպ բարու հավերժ, անխախտ հաղթանակը: Հանգիստ ուժով լի հսկայական դեմքը նայում էր նրան: Սպիտակները միշտ մատ են անում:

Հեռէկրանի ձայնը լռեց, ապա ավելացրեց ավելի ծանրակշիռ արտահայտությամբ:

- Ուշադրություն. ժամը տասնհինգ երեսունին կարևոր հայտարարություն է հնչելու: Տասնհինգ երեսունին: Լուրերը հույժ կարևոր են: Բաց չթողնե՛ք: Տասնհինգ երեսունին:

երաժշտությունը շարունակվեց:

Ուիլսոնի սիրտը թրթռաց: Հաղորդագրությունը ռազմաճակատից էր. բնազդը հուշում էր, որ վատ լուրեր են լինելու: Ամբողջ օրը հուզմունքի փոքրիկ պոռթկումներով նրա գլխում հայտնվում ու անհետանում էր Աֆրիկայում ջախջախիչ հաղթանակի մասին միտքը: Նա ասես տեսնում էր՝ եվրասիական բանակն ինչպես է խմբվում երբեք չգրավված սահմանի երկայնքով ու մրջյունների զորասյան պես տարածվում մինչև Աֆրիկայի ծայրամասերը: Ինչո՞ւ հնարավոր չէր ինչ-որ կերպ խանգարել նրանց: Աչքերի առաջ հառնեց Արևմտյան Աֆրիկայի ափի վառ ուրվագիծը: Նա վերցրեց սպիտակ ձին ու տարավ տախտակի հակառակ կողմը: Ահա՛ ճիշտ տեղը: Նա տեսնում էր, թե սև հրոսակախումբն ինչպես է շարժվում հարավ, տեսնում էր նաև, թե մեկ այլ ուժ ինչպես է առեղծվածային կերպով հավաքվում, հանկարծ կուտակվում թիկունքում՝ կտրելով նրանց հաղորդակցության ուղիները ցամաքով ու ծովով: Զգում էր, թե ինչպես իր բուն ցանկությամբ կյանքի է կոչում այդ ուժը: Բայց անհրաժեշտ էր արագ գործել: Եթե նրանք կարողանան զավթել ամբողջ Աֆրիկան, օդակայաններ և սուզանավերի բազաներ ձեռք բերել Բարեհուսո հրվանդանում, Օվկիանիան կբաժանվի երկու մասի: Դրանից կարող էր հետևել ցանկացած բան. պարտություն, անկում, աշխարհի վերաբաժանում, Կուսակցության ոչնչացում: Նա խոր հոգոց հանեց: Նրա ներսում զգացմունքների յուրահատուկ խառնուրդ էր պայքարում, ավելի ճիշտ՝ ոչ թե խառնուրդ, այլ իրար հաջորդող շերտեր, և անհնար էր գուշակել՝ որն է ամենախորքում:

Կծկումն անցավ: Նա սպիտակ ձին դրեց իր տեղը, բայց ոչ մի կերպ չէր կարողանում կենտրոնանալ շախմատային խնդրի վրա: Մտքերը դարձյալ թափառում էին: Գրեթե անգիտակցաբար մատով փոշոտ սեղանին գրեց.

$$2 + 2 = 5$$

1984

«Նրանք չեն կարող հայտնվել քո ներսում»,– ասել էր Ջուլիան: Բայց կարողացել էին: «Այն, ինչ ձեզ հետ կատարվում է այստեղ, մեկընդմիջո է»,– ասել էր Օ'Բրայենը: Դա ձիշտ էր: Կան բաներ, օրինակ՝ քո սեփական քայլերը, որոնցից երբեք չես ապաքինվի: Ինչ-որ բան սպանել են քո կրծքում, այրել, խարել:

Նա տեսել էր Ջուլիային, նույնիսկ խոսել նրա հետ: Դրանում ոչ մի վտանգ չկար: Բնազդը հուշում էր, որ հիմա գրեթե չեն հետաքրքրվում իր գործերով: Եթե երկուսից մեկը ցանկանար, կարող էին երկրորդ անգամ հանդիպել: Իրականում հանդիպել էին պատահաբար: Դա պատահել էր այգում, մարտի մի զգվելի, խայթող օր, երբ հողն ասես երկաթից լիներ, բոլոր կանաչները մեռած էին թվում, և ոչ մի տեղ բողբոջ չկար, բացի մի քանի քրքմածաղկից, որ ձգվել էին վեր, որպեսզի մասնատվեն քամուց: Ձեռքերը սառել էին, աչքերը՝ քամուց արցունքոտվել: Ուինսթոնն արագ քայլում էր, երբ մոտ տասը մետրի վրա տեսավ նրան: Ապշեց. Ջուլիան փոխվել էր, բայց անհնար էր հասկանալ, թե ինչպես: Նրանք անցան իրար կողքով, բայց հետո Ուինսթոնը շրջվեց ու գնաց նրա ետևից՝ ոչ այնքան մեծ ցանկությամբ: Գիտեր, որ վտանգ չկա, գիտեր, որ ոչ ոք չի հետաքրքրվում իրենով: Ջուլիան չէր խոսում: Նա թեքվեց ու քայլեց խոտերի միջով՝ ասես փորձելով ազատվել Ուինսթոնից, հետո կարծես հարմարվեց այն մտքի հետ, որ Ուինսթոնը քայլում է իր կողքով: Շուտով նրանք հայտնվեցին մերկ թփերի մեջ, որ պիտանի չէին թե՛ ինչ-որ բան թաքցնելու, թե՛ քամուց պաշտպանելու համար: Կանգ առան: Դաժան ցուրտ էր: Քամին սուլում էր ոստերի արանքով ու տարուբերում հատուկենտ կեղտոտ քրքմածաղիկները: Նա գրկեց Ջուլիայի գոտկատեղը:

Հեռէկրան չկար, բայց պետք է որ թաքնված բարձրախոսներ լինեին. բացի այդ, նրանց կարող էին տեսնել: Բայց դա կարևոր չէր: Ոչինչ կարևոր չէր: Նրանք կարող էին պառկել գետնին ու անել՝ ինչ ուզում են: Միայն այդ մտքից Ուինսթոնի մարմինը սարսափից քարացավ: Ջուլիան չարձագանքեց գրկախառնությանը. նույնիսկ

չփորձեց ազատվել: Հիմա Ուինսթոնը հասկացավ, թե ինչն է փոխվել նրա մեջ: Դեմքն ավելի դեղնած էր, ճակատի ու քունքի երկայնքով երկար սպի կար, որ մասամբ թաքցրած էր մազերի տակ. բայց միայն դա չէր փոխվել: Իրանը գիրացել էր և զարմանալիորեն քարացել: Ուինսթոնը հիշեց, թե ինչպես մի անգամ՝ հրթիռի պայթյունից հետո, օգնել էր ավերակներից մի դիակ հանել և ապշել էր ոչ միայն նրա անհավանական ծանրությունից, այլև կարծրությունից. ի՞նչ սարսափելի էր. ասես ոչ թե մարդկային մարմին էր, այլ քար: Ջուլիայի մարմինն այդպիսին էր: Ուինսթոնը հասկացավ, որ մաշկի կառուցվածքը նույնպես զգալիորեն փոխվել է:

Ուինսթոնը չփորձեց համբուրել նրան, ու նրանք լուռ մնացին: Երբ վերադառնում էին խոտերի միջով, Ջուլիան առաջին անգամ ուղիղ նայեց նրան: Դա վայրկենական հայացք էր՝ լի արհամարհանքով ու ատելությամբ: Նա չգիտեր՝ ատելությունը միայն անցյալից է, թե՞ կապված է նաև իր փքված դեմքի և քամուց անընդհատ արցունքոտվող աչքերի հետ: Նրանք նստեցին երկաթե աթոռների վրա, կողք կողքի, բայց ոչ շատ մոտ: Ուինսթոնը զգաց, որ նա ուզում է խոսել: Ջուլիան մի քանի սանտիմետր շարժեց իր կոպիտ կոշիկն ու դիտավորյալ մի ոստ կոխրժեց: Ուինսթոնը նկատեց, որ նրա ոտքերը լայնացել են:

– Ես դավաճանել եմ քեզ,– ուղիղ ասաց նա:

– Ես էլ քեզ եմ դավաճանել,– ասաց Ուինսթոնը:

Ջուլիան ևս մեկ անգամ զզվանքով նայեց նրան:

– Երբեմն,– ասաց նա,– սպառնում են ինչ-որ բանով, ինչ-որ բանով, որին չես կարող դիմանալ, որի մասին անգամ չես կարող մտածել: Հետո ասում ես. «Ինձ հետ այդպես մի՛ վարվեք: Ուրիշ մեկին՝ արեք, ուրիշին... և այլն, և այլն»: Կարող ես երևակայել, թե դա ընդամենը խորամանկություն է. ասել ես, որ վերջ տան, և իրականում դա չես ուզել: Սո՛ւտ է: Երբ այդ ամենը կատարվում է, ցանկությունդ հենց դա է: Մտածում ես՝ փրկության ուրիշ ելք չկա և միանգամայն պատրաստ ես այդպես փրկել քեզ: Ուզում ես, որ դա

1984

ուրիշին պատահի: Քեզ բնավ չեն հետաքրքրում նրա տառապանքները: Մտածում ես միայն քո մասին:

- Մտածում ես միայն քո մասին,- արձագանքեց Ուինսթոնը:
- Ու դրանից հետո այլևս նույնը չես զգում մարդու հանդեպ:
- Ոչ,- ասաց Ուինսթոնը,- նույնը չես զգում:

Թվաց՝ այլևս ասելիք չկա: Քամին բարակ հագուստը կպցնում էր նրանց մարմիններին: Համարյա միանգամից զգացին, թե ինչ շփոթեցնող է լռությունը. բացի այդ, սաստիկ ցուրտ էր լուռ նստելու համար: Ջուլիան ինչ-որ բան ասաց Մետրոյի հասնելու մասին ու վեր կացավ:

- Մենք պետք է նորից հանդիպենք,- ասաց Ուինսթոնը:
- Այո,- ասաց Ջուլիան,- պետք է նորից հանդիպենք:

Նա անվստահ հետևեց Ջուլիային՝ կես քայլ հեռավորություն պահպանելով: Նրանք այլևս չխոսեցին: Ջուլիան չէր փորձում ազատվել նրանից, բայց արագ էր քայլում, որ Ուինսթոնը չհասնի իրեն: Ուինսթոնը վճռել էր ուղեկցել նրան մինչև Մետրոյի կայարան, բայց շուտով զգաց, թե որքան անիմաստ ու անտանելի է այդ ցրտին Ջուլիային հետևելը: Նրան ավելի շատ գրավում էր ոչ թե Ջուլիայից ազատվելու, այլ «Շագանակենի» սրժարան վերադառնալու ցանկությունը. միտքը երբեք այդքան գայթակղիչ չէր եղել, որքան հիմա: Կարոտել էր իր անկյունային սեղանը՝ վրան թերթ, շախմատի տախտակ ու անպակաս ջին: Իսկ ամենակարևորը՝ այնտեղ տաք կլինի: Հաջորդ պահին, ոչ պատահաբար, մարդկանց մի փոքրիկ խումբ նրան բաժանեց Ջուլիայից, և Ուինսթոնը չընդդիմացավ: Նա Ջուլիային հասնելու թույլ փորձ արեց, ապա դանդաղեցրեց քայլերը, շրջվեց ու հեռացավ հակառակ ուղղությամբ: Երբ արդեն հիսուն մետր հեռացել էր, հետ նայեց: Փողոցն այնքան էլ մարդաշատ չէր, բայց արդեն չկարողացավ ճանաչել Ջուլիային: Տասնյակ շտապող մարդկանցից ցանկացածը կարող էր նա լինել: Գուցե նրա գիրացած, պրկված մարմինն այլևս անճանաչելի էր հետևից:

«Երբ դա պատահում է, – ասել էր նա, – ցանկությունդ հենց այդ է»: Ուիլնսթոնը նույնպես այդպիսի ցանկություն էր ունեցել: Ցանկացել էր, միայն թե չէր ասել այդ մասին: Ցանկացել էր, որ ոչ թե իրեն, այլ Ջուլիային հանձնեին նրանց ձեռքը...

Ինչ–որ բան փոխվեց հեռեկրանից հոսող երաժշտության մեջ: Ծղրոտան ու ծաղրական նոտա: Իսկ հետո (գուցե այդպես չէր, գուցե հիշողությունն էր ձայնի խաբուսիկ տպավորություն թողնում) ձայնը երգեց.

*Սաղարթաշապր շագանակի ծառի փակ
Դու ծախեցիր ինձ, ես ծախեցի քեզ...*

Աչքերից արցունքներ հոսեցին: Անցնող մատուցողը նկատեց, որ նրա գավաթը դատարկ է, և վերադարձավ՝ ջինի շիշը ձեռքին:

Նա վերցրեց գավաթն ու սկսեց հոտոտել: Ամեն ումպից հեղուկը ոչ թե պակաս, այլ ավելի զզվելի էր դառնում: Նա ասես լողում էր ջինի մեջ: Դա իր կյանքն էր, իր մահն ու հարությունը: Ամեն երեկո ջինը նրան սուգում էր ընդարմացման մեջ և ամեն առավոտ վերակենդանացնում: Երբ արթնանում էր, իսկ դա սովորաբար լինում էր ժամը տասնմեկից ոչ շուտ, սունձված կոպերով ու այրվող բերանով, իսկ մեջքն ասես կոտրված լիներ, նույնիսկ չէր կարողանում ոտքի կանգնել հորիզոնական դիրքից, եթե գիշերը մահճակալի կողքին չէր լինում շիշ և թեյի բաժակ: Կեսօրվա ժամերին ապակյա դեմքով, շիշը ձեռքի տակ նստում ու հեռեկրան էր լսում: Ժամը տասնհինգից մինչև փակվելը լինում էր «Շագանակենի» սրճարանում: Այլևս ոչ ոք չէր հետաքրքրվում նրանով. սուլոցը չէր արթնացնում, հեռեկրանը չէր հորդորում: Երբեմն, գուցե շաբաթական երկու անգամ, գնում էր Ճշմարտության նախարարության փոշոտ ու մոռացված գրասենյակն ու մի քիչ աշխատում էր, եթե դա կարելի էր աշխատանք կոչել: Նրան աշխատանքի էին ուղարկել ենթակոմիտեի ենթակոմիտե, որը ստեղծվել էր անհամար կոմիտեներից մեկից և

1984

գբաղվում էր Նորալեզվի բառարանի տասնմեկերորդ հրատարակության պատրաստման ընթացքում ծագող մանր դժվարություններով: Հրատարակության էին պատրաստում, այսպես կոչված, Համաժամանակյա զեկույցը, բայց Ուինսթոնը հստակ չգիտեր, թե այն ինչի մասին է: Կապված էր ստորակետերը փակագծերի մեջ, թե դրանցից դուրս դնելու խնդրի հետ: Կոմիտեում ևս չորս աշխատող կար, բոլորն էլ իր նման մարդիկ: Լինում էին օրեր, երբ Նրանք հավաքվում և դարձյալ արագ անհետանում էին՝ անկեղծորեն խոստովանելով միմյանց, որ իրականում ոչ մի անելիք չկա: Բայց լինում էին նաև օրեր, երբ եռանդով անցնում էին գործի՝ ցուցադրաբար կազմելով արձանագրություններ ու երկար հուշաթերթեր, որոնք միշտ կիսատ էին մնում. օրեր, երբ վեճերն այն մասին, թե ինչի շուրջ են վիճում, դառնում էին խիստ բարդ ու խրթին՝ լի սահմանումների վերաբերյալ՝ նուրբ դիտողություններով, խոշոր նահանջներով, վեճերով, ընդհուպ մինչև ավելի բարձր պաշտոնյայի դիմելու սպառնալիքով: Հետո հանկարծ կյանքը լքում էր նրանց, ու նրանք նստում էին սեղանի շուրջը՝ հանգած աչքերով նայելով իրար, ինչպես արլորականչին ցրվող ուրվականներ:

Հեռէկրանը մի պահ լուռ էր: Ուինսթոնը դարձյալ բարձրացրեց գլուխը: Ամփոփագիրը: Բայց ոչ, ուղղակի երաժշտությունն էին փոխել: Աչքերի առաջ Աֆրիկայի քարտեզն էր: Բանակի շարժումը նա տեսնում էր սխեմայի տեսքով. սև նետը կատաղի շարժվում էր ուղղահայաց՝ դեպի հարավ, իսկ սպիտակը՝ հորիզոնական՝ դեպի արևելք, առաջինի հետևից: Համոզվելու համար նա աչքերը հանեց նկարի անխռով դեմքին: Հավանական է, որ երկրորդ նետը բոլորովին էլ գոյություն չունի:

Հետաքրքրությունը դարձյալ մարեց: Նա մի կում ջին էլ խմեց, վերցրեց սպիտակ ձին ու փորձնական քայլ արեց: Շախ: Բայց քայլն ակնհայտորեն սխալ էր, որովհետև...

Հանկարծ մտքում հիշողություն ծնվեց: Նա տեսավ մոմի լույսով լուսավորված սենյակ՝ ընդարձակ, սպիտակ ծածկոցով մահճակալ,

և իրեն՝ ինը-տասը տարեկան տղային, որը հատակին նստած թափահարում էր զառախաղի տուփն ու հուզված ծիծաղում: Մայրը նստած էր նրա դիմաց ու նույնպես ծիծաղում էր:

Երևի մոր անհետանալուց մի ամիս առաջ էր: Հաշտեցման պահ էր, երբ իր ստամոքսը սղոցող քաղցը մոռացվել էր, և ժամանակավորապես վերածնվում էր մոր հանդեպ վաղեմի սերը: Լավ հիշում էր այդ օրը, թաց, անձրևոտ օրը, երբ ջուրը հոսում էր պատուհաններից, իսկ սենյակում լույսն այնքան աղոտ էր, որ հնարավոր չէր կարդալ: Երկու երեխաներն անտանելի ձանձրանում էին մութ ու նեղ ննջասենյակում: Ուխնաթոնը նվնվում ու տրտնջում էր, ուտելիքի անօգուտ պահանջներ դնում, թափառում սենյակում, ամեն ինչ հանում տեղից ու ոտքով այնքան հարվածում պատերին, որ հարևանները ծեծում էին պատը, իսկ կրտսեր երեխան ժամանակ առ ժամանակ արտասվում էր: Ի վերջո մայրն ասաց.

- Եթե քեզ լավ պահես, քեզ համար խաղալիք կգնեն: Լավ խաղալիք: Քեզ դուր կգա:

Հետո դուրս եկավ ու անձրևի տակ գնաց մոտակա հանրախանութ, որը պատահաբար դեռ բաց էր, ու վերադարձավ՝ ձեռքին ստվարաթղթե տուփ. «Օձեր և աստիճաններ» խաղն էր: Ուխնաթոնը դեռ հիշում էր խոնավ ստվարաթղթի հոտը: Խաղը խղճուկ տեսք ուներ: Տախտակը ճաքճքված էր, իսկ փոքրիկ փայտե զառերն այնքան անհավասար էին, որ հազիվ էին կանգնում իրենց տեղում: Ուխնաթոնը անտրամադիր ու առանց հետաքրքրության նայում էր խաղին: Բայց հետո մայրը մի կիսատ մոմ վառեց ու նստեց հատակին, որ խաղա: Շուտով Ուխնաթոնի հետաքրքրությունը շարժվեց, և նա սկսեց ցնցվել ծիծաղից. փոքրիկ մարդուկները լիահույս մագլցում էին սանդուղքներն ի վեր, ապա օձերի վրա ցած սահում՝ գրեթե հասնելով ելակետին: Նրանք ութ անգամ խաղացին, և յուրաքանչյուրը հաղթեց չորսական անգամ: Կրտսեր քույրը շատ փոքր էր և չէր հասկանում, թե ինչ խաղ է. նա նստել էր, հենվել բարձին ու ծիծաղում էր, որովհետև մյուսներն էլ էին ծիծաղում:

1984

Ամբողջ օրվա ընթացքում նրանք երջանիկ էին միասին, ինչպես վաղ մանկության տարիներին:

Ուինսթոնը մտքից վանեց պատկերը: Հիշողությունները կեղծ էին: Երբեմն-երբեմն կեղծ հիշողություններն անհանգստացնում էին նրան: Եթե գիտես, թե ինչ է, այլևս չես վախենում դրանից: Որոշ բաներ պատահում էին իրականում, մյուսները՝ ոչ: Նա վերադարձավ շախմատին ու դարձյալ վերցրեց սպիտակ ձին: Ու համարյա նույն պահին շխկոցով գցեց տախտակին: Ցնցվեց, ասես մարմնի մեջ քորոց մտցրին:

Սուր շեփորականչը ծակեց օդը: Ամփոփագիրն էր: Հաղթանակ: Եթե լուրերից առաջ շեփորականչ էր լինում, միշտ նշանակում էր հաղթանակ: Ամբողջ սրճարանով էլեկտրական հոսանք անցավ: Նույնիսկ մատուցողներն էին ցնցվել ու սրել ականջները:

Շեփորականչին սարսափելի աղմուկ հաջորդեց: Մի հուզված ձայն փնթփնթում էր հեռէկրանից. բայց գրեթե մարեց դրսից լսվող ծափահարությունների թնդունից: Լուրը կախարդական արագությամբ տարածվեց փողոցներում: Նա բավականաչափ լսել էր հեռէկրանից հնչող հաղորդագրություններ, որպեսզի հասկանար. պատահել էր այն, ինչ ինքը կանխատեսել էր. հսկայական նավատորմը գաղտնի հանկարծահաս հարված էր պատրաստել թշնամու թիկունքում, սպիտակ նետը հատել էր սև նետի պոչը: Աղմուկի մեջ առանձնանում էին հաղթական արտահայտությունների ծվեններ. «Լայնածավալ ռազմավարական հնարք... կատարյալ համակարգում... ջախջախիչ պարտություն... կես միլիոն գերի... լիակատար բարոյալքում... ամբողջ Աֆրիկայի զավթում... պատերազմը մոտեցնել մոտալուտ հաղթական ավարտին... խոշորագույն հաղթանակը մարդկության պատմության մեջ... հաղթանակ, հաղթանակ, հաղթանակ»:

Ուինսթոնը ոտքերով ջղային շարժումներ արեց սեղանի տակ: Նա չչարժվեց տեղից, բայց մտքով վազում էր, արագ վազում. նա դրսում էր՝ ամբոխի հետ, գոռում էր խլանալու աստիճան: Նորից

Նայեց Մեծ եղբոր նկարին: Կոթող, որ վեր էր խոյացել աշխարհի վրա: Ժայռ, որին զուր բախվում էին Ասիայի հրոսակախմբերը: Նա մտածեց, թե ինչպես տասը ընկալեալ առաջ, այո, ընդամենը տասը ընկալեալ առաջ սրտում դեռ կասկած կար. չգիտեր՝ ինչ նորություն կլինի ռազմաճակատից. հաղթանակ, թե՞ պարտություն: Ոչ միայն եվրասիական բանակն էր հողս ցնդել: Իր մեջ շատ բան էր փոխվել Սիրո նախարարությունում անցկացրած առաջին օրից, բայց վերջնական ու անհրաժեշտ ապաքինումը տեղի ունեցավ միայն այս պահին:

Հեռեկրանից հնչող ձայնը դեռ պատմում էր գերիների, ավարի ու արնահեղության մասին, բայց դրսի գոռգոռոցները փոքր-ինչ մեղմացել էին: Մատուցողները վերադառնում էին իրենց աշխատանքին: Նրանցից մեկը մոտեցավ՝ ջինի շիշը ձեռքին: Ուինսթոնը, որ երանելի երազանքների գրկում էր, չնկատեց, թե գավաթն ինչպես լցրին: Նա այլևս չէր վազում ու չէր գոռում: Վերադարձել էր Սիրո նախարարություն, ամեն ինչ ներված էր, իսկ հոգին՝ ձյան պես ճերմակ: Նա նստած էր մեղադրյալի աթոռին, խոստովանում էր ամեն ինչ, վկայություն տալիս բոլորի դեմ: Քայլում էր սպիտակ սալիկապատ միջանցքով, ու թվում էր՝ արևի տակ է, իսկ հետևից գնում էր զինված պահակը: Երկար սպասված փամփուշտը մտնում էր իր ուղեղի մեջ:

Նա նայեց հսկայական դեմքին: Պետք եկավ քառասուն տարի՝ հասկանալու, թե ինչ ժպիտ է թաքնված թավ բեղերի տակ: Օ՛, դաժան, անպիտան թյուրիմացություն: Օ՛, համառ, կամակոր արտաքսում քեզ սիրող կրծքից: Զին բուրող երկու արցունք հոսեց քթեզրերից: Բայց ամեն ինչ կարգին էր, ամեն ինչ կարգին էր: Պայքարն ավարտված էր: Նա հաղթել էր ինքն իրեն: Նա սիրում էր Մեծ եղբորը:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆՈՐԱԼԵԶՎԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Նորալեզուն Օվկիանիայի պաշտոնական լեզուն է և ստեղծվել է Անգսոնգի կամ անգլիական սոցիալիզմի գաղափարախոսությանը ծառայելու նպատակով: 1984 թվականին դեռ ոչ ոք չէր օգտագործում այն որպես հաղորդակցության միակ միջոց ոչ բանավոր, ոչ գրավոր խոսքում: «Թայմսի» առաջնորդող հոդվածները գրվում էին նորալեզվով, բայց դրա համար վարպետություն էր պահանջվում և հանձնարարվում էր միայն մասնագետներին: Ենթադրվում էր, որ մինչև 2050 թվականը նորալեզուն գործածությունից վերջնականապես դուրս կմղի հնալեզուն (կամ ստանդարտ անգլերենը, ինչպես մենք ենք կոչում): Իսկ այդ ընթացքում այն ամրապնդում էր իր դիրքերը. Կուսակցության բոլոր անդամներն իրենց առօրյա խոսքում ավելի հակված էին օգտագործել նորալեզվի բառեր և քերականական կառույցներ: 1984 թվականին կիրառվող տարբերակը, որն ամրագրվել էր Նորալեզվի բառարանի իններորդ և տասներորդ հրատարակություններում, համարվում էր ժամանակավոր և պարունակում էր բազմաթիվ ավելորդ բառեր ու հնատիպ կազմություններ, որոնք հետագայում պիտի դուրս գային գործածությունից: Այստեղ մենք կխոսենք վերջնական, կատարելագործված տարբերակի մասին, որն արտացոլված է բառարանի տասնմեկերորդ հրատարակության մեջ:

Նորալեզվի խնդիրն էր ոչ միայն աշխարհայացքի և մտավոր գործունեության արտահայտչամիջոց ապահովել Անգսոնգի նվիրյալների համար, այլև անհնար դարձնել մտքի ցանկացած այլ հոսք: Ենթադրվում էր, որ երբ նորալեզուն մեկընդմիջտ հաստատվի, իսկ հնալեզուն մոռացվի, հերետիկոսական, այսինքն՝ Անգսոնգի սկզբունքներից շեղվող մտածողությունը, եթե արտահայտվում է

բառերով, լիովին անհնար կդառնա: Նրա բառարանը կառուցված էր այնպես, որպեսզի ձգբրիտ և հաճախ շատ նուրբ արտահայտի Կուսակցության անդամին անհրաժեշտ ցանկացած իմաստ՝ միաժամանակ բացառելով մյուս բոլոր իմաստները, ինչպես և անուղղակի մեթոդներով դրանք գտնելու հնարավորությունը: Դա հաջողվում էր մասամբ նոր բառեր ստեղծելով, բայց հիմնականում հեռացնելով անցանկալիներն ու մաքրելով այն բառերը, որոնք պարունակում են անուղղափառ իմաստներ, իսկ հնարավորության դեպքում՝ նաև բոլոր երկրորդական իմաստները: Բերենք մի օրինակ: «Ազատ» բառը դեռ գոյություն ուներ նորալեզվում, բայց կարող էր օգտագործվել միայն այնպիսի արտահայտություններում, ինչպիսիք են՝ «Այս շունն ազատ է ոջիլներից» կամ՝ «Այս դաշտն ազատ է մոլախոտից»: Այն չէր կարող օգտագործվել հին իմաստով՝ «քաղաքականապես ազատ» կամ «մտավոր առումով ազատ», քանի որ մտքի ազատություն և քաղաքական ազատություն այլևս գոյություն չունեին՝ նույնիսկ որպես հասկացություն, հետևաբար դրանց անհրաժեշտությունը չկար: Բացի ակնհայտ հերետիկոսական բառերն արգելելուց, բառարանի կրճատումը համարվում էր ինքնին նպատակ, և ցանկացած բառ, առանց որի կարելի էր դիմանալ, պետք է վերանար: Նորալեզուն ստեղծվել էր ոչ թե ընդլայնելու, այլ նեղացնելու մտքի սահմանները, և այդ նպատակին անուղղակիորեն ծառայում էր բառերի ընտրությունը նվազագույնի հասցնելու փաստը:

Ինչպես գիտենք, նորալեզուն ստեղծվել է անգլերենի հիմքի վրա, բայց նորալեզվի շատ նախադասություններ, նույնիսկ ոչ նորաստեղծ բառեր, ուղղակի անհասկանալի կլինեն ժամանակակից անգլիախոսին: Նորալեզվի բառապաշարը բաժանվում էր երեք որոշակի դասի՝ A բառարան, B բառարան (նաև՝ բաղադրյալ բառեր) և C բառարան: Ավելի հեշտ է յուրաքանչյուր դաս քննարկել առանձին, բայց քերականական յուրահատկություններին կարելի է հետևել A բառարանին նվիրված բաժնում, քանի որ կանոնները նույնն են բոլոր երեք դասերում:

1984

Ա բառարան: Ա բառարանը բաղկացած էր բառերից, որոնք անհրաժեշտ են առօրյա կյանքում. դրանք կապված էին ուտելու, խմելու, աշխատելու, հագնվելու, սանդուղքով բարձրանալու և իջնելու, մեքենա վարելու, այգի մշակելու, ճաշ եփելու և այլնի հետ: Գրեթե ամբողջությամբ կազմված էր բառերից, որոնք այսօր կիրառում ենք՝ *խփել, վազել, շուն, ծառ, շաքար, փուն, դաշտ*. Բայց ժամանակակից անգլերենի բառապաշարի համեմատ դրանց թիվը չափազանց փոքր էր, իսկ իմաստները՝ խիստ տարբերակված: Բոլոր երկիմաստություններն ու իմաստային երանգները մաքրվել էին: Որքան հնարավոր է, այս դասի նորալեզվի բառն իրենից ներկայացնում էր կտրուկ հնչյուն և արտահայտում էր *մեկ* հստակ հասկացություն: Ա բառարանը միանգամայն անպիտան էր գրական նպատակների և քաղաքական կամ փիլիսոփայական քննարկումների համար: Այն նախատեսված էր պարզագույն, նպատակաուղղված մտքեր արտահայտելու համար, որոնք սովորաբար վերաբերում են կոնկրետ առարկաների կամ ֆիզիկական գործողությունների:

Նորալեզվի քերականությունն ուներ երկու տարբերակիչ հատկություն: Առաջինը գրեթե լիակատար փոխարինելիությունն էր խոսքի տարբեր մասերի միջև: Լեզվում ցանկացած բառ (հիմնականում սա վերաբերում էր նույնիսկ ամենավերացական բառերին, ինչպիսիք են՝ «*եթե*»-ն կամ «*երբ*»-ը) կարող էր կիրառվել որպես բայ, գոյական, ածական կամ մակբայ: Նույն արմատից ստեղծված բայի և գոյականի ձևերի միջև չկար ոչ մի տարբերություն. այս օրենքն ինքնին ենթադրում էր շատ հնատիպ կազմությունների ոչնչացում: Օրինակ՝ «*միտք*» բառը նորալեզվում գոյություն չունեի: Այն փոխարինվում էր «*մտածել*» բառով, որն ուներ թե՛ գոյականի, թե՛ բայի գործառույթ: Չէր պահպանվում ոչ մի ծագումնաբանական սկզբունք. որոշ դեպքերում բառաստեղծման համար ընտրվում էր գոյականը, այլ դեպքերում՝ բայը: Նույնիսկ երբ իմաստով իրար մոտ գոյականն ու բայը ծագումնաբանական կապ չունեին, երկու արմատներից մեկը վերանում էր: Օրինակ՝ գոյություն չունեի «*կտրել*» բառ.

Նրա իմաստն արտահայտվում էր «դանակ» գոյական-բայով: Ածականները կազմվում էին գոյական-բային ավելացնելով *-ֆու* վերջածանցը, իսկ մակբայներին՝ *-ուայգ* վերջածանցը: Այսպիսով, օրինակ՝ «սփիդֆուլ» նշանակում էր «արագ», իսկ «սփիդուայգ»՝ «արագորեն»: Ժամանակակից ածականների մի մասը՝ *լավ, ուժեղ, մեծ, սև, փափուկ*, պահպանվել էր, բայց ընդհանուր առմամբ դրանք փոքրաթիվ էին: Դրանց կարիքը գրեթե չէր զգացվում, քանի որ ցանկացած ածականական իմաստ կարելի էր ձեռք բերել գոյական-բային ավելացնելով *-ֆու*: Ժամանակակից մակբայներից ոչ մեկը չէր պահպանվել, բացի մի քանիսից, որոնք ավարտվում էին «ուայգ» վերջածանցով. այն անփոփոխ էր: Օրինակ՝ «ուելլ» բառը փոխարինվել էր «գուդուայգ» բառով:

Բացի այդ, ցանկացած բառ (սա դարձյալ հիմնականում վերաբերում էր բոլոր բառերին) կարելի էր ժխտել՝ ավելացնելով *չ-* նախածանց, կամ ուժեղացնել՝ ավելացնելով *պլու-* նախածանց, կամ ավելի ուժեղ շեշտելու համար՝ կրկնակիպլու-: Հետևաբար, օրինակ, «ջուրտ» նշանակում էր «տաք», մինչդեռ «պլուսջուրտ» և «կրկնակիպլուսջուրտ» համապատասխանաբար նշանակում էին «շատ ցուրտ» և «չափազանց ցուրտ»: Ինչպես ժամանակակից անգլերենում, նաև ցանկացած բառիմաստ հնարավոր էր փոխել նախդիրային ածանցներով, ինչպիսիք են՝ *հակա-, հեղ-, վեր-, ներքև-* և այլն: Պարզվեց՝ նման մեթոդներով հնարավոր է զգալիորեն կրճատել բառարանը: Օրինակ՝ «լավ» բառի դեպքում «վատ» բառի կարիքը չկար, քանի որ պահանջվող իմաստը հավասարապես և նույնիսկ ավելի լավ արտահայտվում էր «չլավ» բառով: Ցանկացած դեպքում, որտեղ երկու բառ հականիշների բնական զույգ էր կազմում, անհրաժեշտ էր միայն որոշել, թե դրանցից որը պետք է հանել գործածությունից: Օրինակ՝ «մոլթ» բառը կարելի է փոխարինել «չլուս»-ով, և հակառակը՝ ըստ նախասիրության:

Նորալեզվի քերականության երկրորդ տարբերակիչ հատկանիշը նրա կանոնավորությունն է: Ներքևում հիշատակվող մի քանի

1984

բացառություններից ելնելով՝ կարելի է ասել, որ բոլոր թեքումները ենթարկվում են նույն կանոններին: Հետևաբար բոլոր բայերում անցյալ ժամանակի ձևը և անցյալ դերբայը նույնն էին և ավարտվում էին *-ed* վերջածանցով: *Steal* (գողանալ) բայի անցյալ ժամանակաձևը *stealed* էր, *think* (մտածել) բայի անցյալ ժամանակաձևը՝ *thinked*, և այդպես շարունակ, ամբողջ լեզվում *swam, gave, brought, spoke, taken* և այլ բոլոր ձևերը վերացան: Բոլոր հոգնակի ձևերը կազմվում էին *-s* կամ *-es* ավելացնելով: *Man, ox, life* (մարդ, ցուլ, կյանք) բառերի հոգնակին էր՝ *mans, oxes, lifes*: Ածականների համեմատական աստիճանները մշտապես կազմվում էին *-er, -est* ավելացնելով (*good, gooder, goodest*), անկանոն ձևերը և *more, most* կազմությունները վերացել էին:

Բառերի միակ դասերը, որոնք դեռ կարող էին հոլովվել անկանոն ձևով, դերանուններն էին, հարաբերական դերանունները, ցուցական ածականները և օժանդակ բայերը: Դրանք շարունակում էին օգտագործվել հին ձևով՝ բացառությամբ «*ուս*» բառի, որի անհրաժեշտությունը վերացավ, իսկ ապառնիի ժամանակաձևերը սղվեցին. դրանց բոլոր գործառնություններն իրենց վրա վերցրին *will* և *would* բառերը: Որոշ անկանոնություններ կային նաև բառակազմության մեջ. դրանք առաջանում էին արագ ու հեշտ խոսք կազմելու անհրաժեշտությունից: Դժվար արտաբերելի բառերը կամ նրանք, որ կարող էին սխալ լսվել, փաստորեն համարվում էին վատ բառեր, ուստի երբեմն բարեհունչ լինելու համար բառին ավելացվում էին լրացուցիչ տառեր, կամ հնատիպ կազմությունը վերականգնվում էր: Բայց դրա կարիքը հիմնականում զգացվում էր *B* բառարանում: Թե *ինչու* էր այդքան կարևորվում արտասանության հեշտացումը, պարզ կլինի այս հավելվածում՝ ավելի ուշ:

B բառարան: *B* բառարանը բաղկացած էր բառերից, որոնք միտումնավոր ստեղծվել էին քաղաքական նպատակների համար. այլ կերպ ասած՝ բառեր, որոնք ոչ միայն ցանկացած հոլովում ունեին

քաղաքական ենթատեքստ, այլև պետք է ցանկալի մտավոր ազդեցություն թողնեին դրանք օգտագործողների վրա: Առանց Անգստցի սկզբունքները լիովին յուրացնելու դժվար էր ձիշտ օգտագործել այդ բառերը: Որոշ դեպքերում կարելի էր դրանց իմաստն արտահայտել հնալեզվի կամ նույնիսկ A բառարանի բառերի միջոցով, բայց դա սովորաբար պահանջում էր երկար նկարագրական փոխադրում, որը միշտ ուղեկցվում էր որոշ նրբերանգների կորստով: B բառերն իրենցից ներկայացնում էին բառային սղագրությունների շարք. հաճախ մի քանի վանկում արտահայտվում էր գաղափարների մի ամբողջ շարան, և, միևնույն ժամանակ, դրանք ավելի ճշգրիտ ու ծանրակշիռ էին, քան սովորական բառերը:

B բառերը բոլոր հոլովներում բաղադրյալ էին: Դրանք բաղկացած էին երկու կամ ավելի բառից կամ բառամասից, որոնք միանում էին այնպես, որ հեշտ լիներ արտաբերել: Արդյունքում միշտ ստեղծվում էր գոյական-բայ, որը խոնարհվում էր սովորական կանոնների համաձայն: Վերցնենք, օրինակ, *բարեմիտք* բառը, որը մոտավորապես նշանակում է «ուղղափառություն», կամ եթե ընդունենք իբրև բայ՝ «մտածել ուղղափառի պես»: Այն խոնարհվում է հետևյալ կերպ՝ գոյական-բայ՝ «բարեմտածել». անցյալ ժամանակ և անցյալ դերբայ՝ «բարեմտածեց», ներկա դերբայ՝ «բարեմտածում», ածական՝ բարեմիտ, մակբայ՝ բարեմտորեն, բայական գոյական՝ բարեմտածող:

B բառերը ստեղծվում էին առանց որևէ ծագումնաբանական ծրագրի: Դրանք կարող էին կազմված լինել խոսքի ցանկացած մաս ներկայացնող բառերից, որոնք դասավորվում են ցանկացած հերթականությամբ և աղավաղվում ցանկացած կերպ, որպեսզի արտասանությունը հեշտանա, իսկ ստուգաբանությունը պարզ լինի: Օրինակ՝ *հանցամիտք* (մտահանցագործություն) բառում *միտքը* երկրորդ բառն է, իսկ *մրքատուր* (Մտքի ոստիկանություն) բառում՝ առաջինը. վերջինիս դեպքում «*ոստիկանություն*» բառի մի մասը կրճատվել է: Քանի որ B բառարանում դժվար է ապահովել բարեհնչունությունը,

1984

անկանոն կազմություններն այստեղ ավելի տարածված են, քան A բառարանում: Օրինակ՝ *մինիժիշկ*, *մինիխաղ*, *մինիհաճ* ածականական ձևերը նշանակում էին համապատասխանաբար *մինիժճմարիկ*, *մինիխաղաղ* և *մինիհաճելի*, քանի որ *ճճմարիկ*, *խաղաղ* և *հաճելի* բառերն ուղղակի փոքր-ինչ դժվար էր արտասանել: Բայց հիմնականում B բառարանի բոլոր բառերը կարող էին հոլովվել և հոլովվում էին ճիշտ նույն կերպ:

B բառարանի որոշ բառեր ունեին այնպիսի նրբերանգներ, որոնք բացարձակ անհասկանալի էին լեզվին ամբողջությամբ չտիրապետողներին: Օրինակ՝ ուսումնասիրենք «Թայմս» թերթի առաջնորդող հոդվածից վերցված մի բնութագրական նախադասություն. «Հնամիտները չստամոքսում են Անգսոնը»: Ամենակարճ տարբերակով այն հնալեզվում կհնչի այսպես. «Նրանք, ում գաղափարները ձևավորվել են հեղափոխությունից առաջ, չեն կարող ողջ հոգով ընդունել Անգլիական սոցիալիզմի սկզբունքները»: Բայց սա ճշգրիտ թարգմանություն չէ: Նախ, վերոնշյալ մեջբերված նորալեզվի նախադասության ողջ իմաստը հասկանալու համար պետք է հստակ գաղափար ունենալ *Անգսոնի* մասին: Բացի այդ, միայն Անգսոնի պայմաններում մեծացած մարդը կարող է գնահատել «*ստամոքսել*» բառի ամբողջ ուժը, որը ենթադրում է կոյր ու խանդավառ ընդունում, ինչը դժվար է պատկերացնել մեր օրերում, կամ «*հնամիտ*» բառը, որը կապված է չարության և անկման գաղափարի հետ: Բայց նորալեզվի որոշ բառերի, ինչպիսին է «*հնամիտ*», հատուկ գործառույթը ոչ թե իմաստներ արտահայտելն էր, այլ դրանք ոչնչացնելը: Այս բառերը, որոնք բնականաբար քիչ են, արդեն ընդլայնել էին իրենց իմաստներն այնքան, որ ներառել էին բառերի ամբողջական շարքեր. քանի որ լիովին արտահայտվում էին մեկ հասկանալի բառով, ապա կարելի էր մի կողմ դնել և մոռանալ դրանք: Ամենամեծ դժվարությունը, որ ծառայել էր նորալեզվի բառարանը կազմողների առաջ, ոչ թե նոր բառեր հորինելն էր, այլ հորինելուց հետո դրանց իմաստները սահմանելը. պարզել, թե իրենց գոյությամբ բառերի ինչ շարքեր են վերացրել:

Ինչպես արդեն տեսանք «ազատ» բառի դեպքում, երբևէ հերետիկոսական իմաստ ունեցած բառերը երբեմն պահպանվում էին՝ հանուն հարմարության, բայց՝ միայն անցանկալի իմաստներից մաքրվելուց հետո: Անհամար այլ բառեր, ինչպիսիք են՝ *պատիվ, արդարություն, բարոյականություն, ինտերնացիոնալիզմ, ժողովրդավարություն, գիտություն և կրոն*, ուղղակի դադարել էին գոյություն ունենալ: Որոշ ընդհանրացնող բառեր ընդգրկում էին այդ իմաստները և դրանով հանդերձ՝ վերացնում դրանք: Օրինակ՝ ազատություն և հավասարություն հասկացությունների շուրջ խմբավորվող բոլոր բառերն արտահայտվում էին մեկ բառով՝ *հանցամիտք*, իսկ բոլոր այն բառերը, որ խմբավորվում էին օբյեկտիվություն ու ռացիոնալիզմ հասկացությունների շուրջ՝ *հնամիտ* բառով: Առավել ծճգրտությունը կարող էր վտանգավոր լինել: Կուսակցության անդամն իր հայացքներով պետք է նմանվեր հին հրեայի, որը, առանց մանրամասների մեջ խորանալու, գիտեր՝ իրենից բացի, բոլոր ազգերը պաշտում են «կեղծ աստվածների»: Նրան պետք չէր իմանալ, որ այդ աստվածները կոչվում են Բաադ, Օգիրիս, Մոլոք, Աստարտե և այլն. ինչքան քիչ իմանա նրանց մասին, այնքան լավ իր ուղղահավատության համար: Նա գիտեր Եհովային ու Եհովայի պատվիրանները. հետևաբար գիտեր, որ ուրիշ անուններով և հատկանիշներով մյուս բոլոր աստվածները կեղծ աստվածներ են: Նույն կերպ նաև Կուսակցության անդամը գիտեր, թե իրենից ինչ է ներկայացնում ճիշտ վարքը, և չափազանց անորոշ, ընդհանուր գծերով հասկանում էր, թե ինչ շեղումներ են հնարավոր: Օրինակ՝ նրա սեռական կյանքն ամբողջությամբ կարգավորվում էր նորալեզվի երկու բառով՝ *սեռահանց* (սեռական անբարոյականություն) և *բարեսեքս* (ողջախոհություն): *Սեռահանց* բառով արտահայտվում էին բոլոր տեսակի սեռական հանցանքները: Այն նշանակում էր ապօրինի կենակցություն, անհավատարմություն, համասեռամոլություն և այլ այլասերումներ. բացի այդ, նորմալ սեռական հարաբերությունը համարվում էր ինքնանպատակ: Կարիք չկար դրանք

1984

առանձին-առանձին թվարկելու, քանի որ բոլորն էլ հանցագործություններ էին, և ընդհանուր առմամբ բոլորն էլ պատժվում էին մահով: Շ բառարանում, որը բաղկացած է գիտական և տեխնիկական բառերից, գուցե անհրաժեշտություն կար առանձին տերմիններով կոչելու որոշ սեռական շեղումներ, բայց շարքային քաղաքացին չէր զգում դրանց կարիքը: Նա գիտեր՝ ինչ է նշանակում բարեսեքս, այսինքն՝ սովորական սեռական հարաբերություն տղամարդու և կնոջ միջև՝ միայն երեխաներ լույս աշխարհ բերելու նպատակով, և կնոջ համար՝ առանց ֆիզիկական հաճույքի. մնացած ամեն ինչը *սեռահանց* էր: Նորալեզվում գրեթե հնարավոր չէր հետևել վնասակար մտքին ավելի, քան ըմբռնելով, որ այն վնասակար է. այդ կետից այն կողմ անհրաժեշտ բառեր գոյություն չունեին:

Յ բառարանում չկար գաղափարապես չեզոք ոչ մի բառ: Մեծամասնությունը մեղմասացություններ էին: Այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ, *ուրախճամբ* (տաժանապարտների ճամբար) կամ *Նախախաղ* (Խաղաղության նախարարություն, այսինքն՝ պատերազմի նախարարություն), ցույց էին տալիս նրա ճիշտ հակառակ իմաստը: Մյուս կողմից՝ որոշ բառեր ցուցադրում էին անկեղծ ու արհամարհական պատկերացում Օվկիանիայի հասարակության իրական բնույթի վերաբերյալ: Այդպիսի օրինակ էր «*պրուկեր*» բառը, որը նշանակում էր ցածրակարգ ժամանց և կեղծ նորություններ, որ Կուսակցությունը հրամցնում էր զանգվածներին: Կային այլ երկինաստ բառեր, որ պարունակում էին «լավ» լրացուցիչ երանգը, երբ խոսքը վերաբերում էր Կուսակցությանը, և «վատ» երանգը, եթե վերաբերում էր թշնամիներին: Բացի այդ, կային բազմաթիվ բառեր, որ առաջին հայացքից թվում էին հապավումներ և իրենց գաղափարական նրբերանգը ստացել էին ոչ թե իմաստից, այլ կառուցվածքից:

Որքան թույլ էր տալիս մարդու հնարամտությունը, Յ բառարանին հարմարեցվում էր այն ամենը, ինչ ուներ կամ կարող էր ունենալ որևէ քաղաքական իմաստ: Բոլոր կազմակերպությունների,

մարդկանց խմբերի, դոկտորինի կամ երկրի, ինստիտուտի կամ հանրային շենքի անվանում անխտիր հատվում էր՝ ըստ ծանոթ ձևի. այսինքն՝ մեկ հեշտ արտասանելի բառ՝ վանկերի քիչ քանակով, որը թույլ է տալիս հասկանալ նրա ծագումը: Օրինակ՝ Ճշմարտության նախարարությունում Արձանագրությունների բաժինը, որտեղ աշխատում էր Ուինսթոն Սմիթը, կոչվում էր *Արձարբաժ*, Գեղարվեստական գրականության բաժինը՝ *Գեղբաժ*, Հեռուստահաղորդումների բաժինը՝ *Հեռուստարբաժ*, և այդպես շարունակ: Սա արվում էր ոչ միայն ժամանակ խնայելու նպատակով: Նույնիսկ քսանմեկերորդ դարի առաջին տասնամյակներին քաղաքական լեզվի բնորոշ գծերից մեկը դարձել էին միախույսված բառերն ու արտահայտությունները. նմանատիպ հապավումներ օգտագործելու միտումն ամենից շատ նկատվում էր տոտալիտար երկրներում և տոտալիտար կազմակերպություններում: Նման օրինակներ են *Նացիստ*, *գեստապո*, *կոմինտերն*, *ինսպեկտոր*, *ագիտպրոպ* բառերը: Սկզբում այս պրակտիկան օգտագործվում էր բնազդաբար, բայց նորալեզվում ընդունվում էր գիտակցված նպատակով: Պարզ էր, որ անունն այդպես կրճատելով նեղացնում և նրբորեն փոխում էին նրա իմաստը՝ հեռացնելով դրանից բխող զուգորդումների մեծամասնությունը: Օրինակ՝ *կոմունիստական ինտերնացիոնալ* բառերը ստեղծում են բաղադրյալ պատկեր՝ համաշխարհային մարդկային եղբայրություն, կարմիր դրոշներ, բարիկադներ, Կարլ Մարքս, Փարիզի կոմունա: Մյուս կողմից՝ *կոմինտերն* բառը ենթադրում է միայն սերտ կապված կազմակերպություն և դոկտորինի հստակ սահմանված համակարգ: Այն վերաբերում է մի առարկայի, որը գրեթե նույնքան հեշտ ճանաչելի է և ունի նույնքան սահմանափակ նշանակություն, որքան աթոռը կամ սեղանը: *կոմինտերնը* մի բառ է, որը կարելի է արտասանել գրեթե առանց մտածելու, մինչդեռ *կոմունիստական ինտերնացիոնալ* արտահայտության շուրջ պարտավոր ես մտածել առնվազն մեկ րոպե: Նույն կերպ նաև *Նախաճշգր* բառի առաջացրած զուգորդումներն ավելի քիչ են ու ավելի վերահսկելի, քան

Ճշմարտության նախարարությունը: Դրանով էր բացատրվում ոչ միայն հնարավորության դեպքում կրճատելու ճգտումը, այլև այն, որ չափից դուրս հոգ էր տարվում յուրաքանչյուր բառի արտասանություն հեշտացնելու համար:

Նորալեզվում բարեհնչունությունը գերակշռում էր ցանկացած այլ պատկերացման, բացի իմաստի ճշգրտությունից: Անհրաժեշտության դեպքում քերականության կանոնավորությունը զոհ էր գնում դրան: Եվ դա ճիշտ էր, քանզի քաղաքական նպատակների համար ամենից առավել անհրաժեշտ էին հստակ, ակնհայտ իմաստ ունեցող կարճ բառերը, որոնք արտասանվում էին կտրուկ և նվազագույն արձագանք արթնացնում խոսողի գիտակցության մեջ: Ե բառարանի բառերը նույնիսկ կշիռ էին ձեռք բերում նրանից, որ գրեթե բոլորը շատ նման էին իրար: Դրանք՝ *բարեմիտք*, *Նախախաղ*, *պրոլկեր*, *սեռահանց*, *ուրախճամբ*, *Անգսոց*, *սրամոքսել*, *մրառսր*, և անհամար այլ բառեր գրեթե միշտ կազմված էին երկուերեք վանկից, իսկ շեշտը հավասարապես դրվում էր թե՛ առաջին, թե՛ վերջին վանկի վրա: Դրանց կիրառումը խրախուսում էր խոսքի փնթփնթան ոճի ստեղծում՝ միաժամանակ զնգուն և միօրինակ: Նպատակը հենց դա էր: Խնդիր կար ստեղծել խոսք, մասնավորապես՝ գաղափարապես չեզոք որևէ թեմայով, որ հնարավորինս անկախ էր գիտակցությունից: Առօրյա կյանքի նպատակների համար, անկասկած, անհրաժեշտ էր կամ երբեմն անհրաժեշտ էր խոսելուց առաջ մտածել, բայց կուսակցականը, որին վիճակված էր արտահայտել քաղաքական կամ էթիկական դատողություն, պետք է կարողանա ճիշտ կարծիքներ տարածել նույնքան ավտոմատ կերպով, ինչպես գնդացրի կրակահերթը: Նա պատրաստ է դրան. լեզուն նրան տվել է ապահով գործիք, իսկ բառերի կառուցվածքը՝ կոպիտ հնչողությամբ և կանխամտածված տգեղությամբ, որ հարիր է Անգսոցի ոգուն, հեշտացրել է գործընթացը:

Հեշտացնում էր նաև այն փաստը, որ բառերի ընտրությունը շատ փոքր էր: Մեր լեզվի համեմատ Նորալեզվի բառարանը փոքր էր,

և մշտապես փնտրվում էին այն կրճատելու նորանոր ուղիներ: Անշուշտ, նորալեզուն լեզուների մեծ մասից տարբերվում էր նրանով, որ ամեն տարի բառարանը ոչ թե մեծանում, այլ փոքրանում էր: Ցանկացած կրճատում համարվում էր ձեռքբերում, քանզի որքան փոքր լինի ընտրությունը, այնքան փոքր կլինի մտածելու գայթակղությունը: Ի վերջո, նպատակն էր ստեղծել հողաբաշխ խոսք, որը սկիզբ կառնի կոկորդից՝ առանց ուղեղի բարձրագույն նյարդային կենտրոնների մասնակցության: Այս նպատակի ուղղակի արտացոլումն էր նորալեզվի *բաղախոս* բառը, որը նշանակում է «բաղի պես կռնչալ»: Ինչպես B բառարանի բազմազան այլ բառեր, *բաղախոսը* երկիմաստ էր: Եթե դրանով արտահայտվում էին ուղղահավատ կարծիքներ, ապա այն համարվում էր գովասանք, իսկ երբ «Թայնս» թերթը Կուսակցության հռետորներից մեկի մասին գրում էր՝ «կրկնակիպլյուսլավ բաղախոս», սա համարվում էր ջերմ ու արժեքավոր հաճոյախոսություն:

Շ բառարան: Շ բառարանը լրացնում էր մյուս բառարանները և բաղկացած էր բացառապես գիտական ու տեխնիկական տերմիններից: Դրանք նման էին այսօր կիրառվող գիտական տերմիններին և կազմված էին նույն արմատներից, բայց սովորաբար ամեն ինչ արվում էր դրանք հստակ սահմանելու և անցանկալի իմաստներից մաքրելու համար: Ենթարկվում էին նույն քերականական օրենքներին, ինչ մյուս երկու բառարանների բառերը: Շ բառերից շատ քչերն էին կիրառվում առօրյա և քաղաքական խոսքում: Ցանկացած գիտաշխատող կամ ինժեներ կարող էր գտնել իրեն անհրաժեշտ բոլոր բառերն իր մասնագիտությանը նվիրված ցանկում, բայց դրանք ընդհանուր բառեր էին, որ հանդիպում էին նաև այլ ցանկերում: Շատ քիչ բառեր էին ընդհանուր բոլոր ցանկերի համար, և չկար բառարան, որով գիտությունը կներկայացվեր որպես գիտակցության կերտվածք կամ մտածողության մեթոդ՝ անկախ իր հատուկ ճյուղերից: Անշուշտ, չկար

«գիտություն» բառը. դրա ցանկացած իմաստ լիովին արտահայտվում էր «Անգսոց» բառով:

Վերը հիշատակվածից պարզ է դառնում, որ նորալեզվում միանգամայն անհնար էր արտահայտել անուղղափառ կարծիքներ՝ ամենացածր մակարդակից ավելի: Անշուշտ, հնարավոր էր արտահայտել հերետիկոսություններ, բայց՝ ամենակոպիտ ձևով՝ հայհոյանքներով: Օրինակ՝ հնարավոր էր ասել՝ *Մեծ եղբայրը չլավն է*: Բայց այս արտահայտությունը, որն ուղղափառի համար ընդամենը ակնհայտ անհեթեթություն է, չէր կարող ապացուցվել հիմնավոր փաստարկով, քանի որ չկային անհրաժեշտ բառեր: Անգսոցի համար անբարենպաստ գաղափարները կարող էին արտահայտվել աղոտ, անբառ տեսքով, և դրանք կարելի էր սահմանել միայն շատ ընդարձակ տերմիններով, որոնք խմբավորում և դատապարտում էին ամենատարբեր հերետիկոսություններ: Ըստ էության, միայն անուղղափառության նպատակների համար կարելի էր կիրառել նորալեզվի բառեր՝ անօրինական կերպով որոշ բառեր հնալեզու փոխադրելու եղանակով: Օրինակ՝ նորալեզվով կարելի էր ասել *Բոլոր տղամարդիկ հավասար են* նախադասությունը, բայց միայն այն իմաստով, ինչ արտահայտում էր հնալեզվի *Բոլոր տղամարդիկ կարմրամազ են* նախադասությունը: Արտահայտության մեջ չկար քերականական սխալ, բայց այն արտահայտում էր ակնհայտ կեղծիք, այսինքն՝ որ բոլոր մարդիկ հավասար են հասակով, քաշով կամ ուժով: Քաղաքական հավասարություն հասկացությունն այլևս գոյություն չուներ, հետևաբար «հավասար» բառը կորցրել էր այս երկրորդական իմաստը: 1984 թվականին, երբ հնալեզուն դեռ հաղորդակցության սովորական միջոց էր, տեսականորեն վտանգ կար, որ նորալեզվի բառեր օգտագործելով՝ մարդը գուցե հիշի նրանց նախնական իմաստները: *Կրկնամտքի* պայմաններում մեծացած ցանկացած մարդու համար գործնականում դժվար չէր խուսափել դրանից, բայց մի քանի սերունդ հետո նույնիսկ նման սայթաքման հնարավորությունը

պետք է վերանար: Մարդը, որի համար ծննդից ի վեր նորալեզուն միակ լեզուն է, այլևս չի իմանա, որ *հավասար* բառը մի ժամանակ ունեցել է երկրորդական իմաստ՝ «քաղաքականապես հավասար», իսկ *ազատ* բառը ժամանակին նշանակել է «մտավոր առումով ազատ», ճիշտ այնպես, ինչպես, օրինակ, մարդը, ով երբեք չի լսել շախմատի մասին, չի կարող իմանալ *թագուհի* և *նավակ* բառերի երկրորդական իմաստները: Նա ի վիճակի չի լինի գործել բազմաթիվ հանցագործություններ և թույլ տալ սխալներ՝ այն պարզ պատճառով, որ դրանք անուն չունեն, հետևաբար՝ անպատկերացնելի են: Սպասվում էր, որ ժամանակի ընթացքում նորալեզվի տարբերակիչ հատկանիշները կդառնան ավելի ու ավելի հստակ, բառերն ավելի ու ավելի կպակասեն, իմաստները ավելի ու ավելի կնեղանան, իսկ դրանց անպատեհ կիրառությունները կնվազեն:

Երբ հնալեզուն վերջնականապես դուրս մղվի, կկտրվի անցյալի հետ վերջին կապը: Պատմությունն արդեն վերաշարադրված էր, բայց անցյալի գրականության հատվածները տեղ-տեղ պահպանվել էին՝ ենթարկվելով թեթև գրաքննության, և քանի դեռ մարդիկ հիշում էին հնալեզուն, կարող էին կարդալ: Ապագայում նման հատվածները, եթե նույնիսկ պահպանվեին, կլինեին անհասկանալի և անթարգմանելի: Անհնար էր հնալեզվից նորալեզու թարգմանել որևէ հատված, եթե այն չէր նկարագրում որևէ տեխնիկական գործընթաց կամ պարզագույն առօրյա գործողություն, կամ արդեն հակված էր ուղղափառության (նորալեզվում դա արտահայտվում էր «բարեմիտ» բառով): Փաստորեն սա նշանակում էր, որ մինչև մոտավորապես 1960 թվականը գրված ոչ մի գիրք չէր կարող ամբողջությամբ թարգմանվել: Նախահեղափոխական գրականությունը կարելի էր ենթարկել միայն գաղափարական թարգմանության, այսինքն՝ կատարել ոչ միայն իմաստի, այլև լեզվի փոփոխություն: Վերցնենք, օրինակ, մի հայտնի հատված Անկախության հռչակագրից.

1984

Ակնհայտ ճշմարտություն է, որ բոլոր մարդիկ սրտեղծված են հավասար և Արարչից օժտված են անօտարելի իրավունքներով, որոնցից է կյանքի, ազատության ու երջանկության ձգտման իրավունքը: Այդ իրավունքները պահպանելու համար մարդիկ սրտեղծում են կառավարություններ, որոնք իշխանություն են ձեռք բերում կառավարվողների համաձայնությամբ: Երբ կառավարման ձևը չի ծառայում այդ նպատակին, ժողովուրդն իրավունք ունի փոխելու կամ վերացնելու այն և հաստատելու նոր Կառավարություն...

Սա հնարավոր չէր լինի թարգմանել 'նորալեզվով' միաժամանակ պահպանելով նախնական իմաստը: Ամենաշատը, որ կարելի էր անել, ամբողջ հատվածը ներկայացնել մեկ բառով՝ *հանցամիտք*: Ամբողջական կարող էր լինել միայն գաղափարական թարգմանությունը, որտեղ Ջեֆերսոնի խոսքերը կվերածվեին բացարձակ իշխանության ներբողի:

Ի դեպ, անցյալի գրականության մի զգալի մասն արդեն ձևափոխվել էր այս կերպ: Հեղինակության նկատառումներից ելնելով՝ ցանկալի էր հուշեր պահպանել որոշ պատմական դեմքերի մասին և, միևնույն ժամանակ, նրանց ձեռքբերումները համաձայնեցնել Անգլոսոցի փիլիսոփայության հետ: Հետևաբար ընթացքի մեջ էր տարբեր գրողների՝ Շեքսպիրի, Միլթոնի, Սվիֆթի, Բայրոնի, Դիքենսի և այլոց ստեղծագործությունների թարգմանությունը: Առաջադրանքն ավարտին հասցնելուց հետո նրանց քնագրերը և այն ամենը, ինչ պահպանվել էր անցյալի գրականությունից, պետք է ոչնչացվեին: Այդ թարգմանությունը դանդաղ ու բարդ աշխատանք էր, և սպասվում էր ավարտին հասցնել ոչ շուտ, քան մինչև քանմեկերորդ դարի առաջին կամ երկրորդ տասնամյակ: Կար նաև մեծ քանակությամբ ուտիլիտար գրականություն՝ պարտադիր տեխնիկական ձեռնարկներ և այլն, որոնք պետք է ենթարկվեին նույնպիսի մշակման: Վերջնական անցումը նորալեզվին հետաձգվել էր մինչև 2050 թվական, ինչի գլխավոր նպատակն էր ժամանակ տրամադրել թարգմանության նախնական աշխատանքներին:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այն հանգամանքը, որ Ջորջ Օրունլի¹ (1903-1950) «1984» հակաուարուպիան նախկին ԽՍՀՄ փարածքում առաջին անգամ լույս տեսավ 1988 թվականին միայն, թերևս միանգամայն բնական է, քանզի վեպի քննադատական շեշտադրումներն ու ընդհանրացումները ամբողջատիրական գաղափարախոսության ու համակարգի դեմ չէին կարող աննկատ մնալ մի երկրում, որն ամբողջապես թաղված էր այդ ժահճի մեջ: Մյուս կողմից՝ «1984»-ը շարունակում էր «Անասնաֆերմա» վիպակի մոտիվները, որտեղ ակնարկները 1917 թվականի հոկտեմբերյան հեղաշրջման և դրա հետագա զարգացումների և, ընդհանրապես, աշխարհաքաղաքական փոխապետող միտումների, քաղաքական դեմքերի վերաբերյալ առավել կոնկրետացած էին:

Նույնը վերաբերում է նաև այսպես կոչված՝ սոցճամբարի երկրներին, որոնցում նույնպես «1984»-ը բազմաթիվ անգամներ գրաքննական միջամտությունների ու արգելանքների է ենթարկվել:

Բայց վեպի ներքին գաղտնագրերն ավելի խոր շերտեր ու ակնարկներ էին պարունակում, ուստի հասկանալի են նաև վեպի փակագրության ու վաճառքի արգելման, սուբյեկտիվ մեկնաբանման, արհամարհման այն դեպքերը, որ գրանցվեցին նաև ԽՍՀՄ փարածքից ու սոցճամբարի երկրներից դուրս: Մասնավորապես՝ բազմաթիվ են Արևմուտքի երկրների ծախսակողմյան ուժերի քննադատությունները: Իսկ ամենից հաճախ վեպի հետ կապված փարբեր արգելանքներ են եղել ԱՄՆ փարբեր նահանգներում:

Ընդհանրապես՝ հրատարակումից գրեթե անմիջապես հետո և մոտ 50 փարի շարունակ անընդհատ փորձեր են արվել «1984»-ը հանել հարկապես դպրոցական գրադարաններից:

¹ Իսկական անունը՝ Էրիկ Արթուր Բլեր: Ջորջ Օրունլ անունով գրողը սկսել է հանդես գալ 1933 թվականից:

Ուսումնասիրելով ամերիկյան դպրոցներում արգելված գրքերի 1965-1982 թթ. վիճակագրությունը՝ Լի Բերեսն իր «Հանրահայր արգելված գրքեր» աշխատության առաջաբանում առանձնացնում է 30 այդպիսի գիրք: Ընդ որում՝ Օրուելի «1984»-ը դրանց շարքում 5-րդն է: Ուշագրավ է, որ «1984»-ի արգելանքը ամերիկյան դպրոցներում առավել սաստիկ է եղել 1960-70-ական թվականներին, երբ չափազանց մեծ էր ԽՍՀՄ-ի դեմ պայտերազմ սկսելու հավանականությունը:

Հիմնականում վեպը քարկոծվում էր անբարոյականության և բաց տեսարանների համար, որոնք կարող էին բացասաբար ազդել դեռահասների հոգեբանության վրա: Բայց առավել ուշագրավ են վեպն արգելելու քաղաքական դրդապատճառները, որոնք տարբեր ժամանակներում ակնհայտորեն հակասում են իրար: Յուրաքանչյուր քաղաքական իրադրություն, ըստ ամենայնի, իր դերն է խաղացել արգելանք դնելու, սպա այդ արգելանքը հանելու պարզառաբանության հարցում: Այդպես, մեկ դեպքում Միացյալ Նահանգներում վեպն արգելվել է այն պարզառաբանությամբ, որ կոմունիզմն այստեղ ներկայացվում է բարենպաստ լույսի ներքո, իսկ որոշ ժամանակ արգելանքը հանվել է այն փաստարկով, որ գիրքը հրաշալիորեն պատկերում է, թե իրականում ինչ է կատարվում ամբողջատիրական համակարգում: Հեղափոխիչ է, որ ընդհուպ մինչև վերջերս «1984»-ը թույլատրված է ամերիկյան դպրոցական գրադարանների 43 տոկոսում միայն:

«1984»-ի արգելանքների պատմությունը ընդհանրապես անհեթեթության միտումներ ունի, որոնք այդքան էլ չեն առնչվում վեպի բուն ասելիքին: Ինչպես էրիխ Ֆրոմն է գրում՝ «Օրուելի «1984»-ը զգացողության դրսևորում է, բայց և՛ նախազգուշացում: Զգացողությունը, որը նա ի ցույց է դնում, շար նման է մարդու ապագայի հանդեպ հուսահատության: Իսկ նախազգուշացման էությունն այն է, որ եթե պատմության ընթացքը չփոխվի, սպա

մարդիկ ամբողջ աշխարհում կկորցնեն իրենց ամենամարդկային որակները, կվերածվեն անհոգի ռոբոտների և ընդ որում՝ երբեք չեն գիտակցի այդ...»:

Օրուելի վեպի վերնագիրն ու ԽՍՀՄ-ում հենց 1984-ից սկսված գորբաչոյյան հայրնի «պերեստրոյկան» որոշակի առեղծվածայնություն հաղորդեցին վեպին: Իրականում «1984» վերնագիրը Օրուելի հրատարակիչ Ֆրեդ Ուորբուրգինն է, որով նա փորձում էր գրավել ընթերցողներին: Նախնական մտահոլացմամբ վեպն ունեցել է «Եվրոպայի վերջին մարդը» վերնագիրը: Այնուամենայնիվ, ինչո՞ւ հենց «1984», այդպես էլ առեղծված է մտում: Ամենահավանական փարբերակն այն է, որ Ուորբուրգը պարզապես խաղարկել է վեպի ստեղծման փարթիվը՝ 1948²:

Ա. Ն.

² Ֆրեդ Ուորբուրգին գրած 22 հոկտեմբեր 1948 թվակիր նամակում Օրուելը տեղեկացնում է, որ «1984» վեպի գաղափարն ինքը մտահոլացել է դեռ 1943 թվականին: Վեպը, սակայն, գրվեց 1947-48 թթ. և լույս տեսավ 1949 թվականի հունիսի 8-ին:

ՋՈՐՋ ՕՐՈՒԵԼ

1984

GORGE ORWELL

1984

Թարգմանությունը՝
Աստղիկ Աթաբեկյանի

Հրատ. խմբագիր՝
Արքմենիկ Նիկողոսյան
Տեխն. խմբագիր

Արարատ Թովմասյան
Սրբագրիչ՝

Մելանյա Նահապետյան
Համակարգչային էջադրումը՝
Մարիամ Էդիլյանի, Կարինե Սարգսյանի
Կազմը՝

«Անտարես» մեդիա հոլդինգի



«ԱՆՏԱՐԵՍ» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ +(374) 58 76 69
antares@antares.am
www.antares.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մաս I	3
Մաս II	111
Մաս III	241
Հավելված. Նորալեզվի սկզբունքները	317
Վերջաբան	332